

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԲՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2013

ԳԻՐՔ 1

**ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2013**

ՀՏԴ 338(479.25):06
ԳՄԴ 65.9(2Հ)
Ս 783

Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
տնտեսագիտության թեկնածու
տնտեսագիտության թեկնածու

Յուրի Սուվարյան
Վարդան Բոստանջյան
Բենիամին Եղիազարյան
Ռոբերտ Սարինյան
Վիլեն Խաչատրյան
Ալվարո Զատիկյան
Կարեն Սարգսյան

Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՎԱԿԻՄԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ս 783

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների
ժողովածու - 2013) / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտ; Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ
«Գիտություն» հրատ., 2013, գիրք 1.- 390 էջ:

Գիտաժողովը նվիրված է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013):
Ժողովածուում ընդգրկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագի-
տության ինստիտուտում անցկացված «Սոցիալ-տնտեսական զարգացման
արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով հանրապե-
տական գիտաժողովի մասնակիցների գիտական հոդվածները:

ՀՏԴ 338(479.25):06
ԳՄԴ 65.9(2Հ)

ISBN 978-5-8080-1023-9

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2013

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Զ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ	Տնտեսության «ոչ ֆորմալ» հատվածի հարցի շուրջ ՀՀ-ում և աշխարհում.....	6
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Կ. ՍԱՐԳՍՅԱՆ	Ճգնաժամերի վերլուծությունը՝ համաշխարհային տնտեսության զարգացման տարբեր փուլերում.....	10
Ս. ԱՀԱՐՈՆՅԱՆ	ՀՀ առևտրային բանկերի ակտիվների վերլուծությունը կառուցվածքային և խմբավորման մեթոդով.....	16
Ս. ԱՀԱՐՈՆՅԱՆ	ՀՀ առևտրային բանկերի պարտավորությունների համեմատական վերլուծությունը.....	21
Ս. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ	Հարկային քաղաքականությունը ՀՀ-ում և դրա արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները.....	25
Ս. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ	Հարկային քաղաքականության ոլորտում ՀՀ և միջազգային փորձի համեմատական վերլուծությունը.....	29
Ա. ԱՍԼԱՆՅԱՆ	Բարձրագույն կրթության ֆինանսավորման հիմնախնդիրները և երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը.....	34
Զ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ, Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Ստվերային տնտեսության և հարկային վարչարարության փոխազդեցության հարցի շուրջ.....	37
Ա. ԲԱՅԱԴՅԱՆ	Փոխարժեքի ձևավորման առանձնահատկությունները և փոփոխությունների դինամիկան ՀՀ-ում.....	41
Ա. ԲԱՅԱԴՅԱՆ	Փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ՀՀ տնտեսության զարգացման վրա.....	45
Ա. ԶԱԽԱՐՅԱՆ	Բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպումը որպես նրանց գործունեության բարելավման միջոց.....	49
Ա. ԶԱԽԱՐՅԱՆ	Կորպորատիվ էթիկայի հիմնախնդիրները բաժնետիրական ընկերություններում... ..	60
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության 2012 և 2013թթ. պետական բյուջեների համեմատական վերլուծությունը՝ հետձգնաժամային զարգացումների համատեքստում.....	70
Մ. ՀԱԿՈԲՅԱՆ, Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	Պետական պարտքի գնահատումը որպես հարկաբյուջետային քաղաքականության կայունության նախապայման.....	78
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Առևտրային կազմակերպությունների ֆինանսական դրության բարելավումը ներքին հնարավորությունների օգտագործման տեսանկյունից.....	83
Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ	Ստվերային եկամուտների գնահատման հիմնական մոտեցումները.....	89
Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ	Հարկման արտերկրյա մոտեցումները և դրանց գործնական կիրառության հնարավորությունները ՀՀ-ում.....	94
Վ. ԶԻՆԱՐՅԱՆ	Ռիսկերի գնահատումը և պարտքի կառավարման ծրագրային փաթեթները արտաքին պետական պարտքի կառավարման գործընթացում.....	98
Վ. ԶԻՆԱՐՅԱՆ	Արտաքին պետական պարտքի կառավարման արտերկրյա փորձը ճգնաժամի պայմաններում.....	103
Է. ԶԱՆԻՆՅԱՆ	Հարկման սկզբունքների կիրառման ժամանակակից մոտեցումները.....	108
Է. ԶԱՆԻՆՅԱՆ	Հարկային քաղաքականության արդյունավետության խնդիրները Հայաստանի Հանրապետությունում.....	115
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ	ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայի կառուցվածքը.....	123
Կ. ՍԱՐԳՍՅԱՆ	Հակաճգնաժամային միջոցառումների արտերկրյա փորձի վերլուծությունը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի համատեքստում.....	132
Տ. ՎԱՍԻԼՅԱՆ	Ֆինանսական գործառնությունների հարկման անհրաժեշտությունը և նպատակը. Ջեյմս Թոբինի առաջարկությունը՝ ճգնաժամի հաղթահարման լծակ... ..	137

S. ՎԱՍԻԼՅԱՆ	Հարկային բեռի կառավարման մեխանիզմների փոփոխությունները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում. Եվրամիության անդամ երկրներ և Հայաստան.....	141
Ս. ՔՈՌԱՆՋՅԱՆ	Արտաքին պետական պարտքի սկզբունքներն ու կառուցվածքը.....	149
Ս. ՔՈՌԱՆՋՅԱՆ	Պետության դերը արտաքին պետական պարտքի կառավարման գործում.....	156
И. АКОПЯН, А. ЗАТИКЯН	Особенности налогов на собственность в Армении	164

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հ. ԱՎԱԳՅԱՆ	Երկաթահանքերի շահագործման հետ կապված հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը	171
Հ. ԱՎԱԳՅԱՆ	Հազվագյուտ տարրերն ու հողատարրերը միլիարդավոր դոլարների «աղբյուրներ»	179
Ա. ԲԱՅԱԴՅԱՆ, Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը, դրա գործունեության խթանման հիմնահարցերն ու լուծման ուղիները.....	184
Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	Ռիսկերի կառավարման և պետական կարգավորման լծակները գյուղատնտեսության զարգացման ոլորտում	191
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Օ. ՆԱՌԻՍՈՎԻՉ	Տեխնոլոգիական նորարարությունների առևտրայնացման ժամանակակից միտումները	199
Շ. ԿՈՍՏԱՆՅԱՆ, Ռ. ԱԼՈՅԱՆ	ՀՀ գյուղատնտեսության զարգացմանը նպաստող կարգավորման ուղիները	205
Ն. ԿՈՒՊԵԼՅԱՆՑ	Բուսաբուծական արտադրանքի հետքերքահավաքային գործընթացների սկզբունքները և դրա տարբեր փուլերի գործունեությամբ պայմանավորված հանրապետության բուսաբուծության համար առաջնահերթ համարվող գյուղատնտեսական մթերքների ծավալների վրա տարբեր գործոնների ազդեցության չափի գնահատումը	211
Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լ. ԱԶԱՏՅԱՆ	ՀՀ գյուղատնտեսության ներկա վիճակը և զարգացման հնարավոր ուղիները	222
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	Հարկային խթանների դերը տեխնոլոգիաների փոխանցման գործոնների համակարգում	229
Թ. ՄԱՐԳԱՐՅԱՆ	ԲՈՂՉԱ երկրների ինտեգրման գործընթացը	237
Թ. ՄԱՐԳԱՐՅԱՆ	Շուկայական բարեփոխումները ԱՊՀ երկրներում	245
Հ. ՋԱՆԵՐՅԱՆ	Գյուղատնտեսական զբաղվածության հիմնախնդիրները ՀՀ-ում.....	250
Ա. ՍԱԼԵԱԶԱՐՅԱՆ, Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Լ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ	ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման արդի առանձնահատկությունները..	254
Լ. ՍԱՐԳՍՅԱՆ	Արտահանմամբ պայմանավորվող տնտեսական աճի հեռանկարները Հայաստանում	263
Ա. ՄԻՍՈՆՅԱՆ	Փոքր և միջին ձեռնարկությունների տարածաշրջանային զարգացման հիմնահարցերը ՀՀ-ում	268
А. ЗАТИКЯН, Л. МЕЛЬНИКОВА	Поддержка малого и среднего инновационного предпринимательства в РА.....	275
А. МАРГАРЯН, А. СВЕРЛОВ	Динамика внутренних рынков трансферта технологий Республики Армения и Беларусь: сравнительный анализ	282
А. МАРГАРЯН, С. СОЛОДОВНИКОВ, А. СВЕРЛОВ	Проблемы привлечения и диффузии новых технологий в экономические системы Армении и Республики Беларусь	290
Т. ОГАНЯН	Пути инновационно-инвестиционного развития промышленных и сельскохозяйственных предприятий РА	300

И. ТАРАНЯН	Дорожные фонды как альтернативный механизм финансирования автомобильных дорог.....	305
A. MELKUMYAN	The main directions of increasing the competitiveness of the agricultural sector in Armenia.....	316

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՍՈՅԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Լ. ՍԱՀԱԿՅԱՆ	Խոշոր առևտրային ցանցերում ապրանքային պաշարների հաշվառման այլընտրանքային մոդելը	320
Ա. ԱՔԵԼՅԱՆ	«Իդրամ» համակարգի օգտվողների թվաքանակի աճի գնահատումը կոռեկցիոն-ռեգրեսիոն վերլուծության միջոցով.....	329
Ա. ԱՔԵԼՅԱՆ	Էլեկտրոնային փողերի կառավարման արտերկրյա փորձը.....	332
Ա. ԶԱՔԱՐՅԱՆ, Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ	Կրթական ծառայությունների շուկայի առանձնահատկություններն ու հիմնախնդիրները Հայաստանում.....	336
Գ. ՂԱՐԻՔՅԱՆ, Տ. ՄԿՐՏՉՅԱՆ	Տնային տնտեսությունների խնայողությունների տեսակների տիպականացումը և դրանց էության վերլուծությունը	343
Ա. ՄԱԿԱՐՅԱՆ	Անցում բազմաստիճան (բազմաբաղադրիչ) կենսաթոշակային համակարգի.....	347
Ռ. ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ	Սոցիալական հիմնախնդիրները և դրանց դրսևորումները ԼՂՀ-ում.....	352
Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ	ԱՊՊԱ համակարգի ձևավորումը և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում.....	358
T. MANASSERIAN	Economic preconditions of demographic security.....	363

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԱՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Բ. ԵՂԻՎԶԱՐՅԱՆ, Է. ԲԱԲԱՅԱՆ Յ. ԹԵՐԶՅԱՆ	«Կանաչ տնտեսությանն» անցման ընդհանրական պայմանները.....	370
Մ. ԱՂԱՅԱՆ	Տնտեսական աճ – տնտեսական ճգնաժամ կապի շուրջ.....	381
Ն. ԴԵՐՉՅԱՆ	Բալասսա-Սամուելսոնի էֆեկտի վերլուծությունը ՀՀ օրինակով	384

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՎԱՐԴԻՍԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԳԱԱ թղթակից անդամ, Կ.Գ.Դ., պրոֆեսոր
ՆԳԱԱ Մ. Բոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն

ՔՐԻՍԻՆԵ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

ՆԳԱԱ Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, Կ.Գ.Թ.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ «ՈՉ ՖՈՐՄԱԼ» ՀԱՏՎԱԾԻ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Տարբեր երկրներում իրականացրած հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ ոչ ֆորմալ զբաղվածները իրենց ֆորմալ զբաղված գործընկերների համեմատ ավելի խոցելի դրության մեջ են, քանի որ նրանք շատ հազվադեպ են արժանանում սոցիալական պաշտպանության և համարժեք աշխատավարձի¹: Ոչ ֆորմալ արտադրական միավորները, որոնք հիմնականում ոչ ֆորմալ զբաղվածների գործատուներն են, սովորաբար չեն կարողանում բարենպաստ, առողջությանը չվնասող և անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովել:

Փորձենք սահմանել «ոչ ֆորմալ» հատվածի տնտեսագիտական կատեգորիան: Այսպես, «ոչ ֆորմալ» հատվածը հանդես է գալիս որպես ապրանքների և ծառայությունների արտադրությամբ զբաղված միավորներ, որոնց հիմնական նպատակն է շահագրգիռ անձանց համար զբաղվածություն և եկամուտ ստեղծելը: Այդ միավորները, սովորաբար, գործում են կազմակերպման ցածր մակարդակի վրա, որպես արտադրության գործոնների, աշխատանքի և կապիտալի միջև նվազ կամ բաժանման իսպառ բացակայությամբ և ունեն փոքր մասշտաբներ: Աշխատանքային հարաբերությունները, որտեղ դրանք առկա են, հիմնականում հիմնվում են ժամանակավոր աշխատանքի, բարեկանական կամ անձնական և սոցիալական կապերի, քան ֆորմալ երաշխիքներով պայմանագրային հարաբերությունների վրա:

Գտնում ենք, որ ստվերային եկամուտները հաշվառելու և դրանց ձևավորման աղբյուրները բացահայտելու համար անհրաժեշտ է տարբերակել, տարանջատել հետևյալ տնտեսագիտական հասկացությունները՝

1. «ոչ ֆորմալ տնտեսությունում զբաղվածություն»,
2. «ոչ ֆորմալ զբաղվածություն»,
3. «ոչ ֆորմալ հատվածում զբաղվածություն»,
4. «ոչ ֆորմալ հատվածից դուրս գտնվող ոչ ֆորմալ զբաղվածություն»:

Այսպես, եթե ոչ ֆորմալ հատվածի կատեգորիան՝ որպես դիտարկման միավորներ, վերաբերում է արտադրական միավորներին, ոչ ֆորմալ զբաղվածություն հասկացությունը վերաբերում է աշխատատեղերին: Իսկ ինչ վերաբերում է ոչ ֆորմալ զբաղվածություն հասկացությանը, ապա այն ձևավորվում է ոչ ֆորմալ աշխատատեղերի ընդհանուր թվից՝ անկախ այն հանգամանքից, թե դիտարկվող ժամանակահատվածում դրանք գտնվել են ֆորմալ հատվածի կազմակերպություններում, ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում, թե տնային տնտեսություններում:

Այսպիսով, կարող ենք հիմնավորել, որ ոչ ֆորմալ զբաղվածությունը ներառում է ինքնազբաղվածների ու գործատուների, առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամների, ոչ ֆորմալ արտադրական կոոպերատիվների անդամների, ոչ ֆորմալ աշխատանք ունեցող

¹ Бруно Даллаго, «Проблема влияния скрытой экономической деятельности на структуру экономики». М.-2003, с72-80.

վարձու աշխատողներ ֆորմալ հատվածի կազմակերպություններում խմբերը, որոնք առավել մանրամասն ներկայացված են աղյուսակ 1-ում¹.

Աղյուսակ 1

Ոչ ֆորմալ զբաղվածության մեխանիզմը²

Արտադրական միավորներն ըստ տեսակի	ՋԲԱԴՎԱԾՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ, 1000 ³									
	Ինքնազբաղվածներ		Գործատուներ		Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամներ		Վարձու աշխատողներ		Արտադրական, սպառողական կոոպերատիվի անդամներ	
	Ոչ ֆոսֆ չՆ	Ֆոսֆ	Ոչ ֆոսֆ չՆ	Ֆոսֆ	Ոչ ֆոսֆ չՆ	Ֆոսֆ	Ոչ ֆոսֆ չՆ	Ֆոսֆ	Ոչ ֆոսֆ չՆ	Ֆոսֆ
Ֆորմալ կազմակերպություններ					1	2				
Ոչ ֆորմալ կազմակերպություններ ⁴	3		4		5	6	7 ⁵	8		
Տնային տնտեսություններ ⁶	9				*	10				

Փորձենք վերլուծել աղյուսակ 1-ի տվյալները:

Ինքնազբաղվածներ ու գործատուներ, որոնք զբաղված են իրենց սեփական ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում (աղյուսակ 1-ի խմբեր 3 և 4): Ինքնազբաղվածների և գործատուների զբաղվածության իրավիճակը կարող է դժվարությամբ տարանջատել նրանց պատկանող կազմակերպության տեսակից: Նրանց աշխատանքի ոչ ֆորմալ բնույթը ուղղակիորեն բխում է կազմակերպության բնութագրիչներից:

Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամներ (ընտանիքի չվարձատրվող անդամներ)⁷ անկախ նրանից աշխատել են նրանք ֆորմալ, թե ոչ ֆորմալ հատվածի կազմակերպությունում (աղյուսակ 1-ի խմբեր 1 և 5⁷): Նրանց աշխատանքի ոչ ֆորմալ բնույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք, սովորաբար, չունեն հստակ ձևակերպված, գրավոր աշխատանքային պայմանագրեր, իսկ նրանց զբաղվածությունն աշխատանքային օրենսդրության, սոցիալական ապահովության կանոնակարգերի և կոլեկտիվ պայմանագրերի կարգավորման առարկա չի հանդիսանում:

Ոչ ֆորմալ արտադրական կոոպերատիվների անդամների խումբ (աղյուսակ 1-ի խումբ 8), որտեղ աշխատանքի ոչ ֆորմալ բնույթն ուղղակիորեն բխում է այն կոոպերատիվի բնութագրերից, որին նրանք պատկանում են:

Ոչ ֆորմալ աշխատանք ունեցող վարձու աշխատողներ ֆորմալ հատվածի կազմակերպություններում, ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում կամ տնային վճարվող աշխատող ունեցող տնային տնտեսություններում (աղյուսակ 1-ի խմբեր 2, 6 և 10), համաձայն որի վարձու աշխատողները դիտարկվում են ոչ ֆորմալ աշխատանք ունեցող, եթե նրանց աշխատանքային հարաբերություններն օրենքով կամ գործնականում ազգային աշխատանքային օրենսդրության,

¹ 17-րդ ԱՎՄԿ վերջնական զեկույց և Ռ. Գուսման, 2010, էջ 89:

² Շրջանակը փոփոխվել է՝ Հայաստանում դրա կիրառմանը համապատասխան:

³ Չափման միավոր դիտարկվել է 1000 տնտեսավարող սուբյեկտներ:

⁴ Ինչպես սահմանված է Աշխատանքի վիճակագիրների 15-րդ միջազգային կոնֆերանսի կողմից (բացառությամբ վճարվող տնային աշխատողներ ունեցող տնային տնտեսությունների):

⁵ Այդ երևույթը բնորոշ չէ ՀՀ աշխատանքի շուկային. Հայաստանում ֆորմալ զբաղվածությունն առկա է միայն ֆորմալ կազմակերպություններում:

⁶ Ջուտ իրենց վերջնական սպառման համար արտադրող տնային տնտեսություններ և տնային վճարվող աշխատողներ ունեցող տնային տնտեսություններ:

⁷ Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները, ովքեր հիմնական աշխատատեղում ապրանքներ են արտադրել սեփական վերջնական սպառման համար, տնային տնտեսության մեջ զբաղվածներ են համարվում, եթե արտադրված ապրանքները տնային տնտեսության սպառման մեջ զգալի մասն են կազմում:

եկամտի հարկման, սոցիալական պաշտպանության և աշխատանքային որոշակի երաշխիքների առարկա չեն հանդիսանում, այնպիսի պատճառներով, ինչպիսիք են՝ աշխատատեղերի կամ աշխատողների չհայտարարագրումը, ժամանակավոր կամ սահմանափակ, կարճ ժամանակով աշխատանքները, օրենքով սահմանված շեմից պակաս աշխատանքային ժամեր կամ աշխատավարձ ունեցող աշխատատեղերը, չկորպորացված կազմակերպություններում կամ տնային տնտեսություններում անձանց զբաղվածությունը, այնպիսի աշխատատեղերը, երբ աշխատողի աշխատավայրը գտնվում է գործատուի կազմակերպության տարածքից դուրս, կամ աշխատանքները, որոնց նկատմամբ չի կիրառվում կամ որևէ այլ պատճառով չի տարածվում աշխատանքային օրենսդրությունը:

Ինքնազբաղվածներ՝ ներգրավված բացառապես իրենց տնային տնտեսության վերջնական սպառման համար ապրանքների արտադրության մեջ (աղյուսակ 1-ի վանդակ 9):

Բացի այդ, աղյուսակ 1-ը ստվերային եկամուտները հաշվառելու տեսանկյունից կարևորվում է այն պատճառով, որ կարևոր տեղեկատվություն է տրամադրում ոչ ֆորմալ հատվածից դուրս գտնվող ոչ ֆորմալ զբաղվածության վերաբերյալ, որը կազմված է աշխատատեղերի հետևյալ տեսակներից.

- ոչ ֆորմալ աշխատանք ունեցող վարձու աշխատողներ ֆորմալ հատվածի կազմակերպություններում (աղյուսակ 1-ի խումբ 2) կամ տնային վճարվող աշխատող ունեցող տնային տնտեսություններում (աղյուսակ 1-ի խումբ 10),
- ընտանիքի չվարձատրվող անդամներ՝ ֆորմալ հատվածի կազմակերպություններում (աղյուսակ 1-ի խումբ 1),
- ինքնազբաղվածներ՝ ներգրավված բացառապես իրենց տնային տնտեսության վերջնական սպառման համար ապրանքների արտադրության մեջ (աղյուսակ 1-ի խումբ 9), եթե զբաղված են համարվում տնտեսապես ակտիվ բնակչության, զբաղվածության, գործազրկության, թերզբաղվածության կարգավիճակների,
- ընտանիքի չվարձատրվող անդամներ՝ ներգրավված բացառապես իրենց տնային տնտեսության վերջնական սպառման համար ապրանքների արտադրության մեջ, եթե դա նրանց հիմնական աշխատատեղում է, և արտադրվող ապրանքները տնային տնտեսության սպառման զգալի մասն են կազմում:

Աղյուսակ 1-ի զբաղվածության բնույթը վերլուծելիս, հարց է առաջանում, թե ոչ ֆորմալ հատվածը վերաբերում է անձանց, թե աշխատատեղերին: Այսպես, զբաղվածությունը ոչ ֆորմալ հատվածում¹ սահմանվում է որպես՝ ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում բոլոր աշխատատեղերից կամ այն անձանցից, ովքեր հետազոտվող ժամանակահատվածում զբաղված են եղել առնվազն մեկ ոչ ֆորմալ հատվածի կազմակերպությունում՝ անկախ նրանց զբաղվածության կարգավիճակից և աշխատատեղի հիմնական կամ երկրորդային լինելու: Անձը զուգահեռաբար կարող է երկու կամ ավելի ֆորմալ և/կամ ոչ ֆորմալ աշխատանք ունենալ: Կապված նման բազմակի աշխատանքներ ունենալու երևույթի առկայության հետ, ոչ թե զբաղված անձինք, այլ աշխատատեղերն են հաշվի առնվել որպես զբաղվածության դիտարկման միավոր: Ընդ որում, ոչ ֆորմալ զբաղվածությունը կազմվում է հետազոտվող ժամանակահատվածում ոչ ֆորմալ աշխատատեղերի ընդհանուր թվից, անկախ նրանից, դրանք իրականացվում են ֆորմալ հատվածի կազմակերպություններում, ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում, թե տնային տնտեսություններում:

Տարբեր երկրներում ոչ ֆորմալ տնտեսությունը բնութագրվում է ըստ աշխատողների եկամուտների և սեռի չափանիշների: Օրինակ՝ Չենը նշել է, որ ոչ ֆորմալ տնտեսությունը «այսբերգային» հատվածավորում է, որն արտացոլում է այն տարբերությունները, որոնք առաջանում են ոչ ֆորմալ տնտեսության մեջ եկամուտներում և աշխատողների սեռատարիքային զբաղվածության հարաբերակցությունում²:

¹ Chris Bonner, "Organising Informal Transport Workers: Global Research Project" / World Bank-2010, 25-27p.

² Организация Объединенных Наций, "Роль неформального сектора в борьбе с нищетой". Экономический и социальный совет. E/ESCAP/CPR(3)/1, 2006. стр. 11-12. (19 с.)

Եթե ՀՀ-ում ֆորմալ զբաղվածությունն ապահովվում են միայն սահմանված կարգով գրանցված կազմակերպությունները (աղյուսակ 1-ի 8-րդ խումբ)¹, ուստի, ելնելով այն հանգամանքից, որ գրանցման առկայությունը կազմակերպության ֆորմալ բնույթը որոշող գործոններից մեկն է՝ նշանակում է, որ երկրում ֆորմալ զբաղվածություն կարող է գոյություն ունենալ միայն ֆորմալ կազմակերպություններում: Այսինքն, կարծես, անհավանական է դառնում այն փաստը, որ ֆորմալ զբաղվածությունը գոյություն ունի ոչ ֆորմալ կազմակերպություններում կամ տնային տնտեսություններում: Իսկ դա նշանակում է, որ նաև անհնար է դառնում պայմանագրային հիմքերով աշխատողեր վարձելու պայմանը:

Այսպիսով, ոչ ֆորմալ հատվածի արտադրական միավորների կողմից իրականացվող գործունեությունը միշտ չէ, որ միտումնավոր կերպով ուղղված է հարկերից կամ սոցիալական ապահովության ծախսերից խուսափելուն և աշխատանքային կամ այլ իրավական ու վարչական նորմերի խախտմանը: Համապատասխանաբար, ոչ ֆորմալ հատվածի էությունը պետք է տարբերել թաքնված կամ ստվերային տնտեսությունների էություններից:

**Владимир Арутюнян
Кристине Багдасарян**

Вопросы «неформального сектора» экономики в мире и в РА

Аннотация

Деятельность производственных единиц «неформального сектора» экономики не всегда сознательно направлена на уклонение от уплаты налогов или расходов на социальное обеспечение, на нарушение трудовой или других правовых и административных норм. Соответственно, экономическую сущность «неформального сектора» экономики следует различать от сущности скрытой (или теневой) экономики.

**Vladimir Harutyunyan
Kristine Baghdasaryan**

On the informal sector of the economy in Armenia and worldwide

Abstract

Business entities of the “informal sector”, not always, deliberately tend to avoid from tax or social security payments, or violate labor or other types of legislative or administrative laws and regulations. Respectively there is a slight difference between these two categories: “informal sector” and “shadow economy”.

¹ Առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությունն օրենքով արգելված է («Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենք): Օրենքով արգելված է նաև առանց աշխատանքային պայմանագրի աշխատող ունենալը («Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենք):

ՎԱՆՈՒՄԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԳԱԱ թղթակից անդամ, Կ. Գ. Պ., պրոֆեսոր
ՄԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, Կ. Գ. թ.

ՃԳՆԱԺԱՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ` ԶԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ

Տնտեսական ճգնաժամերը դեռևս պատմության անհիշելի ժամանակներից միշտ ուղեկցել են հասարակության և տնտեսության զարգացմանը: Ըստ Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր պատմաբան Ֆիլիպ Քեյի` համաշխարհային պատմության մեջ հայտնի առաջին տնտեսական ճգնաժամը տեղ է գտել դեռևս Զոոմեական կայսրությունում մ.թ. 88 թվականին¹: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ժամանակահատվածում զարգացած արդյունաբերական տնտեսություն և ֆինանսական համակարգեր ձևավորված չեն եղել, մանրամասն չենք անդրադառնա այդ ճգնաժամի առանձնահատկություններին:

Սկսած 18-րդ դարից, երբ արդեն ձևավորվել էին կապիտալիստական տնտեսական հարաբերություններ, տնտեսական ճգնաժամերը օրինաչափ բնույթ սկսեցին կրել: Սկզբնական շրջանում դրանք հանդես եկան որպես գյուղատնտեսական արդյունաբերության թերարտադրության բացասական հետևանքներ, իսկ արդեն 19-րդ դարից` արդյունաբերական արտադրության և սպառման միջև հավասարակշռության պարբերաբար կրկնվող խախտումներ:

Ուշագրավ է տնտեսական ճգնաժամը, որը տեղ է գտել 17-րդ դարում (1634-1637թթ) Զոլանդիայում և այն պայմանականորեն կոչվել է «Կակաչների ճգնաժամ»: Սա կապված է այն բանի հետ, որ այդ ժամանակահատվածում մեծ ճանաչում էին վայելում կակաչները և մարդիկ այդ ծաղիկների սերմեր ձեռք բերելու համար, որոնց գինը ըստ նրանց կանխատեսման` օրեցօր բարձրանալու էր, պատրաստ էին վաճառել նույնիսկ իրենց ամբողջ ունեցվածքը: Հետագայում, երբ այդ սպասելիքները չարդարացան, հոլանդական ժողովրդի համար ծանր տնտեսական և ֆինանսական իրավիճակ ստեղծվեց:

18-րդ դարասկզբին, իսկ ավելի կոնկրետ 1720 թվականին, Ֆրանսիայում առաջացավ ֆինանսական ճգնաժամ` այդ ժամանակաշրջանի Ֆրանսիայի գլխավոր գանձապետի` Ջոն Լոյի ոչ ճշգրիտ գործողությունների արդյունքում: Ֆրանսիայի պետական պարտքի հսկայական չափերի հետ կապված հիմնախնդիրը լուծելու նպատակով` նա գործի դրեց փողի տպագրիչ մեքենան, և արդյունքում` հսկայական արժեզրկված փողերի զանգվածը հանգեցրեց հիպերինֆլացիայի և ֆինանսական ճգնաժամի:

Մեկ այլ ճգնաժամ ևս տեղ էր գտել նույն Ֆրանսիայում` 1788-1792թթ., երբ արդյունաբերական ապրանքների արտադրված ծավալները մեծապես գերազանցում էին ազգաբնակչության վճարունակ պահանջարկը: Արդյունքում, արտադրողների մոտ չիրացված ապրանքների զգալի պաշարներ էին կուտակվել, մասնավորապես, հացահատիկի մասով` նույնիսկ մի քանի տարվա: Սա հանգեցրեց նրան, որ ձեռնարկատերերը կտրուկ կրճատեցին արտադրության ծավալները, ինչը, բնականաբար, գործազրկության հսկայական ալիք բարձրացրեց: Սա մեծ հարված էր բնակչության կենսամակարդակին, և հիմնավոր կարծիք կա, որ հենց այս տնտեսական ճգնաժամը նպաստեց Ֆրանսիական մեծ հեղափոխությանը:

Խոշոր ճգնաժամ է եղել 1825 թվականին Անգլիայում, որը մասամբ անդրադարձել է նաև

¹ <http://news.tut.by/world/122863.html>

այլ երկրների տնտեսությունների վրա¹: Այս ճգնաժամը կարելի է համարել նաև որպես առաջին ֆինանսատնտեսական ճգնաժամ: Վերջինիս առաջացման նախապայման հանդիսացավ այն հանգամանքը, որ անգլիացի բազմաթիվ ներդրողներ մեծածավալ ներդրումներ էին կատարում լատինաամերիկյան երկրներում շահագործվող թանկարժեք մետաղների հանքավայրերում և դրա արդյունքում ստացված թանկարժեք մետաղները իրացվում էին Լոնդոնի ֆոնդային բորսայում: Այս գործընթացն ուղեկցվում էր նաև ապրանքների արտահանման զգալի չափերով: Սակայն, ժամանակի ընթացքում այստեղ առաջ եկան բազմաթիվ սպեկուլյատիվ տենդենցներ: Առևտրային հաշվեկշռի անհավասարակշռությունը, ինչպես նաև Անգլիայի բանկի ոսկու պաշարների կրճատումը հանգեցրեց նրան, որ 1825 թվականին վերջինիս կողմից բարձրացվեց զեղչման տոկոսադրույքը: Սրան հաջորդեց ֆոնդային շուկայի խուճապը և ֆինանսական ճգնաժամը, որն արագորեն տարածվեց մայրցամաքային երկրներ, մասնավորապես, Ֆրանսիա: Այս ֆինանսատնտեսական ճգնաժամը տարածվեց նաև դեպի Ամերիկյան մայրցամաք՝ Լատինաամերիկյան երկրներ և ԱՄՆ:

1836-1838թթ. ճգնաժամը նույնպես անգլիական ծագում ուներ: Այն առաջացել էր, հիմնականում, Անգլիայից կապիտալի արտահոսքի և այդ երկրի միջազգային ոսկու ռեզերվների նվազման պատճառով: Որպես արձագանք նշված իրավիճակին, 1836 թվականին Անգլիայի բանկը բարձրացրեց զեղչման տոկոսադրույքը: Արդյունքում՝ դեպի ԱՄՆ կապիտալի արտահոսքը նվազեց, սակայն, կազմալուծվեց ֆոնդային շուկան: Վերջինիս բացասական հետևանքները տարածվեցին նաև դեպի Ֆրանսիա: ԱՄՆ-ը ֆինանսական ռեսուրսների խիստ կրճատման արդյունքում մեծ տնտեսական դժվարությունների առաջ կանգնեց: Այստեղ սկսվեց բանկային խուճապ, որը հանգեցրեց վճարահաշվարկային ողջ համակարգի կազմալուծման:

1857 թվականի ճգնաժամը ևս իր բնույթով միջազգային էր և ուժեղ հարված հասցրեց այդ ժամանակաշրջանի զարգացած երկրների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի տնտեսություններին: Այս ճգնաժամը սկիզբ առավ ԱՄՆ-ում և արդյունք էր, հիմնականում, երկաթուղային ընկերությունների սնանկացման և դրանց բաժնետոմսերի ֆոնդային շուկայի փլուզման: Սա, իր հերթին, ուժեղ հարված հասցրեց ամերիկյան բանկային համակարգին, որը թղթակցային հաշիվների միջոցով, սկզբնական շրջանում, տարածվեց դեպի Անգլիա, իսկ այնուհետև, նաև եվրոպական մայրցամաք: Այս ճգնաժամն այնքան հզոր էր, որ դրա ալիքները տարածվեցին նաև լատինաամերիկյան երկրներ: Այս ճգնաժամի արդյունքում հիշյալ երկրներում խիստ կրճատվեց արդյունաբերության ծավալները: Մասնավորապես, ԱՄՆ-ում պողպատի արտադրությունը կրճատվեց 20%-ով, բամբակի արտադրությունը՝ 27%-ով, Անգլիայում նավաշինության արտադրության ծավալները կրճատվեցին 26%-ով, Գերմանիայում շուրջ 25%-ով կրճատվեց պողպատի սպառումը և այլն:

1873-1878 թվականների խոշոր միջազգային ֆինանսական ճգնաժամը սկիզբ առավ Ավստրիայում և Գերմանիայում: Սա արդյունք էր Անգլիայից սնվող լատինաամերիկյան երկրներում վարկային շուկայի գերակտիվացման, ինչպես նաև Գերմանիայի և Ավստրիայի անշարժ գույքի շուկաների սպեկուլյատիվ գերտաքացման: Արդյունքում, 1873 թվականի մայիս ամսին փլուզվեց Վիեննայի ֆոնդային բորսան, իսկ հետագայում նաև՝ Ցյուրիխի և Ամստերդամի ֆոնդային շուկաները: Գերմանիայի բանկերի կողմից տրամադրված վարկերի երկարաձգումների դիմումները մերժելու պատճառով ճգնաժամի ալիքը Գերմանիայից մեծ թափով տեղափոխվեց ամերիկյան մայրցամաք: ԱՄՆ-ում բանկային խուճապը արագորեն տարածվեց հատկապես «Միավորված խաղաղօվկիանոսյան երկաթգծեր» ընկերության նախագահ Ջեյ Կուկի սնանկացման և բաժնետոմսերի գների խիստ անկման պատճառով: Մեծապես տուժեցին նաև լատինաամերիկյան երկրների տնտեսությունները, որոնց արտահանման ծավալները զգալի նվազեցին, և դրա հետևանքով կրճատվեցին նաև պետական բյուջեի համապատասխան մուտքերը: Այս ճգնաժամը բավականին ծանր ու երկարաշունչ էր և ավարտվեց միայն 1878 թվականին:

¹ Гринин Л. Е. Об истории экономических кризисов // Глобальный кризис как кризис перепроизводства денег. Философия и общество. № 1, 2009, С. 5.

1893 թվականին սկիզբ առած ճգնաժամը միջազգային ապրանքային շուկաների կրճատման արդյունք էր և դրա ազդեցությունը, հիմնականում, տարածվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ավստրալիայի տնտեսությունների վրա: ԱՄՆ-ում, մասնավորապես, փողի առաջարկի կրճատման և ֆոնդային շուկայի կազմալուծման արդյունքում բանկային ճգնաժամ առաջացավ և տեղի ունեցավ կապիտալի զգալի արտահոսք: Ավստրալիայում՝ ճգնաժամի հիմնական պատճառը արտահանվող ապրանքների գների կտրուկ նվազումն էր, ինչպես նաև արտասահմանյան դեպոզիտների (հիմնականում՝ անգլիական) զանգվածային արտահոսքը:

Հարկ է նշել, որ եթե մինչև 20-րդ դարը տնտեսական ճգնաժամերը սահմանափակվում էին մեկ կամ մի քանի երկրների աշխարհագրական սահմաններով, ապա արդեն 20-րդ դարում դրանք ձեռք բերեցին, հիմնականում, համաշխարհային բնույթ՝ կապված երկրների տնտեսությունների մեծ թափով գլոբալիզացիայի հետ:

20-րդ դարի առաջին՝ 1907 թվականին տեղ գտած ճգնաժամը թերևս ամենածանրն էր ու տարածքային ընդգրկվածության մասշտաբներով ամենամեծը՝ Ոսկու ստանդարտի ժամանակահատվածի համար: Այս ճգնաժամը միջազգային բնույթ ուներ և տարածվել էր շուրջ 9 երկրներում: Վերջինիս սկզբնապատճառը հանդիսացավ Անգլիայի բանկի վարած կոշտ դրամավարկային քաղաքականությունը, մասնավորապես, զեղչման տոկոսադրույքնի կտրուկ բարձրացումը 1906 թվականին՝ 3.5-ից ընդհուպ մինչև 6 տոկոս: Սրա նպատակը, հիմնականում, Անգլիայի ոսկու ռեզերվների համալրումն էր: Սա հանգեցրեց ԱՄՆ-ից կապիտալի զգալի արտահոսքի, ինչը, իր հերթին, առաջացրեց Նյու Յորքի ֆոնդային շուկայի փլուզման: Փողի զանգվածի կրճատումը առևտրային ընկերությունների, ինչպես նաև ազգաբնակչության շրջանում բերեց վճարունակության մեծ հիմնախնդիրների և վճարահաշվարկային համակարգի կազմալուծման: ճգնաժամի արդյունքում՝ Անգլիայի, ԱՄՆ-ի, իսկ հետագայում նաև Ֆրանսիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների տնտեսություններ հայտնվեցին երկարատև ռեցեսիոն փուլի մեջ:

1914 թվականին Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես խոշոր ֆինանսական ճգնաժամ բռնկվեց զարգացած կապիտալիստական երկրներում՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և Գերմանիա, և սա բնական էր, քանի որ այս երկրների կառավարությունները զինված ուժերի ֆինանսավորման առաջնահերթ խնդիրներ ունեին: Արդյունքում, նշված կառավարությունների կողմից համատարած կերպով վաճառվեցին օտարերկրյա թողարկողների արժեթղթերը: Սա, տրամաբանորեն հանգեցրեց ինչպես ֆինանսական, այնպես էլ ապրանքային շուկաների փլուզման և մեծ խուճապի: Սա մի յուրօրինակ ճգնաժամ էր իր բնույթով, քանի որ առաջացավ միաժամանակ մի քանի պետություններում:

1920-1922 թթ. ճգնաժամը, հիմնականում, կապված էր հետպատերազմյան շրջանում ազգային արժույթների արժևորման և արտադրության անկման հետ: Միաժամանակ, բանկային և արժութային ճգնաժամեր առաջացան կապիտալիստական մի շարք երկրներում, մասնավորապես, ԱՄՆ-ում, Անգլիայում, Դանիայում, Նորվեգիայում, Ֆինլանդիայում, Իտալիայում, Հոլանդիայում և այլն: Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա նշված նույն ժամանակահատվածում՝ այս երկրում, ընդհակառակը, ճգնաժամը կապված էր հիպերինֆլյացիայի, պատերազմից հետո տնտեսական ծանր կացության և ազգաբնակչության սոցիալական ծանր վիճակի հետ:

1929-1933թթ. բռնկվեց թերևս 20-րդ դարի, ինչպես նաև կապիտալիստական ժամանակաշրջանի ամենամեծ և ամենաաղետալի ճգնաժամը: 1929 թվականի հոկտեմբերի 24-ին, որը պատմության մեջ մնաց որպես «Սև հինգշաբթի», Նյույորքյան ֆոնդային բորսայում տեղի ունեցավ արժեթղթերի փոխարժեքների կտրուկ անկում՝ ընդհուպ մինչև 70%-ով: Սա մեծ խուճապ առաջացրեց և հանգեցրեց ակտիվների գնի էլ ավելի զգալի արժեզրկման: Մեկ շաբաթվա ընթացքում արժեթղթերի սեփականատերերի կրած վնասները կազմում էին շուրջ 15 մլրդ դոլար: Սկսվեց սնանկացումների մի երկար շղթա, փակվեցին խոշոր ֆինանսական և արտադրական ընկերություններ, գործազրկության մակարդակը հասավ աննախադեպ չափերի: ճգնաժամն արագ կերպով տարածվեց զարգացած կապիտալիստական երկրներում, որտեղ նույնպես առաջացան նմանատիպ բացասական դրսևորումներ: ճգնաժամի ընթացքում արդյունաբերական արտադրությունը կրճատվեց ԱՄՆ-ում շուրջ 46%-ով, Մեծ Բրիտանիայում՝ 24%-ով, Ֆրանսիա-

յում՝ 32%-ով, Գերմանիայում՝ 41%-ով: Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 1933 թվականի դրությամբ զարգացած 32 կապիտալիստական երկրներում գործազուրկ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակը կազմում էր շուրջ 30 մլն մարդ: Ճգնաժամի բացասական ազդեցությունները դրսևորվում էին ընդհուպ մինչև 1933 թվականը, սակայն, մինչև 1930-ական թվականների ավարտը դրա ազդեցությունները դեռ զգացնել էին տալիս:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին ճգնաժամը տեղ գտավ 1957 թվականին: Այն ընդգրկեց զարգացած կապիտալիստական երկրները՝ ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Նիդեռլանդներ և այլն: Այս ճգնաժամը տևեց շուրջ մեկ և կես տարի, և այդ ընթացքում արդյունաբերական արտադրության ծավալները նշված երկրներում կրճատվեցին մոտ 4%-ով, իսկ գործազուրկների թիվը՝ 10 մլն: Հաջորդ խոշոր ճգնաժամը տեղ գտավ ԱՄՆ-ում՝ 1973 թվականին: Համեմատած նախորդի հետ այն ավելի խորն էր և ավերիչ: Որոշ ցուցանիշների մասով այս ճգնաժամը մոտեցավ «Մեծ դեպրեսիային»: Մասնավորապես, այս ճգնաժամի արդյունքում ԱՄՆ-ում արդյունաբերական արտադրությունը կրճատվեց 13%-ով, Գերմանիայում՝ 22%-ով, ճապոնիայում՝ 20%-ով, Անգլիայում՝ 10%-ով, Ֆրանսիայում՝ 13%-ով, Իտալիայում՝ 14%-ով: Ֆինանսական շուկաները ևս անմասն չմնացին այս ճգնաժամից, մասնավորապես, միայն մեկ տարում՝ 1973-1974թթ, բաժնետոմսերի գները զգալի անկում ապրեցին. ԱՄՆ-ում՝ 33%-ով, Անգլիայում՝ 56%-ով, Ֆրանսիայում՝ 33%-ով, Իտալիայում՝ 28%-ով, ճապոնիայում՝ 17%-ով, Գերմանիայում՝ 10%-ով: Սնանկացող ընկերությունների թիվը 1973 թվականի համեմատ 1974 թվականին զգալի աճեց: Մասնավորապես, Անգլիայում այդ աճը կազմեց ընդհուպ մինչև 47%, ճապոնիայում՝ 42% և Գերմանիայում՝ 40%: Զարգացած մյուս կապիտալիստական երկրներում այս ցուցանիշը փոքր-ինչ ավելի մխիթարիչ էր, մասնավորապես, ԱՄՆ-ում այս ցուցանիշը ընդամենը 6% էր կազմում: Գործազուրկների թվաքանակը նույնպես զգալի աճեց այս ճգնաժամի արդյունքում: 1975 թվականին գործազուրկների ընդհանուր թիվը զարգացած կապիտալիստական երկրներում կազմեց շուրջ 15 մլն մարդ, իսկ մոտ 10 միլիոն մարդ տեղափոխվեցին ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատանքի կամ ժամանակավորապես ազատվեցին աշխատանքից: Հարկ է նշել, որ 1973 թվականին սկիզբ առավ նաև առաջին խոշորագույն էներգետիկ ճգնաժամը՝ կապված միջազգային շուկայում գնի բարձրացման նպատակով նավթարդյունահանող երկրների կողմից նավթի արդյունահանման ծավալները կտրուկ նվազեցնելու հետ: Այսպես, եթե 1973 թվականի ընթացքում միայն նավթի մեկ բառռելի գինը 3 ԱՄՆ դոլարից բարձրացավ մինչև 5 ԱՄՆ դոլար, իսկ արդեն 1974 թվականին՝ այդ գինը հասավ 12 ԱՄՆ դոլարի:

1987 թվականին համաշխարհային տնտեսության մեջ ևս մի տնտեսական ցնցում արձանագրվեց, երբ հոկտեմբերի 19-ին ամերիկյան «Dow Jones Industrial» ֆոնդային ինդեքսի ավելի քան 22%-անոց անկում գրանցվեց: Այս օրը պատմության մեջ մնաց որպես «Սև երկուշաբթի»: Ամերիկյան ֆոնդային շուկայի փլուզումը չէր կարող չազդել այլ տարածաշրջանների ֆինանսական շուկաների վրա: Եվ այդպես էլ եղավ: Հաջորդեցին Կանադայի, Հոնգկոնգի և Ավստրալիայի ֆոնդային շուկաների փլուզումները: Այս ճգնաժամը մասնագետները կապում էին, հիմնականում, մի քանի խոշոր ընկերությունների կապիտալիզացիայի կտրուկ նվազման հետևանքով ներդրողների արտահոսքի հետ:

1994-1995թթ. տեղ գտավ, այսպես կոչված, «Մեքսիկական ճգնաժամը»: Մեքսիկայի կառավարությունը դեռևս 1980-ական թվականների երկրորդ կեսերից իրականացնում էր արտասահմանյան կապիտալի ներգրավման հետևողական քաղաքականություն: Բազմաթիվ պետական ընկերությունների բաժնետոմսեր սկսեցին շրջանառվել ֆոնդային բորսայում, որի արդյունքում սկսած 1989 թվականից՝ օտարերկրյա կապիտալի մեծ հոսք սկսվեց դեպի Մեքսիկա: Սակայն, արդեն 1994 թվականին՝ ֆինանսական շուկայի գերհագեցվածության պատճառով, շատ ներդրողներ սկսեցին իրենց կապիտալն արտահանել Մեքսիկայից, որի արդյունքում մեծ խուճապ ու բանկային ճգնաժամ սկսվեց: Միայն 1995 թ. դրությամբ Մեքսիկայից շուրջ 10 մլրդ ԱՄՆ դոլարի կապիտալ արտահանվեց:

1997 թվականին Ասիական տարածաշրջանում արձանագրվեց ֆինանսական շուկայի փլուզում: Սա արդյունք էր Հարավարևելյան Ասիայի երկրներից կապիտալի զգալի արտա-

հոսքի՝ կապված այդ երկրների արժույթների դեալվացիայի հետ: Այս ճգնաժամը, թերևս այս տարածաշրջանի համար ամենախոշորն էր՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Ըստ հաշվարկների՝ Ասիական ճգնաժամի արդյունքում համաշխարհային ՀՆԱ-ն կրճատվեց շուրջ 2 տրիլիոն ԱՄՆ դոլարի չափով:

1998 թվականին սկիզբ առավ, այսպես կոչված, «Ռուսական ճգնաժամը», որը մեծ հարված հասցրեց այդ պետության տնտեսությանը: Այս ճգնաժամը արդյունք էր Ռուսաստանի պետական մեծ պարտքի, միջազգային շուկաներում հունքի գների անկման, իսկ Ռուսաստանը հանդիսանում էր և ներկայումս էլ մնում է նավթի և գազի խոշոր արտահանող: Պետական պարտքի չափերը հասան ահռելի չափերի: Փլուզվեց ռուսական ՊԿՊ-ների մինչ այդ մեծ պահանջարկ վայելող շուկայի հսկայական բուրգը, որին հաջորդեց դեֆոլտը: 1998 թվականի օգոստոսից մինչև 1999 թվականի հունվար ամիսն ընկած ժամանակահատվածում՝ ռուսական ռուբլու փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ նվազեց 3 անգամ՝ 6 ռուբլուց հասնելով մինչև 21 ռուբլու՝ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց¹:

Այժմ անդրադառնանք 2007 թվականին սկիզբ առած և մինչ օրս դեռևս ամբողջությամբ չհաղթահարված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին և նրա հիմքում ընկած խորքային պատճառներին: Տնտեսագետները և վերլուծաբանները նշում են վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի մի շարք պատճառներ, մասնավորապես.

- տնտեսության պարբերաշրջանայնությունը,
- վարկային և հատկապես հիփոթեքային շուկաների գերակտիվացումը,
- հունքի բավական բարձր գները,
- անարդյունավետ ֆինանսական կարգավորման մեթոդների կիրառությունը տարբեր երկրներում²:

Նշված պատճառները ավելի ընդհանրական են, քանի որ դրանցից բոլորը կամ մի մասը վերաբերում են, սովորաբար, համարյա բոլոր ճգնաժամային զարգացումներին: Ինչ վերաբերում է այս ճգնաժամին, ապա հարկ է նշել, որ այն ուներ որոշակի յուրահատկություններ, որը առիթ է տալիս եզրահանգելու, որ այս ճգնաժամը նման չէր նախկինում տեղ գտածներին: Այդ յուրահատկություններից հարկ է նշել, մասնավորապես, նախ և առաջ այն, որ այս ճգնաժամը իր խորությամբ և տարածքային ընդգրկվածությամբ թերևս ամենաառաջինն է համաշխարհային բուռն տենպերով աճող գլոբալիզացիոն գործընթացների արդի փուլում: Սրա հիմնական պատճառներն են տեղեկատվական տեխնոլոգիաների, ֆինանսական շուկաների և նոր ֆինանսական գործիքների արագ զարգացումն ու աննախադեպ աճը, ինչպես նաև կապիտալի միջազգային հոսքերի ավելի ազատականացումը: Համաշխարհային տնտեսության մեջ առևտրային և ֆինանսական հոսքերի անհամաչափություններն ավելի ցայտուն դրսևորումներ ձեռք բերեցին:

Երկրորդ կարևոր ուշագրավ առանձնահատկությունը կապված է զարգացած համարյա բոլոր երկրներում համախառն պահանջարկի ազդեցիվ խթանման քաղաքականության կիրառման հետ, ինչն ուղեկցվել է վակային ազատական և ընդլայնողական քաղաքականությամբ: Նշենք նաև, որ ֆինանսական նոր սպեկուլյատիվ գործիքների ներմուծումն ու արագ տարածումը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների արժեթղթավորման լայն տարածում գտած գործընթացները զանազան ֆինանսական բուրգերի ստեղծման օբյեկտիվ նախապայմաններ հանդիսացան: Սակայն, վերջիններս վաղ թե ուշ փլուզվելու էին և հանգեցնելու էին ֆինանսական համակարգի «կոլլապսի», ինչին և ակնատես եղանք ճգնաժամի սկզբնական շրջանում ամերիկյան հիփոթեքային պարտատոմսերի շուկայում, իսկ այնուհետև՝ նաև ողջ համաշխարհային ֆինանսական շուկայում: Երրորդ հերթին, այս ճգնաժամը հանդես եկավ որպես համաշխարհային տնտեսության մեջ շուկայական գործընթացների ապահավասարակշռության և խեղաթյուրման առաջին խոշոր հետևանք: Սա ժամանակի ընթացքում կուտակված շուկայական մեխանիզմների ձևախեղման առաջին սուր դրսևորումն էր և կապված էր 20-րդ

¹ <http://www.assessor.ru/forum/index.php?t=788>

² Վ.Հարությունյան, Կ.Սարգսյան, Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառները և դրա ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, հանրապետական գիտաժողովի նյութեր, Գիրք 1, Երևան, 2012.:

դարավերջից սկիզբ առած տեղեկատվական նոր տեխնոլոգիաների լայն թափով զարգացման և դրանց հիման վրա ստեղծված և մեծ տարածում գտած ֆինանսական ինովացիաների արագ տեմպերով ներդրման հետ: Վիրտուալ ֆինանսական ակտիվները դեպի իրենց էին գրավում մեծածավալ իրական դրամական միջոցներ, «խոստանալով» մի քանի անգամ ավելի բարձր շահութաբերություն, քան տնտեսության մեջ ներդրվելու դեպքում: Այս իրողության հետ է կապված մեծապես այն փաստը, որ վերջին ժամանակահատվածում ֆինանսական շուկաները զգալի և աննախադեպ չափերով աճել էին և բազմակի անգամ գերազանցում էին իրենց տարողունակությամբ ապրանքային շուկաներին, ինչը շուկայական համակարգի բնականոն գործունեության խեղաթյուրման վառ օրինակ է: Ինչ վերաբերում է վերջին ժամանակահատվածում համաշխարհային շուկայում տեղ գտած ակտիվների և արժույթի շարժի համընդհանուր ազատականացմանը, ապա դա, սկզբնական շրջանում, նպաստեց տնտեսական գործընթացների արդյունավետությանը, սակայն, հետագայում նաև՝ ճգնաժամի արագ և անխոչընդոտ տարածմանը:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ ճգնաժամը Եվրոպական Միության համար ունեցավ առանձնակի նշանակություն՝ կապված որոշ առանձնահատկությունների հետ: Առաջինը կապված է այս միության դերի փոփոխության հետ՝ աշխատանքի միջազգային բաժանման գործընթացում՝ դրանից բխող նրա մրցակցային դիրքերի թուլացմամբ: Մյուս առանձնահատկությունը կապված է ԵՄ տարածաշրջանային ընդլայնման հետ՝ դեպի արևելք: Արևելյան Եվրոպայի երկրների անցումային տնտեսությունները արդեն փաստացիորեն հանդիսանում են ԵՄ տնտեսական տարածության բաղկացուցիչ մաս, սակայն, ճգնաժամային ազդեցությունները անցումային տնտեսություններում արտահայտվում են այլ կերպ, քան զարգացած շուկայական տնտեսություններում, ինչն առաջացրեց այս տարածաշրջանի տնտեսության համար անհամաչափ շոկային ցնցումներ՝ պահանջելով լուրջ և հետևողական լուծումներ¹:

**Владимир Арутюнян
Карен Саргсян**

Анализ кризисов на разных стадиях развития мировой экономики

Аннотация

Экономические кризисы еще с давних времен сопутствуют социальному и экономическому развитию. Но постоянный и периодический характер они приобрели со времен становления капиталистических рыночных отношений. В данной статье исследованы экономические кризисы на разных стадиях развития мировой экономики и причины их возникновения.

**Vladimir Harutyunyan
Karen Sargsyan**

The analysis of crises during various stages of development of the global economy

Abstract

Economic crises come along with social and economic development over several centuries. However, permanent and periodical characteristics they obtain only since establishment of capitalistic market relations. The article investigates economic crises during various stages of development of world economy and reasons causing them as well.

¹ Буторина О.В. Антикризисная стратегия Европейского союза: ближние и дальние рубежи / О.В. Буторина // Полития. – 2009. – №3.

**ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԽՍԲԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՈՎ**

Ֆայաստանում գործող առևտրային բանկերն իրենց էությանը կարևորվում են երկրի թե՛ իրական և թե՛ ֆինանսական հատվածներում արդյունավետությունն ապահովելու գործընթացում, իսկ այդ բանկերն անխափան գործունեության համար էլ, որպես կարևորագույն նախապայման՝ անհրաժեշտ չափով ակտիվներով ապահովվածությունն է: Ընդհանուր առմամբ, պետք է նշել նաև այն իրողությունը, որ ի տարբերություն մնացած տնտեսավարող սուբյեկտների, առևտրային բանկերի ենթակայության ակտիվները տարբերվում են իրենց կազմով ու առանձնահատկություններով: Դրանց թվին են դասվում¹.

1. Դրամական ակտիվները, այդ թվում՝

- **կանխիկ դրամական միջոցները**, այդ թվում՝ ինչպես ազգային թղթադրամը, մետաղադրամը և արտարժույթը, որոնք կարող են գտնվել դրամարկղում, ճանապարհին և գործառնական գրասենյակներում, այնպես էլ կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը և բանկումատներում գտնվող կանխիկ դրամական միջոցները,
- **Կենտրոնական բանկում մնացորդները**, որոնց թվին են դասվում՝ թղթակցային հաշիվները, ներդրված ավանդները և ԿԲ-ում կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշիվը,
- **թղթակցային հաշիվները**՝ կապված ինչպես ռեզիդենտ, և ոչ ռեզիդենտ բանկերի, այնպես էլ այլ բանկերում կանոնադրական կապիտալի համալրման հաշիվի ու սառեցված հաշիվների հետ:

2. **Ոսկին** կապված դրա ստանդարտացված և ոչ ստանդարտացված ձուլակտորների, ինչպես նաև ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում ոսկով ավանդների հետ:

3. **Վերավաճառքի համար արժեթղթերը** (պարտքային արժեթղթեր, պարտատոմսեր, բաժնետոմսեր և այլ արժեթղթեր), որոնք պահվում են վերավաճառքի նպատակով՝ գների կարճաժամկետ տատանման արդյունքում եկամուտ ստանալու ակնկալիքով:

4. **Այլ բանկերի նկատմամբ պահանջներ**, որոնք կապված են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում ունեցած ավանդների, նրանց տրամադրված վարկերի ու օվերդրաֆտների հետ:

5. **Չաճախորդներին տրված վարկերը**, այդ թվում՝ ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին, բանկի աշխատակիցների ու բանկի հետ կապված անձանց տրամադրված վարկերը, վարկային քարտերն ու օվերդրաֆտները, ինչպես նաև ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստները:

6. **Չաշվարկված կամ ստացվելիք տոկոսները**, որոնց թվին են դասվում դրամական ակտիվներից և ներդրված ավանդներից, վարկերից ու վարկային քարտերից, օվերդրաֆտներից, կուտակված ներդրումներից ստացվելիք տոկոսները, ինչպես նաև այն տոկոսները և ստացվելիք այլ եկամուտները, որոնք գոյանում են ստորադաս փոխատվություններից ու ֆինանսական այլ գործառնություններից:

7. **Այլ մասնաճյուղերի գծով ստացվելիք գումարները**, որում ներառվում են ինչպես մատուցված հավատարմագրային կամ լիազորագրային կառավարման ծառայությունների դիմաց, այնպես էլ ֆակտորինգային գործառնությունների, ֆինանսական լիզինգի, հաճախորդներին մատուցած ծառայությունների գծով ստացվելիք գումարները:

8. **Առհաշիվ տրված գումարներն ու կանխավճարները**, որոնք պայմանավորված են բանկին առնչվող անձանց և նրա աշխատակիցների հետ կապված հաշվարկներով՝ մասնավորա-

¹ Բաբայան Վ., Բանկային գործի հիմունքներ, Երևան, «Տիգրան Մեծ», 2003, էջ 90:

պես ռեզիդենտ ու ոչ ռեզիդենտ մատակարարներին, պետական և տեղական բյուջեներին տրամադրված կանխավճարներն ու գալիք ժամանակաշրջանի ծախսերը:

9. **Վաճառքի համար նախատեսված արժեթղթերը**, որոնք պահվում և վաճառվում են ձեռքբերման սկզբնական արժեքով, իսկ գնի փոփոխության դեպքում՝ իրական շուկայական արժեքով:
10. **Միջև մարման ժամկետը պահվող արժեթղթերը, որոնք առնչվում են**¹ դուստր բանկերի և փոխկապակցված այլ ֆինանսական կազմակերպությունների պարտքային արժեթղթերի, պետական կամ ոչ պետական արժեթղթերի գծով այլ արժեթղթերում կատարված ներդրումների, հետգնման պայմանագրով տնօրինվող արժեթղթերի և ոչ ռեզիդենտների կողմից թողարկված պետական կամ ոչ պետական արժեթղթերում կատարված ներդրումների հետ:
11. **Հիմնական միջոցները**¹՝ այսինքն՝ հողը, շենքերը, կահույքը և գրասենյակային սարքավորումները, համակարգիչներն ու հաղորդակցման միջոցները, փոխադրամիջոցները, անավարտ շինությունները, ֆինանսական լիզինգով ստացված հիմնական միջոցները, ինչպես նաև այլ երկարաժամկետ ակտիվները, որոնք օգտագործվում են բանկի գործունեության ընթացքում:
12. **Ոչ նյութական ակտիվները, որոնց թվին են դասվում**¹ տարբեր իրավունքները, որոնք բանկը գնել է և դրանք կարող են օգտակար լինել բանկի հետագա գործունեության համար, օրինակ՝ գուղվիլը, լիցենզիաները, ապրանքանշանները, համակարգչային ծրագրերը և այլ ոչ նյութական ակտիվները:
13. **Այլ ակտիվները**, որում ներառվում են գրավի տնօրինման արդյունքում կամ այլ պահանջներից առաջացած անշարժ գույքը կամ այլ ակտիվները, շահագործումից դուրս հիմնական միջոցները, հետաձգման հարկերի գծով առաջացած ակտիվները և այլ ակտիվները, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն, և տևողությունը մեկ տարուց ավելի է:

Այժմ, ելնելով վերոնշյալներից՝ ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր ակտիվների փոփոխությունների վերաբերյալ ավելի հստակ պատկերացում ունենալու համար, աղյուսակ 1-ի միջոցով ներկայացնենք դրանց համահունչ ամփոփ տվյալները՝ ըստ 2007-2012թթ.¹:

Աղյուսակ 1-ի վերլուծության արդյունքում, ակնհայտ է դառնում, որ ըստ ուսումնասիրվող տարիների բոլոր առևտրային բանկերի ակտիվներն ունեցել են աճման միտում, որին նպաստել են ոչ միայն սեփական կապիտալում ներառված համապատասխան բաղադրիչները (մասնավորապես հարկումից հետո զուտ շահույթը), այլ նաև պարտավորությունները (հաճախորդներից ներգրաված միջոցներն ավանդների տեսքով): Ուստի, այդ առումով էլ պարտավորություններին համահունչ առևտրային բանկերի ակտիվները 2012 թվականի վերջի դրությամբ 2007 թվականի նկատմամբ ավելացել են՝ 1.621,4 մլրդ դրամով կամ 205,1%-ով (1.621.4:790,7x100%): Հատկապես ակտիվների ավելացման միտումները եղել են ի հաշիվ՝ «Ամերիաբանկ», «Ակբա-կրեդիտագրիկոլ բանկ», «ՎՏԲ- Հայաստան բանկ», «ԵՅ-Էս-Բի-Սի Հայաստան» և «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ների գործարար ակտիվության:

Ակտիվների վերլուծության առումով կարևորվում է ըստ դրանց խմբավորման մեթոդի կիրառումը, որի իրականացման համար օգտագործվում է վիճակագրության ընդհանուր տեսությունից հայտնի հետևյալ հավասարումը՝

$$n = 1 + 3,322lgN \quad (1)$$

որտեղ՝

n-ը խմբերի թվաքանակն է,

N-ը ուսումնասիրության ենթակա միավորների քանակը:

Ուստի, ելնելով վերոնշյալ հավասարումից և աղյուսակ 1-ի տվյալներից, որտեղ *N*=22-ի, հաշվարկային *n*-ը հավասար կլինի 5-միավորի:

¹ ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություններ (2007-2012թթ.):

ՀՀ առևտրային բանկերի ակտիվների կազմն ու կառուցվածքը՝ ըստ 2007-2012թթ.*

h/h	Բանկեր	31.12.07 թ.		31.12.08 թ.		31.12.09 թ.		31.12.10 թ.		31.12.11 թ.		31.12.12 թ.	
		հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. ակտիվ. %	հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. ակտիվ. %	հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. ակտիվ. %	հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. ակտիվ. %	հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. ակտիվ. %	հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. ակտիվ. %
1.	«Էյչ-ես-բի-սի բանկ Յայաստան» ՓԲԸ	104.461.156	13,2	121.818.843	11,8	135.810.673	10,1	144.949.741	9,2	179.065.372	8,6	211.481.718	8,7
2.	«Արդշինհիմվեստ-բանկ» ՓԲԸ	93.826.092	11,9	113.833.544	11,0	119.481.150	8,8	119.128.775	7,6	161.568.308	7,8	204.496.021	8,5
3.	«Ակբա-կրեդիտ-ագրիկուլ բանկ» ՓԲԸ	80.306.517	10,3	123.800.030	12,0	162.752.421	12,1	168.183.879	10,7	218.625.325	10,6	248.997.679	10,3
4.	«ՎՏԲ-Յայաստան բանկ» ՓԲԸ	70.095.958	8,9	99.240.724	9,6	120.779.145	9,0	127.440.097	8,0	182.574.133	8,8	212.844.374	8,8
5.	«Յայեկոնոմբանկ» ԲԲԸ	50.428.770	6,4	50.309.801	4,8	52.704.511	3,9	51.429.030	3,3	60.351.343	2,9	65.811.974	2,7
6.	«Կոնվերսբանկ» ՓԲԸ	58.748.509	7,4	71.862.420	6,9	78.941.378	5,9	86.671.796	5,6	144.399.680	7,0	117.358.478	4,9
7.	«Յունիբանկ» ՓԲԸ	45.601.881	5,9	68.759.297	6,6	108.600.839	8,1	115.320.709	7,3	115.933.983	5,6	138.971.902	5,8
8.	«Անելիքբանկ» ՓԲԸ	32.119.860	4,1	36.170.523	3,5	49.019.874	3,6	59.719.236	3,9	73.450.422	3,5	64.002.236	2,7
9.	«Արցախբանկ» ՓԲԸ	22.323.525	2,8	31.770.170	3,1	44.679.927	3,3	51.374.945	3,3	67.557.116	3,3	87.968.071	3,6
10.	«Ինելդոբանկ» ՓԲԸ	35.788.198	4,5	44.321.569	4,2	48.483.671	3,6	58.833.060	3,8	88.778.801	4,3	109.993.050	4,6
11.	«Յայբիզնեսբանկ» ՓԲԸ	33.163.197	4,2	43.155.297	4,1	93.624.125	7,0	117.907.577	7,5	168.464.635	8,2	187.336.063	7,8
12.	«Առէկսիմբանկ» ՓԲԸ	20.841.015	2,6	32.529.931	3,1	39.025.080	2,9	67.418.990	4,3	95.860.059	4,6	123.419.073	5,2
13.	«Յայներարտբանկ» ՓԲԸ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	13.567.717	1,7	49.195.078	4,7	103.503.038	7,7	153.002.751	9,6	201.400.419	9,6	245.037.585	10,2
14.	«Արմսվիստբանկ» ՓԲԸ	21.655.428	2,7	23.482.269	2,2	29.711.610	2,2	35.093.577	2,2	48.315.943	2,3	54.686.304	2,3
15.	«ԲՏԱ ինվեստբանկ» ՓԲԸ	17.881.413	2,3	13.183.600	1,3	8.423.327	0,6	8.248.050	0,5	9.405.533	0,4	13.270.934	0,5
16.	«Սելլաթբանկ Յայաստան» ՓԲԸ	11.287.432	1,5	11.038.958	1,1	12.464.718	0,9	33.161.825	2,1	26.369.759	1,3	15.486.022	0,6
17.	«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ	13.969.709	1,8	16.314.462	1,6	21.571.119	1,6	22.712.999	1,5	36.104.634	1,7	51.134.115	2,1
18.	«Կասկադբանկ» ՓԲԸ	10.979.650	1,4	13.906.282	1,4	19.068.692	1,5						
19.	«Պրոմոթեյբանկ» ՍՊԸ	13.400.236	1,7	16.140.335	1,5	21.531.477	1,6	27.487.615	1,7	41.349.061	2,1	55.400.152	2,3
20.	«Արարտբանկ» ՓԲԸ	27.754.478	3,5	29.719.238	2,9	41.342.014	3,0	62.952.972	4,5	87.708.110	4,2	113.713.133	4,7
21.	«Բիբլոսբանկ» ՓԲԸ	5.878.690	0,7	13.795.573	1,4	17.589.814	1,3	28.782.973	1,8	37.816.105	1,8	48.951.493	2,0
22.	«Պրոկրեդիտբանկ» ՓԲԸ	6.656.472	0,8	11.902.118	1,2	16.996.494	1,3	24.799.526	1,6	30.252.349	1,4	41.809.599	1,7
Ընդամենն ակտիվներ		790.735.843	100,0	1.036.250.062	100,0	1.346.105.097	100,0	1.567.619.223	100,0	2.075.371.090	100,0	2.412.169.976	100,0

18

* Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից:

ՀՀ առևտրային բանկերի ակտիվների համեմատական վերլուծությունը՝ ըստ խմբավորումների (2007-2012թթ.)**

h/h	31.12.2007թ				31.12.2008թ			31.12.2009			31.12.2010			31.12.2011			31.12.2012		
	Յուրաքանչյուր խմբի միջակայքի մեծությունը, մլրդ դր	Միջակայքում ընդգրկված բանկերի քիվը	Յուրաք. խմբում ընդհանուր գումարը, մլրդ դր	Յուրաք. խմբի միջին մեծությունը, մլրդ դր	Միջակայքում ընդգրկված բանկերի քիվը	Յուրաք. խմբում ընդհանուր գումարը, մլրդ դր	Յուրաք. խմբի միջին մեծությունը, մլրդ դր	Միջակայքում ընդգրկված բանկերի քիվը	Յուրաք. խմբում ընդհանուր գումարը, մլրդ դր	Յուրաք խմբի միջին մեծությունը, մլրդ դր	Միջակայքում ընդգրկված բանկերի քիվը	Յուրաք. խմբում ընդհանուր գումարը, մլրդ դր	Յուրաք. խմբի միջին մեծությունը, մլրդ դր	Միջակայքում ընդգրկված բանկերի քիվը	Յուրաք. խմբում ընդհանուր գումարը, մլրդ դր	Յուրաք. խմբի միջին մեծությունը, մլրդ դր	Միջակայքում ընդգրկված բանկերի քիվը	Յուրաք. խմբում ընդհանուր գումարը, մլրդ դր	Յուրաք. խմբի միջին մեծությունը, մլրդ դր
Ա	Բ	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
I	մինչև 20	8	93,8	11,7	7	96,2	13,7	5	74,6	14,9	1	8,2	8,2	1	9,4	9,4	2	28,8	14,4
II	20-40	7	193,7	27,7	5	153,5	30,7	4	111,8	33,3	6	172,1	28,7	4	130,6	32,7			
III	40-60	3	154,8	51,6	4	186,9	46,7	5	236,2	47,2	4	221,3	55,3	2	89,6	44,8	5	252	50,4
IV	60-80	1	70,1	70,1	2	140,7	70,4	1	78,9	78,9	2	130,4	65,2	3	201,5	67,2	2	129,8	64,9
V	80-ից բարձր	3	92,9	92,9	4	458,6	114,7	7	844,6	844,6	8	1032,5	129,1	11	1644,4	149,5	12	2001,4	166,8
Ընդամենը		22	35,9	35,9	22	1035,9	47,1	22	1346,1	1346,1	21	1567,5	74,5	21	2075,4	98,8	21	2412	114,9

19

** Աղյուսակի կազմումը և հաշվարկների կատարումը հեղինակիցն է:

Վերլուծության առումով միաժամանակ կարևորվում է յուրաքանչյուր խմբի միջակայքի որոշումը, որն արտահայտում է հետևյալ բանաձևով

$$h = \frac{X_{max} - X_{min}}{n} \quad (2)$$

h -ը յուրաքանչյուր միջակայքի մեծությունն է.

X_{max} և X_{min} – ը ուսումնասիրվող շարքի (ակտիվների) մեծագույն ու փոքրագույն արժեքների տարբերությունն է, որն ըստ բանաձևի հաշվարկի հավասար է 20 միավորի (2007 թվականի տվյալներով):

Հիմք ընդունելով n -ի, h -ի մեծությունները և աղյուսակ 1-ի ելակետային տվյալները, կազմել ենք աղյուսակ 2-ը խմբավորման մեթոդով:

Աղյուսակ 2-ի տվյալներից պարզվում է, որ ըստ տարիների մինչև 20 մլրդ դրամ ակտիվներ ունեցող առևտրային բանկերի թվաքանակի նվազման միտում է տեղի ունեցել, և արդյունքում 2007 թվականի 8 բանկերի փոխարեն 2012 թվականի վերջի դրությամբ դրանց թիվը հասել է 2-ի: Դրանք են՝ «ԲՏԱ ինվեստբանկ» և «Մելլաթբանկ» ՓԲԸ-ները, իսկ ահա 80 մլրդ դրամ և ավելի ակտիվների դեպքում տեղի է ունեցել աճման միտում՝ 2007 թվականի 3 բանկերի փոխարեն դարձել են 12 բանկեր, որը պետք է ասել, որ դրական երևույթ է, քանի որ խոշոր առևտրային բանկերն ավելի շատ կարող են դիմակայել ֆինանսատնտեսական ճգնաժամերին, քան ավելի պակաս ակտիվներ ունեցող բանկերը:

Сергей Агаронян

Анализ активов коммерческих банков РА посредством методов группировки и структурного анализа

Аннотация

Весьма важным для деятельности коммерческих банков представляется формирование достаточного объема активов в соответствии с экономическими нормативами, поскольку их составом и структурой обусловлено беспрепятственное проведение активных операций банков.

Sergey Aharonyan

Analysis of assets of the banks of the republic of Armenia through grouping method and structural analysis

Abstract

Sufficient level of assets in compliance with the norms by the commercial banks is crucial in ensuring efficient performance of the banks, since the composition and the structure of assets enables them to operate bank assets safely and smoothly.

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ բանկային համակարգում իրենց ուրույն տեղն ունեն առևտրային բանկերը, որոնց գործունեությունով էլ պայմանավորված են տնտեսության իրական և ֆինանսական հատվածներում տեղի ունեցող փոփոխությունները: Ուստի, այդ առումով էլ կարևորվում են այդ բանկերի ենթակայության տակ գտնվող ակտիվների և դրանց համահունչ պասիվների բավարար չափով լինելը: Պասիվներում էլ առանձնանում են բանկերի պարտավորությունները, որոնց հիմնական մասը կազմում են ավանդները, այսինքն՝ այն դրամական միջոցները, որոնք հաճախորդների կողմից ներդրվում են բանկերում՝ ակտիվների համալրման և որոշակի նպատակների օգտագործման համար: Ելնելով դրանց կարևորությունից՝ պետք է նշել այն իրողությունը, որ արդեն ձևավորված պարտավորությունների արդյունավետ կառավարումն իր ազդեցությունն է թողնում բանկի իրացվելիության ու սպասվելիք եկամտաբերության մակարդակի վրա: Այդ իսկ պատճառով էլ բանկի ֆինանսների կարգավորման գործընթացում խիստ կարևորվում է պարտավորությունների արդյունավետ կառավարման հիմնախնդիրը, որին հասնելու համար անհրաժեշտ է տարանջատել տվյալ բանկի պարտավորություններն ըստ դրանց ներգրավման բնույթի՝ ցպահանջ և ժամկետային առումներով¹: Ցպահանջ պարտավորությունները՝ դրանք թղթակցային և հաշվարկային հաշիվներում առկա այն դրամական միջոցներն են, որոնք ենթակա են վերադարձման՝ հաճախորդի առաջին իսկ պահանջի դեպքում: Կառավարման տեսանկյունից զնահատելիս, ցպահանջ պարտավորությունները երկակի բնույթ ունեն՝ մի կողմից, ներգրավված միջոցների դիմաց բանկը տոկոսներ չի վճարում (դրանք բանկի համար միջոցների ներգրավման ամենաէթան աղբյուրն են և գերադասելի են բանկի համար), իսկ մյուս կողմից, այդ պարտավորությունները կարող են ժամանակի ցանկացած պահին պահանջվել հաճախորդի կողմից և, բանկը մշտապես պետք է պատրաստ լինի վճարել դրանք, այսինքն՝ բանկը ժամանակի ցանկացած պահին պետք է ապահովի իրացվելիության բավարար մակարդակ:

Ի տարբերություն նախորդի, ժամկետային պարտավորությունները բավականաչափ ծախսատար են, քանի որ բանկը դրանց դիմաց տոկոսագումար է վճարում՝ սահմանված տոկոսադրույքին համահունչ: Սակայն պարտավորությունների ժամկետայնության տեսանկյունից այն առավել հեշտ կառավարելի է, քանի որ դրանց հետպահանջի ժամկետը նախօրոք ամրագրված է, բայց պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ ավանդի հետ պահանջի դեպքում, հաճախորդը պարտադիր տուգանք է մուծում բանկին:

Տարանջատելով բանկի պարտավորություններն ըստ ներգրավման աղբյուրների, կարող ենք հետևություն անել դրանց կառավարման գործընթացում բանկի վարած քաղաքականության, ֆինանսական շուկայում՝ որպես միջնորդի նրա կայացման, տնտեսության ակտիվության և բանկի իրացվելիության վերաբերյալ:

Միաժամանակ, եթե բանկի պարտավորությունների կազմում գերակշռում են բանկերից ներգրավված դրամական միջոցները, ապա կարելի է եզրակացնել, որ բանկը կանգնած է լուրջ հիմնախնդիրների առջև, այսինքն՝ կորցրել է իր հիմնական հաճախորդների վստահությունը:

Այնուհետ, եթե բանկի պարտավորությունների կազմում գերակշռում են ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները, ապա կարելի է եզրակացնել, որ բանկը կարողացել է ստանձնել «ազատ միջոցներ ներգրավողի» իր գործընթացը: Արդյունքում, ներգրավված միջոցների ծավալը վկայում է տնտեսության ակտիվության, խնայողությունների մակարդակի, բանկերի նկատմամբ բնակչության վստահության մասին: Միաժամանակ, բանկերի կողմից առավել մեծ ծավալի ռեսուրսների ներգրավմանը նպաստում են տվյալ բանկի հեղինակության նկատմամբ վստահությունը, մակրոտնտեսական կայուն իրավիճակը, սղաճի ցածր տեմպերը և նմանատիպ այլ գործոններ:

ՀՀ առևտրային բանկերի պարտավորությունների վերաբերյալ ավելի հստակ պատկերացում ունենալու համար ներկայացնենք աղյուսակ 1-ը, որում ներառված են 2007-2012թթ. տվյալները²:

¹ Ասատրյան Գ., Բանկի կառավարման հիմունքներ, Երևան, «Տիգրան Մեծ», 2003, էջ 137:

² ՀՀ Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն (2007-2012թթ.)

ՀՀ առևտրային բանկերի պարտավորությունների կազմն ու կառուցվածքը՝ ըստ 2007-2012թթ.-երի վերջի դրությամբ

h/h	Բանկերի անվանումները	31.12.07 թ.		31.12.08 թ.		31.12.09 թ.		31.12.10 թ.		31.12.11 թ.		31.12.12 թ.	
		հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. պարտ.,%	հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. պարտ.,%	հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. պարտ.,%	հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. պարտ.,%	հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. պարտ.,%	հազ. դրամ	տես. կշիռը ընդհ. պարտ.,%
1.	«ԷյՋ-Էս-բի-սի բանկ Հայաստան» ՓԲԸ	93.835.619	15,2	109.309.454	13,3	118.667.212	11,2	120.234.910	9,7	148.748.788	8,7	175.970.788	8,7
2.	«Արդշինհինվեստ-բանկ» ՓԲԸ	75.180.269	12,2	87.930.983	11,0	92.146.063	8,7	90.032.053	7,3	129.857.475	7,6	168.073.737	8,4
3.	«Ակբա-կրեդիտ-ագրիկոլ բանկ» ՓԲԸ	59.047.947	9,5	97.734.133	12,2	127.333.997	12,0	128.819.820	10,4	173.336.140	10,3	199.233.605	9,9
4.	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ	49.389.913	8,0	75.390.219	9,4	95.492.109	9,0	98.037.848	7,9	152.038.337	8,9	165.953.038	8,2
5.	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	41.949.571	6,8	41.582.942	5,2	44.075.009	4,2	42.669.003	3,4	51.138.628	3,0	49.495.054	2,5
6.	«Կոնվերսբանկ» ՓԲԸ	47.791.721	7,7	58.728.262	7,3	66.802.898	6,3	73.252.022	5,9	127.029.596	7,6	99.934.578	4,9
7.	«Յունիբանկ» ՓԲԸ	38.592.078	6,2	59.298.618	7,5	96.988.948	9,2	99.595.646	8,0	98.274.858	5,9	119.952.499	5,9
8.	«Անելիքբանկ» ՓԲԸ	26.703.142	4,3	30.554.276	3,9	33.752.034	3,2	44.411.114	3,6	57.999.698	3,4	56.329.163	2,8
9.	«Արցախբանկ» ՓԲԸ	17.768.708	2,9	26.071.366	3,3	37.099.520	3,5	42.355.054	3,4	57.268.022	3,3	75.263.872	3,7
10.	«Ինելկոբանկ» ՓԲԸ	29.000.929	4,7	35.940.851	4,4	38.314.391	3,6	46.025.456	3,8	73.779.639	4,3	91.535.562	4,6
11.	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	27.070.634	4,4	36.219.073	4,6	77.219.228	7,3	100.026.590	8,1	145.083.453	8,5	181.463.596	9,1
12.	«Առեկսիմբանկ» ՓԲԸ	17.308.755	2,8	22.603.221	2,8	25.009.289	2,4	52.523.728	4,3	80.149.492	4,7	106.462.714	5,3
13.	«Հայներարտբանկ» ՓԲԸ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10.126.720	1,6	28.832.330	3,6	81.778.846	7,7	120.866.784	9,8	166.317.253	9,8	208.137.841	10,3
14.	«Արմսվիստբանկ» ՓԲԸ	17.744.440	2,9	17.965.441	2,2	21.649.304	2,0	26.126.954	2,1	37.912.109	2,2	39.809.563	2,1
15.	«ԲՏԱ Ինվեստբանկ» ՓԲԸ	12.510.605	2,0	7.703.721	1,0	3.326.977	0,3	3.042.099	0,2	3.945.667	0,2	7.568.995	0,5
16.	«Սելլաքբանկ Հայաստան» ՓԲԸ	7.367.242	1,2	4.964.135	0,6	6.764.392	0,6	25.042.659	2,0	16.092.925	0,9	4.733.703	0,2
17.	«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ	9.264.642	1,5	10.523.189	1,3	15.322.484	1,4	15.616.780	1,3	28.258.958	1,7	42.525.719	2,3
18.	«Կասկադբանկ» ՓԲԸ	6.003.831	1,0	8.290.638	1,1	11.461.027	1,1	-	-	-	-	-	-
19.	«Պրոմեթեյբանկ» ՍՊԸ	5.238.514	0,8	7.137.432	0,9	11.849.931	1,1	17.185.937	1,4	22.573.953	1,3	35.108.921	1,7
20.	«Արարտբանկ» ՓԲԸ	23.144.890	3,7	22.170.140	2,8	33.493.709	3,2	52.679.404	4,3	75.475.503	4,5	97.253.789	4,8
21.	«Բիբլոսբանկ» ՓԲԸ	2.896.816	0,5	5.493.404	0,7	9.206.501	0,9	20.116.257	1,6	28.846.600	1,7	42.187.429	2,3
22.	«Պրոկրեդիտբանկ» ՓԲԸ	884.664	0,1	6.413.674	0,8	11.543.725	1,1	19.061.575	1,5	24.828.486	1,5	35.665.890	1,8
Ընդամենը		618.922.650	100,0	797.857.502	100,0	1.059.297.594	100,0	1.237.721.693	100,0	1.698.955.580	100,0	2.022.660.057	100,0

ՀՀ առևտրային բանկերի պարտավորությունների խնդիրները՝ ըստ 2007-2012թթ.երի

h/h	Միջակայքերի մեծությունը, մլրդ դրամ	2007թ.			2008թ.			2009թ.			2010թ.			2011թ.			2012թ.		
		Յուրաք. միջակայքում խնդիրների թիվը	Յուրաք. միջակայքում պարտավոր., մլրդ դրամ	Յուրաք. միջակայքում պարտավոր. միջին մեծ., մլրդ դրամ	Յուրաք. միջակայքում խնդիրների թիվը	Յուրաք. միջակայքում պարտավոր., մլրդ դրամ	Յուրաք. միջակայքում պարտավոր. միջին մեծ., մլրդ դրամ	Յուրաք. միջակայքում խնդիրների թիվը	Յուրաք. միջակայքում պարտավոր., մլրդ դրամ	Յուրաք. միջակայքում պարտավոր. միջին մեծ., մլրդ դրամ	Յուրաք. միջակայքում խնդիրների թիվը	Յուրաք. միջակայքում պարտավոր., մլրդ դրամ	Յուրաք. միջակայքում պարտավոր. միջին մեծ., մլրդ դրամ	Յուրաք. միջակայքում խնդիրների թիվը	Յուրաք. միջակայքում պարտավոր., մլրդ դրամ	Յուրաք. միջակայքում պարտավոր. միջին մեծ., մլրդ դրամ	Յուրաք. միջակայքում խնդիրների թիվը	Յուրաք. միջակայքում պարտավոր., մլրդ դրամ	Յուրաք. միջակայքում պարտավոր. միջին մեծ., մլրդ դրամ
1.	մինչև 20	11	107.12	9.74	8	68.49	8.56	7	69.47	9.93	4	54.91	13.73	2	20.04	10.02	2	12.30	6.15
2.	20-40	5	144.52	28.90	7	202.39	28.91	6	189.32	31.55	3	71.29	23.76	5	142.42	28.48	3	110.58	36.86
3.	40-60	4	198.18	49.55	3	159.61	53.20	1	44.08	44.08	6	280.66	46.78	3	166.41	55.47	4	190.54	47.63
4.	60-80	1	75.18	75.18	1	75.39	75.39	2	144.02	72.01	1	73.25	73.25	2	149.26	74.63	1	75.26	75.26
5.	80-ից բարձր	1	93.84	93.84	3	291.97	97.33	6	612.41	102.07	7	757.62	108.23	9	1220.83	135.65	11	1633.97	148.54
Ընդամենը		22	618.82	28.13	22	797.86	36.27	22	105.30	48.15	21	1237.72	58.94	21	1698.95	80.90	21	2022.66	95.37

Աղյուսակ 1-ի տվյալներից ակնհայտ է դառնում, որ ըստ ուսումնասիրվող տարիների, Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի պարտավորությունների կազմում իրենց բարձր տեսակարար կշիռներով կարևոր տեղ են զբաղեցնում փակ բաժնետիրական ընկերություններ համարվող՝ «Ակբա - կրեդիտ - ագրիկոլ բանկ»-ը, «Արդշինհիմնվեստբանկ»-ը, «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»-ը, «ՎՏԲ-Հայաստան բանկ»-ը, «Հայբիզնեսբանկ»-ը և 2008թ. «Հայնեարտբանկ»-ի փոխարեն ձևավորված «Ամերիաբանկ»-ը, որոնք համատեղ 21 բանկերի կազմում ապահովում են պարտավորությունների 54,5% տեսակարար կշիռ՝ 2012թ. վերջի դրությամբ:

Միաժամանակ, ուսումնասիրվող վեց տարիների ընթացքում ավելացման միտում է գրանցվել ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր պարտավորությունների գծով: Այսպես, 2007թ. համեմատ 2012թ. պարտավորությունները բացարձակ առումով ավելացել են 1.403.7 մլրդ. դրամով, իսկ հարաբերական առումով՝ 226,8%-ով: Դա վկայում է այն մասին, որ առևտրային բանկերի նկատմամբ հաճախորդների վստահությունն աստիճանաբար մեծանում է:

Առևտրային բանկերի գործունեության գնահատման և վերլուծության համար կարևորվում է ըստ պարտավորությունների խմբավորումը, որը կարող ենք իրականացնել հավասար և ոչ հավասար միջակայքերով: Ուստի վերլուծության և ավելի իրատեսական լինելու առումով, նպատակահարմար ենք գտել խմբավորումը կատարել հավասար միջակայքով՝ հիմնվելով 5 խմբի և 20 մլրդ դրամ միջակայքի վրա:

Հիմք ընդունելով խմբերի, միջակայքերի մեծությունները և աղյուսակի 1-ի տվյալները, կազմել ենք աղյուսակ 2-ը:

Աղյուսակ 2-ի տվյալներից պարզվում է, որ ըստ ուսումնասիրվող տարիների՝ 2007թ. գործող 22 առևտրային բանկերից մինչև 20 մլրդ դրամ պարտավորություններ ունեցող բանկերի թիվը 11-ն է, իսկ 80 մլրդ դրամից բարձր ունեցողն ընդամենը մեկն է, այն էլ՝ «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ-ն: Միաժամանակ, ըստ աղյուսակի ակնհայտ է, որ 2012թ. վերջում տեղի է ունեցել հակառակ գործընթացը, որի արդյունքում մինչև 20 մլրդ դրամ պարտավորություն ունեցող բանկերի թիվը նվազել է՝ հասնելով 2-ի («ԲՏԱ ինվեստ բանկ» և «Սելլաթբանկ Հայաստան» ՓԲԸ-ները), իսկ 80 մլրդ դրամ և ավելի պարտավորություններ ունեցող առևտրային բանկերի թվին արդեն 11-ն է, որոնցից հատկապես բարձր վարկանիշ ունեն՝ «Ամերիաբանկ», «Ակբա-կրեդիտ-ագրիկոլ բանկ», «Հայբիզնեսբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան», «Արդշինհիմնվեստբանկ» ՓԲԸ-ները:

Այսպիսով, վերլուծությունների արդյունքներից գալիս ենք այն հետևության, որ առևտրային բանկերի խոշորացումն ըստ պարտավորությունների՝ բավականաչափ դրական և հուսալի երևույթ է, քանի որ ակտիվներին համահունչ ավելանում է ավանդատու հանդիսացող հաճախորդների թվաքանակը:

Sergey Aharonyan

The comparative analysis of the structure of liabilities of commercial banks

Abstract

The need for efficient performance forces the commercial banks, besides the equity capital in the structure of liabilities to ensure liabilities to the maximum extent, namely, required for formation of loan portfolios of banks.

Сергей Агаронян

Сровнительный анализ обязательств коммреских банков РА

Аннотация

Исходя из необходимости осуществления эффективной деятельности коммерческие банки помимо собственного капитала в составе пассивов должны иметь максимальные обязательства, в частности, по формированию весьма важного для банка кредитного портфеля.

**ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ
ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ներկայումս, պետության առջև ծառայած տնտեսական և սոցիալական բազմաթիվ մարտահրավերների ու խնդիրների լուծումը պահանջում է արդյունավետ տնտեսական քաղաքականության մշակման և իրագործման համալիր մոտեցում, որում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հարկային քաղաքականությունը: Դա բնական է, քանի որ պետության կողմից արտադրատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով պահանջվող ծախսերի ֆինանսավորման, ինչպես նաև պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրը հարկերն են:

Յուրաքանչյուր երկրում հարկային քաղաքականության իրականացման հիմնական նպատակը անհրաժեշտ քանակության հարկային եկամուտների ձևավորումն է՝ ըստ գործող հարկային օրենսդրության ու սահմանված նորմատիվային ակտերի: Հարկային քաղաքականությունը հիմնվում է տվյալ երկրում ձևավորված հարկային համակարգի վրա: Վերջինս տվյալ երկրի օրենսդրությամբ ամրագրված հարկերի համախումբ է՝ հիմնված հստակ ձևավորված սկզբունքների, կանոնների և ընթացակարգերի վրա՝ կապված դրանց սահմանման, գանձման, ժամանակին և ամբողջական կերպով հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության և դրանց չվճարման համար պատասխանատվության սահմանման հետ:

Պետությունն իր հարկային քաղաքականությունը կարող է իրականացնել երկու ուղղությամբ: Մի դեպքում, հարկային քաղաքականության շնորհիվ կարող է ապահովվել միայն ֆիսկալ արդյունք՝ բարձր հարկային եկամուտների տեսքով: Այդ նպատակով պետությունը պարբերաբար վերանայում է հարկային դրույքաչափերը, ինչի արդյունքում համախառն ներքին արդյունքի կառուցվածքում հարկային եկամուտների տեսակարար կշիռը մեծանում է: Տնտեսագիտության մեջ այսօրինակ հարկային քաղաքականությունն ընդունված է անվանել զսպող կամ կաշկանդող:

Մյուս դեպքում՝ պետությունը հարկային քաղաքականության խթանիչ դերի բարձրացման միջոցով կարող է կրճատել հարկային բեռը և խթանել տնտեսական երկարաժամկետ աճը: Բնականաբար, այն սկզբնական հատվածում կուղեկցվի պետական հարկային եկամուտների կրճատմամբ: Տնտեսագիտության մեջ այս քաղաքականությունը կոչվում է նաև խթանող հարկային քաղաքականություն:

Հարկային ճկուն քաղաքականության իրականացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ հարկերի ավելացումը, հարկային դրույքաչափերի վերանայումները պետք է համատեղելի լինեն տնտեսական արդյունավետության բարձրացման, արտադրության գործոնների արդյունավետ բաշխման և օգտագործման հետ: Դա նշանակում է, որ հարկային քաղաքականությունը պետք է խթանի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և բացառի այնպիսի երևույթների առկայությունը, որոնք կհանգեցնեն գների բարձրացման, պահանջարկի և առաջարկի կտրուկ փոփոխման, սոցիալական շերտավորման խորացման: Դրա արդյունքում, կնվազի ազգաբնակչության վճարունակ պահանջարկը, որն էլ, իր հերթին, կբերի համախառն առաջարկի կրճատման: Այս իրավիճակում, տնտեսավարողները նաև հարկերից խուսափելու նոր միջոցներ կփնտրեն, ինչի արդյունքում կաճի երկրի ստվերային տնտեսությունը:

Բնութագրելու համար ՀՀ հարկային քաղաքականության արդյունավետությունը՝ առաջին հերթին պետք է բացահայտել.

- հարկային քաղաքականության նպատակները,
- հարկային քաղաքականության իրականացման մեթոդները:

Ինչ վերաբերում է նպատակներին, ապա դրանք, հիմնականում, ֆիսկալ բնույթի են և միտված են պետական բյուջեի եկամուտների ապահովման խնդիրների լուծմանը և որևէ կերպ չեն խթանում տնտեսական աճը: Հարկային քաղաքականության իրականացման մեթոդների մասով կարելի է ասել, որ դրանք բավական վարչարարական բնույթի են:

Պետք է փաստել, որ ներկայումս, մեր հանրապետության հարկային համակարգը և հարկային քաղաքականությունը բավարար չափով արդյունավետ չեն: Հարկային քաղաքականության հիմնական` ֆիսկալ, գործառույթը ոչ լրիվությամբ է իրականացվում` կապված հարկերի հավաքագրման անբավարար մակարդակի հետ, ստվերային տնտեսության մեծ չափերի առկայության հետ և այլն: Ինչ վերաբերում է այդ քաղաքականության խթանիչ ու բաշխիչ գործառույթներին, ապա դրանք համարյա չեն գործում: Ներկայիս հարկային համակարգը և կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունը չի նպաստում մեր ազգաբնակչության բարեկեցության աճին, սոցիալական բևեռացման կրճատմանը, տնտեսական գործունեության և ներդրումների խթանմանը: Չնայած իրականացված բազմաթիվ վարչարարական ու կառուցվածքային հարկային բարեփոխումներին, այն դեռևս մնում է բավականին բարդ, հակասական և մեր հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական մարտահրավերներին ոչ համահունչ: Օրենսդրության անկատար լինելը, մի կողմից, հնարավորություն են ընձեռում հարկատուների որոշակի հատվածին խուսափել հարկեր վճարելուց, մյուս կողմից` նույն օրենսդրությամբ սահմանված են չափազանց խիստ ինչպես տնտեսական, այնպես էլ վարչական ու քրեական պատժամիջոցներ հարկային օրենսդրության խախտումների համար: Նշված և այլ խնդիրների լուծման համար մեծապես կարևորվում է հարկային քաղաքականության ուղղությունների վերանայումը և դրա արդյունավետության բարձրացումը: Արդյունավետության բարձրացման համար պետք է ընտրվեն այնպիսի չափանիշներ, որոնց միջոցով հաշվի կառնվեն ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ բոլոր տնտեսական սուբյեկտների շահերը:

Մեր երկրի տնտեսության համար հարկային համակարգի արդյունավետության գլխավոր չափորոշիչը պետք է հանդիսանա տնտեսության իրական հատվածի և բուն արտադրության ոլորտի խթանման կարողությունը: Այս առումով կարևոր չափանիշ կարող է հանդիսանալ հարկերի գործառույթների այնպիսի համակցում, որը կապահովի տնտեսական հավասարակշռություն ինչպես մակրո, այնպես էլ միկրո միջավայրերում, կապահովի տնտեսության կայուն և երկարատև աճ, կխթանի արտադրության ընդլայնումը և ներդրումները:

Հարկային քաղաքականության արդյունավետությունը առավել համալիր ու օբյեկտիվ դիտարկելու համար, այն կարելի է տարանջատել` մարտավարական և ռազմավարական ոլորտների առումով: Մարտավարական արդյունավետությունն արտացոլում է հարկային համակարգի գործունեության արդյունքները հարկային մուտքերի ձևով: Մարտավարական արդյունավետությունը գնահատվում է վարչարարական նվազագույն ծախսերի միջոցով հարկերի հնարավորինս շատ ծավալ գանձելու չափանիշով: Մարտավարական արդյունավետության գնահատման չափանիշ կարող է հանդես գալ հարկային մուտքերից զուտ եկամուտը (պետության կողմից հարկերի եկամուտների և հարկահավաքման ծախսերի տարբերությունը), ինչպես նաև վերջինիս և հարկահավաքման ծախսերի հարաբերակցությունը: Այսինքն, այս մոտեցման դեպքում գնահատվում է միայն հարկային քաղաքականության ֆիսկալ էֆեկտը: Բնականաբար, մարտավարական արդյունավետությունը դիտարկելիս անտեսվում են հարկային քաղաքականության սոցիալ-տնտեսական բաղադրիչները, այդ ոլորտում հնարավոր ազդեցությունները և հետևանքները:

Հարկային քաղաքականության ռազմավարական արդյունավետությունը դիտարկելիս հարկային համակարգի արդյունավետությունը գնահատվում է այդ քաղաքականության` տնտեսության վրա ունեցած ամբողջական փոխազդեցություններից: Հենց այս մոտեցումն է հնարավորություն ընձեռում նպաստելու տնտեսության զարգացման խթանմանը, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հատվածներում: Հարկային համակարգի արդյունավետության կարևոր ցուցանիշներից է համարվում, այսպես կոչված, առաձգականության գործակիցը, որի միջոցով կարելի է սահմանել հարկային բեռի այնպիսի մակարդակ, որով կապահովվի ինչպես

հարկերի ֆիսկալ գործառույթը՝ պետական բյուջե բավարար ֆինանսական մուտքեր ապահովելով, այնպես էլ տնտեսական զարգացման բարձր տեմպեր: Ակնհայտ է, որ տնտեսական աճի պայմաններում կմեծանա տնտեսվարողների եկամուտները, և արդյունքում՝ հարկային մուտքերը էլ ավելի կաճեն: Հարկային քաղաքականության արդյունավետությունը տնտեսության վրա գնահատելու համար կիրառվում է հարկային բազմարկիչը (մուլտիպլիկատոր): Վերջինս արտահայտում է հարկերի փոփոխության ազդեցության աստիճանը տնտեսության վրա: Մասնավորապես, հարկերի նվազեցումը, այլ հավասար պայմաններում, մեծացնում է համախառն պահանջարկը և ազգաբնակչության սպառումը, ինչն, իր հերթին, բերում է տնտեսվարողների եկամուտների լրացուցիչ աճի ու տնտեսության մեջ ներդրումների խթանման: Արդյունքում, աճում է ՀՆԱ-ն, որն էլ, իր հերթին, բերում է պետության հարկային եկամուտների ավելացման: Բնականաբար, այստեղ գոյություն ունեն ժամանակային որոշակի լագեր, և պետության հիմնական խնդիրը սկզբնական ժամանակահատվածում լրացուցիչ միջոցների հայթայթումն է՝ հարկերի նվազման այդ ժամանակավոր ճեղքվածքը փակելու և սոցիալական ծրագրերի անխափան ընթացքն ապահովելու համար:

Հարկային համակարգերի արդյունավետության մեկ այլ կարևոր չափանիշ է հանդիսանում այդ համակարգի ճկունությունը, որով և բնութագրվում են աշխարհի զարգացած երկրների հարկային համակարգերը: Վերջիններս բավական արդյունավետ են և բնութագրվում են ճկուն կերպով փոփոխվելու հնարավորություններով՝ տնտեսական պայմանների փոփոխություններին համահունչ: Բնականաբար, այսպիսի համակարգերը ապահովում են նաև տնտեսության բարձր արդյունավետությունը: Արդյունավետ հարկային համակարգը ապահովում է այդ համակարգերի զարգացման մարտավարական և ռազմավարական նպատակների ճիշտ համադրություն, ինչպես նաև տնտեսական հարաբերությունների բոլոր մասնակիցների շահերի բավարարման օպտիմալ մակարդակ: Այստեղ մեծապես կարևորվում է պետության կողմից հարկերի գանձման դիմաց մատուցվող ծառայությունների համարժեքությունը և բավարար մակարդակը, ավելի լավ կերպով են հաշվի առնվում հարկատուների եկամտաբերությունը և վճարունակությունը: Հենց այս չափորոշիչներն են, հիմնականում, բնորոշում հարկային համակարգերի որակական բնութագրերը և պոտենցիալը, ինչն արտահայտվում է ոչ այնքան հարկային եկամուտներից պետական բյուջեի մուտքերի աճով, որքան այդ համակարգի՝ տնտեսության վրա ունեցած խթանիչ ազդեցություններով: Հարկային համակարգի հետագա զարգացումը հարկավոր է ուղղորդել դեպի արտադրական, առևտրային ու այլ ծախսերի կրճատման խթանմանը: Այս խնդիրը պետք է լուծվի ինչպես մակրոմակարդակում, այնպես էլ միկրոմակարդակում: Հարկերը ոչ թե պետք է ընկերությանը դրդեն ավելի շատ ծախսեր կատարելու և դրանք ցուցադրելու, որպեսզի քիչ հարկեր վճարեն, այլ իրական տնտեսական ռեսուրսների խնայությունների: Օրինակ, շատ ճիշտ և խելամիտ մոտեցում կլիներ ընկերության շահութահարկի գանձման առումով չհարկել շահույթի այն մասը, որն ապահովվել է ինքնարժեքի նվազեցման հաշվին: Սա, մի կողմից, կխթանի տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող ներդրումները, իսկ մյուս կողմից, այլ հավասար պայմաններում, կնվազեցնի ապրանքների գները:

Հայաստանում հարկային համակարգի արդյունավետ կազմակերպման միջոցով կարելի է նաև խթանել արտադրություններում աշխատանքի արտադրողականությունը, ինչի համար որպես ելակետ, կարելի է դիտարկել սպառման ֆոնդի կամ աշխատավարձի ֆոնդի և աշխատանքի արտադրողականության հարաբերակցությունը: Վերջինս շատ կարևոր ցուցանիշ է՝ բնորոշելու արտադրական ձեռնարկության աշխատանքի արդյունավետությունը: Այն որոշվում է բազմաթիվ գործոններով՝ աշխատողների որակավորմամբ, արտադրության միջոցների վիճակով, աշխատանքի կազմակերպվածության աստիճանով, արտադրության ինովացիոն բնույթով, կառավարման մակարդակի արդյունավետության մակարդակով և այլն:

Սրա հետ մեկտեղ, հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման առումով կարևոր քայլ կարող է հանդիսանալ և ինչը արտասահմանյան շատ երկրներում լայնորեն կիրառվում է՝ շահութահարկից մասնակի կամ ամբողջությամբ ազատել ընկերության շահույթի այն մասը, որը կներդրվի ինովացիոն տնտեսական ծրագրերում: Մասնակի կամ ամբողջությամբ

ազատունը կախված կլինի ներդրման ժամկետից: Սա մեծապես կխթանի ժամանակակից և հեռանկարային զարգացման ներդրումային ծրագրերի իրականացումը՝ ստեղծելով պետության համար հետագա լրացուցիչ հարկման բազա:

Հավելենք, որ ներկա պահին մեծապես կարևորվում է մեր երկրի հարկային համակարգի հնարավորինս պարզեցումը, դրա գործունեության վարչարարական ծախսերի մինիմալացումը, ինչը, զգալիորեն կհեշտացնի հարկային մեխանիզմների կիրառումը: Հարկային օրենսդրությունն անհրաժեշտ է վերանայել և հնարավորինս պարզեցնել, համապատասխանեցնել ներկայիս տնտեսական իրականությանը: Հարկային քաղաքականությունը պետք է գլխավորապես ուղղված լինի կամավորության սկզբունքի վրա՝ ապահովելով հարկատուների շահագրգռվածությունը հարկերի վճարման գործում:

ՀՀ հարկային համակարգի և քաղաքականության հետագա զարգացման հիմնական ուղղությունը պետք է լինի դրանց վերածումը որպես արդյունավետ շուկայական տնտեսության հզոր համալիր լծակների, որոնց միջոցով կլուծվի ինչպես պետության համար ցանկալի եկամուտների մակարդակի ապահովման, այնպես էլ ընթացիկ ու հեռանկարային սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները՝ կարևոր նախադրյալներ ստեղծելով կայուն տնտեսական աճի համար:

Сукиас Анастасян

Налоговая политика в РА и проблемы повышения ее эффективности

Аннотация

В настоящее время в Республике Армения налоговая политика является недостаточно эффективной, она нацелена не на стимулирование экономического развития, а прежде всего на реализацию фискальной функции. Основным направлением дальнейшего развития налоговой системы и политики РА должно быть их использование в качестве мощных комплексных рычагов эффективной рыночной экономики, с помощью которых будут решены как задача обеспечения желаемого для государства уровня доходов, так и текущие и перспективные социально-экономические проблемы, создающие важные предпосылки для устойчивого экономического развития

Suqias Anastasyan

The tax policy in the Republic of Armenia and the issues on improving its efficiency

Abstract

Currently, the efficiency of the tax policy implemented in our Republic is rather low; the policy doesn't foster economic development, and is mainly focused on implementing fiscal functions. The main direction of the future development that the tax system and the policy need to be patterned on is the transformation the policy and the system would undergo to be considered complex efficient tools to ensure required level of the state revenues, allocation of these resources for resolving various future social and economic issues, and sustainable economic growth, overall.

**ՀԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՅ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ
ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Ժամանակակից շուկայական տնտեսությունում հարկային քաղաքականության կիրառման առանձնահատկությունները գլխավորապես կախված են պետության կողմից ընտրված տնտեսության մոդելի առանձնահատկություններից և տնտեսական հարաբերությունների կարգավորման աստիճանից: Հարկային քաղաքականությունը հիմնված է տվյալ երկրում ձևավորված հարկային համակարգի վրա: Վերջինս իրենից ներկայացնում է հարկերի սահմանման, փոփոխման, դրանց գանձման, նշված գործընթացների վերահսկման հարաբերությունները կանոնակարգող կազմակերպչակառուցվածքային համակարգ: Հարկային համակարգերի ձևավորումն իրականացվում է երկու ձևով. ելնելով կոնկրետ երկրի պետական կառավարման տիպից, տնտեսական առանձնահատկություններից, զարգացվածության մակարդակից, քաղաքական ռեժիմից կամ անկախ թվարկված գործոնները հաշվի առնելու: Վերջինս իրենից ներկայացնում է հարկային համակարգի ձևավորման դասական սկզբունքը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկային համակարգերի կառուցման այս սկզբունքի կիրառման դեպքում հարկային քաղաքականությունն ավելի արդյունավետ է, և աշխարհի զարգացած երկրներում, հիմնականում, գործում է այս սկզբունքը: Բայց դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ յուրաքանչյուր երկրի հարկային համակարգին բնորոշ է որոշակի յուրահատուկ ինքնատիպություն:

Ցանկացած պետություն՝ տնտեսության մակրոկարգավորման շրջանակներում մշակում և իրականացնում է հարկային քաղաքականություն, որի առանձնահատկությունները կախված են տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերից, շուկայական տնտեսական հնարավորություններից և մի շարք այլ կարևոր պայմաններից: Հարկային քաղաքականության արդյունավետությունից է կախված պետության գործառույթների պատշաճ իրականացումը և սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող առանցքային մի շարք խնդիրների լուծումը: Ակնհայտ է, որ այդօրինակ արդյունավետ քաղաքականության մշակումը պահանջում է հարկային համակարգի կառուցման գիտականորեն հիմնավորված մոտեցումների կիրառում և միջազգային փորձի բազմակողմանի խորը ուսումնասիրություն ու վերլուծություն:

Ցանկացած երկրի հարկային քաղաքականության մշակումը և իրականացումը պետք է հիմնված լինի այդ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական տեսլականի վրա: Վերջինս իր էական ազդեցությունն է ունենում նաև հարկային համակարգի ձևավորման առանձնահատկությունների վրա: Թեև, ինչպես նշվեց, հարկային համակարգը հանդիսանում է երկրի սոցիալ-տնտեսական ռազմավարության կարևորագույն կրողը, սակայն, տարբեր համակարգերում գործող հարկման եղանակները կարող են միմյանցից որոշակիորեն տարբերվել՝ կախված տվյալ փուլում պետության կողմից լուծման ենթակա խնդիրներից: Մի դեպքում հարկային համակարգերը կարող են հիմնված լինել պետական հարկադրանքի վրա՝ կիրառելով հարկային վարչարարության տարբեր ձևեր, իսկ մյուս դեպքում՝ կամավորության սկզբունքի վրա՝ հիմնվելով տնտեսվարողների և ազգաբնակչության բարձր քաղաքացիական գիտակցության վրա: Բնականաբար, տարբեր հարկային համակարգերում կիրառվում են տարբեր հարկատեսակներ՝ միմյանցից տարբերվող դրույքաչափերով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկային համակարգերը, ելնելով դրանց հիմքում դրված սկզբունքներից և հարկման կիրառվող մոտեցումներից, կարելի է դասակարգել երկու հիմնական տիպերի: Առաջինն իր մեջ ներառում է այն հարկային համակարգերը, որոնց բնորոշ են բարձր հարկային դրույքաչափերը, խիստ պատժամիջոցներ նախա-

տեսող օրենսդրական դաշտը, հարկային կոշտ վարչարարությունը և այլն: Նմանատիպ համակարգեր գործում են աշխարհի երկրների մեծ մասում, ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող: Երկրորդ տիպի հարկային համակարգերին բնորոշ է հարկման առավել ազատական ու մեղմ ռեժիմը: Որպես կանոն, նման համակարգեր գործում են ոչ շատ մեծ թվաքանակ կազմող առանձին երկրներում, որտեղ գործում են շատ ցածր կամ զրոյական հարկում, ինչպես նաև տնտեսական գործունեության, կապիտալի շարժի նկատմամբ թույլ վերահսկողություն:

Անդրադառնալով առաջին տիպին, որը ավելի տարածված է աշխարհում և տնտեսագիտական ուսումնասիրության տեսանկյունից ավելի կարևոր է, պետք է նշել, որ այն, իր հերթին, կարող է դասակարգվել՝ մի շարք չափանիշներից ելնելով: Այդ չափանիշներից կարելի է առանձնացնել, մասնավորապես, ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը: Վերջինս, բնականաբար, տարբերվում է առանձին երկրներում և ցույց է տալիս հարկային բեռի ծանրության աստիճանը՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Եթե ուղղակի հարկերի տեսակարար կշիռը մեծ է, ապա դա խոսում է այն մասին, որ պետական հարկային եկամուտները հիմնված են ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկի և իրավաբանական անձանցից գանձվող շահութահարկի (որոշ դեպքերում, նաև եկամտահարկի) վրա: Հակառակ դեպքում, եթե անուղղակի հարկերի տեսակարար կշիռն է մեծ, ապա, գերակայում են ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման բոլոր փուլերում միջանկյալ և վերջնական սպառման ժամանակ գանձվող անուղղակի հարկերը, որոնց բեռի փաստացի կրողները համարվում են այդ ապրանքների և ծառայությունների սպառողները:

Դասակարգման համար կարևոր մեկ այլ չափանիշ կարելի է դիտարկել հարկային համակարգի կենտրոնացվածության աստիճանը: Վերջինս պայմանավորված է հարկային հարաբերությունների ոլորտում իշխանության տարբեր մակարդակների լիազորությունների և լծակների կենտրոնացվածությամբ: Կենտրոնացված հարկային համակարգի դեպքում հարկային օրենսդրության սահմանման և հարկերի հավաքագրման ոլորտում հիմնական իրավասությունները վերապահվում են տվյալ երկրի կառավարությանը: Ապակենտրոնացված հարկային համակարգին բնորոշ է կենտրոնական իշխանության, հանձինս՝ կառավարության, բավականաչափ սահմանափակ դերը, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները էապես ինքնուրույն են պետական կառավարման համակարգից, ինչպես նաև նրանց պատվիրակված են բավականաչափ լայն իրավասություններ՝ այդ թվում, նաև հարկային քաղաքականության իրականացման ոլորտում:

Յուրաքանչյուր կոնկրետ երկրի հարկային համակարգի ապակենտրոնացման աստիճանը մեծապես կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են տնտեսական զարգացման մակարդակը, կառավարման համակարգի բնույթը, պետական քաղաքականության ուղղությունները, երկրի քաղաքական իրավիճակը և այլն: Ջարգացող, ինչպես նաև անցումային տնտեսություն ունեցող երկրներում, որոնց թվին է դասվում նաև Հայաստանը, հարկային համակարգերը, հիմնականում, բնորոշվում են պետական իշխանությունից՝ տարածքային իշխանության մարմինների խիստ կախվածությամբ: Սակայն, հարկ է նշել, որ աստիճանաբար, զարգացած երկրներում նկատվում են հարկային համակարգերի ապակենտրոնացման միտումներ, ինչը բխում է տվյալ երկրների տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրներից:

Հարկային համակարգերի կառուցման ժամանակ դրանց հիմքում դրվում են նաև այլ չափանիշներ: Մասնավորապես, հարկային բեռի մակարդակը, հարկերի քանակը և կազմը, հարկման որոշակի ձևերի կամ կարգերի առաջնահերթությունը (հարկային դրույքների պրոգրեսիվ, ռեգրեսիվ, համամասնական բնույթը) և այլն: Սակայն, ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը որպես կարևորագույն ցուցանիշ ամենաճիշտն է բնութագրում տվյալ երկրի հարկային համակարգը: Այս ցուցանիշի միջոցով, ըստ դրանց համամասնությունների առանձնացվում են հարկային համակարգերի չորս հիմնական մոդելներ: Դրանք հետևյալն են.

- անգլոսաքսոնյան մոդել, որը գործում է ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա և այլ և սկանդինավյան՝ Դանիա, Շվեդիա, Նորվեգիա և այլ երկրներում, և որի հիմքում ընկած է ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը: Անուղղակի հարկերի տեսակարար կշիռը այս երկրների պետական եկամուտներում մեծ չէ:

- Եվրոկոնտինենտալ կամ եվրոպական մայրցամաքային մոդել, որը գործում է եվրոպական մայրցամաքային պետություններում, մասնավորապես՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Նիդեռլանդներում, Ավստրիայում, Բելգիայում և այլն: Այս մոդելում ուղղակի հարկերը գերակշռում են, թեև անուղղակի հարկերը ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն, քան նախորդ մոդելում: Այս մոդելին բնորոշ է նաև սոցիալական ապահովագրության մուծումների մեծ տեսակարար կշիռը:
- Լատինաամերիկյան մոդելը հիմնականում, հիմնված է անուղղակի հարկման վրա, որը ավելի արդյունավետ է սղաճի բարձր տեմպերի պայմաններում: Բացի այդ, անուղղակի հարկերը ավելի հեշտ են հավաքագրվում և վերահսկվում պետության կողմից: Այս մոդելը գործում է Լատինաամերիկյան տարածաշրջանի (Մեքսիկա, Արգենտինա, Բրազիլիա, Բոլիվիա, Չիլի, Պերու և այլն), Ասիայի տարածաշրջանի մի շարք (Իրան, Իրաք, Պակիստան, Չնդկաստան և այլն), ինչպես նաև Աֆրիկայի որոշ երկրներում:
- Խառը մոդելն իր մեջ ներառում և համադրում է վերոթվարկյալ մոդելների բնորոշ մի շարք գծեր: Խառը մոդել ունեցող երկրներին են դասվում նրանք, որոնք չեն կարող միանշանակորեն դասվել այս կամ այն հարկման մոդելին, և որի պայմաններում գործում են ուղղակի և անուղղակի հարկման զարգացած համակարգեր: Մասնավորապես, այսպիսի մոդել է գործում Ճապոնիայում: Ընդհանուր առմամբ, այս երկրում հարկային մուտքերի կառուցվածքը համարյա միևնույնն է, ինչը որ բնորոշ է անգլոսաքսոնյան մոդելի երկրներին, սակայն, ի տարբերություն դրանց, Ճապոնիայում նախապատվությունը տրվում է ոչ թե եկամտահարկին՝ այլ ապահովագրական վճարներին:

Գոյություն ունեն նաև այլ հարկման մոդելներ, որոնք այդքան մեծ տարածում չունեն: Առանձին երկրներ, որոնց մոտ բացակայում է հարկման մեծ պոտենցիալը, գնացել են սովորական հարկերից հրաժարվելու և արտոնյալ հարկային ռեժիմ սահմանելու ճանապարհով: Սա, այսպես կոչված, օֆշորային մոդելն է, որը գործում է Անդորրայում, Մոնակոյում, Պանամայում, Յամայկայում, Կոստա-Ռիկայում, Մալայզիայում, Ֆիլիպիններում, Բերմուդյան և Սեյշելյան կղզիներում և այլ երկրներում:

Ինչ վերաբերում է մեր հանրապետությանը, ապա գործող հարկային համակարգի դիտարկումը և վերլուծությունը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ ՀՀ հարկային համակարգն իր բնույթով դասվում է առավելապես անուղղակի հարկման վրա հիմնված մոդելին: Անուղղակի հարկերի տեսակարար կշիռը, օրինակ՝ 2011 թվականին կազմել է շուրջ 60.5 տոկոս, որը միջինը մոտ 2 անգամ գերազանցում է Եվրոպական երկրների նույն ցուցանիշը (Գերմանիայի, ՅուՆԱՅԿ-ի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի, Չեխիայի, Իսպանիայի, Բելգիայի և այլն), մոտ 1.5 անգամ Ռուսաստանի նույն ցուցանիշին և այլն: Նախկինում, մեզ մոտ անուղղակի հարկերի տեսակարար կշիռն ավելի բարձր է եղել. 2000-2008թթ. ընկած ժամանակահատվածում նշված ցուցանիշը միջին հաշվով կազմել են շուրջ 69 տոկոս:

Մասնավորապես, միայն ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և մաքսատուրքի բաժինը պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում 2009 թվականին կազմել է մոտ 60 տոկոս¹: Ինչ վերաբերում է հաջորդիվ տարիներին, ապա այդ ցուցանիշը փոքր-ինչ նվազելու միտում է ունեցել, սակայն մնալով բավականին բարձր: Այդուհանդերձ, 2010-2011 թթ. ՀՀ-ում հարկատեսակների կառուցվածքն՝ ըստ առանձին հարկատեսակների, ինչից երևում է, որ անուղղակի հարկերի տեսակարար կշիռը կազմել է 2010 թվականին՝ 57.43%, իսկ 2011 թվականին այդ ցուցանիշը նորից աճել է կազմելով 60.65%, ինչը մոտ է 2009 թվականի ցուցանիշին:

¹ Taxservice.am

**ՀՀ հարկային եկամուտների կառուցվածքն՝ ըստ առանձին հարկատեսակների՝
2010-2011 թվականների համար¹**

Ցուցանիշ	2010թ. հունվար-դեկտեմբեր	2011թ. հունվար-դեկտեմբեր
ԱԱՀ	49.90%	51.48%
Շահութահարկ	13.59%	15.53%
Եկամտահարկ	12.92%	12.89%
Ակցիզային հարկ	2.67%	3.67%
Ծխախոտի արտ. համար հաստ. վճար	4.35%	3.48%
«Հաստ.վճարի մասին» ՀՀ օրենքով սահմ. գործ. տեսակներից հաստ. վճար	3.62%	3.24%
Մաքսատուրք	4.86%	5.50%
Այլ հարկային եկամուտներ	8.09%	4.20%

Ինչ վերաբերում է 2012 թվականի նույն ցուցանիշին, ապա ներկա պահին տարեկան ամփոփ տվյալների բացակայության պատճառով կներկայացվի վերջին՝ դեկտեմբեր ամսվա տվյալները՝ համեմատելով նախորդ՝ 2011 թվականի նույն ամսվա տվյալների հետ:

**ՀՀ հարկային եկամուտների կառուցվածքն՝ ըստ առանձին հարկատեսակների՝
2011 - 2012 թվականների դեկտեմբեր ամիսների համար²**

Ցուցանիշ	2011թ դեկտեմբեր	2012թ դեկտեմբեր
ԱԱՀ	51.7%	45.3%
Շահութահարկ	12.4%	18.2%
Եկամտահարկ	14.5%	13.1%
Ակցիզային հարկ	3.1%	3.5%
Ծխախոտի արտ. համար հաստ. վճար	6.9%	7.4%
«Հաստ. վճարի մասին» ՀՀ օրենքով սահմ. գործ. տեսակներից հաստ. վճար	2.7%	1.3%
Մաքսատուրք	5.3%	3.7%
Այլ հարկային եկամուտներ	3.4%	7.4%

Աղյուսակից երևում է, որ 2012 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ անուղղակի հարկերի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում կազմել է 52.5 տոկոս՝ 2011 թվականի նույն ժամանակահատվածի 60.1 տոկոսի դիմաց: Թեև այստեղ նկատվում է որոշակի նվազման միտում, սակայն, այնուամենայնիվ այս ցուցանիշը բավականին բարձր է: Միաժամանակ, պետք է նշել նաև, որ երկրի տնտեսական զարգացմանը զուգընթաց այդ հարաբերակցությունը պետք է փոխվի, ինչի մասին է վկայում նաև աղյուսակի տվյալները:

Հարկ է նշել, որ նշված ժամանակահատվածի սկզբում այս ցուցանիշն ավելի բարձր է եղել, իսկ հետագայում արդեն դրսևորել է անկման միտումներ: Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունի որոշակի օրինաչափություն տվյալ երկրի տնտեսական զարգացման մակարդակի և հարկային եկամուտների կազմում անուղղակի հարկերի տեսակարար կշռի միջև: Մասնավորապես, զարգացած եվրոպական երկրներում հարկային մուտքերի կազմում անուղղակի հարկերի մասնաբաժինը ավելի փոքր է, քան զարգացող երկրներում: Դա ունի իր օբյեկտիվ հիմքերն, այն առումով, որ զարգացող և անցումային տնտեսություն ունեցող

¹ Taxservice.am

² Taxservice.am

պետություններում, որպես կանոն, գրեթե մշտապես առկա է պետական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների սղություն, ինչի լրացման ամենաարագ ձևը՝ անուղղակի հարկերի ավելացումն է: Այդ տեսանկյունից, անուղղակի հարկերի ֆիսկալ նշանակությունն ավելի մեծ է:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունում անուղղակի հարկերի տեսակարար կշիռը բավականաչափ բարձր է՝ համեմատած եվրոպական ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների նույն ցուցանիշի հետ: Հաշվի առնելով, որ անուղղակի հարկերի բեռը կրում է վերջնական սպառողը՝ ավելի թանկ վճարելով ապրանքների և ծառայությունների համար, կարծում ենք, հանրապետության սոցիալ-տնտեսական ներկա պայմաններում նման քաղաքականությունը տնտեսապես արդարացված չէ: Իրականում, նույնիսկ այն երկրներում, որտեղ հարկերի կազմում անուղղակի հարկերի տեսակարար կշիռը մեծ է, միաժամանակ գործում են այդ հարկատեսակների տարբերակված դրույքաչափեր, ինչը հնարավորություն է տալիս դրանք ավելի արդյունավետ կիրառել՝ հնարավորինս ապահովելով ազգաբնակչության խոցելի խմբերի համար հարկային համեմատաբար ավելի թեթև բեռ:

Ամփոփելով, նշենք, որ, հաշվի առնելով վերը նշված առանձնահատկությունները, մեր հանրապետությունում իրականացվող ներկայիս հարկային քաղաքականությունը պետք է լուրջ փոփոխություններ կրի՝ հնարավորինս ապահովելով պետության ֆիսկալ նպատակների և տնտեսության զարգացման ու աճի միջև արդյունավետ հաշվեկշռվածություն:

Сукиас Анастасян

Сравнительный анализ опыта РА и зарубежных стран в области налоговой политики

Аннотация

Налоговая политика любого государства зависит от особенностей выбранной правительством экономической модели и степени урегулированности экономических отношений. В статье представлены основные типы действующих в мире налоговых систем и их сравнительный анализ, а также особенности проводимой в РА налоговой политики в контексте вышеназванных анализов.

Suqias Anastasyan

Comparative analysis of international and Armenian practices applied in tax policy

Abstract

The tax policy of each nation depends on the peculiarities of the selected model the economy needs to be fitted in and the level of regulation of economic relations. The article presents the main types of tax systems utilized and/or functioning worldwide, provides comparative analysis of these systems and the peculiarities of the implemented tax policy in Armenia in the context of the above-mentioned analysis as well.

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԵՎ ԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

Հասարակական զարգացումը պայմանավորված է երկրի տնտեսության, գիտության, սոցիալական ոլորտի ապահովվածությամբ բարձրորակ մասնագիտական կադրերով: Մարդկության առջև կանգնած բազմաթիվ նոր, գլոբալ խնդիրների լուծման կարևորագույն միջոցը ժամանակակից կրթությունն է: Երկրների միջև մրցակցությունն այժմ տեղափոխվում է գիտության և առաջատար տեխնոլոգիաների, ուստի և՛ բարձրագույն կրթության ոլորտ: Պետությունների զարգացման մակարդակը և դիրքն առավելապես որոշվում են նրանց մտավոր ներուժով, ուստի և կրթական համակարգի զարգացման աստիճանով: Հետևաբար, առաջին հերթին անհրաժեշտ է ապահովել մասնագիտական կրթության որակական համապատասխանությունը գոյություն ունեցող պահանջներին և զարգացման հեռանկարներին:

Հայաստանում կրթությունն ունի բազմադարյան պատմություն ու ավանդույթներ և մշտապես եղել է ազգային ինքնության պահպանման կարևոր գործոն: Չնայած 90-ականների սկզբների խոր տնտեսական ճգնաժամին, հիմնականում հաջողվեց ոչ միայն պահպանել, այլ նաև ընդլայնել Հայաստանի մասնագիտական կրթության համակարգը: Սակայն առկա են մի շարք լուծում պահանջող հարցեր, ինչը թույլ կտա ապահովել բարձրագույն կրթության հետագա առաջընթաց զարգացումը: Հատկապես, առաջնային է դառնում բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման նոր մոտեցումների մշակումը, ինչի շնորհիվ հնարավոր կլինի համատեղել կրթության մատչելիությունը և վճարելիությունը:

Ներկայումս գործում են բարձրագույն կրթության ֆինանսավորման տարբեր համակարգեր, սակայն կարելի է ասել, որ ոչ մի երկրում չկա միանշանակ մոտեցում հարցի նկատմամբ, պայմանավորված բազմաթիվ և բազմաբնույթ գործոններով, երկրի տնտեսական, սոցիալական վիճակով, բանկային, հարկային համակարգի զարգացման աստիճանով և այլն: Ամենուրեք ֆինանսավորման աղբյուրները կարող են դասակարգվել հետևյալ հիմնական խմբերի՝ պետական, մասնավոր և կորպորատիվ: Այսինքն՝ առկա է մասնագիտական կրթության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացում: Ֆինանսավորման աղբյուրների առավել արդյունավետ և օպտիմալ զուգակցումը, որն առավել կհամապատասխանի բարձրագույն կրթության ոլորտում կատարվող փոփոխություններին՝ ոլորտի ամենաբարդ խնդիրներից է: Չնայած նրան, որ բարձրագույն կրթության ոլորտ ներկայումս նույնպես ակտիվորեն ներթափանցում են շուկայական հարաբերությունները, բուհն օբյեկտիվորեն չի կարող վերածվել զուտ շուկայական տնտեսության մի սուբյեկտի: Ոլորտին բնորոշ առանձնահատկությունները որոշակիորեն անդրադառնում են իրականացվող գործունեության, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների ձևավորման վրա:

Ընդ որում, ամենուրեք այդ գործընթացին բնորոշ է մասնագիտական կրթության ծախսերի բյուջետային ֆինանսավորման կրճատումը և արտաբյուջետային աղբյուրների ընդլայնումը: Որպես բարձրագույն կրթության ֆինանսավորման հիմնական աղբյուրներ դիտվում են սովորողների միջոցները և գործատուների կողմից այդ ուղղությամբ կատարվող ծախսերը: Միաժամանակ ամենուրեք, բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման հիմնական սկզբունքը նրա համատեղ՝ պետական և մասնավոր ֆինանսավորումն է և, այդ առումով, որոշակի հարաբերակցության մշակումը: Հետևաբար, արդիական է դառնում ուսման վարձի սահմանման համար մեկ ուսանողին ընկնող ծախսերի մեծության հաշվարկը: Ներկայումս, կարելի է ասել, որ ՀՀ բուհերից ոչ մեկում գոյություն չունի ուսման վարձի հաշվարկման մեթոդաբանություն: Ուսման վարձի մեծությունները հիմնականում սահմանվում են ելնելով տվյալ մասնագիտության հանդեպ բուհերի կողմից կանխատեսվող պահանջարկի և այլ մրցակից բուհերի կողմից նույնանման մասնագիտությունների համար սահմանված գներից: Բուհերում չի կատարվում մեկ ուսանողի վրա կատարվող ծախսերի հաշվարկ, այսինքն՝ կարելի է ասել բացակայում է կրթական ծառայությունների հաշվարկը:

Բացի այդ, ներկայումս, աշխատողների կրթական մակարդակի մշտական բարձրացումը դարձել է տնտեսության զարգացման հիմնական և անհրաժեշտ գործոն, հետևաբար բարձրագույն կրթությունը կարելի է համարել աշխատուժի ընդլայնված վերարտադրության կարևորագույն պայմաններից մեկը: Ընդ որում՝ կրթության համար կատարվող ծախսերն ունեն առաջնային նշանակություն աշխատանքային ռեսուրսների ձևավորման նպատակով կատարվող այլ ծախսերի նկատմամբ: Ընկերությունները, որպես կրթական ծառայությունների վերջնական սպառողներ, այս հարցում կարող են ցուցաբերել տարբեր մոտեցումներ. ձեռք բերել նոր կադրեր, որոնք իրենց կրթական մակարդակով համապատասխանում են ընկերության նոր պահանջներին, իրականացնել ուսուցում եղած կադրերի համար, ինչը կարող է կատարվել տարբեր եղանակներով՝ ընկերության պատվերով՝ հատուկ ուսումնական կենտրոններում կամ հենց ընկերության ներսում (ներֆիրմային ուսուցում):

Ներկայումս, մեր հանրապետությունում ֆինանսավորման այս աղբյուրի օգտագործումը շատ չնչին է, և ֆինանսավորման հիմնական մասն իրականացվում է ուսման դիմաց կատարվող վճարումների տեսքով: Այսպես, վերջին տարիներին բուհերի եկամուտների ավելի քան 90 տոկոսն առաջացել է ուսման վարձերի հաշվին:

Ըստ բուհերում ուսման վճարների և ուսանողներին ֆինանսական աջակցության ծրագրերի զարգացման մակարդակի, երկրները կարելի է բաժանել տարբեր խմբերի: Այսպես, այնպիսի երկրներում ինչպիսիք են օրինակ՝ Անգլիան, ՅուՄԱՀ-ը, Ֆրանսիան, Գերմանիան, Կանադան, ԱՄՆ-ը, ուսման վճարները բարձր են, և ուսանողների զգալի մասը ստանում է ֆինանսական աջակցություն: Այնպիսի երկրներում ինչպիսիք են, օրինակ, Ռանիան, Ֆինլանդիան, Շվեդիան, Նորվեգիան ուսման վճարները ցածր են կամ ընդհանրապես բացակայում են, և ուսանողների զգալի մասը ստանում է ֆինանսական աջակցություն: Մի խումբ այլ երկրներում (Յունաստան, Ավստրիա, ՅուՄԱՀ-ը, Լիտվա) ուսման վճարները ցածր են կամ բացակայում են և ֆինանսական աջակցությունը զարգացած չէ, կամ հասանելի է ուսանողների փոքրամասնությանը: Կան նաև երկրներ (Բուլղարիա, Իսպանիա, Ռումինիա, Թուրքիա, Իռլանդիա), որտեղ ուսման վճարները բարձր են, և ֆինանսական աջակցության համակարգը զարգացած չէ կամ հասանելի է ուսանողների փոքրամասնությանը:

Հաշվի առնելով ընտանիքների միջին եկամուտների մակարդակը՝ կարելի է նշել, որ Հայաստանում ուսման վճարները համեմատաբար բարձր են: Միաժամանակ Հայաստանում առկա ֆինանսական աջակցության համակարգի վիճակից ելնելով կարելի է նշել նաև, որ ֆինանսական աջակցության համակարգը հասանելի է ուսանողների փոքրամասնությանը: Այսպիսով, Հայաստանը պատկանում է վերը նշվածներից վերջին խմբին:

Ուսանողների ֆինանսական աջակցության ձևերը բազմաթիվ են և ներառում են ուսման վարձերի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը, կրթաթոշակների, ուսանողական վարկերի և տարբեր զեղչերի տրամադրումը, հանրակացարանի կամ բնակարանի վարձավճարի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը, ինչպես նաև հարկային զեղչերի տրամադրման ձևով աջակցությունը՝ ուսանողների ընտանիքներին:

Առանձին երկրներում նման ծրագրերում ընդգրկվում են ուսանողներ, ում ծնողները չեն ստացել բարձրագույն կամ անգամ միջնակարգ կրթություն: Մի շարք այլ երկրներում հաշվի է առնվում նաև ուսանողների ծնող հանդիսանալը, ուսանողների ծնողագուրկ լինելու հանգամանքը, մեկ ընտանիքից բուհում սովորողների թիվը, ուսանողների ընտանիքների բնակության վայրը (հեռավոր կամ գյուղական բնակավայրեր) և այլն: Որոշ բուհեր զեղչեր են անում տվյալ բուհի նախկին շրջանավարտներին, աշխատողների երեխաներին և այլն: Տարբեր երկրներում հաշվի առնվող հանգամանքների շարքում են նաև սեռը, ազգային փոքրամասնություններին պատկանելիությունը, հաշմանդամությունը և տարիքը: Ֆինանսական աջակցության չափը որոշելիս հաշվի են առնվում նաև ուսանողների ամուսնական կարգավիճակը, ծնողների հետ կամ առանձին բնակվելու հանգամանքը, բնակության վայրի հեռավորությունն ուսումնական հաստատությունից և այլն:

Ընդհանուր առմամբ, ֆինանսական աջակցության ծրագրերում ընդգրկվելու հիմնական հանգամանքն է ուսանողի կամ ուսանողի ընտանիքի կարիքավոր լինելը:

Ուսանողի, կամ ուսանողի ընտանիքի ֆինանսական վիճակը գնահատելու համակարգը գրեթե բոլոր երկրներում զուգակցված է համապատասխան ընտանիքների անապահովության գնահատման համակարգին: Առավել նպատակահարմար է ուսանող ունեցող ընտանիքների սոցիալական վիճակը գնահատել հանրապետությունում գործող ընտանիքների անապահովության գնահատման համակարգով, սահմանելով ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների ուսանող անդամների համար ուսման վճարի լրիվ կամ մասնակի հատուցում պետական բյուջեի միջոցներից՝ սահմանված որոշակի տոկոսի չափով: Ֆինանսական աջակցության ծրագրերում ընդգրկվելու հիմնական հանգամանք կարելի է համարել ոչ թե ուսանողի, այլ իր ընտանիքի անապահովության մակարդակը, քանի որ ուսանողները Հայաստանում հիմնականում ֆինանսապես կախված են իրենց ընտանիքներից:

Այսպիսով, առավել նպատակահարմար է, որպեսզի գործի կրթության համար վճարի փոխհատուցման հստակ և շերտավորված համակարգ: Դրա մասնակիցները պետք է լինեն պետությունը, ինքը սովորողը, գործատուն, վարկային միջոցները, հիմնադրամները և բուհը: Յուրաքանչյուր աղբյուրը, պետք է ունենա վճարումների կատարման համապատասխան չափանիշներ, ելնելով նրա խնդիրներից և գերակայություններից:

Анна Асланян

Проблемы финансирования высшего образования и социально-экономическое развитие страны

Аннотация

В настоящее время действуют различные системы финансирования высшего образования. Повсеместно функционирует диверсифицированная система финансирования профессионального образования. В настоящее время в вузах РА отсутствует обоснованная методика определения затрат, приходящихся на одного студента. Размер платы определяется исходя из ситуации на рынке, складывающейся по отношению к той или иной специальности. Наиболее целесообразным является функционирование дифференцированной системы возмещения платы за обучение, участниками которой должны быть государство, учащийся, работодатель, заемные средства, различные денежные фонды, сам вуз. Каждый источник должен иметь соответствующие критерии участия, исходя из своих задач, целей и приоритетов.

Anna Aslanyan

Issues on higher education funding and social and economic development of the nation

Abstract

Currently, various higher education funding schemes are used in many nations. Diversified professional education funding systems function worldwide. Currently, Armenian higher education institutions lack well-grounded methods of computing per-student costs. The tuitions fee is determined based on the trends in the labor markets. The most rational system of reimbursement of the tuition fee that needs to function in Armenia is the diversified one the major players of which need to be the government, students, perspective employers loan providers, various funds, and the higher education institutions. Each funding source needs to meet certain participation criteria required from each source based on own priorities, goals and objectives.

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

*ՆՆ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.*

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՆՆ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ. գ. թ.*

**ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ**

Ստվերային տնտեսության մասշտաբների ու ստվերային եկամուտների գնահատումը հիմնականում որոշվում է այդ ոլորտին բնորոշ չափանիշների հիման վրա: Ընդ որում, պայմանավորած լինելով այս կամ այն չափանիշի առանձնահատկությունից, գոյություն ունեն ստվերային տնտեսության և ստվերային եկամուտների գնահատման հետևյալ եղանակները`

1. վիճակագրական հաշվառման,
2. ֆորմալ-իրավական,
3. քրեական
4. համակարգային:

Փորձենք դրանք առավել մանրամասն ներկայացնել:

1. Վիճակագրական հաշվառման եղանակ: Ստվերային եկամուտների հաշվառման համար գնահատվում են Ազգային վիճակագրական ծառայության կողմից չհաշվառված եկամուտները: Այսինքն, չհաշվառված գործոնային եկամուտների գնահատումն իրականացվում է ազգային հաշիվների համակարգի միջոցով: Ստվերային եկամուտների բացահայտման, հաշվառման և գնահատման հիմնական մակրոտնտեսական ցուցանիշ է հանդիսանում ՀՆԱ-ն, մասնավորապես` ստվերային տնտեսության և ՀՆԱ-ի հարաբերակցությունը տոկոսային արտահայտությամբ: Բացի այդ, ստվերային եկամուտների հաշվառումն ազգային հաշիվների համակարգում իրականացվում է ըստ.

1. բիզնես գործունեության կազմակերպարարական ձևերի, որտեղ հաշվի է առնվում արտադրության տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածքում,
2. տնտեսվարող սուբյեկտի, քաղաքացու կողմից անշարժ և շարժական գույքի նկատմամբ հանցագործությունների տեսակարար կշիռով, որոնք չեն ներառվում ՀՆԱ-ի արտադրության ոլորտում, իսկ ստվերային եկամուտներն առաջանում են տնտեսական գործարքների թերհայտարարագրման ճանապարհով, մասնավորապես`
 - օրինական հիմքերով կնքված տնտեսական գործարքներ, որտեղ հաշվառվում են թերհայտարարագրման արդյունքում առաջացած ոչ ֆորմալ տնտեսական գործունեության արդյունքները` հարկերի և այլ համապարտադիր վճարումներից խուսափելու նպատակով,
 - ոչ ֆորմալ գործունեության արդյունքներ, որոնք հանդես են գալիս փողկապակցված անձանց գույքային և ոչ գույքային սեփականության իրավունքների ձևակերպումներով, ինչպես օրինակ` սեփականության իրավունքը պատկանում է ոչ թե մեկ անձին, այլ` նրան փողկապակցված անձանց` նպաստելով սեփականության օբյեկտների մասնատմանն ու հարկային պարտավորությունների կրճատմանը, կամ այն հաղես է գալիս տնային տնտեսությունների կողմից գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ, որոնք չեն հաշվառվում պետական կառավարման մարմինների կողմից:

Այսպիսով, ստվերային տնտեսության և ստվերային եկամուտների հաշվառման եղանակները կարևոր գործիք են ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը մշակելու համար: Բացի այդ, ստվերային եկամուտների գնահատման վիճակագրական-հաշվառման մոտեցումը զերծ չէ թերություններից: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ ազգային

հաշիվների համակարգում գրեթե անհնար է գնահատել կամ որոշել ստվերային տնտեսության մասշտաբները ու դրա կառուցվածքը: Ուստի, վիճակագրական հաշվառման մոտեցումը գործնական կիրառության ժամանակ պահանջում է ազգային հաշիվների համակարգում ներդնել ստվերային եկամուտների հաշվառման նոր մեթոդաբանություն: Ընդ որում, այն հիմք կհանդիսանա տնտեսության իրական հատվածի ոլորտներում բացահայտել ստվերային եկամուտների առաջացման վրա ազդող տնտեսական, իրավական, քաղաքական, սոցիալ-ավանդական, մշակութային գործոնները:

2. Ֆորմալ-իրավական եղանակ: Այն հիմնված է տնտեսական գործարքների իրականացման արդյունքում ստվերային երևույթների բացահայտման վրա՝ հիմք ընդունելով դրանք կարգավորելու նորմատիվային և իրավական անհրաժեշտությունը: Ընդ որում, ստվերային տնտեսության գնահատման ֆորմալ-իրավական մոտեցման հիմնական ոչ ֆորմալ տնտեսական գործարքներից են՝ պաշտոնական գրանցման ընթացակարգերից խուսափելը, պետական վերահսկողությունից խուսափելը, տնտեսվարող սուբյեկտների հակաօրինական վարքագիծը:


3. Քրեական եղանակ: Վերջինիս ժամանակ ստվերային տնտեսության գնահատումն իրականացվում է՝ հիմք ընդունելով տնտեսական գործարքների իրավական և տնտեսագիտական քրեական բովանդակությունը, որոնք նպաստում են բնույթի և հասարակության համար բացասական հետևանքներ ունեցող երևույթների՝ հանցագործությունների առաջացմանը: Բազմաթիվ արտերկրյա և հայրենական հետազոտողներ ստվերային տնտեսական գործունեությունն ուսումնասիրելու ժամանակ նշում են, որ հասարակության համար վտանգ առաջացնող երևույթները բերում են տնտեսության կառուցվածքի ամբողջականության խախտմանը, մասնավորապես՝ ստվերային եկամուտների առաջացմանը: Իսկ օրինակ՝ հասարակայնորեն վտանգավորության կանխավարկածը հիմնվում է ստվերային եկամուտների ձևավորման ներուժի բացահայտման վրա, քանի որ այն, վերջին հաշվով, նպաստում է նաև ՀՆԱ-ի ավելացմանն ու բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը¹:

4. Համակարգային եղանակ: Սրա համատեքստում ընկած են հաշվառման բացակայության, չկարգավորված ընթացակարգերի, սեփականության իրավախախտումների ցուցանիշները: Ստվերային տնտեսության շրջանակներում տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտները ֆորմալ և ոչ ֆորմալ արտադրատնտեսական փոխհարաբերություններում ցանկացած կերպ ձգտում են մնալ ստվերում՝ չբացահայտելով իրենց ինքնությունը: Ուստի, ստվերային տնտեսության գնահատման հիմնախնդիրը դասվում է ամենաբարդ գործընթացների շարքին: Բացի այդ, մինչ օրս միասնական մոտեցում չի մշակվել բարձր ճշգրտությամբ ստվերային տնտեսական գործունեության ծավալները գնահատելու համար:

Տարեցտարի իրականացվող և ավելի խորացող նման «հարկային վարչարարությունը» հանգեցրեց նրան, որ աստիճանաբար թուլացավ հարկ վճարողների ցանկությունը կամ մոտիվացիան, ինչպես նաև իրական հնարավորությունը՝ գործելու օրինական դաշտում, սեփական կամքով ու պատասխանատվության գիտակցումով՝ վճարելով հարկերը օրենքով սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում: Դրա փոխարեն՝ հարկային համակարգում արմատավորվեց հարկ վճարողների հետ պարբերաբար տարվող անհատական աշխատանքի սկզբնավորումը, որը հաճախ ուղղված է յուրաքանչյուր ամիս վճարվելիք հարկերի գումարային մեծության սուբյեկտիվ որոշմանը, ինչը շատ դեպքերում բավականին հեռու է լինում հարկային պարտավորությունների հնարավոր իրական մեծությունից, կամ էլ հարկ վճարողների համար հնարավորություն է ստեղծում արհեստականորեն նվազեցնել հարկային հաշվարկներով ներկայացվող հարկային պարտավորությունների իրական չափերը:

¹ Thomas, J. J. (1986). "The Underground Economy in the United States: A Comment on Tanzi." IMF-Staff Papers, Vol. 33(4): 782–789p.

Ստվերային տնտեսության գնահատման մեթոդները¹



Տնտեսվարման ներկա հասարակարգում ստվերային տնտեսության մասշտաբների հաշվառման համար մշակվել են գնահատման մի շարք մեթոդներ, որոնք ներկայացված են **գծապատկեր 1**-ում

Ստվերային տնտեսության չափի որոշումը բավականին բարդ է, և չնայած գոյություն ունեն ստվերային տնտեսության գնահատման մի քանի մեթոդներ, պետք է նկատի ունենալ, որ ցանկացած մեթոդով հաշվարկված ստվերային տնտեսության չափը ճշգրիտ չէ: Սա զարմանալի չէ, քանի որ հաշվարկվում է այն տնտեսվարող սուբյեկտների իրականացրած գործունեությունը, որոնք ցանկանում են աննկատ և չգրանցված մնալ: Ստվերային տնտեսությունն իր հերթին կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝

- ստվերային տնտեսություն, որը պայմանավորված է պետական մարմիններում կաշառակերության և հովանավորչության առկայությամբ,
- ստվերային տնտեսություն, որը պայմանավորված է որոշ «հնարամիտ» տնտեսվարող սուբյեկտների կողմից, առանց հարկային մարմիններին կաշառք վճարելու, հարկերից խուսափելու կարողությամբ:

¹ Смирнов С., “Из света в тень”. Эксперт. 2000. № 30. С. 8.

Երկրորդ խումբն, իհարկե, անհամեմատ ավելի քիչ է տարածված, քան առաջինը:

Ստվերային տնտեսության պատճառած վնասները չեն սահմանափակվում միայն նրանով, որ այդ գումարները չեն մտել պետական բյուջե և չեն ծախսվել սոցիալական կամ երկրի պաշտպանունակության բարձրացման նպատակով: Կա ևս մեկ, ոչ պակաս կարևոր խնդիր, օրինակ՝ տնտեսական բոլոր գործընթացների աղավաղումը, ինչը երկարաժամկետ հատվածի համար ավելի վատ արդյունքների կարող է հանգեցնել, քան ներկայիս ուղղակի կորուստները: Խնդիրը կայանում է նրանում, որ տնտեսությունում ոչ բոլորն են հավասարապես օգտվում հարկերից խուսափելու «արտոնությունից», և նա, ով կարողանում է ավելի շատ խուսափել, հայտնվում է հատուկ արտոնյալ դիրքերում և սկսում է դուրս թողնել մյուս գործարարներին՝ գրավելով շուկան:

Հնարավոր է, որ այդպես են ձևավորվել Հայաստանում տարբեր ոլորտներում մոնոպոլիստական դիրք գրավող շատ խոշոր բիզնեսներ: Եթե մանր կաշառակերության միջոցով շատերը կարող են «օգտվել» հարկերն ամբողջությամբ չվճարելու հնարավորությունից և այդտեղ, ասես թե, «հավասարակշռություն է ձևավորվել», խնդիրն էականորեն բարդանում է, երբ բարձր հովանավորչության արդյունքում որոշ գործարարներ սկսում են գերիշխող դիրք գրավել:

Հարկերից խուսափումը հաջողակ գործարարի համար նույնն է, ինչ որ պետությունից աջակցություն ստանալը: Փաստորեն, ստացվում է, որ պետությունն «արտոնյալ» գործարարներին ամեն տարի կոնկրետ գումար է տալիս, որը նպաստում է նրանց գործունեության ընդարձակմանը, և ինչքան մեծ է հարկերից խուսափումը, այնքան ավելի շատ է աջակցությունը: Այն կոչվում է «տնտեսական աղավաղումներ», քանի որ գործարարները բաժանվում են աջակցություն ստացող և աջակցություն չստացող խմբերի: Աջակցություն չստացող գործարարները հրաժարվում են ներդրումներ անելուց, կապիտալը երկրից դուրս է հոսում, որի արդյունքում տնտեսությունը չի զարգանում իր ներուժին համարժեք:

**Кристине Багдасарян
Тигран Арутюнян**

О вопросах взаимодействия теневой экономики и налогового администрирования

Аннотация

Исходя из результатов анализа, проведенного в рамках данной статьи, считаем, что расширение масштабов теневой экономики способствует снижению эффективности налогового администрирования. В итоге, бизнесмены, не получившие поддержки, отказываются совершать вложения, происходит отток капитала из страны, а экономика РА не развивается в соответствии со своим потенциалом.

**Kristine Baghdasaryan
Tigran Harutyunyan**

On the interplay of economy with the tax administration

Abstract

Based on the results of the analysis provided in this article, the authors find that the increase of the shadow economy results in lower efficiency of the tax administration. As a result of these negative developments, the business people refuse to invest, the capital flows abroad, and the growth of the economy lags behind the potential level could have reported.

**ՓՈՒՍԱՐԺԵՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԶՅՈՒՄ**

Ցանկացած երկրի, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության առաջընթացի կարգավորման հիմնական բաղադրատարրը նրա ազգային արժույթն է, քանի որ ցանկացած տնտեսական գործառնության իրականացումն ու հաշվառումը կատարվում է այդ արժույթով: Մեր երկրում որպես արժույթ հանդես է գալիս ՀՀ դրամը, որի միջոցով գնահատվում է ցանկացած տեսակի ապրանքի գինը¹:

Ժամանակակից տնտեսությունում գործում է արժույթային համակարգ, որի հիմքում ընկած է արժույթի հաշվարկային փոխարժեքը, քանի որ միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացումը պահանջում է տարբեր երկրների արժույթների արժեքային հարաբերակցության չափում: Արժույթի փոխարժեքը պայմանավորված է հետևյալ նպատակներով.

- օգտագործվում է ապրանքների, ծառայությունների մատուցման, առևտրի իրականացման, վարկերի տրամադրման, ավանդների ներգրավման և այլ գործառնությունների շարժի ժամանակ: Օրինակ, արտահանողը փոխանակում է վաճառքից ստացված արտարժույթն ազգայինի հետ, քանի որ այլ երկրների արժույթները տվյալ երկրի տարածքում չեն կարող շրջանառվել որպես օրինական գնման և վճարման միջոց: Ներմուծողը փոխանակում է ազգային արժույթն արտարժույթով՝ արտերկրում գնված ապրանքների վճարման համար: Պարտապանն արտարժույթ է ձեռք բերում ազգային արժույթի դիմաց պարտքերի մարման և փոխառությունների դիմաց՝ տոկոսների վճարման համար:
- համաշխարհային և ազգային շուկաների գների, ինչպես նաև տարբեր երկրների՝ արտարժույթով կամ ազգային արժույթով արտահայտված արժեքային ցուցանիշների համեմատման համար:

Փոխարժեք կատեգորիան անմիջականորեն կապված է արժեքի աշխատանքային տեսության և համաշխարհային փողերի ուսմունքի հետ, քանի որ ազգային արժույթների միջև հարաբերակցության ձևավորումը հանդիսանում է փողի այդ գործառնության դրսևորումը:

Արտարժույթը ցանկացած օտարերկրյա պետության արժույթն է, որը տվյալ երկրում ծառայում է որպես շրջանառության օրինական միջոց և հաշվառման հիմք: Այս կամ այն երկիրն արտարժույթը կարող է գնել սեփական արժույթով և օգտագործել արտերկրի հետ առևտուր ու ֆինանսական գործառնություններ կատարելիս: Արտարժույթը գնվում և վաճառվում է արտարժույթի շուկաներում բանկերի կողմից ինչպես կանխիկով կամ չեկերով, այնպես էլ՝ այլ երկրների բանկերում արտարժույթային հաշիվների մնացորդների շարժի ձևով:

ՀՀ օրենսդրության համաձայն արտարժույթ են համարվում՝

1. օտարերկրյա դրամանիշերը՝ արտահայտված բանկային տոմսերի, գանձատան թղթադրամների և մետաղադրամների ձևով, որոնք համապատասխան օտարերկրյա մեկ կամ մի քանի պետությունների տարածքում գտնվում են շրջանառության մեջ և օրինական վճարման միջոց են, ինչպես նաև այն դրամանիշերը, որոնք հանված են կամ հանվում են շրջանառությունից, բայց ենթակա են փոխանակման շրջանառության մեջ գտնվող դրամանիշերով:
2. բանկային հաշիվներում և ավանդներում գտնվող օտարերկրյա պետությունների դրամական միավորներով արտահայտված միջոցներն ու վճարման փաստաթղթերը²:

¹ Սարգսյան Տ., Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ, Երևան, «Ֆենոմեն», 2008, էջ 16:

² Բայադյան Ա.Գ., Ֆինանսա-վիճակագրական բացատրական բառարան, Երևան, «Լիմուշ», 2008, էջ 57-58:

Ցանկացած արժույթի փոխարժեքի հիմքում ընկած է դրամական միավորի գնողունակությունը, իսկ փոխարժեք սահմանվում է միաժամանակ միջազգային հաշվարկային դրամական միավորի նկատմամբ:

Արժույթի փոխարժեքը լայն տարածում է ստացել շուկայական տնտեսության օրոք, երբ միջազգային առևտուրը և կապիտալի արտահանումը հասավ հսկայական չափերը և ձևավորվեց համաշխարհային շուկան: Ինչպես ապրանքի գինն է ձգտում նրա արժեքին, բայց չի համընկնում նրա հետ, այնպես էլ՝ արժույթի փոխարժեքն է անընդհատ շեղվում իր նախնական հիմքից: Միաժամանակ ոսկու ստանդարտի պայմաններում՝ ոսկով ազատ փոխանակվելու և երկրների միջև ոսկու ազատ շրջանառության ժամանակ, արժույթի փոխարժեքն աննշան էր շեղվում գնողունակության պարիտետից՝ փոխանակային կուրսերի մեխանիզմի շնորհիվ: Արժույթի փոխարժեքը չէր կարող ավելի շեղվել մետաղադրամային պարիտետից, քանի որ մի երկրից մեկ այլն երկիր՝ ընկած են նաև ոսկու տեղափոխման ծախսերը: Մետաղադրամային պարիտետից արժույթի փոխարժեքի շեղման սահմանները, որոնք հանդես են գալիս երկու առումներով, դրանք են՝ ստորին (որին հասնելու ժամանակ սկսվում է ոսկու արտահոսք տվյալ երկրից) և վերին (որին հասնելու ժամանակ սկսվում է ոսկու ներհոսք տվյալ երկիր)¹:

Արդի պայմաններում արժույթի փոխարժեքի ձևավորման առանձնահատկությունն այն է, որ արժույթներն արժեքային արտահայտություն են ստանում ոչ թե անմիջապես ոսկով, այլ վարկային փողերի հարաբերական արժեքի միջոցով: Որպես վարկային փողերի «յուրահատուկ արժեքի» չափ հանդիսանում է ոսկին՝ ոսկու շուկայում, որտեղ դրանց փոխանակության ժամանակ ձևավորվում է գների փաստացի մասշտաբ: Ժամանակակից պայմաններում արժույթի փոխարժեքը հիմնվում է արժույթի պարիտետի՝ օրենսդրական կարգով ամրագրված արժույթների միջև հարաբերակցության վրա և տատանվում է նրա շուրջը:

Այժմ դիտարկենք արժույթի փոխարժեքի վրա ազդող գործոնները և դրա ձևավորման մեխանիզմը: Դրանք են՝

1. Դրամական միավորի գնողունակությունը և ինֆլյացիայի տեմպը, քանի որ արժույթի փոխարժեքը փողից ածանցյալ արժեքային կատեգորիա է և նրա օբյեկտիվ հիմքը ոսկու հետ չփոխանակվող վարկային փողերի պայմաններում՝ ազգային դրամական միավորների ներկայացուցչական արժեքների հարաբերակցությունն է: Այն չափվում է ապրանքների նկատմամբ դրանց գնողունակության հիման վրա՝ ներառելով ոսկին որպես յուրահատուկ ապրանք:
2. Վճարային հաշվեկշռի վիճակը, որն անմիջականորեն ազդելով արժույթի առաջարկի և պահանջարկի վրա, ներգործում է փոխարժեքի մակարդակի վրա՝ առաջ բերելով արժույթային հարաբերակցության շեղումներ իրենց գնողունակությունից: Դա պայմանավորված է նրանով, որ միջազգային հաշվարկներն իրականացվում են արտաքին տնտեսական հարաբերակցությունների մասնակիցների կողմից անհրաժեշտ արտարժույթի առքուվաճառքի ճանապարհով: Վճարային հաշվեկշռը կարող է հանդես գալ ակտիվ և պասիվ առումներով: Դրանցից ակտիվ վճարային հաշվեկշռը նպաստում է ազգային արժույթի փոխարժեքի արժևորմանը, քանի որ ավելանում է նրա պահանջարկն արտասահմանյան պարտապանների կողմից, իսկ պասիվ վճարային հաշվեկշռը հանգեցնում է ազգային արժույթի արժեզրկմանը, քանի որ պարտապանները վճարում են այն՝ արժույթի դիմաց իրենց արտաքին պարտավորությունները մարելու համար:
3. Տարբեր երկրներում տոկոսադրույքների տարբերությունները, ըստ որոնց ոսկուց վարկային փողերին անցման հետ ուժեղացավ տոկոսադրույքների տարբերության ազդեցությունն արժույթի փոխարժեքի վրա: Ասվածը փորձենք հիմնավորել երկու հիմնական պատճառներով: Դրանցից ըստ 1-ինի, տոկոսադրույքների փոփոխությունը երկրում այլ հավասար պայմաններում ազդում է կապիտալի միջազգային շուկայի վրա: Սկզբունքորեն, տոկոսադրույթի բարձրացումը խթանում է արտասահմանյան կապիտալի ներհոսքին, իսկ նրա իջեցումը՝ կապիտալի արտահոսքին, այդ թվում՝ ազգային կապիտալին: Ըստ 2-րդ

¹ «Кризис мирового капитализма. Открытое общество в опасности» Джордж Сорос, Москва, «Инфо-М», 2003г., с. 37.

պատճառի, տոկոսադրույքներն ազդում են արժուքային և վարկային շուկաների կողմից իրականացվող գործառնությունների վրա: Վերջիններիս կատարման ժամանակ բանկերը նկատի են ունենում տոկոսադրույքների տարբերությունը՝ ազգային և միջազգային շուկաներում առավելագույն շահույթներ ստանալու ակնկալիք:

4. Արժուքային շուկաների գործունեությունը և դրանցով պայմանավորված գործառնություններն իրենց ազդեցություն են թողնում արժույթի փոխարժեքի վրա: Այսպես, եթե որևէ արժույթի փոփոխություն արժեզրկման միտում ունի, ապա առաջին հերթին՝ միջազգային կորպորացիաները և բանկերը, կանխավ վճարում են ավելի կայուն արժույթների դիմաց, հետագա սպասվելիք կորուստներից զերծ մնալու համար:
5. «Համաշխարհային արժուքային շուկաներում» (ՀԱՇ) ազգային արժույթի նկատմամբ վստահության դրսևորումը, որը պայմանավորված է երկրում տիրող տնտեսական և քաղաքական իրավիճակով, ինչպես նաև՝ վերը դիտարկված գործոններով, որոնք ազդեցություն են ունենում արժույթի փոխարժեքի վրա:
6. Արժույթի փոխարժեքի պետական կարգավորումը, որն ուղղված է նրա արժևորմանը կամ արժեզրկմանը, նույնպես ազդում է արժույթների փոխարժեքային հարաբերակցության վրա: Այն իրականացվում է տվյալ երկրի կենտրոնական բանկի կողմից տարվող արժուքային քաղաքականության միջոցով:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոնշյալների և արժույթի փոխարժեքի կարևորությունը (ՀՀ-ում դրամի փոխարժեքը որոշվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Հայաստանի տարածքում արժուքային կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 8-ի համաձայն), ներկայացնենք ԱՄՆ դոլարի փոխարժեքները ՀՀ դրամով՝ ըստ 2005-2012 թթ. և ամիսների միջին մեծություններով (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակի ելակետային և հաշվարկային տվյալներից պարզվում է, որ 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը դրամով, ինչպես ըստ տարիների, այնպես էլ ամիսների ունեցել են աճման կամ նվազման միտումներ: Օրինակ, եթե համեմատելու լինենք 2006 և 2012 թթ. հունվար ամիսների փոխարժեքները, ապա արդյունքում ստացվում է բացարձակ շեղումը՝ 104 դրամով նվազեցում կամ հարաբերական շեղումը՝ -21.1% $(-104/492*100)$, իսկ ահա դեկտեմբերի վերջի դրությամբ՝ 2012 թվականին փոխարժեքը 2006 թվականի նկատմամբ նվազել է 43 դրամով կամ հարաբերական շեղումը կազմել է՝ -9.6 % $(-43/449*100)$: Միաժամանակ տարվա միջիններով փոխարժեքների տատանումների վերաբերյալ ավելի հստակ պատկերացում ունենալու համար այն ներկայացնենք գծապատկերի տեսքով:


Գծապատկեր 1-ից պարզվում է, որ ուսումնասիրվող 8 տարիների ընթացքում միջին հաշվով ԱՄՆ մեկ դոլարի և ՀՀ դրամի փոխարժեքի տատանումներն ունեցել են ոչ գծային բնույթ և 2012թ. ու 2006թ. միջև եղած բացարձակ շեղումը կազմել է 56 դրամ, որը չնայած դրական երևույթ է, սակայն դեռևս ոչ ցանկալի: Ուստի, այդ առումով ՀՀ կենտրոնական բանկը և կառավարությունը պետք է մտահոգվեն փոխարժեքային կուրսի բարելավման համար՝ աստիճանաբար ապահովել տնտեսական աճի ավելացում, հիմնականում ի հաշիվ որակյալ համախառն ներքին արդյունքի, որն էլ իր հերթին կնպաստի արտահանում-ներմուծում հարաբերակցության մեծացմանը:

1 ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումները ՀՀ դրամով՝ ըստ 2005-2012թթ. և ամիսների

Տարիները	2005		2006		2007		2008		2009		2010		2011		2012	
	Միջին փոխարժեքը, դրամ	%-ով նախորդ ամսվա նկատմամբ	Միջին փոխարժեքը, դրամ	%-ով նախորդ ամսվա նկատմամբ	Միջին փոխարժեքը, դրամ	%-ով նախորդ ամսվա նկատմամբ	Միջին փոխարժեքը, դրամ	%-ով նախորդ ամսվա նկատմամբ	Միջին փոխարժեքը, դրամ	%-ով նախորդ ամսվա նկատմամբ	Միջին փոխարժեքը, դրամ	%-ով նախորդ ամսվա նկատմամբ	Միջին փոխարժեքը, դրամ	%-ով նախորդ ամսվա նկատմամբ	Միջին փոխարժեքը, դրամ	%-ով նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	492	101,1	452	100,5	364	99,7	307	100,9	305	99,2	377	99,2	365	101,2	388	100,4
Փետրվար	473	96,3	450	99,6	356,0	97,8	309	100,6	305	100,0	380	100,8	365	100,0	389	100,3
Մարտ	466,0	98,4	451,0	100,0	359	100,7	309	100	366	120,0	394	103,6	368	100,9	389	100,1
Ապրիլ	448	96,1	450,0	99,8	363	101	309	100,1	372	102,0	394	100,1	374	101,4	392	100,7
Մայիս	449	100,3	440	97,7	354	97,4	308	99,5	372	100,0	385	97,6	374	100,2	398	101,5
Հունիս	449,0	99,9	421	95,7	345	97,5	305	99,2	367	98,5	373	97,0	375	100,1	415	104,2
Հուլիս	443	98,6	417	99,2	338	98,1	302	99,1	365	99,6	367	98,2	367	98,0	413	99,5
Օգոստոս	461,0	104,1	402	96,3	337	99,6	302	99,9	373	102,0	366	99,9	367	100,0	411	99,6
Սեպտեմբեր	454	98,6	388	96,5	338	100,4	303	100,2	380	101,9	363	99,2	372	101,4	409	99,5
Հոկտեմբեր	449	98,9	381	98,3	330	97,7	306	101,2	386	101,5	360	99,2	377	101,2	407	99,5
Նոյեմբեր	458	102,0	376	98,6	317	95,9	305	99,7	387	100,4	361	100,3	383	101,6	407	100,1
Դեկտեմբեր	449	98,1	365	96,9	304	96,0	308	100,8	380	98,3	360	99,8	383	100,1	406	99,6
Տարվա միջինը	458		416		342		306		363		374		373		402	

Գծապատկեր 1

1 ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումները ՀՀ դրամով՝ ըստ 2005-2012թթ.



Особенности формирования и динамика изменения валютного курса в РА

Аннотация

Во всех странах мира действует валютный курс, который оказывает существенное влияние на реализацию товаров, оказание услуг, осуществление торговли, предоставление кредитов, привлечение вкладов и выполнение других однотипных операций. Особенности формирования валютного курса, прояснение и анализ его изменений в современных условиях легли в основу представленной статьи.

Arshak Bayadyan

**The peculiarities of determining the foreign exchange rate
in Armenia and the respective trends**

Abstract

In all nations foreign exchange rates are determined at which the goods are sold and purchased; services provided; international trade is taking place; the loans are provided; deposits are attracted and other similar transactions are made. Hence, the urgency of this article is grounded on the peculiarities of determining the foreign exchange rate; the contemporary factors affecting the rate and analysis of these factors.

ԱՐՇԱԿ ԲԱՅԱԴՅԱՆ

*ՄԳԱԱՄ. Լոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

**ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՅՅ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՎՐԱ**

Որպես փոքր, բայց դեռևս տնտեսապես ոչ զարգացած երկիր, մեր հանրապետության տնտեսական աճի ապահովման մակարդակը մեծ կախվածություն ունի արտերկրյա ներդրումային գործընթացներից և տրանսֆերտներից, որոնք պայմանավորված են փոխարժեքի փոփոխություններով: Վերջիններս իրենց հերթին բավականաչափ մեծ ազդեցություն են թողնում ինչպես յուրաքանչյուր անձի, այնպես էլ՝ ամբողջ երկրի ֆինանսատնտեսական իրավիճակի վրա: Սա հետևանք է նաև այն ամենի, որ Հայաստանի Հանրապետությունում ներկրվող և արտահանվող ապրանքների հարաբերակցությունը՝ դրամական արտահայտությամբ, ունի երկնիչ թվի տեսք: Ուստի, այս իրավիճակը մեղմացնելու նպատակով, ՀՀ կենտրոնական բանկը 2009թ. մարտի 3-ին միջազգային փորձին համընթաց՝ անցում կատարեց «լողացող փոխարժեք»-ի քաղաքականությանը, որը որոշակի խթան հանդիսացավ Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի ապահովման գործընթացում: Լողացող փոխարժեքն՝ ըստ որոշ հեղինակների, դա արժույթի ազատ փոփոխվող կամ տատանվող մեծությունն է, որը որոշվում է շուկայական իրավիճակներում պահանջարկի և առաջարկի հարաբերակցությամբ: Արժույթները փոխանակվում են անմիջականորեն, առանց որևէ այլ միջնորդավորման: Ցանկացած այլ ապրանքի նման, արժույթի պահանջարկի և առաջարկի կորերի կառուցման սկզբունքները մնում են նույնը (տե՛ս գծապատկեր 1)¹: Ներքոնշյալ գծապատկերը ներկայացնում է արտարժույթի նկատմամբ պահանջարկի և առաջարկի փոխկապվածությունը, որի միջոցով որոշվում է հավասարա-


¹ Գյուլումյան Ա., Արտարժույթային գործառնություններ, Երևան, «Տիգրան Մեծ», 2003, էջ 12:

կշռային P' փոխարժեքը և դրան համահունչ՝ շրջանառությունում գտնվող Q' օտարերկրյա արժույթի ծավալները:

Լողացող փոխարժեքի ձևավորումը բացատրող բազմազան տեսություններից առանձնացնենք երկու հիմնականները, որոնցից առաջինը՝ գնողունակության համարժեքության տեսությունն է: Համաձայն այդ տեսության, երկու երկրների ազգային արժույթների միջև հավասարակշռայինն այն փոխարժեքն է, որը երկարաժամկետ առումով հավասարակշռում է պահանջարկն ու առաջարկը, և պետք է լինի այնպիսին, որպեսզի միևնույն տեսակի ապրանքները կամ սպառողական ապրանքների զանբյուղներն այդ երկրներում ունենան միևնույն արժեքը:

Գծապատկեր 1

Պահանջարկի և առաջարկի փոխկապվածությունն արժութային շուկայի համար



Այժմ փորձենք ասվածն ավելի պատկերավոր դարձնել. եթե օրինակ դիտարկենք ռուբլի/ՀՀ դրամ փոխարժեքը, ապա գնողունակության համարժեքության տեսության համաձայն, Ռուսաստանի Դաշնության ռուբլու և ՀՀ դրամի միջև հավասարակշռային փոխարժեքը պետք է լինի այնպիսին, որ դրամի ինչ-որ քանակը ռուբլու փոխարկելու դեպքում Ռուսաստանում գնենք միևնույն ապրանքների նույն ծավալը, ինչ կգնեինք Հայաստանում՝ դրամի սկզբնական քանակով:

Տեսության էությունը կայանում է նրանում, որ եթե հանկարծ ստացվի այնպես, որ Ռուսաստանի Դաշնությունում ի վիճակի լինենք գնել ավելի շատ ապրանքներ, իսկ դրանց գները ձևավորված փոխարժեքի պայմաններում լինեն ավելի էժան՝ քան Հայաստանում, ապա ռուբլու նկատմամբ պահանջարկը կաճի, քանի որ մարդիկ կցանկանան ավելի շատ ռուբլի ձեռք բերել և գնել Ռուսաստանի շուկաներում վաճառվող ապրանքները: Դա նաև լրացուցիչ խթան կլինի գործարարների համար, որոնք կարող են գնել այդ ապրանքները Ռուսաստանում, տեղափոխել Հայաստան և վաճառելով Հայաստանում ձևավորված գներով՝ ստանալ շահույթ:

Իր հերթին, լողացող փոխարժեքի տեսությունը կապված է տոկոսադրույքների համարժեքության հետ: Ըստ այդ տեսության, տոկոսադրույքների միջև անհամապատասխանություն առաջանալու դեպքում, առավել ցածր տոկոսադրույքներ ձևավորած երկրներից տեղի կունենա «կապիտալի արտահոսք», այսինքն՝ տվյալ երկրի խնայողությունները կփոխարկվեն այլ երկրի արժույթով ու կներդրվեն այն երկրներում, որտեղ ձևավորվել է առավել բարձր տոկոսադրույք և արդյունքում այդ ներդրումները կապահովեն ավելի բարձր եկամտաբերություն: Հատկապես որ, ներդրումների վրա ազդում են այս կամ այն երկրներում ձևավորված տոկոսադրույքները: Այս տեսության թերությունը կայանում է նրանում, որ կապիտալի հոսքերի վերաբերյալ ենթադրություն անելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տարբեր երկրների կողմից սահմանված տոկոսադրույքների ռիսկայնության, ինչպես նաև՝ կապիտալի հոսքերի հետ կապված սահմանափակումների վրա:

Անհրաժեշտ է նշել նաև, որ յուրաքանչյուր երկրում, այդ թվում նաև՝ ՀՀ-ում, լողացող փոխարժեքը փոխապայմանավորված է իր վճարային հաշվեկշռով, որն արտացոլում է իր երկրի և մնացած երկրների միջև արժութային հոսքերը, այն է՝ թե տվյալ երկիրն ինչքան պահանջարկ է

ներկայացրել օտարերկրյա արժույթի նկատմամբ, քանի որ վճարային հաշվեկշռում են արտա-
ցվում նաև օտարերկրյա արժույթների առաջարկը, կամ տեղական արժույթի նկատմամբ
պահանջարկը:

Միաժամանակ պետք է նշել նաև այն կարևոր իրողությունը, որ Արժույթի միջազգային
հիմնադրամը (ԱՄՀ), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՁԵԲ) և Համաշ-
խարհային բանկը (ՀԲ) իրենց դրական վերաբերմունքն արտահայտեցին ՀՀ կենտրոնական
բանկի կողմից «լողացող փոխարժեք»-ի քաղաքականությանն անցմանը: Այդ քաղաքականու-
թյան շնորհիվ 2009թ. մարտի 3-ին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքը
կազմեց 372,11 դրամ, որը նախորդ օրվա 305,75 դրամ փոխարժեքին զերազանցեց 66,36
դրամով, ինչի հետևանքով սպառողական, մասնավորապես՝ ներմուծվող պարենային ապրանք-
ների և ավտովառելիքի գներն աճեցին 20-30%-ով, որի արդյունքում տուժեցին դրանց կարիքն
զգացողները, հիմնականում՝ ազգաբնակչությունը:

Արդյունքում՝ դոլարիզացիայի նման բարձր աստիճանը և 2008թ. վերջին սկսված համաշ-
խարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, չէին կարող իրենց բացասական ազդեցությունը
չունենալ օտարերկրյա ներդրումների վրա:

Ըստ պաշտոնական վիճակագրության, 2012թ. առաջին ինն ամիսների արդյունքներով¹
Հայաստանի տնտեսության իրական հատվածում զգալիորեն աճել են Ռուսաստանից, Ֆրան-
սիայից, ԱՄՆ-ից և մի շարք այլ հիմնական գործընկեր երկրներից հոսող ներդրումների ծավալ-
ները: Այսպես, Ռուսաստանին, որը դեռևս շարունակում է Հայաստանի համար մնալ որպես
օտարերկրյա ներդրումներ իրականացնող ամենահիմնական գործընկեր երկիրը, վերոնշյալ
ժամանակահատվածում բաժին է ընկել ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված
օտարերկրյա ներդրումների շուրջ 50%-ը, կամ այլ կերպ՝ 283.8 մլն դոլարը:

Օտարերկրյա ներդրումների ծավալով երկրորդ երկիրը Ֆրանսիան է (76 մլն դոլար), իսկ
առաջին եռյակը եզրափակում է ԱՄՆ-ը (40 մլն դոլար): Նշենք, որ 2012թ. առաջին ինն ամիսների
արդյունքներով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, գրանցվել է
Ֆրանսիայից դեպի ՀՀ տնտեսության իրական հատված ներդրումների հոսքի անկում՝ շուրջ
30%-ով, իսկ ահա ԱՄՆ-ից կատարվող ներդրումներն աճել են ավելի քան 2,5 անգամ:

Հատկանշական է, որ Հայաստանին՝ որպես ներդրումային միջավայրի երկրի, շարու-
նակում են իրենց համար բացահայտել տարբեր երկրների ներդրողները, ինչի արդյունքում,
որոշ երկրներից Հայաստանի տնտեսություն հոսած ներդրումների ծավալներն աճել են մի քանի
հարյուր անգամ: Այսպես, մեկ տարվա (2012թ.) կտրվածքով «կանադական» ներդրումները ՀՀ
տնտեսության իրական հատվածում աճել են 190 անգամ (23.4 մլն դոլար), իսկ Շվեյցարիայից
եկող ներդրումները՝ 270 անգամ (7.6 մլն դոլար)²:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման գործընթացն ինքնին բավականին
աշխատատար է, և այդ առումով կարևոր է դիտարկել ոչ միայն Հայաստանի Հանրապետության
վարած քաղաքականությունը, այլև ուսումնասիրել համաշխարհային տնտեսական կառույց-
ների արձանագրած ցուցանիշները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են մեր
երկրում օտարերկրյա ներդրումների ներգրավման ծրագրերի հաջողությանը:

Իսկ ի՞նչ պետք է անի ՀՀ կենտրոնական բանկը՝ դրամավարկային քաղաքականությունը
ֆինանսատնտեսական ճգնաժամի մարտահրավերներին համապատասխանեցնելու համար:
«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ամրագրված է, որ կենտրոնական բանկի հիմ-
նական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է, որն
իրագործելու նպատակով կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է
դրամավարկային քաղաքականության ծրագրերը՝ հաշվի առնելով փոխարժեքի փոփոխություն-
ները: Եթե կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են հիմնական խնդրին, ապա
կենտրոնական բանկն առաջնությունը տալիս է հիմնական խնդրին և ղեկավարվում է դրա
իրագործման անհրաժեշտությամբ: Կենտրոնական բանկի հիմնական խնդիրներից է նաև ՀՀ

¹ www.armstat.am, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. հունվար-նոյեմբերին:

² www.armstat.am, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբերին:

բանկային համակարգի կայունության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Տնտեսական անկման պատճառով բանկային համակարգում արագ տեմպերով ավելանում են դասակարգված վարկերի ծավալները, որոնք բանկերի համար իրացվելիության և կայունության ապահովման ռիսկեր են ստեղծում և ապագայում վտանգում են բանկերի բնականոն գործունեությունը: Ուստի, կարծում ենք, որ ֆինանսական ճգնաժամի պայմաններում մոնետար գործիքներով և մասնավորապես՝ փոխարժեքի փոփոխության պայմաններում, գնաճը ցանկալի մակարդակի պահպանելն արդիական չէ, այստեղ առկա է մեկ այլ շատ կարևոր հարց՝ տարիների ընթացքում ձևավորված վստահելի բանկային համակարգի կայունության ապահովումը:

Այսպիսով, բանկային համակարգի կայունության ապահովումն առաջիկայում պետք է հանդիսանա ԶԶ կենտրոնական բանկի գլխավոր խնդիրներից մեկը, որն իրագործելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն, որի գործիքներից մեկն էլ վերաֆինանսավորման տոկոսադրույքի շարունակական նվազեցման քաղաքականության որդեգրումն է և փոխարժեքի փոփոխությունների նկատմամբ զգայունության դրսևորումը: Իսկ գնաճը զսպելու գործում՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, շատ է կարևորվում Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի դերը: Ինչպես գիտենք, տնտեսության մեջ գնաճի բարձր մակարդակի ձևավորմանը հիմնականում նպաստում են առաջին անհրաժեշտության սպառողական ապրանքների գների աճը: Իսկ մեր երկրում այդ ապրանքների շուկաները հիմնականում գտնվում են ներմուծող մենաշնորհների ձեռքին, որոնք էլ վարում են իրենց իսկ ցանկալի գնային քաղաքականությունը: Ընդ որում, ԱՄՆ դոլարի արժեզրկման ժամանակաշրջանում այդ ապրանքների գները դեպի նվազման միտում՝ բոլորովին ճկուն չեն, ինչը չենք կարող ասել ԱՄՆ դոլարի արժևորման պարագայում, երբ գներն արագ տեմպերով բարձրանում են, և սա այն դեպքում, երբ միջազգային շուկայում բոլոր հիմնական առաջնային սպառման ապրանքների գները նվազում են: Ուստի, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի և խիստ ստուգումներ իրականացնի նշված շուկաներ ներմուծող ապրանքների ինքնարժեքի կառուցվածքի ու գների նկատմամբ, թույլ չտալով այդ շուկաների տնտեսվարող սուբյեկտներին՝ չհիմնավորված գներ սահմանել, և արդյունքում՝ գերշահույթներ ստանալ:

Аршак Баядян

Влияние изменения курса валюты на развитие экономики РА

Аннотация

Система валютных отношений является важнейшей составной частью мировой экономики, поскольку курсом валюты обусловлены осуществляемые в любой стране платежные и расчетные сделки всех видов, которые оказывают положительное или негативное влияние на развитие экономики страны.

Arshak Bayadyan

The impact of the changes in foreign exchange rates on the development of the economy of the Republic of Armenia

Abstract

The system of foreign exchange relations is one of the most important parts of the global economy, since the foreign exchange rate determines all types of transactions (transfers and clearing) made in each country, that affect the economic development either negatively or positively.

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎԵՐՊՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑ

Ինչպես հայտնի է, ժամանակակից տնտեսական պայմաններում ընկերությունների վերակազմակերպումը աստիճանաբար դառնում է ընկերությունների գործունեության բարելավման գործուն միջոց: Վերակազմակերպում է կոչվում իրավաբանական անձի (անձանց) վերակառուցումը և վերափոխումը, որը նշանակում է կոնկրետ իրավաբանական անձի (անձանց) գործունեության դադարեցում առանց գործերի և գույքի լուծարման, նոր իրավաբանական անձի հետագա պետական գրանցմամբ: Վերակազմակերպման նպատակն է կապիտալի կառուցվածքի փոփոխությունից, գործառույթների կրկնորդման վերացումից, արտադրության ծավալների ավելացման պայմաններում ծախսերի կրճատումից լրացուցիչ ֆինանսական արդյունքի ստացումը:

Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է հետևյալ դեպքերում.

1. Ընկերությունը սնանկ, իսկ նրա հաշվեկշռի կառուցվածքը՝ անբավարար ճանաչելիս:
2. Աշխատունակ (վճարունակ) ընկերության արդյունավետության բարձրացման նպատակով: Վերակազմակերպման ընթացակարգերն իրականացվում են իրավաբանական անձանց նախաձեռնությամբ:
3. Հարկադրաբար, հակամենաշնորհային մարմինների որոշմամբ այն դեպքում, երբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները գերակայող դիրք են գրավում և կատարել են տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության երկու և ավելի խախտումներ:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի¹ իրավաբանական անձի վերակազմակերպումը կարող է իրականացվել նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ հիմնադիր փաստաթղթերով լիազորված իրավաբանական անձի որոշմամբ:

Աղյուսակ 1

Վերակազմակերպման ձևերը

Վերակազմակերպման ձևը	Իրավունքների և պարտականությունների փոխանցումը (անցումը)	Վերակազմակերպման պարտադիր պայմանները
Միաձուլում $A+B=C$	A-ից և B-ից ամբողջությամբ	1. Բաժնետերերի ընդհանուր ժողովի 3/4 մեծամասնության որոշման հիման վրա, ՍՊԸ-ում և արտադրական կոոպերատիվում՝ միաձայն: 2. Արտոնյալ բաժնետոմսերի տերերին ձայնի իրավունքի տրամադրումը: 3. Շուկայական գնով ընկերության կողմից բաժնետոմսերի ետգնման պահանջման իրավունքի տրամադրումը: 4. Պարտատերերի ծանուցումը: 5. Պարտատերերի իրավունքի առաջացումը պահանջելու պարտավորությունների վաղաժամկետ կատարման դադարեցում, վնասների փոխհատուցում: 6. Փոխանցման ակտի և բաժանման հաշվեկշռի կազմումը:
Միացում $A+B= B$	A-ից ամբողջությամբ	
Բաժանում $A=B+C$	A-ից ամբողջությամբ բաժանման հաշվեկշռին համապատասխան	
Առանձնացում $A= A +B$	Մասամբ A-ից բաժանման հաշվեկշռին համապատասխան	
Վերակազմավորում՝ $ԲԸ=ՍՊԸ$ կամ $ՍՊԸ=ԲԸ$	Ամբողջությամբ նոր անձին	

¹ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրք, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր N 17(50), 10 օգոստոսի 1998թ.:

Վերակազմակերպման հիմնական ձևեր են հանդիսանում. միաձուլումը և միացումը, բաժանումը և առանձնացումը, վերակազմավորումը¹: Վերոբերյալ աղյուսակ 1-ը արտացոլում է վերակազմակերպման ձևերը:

Իրավաբանական անձանց միաձուլման դեպքում նրանցից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականություններն անցնում են նոր առաջացող իրավաբանական անձին՝ փոխանցման ակտին համապատասխան: Ստորև բերված աղյուսակ 2-ը տվյալներ է պարունակում ՀՀ-ում միաձուլման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թվաքանակի վերաբերյալ:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետությունում միաձուլման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թիվը (1995-2012թթ.)²

Վերակազմակերպման ձևը	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	Ընդամենը
Միաձուլում	1	2	14	28	14	12	14	8	47	29	8	2	33	6	8	7	5	3	241

Իրավաբանական անձի մեկ այլ իրավաբանական անձին միացման դեպքում վերջինիս են անցնում միացվող իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները փոխանցման ակտին համապատասխան: Ստորև բերված աղյուսակ 3-ը տվյալներ է պարունակում ՀՀ-ում միացման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թվաքանակի վերաբերյալ:

Աղյուսակ 3

Հայաստանի Հանրապետությունում միացման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թիվը (1995-2012թթ.)³

Վերակազմակերպման ձևը	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	Ընդամենը
Միացում	5	31	60	51	44	44	55	70	43	40	49	40	47	49	58	54	46	40	826

Բաժանման և առանձնացման դեպքում իրավաբանական անձի գույքի ճակատագիրը որոշվում է փոխանցման ակտով և բաժանման հաշվեկշռով: Այս փաստաթղթերով որոշվում է ստեղծվող իրավաբանական անձանց իրավունքների և պարտականությունների ծավալը: Գույքը փոխանցվում է բաժանման հաշվեկշռով բոլոր ակտիվների և պասիվների հետ, ներառյալ եկամուտները և վնասները: Վերակազմակերպման նշված տարբերակները միմյանցից տարբերվում են նոր առաջացող իրավաբանական անձին իրավունքների և պարտականությունների անցման տեսանկյուններով: Ստորև բերված աղյուսակներ 4-ը և 5-ը տվյալներ են պարունակում ՀՀ-ում բաժանման և առանձնացման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թվաքանակի վերաբերյալ:

¹ Մարկոյան Ա. Խ., Սկրոչյան Ս.Գ., Վերակազմակերպման և լուծարման տնտեսական հիմնախնդիրները, Եր., «Էդիթ Պրինտ», 2009թ.:
² <http://www.stateregistry.am/>
³ <http://www.stateregistry.am/>

Հայաստանի Հանրապետությունում բաժանման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թիվը (1995-2012թթ.)¹

Վերակազմակերպման ձևը	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	Ընդամենը
Բաժանում	-	-	1	3	5	-	6	3	1	2	-	-	1	-	-	2	-	-	24

Հայաստանի Հանրապետությունում առանձնացման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թիվը (1995-2012թթ.)²

Վերակազմակերպման ձևը	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	Ընդամենը
Առանձնացում	-	1	9	15	18	38	34	27	30	36	28	28	51	34	29	38	41	55	512

Մեկ տեսակի իրավաբանական անձի մեկ այլ տեսակի իրավաբանական անձի վերակազմավորման դեպքում (կազմակերպահրավակյան ձևի փոփոխություն) նոր առաջացած իրավաբանական անձին են անցնում վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները փոխանցման ակտին համապատասխան: Ստորև բերված աղյուսակ 6-ը տվյալներ է պարունակում ՀՀ-ում վերակազմավորման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թվաքանակի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունում վերակազմավորման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թիվը (1995-2012թթ.)³

Վերակազմակերպման ձևը	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	Ընդամենը
Վերակազմավորում	137	252	284	164	48	75	70	481	169 2	211	179	224	137	89	113	177	88	43	446 4

Ստորև բերված գծապատկեր 1-ը և 2-ը նույնպես տվյալներ են պարունակում ՀՀ-ում միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թվաքանակի վերաբերյալ:


¹ <http://www.stateregistry.am/>

² <http://www.stateregistry.am/>

³ <http://www.stateregistry.am/>


Գծապատկեր 1

Հայաստանի Հանրապետությունում միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թիվը (1995-2012թթ.)¹



Գծապատկեր 2


Հայաստանի Հանրապետությունում միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման միջոցով վերակազմակերպված ընկերությունների ընդհանուր թիվը (1995-2012թթ.)



Ինչպես տեսնում ենք, 01.01.2013թ. դրությամբ ՀՀ-ում տեղի է ունեցել 241 միաձուլում, 826 միացում, 24 բաժանում, 512 առանձնացում և 4464 վերակազմավորում: Ստորև բերված գծապատկեր 3-ը արտացոլում է վերակազմակերպված ընկերությունների տեսակարար կշիռն ըստ վերակազմակերպման ձևերի 01.01.2013թ. դրությամբ:

¹ <http://www.stateregistry.am/>


Հայաստանի Հանրապետությունում վերակազմակերպված ընկերությունների տեսակարար կշիռն ըստ վերակազմակերպման ձևերի 01.01.2013թ. դրությամբ



Վերոբերյալ տվյալները վկայում են, որ ամենամեծ թվով ընկերությունները վերակազմակերպվել են 2003թ.՝ 1813: Ըստ վերակազմակերպման ձևերի ամենամեծ թվով ընկերությունները վերակազմակերպվել են վերակազմավորման միջոցով 2003թ.՝ 1692, միացման միջոցով 2002թ.՝ 70, առանձնացման միջոցով 2012թ.՝ 55, միաձուլման միջոցով 2007թ.՝ 33 և բաժանման միջոցով 2001թ.՝ 6:

Ստորև բերված գծապատկեր 4-ը նույնպես տվյալներ է պարունակում 20012թ. միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման միջոցով վերակազմակերպված ընկերությունների թվաքանակի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունում միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման միջոցով վերակազմակերպված ընկերությունների ընդհանուր թիվը (2012թ)



Վերոբերյալ գծապատկեր 4-ի տվյալները վկայում են, որ 2012թ. միաձուլման միջոցով վերակազմակերպվել է 3 ընկերություն, միացման միջոցով՝ 40, առանձնացման միջոցով՝ 55 և վերակազմավորման միջոցով՝ 43: 2012թ. բաժանման միջոցով վերակազմակերպումներ չեն իրականացվել: Ինչպես տեսնում ենք, ավելի շատ կիրառվել են առանձնացման, միացման և

վերակազմավորման եղանակները: Հասկանալի է, որ նշված բոլոր վերակազմակերպումները հետապնդել են ընկերությունների գործունեության բարելավման և տնտեսության առողջացման նպատակներ, ինչը կարելի է համարել դրական, և հուսանք, որ այս գործընթացները հաջողությամբ կիրականացվեն նաև ապագայում:

Ինչպես հայտնի է, իրավաբանական անձը համարվում է վերակազմակերպված, բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքերի, նոր առաջացած իրավաբանական անձանց պետական գրանցման պահից¹:

Վերակազմակերպման անհրաժեշտ փուլերն են հանդիսանում փոխանցման ակտերի և բաժանման հաշվեկշիռների ձևակերպումը: Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի փոխանցման ակտը և բաժանման հաշվեկշիռը պետք է պարունակեն վերակազմակերպված իրավաբանական անձի բոլոր պարտատերերի և պարտապանների նկատմամբ պարտավորությունների, ներառյալ կողմերի վիճարկվող պարտավորությունների իրավափոխանցման վերաբերյալ դրույթներ: Փոխանցման ակտը և բաժանման հաշվեկշիռը հաստատվում են իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ իրավաբանական անձի վերակազմակերպման մասին որոշում ընդունած մարմնի կողմից, և ներկայացվում են հիմնադիր փաստաթղթերի հետ միասին նոր առաջացած իրավաբանական անձանց պետական գրանցման կամ գոյություն ունեցող իրավաբանական անձանց հիմնադիր փաստաթղթերում փոփոխություններ մտցնելու համար:

Ընկերության վերակազմակերպման նպատակներն ու խնդիրներն են հանդիսանում.

- մասնակիցների (հիմնադիրների) իրավունքների պաշտպանությունը,
- ընկերության մասնակիցների (հիմնադիրների) և ղեկավարների պատասխանատվության հստակ սահմանազատումը, կորպորատիվ կառավարման մեխանիզմների զարգացումը, բաժնետիրական ընկերության կապիտալում մասնակցության իրավունքների ազատ վերաբաշխման և ձեռնարկության երկարատև զարգացմամբ շահագրգռված անձանց (արդյունավետ սեփականատերերին) նման իրավունքների անցման ապահովումը,
- ընկերության ներդրումային գրավչության ապահովումը,
- պայմանագրային պարտավորությունների պահպանումն ապահովող ընկերության տնտեսապայմանագրային գործունեության համակարգի ստեղծումը,
- ընկերությունների ֆինանսատնտեսական վիճակի թափանցիկության ապահովումը նրանց մասնակիցների (հիմնադիրների), ներդրողների, պարտատերերի համար,
- ընկերության կառավարման արդյունավետ մեխանիզմների ստեղծումը,
- ֆինանսական միջոցների ներգրավման շուկայական մեխանիզմների օգտագործումն ընկերության կողմից,
- ընկերության աշխատակիցների որակավորման, որպես ընկերության զարգացման կայունության մեծացման գործոններից մեկի, բարձրացումը:

Ընկերության վերակազմակերպումը ենթադրում է միջոցառումների համալիրի իրականացում, ընդ որում, նրանցից որոշների իրականացման պայմանները և կարգը (բաժնետիրական ընկերությունների համար բաժնետերերի ռեեստրի վարման փոխանցումն անկախ մատենավարին (ռեգիստրատորին), բյուջե իրականացվող վճարումների գծով պարտքերի վերակառուցման իրականացում) սահմանված են գործող օրենսդրական և այլ ակտերով: Մնացած միջոցառումները տվյալ ընկերության համար կրում են անհատական բնույթ, և նրանց իրացման անհրաժեշտությունը որոշվում է վերակազմակերպման մասին որոշում ընդունող անձանց կողմից, հաշվի առնելով նրա գործունեության առանձնահատկությունները, զարգացման մակարդակը, կառավարման այս կամ այն բաղադրիչների ժամանակակից պահանջներին համապատասխանությունը:

¹ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր N 34(166), 6 նոյեմբերի 2001թ.:

Վերակազմակերպման նախապատրաստման գործընթացը սկսվում է ընկերության մենեջերի կողմից նրա իրականացման անհրաժեշտության գիտակցման պահից, որի ազդանշանները կարող են լինել.

- ընկերությունում ճգնաժամային իրավիճակը, սնանկացման հնարավորությունը,
- գործունեության ոլորտի փոփոխության (ընդլայնման) անհրաժեշտությունը,
- ընկերության արտադրանքի իրացման ծավալների անկման միտումների առաջացումը,
- վարչական հիմնախնդիրների առաջացումը (սաստկացումը),
- վերադիր ծախսերի ավելացման կայուն միտումը,
- զննան, արտադրության, իրացման գործառնությունների իրականացման վատթարացումը,
- ընկերության արտադրանքի մշակման և առաջխաղացման ընթացքում շուկայական փոփոխությունների հաշվառման համակարգի բացակայությունը և այլն:

Կազմակերպական վերափոխումների անհրաժեշտության բացահայտումն իրականացվում է բանավեճերի, բացահայտող հարցազրույցների, վերին, միջին և ստորին օղակների ղեկավարների շրջանում հարցման իրականացման ճանապարհով, ինչը հնարավորություն է ընձեռում գնահատել ընկերությունում գործերի ընդհանուր դրվածքը, բացահայտել բաժինների հիմնախնդիրները:

Ընկերության արդյունավետ վերակազմակերպման համար անհրաժեշտ է իրականացնել նրա բազմակողմանի ախտորոշում, որը ներառում է գնահատման և վերլուծության տարբեր ասպեկտներ. ընկերության կառավարման (արդյունավետություն), բիզնեսի (շուկայական իրավիճակի վերլուծություն, բիզնեսի, աճի կետերի գնահատում և այլն), գույքի (գույքի գույքագրում և ձեռնարկության գույքային համալիրի վերակառուցման իրականացում), ակտիվների (զուտ ակտիվների գնահատումը և ձեռնարկության ակտիվների շուկայական գնահատականը), արտադրատնտեսական և ֆինանսատնտեսական գործունեության, մատակարարաիրացումային, գնային, ֆինանսական, ներդրումային և կադրային քաղաքականության: Ընկերության ախտորոշման արդյունքում որոշվում են նրա վերակազմակերպման հիմնական ուղղությունները և ուղիները:

Ընկերության ախտորոշման արդյունք է հանդիսանում նրա վերակազմակերպման ծրագիրը, որը բաղկացած է.

- կազմակերպակառուցվածքային քաղաքականությունից (կառուցվածքի վերակառուցումը, կառավարչական ֆունկցիաների, լիազորությունների, պատասխանատվության և այլնի վերակազմակերպում),
- մատակարարաիրացումային քաղաքականության (մարքեթինգային և տակտիկայի ընտրություն, սկսած արտադրանքի առաջացումից (հայտնվելուց) մինչև նրա իրացումը, հետիրացումային սպասարկումը, շուկայի մասին օպերատիվ տեղեկատվության մոնիթորինգը, անցումն արտադրանքի ուղղակի մատակարարման, իրացման ցանցի ստեղծումը),
- արտադրատեխնոլոգիական և նորամուծական քաղաքականության (արտադրության ծախքերի մինիմալացումը, արտադրանքի որակի համապատասխանեցումը սպառողների պահանջներին, սպասարկման (սերվիսի) ծառայությունների (կենտրոնների) օպտիմալ համակարգի ստեղծման ապահովումը, թողարկվող արտադրանքի կատարելագործման և արտադրության գործող տեխնոլոգիայի հիման վրա մրցունակության բարձրացում, սկզբունքորեն նոր արտադրատեսակների և արտադրությունների ստեղծումը),
- զնային քաղաքականության (իրացման առավել շահավետ ծավալների, արտադրության միջին ծախսերի և եկամտի առավելագույն հնարավոր ծավալներին հասնելու նպատակով իրացման կառավարման քաղաքականության շրջանակներում ընկերության արտադրանքի գների սահմանումը),
- ֆինանսական քաղաքականության (դրամական հոսքերի վերլուծությունը և պլանավորումը, արտաքին ռեսուրսների ներգրավման էմիսիոն ձևը, դեբիտորական և կրեդիտորական պարտավորության կառավարում, հաշվարկային և հարկային քաղաքականության մշակում, ծախքերի վերահսկողություն և կառավարում),

- Երրորդումային քաղաքականության (ձեռնարկության Երրորդումների ընդհանուր ծավալի, կուտակումների ռացիոնալ օգտագործման եղանակների, ֆինանսավորման տարբեր աղբյուրների համադրման որոշումը, փոխառու միջոցների ներգրավումը),
- կադրային քաղաքականության (կադրային աշխատանքի գաղափարախոսության և սկզբունքների ձևավորումը, աշխատողների պլանավորումը, ներգրավումը, ընտրությունը և ազատումը, աշխատանքների կազմակերպումը և կադրերի ղեկավարումը, որակավորման բարձրացումը և ձեռնարկության աշխատակիցների պատրաստումը, նրանց գործունեության խթանման համակարգի ներդրումը, սոցիալական գործընկերության զարգացումը և այլն):

Վերակազմակերպման ծրագիրը կարող է օգտակար լինել ոչ միայն ֆինանսատնտեսական ճգնաժամի շեմին գտնվող, այլ նաև բավականին հաջող գործող ընկերությունների համար: Այն կօգնի գիտակցել կարևոր կառավարչական որոշումների ընդունման անհրաժեշտությունը, նախանշել արտադրության զարգացման ռազմավարության ուղղությունները: Նրա իրացումը կնպաստի տնտեսական և ֆինանսատնտեսական գործունեության բարելավմանը, ընկերության գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Վերակազմակերպման անհրաժեշտությունը գիտակցող ընկերությունների առաջ ծառայող հիմնական խնդիրներն են. վերակազմակերպման, ներդրումների, պետական աջակցության օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները:

Որպես վերակազմակերպման ներքին ասպեկտներ դիտարկվում են տարբեր մասնակիցների և շահագրգիռ անձանց շահերը: Եթե վերակազմակերպման նպատակները և մեթոդները ոտնահարում են տվյալ խմբերի շահերը, ապա վերջիններիս հակազդեցությունը տանում է վերակազմավորման ձախողմանը: Տարբեր ընկերություններում այդ խմբերի թվում կարող են հայտնվել ընկերության սեփականատերերը, ընկերության բարձրագույն ղեկավարությունը, ընկերության աշխատավորների արհմիությունները և այլն:

Վերակազմակերպման անհաջողությունների հիմնական պատճառը շահագրգռված խմբերի մեծամասնության շրջանում իրական հենքի բացակայությունն է: Սակայն այդ խմբերն իրենք կարող են փոխհամաձայնեցնել իրենց շահերը: Բայց նրանց միջև բոլոր փոխզիջումներն իրականացվում են ընկերության շահերի հաշվին՝ այն դիտարկվում է նրանց կողմից միայն որպես իրենց շահերի առարկա, բայց ոչ թե որպես սեփական շահերի կրողը:

Ինչպես հայտնի է, ընկերությունը պետք է դիտարկվի որպես կենդանի օրգանիզմ, որն ունի իր շահերը: Տարբեր շահագրգիռ խմբերի բախվող տարաբնույթ շահերի չեզոքացման համար անհրաժեշտ են.

- Ուժեղ պետական իշխանություն և քաղաքական կամք, որոնք պահպանում են խաղի ընդհանուր կանոններ բոլորի համար, առանց բացառության:
- Հարկային համակարգի կատարելագործում՝ արդյունավետ և ազնիվ տնտեսվարման խթանման նպատակով:
- Իրավական մեխանիզմի կատարելագործումը՝ քաղաքական ազդեցությունների տնտեսական և դատական ոլորտների պաշտպանության համար:
- Աշխատանքային հարաբերությունների ոլորտի ազատականացումը և նորից ուժեղ իշխանություն՝ սոցիալական շանտաժ չթույլատրելու նպատակով:

Վերակազմակերպման գործընթացն անհրաժեշտ է սկսել ընկերության ընդհանուր ռազմավարական նպատակի (առաքելության) և ռազմավարական հայեցակարգի մշակումից: Մշակվող ռազմավարությունը պետք է համապատասխանի ընկերության ընդհանուր ռազմավարական հայեցակարգին: Ընկերության ռազմավարությունն ուրվագծելուց առաջ անհրաժեշտ է մշակել նրա կազմում գտնվող յուրաքանչյուր ստորաբաժանման ռազմավարությունը (ինչպես, եթե նրանք հանդիսանալին առանձին ընկերություններ): Ընդ որում, անհրաժեշտ է որոշել ընկերության հիմնական ստորաբաժանումների և նրա այլ ստորաբաժանումների փոխկախվածության աստիճանը:

Ընկերության վերակազմակերպման շրջանակներում պետք է լուծվեն երեք հիմնական խնդիրներ.

1. ընկերության գոյություն ունեցող արտադրատեխնոլոգիական բազայի արդիականացում, փոփոխում կամ ավելցուկների կրճատում,
2. ընկերության կառավարման համակարգի և մարդկային ռեսուրսների օգտագործման զգալի փոփոխություն,
3. սպառողների հետ հարաբերությունների որակական փոփոխություն և/կամ նոր նպատակային հաճախորդների խմբի ստեղծում:

Նշված խնդիրները լուծելիս ընկերությունները բախվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի մի շարք դժվարությունների հետ.

- սոցիալապես պահանջվող բիզնես-գաղափարների բացակայությունը,
- տնտեսական, կառավարչական, սոցիալական և մարքեթինգային բնույթի մեծածավալ նախնական հետազոտական և վերլուծական աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը,
- ընկերության տնօրինության տակ գտնվող ռեսուրսների ամբողջ բազմազանության մանրակրկիտ վերստուգման անհրաժեշտությունը,
- տնտեսական կապերի, այդ թվում՝ ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների միջև կապերի խզվածության հաղթահարումը,
- կոոպերացման և մատակարարների, պարտատերերի, իշխանության մարմինների և ամբողջ հասարակության հետ համագործակցության նոր մակարդակի անցնելու անհրաժեշտությունը,
- վերակազմակերպման բոլոր մասնակիցների բազմակողմանի, հաճախ հակասական շահերի հաշվի առնելու անհրաժեշտությունը,
- ժամանակակից տնտեսական պայմաններում ընկերությունների հիմնախնդիրների բազմազորոնային դրսևորման հետևանքով արդյունքների ոչ ակնհայտ լինելը:

Հասկանալով այս դժվարությունների բնույթը՝ կարելի է խոսել այն մասին, որ ընկերության կառավարման համակարգի և աշխատակազմի որակական կազմի փոփոխությունն առավել հեռանկարային ուղղություն է հանդիսանում վերակազմակերպման ծրագիրը մշակելիս: Հատկապես, դեկավարներից և մասնագետներից է ուղղակիորեն կախված ինչպես ընկերություններում վերափոխումների հաջողությունը, այնպես էլ վերջնական արդյունքում նրա իրական բարեկեցությունը: Եվ այստեղ ուղղակի անհրաժեշտ են կարողությունը և կամքը, որպեսզի հրաժարվել հնից ի օգուտ նորի, ապահովել խելամիտ փոխզիջում կարճաժամկետի և երկարաժամկետի միջև, ստեղծել դինամիկ հավասարակշռություն շահույթի արագ ստացման և շուկայի կայուն չափաբաժնի գրավման միջև:

Ձեռնարկվող գործողությունների արդյունավետությունը մեծամասամբ պայմանավորված է բիզնեսի կառավարման համակարգի կառուցման տրամաբանությամբ և որակով.

- կառավարումը՝ դա որոշումների մշակումն է և իրացումը,
- բիզնեսի վիճակը՝ դա մեր որոշումների արդյունքն է,
- եկամուտները և վնասները մեծ են այնքանով, որքանով լավն են մեր որոշումները,
- որոշումները լավն են այնքանով, որքանով որ նրանք լավ են նախագծված,
- որոշումների իրացումը կախված է մարդկանց որակավորումից և բիզնեսում նրանց շահագրգռվածությունից:

Անկայուն տնտեսական միջավայրում որոշումների ընդունումը պահանջում է որակապես նոր մոտեցումներ տեղեկատվության հավաքման և վերլուծության նկատմամբ: Արտաքին աշխարհի մասին տեղեկատվությունը դառնում է էլ ավելի կարևոր նոր շուկայական հատվածների և գնորդների ընտրության համար: Ընկերության ներսում գործերի դրվածքի վերաբերյալ հստակ պատկերացումը հնարավորություն է ընձեռնում արդյունավետ կերպով օգտագործել (կառավարել) ռեսուրսները և ծախքերը, ուղղորդելով նրանց հասարակության կողմից պահանջված մրցունակ արտադրանքների և ծառայությունների ստեղծմանը:

վերակազմակերպման ընթացքում պարբերաբար լուծվում են միևնույն խնդիրները.

- իրականացվում է իրավիճակի և սեփական հնարավորությունների գնահատում,
- սահմանվում են նպատակներ, որոշվում են առաջնությունները և գերակայությունները, նախանշվում է վերակազմակերպման փուլի ծրագիրը,
- այդ ծրագիրն ապահովվում է տեխնոլոգիաներով, կազմակերպմամբ և ֆինանսատնտեսական կառավարմամբ:

Հնարավոր է ձեռնարկության վերակազմակերպման այնպիսի եղանակ, որը նախատեսում է յուրաքանչյուր հաջորդ փուլում գործընթացի բարդացում և զարգացում:

Օրինակ.

Առաջին փուլ: Հանրահայտ քայլերի կշռադատում, պարզ ճշմարտությունների գիտակցում. գործունեությունը պետք է լինի նպատակասլաց, դրամական միջոցները ստացվում են միայն արտադրանքի իրացումից, և նրանց պետք է կարողանալ հաշվել:

Երկրորդ փուլ: Ընդունվում են մակերեսին գտնվող որոշումներ. իրականացվում է աուդիտ և ծախսերի կրճատում, ստեղծվում է նոր արտադրանք, որին հարմարեցվում է արտադրությունը, կառավարչական հաշվառումն ապահովվում է արտադրանքների և բիզնեսի իրական ֆինանսավորումը: Առաջանում է իրավիճակի նոր տեսլական. եթե սկզբում ապրանքային ծրագիրը կազմվում էր բացառապես մարքեթինգային գնահատականների հիման վրա (ի՞նչն են «վերցնում» գնորդները), ապա այս պարագայում, հաշվելով արտադրանքի գծով ծախսերը և շահույթները (սահմանային եկամուտը), որոշումներ են ընդունում նաև ելնելով նրանից, թե ինչն է շահավետ արտադրել ընկերությանը:

Երրորդ փուլ: Նոր գնահատականների հիման վրա իրականացվում է առաջնային վերակազմակերպումը (կրճատվում են ավելորդ արտադրությունները և հիմնադրվում են նորերը):

Չորրորդ փուլ: Ջարգացման էքստենսիվ գործոնները սպառված են, ներմուծվում է կառավարման ինտեգրված ֆունկցիոնալ (գործառնական) համակարգը՝ ֆինանսավորումը ամբողջ ծավալով, ըստ արտադրանքների արտադրության արտադրամասերի և տարածաշրջանների ինքնարժեքի հաշվարկը, ամբողջ ընկերության կտրվածքով ինտեգրացված հաշվառում, լոկալ հատվածների ավտոմատացման փոխարեն՝ բոլոր փոխկապակցված ֆունկցիոնալ ենթահամակարգերի ավտոմատացում:

Հինգերորդ փուլ: Դիվիզիոնալացում (հիմնական արտադրությունների վերակազմակերպում), նախագծերի կառավարման ներմուծում, ռազմավարական պլանավորում, անցում ցանցային լոգիստիկային (խոշոր մատակարարների ընտրություն կամ մատակարարման սեփական ցանցի ստեղծում):

Վեցերորդ փուլ: Անցում բիզնես-գործընթացների ռեինժինիրինգի: *Բիզնես-գործընթացների ռեինժինիրինգը* (Business Process Reengineering)՝ բիզնես-գործընթացների արմատական վերակառուցման մեթոդ է, որը նպատակ ունի հասնել ձեռնարկության արտադրատնտեսական գործունեության որակապես այլ, ավելի բարձր մակարդակի, օգտագործվում է որպես ձեռնարկության կամ նրա առանձին կազմակերպական միավորների վերակազմավորման համալիր միջոց: Ենթադրում է սկզբունքորեն նոր բիզնես-գործընթացների ստեղծումը, որոնք կտրուկ բարձրացնում են ձեռնարկության գործունեության արդյունավետությունը: Կիրառվող մեթոդները բնութագրվում են վերափոխումների արմատական բնույթով, բիզնես-գործընթացների վերակառուցմամբ, վերափոխումների իրականացման միաժամանակայնությամբ, առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ և իրականացվող փոփոխությունների բարձր ռիսկով:

Կապված ընկերությունների տարբեր ֆինանսատնտեսական վիճակներից, գործունեության յուրահատկություններից, ռազմավարական նպատակներից և խնդիրներից, վերակազմակերպման բոլոր նախագծերը հիմնականում արդյունավետ են և նախատեսված են միայն տվյալ ընկերությունում իրագործելու համար:

Հաշվի առնելով ՀՀ բաժնետիրական ընկերություններում առկա վերակազմակերպման իրականացման հիմնախնդիրը՝ կարող ենք առաջարկել նրանց գործունեության բարելավման հետևյալ ուղիները.

1. Ընտրել վերակազմակերպման ընթացքում իրացվող արդյունավետ բիզնես գաղափար:
2. Ձգտել առավելագույնս կրճատել վերակազմակերպման ընթացքում թողարկվելիք արտադրանքի մշակման և շուկա վաճառահանման գործընթացների միջև ընկած ժամանակահատվածը, ինչը թելադրվում է ներկայում արագ փոփոխվող շուկայական պայմաններով և նոր տեխնոլոգիաների արագ ներմուծմամբ:
3. Առաջնորդվել տարբեր արտադրական նպատակների համաձայնեցման սկզբունքով:
4. Մշակել վերակազմակերպման հանգամանալից ծրագիր:
5. Որոշել վերակազմակերպման իրականացման «ճիշտ» ժամանակահատվածը, հաշվի առնելով կոնկրետ իրավիճակները:
6. Վերակազմակերպման իրականացման ընթացքում առավելագույնս հաշվի առնել սոցիալական իրողությունները, աշխատակիցների իրավունքները, օրինական շահերը և կարծիքները:
7. Արդյունավետորեն հաղթահարել վերակազմակերպման ընթացքում առաջացող աշխատակիցների դիմադրությունը:
8. Հաշվի առնել վերակազմակերպման ընթացքում հանդիպող տարբեր բնույթի սահմանափակումները:
9. Ուսումնասիրել և աստիճանաբար ներմուծել արտասահմանյան առաջատար ընկերությունների վերակազմակերպման արդյունավետ փորձը ՀՀ ԲԸ-ներ՝ հաշվի առնելով մեր ազգային առանձնահատկությունները:

Ինչպես տեսնում ենք, ընկերությունների վերակազմակերպումը նույնպես կարող է նպաստել մեր ընկերությունների գործունեության որոշակի բարելավմանը, և որպես դրա հետևանք՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը:

Armine Zakharyan

Restructuring of joint-stock companies for ensuring performance improvement

Abstract

The article discusses the issue on restructuring of the joint-stock companies in Armenia. Taking into consideration the issue of improvement of the performance of the majority of joint-stock companies the article attempts to identify the main factors that ensure more efficient restructuring of the joint-stock companies. The main focus is on methods of corporate restructuring: mergers, consolidation practices, business splits, and divestiture. Adoption of the best practice of developed nations could substantially promote the economy as well. The article presents tables that describe the restructuring process in Armenia as well. Since the corporate restructuring is of a strategic importance both to ensuring the further growth of the joint-stock companies and the economy, overall, hence this issue needs to be among priorities of the joint-stock companies and the state.

Арминэ Захарян

Реструктуризация акционерных обществ как средство улучшения их деятельности

Аннотация

Настоящая статья посвящена проблеме реструктуризации акционерных обществ Республики Армения.

Учитывая наличие проблемы улучшения деятельности в большинстве акционерных обществ Республики Армения, в статье сделана попытка выявления основных факторов, способствующих повышению эффективности реструктуризации акционерных обществ.

Особое внимание уделено формам реструктуризации – слиянию, присоединению, разделению, выделению и преобразованию. Заимствование положительного опыта реструктуризации компаний развитых стран со стороны Армении может значительно способствовать развитию экономики страны.

Одновременно в статье приведены таблицы, характеризующие осуществление реструктуризации в Республике Армения.

Поскольку реструктуризация акционерных обществ имеет стратегическое значение как для дальнейшего развития акционерных обществ, так и для экономики в целом, то им должны быть озабочены как акционерные общества, так и государство.

ԱՐՄԻՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ

ՏՏ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի դասախոս, պ. գ. թ.

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, բաժնետիրական ընկերությունների գործունեության բարելավման և քաղաքակիրթ կորպորատիվ հարաբերությունների կառուցման համար ներկայումս մեծապես կարևորվում է կորպորատիվ էթիկայի դերը, քանի որ վերջինս նույնպես գործուն գործիք է հանդիսանում ժամանակակից մի շարք մարտահրավերներին դիմակայելու համար: Բացի այդ, ընկերությունների կորպորատիվ կառավարման և կորպորատիվ էթիկայի մակարդակներով է պայմանավորված նաև հասարակական համերաշխությունն ու սոցիալական շերտավորվածության աստիճանական հաղթահարումը:

Հասկանալի է, որ բաժնետիրական ընկերություններում էթիկական խնդիրներն այսօր չեն ծագել, նրանք գոյություն են ունեցել ԲԸ-ների գործունեության ամբողջ պատմության ընթացքում և որակական փոփոխությունների են ենթարկվել քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց: Ներկայումս գործարար հարաբերությունները աստիճանաբար տեղափոխվում են բարոյական հարաբերությունների մակարդակ:

Ինչպես հայտնի է, կորպորատիվ էթիկայի հիմքում ընկած է մարդկանց անհատական, խմբային և ընդհանուր շահերի համաձայնեցման անհրաժեշտությունը: Հասարակության տնտեսական և սոցիալական զարգացումը պայմանավորված է բաժնետիրական ընկերությունների կողմից որոշակի բարոյական պահանջների և վարքագծի համապատասխան բարոյական նորմերի պահպանմամբ:

Կորպորատիվ էթիկայի կարևորագույն խնդիրներից է *ազնվության, վստահության և արդարության* որոշակի մակարդակի ապահովումը¹:

Կորպորատիվ էթիկայի խնդիրների մեջ առաջնայինը *ազնվությունն* է.

- գործարարների միջև ազնվությունը ենթադրում է փոխադարձ պարտավորությունների կատարում,
- սպառողների և հաճախորդների նկատմամբ ազնվությունը նշանակում է ապրանքների և ծառայությունների համապատասխան որակի ապահովում,
- վարձու աշխատողների հետ փոխհարաբերություններում ազնվությունը և արդարությունը նշանակում են աշխատակիցների աշխատանքի համապատասխան վարձատրության ապահովում:

¹ Т. Салимова, А. Ерастова, Формирование понятия организационной культуры, ориентированной на качество, Проблемы теории и практики управления, N2, 2009.

Վստահությունը բոլոր գործարար կապերի հիմքն է: Բարոյական տեսանկյունից անթերի պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է, որ գործարար հարաբերությունների մեջ մտնող կողմերն ազատ լինեն իրենց ընտրության մեջ, վստահեն միմյանց և համոզված լինեն, որ գործ ունեն հուսալի գործընկերների հետ:

Գործարար համագործակցության բարոյական հիմքում ընկած է **արդարության** գաղափարը՝ յուրաքանչյուր ձեռնարկատեր պետք է ուրիշներին վերաբերվի այնպես, ինչպես կցանկանար, որ ուրիշները վերաբերվեն իրեն:

Հասկանալի է, որ բարոյական նորմերը որոշ չափով սահմանափակում են գործարարությունը, բայց միևնույն ժամանակ շահավետ և օգտակար են, քանի որ նպաստում են ընկերության երկարատև հաջողության, բարի համբավի և բարձր վարկանիշի ապահովմանը:

Ինչպես հայտնի է, կորպորատիվ էթիկան ներառում է.

- ընկերության ներքին և արտաքին քաղաքականության բարոյական գնահատականը,
 - ընկերության անդամների բարոյական սկզբունքները (մասնագիտական էթիկան),
 - ընկերության բարոյական մթնոլորտը,
 - բարոյական վարքագծի օրինակները,
 - գործարար վարվելակարգի նորմերը (վարքագծի արտաքին նորմերը):
- Կորպորատիվ էթիկան գործում է հետևյալ երեք մակարդակներում¹.

1. **համաշխարհային մակարդակ** (հիպերնորմեր),
2. **մակրոմակարդակ** (մակրոնորմեր՝ ճյուղ կամ ազգային տնտեսություն),
3. **միկրոմակարդակ** (միկրոնորմեր՝ ընկերություն և նրա հաճախորդներ):

Այս նորմերը հիմնված են համամարդկային արժեքների վրա և արձանագրված են **«Միջազգային բիզնեսի սկզբունքներում»**¹՝ համաշխարհային բարոյագիտական կանոնագրքում, որն ընդունվել է 1994թ. Շվեյցարիայում ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի առաջատար ընկերությունների և բիզնես-խորհրդատուների կողմից:

Համաշխարհային մակարդակում «Միջազգային բիզնեսի սկզբունքները» հանգեցնում են գործարարության սոցիալական պատասխանատվությանը, որն ապահովում է.

- հասարակական բարիքների և աշխատատեղերի ստեղծում,
- հաճախորդների, ծառայողների և բաժնետերերի կենսամակարդակի բարձրացում,
- տեխնոլոգիաների, արտադրության, մարքեթինգի և հաղորդակցության մեթոդների նորացում,
- գործարարության նկատմամբ վստահության բարձրացում, մրցակցության մեջ իրավական նորմերի պահպանում և հավասար հնարավորությունների ապահովում,
- բարոյական նորմերի գերակայության ճանաչում (օրենքով թույլատրված որոշ գործարքներ կարող են անընդունելի լինել բարոյական տեսանկյունից),
- աջակցություն ազատ առևտրի զարգացմանը,
- հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ,
- հակաօրինական գործողություններից հրաժարում (կաշառակերություն, փողերի «լվացում», զենքի վաճառք ահաբեկիչներին, թմրանյութերի առևտուր և այլն):

Հիպերնորմերը ազգային և կորպորատիվ էթիկական կանոնագրքերից և կանոններից վեր են:

Մակրոմակարդակում գործում են հետևյալ հիպերնորմերը և էթիկական դրույթները, որնց վրա են հիմնվում կորպորատիվ էթիկայի ճյուղային և ազգային կանոնագրքերը.

- հարգանքը մասնավոր սեփականության և շուկայական մրցակցության նկատմամբ,
- տեղեկատվության արժանահավատությունը,
- աշխատանքի շուկայում խտրականության բացակայությունը:

Միկրոմակարդակում (առանձին ընկերությունը և նրա հաճախորդները) գործող հիմնական նորմերն են՝ վստահությունը և խտրականության բացակայությունը մատակարարների ու գնորդների, անձնակազմի ու տնօրինության, կառավարիչների ու բաժնետերերի միջև հարաբերություններում:

¹ <http://www.spb-mb.ru/index.php?page=183>

Այս սկզբունքների խախտումը կարող է հանգեցնել մի շարք բացասական հետևանքների՝ վերադիր ծախսերի աճին, կոնֆլիկտային իրավիճակների առաջացմանը և այլն: Միկրոմակարողակում են լուծվում նաև մարդկանց միջև մշտապես ծագող մասնավոր բարոյական խնդիրները (հատկապես կառավարման ոլորտում):

Հասկանալի է, որ այդքան էլ հեշտ չէ գործ ունենալ տարբեր մակարդակների բարոյական նորմերի հետ: Հիպերնորմերը կարող են հակասել միկրոմակարդակի նորմերին և գործարարության այլ կոնկրետ խնդիրներին: Բոլոր շահագրգիռ կողմերի համար անվերապահորեն ընդունելի կառավարման կատարյալ որոշումներ գործնականում գոյություն չունեն: Սակայն կառավարչի կողմից համապատասխան հմտություններին տիրապետելը հնարավորություն է ընձեռում բացատրելու իր որոշումը շահագրգիռ կողմերին, իսկ վերջիններիս՝ գնահատելու բարոյական փաստարկների որակը:

Համաշխարհային տնտեսական պրակտիկայում հայտնի են բարոյական փաստարկների կառուցման երկու առավել տարածված սկզբունքներ¹.

1. Օգտապաշտության սկզբունքը. գործողությունը համարվում է բարոյապես արդարացված, եթե այն առավելագույնս օգուտ է բերում ավելի մեծ քանակով մարդկանց կամ ունի նմանատիպ օգուտ բերելու միտում: Ընդհանուր օգուտը համեմատվում է հասցվող վնասի չափի հետ, և եթե վերջինս գերակշռում է, ապա որոշումը համարվում է ոչ բարոյական: Իսկ եթե բոլոր այլընտրանքային գործողությունները այս կամ այն չափի վնաս են հասցնում, ապա ընտրվում է «չարիքներից փոքրագույնը»:

2. Բարոյական հրամայականի սկզբունքը. բարոյական որոշումները չպետք է կախված լինեն կոնկրետ արդյունքից (ցանկացած կաշառք չարիք է, մեկ հաճախորդին խաբելը նույնքան անբարոյական է, որքան շատերին խաբելը և այլն):

Հասկանալի է, որ գործնականում այս երկու սկզբունքների կիրառումը բավականին բարդ է: Բացահայտել այն բոլոր անձանց և կազմակերպություններին, որոնց վրա կարող է ազդել տվյալ որոշումը և հաշվարկել բոլոր հետևանքները, ինչպես նաև որոշել, թե դա հատկապես ու՞մ շահերին կարող է հակասել, աշխատատար, իսկ երբեմն նույնիսկ անիրագործելի խնդիր է: Այնուամենայնիվ, ընկերությունները պետք է ձգտեն հետևել այս սկզբունքներին, քանի որ վերջինս կարող է նպաստել ինչպես նրանց հեղինակության բարձրացմանը, այնպես էլ գործունեության բարելավմանը:

Ինչպես հայտնի է, ընկերությունների և գործարարների բարոյական պարտավորությունների իրականացման մակարդակով է պայմանավորված ընկերությունում կորպորատիվ էթիկայի վիճակը և, առհասարակ, ընկերության կորպորատիվ համերաշխությունը: Ստորև բերված աղյուսակ 1-ը բնութագրում է ընկերությունների և գործարարների բարոյական պարտավորությունները:

Աղյուսակ 1

Ընկերությունների և գործարարների բարոյական պարտավորությունները²

<i>Անվանումը</i>	<i>Բարոյական պարտավորությունները</i>
Գնորդներ	Ապրանքների և ծառայությունների բարձր որակի, զովագրի ազնվության, մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքի ապահովում:
Աշխատողներ	Աշխատանքի արժանապատիվ վարձատրության և պայմանների, առողջության և աշխատունակության պաշտպանության, աշխատանքի տեղավորվելու հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովում:
Սեփականատերեր և ներդրողներ	Ներդրված կապիտալից ստացվող արդար եկամտի երաշխավորում, տեղեկատվության՝ միայն օրենքի շրջանակներով և մրցակցության պայմաններով սահմանափակվող մատչելիություն:

¹ “Business Ethics. A Manual For Managing a Responsible Business Enterprise In Emerging Market Economies. A publication of Good Governance Program. U.S. Department of Commerce, International Trade Administration, Washington, D.C. 2004.

² Л.О. Евдокимова, Направления развития менеджмента корпоративных структур России// Сборник научных трудов Института экономики и права Российской академии управления. – СПб, 2007. – с. 175-177.

<i>Անվանումը</i>	<i>Բարոյական պարտավորությունները</i>
Մատակարարներ	Արդար և ազնիվ փոխհարաբերությունների ապահովում՝ ներառյալ գնագոյացումը, լիցենզավորումը, հարկադրանքի բացակայությունը, տեղեկատվության փոխանակումը և պլանավորման գործընթացում մասնակցության ապահովումը, մատակարարներին դրամական միջոցների ժամանակին վճարումը և այլն:
Մրցակիցներ	Փոխադարձ հարգանքի, ապրանքների և կապիտալի բաց շուկաների զարգացման ապահովում, մրցակցային առավելությունների հասնելու համար կասկածելի միջոցներից հրաժարում, հարգանք սեփականության իրավունքի նկատմամբ:
Բնակչություն	Մարդու իրավունքների պահպանում, մշակութային առանձնահատկությունների նկատմամբ հարգանքի երաշխավորում, հովանավորչական միջոցառումների կազմակերպում, քաղաքացիական կյանքին ընկերությունների մասնակցության ապահովում:

Ինչպես տեսնում ենք, ընկերություններն ու գործարարներն ունեն մի շարք բարոյական պարտավորություններ գնորդների, աշխատողների, սեփականատերերի և ներդրողների, մատակարարների, մրցակիցների և բնակչության նկատմամբ և, անշուշտ, նշված պարտավորությունների պարտաճանաչ կատարմամբ է պայմանավորված նրանց հետագա գործունեությունը:

Ինչպես արդեն նշել ենք, ընկերության ամբողջականության, նրա կորպորատիվ ոգու և մարմնի ներդաշնակության պահպանման համար ընկերության սեփականատերերը և կառավարիչները դիմում են այնպիսի տարածված գործիքի, ինչպիսին է կորպորատիվ էթիկան: Ընկերություններից որոշները՝ ձգտելով ընկերության «մարմինը» դարձնել «հասուն» և քաղաքակրթել նրա ոգին (դրանով միշտ պատմականորեն զբաղվել է գործնական էթիկան), կառուցում են կորպորատիվ էթիկայի ամբողջական համակարգ՝ մշակում են փաստաթղթեր, նրանցից դուրս են բերում կամ նրանց են հարմարեցնում քաղաքականությունները, ծրագրերը, պրակտիկան և ստեղծում են հատուկ ենթակառուցվածք (պաշտոնները, բաժինները, հեռահաղորդակցման ուղիները և այլն): Մյուս ընկերությունները, չցանկանալով «կրկնապատկել» իրականությունը, միայն ընդհանուր գծերով են նախանշում էթիկական այն նպատակներն ու չափանիշները, որոնց պետք է հետևի ընկերությունը, և, այնուհետև, «տոգորում» են այդ ուղերձներով բոլոր ընկերությունների կյանքը կարգավորող կորպորատիվ փաստաթղթերը, գործընթացներն ու ընթացակարգերը: Բազմաթիվ ջանքերի ներդրման արդյունքում կառավարիչները, տնօրենների խորհուրդները և սեփականատերերը ստանում են բիզնեսի լուրջ ու երկարակյաց «նուրբ լարման» գործիք, որն արդյունավետ լինելու համար, իրեն հերթին, հմուտ կառավարման կարիք ունի: Այնուհետև, կառավարիչները, տնօրենների խորհուրդները և սեփականատերերը շուտով նկատում են, որ այդ գործիքը սկսում է կառավարել հենց իրենց: Եվ այդ ժամանակ առաջանում են հարցեր, որոնք պետք էր տալ շատ ավելի շուտ. ինչպիսի՞ն է այդ գործիքի բնույթը, ի՞նչ է նա կարողանում, ի՞նչ չի կարողանում, ի՞նչ կպահանջի դրա դիմաց և որքա՞ն կարժենա նրա կիրառությունը:

Որպեսզի կորպորատիվ էթիկան ընկերություններում իսկապես դառնա կառավարման գործուն գործիք անհրաժեշտ է, որ նրան իրենց հսկողության տակ առնեն տնօրենների խորհուրդները: Ինչպես հայտնի է, շատ երկրներում տնօրենների խորհուրդները մեծ դեր են խաղում գործարար էթիկայի ծրագրի իրականացման, մենեջմենթի, գործարար վարքագծի կանոնագրքին վերաբերող քաղաքականությունների իրագործման, ֆինանսական հաշվետվության նկատմամբ վերահսկողության իրականացման գործընթացում: Կորպորատիվ էթիկայի՝ որպես կառավարման գործիքի հնարավորությունները կարող են ամբողջությամբ բացահայտվել և օգտագործվել, եթե ճիշտ է ընկալվում նրա բնույթը, և պահպանվում են «էկոլոգիայի» կանոնները: Էթիկայի, մշակույթի, արժեքների մասին զրույցները բավականին նուրբ և զգայուն գործընթացներ են: Որպես կանոն մարդիկ արձագանքում են գործարար էթիկայի հարցերին բավականին խոր, անձնապես և «համակարգված», քանի որ մի կողմից այն ընդգծում է որոշակի

սահմաններ, մյուս կողմից՝ տիրապետելով հզոր, ոգևորող ներուժի՝ կարող է անհրաժեշտ հունով ուղղորդել ընկերության բազմաթիվ աշխատակիցների գործողություններն ու մտքերը¹:

Ինչպես հայտնի է, բիզնեսում ցանկացած բարոյական կանոն՝ համաձայնագիր է, որը ձեռք է բերվել երկխոսության արդյունքում: Ընկերության կորպորատիվ էթիկան՝ դա ոչ այդքան արդյունք է, որքան ստանդարտների, արժեքների և նորմերի քննարկման երբեք չդադարող գործընթաց: Հենց որ ընկերությունը ներմուծում է կորպորատիվ էթիկան կարգավորող փաստաթուղթ, նա ստիպված է նրան համապատասխան զարգացնել նաև իր կոմունիկացիոն (հեռահաղորդակցման) ցանցը: Իսկ եթե ընկերությունում ինչ-որ պատճառով չի ստեղծվել կոմունիկացիոն ցանց, կամ նրանում կան «խափանումներ» (արգելափակվում է տեղեկատվության հոսքը ղեկավարությանը, արհմիությունները խաղում են ապակառուցողական դեր և այլն), ապա էթիկային և էթիկական կանոնագրքին համապատասխան ստեղծված կոմունիկացիոն ցանցը կարելի է օգտագործել նաև ողջ ընկերության կարիքների համար²: Ուստի, էթիկական կանոնագիրքը կամ էթիկական բնույթի ցանկացած փաստաթուղթը ցանկալի է սկզբնապես դիտարկել որպես տարբեր կողմերի (երբեմն միմյանց հետ բացարձակապես անհամաձայն, օրինակ՝ արհմիությունները և ընկերությունը, աշխատակիցները և ընկերությունը, մատակարարները և այլն) երկխոսության առիթ: Կազմակերպված երկխոսության արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները տալիս են վարքագծի կարգավորման և խախտումների կանխման լրացուցիչ հնարավորություններ:

Բացի այդ, կորպորատիվ էթիկան՝ դա և՛ սահմանափակումներ են, և՛ միաժամանակ, որոշակիություն, որն ապահովում է ընկերության վարքագծի կանխատեսելիությունը և որպես դրա հետևանք՝ վստահությունն ընկերության հանդեպ: Եթե ընկերությունը գործում է իր կողմից սահմանված կորպորատիվ էթիկայի նորմերի շրջանակներում, ապա նա ավելի հասկանալի է արտաքին միջավայրի, այդ թվում՝ միջազգային բիզնես հանրության, արտասահմանյան գործընկերների համար, իսկ նրա հասկանալի և կանխատեսելի լինելն, իր հերթին, հեշտացնում է հավանական հաճախորդների, գործընկերների ու աշխատակիցների համար նրա արտադրանքների, ռեսուրսների և, վերջապես, նրա ներկայության ընտրությունը:

Ինչպես հայտնի է, ընկերության կորպորատիվ էթիկայի համակարգը կազմում են հետևյալ տարրերը.

- էթիկական բնույթի փաստաթղթերը՝ էթիկայի կանոնագիրքը կամ ընկերության արժեքների մասին այլ փաստաթղթերը,
- կորպորատիվ էթիկայի ենթակառուցվածքը՝ պաշտոնները, գործառնական պարտականությունները, հատուկ կազմակերպական կառուցվածքները և հեռահաղորդակցման ուղիները,
- գրավոր ձևով ամրագրված և իրականացվող քաղաքականությունները, ռազմավարությունները, կորպորատիվ էթիկայի ոլորտի ծրագրերը:

Որպեսզի ընկերությունում կանոնագիրքը իսկապես սկսի աշխատել, անհրաժեշտ է նաև կարգավորել և սատարել այնպիսի գործընթացները, որոնք նպաստում են ամենօրյա գործունեության ընթացքում ընկերության էթիկական փաստաթղթերում սահմանված էթիկական նորմերի և ստանդարտների կիրառմանը.

1. սատարել և խրախուսել ընդունված էթիկական նորմերին համապատասխանող աշխատակիցների վարքագիծը,
2. կանխարգելել սահմանված էթիկական նորմերից աշխատակիցների վարքագծի շեղումները,
3. օգնել ժամանակին բացահայտել էթիկական խախտումների փաստերը,
4. օգնել համապատասխան ձևով արձագանքել էթիկական խախտումների փաստերին:

Ներկայումս նկատվում են կորպորատիվ էթիկայի երեք բնագավառներ, որոնք մասամբ մեկուսացված են միմյանցից և ունեն նմանության միայն որոշ գծեր.

¹ Ю. Емельянов, А. Хачатурян, Архетипы хозяйственной и корпоративной культуры в России, Проблемы теории и практики управления, N12, 2009.

² Ю. Емельянов, Информационная и коммуникационная культура в компании, Проблемы теории и практики управления, N10, 2010.

- ակադեմիական էթիկան, որին կարելի է հանդիպել բիզնես-դպրոցներում դասախոսությունների և սեմինարների ընթացքում,
- կոնսալտինգը և նրան համապատասխանող ու նրա խորհուրդներին հետևող ընկերությունների փորձը,
- կորպորատիվ էթիկայի ոլորտում իշխանությունների գործունեությունը (ընկերության էթիկական ծրագրերի զարգացման համար պատասխանատու լիազորված մասնագետները և այլն):

Ինչպես հայտնի է, կորպորատիվ էթիկայի մասին հաճախ տարբեր կարծիքներ են արտահայտվում: Մի կողմից խոսվում է այն մասին, որ նրա հիմնական բաղադրիչները՝ ընկերության առաքելությունն ու արժեքները օգնում են համախմբել թիմը. յուրաքանչյուր աշխատակցին տեղեկացնել ռազմավարական նպատակների և գաղափարների մասին, աշխատանքը դարձնել արդյունավետ, հետաքրքիր և ուրախ: Մյուս կողմից կարելի է հանդիպել այնպիսի կարծիքների, որ գործնականում այդ բոլոր «համախմբումներն» ու «առաքելությունները» աշխատակիցների համար դառնում են ոչ թե ուրախության աղբյուր, այլ իսկական դժոխք և իրենցից ներկայացնում են միայն ընկերության շահերին մարդու կյանքը ամբողջությամբ ենթարկեցնելու միջոց («կորպորատիվ ֆաշիզմ»):

Կորպորատիվ էթիկայի հիմնական արժեքը կայանում է նրանում, որ նա տալիս է գործնական երաշխավորություններ այն մասին, թե ի՞նչ և ինչպե՞ս պետք է անել, որ ազնվությունը, վստահությունը և արդարությունը դառնան յուրաքանչյուր ընկերության կորպորատիվ կյանքի անբաժան մասը, ինչպե՞ս իրենց դրսևորեն աշխատակիցները, որպեսզի խուսափեն բարդ էթիկական իրավիճակներից, և ի՞նչ անել, եթե աշխատակիցները արդեն հայտնվել են նման իրավիճակում:

Առաջին քայլը, որն անհրաժեշտ է կատարել այս ճանապարհին՝ դա տվյալ ընկերության էթիկայության չափանիշների որոշումն է: Էթիկայության չափանիշների հիմքը կազմում են ընկերությունների լավագույն փորձը և կորպորատիվ մշակույթի գծերը, որոնք չեն վնասում ընկերության մրցունակությանը և կազմում են նրա մրցակցային առավելությունը: Ընկերության էթիկայության չափանիշները և հայեցակարգը ամրագրվում են էթիկական փաստաթղթերում՝ կանոնագրքերում, վարքագծի կանոններում, առաքելության և արժեքների, ինչպես նաև բիզնեսի վարման մասին դրույթներում: Քննարկվելուց և ընդունվելուց հետո փաստաթղթերը ձեռք են բերում օրինականություն և դառնում են էթիկական մենեջմենթի գործիք: Էթիկական փաստաթղթերը սովորաբար համարվում են համընդհանուր ընկերության բոլոր աշխատակիցների համար՝ անկախ պաշտոնից, աշխատած տարիներից (ստաժից) և այլն: Էթիկական նորմերի նկատմամբ մեծամտությունը արժեզրկում է գաղափարը: Հաճախ կանոնագրքերում ուղղակի նշվում է, որ այն գործում է ընկերության բոլոր աշխատակիցների համար, առանց բացառության: Կանոնագրքին հետևելու կարևոր սկզբունքներից մեկը՝ նրա իրագործումն է ընկերության ղեկավարության կողմից: Նորմերը փոխանցվում են «վերևից ներքև», և եթե ղեկավարությունը խախտի կանոնագրքի դրույթները, ապա հասկանալի է, որ աշխատակիցները նույնպես չեն իրագործի այն:

Ինչպես հայտնի է, էթիկական կառավարումն իրականացվում է երեք մակարդակներում. **ռազմավարական, կարգավորման և ռիսկերի կառավարման:** Սակայն, որպեսզի փաստաթղթերը չմնան միայն թղթի վրա, այլ դառնան կորպորատիվ կյանքի կազմակերպման, նրա էթիկական և բարոյական ասպեկտների իմաստավորման իրական գործիք, ընկերությունում մշակվում են գործարար էթիկայի ծրագրեր, որոնց բնույթը կախված է կառավարիչների և սեփականատերերի ռազմավարական խնդիրներից և տեսլականից:

Հասկանալի է, որ ընկերություններում կորպորատիվ էթիկայի վիճակը մեծապես պայմանավորված է կորպորատիվ էթիկայի ծրագրերի որակով:

Կորպորատիվ էթիկայի ծրագիրը՝ սեփականատերերի և կառավարիչների կողմից օգտագործվող մի գործիք է¹, որը հնարավորություն է ընձեռում ոգևորել, խրախուսել և պահպանել պատասխանատու գործարար վարքագիծը² խելամիտ սպասումների բավարարման նպատակով ընկերության շահագրգիռ անձանց ներգրավման և ընկերության աշխատակիցներին ու գործակալներին ուղղորդող և օժանդակող կառույցների և համակարգերի կառուցման ճանապարհով:

Կորպորատիվ էթիկայի ծրագիրը՝ որպես կառավարման գործիք, սեփականատերերին և կառավարիչներին օգնում է խթանել գործարար վարքագիծը հետևյալ ճանապարհներով.

- քաղաքական, տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական պարտավորությունների գիտակցման,
- կազմակերպական մշակույթի ըմբռնման՝ հիմնական համոզմունքների, մասնակցության, պատասխանատվության, հանդուրժողականության, գիտելիքների փոխանակման, կոնֆլիկտների հաղթահարման մեթոդների և այլն,
- շահագրգիռ անձանց խելամիտ սպասումների խրախուսման,
- շահագրգիռ անձանց սպասումներն իրագործելու նպատակով կառավարման պատասխանատու պրակտիկայի զարգացման,
- ընկերության որոշումներից և գործողություններից ձեռք բերվող փորձի հիման վրա ուսուցման և այլն:

Ընդ որում, կորպորատիվ էթիկայի ծրագիրը՝ կոշտ սահմանված ստանդարտների հավաքածու չէ: Այն ճկուն համակարգ է, որը պետք է պարբերաբար կատարելագործվի արտաքին միջավայրի նոր պայմաններին և մարտահրավերներին համապատասխան: Հասկանալի է, որ ընկերության կորպորատիվ էթիկայի ծրագիրը պետք է դառնա ընկերության կառավարչական համակարգի մասը, որը հիմնական էթիկական սկզբունքներից բացի իր մեջ է ներառում և՛ կորպորատիվ կառավարումը, և՛ սոցիալական պատասխանատվությունը, և՛ աշխատակիցների վարքագծի կանոնները: Այլ խոսքերով, կորպորատիվ էթիկայի ծրագիրը պետք է ամենասերտ ձևով ինտեգրվի ընկերության գործունեության մեջ:

Կորպորատիվ էթիկայի ծրագրի մշակման գործընթացը ներառում է հետևյալ հիմնական փուլերը³.

1. Հարցումների և հետազոտությունների իրականացում, նպատակների և խնդիրների սահմանում: Այս փուլում անհրաժեշտ է որոշել ելակետային պայմանները՝ ինչպիսի՞ն է ներկայիս իրավիճակը, ինչպիսի՞ն է ցանկալի իրավիճակը, և ինչո՞վ են նրանք տարբերվում միմյանցից, այսինքն՝ ինչու՞մն է հիմնախնդիրը և ինչպիսի՞ն է նպատակը: Այստեղ անհրաժեշտ է բացահայտել ղեկավարության դիրքորոշումները և իրականացնել աշխատակիցների կարծիքների հետազոտություն:

2. Կորպորատիվ էթիկայի ծրագրի համար պատասխանատուի նշանակում: Կասկած չկա, որ կորպորատիվ էթիկայի ծրագրի մշակման և ներդրման համար պետք է պատասխանատու լինի մեկ առանձին անձ՝ ծրագիրը պետք է ունենա նախագծի իր ղեկավարը, այլապես «սայլը» տեղից չի շարժվի: Սակայն պատասխանատուին նշանակելիս պետք չէ մոռանալ, որ կորպորատիվ էթիկայի ծրագրի «գազաթին» ցանկացած ղեկավարում հայտնվում է ընկերության ղեկավարը (կամ էլ ծրագրի ոգեշնչողի դերը կարող է խաղալ հիմնական սեփականատերը), քանի որ

¹ “Business Ethics. A Manual For Managing a Responsible Business Enterprise In Emerging Market Economies. A publication of Good Governance Program. U.S. Department of Commerce, International Trade Administration, Washington, D.C. 2004.

² Բերենք պատասխանատու վարքագծի սահմանումը վերոբերյալ գրականությունից. **պատասխանատու գործարար վարքագիծը**՝ ընկերության շահագրգիռ անձանց խելամիտ սպասումները խրախուսող և բավարարող աշխատակիցների և գործակալների ընտրություններն ու գործողություններն են:

Պատասխանատու ընկերությանը բնորոշ է որակյալ կորպորատիվ կառավարումը, կառավարման խելամիտ փորձը, ինչպես նաև պատասխանատու գործարար վարքագծի մշակույթը: Պատասխանատու ընկերությունը գիտի, թե ինչպես հաղթահարել իր գործարար միջավայրի մարտահրավերները և բարդությունները և, միաժամանակ, խստորեն հետևում է իր նպատակներին, հիմնական արժեքներին և տեսլականին:

Պատասխանատու ընկերությունը բնութագրվում է պատասխանատու գործարար վարքագծով հետևյալ չորս մակարդակներում. 1) օրենքների պահպանում, 2) ռիսկերի կառավարում, 3) հեղինակության բարձրացում, 4) հասարակության համար ավելացված արժեքի ստեղծում:

³ [http:// www.cfbe.ru/doc/be2.doc](http://www.cfbe.ru/doc/be2.doc)

կորպորատիվ էթիկայի ծրագիրը, ինչպես նշել ենք, կառավարչական համակարգի մի մասն է, իսկ ընկերության ղեկավարը գլխավորում է այն: Այնպես որ ղեկավարը պարտավոր է ամեն կերպ աջակցել և ոգեշնչել այդ ծրագիրը և ցուցադրել հայտարարված արժեքների ընդունումն ու ընդունված ստանդարտներին հետևելու պատրաստակամությունը, նա պետք է օրինակ ծառայի բոլորի համար:

3. Փաստաթղթերի և ընթացակարգերի մշակում: Նպատակները և խնդիրները բացահայտելուց հետո կարելի է ձեռնամուխ լինել հիմնական էթիկական սկզբունքների (ընկերության համոզմունքների կամ էթիկական կանոնագրքի) մշակմանը և նրանց իրագործմանը աշխատակիցների վարքագծի կանոնների տեսքով (կորպորատիվ կառավարման կանոնագրքերը, գործարար վարքագծի կանոնագրքերը և այլն):

4. Աշխատակիցների համար դասընթացների և ուսուցանող ծրագրերի իրականացում: Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը մշակելուց հետո կարելի է սկսել կորպորատիվ էթիկայի ծրագրի ներդրման գործընթացը: Այս պարագայում կարևոր դերակատարում ունեն վերապատրաստման դասընթացները, որոնց նպատակն է առավելապես ամբողջական և հասկանալի ձևով աշխատակիցներին հասցնել արժեքները և սկզբունքները:

5. Ներքին և արտաքին իրավիճակի մշտական մոնիթորինգ: Ընկերությունում կորպորատիվ էթիկայի ծրագրի առաջին գործարկումից հետո անպայման պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին.

- Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում ընկերության ներսում և արտաքին միջավայրում:
- Ո՞ր փոփոխություններն են խթանվել հենց ծրագրի կողմից:
- Լա՞վն են դրանք, թե վատը:
- Ինչպե՞ս պետք է դրանց արձագանքել:
- Ո՞ր խնդիրները և/կամ ռիսկերը չեն բացահայտվել սկզբնական փուլում:
- Կա՞մ հնարավոր է, որ այդ խնդիրների և ռիսկերի մասին հայտնի է եղել, սակայն նրանք այդ ժամանակ համարվել են ոչ էական, իսկ ներկայում պահանջում են մեծ ուշադրություն: Բոլոր այս հարցերը պետք է տալ պարբերաբար և մշտապես:

6. Ծրագրի կատարելագործում: Հասկանալի է, որ կորպորատիվ էթիկայի ծրագիրը պետք է կենսագործի և զարգանա նոր հանգամանքներին համապատասխան: Հնացած ծրագիրը և փոշով պատված կորպորատիվ վարքագծի կանոնագիրքը աշխատակիցների մոտ դաստիարակում են անառողջ ցինիզմ: Հետևաբար, ընկերությունները մշտապես պետք է վերանայեն և կատարելագործեն իրենց կորպորատիվ էթիկայի ծրագրերը և առավելագույնս համապատասխանեցնեն նրանց ժամանակի և արտաքին միջավայրի պահանջներին:

Ինչպես հայտնի է, կորպորատիվ էթիկայի որակը բնութագրվում է հետևյալ ասպեկտներով.

1. Տնտեսական ասպեկտ: Ամբողջ ընկերության կողմից տնտեսական արդյունքների նվաճում և մշակված նախագծերի իրականացում:

2. Սոցիալական ասպեկտ: Աշխատակիցների կարողությունը պահպանող բարենպաստ աշխատանքային մթնոլորտ: Սիջանձնային կոնֆլիկտների և հաճախորդների, հասարակության ու պետության հետ կոնֆլիկտների բացակայությունը: Անձնական խնդիրները չեն ազդում ընկերության աշխատանքի վրա:

3. Անհատական ասպեկտ: Ընկերության աշխատակիցների զարգացում: Դեկավարության կողմից ասիստենցիալիզմի (օգնականության) բացակայություն և պատասխանատվության շրջանակների ընդլայնում, ենթականների կողմից որոշակի արդյունքների նվաճում, ուրիշների վրա մեղքի տեղափոխման փաստի բացակայություն:

Եթե վերոնշյալ տնտեսական, սոցիալական և անհատական ասպեկտների գծով մենք ստանում ենք դրական արդյունքներ, ապա ընկերության կորպորատիվ էթիկան որակյալ է:

Ինչպես արդեն նշել ենք, վերջին տարիներին համաաշխարհային տնտեսության զարգացումն ուղեկցվում է բիզնեսի վարման էթիկական ասպեկտների նկատմամբ ուշադրության ուժեղացմամբ: Վերջինս բխում է ինչպես գործարար հանրության, այնպես էլ ողջ հասարակության շահերից: Գործարար որոշումների ընդունման գործընթացում «էթիկական բաղադրիչի» ուժե-

ղացման անհրաժեշտության գիտակցմանը, առաջինը մոտեցան տնտեսապես առավել զարգացած երկրները, մասնավորապես, ԱՄՆ-ը, որտեղ կորպորատիվ էթիկայի ոլորտում մասնագիտացված կազմակերպությունների, պետության, գործարարների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ջանքերի շնորհիվ աստիճանաբար ստեղծվեց այնպիսի միջավայր, որում բիզնեսի էթիկական կողմերի քննարկումն ու նրանց հետևելը դարձավ բավականին տարածված: Այնուհետև, սկսեցին ձեռնարկվել ընկերություններում էթիկական ծրագրերի մշակմանն ու ներդրմանն ուղղված գործնական քայլեր, որոնք ուղեկցվում էին առաջատար փորձի փոխանակմամբ և տարածմամբ: Վերջինիս հատկապես նպաստեց 1991թ. «Կորպորատիվ պատասխանատվության մասին» դաշնային օրենսդրության (Federal Sentencing Guidelines) ընդունումը, որով մի կողմից տարբեր խախտումների համար զգալիորեն ավելացրեցին տուգանքներն ընկերությունների համար, մյուս կողմից նախատեսում էին տուգանքների բազմակի նվազեցում ընկերությունում արդյունավետ էթիկական ծրագրի առկայության դեպքում:

Կորպորատիվ էթիկայի հանդեպ ուշադրության ուժեղացման նմանատիպ գործընթացներ են տեղի ունենում նաև աշխարհի տարբեր երկրներում, առաջին հերթին, շնորհիվ վերազգային կորպորացիաների գործունեության, որոնք էթիկական ծրագրեր են ներդնում իրենց մասնաճյուղերում:

Ինչպես հայտնի է, կորպորատիվ էթիկայի որակի բարելավումը մեծապես պայմանավորված է նաև ազգային մշակույթով (էթիկայով) և ավանդույթներով: Այս տեսանկյունից հատկապես ուշագրավ են հայ հայտնի մտածողների՝ հայոց կաթողիկոս **Յովհան Ծծմեցու** (Կանոնագիրք հայոց, VIII դար), մեծ իրավագետ, առակագիր **Մխիթար Գոշի** (Գիրք դատաստանի, XII դար), ականավոր զորավար, պատմագիր և իրավագետ **Սմբատ Գունդստաբլի (Սպարապետի)** (Ղատաստանագիրքը, XIII-XIV դար), **Հակոբ և Շահամիր Շահամիրյանների** (Որոգայթ փառաց, XVIII դար) աշխատությունները¹, որոնք մեծապես նպաստել են մեր ազգային էթիկայի ձևավորմանը: Նշված աշխատություններում բերված վարքագծի կանոնները արդիական են նաև մեր օրերում և կարող են որոշակիորեն նպաստել կորպորատիվ էթիկայի որակի բարելավմանը: Պատմական փորձը վկայում է, որ մեր ազգային էթիկան հիմնականում որակյալ է և չի հակասում համաշխարհային էթիկական ստանդարտներին, ինչը նշանակում է, որ մեր ընկերությունները հեշտությամբ կարող են փոխառել և արդյունավետ կերպով օգտագործել զարգացած երկրների կորպորատիվ էթիկայի փորձը:

Անդրադառնալով կորպորատիվ էթիկայի հիմնախնդիրներին, կարծում ենք, անհնարին է չանդրադառնալ կորպորատիվ կառավարմանը, քանի որ վերջինս զգալի ներգործություն ունի կորպորատիվ էթիկայի որակի վրա: Հասկանալի է, որ որքան լավ են պահպանվում կորպորատիվ կառավարման սկզբունքները (Principles of corporate Governance)², այնքան ավելի բարձր է կորպորատիվ կառավարման մակարդակը և, հետևաբար, բարձր է նաև կորպորատիվ էթիկայի որակը: Սակայն, կորպորատիվ կառավարման սկզբունքների և նորմերի ներդրումը ՀՀ բաժնետիրական ընկերություններում կապված է որոշակի խնդիրների հետ, որոնք հիմնականում բացատրվում են կառավարիչների բարոյական հատկանիշներով, կորպորատիվ կառավարման ինսայդերային համակարգի գերակայությամբ և կորպորատիվ բաժնետոմսերի շուկայի թերզարգացածությամբ³: Հուսանք, որ նշված հիմնախնդիրները աստիճանաբար կհաղթահարվեն, և դրական նախադրյալներ կստեղծվեն կորպորատիվ էթիկայի որակի բարելավման համար:

Անշուշտ, կորպորատիվ էթիկայի որակի բարելավման հիմնահարցերով աստիճանաբար կսկսեն մտահոգվել ավելի մեծ թվով ընկերություններ, ինչն էլ կնպաստի նրանց գործունեության հետագա բարելավմանը, սոցիալական շերտավորվածության աստիճանական հաղթահարմանը, ստվերային տնտեսության ծավալների կրճատմանը և հասարակական համերաշխության ամրապնդմանը:

¹ Հ. Ստեփանյան, Ն. Հարությունյան, Մարդու իրավունքներ, էջ 11:

² Նշված սկզբունքների հետ կարելի է ծանոթանալ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության www.oecd.org կայքում:

³ Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Կորպորատիվ կառավարում. ակնկալիքներ և իրականություն, էջ 257:

Այսպիսով, ընկերություններում կորպորատիվ էթիկայի որակի բարելավումը նույնպես կարող է նպաստել մեր ընկերությունների գործունեության որոշակի բարելավմանը, և որպես դրա հետևանք՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը:

Armine Zakharyan

Corporate ethics issues in joint-stock companies

Abstract

The article discusses the corporate ethics issues in the joint-stock companies of Armenia. Taking into consideration the issues of building corporate relations and improvement of the performance of the majority of joint-stock companies, the article attempts to identify the main factors that affect the quality of corporate governance and ethics. The main focus is on the corporate ethics issues to ensure required level of integrity, trust, and fairness. The stated values can substantially promote the growth of the joint-stock companies and the economy as well. The article presents a table that describes main moral commitments of the joint-stock companies and entrepreneurs as well. Since the improvement of the quality of the corporate governance and ethics is of a strategic importance both to ensuring the further growth of the joint-stock companies and the economy, overall, hence this issue needs to be among priorities of the joint-stock companies and the state.

Арминэ Захарян

Проблемы корпоративной этики в акционерных обществах Республики Армения

Аннотация

Настоящая статья посвящена проблеме корпоративной этики в акционерных обществах Республики Армения.

Учитывая наличие проблем построения цивилизованных корпоративных отношений и улучшения деятельности в большинстве акционерных обществ Республики Армения, в статье сделана попытка выявления основных факторов, влияющих на повышение качества корпоративного управления и корпоративной этики.

Особое внимание уделено основной задаче корпоративной этики - обеспечению необходимого уровня честности, доверия и справедливости в акционерных обществах. Наличие указанных ценностей может значительно способствовать развитию как акционерных обществ, так и экономики в целом.

Одновременно в статье приведена таблица, характеризующая основные моральные обязательства акционерных обществ и предпринимателей.

Поскольку повышение качества корпоративного управления и корпоративной этики имеет стратегическое значение как для дальнейшего развития акционерных обществ, так и для экономики в целом, то им должны быть озабочены как акционерные общества, так и государство.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԵՎ 2013ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ
ՀԱՄԱՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Բյուջեների* հիմնական փոխադարձությունը և զաղափարախոսական հենքը

2012թ. Հայաստանի հիմնական ֆինանսական փաստաթուղթն իր վրա կրում էր հետճգնա-
ժամային ազդեցությունների բեռը, այդ իսկ պատճառով, այն չէր կարող ունենալ մեծ առաջըն-
թաց ապահովելու ներուժ: Գրեթե նույն չափանիշներով է կազմել նաև 2013թ. ՀՀ պետական
բյուջեն և անկախ այն հանգամանքից, որ նախատեսվում են եկամտային հողավածների աճ,
վերջինս մեծամասամբ հիմնվում է օրենսդրական բարեփոխումների և հարկային վարչարա-
րության վրա, որը տնտեսական զարգացման արդյունքում ապահոված բյուջետային մուտքերի
վրա ծախսերի ընդլայնման քաղաքականության արդյունք չէ: 2013թ. բյուջեն ևս իր ակնկա-
լիքներով զուսպ է այնքանով, որքանով որ համաշխարհային տնտեսական աճի և տնտեսության
դանդաղող արտաքին գործոնների ազդեցությունն է կրելու իր վրա, իսկ նման իրավիճակներում
ամբիցիոզ կամ խիստ ընդլայնողական քաղաքականությունը չի երաշխավորվում: Մյուս կողմից
խնդիրը պարտքերի ներգրավման հաշվին բյուջեի ծախսային մասի ընդլայնման սահմանափակ
հնարավորություններն են, որը հաշվի է առնվել 2013թ. ՀՀ պետական բյուջեի նախագծի կազմման
ժամանակ: Փաստը մնում է այն, որ տնտեսական աճի հաշվին զարգացման բյուջե ունենալ
2013թ. կրկին չի հաջողվի:

Բյուջեի ծախսային բաշխվածությունն ըստ եռամսյակների ունի համամասնական բնույթ և
ճգնաժամային 2009թ. բնորոշ իրավիճակ կարելի է ասել չի նախատեսվում, երբ ծախսերի
գերակշիռ մասը տեղափոխվում է սովորաբար 4-րդ եռամսյակ՝ հնարավոր մուտքեր ապահո-
վելու ժամանակահատվածը երկարաձգելու համար: Պարտավորությունների և ծախսերի տե-
սանկյունից բեռն ընկած է 2-րդ և 4-րդ եռամսյակների վրա, որը փաստում է կայունության մասին:

Բյուջեների ընդունման տնտեսական իրավիճակների համեմատական վերլուծություն

2011թ. որոշ մակրոտնտեսական ցուցանիշներով ավելի բարեհաջող էր քան սպասվում է,
որ կլինի 2012թ., սակայն 2011թ. դեռևս նկատելի էին 2009թ. տնտեսական անկման խոր
հետևանքները: 2011թ. ՀՆԱ-ի աճը կազմել է 4.7%, իսկ 2012թ. սպասվում է, որ կկազմի 7.1%, իսկ
ՄԺԾ 2013-2015թթ. շրջանակներում կանխատեսվում էր, որ 2012թ. ՀՆԱ-ի աճը կկազմի 4.2%:
Այսինքն՝ 2012թ. ՀՀ պետական բյուջեի ընդունման ժամանակ դեռևս ակնհայտ չէին, որ 2012թ.
կլինի ավելի բարեհաջող: Ինչ վերաբերում է միջին գնաճին, այն 2011թ. կազմել է 7.7%, իսկ
2012թ. սպասվում է 2.4%, սա փաստում է նրա մասին, որ 2012թ.-ի բյուջեն ընդունելիս կային
որոշակի գնաճային ռիսկեր, որոնց իներցիոն ընթացքը հարկավոր էր կանգնեցնել, իսկ դա
նշանակում է, որ ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը պետք է լիներ
ավելի կոշտ: Բյուջեի կազմման հիմքում դրվել է 4 (+/-1.5) տոկոս տատանման թույլատրելի
միջակայքում գտնվող 12-ամսյա գնաճը¹:

Հաշվի առնելով 2012թ. զարգացումները սպասվող 4%-ին մոտ գտնվող գնաճը բարդ
խնդիրների առաջ չի կանգնեցնի ՀՀ ԿԲ-ին և հնարավորություն կտա 2013թ. առանց կոշտ

* Այսուհետև, «բյուջեներ» ասելով հիմք է ընդունվում «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին»
և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքները, որոնք հանդիսանում են համեմա-
տական վերլուծության առարկան:

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության, 2013թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքա-
կանության հիմնական ուղղությունների մասին զեկույց (Ուղերձ), էջ 66:

Նշում. ՀՀ պետական բյուջեի կազմման ընթացքում ընդունված պրակտիկայի համաձայն և վերջին ամիսների տնտեսական
զարգացումները ճիշտ արտահայտելու համար վերցվում է գնաճի 12-ամսյա ցուցանիշը, քանի որ միջին գնաճն այնքան էլ ճիշտ
չի արտահայտում վերջին զարգացումները և միջինացնում է միտումներն ամբողջ տարվա կտրվածքով:

միջամտությունների պահպանել գնաճը թույլատրելի մակարդակում: Իսկ եթե առաջանան որոշակի ռիսկեր, և գնաճը 4%-ով գերազանցի թույլատրելի սահմանը, ապա ըստ գնահատականների և կանխատեսումների վերջինիս կարգավորումը կարժենա 13 մլրդ դրամ, որի կարիքը շատ հավանական է, որ չառաջանա¹:

ՀՀ-ում սկսած 2009թ. ներդրումները կրճատվում են ՀՆԱ-ի կազմում և 2012թ. կանխատեսվում է, որ կկազմեն 26.3%` 2009թ. 34.7%-ի փոխարեն, իսկ դա նշանակում է, որ ՀՀ տնտեսության նկատմամբ կա վստահության պակաս, ինչպես նաև միջոցներ ներգրավելու խնդիր, այս ցուցանիշը նախատեսվում է բարելավել 2013թ.` հասցնելով ՀՆԱ-ի 26.9%-ի, սակայն իրականությունը մնում է այն, որ ներդրումները ՀՆԱ-ի կազմում մոտ 8%-ով կրճատվել են հետձգնաժամային ժամանակահատվածում:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2011թ. կազմել է 5%, իսկ 2012թ.` 3.1%, 2013թ. այն կիջնի ևս 0.4-0.5 տոկոսային կետով` կազմելով 2.64%: Պետք է նշել, որ 3%-ը չգերազանցող բյուջեի պակասուրդի ցուցանիշը խոսում է տնտեսական կայունության մասին, քանի որ նմանատիպ խնդիրներ ունեն մի շարք ԵՄ երկրներ ու վերջինիս արդյունքում բախվում են մի շարք դժվարությունների հետ` հատկապես պարտատոմսերի տոկոսադրույքների անկառավարելի աճի առումով:

Համեմատելով 2012թ. 2011թ. հետ տնտեսության ճյուղերի իրական աճի միտումներից ելնելով` պետք է նշել, որ 2011թ. կար 16.0% արդյունաբերության և 13.6% գյուղատնտեսության աճ, իսկ շինարարության մեջ` -12.5% անկում: Այսինքն` որոշակի առումով ի տարբերություն 2013թ. բյուջեի նախագիծն ընդունելու ժամանակահատվածի` 2012թ. բյուջեի կատարման համար կային ավելի շատ նպաստավոր տնտեսական պայմաններ: 2012թ. արդյունաբերությունը աճեց 9.4%-ով, գյուղատնտեսությունը` 7.9%-ով, շինարարությունը` 2.2%-ով, իսկ ծառայությունների ոլորտը` 10%-ով: Իհարկե, 2012թ. ՀՆԱ-ի 7.1% աճը թույլ է տալիս ընդունել ավելի համարձակ բյուջե, սակայն պահպանողականությունն այս պարագայում երաշխավորում է նրա իրատեսականությունը և կատարողականի մեծ հավանականությունը:

Դիտարկելով 2013թ. արդեն իսկ ընդունված ՀՀ պետական բյուջեի և ՄԺԾ 2013-2015թթ. ցուցանիշների միջև կապը նկատում ենք, որ ՀՆԱ-ն շատ չնչին շեղումով նախատեսվում է, որ կկազմի 4.537.3 մլն դրամ, ՀՆԱ-ի իրական աճը 3.8%-ի փոխարեն կկազմի 6.2%, բյուջեի պակասուրդը ևս առանց շեղում տալու կկազմի 2.64%: Շեղում նախատեսվում է փոխարժեքի գծով, այսինքն` նախատեսված էր, որ 1 ԱՄՆ դոլարը կկազմի 390.95 դրամ, սակայն ըստ բյուջեի այն կարծեզրկվի մոտ 15 դրամով և կկազմի` 405.52 դրամ: Փոխարժեքի 15 դրամով տատանումը կամ դրամի արժեզրկումը մինչև 405.52 կառաջացնի որոշակի դժվարություններ, քանի որ 2013թ. ակնկալվող արտաքին օժանդակությունը պետք է կազմի 189.7 մլրդ դրամ (որից` դրամաշնորհներ 17.5 մլրդ դրամ և վարկեր 172.2 մլրդ դրամ (արտարժույթով)), իսկ արտաքին վարկերի 2013թ. սպասարկման ծախսերը` հիմնական գումարի մարումները և տոկոսավճարները կկազմեն 225.4 մլն ԱՄՆ դոլար և մյուս կողմից արտաքին աղբյուրների հաշվին պետական պարտքի սպասարկումը պետք է կազմի 64.5 մլրդ դրամ: Իհարկե, այստեղ կան եվրոյով և այլ արժույթներով ներգրավող և վճարվող միջոցներ, ինչպես նաև հնարավոր է, որ լինեն կրկնահաշվարկներ, որի պարագայում դժվար է գնահատել, թե ինչ կարժենա դրամի արժեզրկումը 2013թ. բյուջեի վրա:

Բյուջեների եկամուտների համեմատական վերլուծություն

2013թ. պետական բյուջեի եկամուտները կկազմեն 1,032.8 մլրդ դրամ, նախորդ տարվա 911.6 մլրդ դրամի փոխարեն, այսինքն` նախատեսվում է 121.2 մլրդ դրամի աճ: Վերջինիս մեջ ամենամեծ մասնաբաժին ունեցող հարկային եկամուտները և պետական տուրքերը 2013թ. կկազմեն 993.08 մլրդ դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 31.14 մլրդ դրամով: ՀՆԱ-ի մեջ դրանք ևս կավելանան և կկազմեն 22.76%, նախորդ տարվա 21.61%-ի

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության, 2013թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին զեկույց (Ուղերձ), էջ 51-52:

փոխարեն: Իհարկե, կարևոր նշանակություն ունի, թե ինչ աղբյուրների հաշվին են այդ եկամուտներն ավելանալու, այս խնդրի լուծումը ՀՀ կառավարությունը տեսնում է հիմնականում 3 օրենսդրական բարեփոխումների և հարկային վարչարարության խստացման մեջ: Այդ օրենքներից մեկը՝ «եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն է, որը տարբեր փորձագետների հաշվարկներով ապահովելու է մոտ 40 մլրդ դրամի հասնող մուտքեր, որոնց առյուծի բաժինը բնականաբար դրվելու է մասնավոր հատվածի վրա¹:

Այսինքն՝ մասնավոր հատվածը կապահովի ավելացված եկամտային մասի մոտ 1/3-ը: Մյուս կողմից 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող օրենսդրական փոփոխությունները կտարածվեն նաև զինծառայողներին, նրանց հավասարեցված անձանց և փրկարարական ծառայության ծառայողներին եկամտային հարկի դաշտում ներառելու, ինչպես նաև ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պարտավորության առաջացման դեպքում պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիաները և սուբվենցիաներն ավելացված արժեքի հարկով հարկելու արդյունքում, որից ակնկալվող լրացուցիչ մուտքերը կկազմեն շուրջ 31.1 մլրդ դրամ:

Պետք է նշել, որ հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2013 թվականին ռիսկի գործոնն առկա է և այն գնահատվում է շուրջ 25.7 մլրդ դրամի չափով: Սակայն, հաշվի առնելով նախորդ տարիների փորձն, այս մուտքերը կարելի է ապահովել, և այնքան էլ բարձր չէ ռիսկայնությունը:

Վերլուծելով առանձին հարկատեսակների, տուրքերի, հաստատագրված վճարների, մաքսատուրքերի և բնապահպանական վճարների գծով մուտքերը նկատում ենք, որ դրանք եական աճ են արձանագրելու 2011թ. փաստացի ցուցանիշների համեմատությամբ:

Այս համատեքստում նկատելի է, որ հիմնական հարկատեսակների գծով հարկային բեռն ավելանալու է, վերջինս բյուջեի մուտքերի և եկամտային մասը համալրելու առումով դրական է, սակայն խնդիրն այստեղ ուղղակի և անուղղակի հարկերի միջև համամասնության մեջ է, քանի որ տնտեսության կայունության տեսանկյունից նպատակահարմար է, որ աճեն ուղղակի հարկերը: Սակայն, ինչպես նկատում ենք, ամենամեծ աճ սպասվում է ԱԱՀ-ի գծով, որը դրական համարել չենք կարող:

Բյուջեների ծախսերի համեմատական վերլուծություն

2013թ. ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախատեսվում է, որ կլինեն 1,152.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ ավելի է 131.6 մլրդ դրամով, վերջիններս կկազմեն ՀՆԱ-ի 25.4%-ը նախորդ տարվա 24.7%-ի փոխարեն, այսինքն՝ ՀՆԱ-ի մեջ բյուջեի ծախսային բաղադրիչի աճ է նախատեսվում, և համամասնությունը որոշակիորեն խախտված է, քանի որ ՀՆԱ-ն կաճի ավելի դանդաղ, քան պետական բյուջեի ծախսերը և շատ մոտ կլինի 2011թ. համանուն ցուցանիշին:

Ընդհանուր առմամբ, եթե դիտարկում ենք ՀՀ 2013թ. բյուջեի հիմնական ուղղությունները, ապա գերակշռող է սոցիալ-մշակութային ուղղությունը՝ ընդհանուրի 43.7%, որին հաջորդում է պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգերի գծով հատկացումները՝ 21.0, իսկ վերջինիս հաջորդում են տնտեսության ճյուղերը՝ 14.1%: Այս երեք կետերից ելնելով կարելի է պնդել, որ 2013թ. պետական բյուջեն սոցիալական է, քանի որ բյուջեն բնորոշվում է ամենախոշոր ծախսային խմբով:

Ուսումնասիրելով 2013թ. բյուջետային ծախսերն ըստ գործառական դասակարգման նկատում ենք, որ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վրա կծախսվի 208,9 մլրդ դրամ, որոնք ի դեպ 2012թ. կազմել են 165.0 մլրդ դրամ, այսինքն՝ ունենք մոտ 44 միլիարդի աճ:

¹ Եթե «եկամտային հարկին» անցնելու պարագայում մեկ զբաղվածի հաշվով հարկերի ավելացումը պայմանականորեն ընդունենք 2800-3000 դրամ մեկ ամսվա կտրվածքով, ապա տարեկան կտրվածքով այն կկազմի 33600-36000 դրամ, իսկ հաշվի առնելով, որ Հայաստանում կա 1 մլն 175 հազար զբաղված, ապա պարզ հաշվարկով հարկային մուտքերը կավելանան 39.4-42.3 մլրդ դրամով:

Պաշտպանության ծախսերը կկազմեն 182.7 մլրդ դրամ (2012թ.՝ 154.5 մլրդ դրամ), հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն՝ 72,4 մլրդ դրամ, տնտեսական հարաբերությունների վրա նախատեսվում է ծախսել 131,4 մլրդ դրամ (2012թ.՝ 113.8 մլրդ դրամ): Հանգիստի, մշակույթի և կրոնի ոլորտում կծախսվի 18,2 մլրդ դրամ, իսկ կրթության ծախսերը կկազմեն՝ 108,3 մլրդ դրամ (2012թ.՝ 105.5 մլրդ դրամ): Ամենախոշոր խումբն այստեղ կլինի սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը, որոնք կկազմեն 304,7 մլրդ դրամ (2012թ.՝ 307.2 մլրդ դրամ):

Նշված ծախսային հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպանության և տնտեսական հարաբերությունների ծախսերն առաջանցիկ աճ կունենան, իսկ կրթության և սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը գրեթե չեն աճի: Եվ մյուս կողմից, պետք է նշել, որ որևէ համամասնություն 2012թ. ծախսերի համեմատությամբ աճի առումով 2013թ. չի պահպանվել:

2012 և 2013թթ. պետական բյուջեներն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման վերլուծելով նկատում ենք մի շարք տեղաշարժեր: Այսպես՝ աշխատանքի վարձատրությունը 2013թ. նախատեսվում է, որ կլինի 89.1 մլրդ դրամ, իսկ 2012թ. այն կազմել է 76.1 մլրդ դրամ: Նշված աճը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասով, որից ելնելով անհրաժեշտություն է առաջացել մինչև ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի ընդունումն աշխատողների պաշտոնային դրույքաչափերը սահմանող գործող օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ: Մյուս կողմից աշխատավարձերի աճը կապված է հանրային ծառայողների պաշտոնային դրույքաչափերի համապատասխան օրենքներով նախատեսված բնականոն աճերով, ինչպես նաև քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու դեպքում քաղաքացիական ծառայողի հիմնական աշխատավարձի նկատմամբ 5%-ի չափով սահմանվող հավելավճարներով¹:

Այսինքն՝ չնայած թվային աճին իրականում աշխատավարձերի աճը պետական հատվածում կապվում է միայն օրենսդրական պահանջների կատարման հետ, այլ ոչ թե աշխատավարձերի գծով կատարված բարձրացումների:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումը 2013թ. կկազմի՝ 173,2 մլրդ դրամ (2012թ.՝ 171.6 մլրդ դրամ), տոկոսավճարները՝ 52.5, որից՝ ներքին՝ 29.9 և արտաքին՝ 22.6 (2012թ.՝ 47.7 մլրդ դրամ), այսինքն՝ մոտ 4.8 մլրդ դրամ ավելացել են վճարվող տոկոսները: Դրամաշնորհները և սուբսիդիաները 2012թ. համեմատությամբ էական փոփոխությունների չեն ենթարկվել և 2013թ. կկազմեն 102.8 և 20.0 մլրդ դրամ համապատասխանաբար:

Բավականին աճ է արձանագրվել 2013թ. ծախսերի մեջ հիմնական միջոցների գծով, որը կկազմի 197.4 մլրդ դրամ (2012թ.՝ 148.4 մլրդ դրամ), այսինքն՝ մոտ 50 մլրդ դրամով կավելանան հիմնական միջոցները, իսկ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերը 2013թ. կկազմեն 29,7 մլրդ դրամ (2012թ.՝ 21.9 մլրդ դրամ):

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման համադրական վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ այստեղ ևս հստակ համամասնություններ չկան, սակայն ամբողջական պահանջարկի խթանման և պետական շինարարության ծավալները մոտ 97 մլրդ դրամով ավելացնելով փորձ է արվում խթանել շինարարության ոլորտը և քիչ թե շատ վերականգնել 2009թ. -41.6 և 2011թ. -12.5 տոկոսանոց անկումները:

Բյուջեների պակասուրդների համեմատական վերլուծություն

2013թ. պետական բյուջեի պակասուրդը կկրճատվի և կկազմի 119.8 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի 2.64%-ը (2012թ.՝ 132.5 մլրդ դրամ կամ ՀՆԱ 3.1%): Պակասուրդի ֆինանսավորումը կիրականցվի ինչպես ներքին այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին, որից ներքին աղբյուրներ՝ 55,2 մլրդ դրամ և արտաքին աղբյուրներ՝ 64,5 մլրդ դրամ (2012թ.՝ 132.5 մլրդ դրամ,

¹ Հայաստանի Հանրապետության Կառավարության, 2013թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին զեկույց (Ուղերձ), էջ 127:

որից ներքին աղբյուրներ՝ 72.8 և արտաքին աղբյուրներ 59.7 մլրդ դրամ): 2013թ. սպասվում է բյուջեի պակասուրդի ֆինանսավորման մոտ 20 մլրդ դրամով ներքին թանկ ռեսուրսների ավելի քիչ ներգրավում, որը դրական է, սակայն արտաքին աղբյուրներից ներգրավված միջոցները կաճեն մոտ 4.8 մլրդ դրամով, սա փաստում է այն մասին, որ պակասուրդի ֆինանսավորման հետ կապված ռիսկերը հասցվում են նվազագույնի, դեռ ավելին հաշվի առնելով ներքին ռեսուրսները կամ ՊԿՊ-ների շուկայից ներգրավելու ներուժը հնարավորություն կունենան վատ սցենարային զարգացումների դեպքում պակասուրդը ֆինանսավորել ներքին աղբյուրների հաշվին՝ չգերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Այս տարի կարելի է նաև կանխատեսել, որ ՊԿՊ-ների տոկոսադրույքները կնվազեն, քանի որ այդ շուկայից միջոցներ ներգրավելու առումով որոշակի լարվածության թուլացում է ակնկալվում պակասուրդի ֆինանսավորման մեջ ներքին շուկայի մասնաբաժնի և ֆինանսավորման աղբյուրների փոքր մասնաբաժին կազմելու տեսանկյունից:

Այսպիսով՝ 2013թ. պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կազմը կլինի առավելապես արտաքին և ցածր տոկոսադրույքներով ներգրավված աղբյուրների հաշվին, որը կարելի է համարել դրական միտում՝ նախորդ բյուջետային տարվա համեմատությամբ, որտեղ գերակշռում էին հիմնականում ներքին աղբյուրները:

Արտաքին և ներքին պարտքային քաղաքականությունը

ՀՀ 2013թ. պետական բյուջեով նախատեսվում է նաև 4.6% միջոցներն ուղղել պետական պարտքի սպասարկմանը, որը բավականին բարձր ցուցանիշ է և մեծ ծանրություն ՀՀ կառավարության համար:

2012թ. ՀՀ պետական պարտքը կազմեց 4.519.0 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա 4.128.7 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: 2013թ. նախատեսվում է պետական պարտքն ավելացնել ևս 271 մլն ԱՄՆ դոլարով, այն հասցնելով 4,790.7 մլն ԱՄՆ դոլարի: Պետք է նշել, որ պետական պարտքի մեջ 2013թ. արտաքին պարտքը կգերազանցի 4.080.4 մլն դոլարի սահմանագիծը, որից 539.5 մլն ԱՄՆ դոլարը կկազմի ԿԲ-ի պարտքը, իսկ ներքին պարտքը կկազմի 710.3 մլն ԱՄՆ դոլար: Դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի հետ համեմատելով այն կկազմի ՀՆԱ-ի 42%-ը:

Այս համատեքստում պետք է նշել, որ 2013թ. ընդհանուր բնույթի բյուջետային արտաքին օժանդակության շրջանակներում նախատեսվում է 35.0 մլրդ դրամ, որից 5.8 մլրդ դրամը պաշտոնական դրամաշնորհներ, 29.2 մլրդ դրամի վարկեր, իսկ ծրագրային (նպատակային) օժանդակության շրջանակներում 154.7 դրամ, որից 11.7-ը պաշտոնական դրամաշնորհներ, իսկ 143.0 մլրդ դրամը վարկեր, այսինքն՝ ընդհանուր առմամբ արտաքին օժանդակությունը կկազմի 189.7 մլրդ դրամ:

ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների տոկոսադրույքների և վարկային միջոցներից մասհանումների 2011-2013թթ. ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2011թ. դրանք կազմել են 238.4 մլն ԱՄՆ դոլար, որից հետո 2012թ. դրանք կտրուկ աճել են կազմելով 410.5 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2013թ. կանխատեսվում է, որ դրանք կհասնեն 415.4 մլն ԱՄՆ դոլարի: Այսինքն՝ սա փաստում է այն մասին, որ կառավարությունն ունի բավականին ծանր պարտավորություններ:

2013թ. օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանին տրամադրված վարկային միջոցների օգտագործման ընդհանուր գումարը կկազմի շուրջ 326.7 մլն ԱՄՆ դոլար կամ 132.47 մլրդ դրամ: ՀՀ կառավարության համաֆինանսավորման գումարը վերոհիշյալ վարկային ծրագրերին կկազմի շուրջ 70.8 մլն ԱՄՆ դոլար կամ շուրջ 28.73 մլրդ դրամ:

2013թ. խոշոր վարկային ծրագրերից են՝ ԵՆԲ (Եվրոպական ներդրումային բանկի) կողմից ֆինանսավորվող Սահմանային անցակետերի և ենթակառուցվածքների արդիականացման ծրագիրը՝ 23.1. մլն ԱՄՆ դոլար, ԱԶԲ-ի (Ասիական զարգացման բանկ) կողմից ֆինանսավորվող՝ Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի (I մասնաբաժին) 53.2 և 67.2 մլն ԱՄՆ դոլար մասնաբաժիններով վարկը, ինչպես նաև ԶՄԳ-ի (Զարգացման միջազգային գործակալության)

կողմից վարկավորվող Ձարգացման քաղաքականության գործողությունների վարկը՝ 72.0 մլն ԱՄՆ դոլար:

Արտաքին վարկերի 2013-2015 թվականների սպասարկման ծախսերը՝ հիմնական գումարի մարումները և տոկոսավճարները բավականին ծանր պարտավորություններ կլինեն ՀՀ կառավարության համար, քանի որ 2013թ. արտաքին վարկերի հիմնական գումարների մարումները կկազմեն 168.8 մլն ԱՄՆ դոլար, իսկ տոկոսավճարները՝ 56.6 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ հանրագումարը կկազմի 225.4 մլն ԱՄՆ դոլար:

2013թ. բավականին ծանր է պարտավորությունների առումով ի տարբերություն 2014 և 2015թթ.: Իսկ ինչ վերաբերում է 2013թ. վարկերի հիմնական գումարների և տոկոսավճարների սպասարկման եռամսյակային բաշխվածությանը, ապա հիմնական ծանրությունը դրված է 2-րդ և 4-րդ եռամսյակների վրա, որից ելնելով էլ կարելի է ենթադրել, որ բյուջետային տարվա համար այս եռամսյակները հարկային մուտքերի ապահովման և վարչարարության տեսանկյունից լինելու են ավելի խիստ մակարդակի վրա:

Հիմնական եզրակացություններ

Կատարելով «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համադրական վերլուծություն, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին զեկույցը (Ուղերձ), փորձենք ներկայացնել երեք հիմնական ուղղվածության եզրակացություններ:

Դրական զարգացումներ.

1. Դրական զարգացումների համատեքստում պետք է նշել 2012թ. սպասվող ՀՆԱ-ի հավելաճը, որը կազմելով 7.1% հնարավորություն է ընձեռում կուտակել որոշակի տնտեսական ներուժ և դա օգտագործել ամբողջ 2013թ. ընթացքում: Դրամական արտահայտությամբ 2012թ. ՀՆԱ-ն 2011թ. ՀՆԱ-ից ավելի կլինի մոտ 360 մլրդ դրամով, իսկ 2013թ. ՀՆԱ-ն 2012թ. համեմատությամբ մոտ 400 միլիարդով՝ զարգացման նույն տեմպերը պահպանվելու և շարունակվելու պարագայում, իսկ վերջինիս 20%-ը գնահատելով որպես հարկային մուտքեր 2013թ. ՀՀ պետական բյուջեի հարկային մուտքերը կավելանան 80 մլրդ դրամով՝ ապահովելով բյուջեի կատարումը, իսկ եթե հաշվի ենք առնում նաև օրենսդրական բարեփոխումների արդյունքում ապահովող մուտքերը, ապա այն այլ հավասար պայմաններում (առանց բացասական զարգացումների) բյուջեի կատարումը լիարժեք իրատեսական է դարձնում, դեռ ավելին, կարելի էր ավելի փոքր պակասուրդով բյուջե նախատեսել:
2. Դրական պետք է համարել նաև ՀՀ պետական բյուջեի պակասուրդը ցածր մակարդակի վրա պահելու հանգամանքը, քանի որ բարձր պակասուրդի պարագայում ՀՀ կառավարությունը ստիպված է ավելի մեծ միջոցներ ներգրավել ներքին և արտաքին աղբյուրներից, իսկ առկա պարտավորությունների պարագայում դա խիստ ռիսկային կարող է դիտարկվել: Նվազեցնելով ՊԿՊ-ների շուկաներից միջոցների ներգրավումը մոտ 20 մլրդ դրամով, իսկ արտաքին աղբյուրներից ներգրավող միջոցներն ավելացնելով մոտ 4.8 մլրդ դրամով պակասուրդի ֆինանսավորումը որակապես կբարելավի: Այստեղ պետք է նշել նաև, որ որոշակի առումով կնվազեն նաև ՊԿՊ-ների տոկոսադուրյալները, քանի որ ՀՀ կառավարությունը ստիպված չի լինի վճարել բարձր տոկոսներ ներքին պարտքի ֆինանսավորման համար:
3. Բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգման համադրական վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ այստեղ հստակ համամասնություններ չկան, սակայն ամբողջական պահանջարկի խթանման և պետական շինարարության ծավալները մոտ 97 մլրդ դրամով ավելացնելով փորձ է արվում խթանել շինարարության ոլորտը: Հետձգմամբային զարգացումների համատեքստում վերջինս կարող է խթանել նոր աշխատատեղերի ստեղծումը և նպաստել տնտեսության մեջ շինարարության անկում ապրող տեմպերի ակտիվացմանը:

4. Աշխատանքի վարձատրությունը 2013թ. նախատեսվում է, որ կլինի 89.1 մլրդ դրամ, իսկ 2012թ. այն կազմել է 76.1 մլրդ դրամ, այսինքն՝ մոտ 13 մլրդ դրամով պետական ոլորտի աշխատողների աշխատավարձը բարձրացնելով կկրճատվի մասնավոր և պետական հատվածների աշխատավարձերի միջև առկա տարբերությունը, սակայն ցանկալի է, որ նման բարձրացումը ոչ թե ինքնանպատակ բնույթ կրի, այլ հիմնվի արտադրողականության բարձրացման վրա:

Բացասական զարգացումներ.

1. Բացասական զարգացումներից կարելի է դիտարկել համաաշխարհային տնտեսության մեջ առկա ռիսկային երևույթները՝ եվրոպական պարտքային և կենսաթոշակային ճգնաժամերի հնարավոր ազդեցությունները, ԱՊՀ երկրների և Չինաստանի տնտեսական աճի դանդաղող տեմպերը, որոնք որպես արտաքին գործոն կարող են ազդել ՀՀ տնտեսության, ինչպես նաև բյուջեի իրագործելիության մակարդակի վրա:
2. Տնտեսության զարգացման հաշվին ապահոված բյուջեի կատարումը, իհարկե դրական է, սակայն օրենսդրական որոշակի բարեփոխումները, հատկապես «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի հետ կապված կառաջացնեն որոշակի դժվարություններ մասնավոր հատվածի համար՝ ավելացնելով նրանց վրա դրված հարկային բեռը:
3. 2013թ. պետական բյուջեների գործառնական ծախսերի հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ կան ծախսային խմբեր (հանրային ծառայություններ, պաշտպանություն, տնտեսական հարաբերություններ և այլն), որոնք աճել են շատ ավելի մեծ չափով, քան մյուսները և որևէ համամասնություն 2012թ. ծախսերի համեմատությամբ աճի առումով չի պահպանվել: Դրանից ելնելով կարելի է նշել, որ որոշ ոլորտներ 2013թ. կգտնվեն ավելի լավ կարգավիճակում, իսկ հանգիստի, մշակույթի և կրոնի, կրթության, ինչպես նաև սոցիալական պաշտպանության ոլորտում էական տեղաշարժեր չեն արձանագրվի:
4. ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների տոկոսադրույքների և վարկային միջոցներից մասհանումների 2013թ. սպասվող միտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք կհասնեն 415.4 մլն ԱՄՆ դոլարի, այսինքն՝ ՀՀ կառավարությունն ունի բավականին ծանր պարտավորություններ, քանի որ ՀՆԱ-ի 3.7%-ը ստիպված կլինի ուղղել այս պարտավորությունների մարմանը:

Անփոփոխ իրավիճակներ.

1. Համադրելով 2012 և 2013թթ. ՀՀ պետական բյուջեների փիլիսոփայությունը և գաղափարախոսական հենքը կարող ենք փաստել, որ դրանք իրար նման են այնքանով, որքանով հետճգնաժամային զարգացումների համատեքստում շատ մեծ էական տեղաշարժեր չեն նախատեսում: Մյուս կողմից համաաշխարհային տնտեսության մեջ նկատվող տնտեսական աճի տեմպերի դանդաղումը ստիպում է, ոչ թե ունենալ ամբիցիոզ նպատակներ, այլ պահպանել կայունությունը և չկիրառել խիստ ընդլայնողական քաղաքականություն՝ հնարավորինս երաշխավորելով բյուջեի կատարման իրատեսականությունը: Պետք է նշել նաև, որ ելնելով 43.7% տեսակարար կշիռ ունեցող սոցիալական և մշակութային ծախսերից ՀՀ 2013թ. պետական բյուջեն կարելի է համարել սոցիալական, քանի որ բյուջեն բնորոշում են ըստ ամենախոշոր ծախսային ուղղվածության հոդվածների:
2. Բյուջեի ծախսային մի շարք հոդվածներ 121 մլրդ ավելացած ծախսերի պարագայում շատ չնչին փոփոխությունների են ենթարկվել, և սա փաստում է այն մասին, որ ծախսերը համաչափ կերպով չեն հասել յուրաքանչյուր ոլորտ: Իհարկե, կան տնտեսության համար առարկայական և կարևոր նշանակություն ունեցող ոլորտներ, սակայն զարգացման տեսանկյունից նպատակահարմար է ծախսերի համաչափ բաշխվածությունը: Մյուս կողմից պետք է նաև ուշադրություն դարձնել նախորդ տարիներին հատկացված միջոցներին ևս, քանի որ իրականում որևէ ոլորտի կայացվածությունից ելնելով է որոշվում հատկացվող ծախսերի մեծությունը, այսինքն՝ դրանք կապիտալ ծախսեր են, թե ընթացիկ:

Вилен Хачатрян

**Сравнительный анализ бюджетов РА за 2012 - 2013 гг.
в контексте посткризисных развитий**

Аннотация

Достаточно интересно провести исследование и сравнительный анализ бюджетов 2012 и 2013 гг., поскольку процессы развития в этих двух документах имеют очень большое значение. Для 2013г. характерно довольно много вызовов, а также отрицательных прогнозов относительно происходящих в мировой экономике процессов развития, что с точки зрения обеспечения исполнения показателей, зафиксированных в основном финансовом документе страны, создаст трудности. Это заставляет проявлять более осознанное экономическое поведение для повышения личного благосостояния, способствуя тем самым увеличению темпов экономического роста РА.

Vilen Khachatryan

**The comparative analysis of the budget of the Republic of Armenia for 2012
and 2013 in the context of the post-crisis developments**

Abstract

Hence, it is rather interesting to study and provide the comparative analysis of the state budget for 2012 and 2013, since the developments that took place in these two financial documents are of high importance. In 2013, Armenia will face many challenges, and will have to deal with the negative forecasts regarding the developments taking place in global economy that will make it hard for the nation to ensure that all the indicators stated in the main financial document are met. The latter one forces Armenia to adopt the most rational economic behavior to improve the wellbeing of the population, and thus promoting economic growth of the Republic of Armenia.

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Շուկայական տնտեսության անցումային փուլի առանձնահատկություններից մեկը պետության ֆինանսական միջոցների պակասուրդն է, որի լրացման հիմնական աղբյուրը հանդիսանում են հարկերը և պետական պարտքը: Հարկաբյուջետային քաղաքականությունը կառավարության կողմից ձեռնարկած միջոցառումներն են՝ կապված պետական ծախսերի, հարկային քաղաքականության և պետական բյուջեի դիրքի (պակասուրդ, հավելուրդ) փոփոխության հետ՝ նպատակ հետապնդելով տնտեսությունում ապահովել լրիվ զբաղվածություն և տնտեսական աճ: Հարկաբյուջետային քաղաքականության կայունության գնահատման նախապայման դիտարկվում է պետական պարտքի մակարդակը ՀՆԱ-ում, որը չպետք է գերազանցի առաջիկա տարիների մակարդակից¹:

Հարկաբյուջետային քաղաքականության կայունության ապահովումը կարճաժամկետ հատվածում (static model) սահմանվում է որպես չաճող պարտք/ՀՆԱ հարաբերակցություն (non increasing debt to GDP ratio)²: Այդ ցուցանիշները ցույց են տալիս, թե հարկաբյուջետային քաղաքականությունը կարճաժամկետ հատվածում որքան է շեղված կայունության ապահովման նախապայմաններից³: Կայուն հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է պահպանի պետական հատվածի զուտ արժեք/ՀՆԱ-ի նկատմամբ կշիռը իր ընթացիկ մակարդակում:

Հաստատուն առաջնային պակասուրդի անհրաժեշտ մակարդակը հաշվարկելու համար օգտագործվում է հետևյալ բանաձևը՝

$$d^* = (g_t - r_t) * W_t \quad (1)$$

որտեղ՝
 $w_t = W_t / Y_t$ զուտ հարստության արժեք/ՀՆԱ կշիռն է,
 g_t -ն ՀՆԱ-ի իրական աճն է,
 r_t -ն պարտքի իրական տոկոսադրույքն է:

Այսպիսով՝

$$d^* - d_t = (g_t - r_t) * W_t - d_t \quad (2)$$

$d_t = D_t / Y_t$ առաջնային պակասուրդ/ՀՆԱ կշիռ:

(1) բանաձևը ցույց է տալիս հաստատուն հարստության $((g_t - r_t) * W_t$ (constant wealth)) առաջնային պակասուրդի և ընթացիկ առաջնային պակասուրդի տարբերությունը: Ընդ որում, բացասական արժեքը նշանակում է, որ ընթացիկ առաջնային պակասուրդը բավականին մեծ է զուտ հարստության արժեք/ՀՆԱ ցուցանիշը կայունացնելու համար, որի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը դիտարկվում է որպես անկայուն: Սա նաև ցույց է տալիս, որ եթե տնտեսական աճը ավելի բարձր է, քան պետական պարտքի իրական տոկոսա-

¹ Հայաստանի պարտքի և հարկաբյուջետային կայունություն, ՀԲ-ՀՀ ՖՆ-ԱՄՀ համատեղ զեկույց, 2011:
² Andres Velasco, "Debts and deficits with fragmented fiscal policymaking", IMF working paper, 2007 p. 19.
³ Անհրաժեշտ է նշել, որ նշված ցուցանիշները կայունության սահմանման տեսանկյունից ապահովված չեն և ավելի շատ ունեն ինտուիտիվ բնույթ, թե ինչպես տարաբաժանել կայուն հարկաբյուջետային քաղաքականությունը անկայուն քաղաքականությունից:

դրույքը, ապա կառավարության հնարավորությունները նույնպես մեծանում են պետական պարտք/ՅՆԱ ցուցանիշը հաստատուն պահելու համար:

Այդ ցուցանիշը հեշտ մեկնաբանվում է, սակայն խնդիրը կառավարության զուտ հարստության իրական չափի գնահատումն է: Բլանչարդի կողմից այս խնդրի շուրջ տրվեց նոր մեկնաբանություն: Այսպես, նա դիտարկել է հարկաբյուջետային քաղաքականության այնպեսի փոփոխությունը, որի չափը բավարար էր ընթացիկ պարտքի մակարդակը ՅՆԱ-ում պահպանելու համար: Բլանչարդի կողմից առաջարկվում է կայունության երկու ցուցանիշ՝ առաջնային հաշվեկշռի ճեղքվածքի և եկամուտների (հարկերի) մակարդակի ճեղքվածքի ցուցանիշը¹:

Առաջնային հաշվեկշռի ճեղքվածք մոդել (primary gap): Առաջնային ճեղքվածքի ցուցանիշը հիմնված է պարտքի մակարդակը ՅՆԱ-ում կայունացնելու համար անհրաժեշտ հաստատուն առաջնային պակասուրդի վրա (թույլ չտալ պարտք/ՅՆԱ հարաբերակցության աճ), որը ներկայացվում է հետևյալ բանաձևով

$$d^*_t = (g_t - r_t) * b_{t-1} \quad (3)$$

որտեղ՝

d^*_t -ն գնահատված առաջնային հավելուրդ/ՅՆԱ կամ պակասուրդ/ՅՆԱ-ն է (ընթացիկ տարում),

g_t -ն ՅՆԱ իրական աճն է (ընթացիկ տարի),

r_t -ն պարտքի տոկոսադրույքն է (ընթացիկ տարի),

b_{t-1} -ը պարտք/ՅՆԱ ցուցանիշն է (նախորդ տարի):

Առաջնային հաշվեկշռի ճեղքվածք (primary gap) ներկայացվում է՝

$$d^* - d_t = (g_t - r_t) * b_{t-1} - d_t \quad (4)$$

որտեղ՝

d_t -ն առաջնային հավելուրդ/ՅՆԱ կամ պակասուրդ/ՅՆԱ-ն է /ընթացիկ տարի/:

Այս հավասարման արդյունքում բացասական արժեքը նշանակում է, որ ընթացիկ առաջնային հաշվեկշռը բավարար չէ (առաջնային պակասուրդը մեծ է) պարտք/ՅՆԱ ցուցանիշը կայունացնելու համար, և հարկաբյուջետային քաղաքականությունը կարելի է ասել այս դեպքում անկայուն է:

Եկամուտ/ՅՆԱ ճեղքվածքի մոդել (tax gap): Որպես այլընտրանքային տարբերակ Բլանչարդի կողմից առաջարկվում է եկամուտ/ՅՆԱ ճեղքվածքի ցուցանիշը: Այս ցուցանիշն հիմնված է հաստատուն եկամուտ/ՅՆԱ (permanent) ցուցանիշի վրա, որն անհրաժեշտ է պարտքը կայունացնելու համար: Վերջինս ներկայացվում է հետևյալ բանաձևով՝

$$t^* = G_t - (g_t - r_t) * b_{t-1} \quad (5)$$

որտեղ՝

t^* - գնահատված եկամուտների/ՅՆԱ (ընթացիկ տարի),

G_t – ծախսեր /առանց տոկոսավճարների (ընթացիկ տարի),

g_t – ՅՆԱ իրական աճ (ընթացիկ տարի),

r_t –պարտքի տոկոսադրույք (ընթացիկ տարի),

b_{t-1} – պարտք/ՅՆԱ ցուցանիշ (նախորդ տարի):

Այսպիսով՝ եկամուտ/ՅՆԱ ճեղքվածքը (tax gap) հաշվարկվում է՝

$$t_t - t^* = t_t + (g_t - r_t) * b_{t-1} - G_t \quad (6)$$

որտեղ՝

t_t - եկամուտ/ՅՆԱ (ընթացիկ տարի):

¹ Blanchard, O. et al. The Sustainability of Fiscal Policy: New Answers to an Old Question, OECD: Economic Studies, 1990.

Այս հավասարումը ներկայացնում է պարտքի մակարդակը հաստատուն պահելու համար անհրաժեշտ և ընթացիկ եկամուտների մակարդակի տարբերությունը: Բացասական արժեքը ցույց է տալիս, որ հաշվարկված հարկերը բավարար չեն պարտք/ՅՆԱ հարաբերակցությունը կայունացնելու համար՝ տրված ծախսերի պայմաններում:

Կայունության վերլուծության առաջնային հաշվեկշռի և եկամուտների ճեղքվածքի ցուցանիշները ակնհայտորեն նույնն են, սակայն տարբերվում են իրենց շեշտադրումներով: (4) բանաձևը առաջարկում է անկայուն հարկաբյուջետային քաղաքականության դեպքում առաջնային պակասուրդում կատարել նվազեցումներ՝ կամ ծախսերը նվազեցնելով, կամ հարկերը ավելացնելով, կամ հնարավոր է նվազեցումներ երկուսի միաժամանակյա համակցմամբ: Իսկ (6) բանաձևով պարտքի կայունության համար առաջարկվում է հարկային եկամուտների մակարդակի ավելացում անհրաժեշտ չափով՝ տրված ծախսերի պայմաններում հաստատուն պահելով կառավարության կողմից իրականացվող ծախսերը:

Հարկաբյուջետային քաղաքականության կայունության առաջնային հաշվեկշռի ճեղքվածքի մոդելը ունի որոշակի թերություններ, այն է՝ ունի դիսկրետ արտահայտություն և հնարավոր է իրական պատկերը չարտահայտի ժամանակի ընթացքում: Առաջնային հաշվեկշռի ճեղքվածքի մոդելով գնահատված ցուցանիշներում կառավարությունը կարող է առաջնային հավելուրդ ապահովել արտաքին տրանսֆերտների հաշվին, մինչդեռ եկամուտ/ՅՆԱ ճեղքվածքի մոդելը գնահատում է միայն եկամուտ հավաքագրելու երկրի ներքին հնարավորությունները պարտքը մարելու համար:

Հարկաբյուջետային քաղաքականության կայունությունը Հայաստանում գնահատելու համար օգտագործվել են առաջնային հաշվեկշռի ճեղքվածք (primary gap), եկամուտ/ՅՆԱ ճեղքվածքի (tax gap) (կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում) և բյուջեի սահմանափակման ներկա արժեքի (PVBC-present value budget constraint) մոդելներ: Այս մոդելները հարկաբյուջետային կանոնների պահանջներից մեկն են և առնչվում են կառավարության գործառնական նպատակների¹:

Առաջնային հաշվեկշռի ճեղքվածքի մոդելը (primary gap model) ցույց է տալիս, թե ինչ չափի պետք է լինի Հայաստանում առաջնային հաշվեկշռը (պակասուրդը կամ այն պայմանավորող գործոնները), որպեսզի պարտքի մեծությունը կայունանա որոշակի նախասահմանված մակարդակում: Մոդելը դիտարկում է հարկաբյուջետային կայունության ՅՆԱ աճի, ընդհանուր պարտքի միջին կշռված տոկոսադրույքների, կառավարության ներքին և արտաքին պարտքի (նախորդ ժամանակահատվածում) և առաջնային հաշվեկշռի (եկամուտները՝ ներառյալ գրանտներ, իսկ ծախսերը՝ առանց տոկոսավճարների) կարճաժամկետ պայմանները:

Աղյուսակ 1-ից երևում է, որ հաշվարկված առաջնային պակասուրդի ցուցանիշի գնահատումները ցույց են տալիս, որ կանխատեսվող ժամանակահատվածի համար միայն 2011թ. Հայաստանում արձանագրվում է հաշվարկված առաջնային պակասուրդի գերազանցում, փաստացի առաջնային պակասուրդը և առաջնային պակասուրդի ճեղքվածքը կազմել է 0.5 տոկոսային կետ, իսկ միջնաժամկետ հատվածում նշված ճեղքվածքը դրական է, ինչը նշանակում է, որ 2011թ. մակրոտնտեսական կանխատեսումների շրջանակներում առաջնային հաշվեկշռի փաստացի մակարդակը հնարավորություն չի տա պարտքը կայունացնել՝ ի տարբերություն միջնաժամկետի: Չնայած պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ մոդելում եկամուտների հաշվարկներում ընդգրկված են գրանտները, և մոդելը հարկաբյուջետային կայունարար ազդեցությունը գնահատում է դիսկրետ պահի համար՝ չդիտարկելով դինամիկ զարգացումները: Այսինքն, եթե գրանտները չստացվեն ծրագրավորված ծավալով, ապա հարկաբյուջետային քաղաքականության կայունությունը ապահովելու պայմանը կունենա չափավոր ռիսկայնություն:

¹ “Fiscal Rules: Useful Policy Framework or Unnecessary Ornament” George Kopits.

Առաջնային հաշվեկշիռի ճեղքվածքը բնութագրող ցուցանիշները 2008-2015թթ.¹

Տարի	Պարտք/ՅՆԱ (b _{t-1})	Միջին կշռված տոկոսադրույթ (r)	ՅՆԱ աճ անվ. (g)	Հաշվարկված առաջնային հաշվեկշիռ (%) / ՅՆԱ (d)	Փաստացի առաջնային հաշվեկշիռ (%) / ՅՆԱ (d)	Ճեղքվածք (-) անկայուն (+) կայուն (d'-d)
2008	16.05	2.4	13.30	-1.8	-0.4	1.4
2009	14.84	2.7	-11.95	2.2	-7.1	-9.3
2010	33.17	2.9	11.46	-2.8	-4.1	-1.3
2011	34.24	3.0	9.58	-2.3	-2.8	-0.5
2012	37.75	3.1	8.99	-2.2	-2.0	0.2
2013	38.29	3.0	8.44	-2.1	-1.3	0.8
2014	37.10	2.8	8.63	-2.1	-1.4	0.7
2015	35.33	3.0	9.09	-2.2	-1.2	1.0

Հաշվարկված եկամուտ/ՅՆԱ ցուցանիշի հաշվարկման նպատակն է գնահատել, թե ինչ եկամուտների մակարդակ է անհրաժեշտ կառավարությանը պարտքը կայուն պահելու, պարտավորությունները կատարելու և հարկաբյուջետային կայունության նախապայմանները չխախտելու համար:

Աղյուսակ 2-ում հաշվարկված բյուջեի եկամուտ/ՅՆԱ ցուցանիշը, մոդելով առաջարկվող եկամտի չափն է (այս դեպքում ներառված չեն գրանտները), իսկ փաստացի բյուջեի եկամուտ/ՅՆԱ ցուցանիշը մակրոտնտեսական կանխատեսումների վրա հիմնված եկամուտների մակարդակն է: Ճեղքվածքի գնահատումները ցույց են տալիս բացասական ճեղքվածք 2011-2012թթ. համար, որը համապատասխանաբար կազմում է 1.96 և 0.11 տոկոսային կետ: Եկամուտ/ՅՆԱ ճեղքվածքի մոդելի գնահատումներն ազդարարում են, որ 2011-2012թթ. անհրաժեշտ է նախատեսված եկամուտների մակարդակից ավելի բարձր մակարդակ ունենալ, որը միջինում պետք է կազմի 1 տոկոսային կետ: Ընդ որում, բացասական ճեղքվածքը ցույց է տալիս, որ փաստացի եկամուտների մակարդակը տրված ծախսային քաղաքականության պայմաններում ռիսկային է պարտքը կայունացնելու համար:

Բյուջետային եկամուտ/ՅՆԱ ճեղքվածք 2008-2015թթ.²

Տարի	Պարտք/ՅՆԱ (b _{t-1})	Միջին կշռված տոկոսադրույթ (r)	ՅՆԱ աճ (g)	Բյուջեի հաշվարկված եկամուտ/ՅՆԱ (t*)	Բյուջեի փաստացի եկամուտ/ՅՆԱ (t)	Ճեղքվածք (-) անկայուն (+) կայուն (t*-t)
2008	16.05	2.37	13.30	21.16	22.10	0.94
2009	14.84	2.73	-11.95	31.81	21.85	-9.96
2010	33.17	2.92	11.46	24.84	22.70	-2.14
2011	34.24	2.98	9.58	24.02	22.06	-1.96
2012	37.75	3.06	8.99	22.43	22.32	-0.11
2013	38.29	3.00	8.44	22.10	22.70	0.60
2014	37.10	2.85	8.63	22.44	23.11	0.66
2015	35.33	2.98	9.09	22.88	23.48	0.59

Անհրաժեշտ է նաև որակապես նոր մոտեցումներ ցուցաբերել հարկային արտոնությունների ինստիտուտի նկատմամբ: Արտոնությունների տրամադրումը պետք է համապատասխանի պետական ներդրումային այն ծրագրերին, որոնց արդյունավետության աստիճանը բավականաչափ բարձր է: Հարկային քաղաքականության ծրագրերում առաջնայնություն պետք է տրվի

¹ Հայաստանի պարտքի և հարկաբյուջետային կայունություն. ՀԲ-ՀՀ ՖՆ-ԱՄՅ համատեղ զեկույց, 2011:
² Նույն տեղում

բարձր տեխնոլոգիական և գիտատար արտադրությունների զարգացմանը: Անհրաժեշտ է բարձրացնել պետական ծախսերի ծավալը՝ ուղղված գիտատեխնիկական զարգացման խթանմանը: Ընդ որում, նախապատվություն պետք է տրվի այն ճյուղերի զարգացմանը, որոնք տնտեսական համակարգի համար ունեն առաջնային նշանակություն: Պետական պարտքի կառավարման հարցում կարևոր նշանակություն է ստանում հարկային և բյուջետային ընթացակարգերի առավելագույն կայունությունը և դրանց հաճախակի փոփոխությունների անթույլատրելիությունը: Հարկաբյուջետային քաղաքականության գլխավոր խնդիրը պետք է լինի մի կողմից հարկային բեռի, մյուս կողմից պետական ծախսերի արդյունավետ և արդար բաշխումը:

Հարկաբյուջետային քաղաքականության կայունության մակրոտնտեսական կայունության բաղկացուցիչ մասն է, որի գնահատումը բարդ գործընթաց է: Պետական պարտքի մակարդակը այն գլխավոր չափանիշն է, որի միջոցով հաշվարկվում են մի շարք ցուցանիշներ, որոնք կիրառվում են հարկաբյուջետային քաղաքականության կայունության գնահատման մոդելներում: Կարևոր խնդիրը մեր կարծիքով պետական պարտքի նպատակային բաշխման անհրաժեշտությունն է՝ ելնելով երկրի զարգացման գերակայություններից:

**Мушег Акопян
Альберт Айрапетян**

Размер государственного долга в качестве предварительного условия для финансовой устойчивости

Аннотация

Важным показателем, который используется при оценке эффективности финансовой политики, проводимой правительством это фискальная устойчивость, для измерения которого используются следующие показатели: отношение долга к ВВП; чистая стоимость государственного сектора; первичный баланс по отношению к ВВП; первичный разрыв баланса. Каждый показатель оценивается по-разному, и влияние каждого из них меняется. Авторы пытаются измерить устойчивость бюджета Республики Армения.

**Mushegh Hakobyan
Albert Hayrapetyan**

The size of the public debt as a precondition for fiscal sustainability

Abstract

An important indicator that is used in the assessment of the efficiency of fiscal policy implemented by the government is the fiscal sustainability to measure which the following indicators are used: debt-to-GDP ratio; public sector net worth; primary balance to GDP ratio; primary balance gap. Each indicator is measured differently, and the impact of each of them varies. The authors attempt to measure the fiscal sustainability of the Republic of Armenia.

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՆԵՐՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Ընկերությունների անարդյունավետ կառավարումը մասամբ բերում է նրանց սնանկացման: Տվյալ դեպքում առաջին հերթին անհրաժեշտ է ներտնտեսական պաշարների օգտագործում, ընդ որում անվճարունակ կազմակերպությունների ֆինանսական դրության բարելավման հիմնական խումբը հանդիսանում է կառավարման գործընթացների վերակազմավորումը: Նրանց հաջող կիրառումը թույլ է տալիս ոչ միայն վերացնել սնանկացման սպառնալիքը, այլև նկատելիորեն ազատել կազմակերպությանը փոխառու կապիտալի օգտագործման կախվածությունից, արագացնել նրա վերականգնումը նվազագույն ծախսերով:

Բարելավման տարբեր փուլերում կոնկրետ միջոցառումների մշակման համար կարելի է օգտվել կառավարման գործունեության զանազան տարբերակներից, որոնք առավելապես կիրառելի են հայկական կազմակերպությունների համար: Ֆինանսական ճգնաժամային իրավիճակների պայմաններում վերականգնումը իրականացվում է փուլերով:

Փուլ 1. Անվճարունակության բացառումը՝ ամենաանհետաձգելի խնդիրն է կազմակերպության ֆինանսական կայունացման միջոցառումների համակարգում: Այս դեպքում կարևոր է ստեղծել պայմաններ նորմալ արտադրական գործընթացի համար, նվազեցնել արտադրանքի ինքնարժեքը: Այս դեպքում կազմակերպության սնանկացման սպառնալիքը ընթացիկ ժամանակահատվածում հնարավոր կլինի վերացնել:

Փուլ 2. Ֆինանսական կայունության վերականգնումը՝ դա բացասական պատճառների միաժամանակյա բացառումն է կամ կազմակերպված ֆինանսական կայունության վրա նրանց ազդեցության կտրուկ սահմանափակումը, որը թույլ է տալիս բացառել սնանկացման սպառնալիքը ոչ միայն կարճ, այլև միջմաժամկետ ժամանակահատվածում: Ֆինանսական կայունության վերականգնումը կատարվում է որպես ֆինանսական պաշարների պահանջարկի կրճատմանը և սեփական ֆինանսական պաշարների աճի դրական հոսքի մեծացմանը ուղղված միջոցառումների իրացման շարունակություն: Ֆինանսական պաշարների նվազեցումը կապված է կազմակերպության սեղմում է սկզբունքի կիրառման հետ, որքան մեծ լինի դրական խզվածքը դրամական միջոցների ներհոսքի և նրանց արտահոսքի միջև, այնքան արագորեն վրա կհասնի կազմակերպության ֆինանսական կայունությունը:

Փուլ 3. Ֆինանսական հավասարակշռության երկարաժամկետ ապահովումը՝ պայմանների ստեղծում է իր ինքնաֆինանսավորման համար, արտադրության զարգացման, կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքների բարելավման նոր սպառնալիքների և հների բացառման համար:

Կազմակերպության երկարաժամկետ ֆինանսական կայունության ապահովումը շահույթի մեծացման հաշվին, լավ պայմաններ է ստեղծում ինքնաֆինանսավորման, կազմակերպության տնտեսական աճի և վարկային ռեսուրսների ներգրավման կրճատման համար:

Գործունեության տարբեր ուղղություններով կազմակերպությունների ֆինանսական առողջացման անցկացման պրակտիկան թույլ է տալիս որոշել կազմակերպության մեջ բիզնես-գործընթացների վրա ազդելու կառավարչական տիպային տարբերակներ:

1. Կազմակերպության հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում, որը իր մեջ ներառում է

- ա) սարքավորումների արդյունավետության բարձրացում՝ սարքավորումների այն թվաքանակի որոշումը, որոնք չեն օգտագործվում ընթացիկ արտադրական գործունեության մեջ կամ հազվադեպ են օգտագործվում արտադրական գործունեության մեջ,
- բ) վարչական, արտադրական և պահեստային շինությունների օգտագործման արդյունավետության բարձրացում:

2. Կապիտալ ներդրումների կրճատումը, որը իր մեջ ներառում է ներդրումային նախագծերի դադարեցում՝ որոնք արտաքին շուկայական գործունեության փոփոխության արդյունքում դարձել են պակաս արդյունավետ (վնասալի), անավարտ շինարարության օբյեկտների հանձնման հնարավորության որոշումը կամ կողմնակի ներդրողների գրավում՝ շինարարությունը արագորեն ավարտելու և օբյեկտները շահագործման հանձնելու համար, ինչպես նաև կապիտալ շինարարության օբյեկտների կոնսերվացում՝ նրանց պահպանման ընթացիկ ծախսերը կրճատելու նպատակով:

3. Արտադրական պաշարների օպտիմալացում, ինչը ենթադրում է ձեռնարկության կայուն գործունեության համար պաշարների տեղաբաշխում՝ ըստ իրենց կարևորության աստիճանի, պաշարների այն տեսակների ծավալի փոքրացում, որոնք կրիտիկական չեն հանդիսանում ձեռնարկության գործունեության համար, ավելորդ նյութերի քանակի և տեսակի որոշումը (դետալների, ապրանքների), որոնք չեն օգտագործվում արտադրության մեջ կամ պատրաստի արտադրանքի, մնացած ապրանքի և այլն, նյութական պաշարների պահպանման հետ կապված ծախսերի կրճատում, ավելորդ նյութական պաշարների, պատրաստի արտադրանքի վաճառք և մնացած պաշարների, նորմային չհամապատասխանող ապրանքների զեղչով վաճառելու հնարավորության դիտարկում:

4. Արտադրական գործընթացի օպտիմալացում, ինչը ենթադրում է ոչ շահութաբեր արտադրության փակում՝ ազատելով նյութական պաշարներ, անձնակազմին, սարքավորումներ և արտադրական մակերեսներ, թողարկվող արտադրանքի որակի բարձրացում՝ ըստ գործողությունների որակի ստուգման ներդրման հաշվին, արտադրության շահութաբեր տեղամասերում արտադրանքի թողարկման մեծացում՝ նրանց վրա նյութական և աշխատանքային պաշարների կենտրոնացման հաշվին, անշահութաբեր արտադրության վերակողմնորոշումը առավել եկամտաբեր նոր արտադրանքի թողարկման համար, որը մեծ պահանջարկ ունի շուկայում, ինչպես նաև բանվորական տեղերի կրճատում՝ վաճառքի ծավալների կրճատմանը համապատասխան¹:

5. Դրամական միջոցների շրջանառության արագացում², ինչը ենթադրում է այն համակարգերի համար խթանների (զեղչ) համակարգի ստեղծում, որոնք ձեռք են բերում ձեռնարկության արտադրանքը՝ արտադրանքի համար վճարումը արագացնելու նպատակով (կանխավճարի կիրառում, վաղաժամկետ վճարում՝ պայմանագրի համեմատությանը, ժամանակին վճարում) ու այն հաճախորդների համար զեղչային համակարգի ստեղծում, ինչը մեծացնում են ապրանքի գնումների ծավալը ինչպես նաև մեներջերների վճարման համակարգի կիրառում, ովքեր պատասխան են տալիս արտադրանքի մատակարարման համար՝ կախված դրամական միջոցների ստացման ծավալից այն հաճախորդներից, ում հետ նրանք աշխատում են:

6. Ծախսերի կրճատումը արտադրական և առևտրային գործունեության մեջ³, ինչը ենթադրում է ընդհանուր տնտեսական ծախսերի կրճատում (ավտոտրանսպորտի ծախսեր, ներկայացուցչական ծախսեր, գործուղման, պաշտպանության ծախսեր և այլն), պաշարների խնայողության տեխնոլոգիաների ներդրում, էներգոպաշարների սպառման խիստ վերահսկողության սահմանում, իր արտադրական ոլորտի նեղացում՝ արտադրական ցիկլի որոշ մասի զիջելով կամ օժանդակ աշխատանքները զիջելով ուրիշ ձեռնարկության, արտադրանքի գովազդի ծախսերի կրճատում՝ գովազդային բյուջեի վերանայման հաշվին, արտադրական գործընթացի մեխանիզացիայի բարձրացում և ձեռքի աշխատանքի կրճատում, ներկրված նյութերի փոխարինում հայրենական արտադրության արտադրանքով, աշխատանքի վարձատրության առաջավոր ձևերի ներդրում, որոնք ապահովում են աշխատողների աշխատանքի արտադրողականության աճը, ինչպես նաև նյութական թափոնների ծավալի նվազեցում և նրանց օգտագործման հնարավորության դիտարկումը զուգահեռ արտադրանքի արտադրության համար:

7. Դրամական միջոցների արտահոսքի նվազեցում⁴, ինչը ենթադրում է ներդրողների բաժանումը կատեգորիաների՝ ըստ նրանց կարևորության աստիճանի՝ կազմակերպության գործու-

¹ К. К. Журиков, Корпоративные финансы. (Учебник), 2004, п.5.3 Оптимизация производственных запасов.

² С.С. Донцов, Оптимизация производственной мощности – одна из важнейших задач планирования производственно-экономической деятельности, Республика Казахстан.

³ Ускорение оборачиваемости оборотных средств как способ снижения текущих финансовых потребностей, enegmf.ru.

⁴ Галууллина Э.Ш., "О факторах снижения издержек предприятия, www.rae.ru/forum2012/pdf/0325.pdf.

նեության համար, վճարումների ժամկետների մեծացումն ավելի քիչ կարևոր ներդրողներին, ներդրողների որոնում, ովքեր վճարման ավելի ձեռնտու պայմաններ են առաջարկում կամ ավելի որակով արտադրանք:

8. Վարկային պարտավորվածության վերակազմավորում¹, որը իր մեջ ներառում է վճարումների ժամկետի երկարաձգում (վճարի տեղափոխումը ավելի ուշ ժամկետի) և տարածամկետում (վճարի մասնատում), փոխադարձ վճարային պահանջների փոխադարձ հաշվարկ, վարկատուների թվաքանակի որոշում, որոնց պարտքերը հարկավոր է ամբողջովին մարել կամ մասնակիորեն առաջին հերթին, պարտապանի ակտիվներով վարկատուի կողմից պարտքի մարում (վարկատուին պարտապանի ունեցվածքը փոխանցելու միջոցով, ինչպես նաև նյութական պաշարները, արտադրանքը, ծառայությունները և այլն) և ֆինանսական պաշարների լրացուցիչ աղբյուրների որոնում՝ բաժնետոմսերի էմիսիայի, բաժնետոմսերի հաշվին:

9. Ղեբիտորական պարտքի վերակազմավորում², ինչը ենթադրում է փոխադարձ վճարային պահանջների փոխադարձ հաշվարկ, երկարաձգված ժամկետով և ժամկետանց պարտքերով գնորդների հետ հաշվարկների սիստեմատիկ վերահսկում, գնորդների վճարունակության գնահատում և առևտրային վարկի ներկայացման քաղաքականության որոշում, զեղչերի կիրառում վճարման արագացման փոխարեն, ղեբիտորի կողմից պարտքի մարման հաշվին արժեթղթերի փոխանցում (պետական բաժնետոմսեր, հայտնի ընկերությունների բաժնետոմսեր և այլն)՝ փոխադարձ համաձայնությամբ, ղեբիտորի կողմից իր ունեցվածքի մի մասը պարտքի մարման համար փոխանցելը, արտադրանքի արժեքից զեղչերի համակարգի կիրառում վաղաժամկետ, բեռնաթափված արտադրանքի համար ժամանակին վճարման դեպքում և ժամկետանց վճարման համար սանկցիաների նվազեցում և պարտքի վաճառք 10-15% դիսկոնտով երրորդ կողմին կամ ղեբիտորին՝ ղեբիտորից:

10. Բանկային վարկերի վերակազմավորում³, որը կարելի է իրականացնել վարկի պայմանների վերանայման միջոցով (հիմնական պարտքի վճարման երկարաձգում, տոկոսադրույքի նվազեցում), կարճաժամկետ վարկի վերաձևակերպումը երկարաժամկետի, ֆինանսավորման պայմանագրի կնքում՝ զիջելով պահանջի իրավունքին (ֆակտորինգի պայմանագիր):

11. Վաճառքի ծավալների մեծացում⁴, ինչը կհաջողվի իրականացնել մարկետինգային ուսումնասիրություններ և դիտարկումներ կատարելով, իր արտադրանքի մրցակցային առավելությունների որոշումով և նրանցից օգտվելու հնարավորություններով, իրացվող արտադրանքի ծավալի և գնի վերլուծության կատարումով, գնի իջեցումով՝ շուկայում ձեռնարկության բաժինը մեծացնելու համար:

12. Վաճառքի ծավալները մեծացնելու համար մարկետինգի կազմակերպման կատարելագործումը⁵ որը կարելի է իրականացնել արտադրանքի տեսակների որոնման հաշվին, որոնց նկատմամբ գոյություն ունի չբավարարված վճարունակ պահանջարկ, տեղեկացնել սպառողներին արտադրանքի բնույթի, նրա որակի, արտադրանքի «ուժեղ կողմերի» շեշտումով ծառայությունների մասին, մատակարարման և դիլերային ցանցի ձևավորում, արտադրանքի հետվաճառքային սպասարկման համակարգի ձևավորում, ներդրողների հետ երկարաժամկետ հարաբերությունների զարգացում՝ ներդրման որակի ապահովման և ծախսերի նվազեցման համար:

13. Կառավարման կազմակերպման կատարելագործումը⁶, ինչը ենթադրում է կառավարման օղակների թվի և մակարդակների կրճատում, կառավարման ֆունկցիաների կենտրոնացում կամ ապակենտրոնացում՝ կախված արտադրության կոնկրետ պայմաններից, նոր ֆունկցիոնալ դրույթների մշակում, որոնք նվազեցնում են ֆունկցիաների կրկնօրինակումը, նոր ֆունկցիոնալ ենթաբաժինների ստեղծում, որոնք պատասխանատու են ձեռնարկության ֆինանսական առող-

¹ И.В. Антоненко. /п.1.1 Сравнительный анализ оттока денежных средств при приобретении имущества с использованием различных источников финансирования./Практическое пособие зилингиполучателя: Право, Налоги, Бухучет, Финансы лизинговой сделки, 2007.

² А. Ф. Гарифулин, Реструктуризация дебиторской задолженности, экономист Журнал «Планово-экономический отдел» №11 за 2012 год.

³ Н. Придачкина, Реструктуризация кредита, как способ сохранить безупречную кредитную историю, АКБ «СОЮЗ» (ОАО) 2009 Екатеринбург.

⁴ Kelley Robertson, How to welcome your customers and increase your sales. <http://www.buslgroup.com>.

⁵ Валерий Кузьмин, Совершенствование маркетинга в организациях, Е.М. Королькова, Организация маркетинга на предприятиях, Тамбов 2001.

⁶ Мосинцев А. В, Совершенствование организации управления предприятиями транспорта, 2004 Нижний Новгород

ջացման համար, արդյունավետ տեղեկատվության ապահովում, ղեկավար անձնակազմի դրդապատճառների մեթոդների մշակում՝ ձեռնարկության գործունեության արդյունքում, միջոցառումների ներդրում՝ ուղղված փաստաթղթային շրջանառության նվազեցմանը (կառավարման ապարատում բյուրոկրատիայի նվազեցում, ինչպես նաև կառավարման արտադրական և կազմակերպչական կառուցվածքի բարելավում և այլն):

14. Հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագործում¹՝ ունեցվածքի վերագնահատման՝ կապված շուկայական պայմանների փոփոխության հետ, ինչպես նաև տեղեկատվական ծրագրերի ներդրման միջոցով՝ ըստ հաշվապահական փաստաթղթերի մշակման:

Որպես օրինակ ներկայացվում է ՀՀ, Լոռու մարզի, Կաթնառատ համայնքում «Ձորագետ-5» ՓՋԷԿ-ի պողպատյա խողովակաշարի փոխարինումը ապակյա մանրաթելայն (GRP) խողովակաշարով: Նշված գործողությունները իրականացնելու համար պետք է փաստացի եղած խողովակները վաճառվեն և նույն գնով գնվեն ու տեղադրվեն ավելի նոր և ջրի բացթողունակության ավելի բարձր աստիճան ունեցող GRP խողովակներ:

Աղյուսակ 1 և 2-ում ներկայացվում է պողպատյա խողովակաշարով ՓՋԷԿ-ի շահագործումից ստացվող թե՛ տեխնիկական, թե՛ ֆինանսական ցուցանիշները:

Աղյուսակ 1

ՓՋԷԿ-ի շահագործումից ստացվող տեխնիկական ցուցանիշները 2012թ.

Ամիսներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդ.
Հիդրոկայանով անցնող ջրի արագությունը (խոր.մետր/վրկ.)	0.6	0.52	0.67	4.2	7.24	4.91	2.89	1.72	1.36	1.11	1	0.73	
Հաշվարկային ճնշում /մետր/	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	
Աշխատող սարքավորումների քանակը /հիդրոտուրբիններ/	1	1	1	3	3	3	2	1	1	1	1	1	
1-ին գեներատորի տեսակարար հզորությունը /կվտ/	0.2	0.2	0.3	522	522	408	400	0	0	0	439	309.5	
2-րդ գեներատորի տեսակարար հզորությունը /կվտ/	0	0	0	-260.1	-260.1	-202.9	-398.8	0.8	0.6	0.4	-438.6	-309.2	
3-րդ գեներատորի տեսակարար հզորությունը /կվտ/	0	0	0	-260.1	-260.1	-202.9	0	0	0	0	0	0	
<u>Ընդհանուր հզորությունը</u>	<u>0.2</u>	<u>0.2</u>	<u>0.3</u>	<u>1.8</u>	<u>1.8</u>	<u>2.2</u>	<u>1.2</u>	<u>0.8</u>	<u>0.6</u>	<u>0.4</u>	<u>0.4</u>	<u>0.3</u>	
աշխատաժամանակի չափաքանակը /ժամ/	744	672	744	720	744	720	744	744	720	744	720	744	
Էլեկտրաէներգիայի արտադրությունը /հազ.կվտ.ժ/	173.3	131.1	193.3	1,329.6	1,329.6	1,552.4	924.7	563.1	402.6	324.1	316.0	230.2	7,470
ընդհանուր վաճառք (մլն.ՀՀ դրամով, առանց ԱԱՀ)	3.4	2.6	3.8	26.1	26.1	30.4	18.1	11.0	7.9	6.4	6.2	4.5	146.4
ընդհանուր վաճառք (մլն.ՀՀ դրամով, այդ թվում ԱԱՀ)	4.1	3.1	4.5	31.3	31.3	36.5	21.7	13.2	9.5	7.6	7.4	5.4	175.7

¹ Д.А. Ендовицкий, Р.Р. Рахматулина. Бухгалтерский и налоговый учет на малом предприятии, 2007 Москва.

ՓՐԷԿ-ի շահագործումից ստացվող ֆինանսական ցուցանիշները 2012թ.

Ցուցանիշներ	Կանխատեսումներ	Մուտքային տվյալներ	Ընդամենը Դասույթ
Ինվեստիցիոն ծախսեր	\$3 190 000		
ԱԱԶ-ի նվազեցումների գումարը (16.67% ինվեստիցիոն ծախսերից)	\$531 773		
տարեկան էլեկտրաէներգիայի արտադրություն	7 470 000		
ընդհանուր վաճառք (ՀՀ դրամով, առանց ԱԱՀ)	146 412 000		
ընդհանուր վաճառք (ԱՄՆ դոլարով, առանց ԱԱՀ)	\$361 511		
ընդհանուր վաճառք (ԱՄՆ դոլարով, այդ թվում ԱԱՀ)	\$433 813	ընդամենը վաճառք 10 տարում	\$4 338 133
տարեկան ծախսերը /վաճառքի 5%-ի սահմաններում/	\$20 734	10 տարվա վաճառքից կուտակված ԱԱՀ 16.67%	\$723 167
միջին տարեկան շահույթը	\$393 940	հարկերից և հաշվանցումներից հետո, 10 տարվա ընթացքում ստացված շահույթը	\$4 146 740
վարկի սպասարկման միջին տարեկան ծախսերը, այն դեպքում, երբ վարկի գումարը հավասար է <u>2.700.000 ԱՄՆ դոլ.</u>	\$391 000		
շահութահարկ /միջին տարեկան/	\$588		
զուտ շահույթ տարում	\$2 352		

Աղյուսակ 3 և 4-ում ներկայացվում է GRP խողովակաշարով ՓՐԷԿ-ի շահագործումից ստացվող թե՛ տեխնիկական, թե՛ ֆինանսական ցուցանիշները:

GRP խողովակաշարով ՓՐԷԿ-ի շահագործումից ստացվող տեխնիկական ցուցանիշները

Ամիսներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդ
Հիդրոկայանով անցնող ջրի արագությունը (խոր.մետր/վրկ.)	0.63	0.54	0.70	4.38	7.55	5.12	3.02	1.79	1.42	1.16	1.04	0.76	
Հաշվարկային ճնշում /մետր/	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	63.9	
Աշխատող սարքավորումների քանակը /հիդրոտուրբիններ/	1	1	1	3	3	3	2	1	1	1	1	1	
1-ին գեներատորի տեսակարար հզորությունը /կՎտ/	0.2	0.2	0.3	522	522	408	400	0	0	0	439	309.5	
2-րդ գեներատորի տեսակարար հզորությունը /կՎտ/	0	0	0	-260.0	-260.1	-202.9	-398.7	0.8	0.6	0.5	-438.5	-309.2	
3-րդ գեներատորի տեսակարար հզորությունը /կՎտ/	0	0	0	-260.0	-260.1	-202.9	0	0	0	0	0	0	
<u>Ընդհանուր հզորությունը</u>	<u>0.2</u>	<u>0.2</u>	<u>0.3</u>	<u>1.9</u>	<u>1.9</u>	<u>2.2</u>	<u>1.3</u>	<u>0.8</u>	<u>0.6</u>	<u>0.5</u>	<u>0.5</u>	<u>0.3</u>	
աշխատաժամանակի չափաքանակը /ժամ/	744	672	744	720	744	720	744	744	720	744	720	744	
Էլեկտրաէներգիայի արտադրությունը /հազ.կՎտ.ժ/	180.8	136.8	201.7	1,387.4	1,387.4	1,619.9	964.9	587.6	420.1	338.2	329.8	240.2	7,794.9

Ամիսներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդ
ընդհանուր վաճառք (նլն.ՅՅ դրամով, առանց ԱԱՀ)	3.5	2.7	4.0	27.2	27.2	31.8	18.9	11.5	8.2	6.6	6.5	4.7	152.8
ընդհանուր վաճառք (նլն.ՅՅ դրամով, այդ թվում ԱԱՀ)	4.3	3.2	4.7	32.6	32.6	38.1	22.7	13.8	9.9	8.0	7.8	5.7	183.3

Աղյուսակ 4

GRP խողովակաշարով ՓՅԷԿ-ի շահագործումից ստացվող ֆինանսական ցուցանիշները

Ցուցանիշներ	Կանխատեսումներ	Մուտքային տվյալներ	Ընդամենը Հատույթ
Ինվեստիցիոն ծախսեր	\$3 190 000		
ԱԱՀ-ի նվազեցումների գումարը (16.67% ինվեստիցիոն ծախսերից)	\$531 773		
տարեկան էլեկտրաէներգիայի արտադրություն	7 794 945		
ընդհանուր վաճառք (ՅՅ դրամով, առանց ԱԱՀ)	152 780 922		
ընդհանուր վաճառք (ԱՄՆ դոլարով, առանց ԱԱՀ)	\$377 237		
ընդհանուր վաճառք (ԱՄՆ դոլարով, այդ թվում ԱԱՀ)	\$452 684	ընդամենը վաճառք 10 տարում	\$4 526 842
տարեկան ծախսերը /վաճառքի 4.5%-ի սահմաններում/	\$19 368	10 տարվա վաճառքից կուտակված ԱԱՀ 16.67%	\$754 625
միջին տարեկան շահույթը	\$411 031	հարկերից և հաշվանցումներից հետո, 10 տարվա ընթացքում ստացված շահույթը	\$4 303 991
վարկի սպասարկման միջին տարեկան ծախսերը, այն դեպքում, երբ վարկի գումարը հավասար է <u>2.700.000 ԱՄՆ դոլ.</u>	\$391 000		
շահութահարկ /միջին տարեկան/	\$4 006		
զուտ շահույթ տարում	\$16 025		

ԱԱՀ-ն ենթակա է հաշվանցման, 16.67% սահմաններում փաստացի ներդրումների հաշվին, ՅՅ պետ բյուջեի դեբիտորական պարտքի մաշվածության հաշվին

Ինչպես երևում է վերը նշված աղյուսակներում ապակյա մանրաթելային խողովակների տեղադրման պարագայում, էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա 4,35%-ով, տարեկան կտրվածքով կավելանա զուտ շահույթը 13700 ԱՄՆ դոլարին համարժեք ՅՅ դրամ, ինչպես նաև զգալի ձևով կկրճատվեն խողովակաշարի շահագործման և պահպանման ծախսերը:

Առևտրային կազմակերպությունները, օգտագործելով ներքին հնարավորությունները, իրենց ֆինանսական դրության բարելավմանը կարող են հասնել կազմակերպության հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման, կապիտալ ներդրումների կրճատման, արտադրական պաշարների օպտիմալացման, արտադրական գործընթացի օպտիմալացման, դրամական միջոցների շրջանառության արագացման, արտադրական և առևտրային գործունեության մեջ ծախսերի կրճատման, դրամական միջոցների արտահոսքի նվազեցման, վարկային ու դեբիտորական պարտավորվածության վերակազմավորման, վաճառքի ծավալների մեծացման ու դրա հետ կապված մարկետինգի կազմակերպման կատարելագործման հաշվին, կառավարման կազմակերպման կատարելագործման, ինչպես նաև հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագործման հաշվին:

**Финансовое оздоровление предприятия за счет использования
внутренних возможностей**

Аннотация

Финансовое оздоровление предприятия в большей степени зависит от возможности правильного и эффективного менеджмента предприятием, четкого видения рынка и гибкого управления и поиска передовых технологий и вариантов без особо больших расходов за счет собственных возможностей финансового благоустройства.

Arman Hovhannisyan

**Improvement of financial performance in private companies
by using internal resources**

Abstract

Improvement of financial performance in private companies largely depends on the ability to manage the company efficiently; deep market insight; management open to changes; and search for new technology and options that don't require substantial investments due to use of own resources.

ՓԱՌՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՆՄ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ հայցորդ

ՍՏՎԵՐԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ԶԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Գաղտնիք չէ, որ ամբողջ աշխարհում բազմաթիվ կազմակերպությունների գործունեությունն ապահով կերպով թաքցվում է «ստվերում»: Զարկ է նշել, որ ստվերային հոսքերի մասնակիցներ են ինչպես օրենքի պահանջների համաձայն ստեղծված, այնպես էլ ապօրինի գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտները: Նրանց կողմից արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների իրացումից ստացվող եկամուտը չի արտացոլվում համապատասխան հաշվետվություններում, հետևաբար չի դիտվում որպես հարկման օբյեկտ: Այսինքն՝ այդ եկամտից հարկեր չեն գանձվում, ինչն էլ վնաս է հասցնում երկրի տնտեսությանը¹:

Նշված կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում ժամանակ առ ժամանակ ընտրություն են կատարում օրինական և ստվերային գործելաոճերի միջև:

Ստվերային վարքագծի դրսևորման ընտրությունը հիմնավորվում է դրա՝ տնտեսապես ձեռնտու լինելու հանգամանքով, ինչը, առաջին հերթին, վկայում է պետության կողմից համապատասխան օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտության մասին: Ընդ որում, տնտեսավարող սուբյեկտների հակաօրինական գործունեությունը բնույթով հետզհետե առավել դժվար հայտնաբերելի է դառնում՝ սկսած օրենքի ուղղակի խախտմամբ հարկեր չվճարելուց մինչև օրենսդրական երկիմաստություններից օգտվելով՝ հարկումից խուսափումը և, հետևաբար, առավել բարդանում է դրանց հայտնաբերումն ու բնորոշումը որպես օրենքի պահանջների խախտում: Զաճախակի են դառնում նաև կազմակերպված, խմբային բնույթ կրող հարկային իրավախախտումները:

Այսպես, օրինակ, ձևական (կեղծ, անապրանք) գործարքների միջոցով ֆինանսական փաստաթղթերում արտացոլվում է իրականում տեղի չունեցող ապրանքների և ծառայու-

¹ Եղյան Գ., Տնտեսավարող սուբյեկտների օպտիմալ վարքագիծը և հարկային վարչարարության հիմնախնդիրները, Եր., 2009, էջ 196:

թյունների շարժ երկու տնտեսավարող սուբյեկտների միջև, այսինքն՝ գումար է «փոխանցվում» այնպիսի ապրանքների դիմաց, որոնք ամենևին էլ չեն մատակարարվել:

Ի տարբերություն նշված մոտեցման՝ օրենքի շրջանակում գործունեություն ծավալելու դեպքում կազմակերպությունը հնարավորություն է ունենում իր իրավունքների պաշտպանության համար դիմել դատական և գործադիր մարմիններին, բացի այդ, գերծ մնալ հարկային և վերահսկիչ այլ մարմինների կողմից իրականացվող լրացուցիչ ստուգումներից:

Հարկատու տնտեսավարող սուբյեկտներին պետության վերահսկողությունից «դուրս մղող» հիմնական պատճառներից են քաղաքական և տնտեսական անկայուն իրավիճակը, գործող օրենսդրության անկատարությունը, գործարարության խթանման համար պետության ոչ ճիշտ քաղաքականությունը, դատական համակարգի և վերջինիս որոշումներն իրականացնող մարմինների անարդյունավետ աշխատանքը, այլ կերպ ասած՝ տնտեսական վարքագծի օրինականության վերաբերյալ որոշումների կայացման վրա իրենց էական ազդեցություն են թողնում ինչպես հարկային դրույքաչափերի, տույժերի և տուգանքների մեծությունները, այնպես էլ պետական վերահսկող մարմինների օրինապահ աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը, համապատասխան ստորաբաժանումներում հովանավոր ունենալու ծախսերի մեծությունը, զանազան ռիսկերից ապահովագրվելու ծախսերը և կազմակերպության շահույթի մեծության վրա ներգործող մի շարք այլ գործոններ:

Հայաստանի Հանրապետության տնտեսությունը վերջին մի քանի տարիներին արձանագրում է տպավորիչ տնտեսական աճ՝ 10 և ավելի տոկոս: 2013թ. պետական բյուջեի ծախսային մասը հատեց 800 մլրդ դրամի սահմանագիծը: Շինարարությունը և նրան սպասարկող ճյուղերը դառնում են տնտեսական աճի լոկոմոտիվը, պետական վիճակագրությունն աճ է արձանագրում գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, մետալուրգիայի, վերամշակող արդյունաբերության ոլորտներում: Պետական կառավարման ապարատը ջանքեր է գործադրում իր հիմնական գործառույթի՝ հարկերի հավաքագրման և վերաբաշխման քաղաքականությունն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ: Միջազգային ֆինանսական կառույցները՝ Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիան, շարունակում են ակտիվորեն համագործակցել կառավարության հետ՝ նրան տրամադրելով խոշոր ֆինանսական միջոցներ՝ սոցիալական ենթակառուցվածքները վերականգնելու, ճանապարհաշինության, ոռոգման ցանցի և խմելու ջրի գծերի վերանորոգման և վերականգնման, կառուցվածքային բարեփոխումներ իրականացնելու համար:

Եթե դիտարկելու լինենք ստվերային տնտեսության ու ստվերային եկամուտների ազդեցությունը հասարակության այն խավերի վրա, որոնք որևէ կերպ չեն առնչվում այդ ոլորտին, կամ էլ նրանց տնտեսական մասնակցությունը ստվերի ձևավորմանը ինքնաբերաբար է, ուստի հարց է առաջանում թե ինչպես է ազդում ՀՀ քաղաքացու վրա: Առաջին հայացքից ստվերային տնտեսությունը և ստվերային եկամուտները լուծում են բնակչության մի հատվածի զբաղվածության խնդիրը՝ մեղմելով սոցիալական լարվածությունը: Սակայն, դրա հետ մեկտեղ, ստվերի գոյության պատճառով է, որ օրինական աշխատող մեկ հայաստանցուն բաժին է ընկնում երեք թոշակառու, ինչը արգելակում է կենսաթոշակների աճը, բյուջեն զրկվում է մուտքերից, որոնց ծավալները կարող են համարժեք լինել այժմյան հարկային մուտքերին: Այսինքն, որքան մեծ է տնտեսության մեջ ստվերային եկամուտների բաժինը, այնքան քիչ ռեսուրսներ կան կառավարության ձեռքում աղքատության դեմ պայքարելու համար: Աղքատության դեմ պայքարի՝ կառավարության հաստատած ծրագրերը ենթադրում են ստվերի աստիճանական բացահայտում, ինչից էլ ակնկալվող գումարները, ըստ էության պետք է ուղղվեն աղքատության կրճատմանը:

Որպես ստվերային եկամուտների դեմ պայքարի հիմնական գործիք՝ ընտրվել է հարկային և մաքսային վարչարարության բարելավումը, մեծ ուշադրություն է դարձվում օրենսդրական դաշտի բարելավմանը¹: Սակայն հարկ է փաստել, ՀՀ տնտեսության մեջ, զոնե վերջին 10 տարիներին, կենսաթոշակների, պետական ծառայողների աշխատավարձերի, նպաստների կամ սոցիա-

¹ www.taxservice.am

լական այլ հատկացումների բարձրացումը ստվերային տնտեսության ծավալի կրճատման հետ որևէ կապ չունի, կամ էլ այդ մասին ընդունված չէ բարձրաձայնել: Ընդունվել է կառավարության որոշում, ըստ որի 2008թ. հունվարից կենսաթոշակները կբարձրանան 60%ով: Տարրական տրամաբանության շրջանակներից դուրս է այն հարցը, որ կառավարությունը կարող է տեղյակ լինել, թե առաջիկա ամիսներին հարկային և մաքսային մարմինները ստվերային տնտեսական գործունեության ինչպիսի ծավալ կարող են բացահայտել, և որքան միջոցներ դրանից հետո կմուտքագրվեն պետբյուջե: Եթե կառավարությունն այդ մասին նախապես տեղյակ է, ուրեմն ողջ ստվերային տնտեսությունը գտնվում է նրա տեսանելիության դաշտում: Այնուամենայնիվ, կապը ստվերային տնտեսության որոշակի ծավալի բացահայտման և բնակչության սոցիալական ապահովվածության բարձրացման միջև դեռևս տեսանելի չէ: Ստվերային մեծածավալ տնտեսության գոյությունը խաթարում է ոչ միայն նորմալ տնտեսական հարաբերությունները, այն ազդում է նաև զնագոյացման, անհավասար մրցակցային դաշտի ձևավորման, արտոնյալ դիրք ունեցող ընկերությունների զարգացման վրա: Վերջին տարիներին ավանդույթ է դարձել լրատվամիջոցներում 300 խոշոր հարկատուների ցանկը տպագրելը³: Առաջին իսկ հայացքից պարզ է, որ մենաշնորհային դիրքեր գրաված ընկերությունները, որոնք մեծ մասամբ ներկրում են բնակչության ամենօրյա օգտագործման ապրանքներ, բնավ էլ չեն գտնվում այդ ցուցակի գոնե առաջին տասնյակում: Տպավորությունն այնպիսին է, որ մեր երկրում արդեն գործում են տնտեսվարող հսկաներ, որոնց կողքին ներկրող ընկերությունների մուծած հարկերի չափը նվազ է: Սակայն, ցավոք, խոշոր հարկատուների ցանկը գլխավորում են հիմնականում ծառայություններ մատուցող ընկերությունները՝ Արմենթելը, ՅԵՑ-ը և այլն: Օբյեկտիվ լինելու համար նշենք, որ կան նաև խոշոր ընկերություններ, որոնք հարկատուների ցուցակում հանդես են գալիս մի խումբ ՄՊԸ-ների տեսքով և այդ պատճառով տեղ չեն զբաղեցում առաջին տասնյակում:

Ստվերային եկամուտների նվազեցման ուղղությամբ ՀՀ ՊԵԿ-ը մշտապես ստուգումներ է իրականացնում, որոնց արդյունքում ոչ միայն բացահայտվում են ստվերային եկամուտներ ունեցող տնտեսվարողները, այլ նաև այդ ամենի արդյունքում փորձում են բարձրացնել հարկման արդյունավետությունը՝ օգտագործելով տարբեր հարկային լծակներ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի կողմից ստվերային եկամուտների բացահայտման նպատակով 2012թ. իրականացվել է ընդհանուր թվով 20205 ստուգում, ինչը դրա նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ կրճատվել է 1093-ով կամ 5.1%-ով³

Աղյուսակ 1

**2010-2012 թթ. իրականացված ստուգումների քանակը
և դրանց արդյունքում հայտնաբերված գումարները**

Դ/Դ	Ստուգման տեսակ	Ստուգումների քանակ, հատ			Հայտնաբերված գումար, մլն դրամ		
		2010	2011	2012	2010	2011	2012
1	Բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում (ԲՍ)	2377	2246	1858	23022.5	23717.2	16718.1
2	Բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության լուծարային ստուգում (ԼՍ)	1665	1460	868	395.9	195.1	135.8
3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարների ճշտության ստուգում (Սոց)	333	330	109	267.7	191.0	153.0
4	Առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների ու դրանց գների գրանցման ճշտության ստուգում (28h)	1699	1656	633	2151.5	1919.9	678.6

Գ/Գ	Ստուգման տեսակ	Ստուգումների քանակ, հատ			Հայտնաբերված գումար, մլն դրամ		
		2010	2011	2012	2010	2011	2012
5	Աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում (ՉԱ)	2938	4058	5248	247.5	445.0	493.1
6	Ակցիզային դրոշմանիշների կիրառման ճշտության ստուգում (ԱԿ)	215	295	219	0.9	3.4	12.6
7	ՀՂՄ-ների կիրառման ճշտության ստուգում (ՀՂՄ)	11795	9705	9523	911.5	1332.7	1363.1
8	Հաստատագրված վճարների մասին օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների ճշտության ստուգում (ԵՄ)	1537	1120	1373	157.6	229.4	218.5
9	Արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և այդ օրենքների հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի կիրառման պահանջների կատարման ճշտության ստուգում (Արժ.)	93	142	69	2.9	6.2	3.3
10	Առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման ստուգում (ՕՍ)	406	279	303	130.1	540.9	165.5
11	Դրամարկղային գործառնությունների իրականացման ճշտության ստուգում (ԴրկղՍ)	9	7	2	14.3	8.2	0.6
12	Ընդամենը	23067	21298	20205	27302.6	28589.1	19942.3

Ստուգումների արդյունքում արձանագրված ընդհանուր գումարը կազմել է 19942.3 մլն դրամ, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ նվազել է 8646.9 մլն դրամով կամ 30.2% -ով: Բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների (այսուհետ՝ ՀՂՄ) կիրառման ճշտության ստուգումների, 2012թ. իրականացվել է 10682 ստուգում՝ 2011թ. նույն ցուցանիշից 911-ով կամ 7.9%-ով պակաս (աղյուսակ 1):

Բացառությամբ ՀՂՄ-ների կիրառման ճշտության ստուգումների, 2011թ. իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված գումարը կազմել է 18579.1 մլն դրամ՝ 2010 թ. նույն ցուցանիշի համեմատ 8677.3 մլն դրամով կամ 31.8%-ով պակաս (աղյուսակ 1):

2011թ. իրականացված ստուգումների 47.1%-ը ՀՂՄ-ների կիրառման ճշտության ստուգումներն են, դրանց հաջորդում են աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգումները՝ 26%, այնուհետև բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգումները՝ 9.2%: Նախորդ տարի ստուգումների մեջ ևս գերակշռել են ստուգման այս տեսակները՝ ՀՂՄ-ների կիրառման ճշտության ստուգումները, վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգումները և բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգումները՝ համապատասխանաբար եղել են 45.6%, 19.1% և 10.5%¹:

2011թ. իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված ընդհանուր գումարի 83.8%-ը կազմում են բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգումներով հայտնաբերված ստվերային եկամուտները: Նախորդ տարի այդ ցուցանիշը կազմել է 83% (աղյուսակ 2):

¹ ՀՀԴԵԿ տարեկան հաշվետվություն, 2011:

2008-2011 թթ. հարկ վճարողների քանակը, իրականացված ստուգումների քանակը և դրանց արդյունքում հայտնաբերված գումարը՝ ըստ իրացման շրջանառության ծավալի

Գ/Գ	Ցուցանիշ	Մինչև 58.35 մլն դրամ իրացման շրջանառություն ունեցող (ներառյալ)		58.35 մլն դրամից 100.0 մլն դրամ իրացման շրջանառություն ունեցող (ներառյալ)		100.0 մլն դրամից ավելի իրացման շրջանառություն ունեցող (առանց խոշոր հարկ վճարողների)		Խոշոր հարկ վճարողներ (ըստ գործող ցանկի)		Ընդամենը	
		2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.
1	Հարկ վճարողների քանակ	41985	47604	1194	1127	2633	2793	467	445	46279	51969
2	Ստուգումների քանակ (բացառությամբ ՀԴՄ)	8580	11156	1047	959	3798	3773	1171	1213	14596	17101
3	ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգումների քանակ	9422	9419	120	99	324	310	57	34	9923	9862
4	Ստուգումներով հայտնաբերված գումար (մլն դրամ) (բացառությամբ ՀԴՄ)	1,983.1	1,211.4	2,615.1	808.0	9,614.3	5,097.7	2,878.3	8,210.2	17,090.8	15,327.3
5	ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգումներով արձանագրված գումար (մլն դրամ)	1,288.20	1,047.2	13.6	10.1	41.5	38.2	7.0	2.1	1350.3	1097.6

Հաշվետու տարում ստուգումների արդյունքում արձանագրված ստվերային եկամուտները կազմել են հարկային մարմնի կողմից վերահսկվող հարկային եկամուտների և պետական տուրքի 3.1%-ը: Հարկային մարմնի կողմից 2011թ. իրականացվել են նաև 174 մասնակի ստուգում, 68 վերստուգում, 1 պարզեցված հարկի ստուգում և 219 ակցիզային դրոշմանիշների կիրառման ճշտության ստուգում, որոնց արդյունքում արձանագրված գումարները կազմել են համապատասխանաբար 20.4 մլն դրամ, 4613.6 մլն դրամ, 0.2 մլն դրամ և 12.6 մլն. դրամ: 2011թ. կատարվել է 4250 հսկիչ գնում՝ 2010թ. նույն ցուցանիշից 2489-ով կամ 141.3%-ով ավելի: Հսկիչ գնումների արդյունքում արձանագրվել է 8.4 մլն. դրամ (աղյուսակ 2):

Ամփոփելով՝ հարկ է ընդգծել, որ ստվերային եկամուտների նվազեցումն ու հարկման արդյունավետությունը ուղղակիորեն փոխկապակցված են: Վերջինս, սակայն, դեռևս ենթակա է կատարելագործման, ինչ ուղղությամբ էլ ՀՀ-ում իրականացվում են հարկային օրենսդրության էական վերափոխումներ:

Гарник Нерсисян

Основные подходы к оценке теневых доходов

Аннотация

В статье показано, что сокращение теневых доходов субъектов хозяйствования и эффективность налогообложения непосредственно взаимосвязаны. Но система налогообложения все еще нуждается в совершенствовании, в направлении которого и существенные изменения налогового законодательства получили постоянный характер.

Garnik Nersisyan

Main approaches to estimating unregistered incomes

Abstract

The article shows that improvement of the efficiency of tax administration and reduction of unregistered incomes are directly interconnected. However, tax administration needs further improvements regardless how major tax reforms are being constantly implemented in Armenia.

**ՀԱՐԿՄԱՆ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՅՈՒՄ**

Միջազգային օրենսդրաիրավական փորձի ուսումնասիրության արդյունքում՝ փոքր և միջին ձեռնարկությունները (այսուհետև ՓՄՁ) սահմանվում են որպես պետական կարգավորման հատուկ սուբյեկտներ: Ավելին, վերջիններիս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ՓՄՁ հարկումը փաստացիորեն ներառվում է հարկման այլ խմբի մեջ: Այն բացատրվում է տնտեսական արդարացիության սկզբունքի գործնական կիրառությամբ, համաձայն որի պետք է ՓՄՁ-ների ինքնաֆինանսավորման փոքր լինելու պատճառով հարկման ցածր բեռի սահմանումը նպատակ է հետապնդում պետության կողմից տնտեսական փոխհատուցումների և աջակցությունների մեխանիզմների տրամադրում¹:

Սովորաբար արտերկրյա փորձի ուսումնասիրության արդյունքում առանձնացնում են ՓՄՁ-ների հարկման երկու հիմնական գործոններ՝

ա. քանակական գործոններ

բ. որակական գործոններ:

Քանակական գործոններից են տվյալ բիզնեսում ներգրավված աշխատակիցների թվաքանակը, շրջանառության ծավալները, ակտիվները, կապիտալը, եկամուտները: Ընդ որում ՓՄՁ-ների դասակարգման մեջ միայն աշխատողների թվաքանակի գործոնն է, որ բոլոր երկրների համար դիտարկվում է որպես միասնական գործոն²:

Համաձայն Եվրոստատի դասակարգման «աշխատողների թիվ» չափանիշի առանձնացնում ենք ՓՄՁ-ների 4 տեսակներ, որոնք ներկայացված են աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1

ՓՄՁ-ների տեսակներն՝ ըստ աշխատողների թվաքանակի

Ձեռնարկության տեսակը	Աշխատողների թվաքանակը
միկրո ձեռնարկություններ	1-9
փոքր ձեռնարկություններ	10-49
միջին ձեռնարկություններ	50-249
խոշոր ձեռնարկություններ	250 և ավելի

Նշենք, որ աղյուսակ 1-ում բերված տվյալները միանշանակ չեն բոլոր երկրների համար: Այն ավելի ընդունելի է Արևմտյան Եվրոպայում:

Որպես ՓՄՁ-ների դասակարգման որակական ցուցանիշներ կարող են ծառայել սեփականության ձևը և գործունեության ոլորտը: Ըստ սեփականության ձևի՝ ձեռնարկությունները բաժանվում են 3 խմբերի՝ պետական, կորպորատիվ և մասնավոր, իսկ կախված գործունեության ոլորտից, ձեռնարկությունները բաժանվում են 5 հիմնական խմբերի՝ արտադրական, առևտրային, ֆինանսական, միջնորդական, ապահովագրական:

Լինելով տնտեսական գործունեության հատուկ տեսակ՝ ձեռնարկատիրության զարգացումը պահանջում է հատուկ ուշադրություն պետության կողմից: Այդ հանգամանքը վերահաստատում են մի շարք երկրների միջազգային փորձի ուսումնասիրությունները: Վերջիններումս ձեռնարկատիրությունը համարվում է տնտեսական գործունեության ամենակատարյալ ձևը, որը նպաստում է ինքնազբաղվածության և նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ իր բոլոր դրական կողմերով հանդերձ:

¹ Юсупова И.П. «Государственная поддержка малого бизнеса». // Менеджмент в России и зарубежом, №5., 2007г. с44-46.

² Տնտեսական սահմանումներ տրվում են որպես տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներ, որոնք տարբերվում են ըստ ծավալների և աշխատողների թվաքանակի:

ԱՄՆ-ում դասակարգման համար այլ չափանիշներ են հիմք ընդունվում: Դասակարգման չափանիշների օրինակը բերենք աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ձեռնարկությունների դասակարգումն ԱՄՆ-ում՝ ըստ զբաղվածների թվի, իրացման ծավալի և հիմնական կապիտալի

Ձեռնարկության տիպը /չափը/	Աշխատողների թիվը	Իրացման ծավալը կամ հիմնական կապիտալը /ԱՄՆ դոլար/
Ընտանեկան	1-4	1-499
Փոքրագույն	5-19	500-2499
Փոքր /1-ին մակարդակի/	20-49	2500-4999
Փոքր /2-րդ մակարդակի/	50-99	5000-9999
Փոքր /3-րդ մակարդակի/	100-499	10.000-24.999
Փոքր /4-րդ մակարդակի/	500-999	25.000-49.999
Միջին	1000-4999	50.000-249.000
Մեծ	5000 և ավելի	250.000 և ավելի

Աղյուսակ 2-ից, բոլոր չափանիշները նույնական են նաև Եվրոպայի համար, սակայն հիմնական կապիտալի չափը և իրացման ծավալները միացվել են՝ բերելով մեկ ընդհանուր չափանիշի: Ըստ նշված չափանիշների՝ ԱՄՆ-ում փոքր ձեռնարկությունների թվին են դասվում 1-1000 աշխատող ունեցող ձեռնարկությունները, որոնց տարեկան իրացման ծավալը կամ հիմնական կապիտալի մեծությունը կազմում է մինչև 50 հազար ԱՄՆ դոլար: Նշենք նաև, որ պետության կողմից օգնություն տրամադրվում է այն փոքր ձեռնարկություններին, որոնց կողմից արտադրանքի (ծառայությունների) իրացման տարեկան ծավալը կազմում է ծառայությունների և մանրածախ առևտրի ոլորտում 2-8 մլն. դոլար, մեծածախ առևտրում՝ 9,5-22 մլն. դոլար, շինարարությունում՝ 1-9,5 մլն. դոլար, գյուղատնտեսությունում՝ մինչև 1500 աշխատատեղ ունեցող ձեռնարկություններին:

Օրինակ, ճապոնիայում փոքր ձեռնարկությունները կազմում են գերակշիռ մեծամասնությունը տնտեսվարող սուբյեկտների կառուցվածքում: Փոքր ձեռնարկությունների դասակարգման համար օգտագործվում է հիմնական կապիտալի մեծությունը և զբաղվածների թիվը, ըստ որի, օրինակ ծառայությունների և մանրածախ առևտրի բնագավառում փոքր են համարվում մինչև 50 աշխատատեղ և 10 մլն. իեն հիմնական կապիտալ ունեցող ձեռնարկությունները, մեծածախ առևտրում՝ մինչև 100 աշխատատեղ և 30 մլն. իեն, վերամշակող արդյունաբերության մեջ՝ մինչև 300 աշխատատեղ և 100 մլն. իեն հիմնական կապիտալ ունեցող ձեռնարկությունները¹:

Գերմանիայում փոքր ձեռնարկությունների թվին են դասվում այն կազմակերպությունները, որոնց ապրանքաշրջանառության տարեկան ծավալը չի գերազանցում 2 մլն. մարկը, և որոնցում զբաղված են մինչև 500 մարդ, այդ թվում՝ ծառայությունների բնագավառում և տրանսպորտում՝ 0,1 մլն մարկ և 3 աշխատող, մեծածախ առևտրում համապատասխանաբար մինչև 1 մլն. մարկ և 9 աշխատող, արդյունաբերության ճյուղերում մինչև 2 մլն. մարկ և մինչև 50 աշխատող ունեցող ձեռնարկությունները²:

Իտալիայի տնտեսությունում ձեռնարկությունների տարբերակումը կատարվում է միայն ըստ աշխատողների թվաքանակի:

Այսպիսով, ՓՄՁ-ների հարկման արտերկրյա փորձի ուսումնասիրման արդյունքում կարող ենք եզրակացնել, որ ՓՄՁ-ների տեսանկյունից տարբեր երկրներում հարկային հաշվառումը վարվում է տարբեր մեթոդներով, որոնք պայմանավորված են այդ երկրների չափերով, բնակչության թվաքանակով և մակրոտնտեսական այլ ցուցանիշներով:

¹ Исследование состояния сектора МСП в Японии, www.jfc.go.jp

² «Государственная поддержка малого и среднего предпринимательства в Германии: опыт для России». www.myshared.ru/

Վերջին հաշվով, զարգացած երկրների հարկային օրենսդրություններում «փոքր կամ միջին ձեռնարկատիրություն» եզրույթի սահմանման համար առավելապես գործնականում կիրառվում են քանակական չափանիշներ, որոնք երբեմն համալրվում են որակականով:

ՓՄՁ-ների հարկման արտերկրյա մոտեցումները և ձևավորված միջազգային հարկման պրակտիկան ենթադրում է ՓՄՁ-ների հանդեպ մոտեցումների երկու ձև.

1. Ստանդարտ ազգային հարկային համակարգի ֆոնի վրա ՓՄՁ-ների համար հարկային արտոնությունների ամբողջական փաթեթի ներմուծում, որոնք հատկապես վերաբերում են եկամտահարկին և ԱԱՀ-ին:
2. ՓՄՁ-ների նկատմամբ հատուկ հարկային ռեժիմների ներմուծում¹:

ՏՀՁԿ (Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպություն) երկրներում անհատ ձեռնարկատերերը վճարում են սովորական եկամտահարկ պրոգրեսիվ սանդղակով: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունների, արդյունքները եկամտահարկի ցածր դրույթաչափերը խթանում են անհատ ձեռնարկատերերի սահմանած արտոնությունները և թվաքանակի ավելացման աճը: Հաստատում, այլ ոչ թե պրոգրեսիվ հարկման դրույթները նպաստում են նոր կազմակերպությունների ստեղծմանը: Պրոգրեսիվ հարկման սանդղակը հնարավորություն է տալիս կառավարությանը հավաքագրել ավելի շատ հարկեր առավել մեծ եկամուտներ ունեցող ընկերություններից, բայց այն միաժամանակ խանգարում է նոր կազմակերպությունների ստեղծմանը²:

Այսպես, ՏՀՁԿ անդամ երկրների մեծ մասում անհատ ձեռներեցները վճարում են ավելի քիչ հարկեր, քան ընկերությունները, մասնավորապես Պորտուգալիայում և Չեխիայում կառավարությունը նման ձևով խթանում է անհատ ձեռներեցներին: Չեխիայում անհատ ձեռներեցները վճարում են եկամտահարկ տարեկան եկամտի 35%-ի չափով: Ընդհանուր առմամբ, Չեխիայում վճարում են ընկերության կողմից վճարվող եկամտահարկի մեծության և սոցվճարների կեսը: Պորտուգալիայում վճարում են բարձր եկամտահարկ, բայց միևնույն ժամանակ օգտվում են բավական նշանակալի սոցապահովագրական համակարգի արտոնություններից:

Անհատ ձեռներեցները հաճախ օգտագործում են հատուկ հարկային ռեժիմներ: Պորտուգալիայում անհատ ձեռներեցները, որոնք ունեն 187200 ԱՄՆ դոլարից ցածր տարեկան եկամուտ, պարտավոր չեն վարել հաշվապահական հաշվառում և վճարում են գործակիցների վրա հիմնված դրույթներով եկամտահարկ³:

ՏՀՁԿ երկրների ՓՄՁ-ները վճարում են, այսպես կոչված, կորպորատիվ հարկ: ՓՄՁ-ների համար կորպորատիվ հարկի դրույթի ավելի ցածր լինելը ստեղծելու է նրանց համար առավելություն. բարձրանում են ՓՄՁ-ների ռեալ շահույթը և բիզնեսում ներդրումների մակարդակը: ՏՀՁԿ երկրների մեծ մասում (Բելգիա, Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Իռլանդիա, Կորեա, ԱՄՆ և այլն) ՓՄՁ-ների համար սահմանված են կորպորատիվ հարկի ավելի ցածր դրույթներ նրանց մրցունակության բարձրացման և ներդրումների ներգրավման նպատակով: Միջինում ՏՀՁԿ երկրների ՓՄՁ-ները վճարում են հարկ շահույթի 15-20%-ի չափով, իսկ խոշոր ձեռնարկությունները՝ 30-40%: ՓՄՁ-ների համար կորպորատիվ հարկի ամենացածր դրույթը դիտվում է հաջող և դինամիկ զարգացող Իռլանդիայում՝ շահույթի 12,5%-ի չափով⁴:

ՏՀՁԿ երկրների մեծ մասում սահմանված են հատուկ հարկային առավելություններ ՓՄՁ-ների համար:

Դիտարկելով ՓՄՁ-ների հարկման արտերկրյա մոտեցումները շահութահարկի գծով՝ նշենք, որ արևմտյան երկրներում ՓՄՁ-ների խթանման պետական քաղաքականությունը իրականացնում են, որպես կանոն, հաշվի առնելով հիմնական ուղղությունների կարևորությունը, առանձնապես արտադրության ոլորտում: Արդյունքում, այն ձեռնարկատիրոջ շահութահարկի դրույթները, ով զբաղված է արտադրական գործունեությամբ, էականորեն տարբերվում են առևտրային միջնորդության ոլորտի տոկոսադրույթներից: Այսպիսի մեխանիզմը խթանում է կապիտալի հոսքը արտադրություն:

¹ Чалышева Е.П. «Налоговые режимы малого бизнеса». Учебник, 2005г., с. 157.

² Черник Д. Г. «Налоги». М., «Финансы и статистика», 1994, с. 210.

³ Критерии отнесения субъектов экономики к малым предприятиям, применяемые в других странах. <http://www.pavlov-iv.ru>

⁴ www.edrc.am

Փորձենք ներկայացնել ՓՄՁ հարկումը ՀՀ-ում: Այդ առումով ՀՀ-ում իրականացվել են տնտեսական վերափոխումներ, որոնք բերել են ՓՄՁ թվաքանակի աճի: Կարևորագույն փոփոխություններից է այն, որ նախկինում գործող պարզեցված հարկի փոխարեն փոքր տնտեսավարողների համար սկսեց գործել բարեփոխված, նրանց համար նպաստավոր պայմաններ ապահովող հարկման ձև: Ի դեպ, փոխվել է փոքր համարվելու համար տարեկան շրջանառության շեմը: 2009թ. հունվարի 1-ից այն կազմում է 58.3 մլն դրամ կամ ավելի քան 190 հազար դոլար: Դրանից ցածր շրջանառություն ունեցող ձեռնարկությունները չեն վճարում ավելացված արժեքի հարկ, ինչն էապես պարզեցնում է ՓՄՁ-ների փաստաթղթաշրջանառությունը և հարկային հաշվետվությունները: Անշուշտ, ներքին շրջանառությունից ԱԱՀ-ի նվազման այս բարձր տեմպը պայմանավորված չէ միայն արտոնությամբ, այստեղ որոշիչ է ճգնաժամի հետևանքով ապրանքաշրջանառության ծավալների կրճատումը:

ՓՄՁ պետական աջակցության մասին օրենքով ՓՄՁ-ներն արդեն շահութահարկ վճարողներ են: Պարզեցված հարկը փոխարինում էր ԱԱՀ-ն և շահութահարկը¹:

ՀՀ կառավարությունն արդեն իսկ հաստատել է նաև ՓՄՁ-ների պետական աջակցության 2013թ. ծրագիրը: 2013 թվականին սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է ուսուցողական աջակցության ցուցաբերում` 200-250 սկսնակ գործարարի, իսկ ֆինանսական աջակցության ցուցանիշներն արտացոլվում են վարկային երաշխավորությունների տրամադրման ցուցանիշների հետ, քանի որ դրանք նույնպես հանդիսանում են վարկային երաշխավորություններ: 2013 թվականին ՓՄՁ-ի սուբյեկտներին կտրամադրվի ավելի քան 2,000,000.0 հազ. դրամի վարկային միջոցներ:

Ելնելով հարկման արտերկրյա փորձի ուսումնասիրության արդյունքներից և կատարված արտերկրյա հարկային մասնագետների վերլուծություններից` մենք միանշանակ, համակարծիք ենք, որ ՓՄՁ-ների տեսակարար կշռի ավելացումը տնտեսության իրական հատվածում նպաստում է երկրի տնտեսական, ֆինանսական, սոցիալական, դեմոգրաֆիական կայունության պահպանմանը: Ավելին, հարկային արտոնություններ և հարկային «փափուկ» վարչարարությունը նպաստում է վերոհիշյալ առաջընթացին:

Ամփոփելով` նշենք, որ հարկային բարեփոխումների ներկա փուլում ՀՀ-ում հնարավոր է կիրառել հարկման արտերկրյա փորձը, մասնավորապես, որ երկու ՓՄՁ-ների նկատմամբ հատուկ հարկային ռեժիմների ներմուծումը ՀՀ-ում արդեն ընթացքի մեջ է:

Гарник Нерсисян

Зарубежные подходы к налогообложению МСП и возможности их практического применения в РА

Аннотация

На современном этапе налоговой реформы в РА возможно использование зарубежного опыта налогообложения, тем более, что применение специальных налоговых режимов в отношении двух малых средних предприятий Армении уже находится в процессе.

Garnik Nersisyan

SME taxation best practices worldwide and possible application of practices in the Republic of Armenia

Abstract

Hence, it should be noted, that taking into account the current stage of reforms in the Republic of Armenia, foreign taxation best practices can be adopted and applied, especially the second one: adoption of specific tax regimes for SMEs, that is successfully being and applied in Armenia.

¹ ՀՀ օրենքը Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին, 05.12.2000:

**ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ
ՓԱԹԵԹՆԵՐԸ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ**

Ցանկացած երկրի պարտքային քաղաքականության հիմքում ընկած է ռիսկերի կառավարման քաղաքականությունը, որը կապ է հաստատում պարտքային ռազմավարության մշակման և իրագործման միջև: Պարտքային քաղաքականությունը, ընդհանրապես, կառուցվում է տարբեր ռիսկերի գնահատման վրա, որտեղ միշտ առկա են այլընտրանքներ:

Շուկայական ռիսկ: Շուկայական ռիսկը սովորաբար հաշվարկվում է հատուկ ֆինանսական մոդելների միջոցով: Ջարգացող երկրների համար միշտ կիրառելի են պարզ մոդելները՝ մի քանի փոփոխականներով, սակայն ավելի բարդ պարտքային կառուցվածք ունեցող երկրներն օգտագործում են հատուկ մշակված մոդելներ, որոնք հնարավորություն են տալիս վերլուծել ծախսեր-ռիսկ հարաբերակցությունը տարբեր ժամանակային հարթություններում: Նման մոդելի օրինակ է հանդիսանում «Մոնտե-Կառլոյի»¹ վիճակագրական մոդելը, որն իր մեջ պարունակում է ժամանակագրական շարքեր և տվյալներ:

Շուկայական ռիսկն ուսումնասիրելիս հարկ է առաջանում քննարկել արտարժույթային առևտուրը կամ պետության սպեկուլյատիվ մասնակցությունը արժույթային շուկաների գործարքներին: Միջազգային ասպարեզում այս գործոնի անտեսման պատճառով մեծ վնասներ են կրել և լուծարվել այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են «Բարինգս բանկը» (1995թ.), «Մեթալ-գեսել-շաֆթը» (1993թ.), «Փորքթեր էնդ Գեմբլը» (1993թ.), «Դայվա բանկը» (1995թ.)²: ԱՄՆ-ում միայն 1986-1995թթ. ընթացքում տնտեսության խնայողական և վարկային հատվածի ամբողջական վնասը կազմել է 153 մլրդ դոլար, որի համար հիմնական պատճառները հանդիսացան արտարժույթային փոխարժեքների, արժեթղթերի գների և ապրանքների գների փոփոխությունները: Ուստի, պարտքի կառավարման մարմինը պետք է հաստատի կամ հերքի իր մուտքն արտարժույթային գործարքների շուկա: Եթե կառավարությունը հաստատում է պետության մուտքը շուկա, ապա պետք է ընտրվեն տոկոսադրույքների և արտարժույթային փոխարժեքների կանխատեսման մեխանիզմները: Որպես կանխատեսման գործիք՝ երկրներին առաջարկվում է դիտարկել ֆորվարդային արժեքներ:

Շատ քիչ պետություններ են պարտքի կառավարիչներին թույլատրում մասնակցել արտարժույթային շուկայի մարտավարական առևտրին՝ Նոր Ջեյկանդիան և Շվեդիան, որտեղ միջամտությունն արտարժույթի շուկային ունի պարտքի սպասարկման ծախսերի իջեցման նպատակ³: Մեծ ուշադրություն է դարձվում նաև այն հանգամանքին, որ սույն երկրները ձգտում են կուտակել համապատասխան փորձ՝ հետագա վարկային գործարքներն ավելի արդյունավետ կնքելու նպատակով: Ուստի, պարտքային ակտիվների փոքր մասն է ուղղորդվում մարտավարական առևտրին՝ ֆիքսելով առավելագույն վնասի սահմանաչափն ըստ նախապես մշակված ռազմավարության: Նման ռազմավարություն մշակվել է «Պարտքի շվեդական ազգային գրասենյակը»⁴:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը համարվում է ամենապարզ կանխատեսելի ռիսկերից մեկը, քանի որ ածանցվում է հաստատուն մեծություններից, ինչպիսիք են վարկի մեծությունը, մայր գումարի և տոկոսների վճարման մեծությունները և այլն: Տվյալ տեսակի ռիսկերից ապահովագրվելու համար կառավարություններն սահմանում են արտարժույթային լիկվիդային միջոցների նվազագույն քանակություն, ինչպես նաև այն գործիքները, որտեղ վերջիններս ներդրվում են: Օրինակ՝ մեծ տարածում ունի իրացվելիության ռիսկի կառավարման

¹ <http://www.vertex42.com/excel/articles/mc>.

² Eric Falkenstein, "Value-at-Risk and Derivatives Risk", Derivatives quarterly volume 4, number 1, fall 1997, p. 16.

³ "Risk Management of Sovereign Liabilities", IMF International capital markets 1997 Annex V, p. 228.

⁴ <http://www.riksgalden.se>

այն ռազմավարությունը, ըստ որի գանձապետարանը պահպանում է մոտակա վեց ամսվա տոկոսների վճարման համար անհրաժեշտ արտարժութային լիկվիդային միջոցներ: Այդ միջոցների մեծ մասը կարող է ներդրվել բարձր իրացվելի ակտիվների մեջ, իսկ մնացածը՝ երկարաժամկետ գործիքների մեջ:

Վերաֆինանսավորման ռիսկ: Վերաֆինանսավորման ռիսկը հիմնականում կապված է տրամադրված վարկերի մարման ժամկետների կառավարման հետ: Արտաքին պարտքի կառավարիչը պետք է մեծ ուշադրությամբ հետևի վարկի մարման ողջ ընթացքին՝ մինչև վերջնական մարումը: Բացի դրանից, եթե կառավարությունը պատրաստվում է վաղաժամ մարել որոշակի պարտավորություններ, ապա բոլոր ռիսկերը նախապես պետք է գնահատվեն: Խոսքը հիմնականում իրացվելիության ռիսկի մասին է: Այդ դեպքում պետք է հստակ դասակարգել վարկերը ըստ ժամկետների և թույլ չտալ որևէ եզակի տարվա համար մարման ժամկետների կենտրոնացում: Ըստ այդմ՝ պետք է խուսափել կարճաժամկետ պարտավորությունների կուտակումից, որը կարող է ևս վերաֆինանսավորման ճգնաժամի առաջացման պատճառ հանդիսանալ:

Վարկային ռիսկ: Վարկային ռիսկը հիմնականում կապված է ներքին պահանջմունքների ֆինանսավորման միջոցների տրամադրման, ինչպես նաև երկրի վարկունակության և վարկային վարկանիշի հետ: Ցանկացած վարկ ենթադրում է նպատակային օգտագործում և հատույցի ստացում: Նման իրավունքը պայմանավորված է որոշակի ծախսերի և ռիսկերի հետ: Վերջինս հիմնականում վերաբերում է փոխատու երկրներին, որոնց կառավարությունները կարող են սահմանել մեկ փոխառուի հետ կապված ռիսկի կամ ֆիքսված գումարի առավելագույն մակարդակը: Այստեղ կարևորվում է փոխառու երկրի վարկային պատմությունը, գոյություն ունեցող վարկերի հարաբերությունը ՀՆԱ-ին և այլ մակրոտնտեսական ցուցանիշների, որոնք նկարագրում են երկրի պարտքային բեռնվածությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ ռիսկերը՝ Հայաստանը կարելի է գնահատել չափավոր ռիսկային՝ ըստ պարտքի կայունության վերլուծության դասակարգման, սակայն պետք է նշել, որ Հայաստանի պետական պարտքի կայունության համար կարևոր են երկրի ներքին և արտաքին պայմանները:

Միջազգային վարկանիշային կազմակերպությունները բարձր գնահատական են տալիս այն երկրներին, որոնց փոխատվական հարաբերությունների պատմությունն անցել է հարթ ճանապարհ:

ՏԶՀԿ երկրների մեծ մասի պարտքի կառավարիչները տոկոսադրույթի ռիսկի գնահատման նպատակով սահմանում են մի քանի ցուցանիշների ռազմավարական նպատակներ՝ CaR, դյուրագիա, ATR:

Աղյուսակ 1

Տոկոսադրույթների ռիսկի գնահատման ցուցանիշներն ըստ երկրների

	CaR/VaR	Դյուրագիա	ATR/IRF
Ավստրիա	+		
Բելգիա			+(ATR)
Դանիա	+	+	+(IRF)
Լեհաստան	+	+	
Կանադա	+		
Հոլանդիա	+		
ՄԹ	+		
Շվեդիա	+	+	
Չեխիայի Հանր.	+	+	+(IRF)
Ֆինլանդիա		+	+(ATR)

Բոլոր երկրներում օգտագործվում է «տոկոսադրույքների աճի ռիսկայնությունը»։ Չեխիայի Զանրապետությունից, որտեղ օգտագործվում է «դրամական հոսքերի ռիսկայնությունը», Դոլանդիայից՝ «ռիսկային մեծությունը» և Շվեդիայից՝ «հարաբերական տոկոսային ծախսերի աճի ռիսկայնությունը»:

Որոշ երկրների կառավարություններ ներգրաված միջոցներով ավանդներ են ձևակերպում ազգային բանկերի շրջանակներում՝ հարուցելով համբավի և լրացուցիչ վարկային ռիսկ: Եթե բարձր ռիսկային գործունեության արդյունքում բանկերի ֆինանսական դիրքերը վատթարանան, ապա պետությունը ճգնաժամից խուսափելու համար ստիպված կլինի աջակցություն ցուցաբերել վերջիններիս՝ վարկառուի բարձր համբավը պահպանելու համար:

Վարկային գումարների փոխանցման ռիսկերը: Վարկերի ֆիզիկական տրամադրման ռիսկերը կապված են ֆինանսական գործակալների ընտրության հետ: Վարկի գումարի փոխանցումը սկսվում է կենտրոնական դեպոզիտարիայից և կարող է անցնել մի քանի միջնորդներով՝ մինչև վարկառուին հասնելը: Դրանցից յուրաքանչյուրի սխալները կամ բացթողումները կարող են մեծ վնասներ առաջացնել պետության համար: Միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ ժամկետանց վճարների մեծ մասը պայմանավորված է ոչ թե լիկվիդային միջոցների բացակայությամբ, այլ ֆինանսական գործակալների սխալների պատճառով: Նման իրավիճակներից խուսափելու համար կառավարությունը լրացուցիչ «օվերդրաֆտային»¹ հնարավորություն կարող է տրամադրել իր ֆինանսական գործակալին:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկը բնորոշ է գանձապետական նշանակության մարմիններին և կապվում է գործարքների արդյունավետ, ժամանակին և անսխալ իրականացման հետ: Անհրաժեշտ է մշակել հատուկ ընթացակարգ, որը կսահմանի յուրաքանչյուր աշխատակցի և օղակի լիազորություններն ու պարտականությունները: Ընդ որում՝ բոլոր լիազորությունները պետք է հստակ սահմանվեն: Գործառնական ռիսկերը կարող են ի հայտ գալ նաև արտաքին աղբյուրներից և պայմանավորված չլինեն ներքին աշխատանքային միջավայրով:

Շնորհիվ տեղեկատվական տեխնոլոգիաների արագ աճի՝ այսօր պարտքի կառավարման գրասենյակներին առաջարկում են նորագույն համակարգիչներ և ծրագրային փաթեթներ, որոնց ներդրումը նվազեցնում է մարդկային գործոնի անմիջական դերն արտաքին պարտքի կառավարման գործընթացում²:

Աշխարհում այսօր առաջարկվում են պարտքի կառավարման համար նախատեսված երկու հիմնական ծրագրային փաթեթներ՝ CS-DRMS³ և DMFAS⁴, որոնց հեղինակներն են «Ազգերի համագործակցության քարտուղարությունը» (Commonwealth Secretariat), «ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման կոնֆերանսը» (UNCTD):

CS-DRMS-ն օգտագործվել է միայն «Ազգերի համագործակցության» անդամ երկրներում և տարիներ անց փոխանցվել է այլ երկրներ: Առաջին անգամ փաթեթը ներդրվել է Շրի Լանկայում 1985թ., իսկ 1993թ. օգտագործողների թիվը հասավ 38-ի: Այսօր ՏՀԶԿ բոլոր երկրներն օգտագործում են CS-DRMS 2000+ ծրագրային փաթեթը: DMFAS-ը պատրաստվել է ՄԱԿ-ի և Զանաշխարհային բանկի հովանու ներքո (ֆինանսավորումը ՄԱԿ-ի «Զարգացման ծրագրի»՝ UNDP-ի կողմից): Այն կարելի է բնութագրել որպես ձեռնարկ, որի մեջ բացի ծրագրային փաթեթից, ներառված է նաև աշխատակազմի պատրաստման, որակավորման գրքեր:

Առաջին փուլում երկու ծրագրերն էլ օգտագործվում էին վիճակագրական նկատառումներով և կատարում էին պասիվ գործառույթ: Սակայն թե՛ կապիտալի, թե՛ բարձր տեխնոլոգիաների շուկաների զարգացվածությունն ավելի բարձր պահանջներ դրեցին պետությունների առջև, որից հետո սկսվեցին պարտքի կառավարման ավտոմատացման փուլային ներդրումը:

¹ Լինում են դեպքեր, երբ վարկային վճարումները ժամանակային անհամապատասխանության պատճառով կարող են հետաձգվել, սակայն վարկային պայմանագիրը պահանջում է վճարումը կատարել աշխատանքային օրվա առավոտյան ժամերին, ուստի ֆինանսական գործակալին տրամադրում են անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

² MEFMI Public Debt Management Procedures Manual, Vol. 1, 2005, p. 5.

³ Information Requirements, Debt Measurement and Reporting, Commonwealth Secretariat report on ECCU Debt Management Workshop, ECCB, Basseterre, St Kitts, West Indies 24-28 October 2005, p. 7.

⁴ The DMFAS Programme: EFFECTIVE DEBT MANAGEMENT, United Nations Nations Conference on Trade and Development, UNCTAD/GID/DMS/15/Rev. 1, 200.

CS-DRMS և DMFAS նմանություններն ու տարբերությունները

CS-DRMS	DMFAS
Օգտագործման հնարավորություն	
Գոյություն ունի ծրագրի միաժամանակյա բազմաթիվ օգտագործողների հնարավորություն, որոնցից յուրաքանչյուրի կողմից կատարած փոփոխություններն արտահայտվում են մյուս օգտագործողի կողմից:	Մինչև 1993թ. միայն մեկ օգտագործող կարող էր ակտիվ լինել ծրագրում, սակայն ՅԲ-ի մասնագետների կողմից կատարված փոփոխությունները հնարավորություն ընձեռեցին մի քանի հոգու միաժամանակ մուտքը համակարգ:
Հաշվետվությունների պատրաստում	
Օգտագործողը հնարավորություն ունի ձևավորել բազմապիսի հաշվետվություններ՝ ստանդարտացված և կոնկրետ նպատակի համար նախատեսված:	Հնարավոր է թողարկել բազմաթիվ հաշվետվություններ, ինչպես նաև տվյալներ դուրս բերել տարբեր աղյուսակներից և շարքերից:
Տվյալների վերլուծություն	
Հատուկ ծրագրավորված «Կառավարման գործիքների» մոդուլ, որը հնարավորություն է տալիս տվյալներ վերլուծել ինչպես այլ հավասար պայմաններում, այնպես էլ ընդհանուր տվյալների բանկի հետ կապակցված:	Ծրագիրն ունի տվյալների մշակման ու վերլուծման լայն հնարավորություն տարբեր սցենարների ներմուծման եղանակով, որը հնարավորություն է տալիս կատարել կանխատեսումներ:
Անվտանգության համակարգեր	
Unix-Xenix պաշտպանության հատուկ համակարգ, որը թույլատրում է մուտք դեպի համակարգ գաղտնաբառերի միջոցով: Այս համակարգում մի օգտագործող կարող է հանդիսանալ ցանցի կառավարիչ: Առկա է նաև ծրագրի օգտագործման երեք մակարդակներ:	Ծրագիրն ունի մուտք գործելու բազմաստիճան պաշտպանության համակարգ, որը հնարավորություն է տալիս ցանցի կառավարչին վերահսկել մյուս օգտագործողների գործողությունները:
Ծրագրի կառուցվածքը	
Հիմնական բաղադրիչներն են «Վարկի կառավարման» մոդուլը և «Կառավարման գործիքների» մոդուլը:	Կազմված է երեք հիմնական տարրից՝ պարտքի վերահսկողության համակարգ, պարտքի վերակազմակերպման ենթահամակարգ և պարտքի նախագծման ու վճարային հաշվեկշռի հետ կապի համակարգ:

DTS ծրագրի համառոտ տվյալների տեսակները

Մուտքագրվող տվյալների տեսակները	Դուրս բերված հաշվետվությունների տեսակները
Գործող վարկային համաձայնագրերի պայմանները (վարկատուի և վարկառուի անվանումները, վարկի գումարը, արժույթը, մարման ժամանակացույցը, վճարման օրերը, կիրառվող վճարների դրույքաչափերը):	Վարկային միջոցներից մասհանումներ կատարելու վերաբերյալ՝ ըստ արժույթների, ամսաթվերի, վարկատուների, վարկային համաձայնագրերի և կատեգորիաների:
Վարկային միջոցներից կատարված մասհանումներին՝ ըստ մասհանման օրերի և վարկային համաձայնագրերով ամրագրված կատեգորիաների:	Վարկերի սպասարկման գծով փաստացի կատարված վճարումների վերաբերյալ՝ ըստ արժույթների, ամսաթվերի, վարկատուների, վարկային համաձայնագրերի:
Համապատասխան արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված միջին փոխարժեքները:	Վարկերի սպասարկման գծով հերթական վճարումների վերաբերյալ կանխատեսումներ:
Վճարման ենթակա գումարները (վերջիններս համեմատվում են ծրագրի կողմից կատարված հաշվարկների հետ):	Որոշակի ժամանակահատվածի դրությամբ համապատասխան վարկային համաձայնագրի միջոցների հաշվեկշիռը՝ մասհանված և չմասնահանված գումարների կտրվածքով:
Փաստացի կատարված վճարումների հավաստումը՝ նշելով փաստացի վճարման ամսաթիվը:	Այլ կարգի հաշվետվություններ:

Արդյունավետ ծրագրային փաթեթը պետք է շոշափի վարկային հարաբերությունների բոլոր կողմերը, որոնք սկսվում են առաջին գծի և վերջանում հետին գծի գրասենյակներում: Ծրագիրը պետք է աշխատի շուկայական տվյալների հավաքագրման «Reuters», «Telerate», «Bloomberg» ծառայությունների հետ, իսկ որ ամենակարևորն է, կցված լինի «SWIFT» տվյալների փոխանցման համակարգին՝ վարկային վճարումների ընթացքին հետևելու համար:

ՀՀ արտաքին պարտքի հաշվառման նպատակով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պետական պարտքի կառավարման վարչության արտաքին պետական պարտքի կառավարման բաժնի կողմից կիրառվում է հատուկ ծրագիր, որը պատրաստվել է 1998թ. ԱՄՆ-ի գանձապետարանի հովանավորությամբ: Ծրագիրն անվանել է Debt Tracking System (DTS) և աշխատում է «Microsoft Access» ծրագրի հիման վրա:

Ծրագիրը կատարում է սահմանափակ քանակությամբ գործառույթներ: Հիմնականում տվյալների մուտքագրման եղանակով վերջինս պատրաստում է բազմապիսի հաշվետվություններ:

ՀՀ-ն, ունենալով բավականաչափ պարզ վարկային զամբյուղ, փոխատվական հարաբերությունները որոշ չափով ավտոմատացված են DTS-ի նման ոչ բազմաֆունկցիոնալ ծրագրի միջոցով, որն օգտագործվում է նաև Ալբանիայի կառավարության կողմից: 1998թ. մինչև օրս ծրագրում որևէ նոր մոդուլ կամ հավելված չի ներդրվել, որը վկայում է ՀՀ վարկային հարաբերությունների կարգավորման կայունության մասին:

Vladimir Chinaryan

Application of specialized software packages in assessing risks and management of external public debt

Abstract

Risk management policies serve as the platform for designing public debt management policies of each nation, enabling the country to design and implement public debt management strategies. Public debt management strategy, in general, is based on various risk assessments with several alternatives to opt for. Armenia with relatively simple structure of public debt, manages the debt through not sophisticated software called DTS. Since 1998, no new applications or modules have been added to the software stating the sustainability of management practices applied in Armenia.

Владимир Чинарян

Оценка рисков и в процессе управления внешнего государственного долга программные пакеты управления долгом

Аннотация

В основе долговой политики любой страны лежит политика управления рисками, которая создает связь между разработки и реализации долговой политики. Долговая политика, в основном, основывается на оценке различных рисков, где всегда есть альтернативы. Республика Армения имеет достаточно простую кредитную корзину. Заёмные отношения в некоторой степени автоматизированы с помощью такой немногofункциональной программы как DTS. С 1988 года до сих пор в программу никакая новая модул или дополнение не было внедрено, что и свидетельствует о стабильности регулирования кредитных отношений в РА.

**ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁ
ՃԳՆԱԺԱՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Պետական պարտքի կառավարման հիմքում միջազգային տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր մասնագետների մոտեցումները վկայում են, որ պետական պարտքի կառավարման գործում առանցքային նշանակություն ունի վերջինիս կառավարման կազմակերպատնտեսական կառուցվածքը: Ընդհանուր առմամբ, պետական պարտքի կառավարումը կարող է իրականացվել ֆինանսների նախարարության, կենտրոնական բանկի, ինչպես նաև առանձին մասնագիտացված կազմակերպության միջոցով: Այս առումով կարևոր նշանակություն ունի պետական պարտքի կառավարման համակարգի արտերկրյա փորձի ուսումնասիրությունը:

Երկրների փորձը ցույց է տալիս, որ հիմնականում ազգային պարտքի կառավարիչները, որոնք գտնվում են կենտրոնական կառավարության մակարդակում, չեն մասնակցում կառավարության այլ մակարդակների՝ տեղական իշխանությունների ներգրաված պարտքի կառավարմանը, քանի որ կառավարության յուրաքանչյուր մակարդակ պատասխանատվություն է կրում իր կողմից ներգրավված պարտքի համար¹: Այդպիսի երկիր է ԱՄՆ-ը²: Կան նաև երկրներ, օրինակ, Կոլումբիան և Յնդկաստանը, որտեղ պետական պարտքի կառավարիչներն ակտիվորեն ներգրավված են նաև տեղական իշխանությունների պարտքի կառավարմանը, որի շնորհիվ կենտրոնական բանկում առկա պարտքի կառավարման փորձը և ռեսուրսները ծառայում են նաև նահանգների պարտքի կառավարմանը: Կոլումբիայի դեպքում տեղական մարմինների կողմից ներգրավված պարտքը հասել էր աննախադեպ չափերի, որը սպառնում էր համախմբված կառավարության ֆինանսական կայունությանը, ուստի դաշնային կառավարությունը ստիպված է միջամտել և սահմանափակումներ մտցնել տեղական կառավարության պարտքի վրա:

Ջարգացած երկրներում պարտքի կառավարման և դրամավարկային քաղաքականությունների նպատակները տարանջատված են և ստեղծված են պարտքի կառավարիչների և կենտրոնական բանկի միջև կառավարության կանխիկ հոսքերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համապատասխան մեխանիզմներ: Դա հատկապես բնորոշ է Եվրոպական Միության անդամ երկրներին, որտեղ դրամավարկային քաղաքականությունն իրականացվում է կենտրոնական բանկերի կողմից, իսկ պարտքի կառավարումը, յուրաքանչյուր պետության կողմից՝ նվազեցնելով երկու մարմինների միջև շահերի բաշխման ռիսկը:

Ջարգացած երկրներում պարտքի կառավարման ոլորտում ընդգրկված բոլոր մարմինների համար պարտքի կառավարման նպատակները, գործառույթները և պատասխանատվությունները հստակ սահմանված են պարտքի կառավարման գործառույթները կարգավորող օրենսդրության մեջ: Այդ տեղեկատվությունը հաճախ հրապարակվում է նաև պարտքի կառավարմամբ զբաղվող մարմինների կողմից հրատարակվող տարեկան հաշվետվություններում և պաշտոնական կայքերում: Օրինակ, Մարոկոյում ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը յուրաքանչյուր տարի կազմակերպվող մամլո ասուլիսի ժամանակ հայտարարում է պարտքի կառավարման նպատակները, իսկ Սլովենիայում պարտքի կառավարման նպատակները և գործիքները հայտարարում են տարեկան ֆինանսական ծրագրում և այլ քաղաքականության փաստաթղթերում, որոնք առկա են պաշտոնական կայքերում³:

Ջարգացած երկրների մի մասն է ընդամենը հրապարակում ռիսկերի կառավարմանն ուղղված հատուկ նպատակներ, իսկ կան նաև երկրներ, որոնք այդպիսի նպատակներ սահմանում են սակայն, չեն հրապարակում դրանք: Օրինակ, Բրազիլիայում պաշտոնապես հրապարակվում

¹ “Managing Public Debt: Formulating Strategies and Strengthening Institutional Capacity”, IMF and The World Bank, March 3, 2003, p. 14.

² Bureau of the Public Debt. Strategic plan 2000-2005, p. 3.

³ Guidelines for Public Debt Management, IMF and World Bank, p. 16.

է տարեկան փոխառությունների ծրագիր, որտեղ ներկայացվում են ուղենշային պարտատոմսերի գծով սահմանված նպատակները, ինչպես նաև պարտքի կառավարման գործառնությունները և կառավարության ֆինանսական իրավիճակը: Դանդախում այդ նպատակները հրապարակվում են ֆոնդային բորսայում կատարվող հատուկ հայտարարության մեջ և տարեկան հաշվետվություններում, իսկ Շվեդիայում այդ նպատակները հրապարակվում են տարեկան պարտքի կառավարման ուղեցույցներում, որը տրամադրվում է Շվեդիայի ազգային պարտքի գրասենյակին մինչև ֆինանսական տարվա սկիզբը: Իտալիայում ծախսեր/ռիսկեր վերլուծությունն առկա է Իտալիայի գանձապետարանի պաշտոնական կայքում:

Եվրոպական ճգնաժամը շրջադարձ է ունենում: Իտալիայի պետական պարտքը գնահատվում է 1.9 մլրդ եվրո կամ ՀՆԱ-ի 120%: Գերմանիայի և Ֆրանսիայի ֆինանսական ինստիտուտների հաշվեկշռում գոյություն ունի իսպանական և իտալական պարտքի առավելագույն ծավալ, այդ իսկ պատճառով պարտքային վարակը՝ համակված բոլոր «հիվանդանոցներով», լուրջ հետևանքներ ունի այն երկրների համար, ովքեր ունեն ավելի մեծ վարկային վարկանիշ: Աղյուսակում ներկայացվել են եվրոպական տնտեսությունների հիմնական պարամետրերը:

Աղյուսակ 1

Եվրոպական տնտեսությունների հիմնական պարամետրերը

Երկրներ	ՀՆԱ-ի աճի տեմպը	Պարտք % ՀՆԱ	Բյուջեի պակասուրդ % ՀՆԱ	ՀՆԱ, մլրդ դոլար, 2010թ.	Եվրոգոտու ՀՆԱ-ի մասնաբաժինը, %
Գերմանիա	2.6	83.2	-4.3	3310	27.2
Իռլանդիա	2.3	94.9	-31.3	204	1.7
Բելգիա	1.8	96.2	-4.1	467	3.8
Ֆրանսիա	1.6	82.3	-7.1	2560	21.0
Հունգարիա	1.4	81.3	-4.2	130	-
Իտալիա	0.8	118.4	-4.6	2051	16.9
Իսպանիա	0.8	61	-9.3	1407	11.6
Պորտուգալիա	-1.7	93.3	-9.8	229	1.9
Հունաստան	-5.5	144.9	-10.6	395	3.2

Ինչպես երևում է աղյուսակից, ավելի խղճուկ տնտեսական վիճակում են գտնվում Հունաստանն ու Պորտուգալիան: Եթե Հունաստանի վիճակը էականորեն հասկանալի է, ապա Պորտուգալիան դեռ չի զգացել իր պարտքային փաստաթղթերի վրա սպեկուլյատիվ հարձակումների ամբողջ ուժը: Դրա համար կան պատճառներ. տնտեսությունը տարեցտարի ցուցաբերում է ՀՆԱ-ի բացասական դինամիկա, պարտքի հարաբերակցությունը ՀՆԱ-ին մոտ է 100%, իսկ բյուջեի պակասուրդը կազմում է գրեթե ՀՆԱ-ի 10%, ինչը ենթադրում է լրացուցիչ ելք կապիտալի շուկա՝ պակասուրդի ծածկման նպատակով:

Չնայած այն հանգամանքին, որ այսօր աշխարհի գրեթե բոլոր երկրներն ունեն արտաքին պարտքային պարտավորություններ՝ պարտքի կառավարումն առավելապես կարևորում է զարգացող երկրներում: Շուկայական տնտեսակարգին անցած նոր երկրները բախվում են լուրջ հաշվեկշռային ռիսկի հետ՝ ունենալով ՀՆԱ-ին մի քանի անգամ գերազանցող արտաքին պարտքի շատ մեծ կշիռ: Նման երկրներում կապիտալի շուկան ունի ձևական բնույթ. ֆինանսական ապակենտրոնացումը գտնվում է ձևավորման փուլում, որը ստիպում է պետությանը բազմաթիվ պարտավորություններ ստանձնել և երաշխիքներ տրամադրել՝ մեծացնելով անվճարունակության ճգնաժամի առաջացման հավանականությունը: Պետական պարտքի կայուն կառավարումը շատ կարևոր է: Նախ պետական պարտքի վարկային զամբյուղը երկրի ամենամեծ պարտավորությունների զամբյուղն է, որը պարունակում է ռիսկային այնպիսի տարրեր, որոնց սխալ կառավարումը կարող է վատ անդրադառնալ երկրի ընդհանուր ֆինանսական դիրքի վրա: Զարգացող երկրներում մի շարք հասարակական ոլորտներ, ինչպիսիք են

առողջապահությունը, կրթությունը և բնապահպանությունը, ուղղակիորեն անտեսվում են, որի պատճառն արտաքին պարտքի սպասարկման բարձր տոկոսներն են: Կան երկրներ, որոնց բյուջետային ծախսերի մեծ մասը կազմում է հենց պարտքի տոկոսային սպասարկումը: Այստեղ անհրաժեշտ է մշակել նաև վերջինիս աջակցող առողջ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություններ:

Պարտքի կառավարման ռազմավարության հիմնական նպատակն է նվազագույն ռիսկերի և նվազագույն ծախսերի սահմանման միջոցով ձևավորել դիվերսիֆիկացված վարկային զամբյուղ՝ ընտրելով արտարժույթային և տոկոսային ճկուն կառուցվածք, մարման ժամկետների իրականանալի հաջորդականություն, որոնք հնարավորություն կտան նվազագույնի հասցնել արտաքին ֆինանսական շոկերի ազդեցությունը երկրի բյուջեի կառուցվածքի վրա:

Ստորև բերված աղյուսակից երևում է, որ անկախ երկրների զարգացման մակարդակից, ընդհանուր նպատակը մնում է նույնը՝ ապահովել նվազագույն ծախսեր և ռիսկեր: Սակայն զարգացող երկրների շրջանակներում շոշափելի են նաև ազգային արժեթղթերի շուկայի բացակայության հիմնախնդիրները, որենք լուրջ սահմանափակումներ են դնում պարտքի կառավարման գործընթացի վրա: Երկրորդական նպատակներից են համարվում նաև պետական պարտատոմսերի իրացվելիության ապահովումը, ինչպես նաև մարման ժամկետների կառավարումը, որը կարող է մի շարք ռիսկերի առաջացման պատճառ դառնալ:

Աղյուսակ 1

Արտաքին պարտքի կառավարման նպատակները մի քանի երկրների օրինակով

Երկրներ	Նպատակների նկարագրությունը
Ավստրալիա	Արտաքին պարտքը հասցնել այն մակարդակի, որպեսզի նվազագույնի հասցվեն երկարաժամկետ ծախսերը՝ հաշվի առնելով ռիսկի ընդունելի մակարդակը:
Բելգիա	Պետական պարտքի ֆինանսական ծախսերը նվազագույնի հասցնել՝ հաշվի առնելով նախապես սահմանված զամբյուղի ռիսկի առավելագույն մակարդակը:
Բրազիլիա	Մարման ժամկետների կենտրոնացման մակարդակի իջեցում, արտաքին պարտքի միջին տևողական օպտիմիզացում, փոխառվական ծախսերի նվազեցում, արտաքին վերակառուցված վարկի աստիճանական փոխարինում, զամբյուղի հիմնական նպատակների սահմանում՝ ըստ ներդրողների, շուկաների բացում այլ մասնավոր և պետական ներդրողների համար:
Կանադա	Կառավարությունն ապահովել կայուն, ծախսերի նվազ մակարդակով ֆինանսավորումն և կանադական կառավարության արժեթղթերի շուկայի պահպանում և կատարելագործում:
Կոլումբիա	Երկարաժամկետ ծախսերի նվազագույն մակարդակի ապահովում՝ ռիսկերի թուլլատրելի մակարդակին համապատասխան, ազգային շուկաների զարգացման աջակցություն:
Ղանիա	Երաշխավորել նվազագույն ծախսեր՝ կապված կառավարության պարտքի սպասարկման հետ՝ հաշվի առնելով ռիսկերը:
Ֆինլանդիա	Պարտքի արդյունավետ արժեքի նվազագույն մակարդակի ապահովում՝ չգերազանցելով համապատասխան ռիսկերի մակարդակը:
Իռլանդիա	Ֆինանսավորել մոտակա մարման պարտքը, ինչպես նաև կառավարել պարտքի մնացած մեծությունը՝ պաշտպանելով կարճաժամկետ և երկարաժամկետ իրացվելիությունը:
Իտալիա	Նախատեսված պարտքի արժեքի նվազագույն մակարդակի և ռիսկերի կառուցվածքային կրճատման ապահովում:
Մեքսիկա	Արտաքին պարտքի ամորտիզացիայի թեթևացում, ծախսերի նվազեցում՝ սահմանափակելով վերաֆինանսավորման ռիսկը:

Երկրներ	Նպատակների նկարագրությունը
Նիդեռլանդներ	Բոլոր հնարավոր տարբերակներից պարտքի երկարաժամկետ ֆինանսավորումն ամենաարդյունավետ եղանակով՝ հաշվի առնելով ռիսկերի ընդունելի մակարդակը:
Նոր Զելանդիա	Կառավարության ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից երկարաժամկետում առավելագույն արդյունքի ստացում՝ կառավարության ֆինանսական ռազմավարությանը համաձայն:
Պորտուգալիա	Կայուն ձևով հանրապետության փոխատվական պահանջների իրականացում, երկարաժամկետ կտրվածքով պետական պարտքի ծախսերի նվազագույն մակարդակի ապահովում՝ հաշվի առնելով կառավարության կողմից նախապես սահմանված ռիսկը:
Կորեայի Հանրապետություն	Կառավարության ֆինանսավորման պահանջների իրականացում, միջնաժամկետում և երկարաժամկետում նվազագույնի հասցնել ծախսերի մակարդակը և զարկ տալ ազգային պարտատոմսերի շուկային:
Շվեդիա	Կարճաժամկետում և երկարաժամկետում նվազագույն հասցնել պարտքի արժեքը՝ հաշվի առնելով ռիսկի ընդհանուր սահմանափակումները:
Թայլանդ	Իջեցնել փոխատվական ծախսերը, կառավարել վերաֆինանսավորման ռիսկը՝ կառավարել պետական ֆինանսավորման պահանջները և զարգացնել պարտքի ազգային շուկան:
Մեծ Բրիտանիա	Իրականացնել կառավարության պարտքի կառավարման քաղաքականությունը՝ երկարաժամկետում նվազագույնի հասցնելով ֆինանսավորման ծախսերը՝ հաշվի առնելով ռիսկը:
ԱՄՆ	Փոխառել այնքան, որպեսզի բավարարվեն կառավարության մոնետար պահանջ-մուներքները և նվազագույնի հասցնել կառավարության փոխատվական ծախսերը:

Ֆինանսական ճգնաժամների և պետական անվճարունակության առաջացման հիմնական պատճառը կայանում է նրանում, որ պետությունն իր առաջնային ծախսերը կենտրոնացնում է պարտքի սպասարկման վրա: Արդյունքում պետական բյուջեն մեծ ռիսկի կշռով կարող է ենթարկվել փոփոխությունների՝ կապված արտաքին կամ ներքին շուկերի հետ: Տվյալ պարագայում երկրի վարկային վարկանիշը կարող է նվազել, իսկ կառավարությունը՝ զրկվել միջազգային կապիտալի շուկաներ մուտք գործելու իրավունքից: Պետական «դեֆոլտից» խուսափելը համարվում է բոլոր վարկառու երկրների առաջնային նպատակներից մեկը: Այդ ճգնաժամի առաջացման հավանականությունը շատ ավելի բարձր է այն երկրներում, որոնք մեծ կախվածություն ունեն որևիցե արտարժույթից, կամ որտեղ կարճաժամկետ վարկերն ունեն կենտրոնացման բարձր մակարդակ: Մի շարք զարգացող երկրներում առաջնային նպատակ է դրվում ողջամիտ ծախսերով ֆինանսավորման հայթայթումը՝ հաշվի չառնելով շուկայական ռիսկը: Ռիսկերի և ծախսերի անհամադրելի մակարդակն ավելի է բարդացնում պարտքի կառավարիչների գործը, որոնք շատ հաճախ դիմում են լրացուցիչ ֆինանսավորման կամ գործող վարկերի վերակառուցման միջոցներին: Նման իրավիճակներում պարտքային զամբյուղն առաջին հերթին ազատվում է բարձր ռիսկային պարտավորություններից: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, հենց բանկային հատվածի ռիսկային պարտավորություններն են ասիական երկրներում հանգեցնում խոր պարտքային ճգնաժամի (արտաքին պարտքի մեծությունը կրկնակի անգամ գերազանցեց ՀՆԱ-ին): Կառավարության համար ընդունելի ռիսկ-ծախսեր հարաբերակցությունն իրականում փոփոխական մեծություն է, քանի որ ժամանակի ընթացքում փոփոխվում են պետության կարճաժամկետ նպատակները: Այդ իսկ պատճառով հնուտ կառավարիչները պետք է կարողանան իրենց ուժերը կենտրոնացնել մի կողմից ռիսկի առավելագույն թուլատրելի մակարդակի սահմանման գործում, մյուս կողմից ծախսերի անընդհատ վերանայման հարցում:

Ուսումնասիրելով պետական պարտքի կառավարման փորձը՝ ըստ զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների, կարող ենք եզրակացնել, որ դիտարկված բոլոր երկրներում պետական պարտքի կառավարման նպատակն է ապահովել կառավարության ֆինանսական

կարիքների բավարարումը և հնարավոր նվազագույն ծախսերով պարտավորությունների կատարումը միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում: Թեև երկրների մեծ մասում որպես պարտքի կառավարման նպատակ հստակ նշված է ռիսկերի կառավարման անհրաժեշտությունը, այնուամենայնիվ այս առումով երկրների մեջ կան էական տարբերություններ: Մասնավորապես, ԱՄՆ-ի պետական պարտքի կառավարման նպատակներում շեշտված է կառավարության ֆինանսական կարիքները նվազագույն ծախսերով բավարարելու վերաբերյալ:

Владимир Чинарян

Зарубежны опыт управления внешнево государственного долга в условиях кризиса

Аннотация

В основе управления государственным долгом лежат подходы различных международных организациях и специалистов, что и свидетельствует о том, что в управлении государственным долгом важную значимость имеет организационная структура последнего. В общем, управление государственным долгом может реализоваться с помощью министерства финансов, центрального банка, а также отдельной специализированной организации. При управления государственным долгом.

Vladimir Chinaryan

External public debt management practices worldwide in times of crisis

Abstract

Approaches of various renowned scholars and international organizations to the public debt management state that institutions engaged in the public debt management play a key role. In general, the public debt could be managed by the Ministry of Finance, the Central Bank, and other specialized institutions. Therefore, the study of public debt management practices by various nations is of high significance.

ՀԱՐԿՄԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ «ինչպե՞ս պետք է հարկել» «հավերժական» հարցի պատասխանի վերաբերյալ մինչև օրս եղած տեսական ընկալումներն ու մոտեցումները, որոնք իրենց տեսական ձևակերպումներն են ստացել հարկման արդարության, արդյունավետության ու համընդհանրության սկզբունքներում, եղել և շարունակում են մնալ տարբեր: Դա բնական է ու տրամաբանական, քանի որ մարդկանց ապրած ժամանակաշրջանը, միջավայրը, մասնագիտությունը, սոցիալ-հոգեբանական վիճակը և այլն ձևափոխում ու կերպարանափոխում են մարդկանց ընկալումները և մոտեցումները: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև քննարկվող հարցին: Ուստի, հարկման սկզբունքների ժամանակակից չափորոշիչների ընտրությունը պետք է կատարել՝ ներկա իրողությունները հիմք ընդունելով, չմոռանալով, որ տարբեր երկրներում ու տարբեր ժողովուրդների մոտ դրանք տարբեր են: Եվ բնավ էլ պետք չէ ու ճիշտ չէ ներկան կառուցել անցյալը հիմք ընդունելով կամ անցյալի՝ իր ժամանակին առաջադիմական մոտեցումները գործողություններ դարձնելով:

Պատմությունն ու մարդկությունն ընդունում են դասական տնտեսագիտության ներկայացուցիչներ Ադամ Սմիթի և Դավիթ Ռիկարդոյի գիտական արժեքավոր հետազոտությունների կարևորությունը և դերը տնտեսագիտության զարգացման գործում: Սակայն պետք է փաստել, որ հարկման արդյունավետության պահանջների նրանց ձևակերպումները ժամանակակից պայմաններում չեն կարող տալ հարկման արդյունավետության լավագույն բանաձևի ձևակերպումը, քանի որ ժամանակակից պայմաններում դրա դրսևորումները կրել են բազմաթիվ կերպարանափոխումներ, որոնց ճանաչումը և գործնականում դրանց կիրառումը նոր մոտեցումներ են պահանջում: Ա.Սմիթի կողմից ձևակերպված հարկման հարմարավետության ու էժանության պահանջներին ժամանակակից պայմաններում պետք է վերագրել հարկատուների կողմից նրանց հարկային պարտականությունների կատարման հետ կապված փողի, աշխատանքի և ժամանակի բոլոր լրացուցիչ ծախսերի նվազեցումը: Ասվածը, առաջին հերթին, վերաբերում է հարկատուների կողմից հարկերի հաշվառման, հաշվետվությունների կազմման ու ներկայացման, հարկային օրենսդրության տիրապետման հետ կապված բոլոր լրացուցիչ ծախսերի նվազեցմանը: Դա նշանակում է, որ հարկային օրենսդրության և ենթօրենսդրական ակտերի փոփոխությունները պետք է ունենան դրանց պարզեցման ու հստակեցման կողմնորոշվածություն, հարկատուների համար հեշտ ու հասանելի պետք է լինի հաշվարկների ու հաշվետվությունների փոփոխված ձևերի, ինչպես նաև ընդունված օրենքների ու դրանց կիրարկման կարգերի ձեռքբերումը:

Դ.Ռիկարդոն հարկի մեծությունն արդարացիորեն պայմանավորում էր հարկատուի վճարունակությամբ: Այդպիսի մոտեցումը ժամանակին բավականին առաջադիմական քայլ էր, քանի որ այդ ժամանակահատվածում հարկերը հիմնականում գանձվում էին սպառման առարկաներից (աղ, շաքար, հաց և այլն), և իրականում ցածր եկամուտներ ունեցողներն իրենց եկամտի անհամեմատ ավելի մեծ մասն էին վճարում հարկի ձևով, քան բարձր եկամուտներ ունեցողները: Սակայն դասական տնտեսագիտության ներկայացուցիչները չկարողացան «ճանաչել» հարկերի վճարման հարցում բոլոր քաղաքացիների հավասարությունը, և հարկի մեծության արդարացիության մասին նրանց գաղափարները սահմանափակվեցին քաղաքացիների միայն առանձին խմբերի շրջանակներով:

Հարկման առանձին մոտեցումներ իրենց արժանի հիմնավորումներն են գտել Ջոն Մեյնարդ Բեյնսի «Ձբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատության մեջ՝ ներկայանալով որպես դասական տնտեսագիտության այլընտրանք, որը հեղափոխություն էր տնտեսագիտության մեջ:

Լինելով պրոգրեսիվ հարկման կողմնակից՝ Ջ.Քեյնսն անհրաժեշտ էր համարում խնայված եկամուտների հարկումը և այդ միջոցների ուղղումը պետության ընթացիկ ծախսերի ու ներդրումների ֆինանսավորմանը¹:

Կարևորելով և արժևորելով քեյնսյան մոտեցումները տնտեսության պետական կարգավորման գործում, այնուամենայնիվ չպետք է մոռանալ, որ նա վերոնշյալ աշխատությունը հրատարակել է 1936 թվականին, իսկ հետազոտությունն իրականացնելով դրանից առաջ, հեղինակը չէր կարող այդ հարցերը չքննարկել 1929-1933թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի համատեքստում: Թեպետ պետք է փաստել, որ համընդհանուր ճանաչում ստացած նշված ժամկետից հետո էլ ճգնաժամը շարունակվել է: Եթե ճգնաժամը գրքի հրապարակմանը հաջորդած շարունակություն չունենար, Ջ.Քեյնսը պատմության մեջ չէր մտնի որպես «կապիտալիզմի փրկիչ, իսկ նրա կողմից առաջարկված մոտեցումները՝ տնտեսության պետական կարգավորման ու առողջացման դեղատոմսեր»:

Չետևաբար պետք է արձանագրել, որ քեյնսյան մոտեցումներն իրենց արդարացրին գործնականում, և նրա կողմից առաջարկված «դեղատոմսերի» շնորհիվ էր նաև, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամը «ժամանակին անցավ պատմության գիրկը»:

Այն, որ Ջ.Քեյնսի հետազոտության վրա իր դրոշմն է թողել ճգնաժամը, վկայում է նաև այն, որ հետազոտության հեղինակն անհրաժեշտ էր համարում «խնայված եկամուտների հարկումը», որը ոչ ճգնաժամային իրավիճակներում չի կարելի արդարացված համարել, քանի որ այդպիսի պայմաններում, որպես կանոն, մարդիկ փողը (փ) չեն տնտեսում կամ խնայում, այլ դնում են շրջանառության մեջ՝ հավելյալ կամ լրացուցիչ փող ստանալու և իրենց կարողությունները մեծացնելու սպասումներով: Մինչդեռ, ճգնաժամային իրավիճակներում ակտիվանում են մարդկանց բացասական սպասումները, մարդիկ սկսում են արդարացիորեն պակաս վստահել կամ չվստահել ներդրումային ընկերություններին, բանկերին և նույնիսկ պետությանը, որի արդյունքում մարդկանց մեջ ուժեղանում է (միզոցե նաև բնագոյաբար) միջոցները խնայելու ու ոչ ֆինանսական կազմակերպություններում դրանք պահպանելու հակումը՝ դրանով չգիտակցված խորացնելով ճգնաժամը: Ուստի, դասեր քաղելով քեյնսյան մոտեցումներից, խնայողությունների հարկում պետք է կատարել միայն ճգնաժամային պայմաններում, իսկ հակառակ պարագայում դա կլինի անարդար: Անարդար է նաև խոստանալ «...չբարձրացնել հարկերը, չմտցնել նոր հարկեր...», հատկապես, երբ դա անում են ժողովրդավարական երկրների նախագահները՝ օրենսդիր մարմնում չունենալով պատգամավորների մեծամասնության աջակցությունը:

Դրա անարդարությունը պայմանավորված է այն փաստով, որ բոլոր ժողովրդավարական երկրներում հարկերը սահմանում է օրենսդիր մարմինը: Երկրների նախագահների խոստումները և երդումներն արդարացված կարող են լինել միայն օրենսդիր մարմնի մեծամասնության աջակցությունն ունենալու դեպքում:

Վերոհիշյալները վառ ապացույցներ են այն բանի, որ ներկա բարդ ժամանակներում այլ են դարձել տնտեսական ու քաղաքական իրողությունները, մարդկանց մտածելակերպն ու գործունեության միջավայրը և այլն: Եթե դրանց էլ հավելենք համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ կապված բացասական սպասումները, ապա ակնհայտ է, թե որքան բարդ է դառնում հարկազանձումն արդարության, արդյունավետության և համընդհանրության սկզբունքներով իրականացնելը ներկա ժամանակներում, քանի որ.

1. Ժողովրդավարացման ուղին բռնած բոլոր երկրներում հարկերը սահմանվում են օրենսդիր մարմնի կողմից: Դա նշանակում է, որ կառավարություններն ու երկրների ղեկավարները պետք է օրենսդիր մարմնում ունենան ժողովրդի ընտրյալների մեծամասնության աջակցությունը:

Արդարացի ու արդյունավետ հարկազանձում իրականացնելու համար, ժողովրդի ընտրյալների մեծամասնության աջակցությունից բացի, շահագրգիռ կողմերից՝ երկրի նախագահից ու կառավարությունից պահանջվում է ձևավորել նաև ոչ միայն պրոֆեսիոնալ կամ արհեստավարժ, այլև երկրի ժողովրդի մեծամասնության (կամ, որ նույնն է ասել, պետության) շահերի պաշտպանությամբ մտահոգված մեծամասնություն:

¹ Там же, стр. 157.

2. Ժողովրդավարության ուղին բռնած երկրների գործադիր մարմինները, որպես կանոն, ձևավորվում են, առավել շատ, ոչ թե պրոֆեսիոնալիզմի, այլ քաղաքական հենքով, որը քաղաքական ժամանակակից համակարգի բացասական դրսևորումներից է և վնասում է երկրների տնտեսական վերելքին ու հետագա զարգացմանը: Դասական այն հայտնի ճշմարտությունը, որ «Քաղաքականությունը էկոնոմիկայի խտացված արտահայտությունն է», այլևս չի համապատասխանում համաշխարհային ներկա իրողություններին, այլ ընդհակառակն է իշխողն անարդարացիորեն: Ներկա ժամանակներում էկոնոմիկան քաղաքականացվել է ու «զրկվել» իրեն բնորոշ տնտեսական հիմքից, քանի որ, ընդհանուր առմամբ, հարկազանձման քաղաքականությունը մշակում և կյանքի են կոչում ոչ թե պրոֆեսիոնալները, այլ քաղաքական դիլետանտներն ու նրանց ստրկամիտ և հլու-հնազանդ ծառաները: Միգուցե, ժողովրդավարության, այսպես կոչված, ջատագովները համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի «դառը պտուղներից» հետագայում դասեր քաղեն այդ առումով: Ժողովրդավարության կուլտուրա ու մշակույթ չունեցող երկրները, ժողովրդավարության նվաճումներին տուրք տալով ու դրա ներդրման անհաջող փորձեր անելով, մի քայլ առաջ են գնում, իսկ երկու քայլ ետ, քանի որ «լավի արագացված սեփականաշնորհումը» կամ «երեխայի 9-ամսյա ժամկետից շուտ ծնունդը», որպես կանոն, ցանկալի արդյունքներ չեն արձանագրում:

Ընդհանուր առմամբ, օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորման գործընթացի ապաքաղաքականացման ակտիվացումը կամ քաղաքականացման նվազեցումը լուրջ խթան կարող են դառնալ տնտեսագիտորեն հիմնավորված ու արդարացված, ինչպես նաև ազգաբնակչության մեծամասնության շահերից բխող հարկային օրենսդրություն ունենալու համար: Հակառակ դեպքում հարկային օրենսդրությունում շարունակական բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն կզգացվի (ինչպես ներկայումս է), իսկ հարկահավաքները, 19-րդ դարի ռուս հայտնի գրող Նիկոլայ Նեկրասովի պատկերավոր արտահայտությամբ, հանդես կգան «Ազահ ու ոչ ոքի հետ չկիսվող հարկահավաքի տեսքով»¹:

3. Ժամանակակից պայմաններում դժվարացել է, հատկապես, եկամուտների ամբողջական հաշվառման նկատմամբ արդյունավետ վերահսկողության և արդարացի հարկազանձման իրականացումը, որի պատճառով անցումային տնտեսությամբ երկրներում հարկային բեռն ինչպես օրենսդրորեն, այնպես էլ գործնականում, տեղափոխված է անուղղակի հարկերի վրա, քանի որ.

- ա) Այդպիսի հարկերի գանձումն աննկատելի է դառնում ժողովրդի համար և ներառվում է ապրանքի գնի մեջ ու մարդկանց ընկալումներում դիտարկվում որպես ապրանքի գնի բաղադրիչ և ոչ որպես հարկ:
- բ) Անուղղակի հարկ վճարողը երբեք վաճառողը չի լինում, այլ այն ամբողջությամբ վճարում է գնորդը:

Մինչդեռ հարկային եկամուտների գերակշիռ մասն անհրաժեշտ է ձևավորել ուղղակի հարկերից՝ իրականացնելով արդյունավետ հարկային վարչարարություն և ձևավորելով ուղղակի հարկերի գանձման գերակայությունն ապահովող հարկային օրենսդրություն: Այդ հիմնախնդրի լուծումը բխում է հենց հարկման արդարության սկզբունքի պահանջներից, քանի որ, որպես կանոն, հարկումը պետք է կատարվի հարկատուի մաքուր եկամտից: Ուստի անհրաժեշտ է շահութահարկի հաշվարկման մեխանիզմներում տեղադրել գիտականորեն հիմնավորված ու տրամաբանված մոտեցումներ, որը պետք է վերաբերի ոչ միայն հարկվող շահույթի հաշվարկմանը (որն անվանվում է հարկվող օբյեկտ), այլև դրա նկատմամբ կիրառվող տոկոսադրույքներին: Արդարացված չի կարող համարվել հարկվող շահույթի հաշվարկման մոտեցումների անտեսման պայմաններում հարկադրույքների համեմատությունների հիման վրա հարկային բեռի մասին դատողություններ կատարելը: Դա մեխանիկական մոտեցում է, իսկ մասնագիտական առումով՝ նաև անպտուղ: Ուստի, չի կարելի համաձայնվել այն տնտեսագետների² հետ, ովքեր ամերիկացի տնտեսագետ Ա.Լաֆերի կողմից կառուցված հարկման պրոգրեսիվության և բյուջեի

¹ Налоги. Люди. Время... или этот безграничный мир налогов. Под. ред. А.В.Брызгалина. Екб.: Изд.-во "Налоги и финансовое право", 2008, стр. 346.

² Кравченко Л. А. "Налоговые реформы 80-х годов в США (Социально-экономические аспекты)", М., "НИФИ" 1989, стр. 9, Пелеляев С. Г. "Законы о налогах: элементы структуры", М.: СВЕА, 1995, стр. 37.

հարկային եկամուտների կախվածության պարաբոլից (որը տնտեսագիտության մեջ հայտնի է «ԼաՖերի կոր» անվանմամբ) բխեցված առանձին եզրակացություններ փորձում են տարածել այլ երկրների վրա: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Ա.ԼաՖերի այն եզրահանգմանը, որի համաձայն բյուջեի հարկային վճարումների դրույքաչափը պետք է կազմի 30%, որի սահմաններում մեծանում են բյուջեի մուտքերը, 40-50% դրույքաչափի պայմաններում այդ աճը մի փոքր դանդաղում է, իսկ երբ հարկադրույքը գերազանցում է այդ չափը, որն անվանվել է «արգելված գոտի», ապա նկատվում է բնակչության խնայողությունների, տնտեսության մեջ ներդրումների և հարկային մուտքերի կտրուկ նվազում: Դրա արդյունքում Ա.ԼաՖերը բյուջեի եկամուտների ավելացման ու տնտեսության զարգացման ճիշտ ուղի է համարում հարկադրույքների իջեցմամբ հարկման բազայի ընդլայնումը, որը և այլ ուրիշ հայեցակարգային մոտեցումներ մեծ դեր խաղացին ԱՄՆ-ի տնտեսության զարգացման գործում այդ երկրի 40-րդ նախագահ Ռոնալդ Ռեյգանի օրոք:

Դա պետք է բացատրել այն փաստով, որ Ա.ԼաՖերը վերոհիշյալ պարաբոլը կառուցել է ամերիկյան տնտեսության իրողությունների և ԱՄՆ-ում գործող հարկային օրենսդրության հաշվառմամբ: Բնականաբար, վերլուծությունների և ուսումնասիրության արդյունքում ստացված եզրակացություններն առավել շատ օգտակար կարող են լինել նույնատիպ տնտեսություն ու նմանվող հարկային օրենսդրություն ունեցող երկրների համար: Չարկ է նշել նաև, որ հարկային բեռը, շահութահարկի գծով, առավել շատ կախվածության մեջ է գտնվում ոչ թե դրույքաչափից, այլ հարկվող շահույթի (այն համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է) հաշվարկման մեխանիզմներից ու դրան մասնակից այնպիսի բաղադրիչներից, ինչպիսիք են.

Չամախառն եկամտից նվազեցվող համախառն եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերը, որոնց վերաբերում են.

- 1) Չարկատուի սեփական կապիտալի նվազեցմանն ուղղված ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը:
 - 2) Անհրաժեշտ են համարվում ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման, խորհրդատվական ու իրավաբանական ծառայությունների, գույքի պահպանման, կադրերի պատրաստման և այլ, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը՝ բացառությամբ.
- ա) մասնակիցներին շահաբաժինների կամ նման այլ ձևով հարկատուի սեփական կապիտալի բաշխման,
- բ) այլ անձի կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումների,
- գ) հարկատուի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնենմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերության,
- դ) արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների ու պարտավորությունների, սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման բացասական արդյունքի,
- ե) ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվների կամ դրանց հաշվին կատարված ծախսերի, որոնք իրենց տնտեսագիտական բովանդակությամբ եկամուտ են, բայց հարկվող շահույթի որոշման իմաստով որպես այդպիսին չեն դիտարկվում, ինչպես նաև. ա) վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար կառավարության սահմանած չափը գերազանցող վճարների, բ) արտերկրում գովազդի, մարքեթինգի (ապրանքային և ծառայությունների շուկայի ուսումնասիրություն, ապրանքային և ծառայությունների շուկայում առաջխաղացում), կադրերի պատրաստման և վերապատրաստման համար կառավարության սահմանած չափը գերազանցող ծախսերի, գ) հատուկ սննդի, արտահագուստի և այլ հանդերձանքի, աշխատակիցներին օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների համար կառավարության սահմանած չափը գերազանցող ծախսերի, դ) արտերկրում գործուղման ծախսերի, ե) կառավարության սահմանած չափը գերազանցող ներկայացուցչական ծախսերի, զ) առողջապահական հիմնարկների, ծերերի

և հաշմանդամների տների, մանկական նախադպրոցական հիմնարկների, վերականգնողական ճամբարների, մշակութային, կրթական և մարզական հիմնարկների, ինչպես նաև բնակարանային ֆոնդի օբյեկտների պահպանման համար կառավարության սահմանած չափը գերազանցող ծախսերի (այդ թվում ամորտիզացիոն մասհանումների և նորոգման ծախսերի), է) պետական կամ համայնքների բյուջեների, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դիմաց գանձվող տույժերի, տուգանքների և այլ գույքային սանկցիաների, բացի քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար գանձվողներից, ը) անհատույց տրամադրած ակտիվների, ներած պարտավորությունների, թ) միավորումներին և արտագերատեսչական կառավարման այլ կառույցներին տրամադրված հատկացումների, ժ) սպասարկող տնտեսությունների պահպանման ծախսերի (շինությունների անվճար տրամադրում, հանրային սննդի ձեռնարկություններին կոմունալ ծառայությունների արժեքի վճարում) և այլն:

Ընդ որում, հարկվող շահույթի որոշման նվազեցումների ծախսերի մեծ մասը մասնակցում են միայն կառավարության կողմից սահմանված չափի մասով: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է. ա) բնական պաշարների արդյունահանման նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախագծման աշխատանքների, բ) վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու, գ) արտերկրում գովազդի, մարքեթինգի, կադրերի պատրաստման, դ) հատուկ սննդի, արտահագուստի և այլ հանդերձանքի, ե) գործուղման և ներկայացուցչականի, զ) առողջապահական, նախադպրոցական, մշակութային, մարզային ու կրթական հիմնարկների, ծերանոցների պահպանման և այլնի վրա կատարված ծախսերին, ինչպես նաև վարկերի ու փոխառության դիմաց վճարվող տոկոսագումարներին, որը չպետք է գերազանցի ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույթի կրկնակի չափը:

Մինչդեռ կան ծախսեր, որոնք համախառն եկամտից կատարվող նվազեցումներին մասնակցում են ամբողջությամբ: Դրանց վերաբերում են գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների, հիմնական միջոցների (ընթացիկ ծախսերի մասով) վրա կատարված ծախսերը, գործարքն անվավեր ճանաչելու հետևանքով գործարքի մյուս կողմին վերադարձվող միջոցները, հաշվետու տարում հայտնաբերված նախորդ 3 տարիներում ավելցույց տրված եկամտի և (կամ) պակաս ցույց տրված նվազեցման գումարները:

Կան նաև ծախսեր, որոնք համախառն եկամտից կատարվող նվազեցումներին ընդհանրապես չեն մասնակցում (հարկային տույժերն ու տուգանքները) և ամբողջությամբ վճարվում են հարկատուի տրամադրության տակ մնացող շահույթի հաշվին, իսկ կան ծախսեր, որոնք համախառն եկամտի նվազեցումներին մասնակցում են մասնակիորեն այն դեպքերում, երբ ոչ առևտրային կազմակերպություններին, գրադարաններին, թանգարաններին, ծերանոցներին փոխանցված միջոցների կամ մատուցած ծառայությունների գումարի մեծությունը չի գերազանցում հարկատուի համախառն եկամտի 0.25%-ը:

Այսպիսով, հարկվող շահույթի հաշվարկման մոտեցումների վերլուծություններից պարզ է դառնում, որ.

- ա) շահութահարկի գծով հարկային բեռի մեծությունը կախված է բազմաթիվ ու բազմապիսի գործոններից, իսկ դրույքաչափն ընդամենը դրանցից մեկն է,
- բ) հարկվող շահույթի հաշվարկման մոտեցումներում տեղադրված են համախառն եկամտից կատարվող նվազեցումների, կամ, որ նույնն է ասել, արտոնությունների բազմաթիվ ու բազմաբնույթ տարրեր, որոնց զգալի մասը ոչ միայն արդարացված ու հասցեական չեն, այլև տնտեսագիտական հիմնավորում չունեն՝ կապված հարկման չափորոշիչների բացակայության հետ: Ուստի, արդարացված չի կարող լինել դրույքաչափերի մեծությունների համեմատությունների հիման վրա դատողություններ անել հարկային բեռի մեծության մասին՝ անտեսելով հարկվող շահույթի հաշվարկման տարբերությունները, քանի որ, կախված դրանց հաշվարկման մոտեցումներից, հարկվող շահույթը կարող է այնքան փոքր լինել, որ շահութահարկի նույնիսկ 60% դրույքաչափի պայմաններում հարկային բեռը լինի թեթև:

Չետևաբար, պետք է փաստել, որ 20% դրույքաչափը, հարկվող շահույթի հաշվարկման գործող մոտեցումների պայմաններում, բավականին ցածր է, որի վկայությունն է այն փաստը, որ.

ա) հանրապետությունում հավաքագրվող հարկային մուտքերի մոտ 80%-ը բաժին է ընկնում անուղղակի հարկերին՝ ԱԱՀ-ին և ակցիզային հարկին,

բ) շահութահարկի աճը երբեք համարժեք (ադեկվատ) չի եղել երկնիշ տնտեսական աճին և, դեռ ավելին, առանձին, և ոչ քիչ դեպքերում, հաշվեկշռային շահույթ ունեցող հարկ վճարողները երբեմն ունենում են, այսպես կոչված, «հարկային վնաս»: Վերջինս վկայում է հարկվող շահույթի հաշվարկման մոտեցումների բարեփոխման ու կատարելագործման անհրաժեշտության մասին, որն անհրաժեշտ կլինի տարբերակել ըստ գործունեության ոլորտների: Ասվածը վերաբերում է նաև շահութահարկի դրույքաչափերին:

Վերը նշված մոտեցումների գործնականում կիրառումը կարող է նպաստել, այս հարկատեսակների մասով, հարկման արդարության սկզբունքի կիրառմանը, որը պահանջում է ունենալ հարկման արդարության պահանջի կիրառման ընդունելի չափորոշիչներ:

Ուղղակի հարկերի մյուս կարևոր հարկատեսակի՝ եկամտահարկի հարկվող օբյեկտը հարկատուի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է, որի նկատմամբ կիրառելով դրույքաչափերը՝ հաշվարկվում է եկամտահարկի մեծությունը: Այս հարկատեսակի հարկվող օբյեկտի հաշվարկման մոտեցումները ևս զուրկ են հարկման ժամանակակից սկզբունքների հաշվառման չափորոշիչներից ու, դեռ ավելին, հարկման միավոր է դիտարկված ոչ թե ընտանիքի ընդհանուր, այլ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համախառն եկամուտը: Այս պայմաններում ֆինանսական ծանր վիճակում գտնվող ընտանիքի եկամուտ ստացող անդամը ճանաչվում է հարկ վճարող, որը մասսայական երևույթ է դարձել 60-70% աղքատ ազգաբնակչություն ունեցող Հայաստանում:

Հարկվող եկամտի հաշվարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են.

- 1) Նվազեցվող եկամուտները, որոնց վերաբերում են.
 - ա) զինծառայողների ծառայության հետ կապված եկամուտները,
 - բ) փոխհատուցման վճարները սահմանված նորմերի չափով, իսկ դրանց բացակայության պայմաններում՝ ամբողջ վճարը,
 - գ) ժառանգության և նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացված գույքն ու դրամական միջոցները,
 - դ) ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց ցույց տրվող օգնությունը,
 - ե) պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց անհատույց տրվող գույքը և դրամական միջոցները,
 - զ) պարենային բավարարման արժեքը, որը դեռևս սահմանված չէ,
 - է) անհատույց ստացված օրենքով սահմանված կարգով շնորհի համարվող միջոցները,
 - ը) սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի վաճառքից ֆիզիկական անձանց ստացած գումարները՝ բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միջոց հանդիսացող գույքի,
 - թ) կրթաթոշակները,
 - ժ) ապահովագրական հատուցումները և արժեթղթերից ստացված եկամուտները,
 - ի) արձակման նպաստները, կենսաթոշակները, մահվան դեպքերում տրվող միանվագ օգնությունները, միջազգային մրցույթներում հաղթած մարզիչների ու մարզիկների մրցանակները, վիճակախաղի դրամական և իրային շահումները, բնակարանաշինարարության գրավադրման դիմաց ստացված նպատակային վարկերի սպասարկման համար վճարվող տոկոսագումարները, պետական պարգևները:
- 2) Անձնական նվազեցումը, որի չափը յուրաքանչյուր ամսվա կտրվածքով կազմում է 30000 դրամ:

- 3) Ձեռնարկատիրական գործունեությունից և քաղաքացիական պայմանագրերից ստացված եկամուտների գծով անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:
- 4) Հարկատուի հաշվին կատարվող կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության պարտադիր վճարները:
- 5) Հասարակական ու կրոնական կազմակերպություններին, քաղաքական կուսակցություններին, ծերանոցներին և նմանատիպ հաստատություններին փոխանցված գումարներն ու նատուցած ծառայությունների արժեքը, որի չափը չի կարող գերազանցել հարկվող եկամտի 5 տոկոսը:

Հարկ է նշել նաև, որ հարկվող եկամտի հաշվարկման համատեքստում եկամուտ չհամարվող տարրեր են դիտարկվում նպաստները, կենսաթոշակները, զոհված զինծառայողների ընտանիքի անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողներին տրվող միանվագ վճարները, ալիմենտները և դոնորության դիմաց ստացված գումարները:

Վերոնշյալ մոտեցումների արդյունքում հաշվարկված և ստացված ամսական հարկվող եկամտի գծով եկամտահարկը հաշվարկվում է.

- հարկվող եկամտի 10%-ի չափով՝ հարկվող եկամտի մինչև 80000 դրամի դեպքում,
- 8000 դրամին գումարած 80000 դրամը գերազանցող գումարի 20%-ի չափով՝ հարկվող եկամտի 80000 դրամից ավելի դեպքում:

Վերոնշյալ մոտեցումներով եկամտահարկի գանձման պրակտիկան խախտում է հարկման արդարության ու արդյունավետության սկզբունքների պահանջները և կարելի է բնորոշել որպես աղքատ ազգաբնակչության քրտինքը քամելու տեխնիկա:

Эмма Джанинян

Современные подходы к применению принципов налогообложения

Аннотация

Одной из основных проблем государства является обеспечение поступления в бюджеты всех уровней и во внебюджетные фонды налогов, сборов и иных установленных законом платежей. Финансовая деятельность государства по получению налогов будет действенной только при условии существования в стране оптимального механизма администрирования. Формирование правовой базы налогового администрирования в Армении началось в 1992г. и продолжается по сей день.

Emma Janinyan

Contemporary approaches to utilizing tax administration tools

Abstract

One of the main challenges the government faces is to ensure tax revenues and other fees and payments for both local and central governments, and extra-budgetary funds. Financial performance of the government could be efficient if it ensures the required tax revenues in case efficient tax administration tools are in place. The design of legislation regulating tax administration procedures in Armenia started in 1992 and has been constantly revised.

**ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Արդի ժամանակաշրջանում առկա տնտեսական և սոցիալական բազմաթիվ խնդիրների լուծումը պահանջում է տնտեսական քաղաքականության կայունության մշակման և իրագործման համալիր մոտեցում, որում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հարկային քաղաքականությունը:

Հարկային քաղաքականությունը հարկման ոլորտում իրականացվող կոնկրետ միջոցառումների ամբողջությունն է:

Պետության կողմից արտադրատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով պահանջվող ծախսերի ֆինանսավորման, ինչպես նաև պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրը հարկերն են, պետական տուրքերը, ոչ հարկային եկամուտները, ինչպես նաև փոխառությունների ձևով ստացված եկամուտները:

Յուրաքանչյուր երկրում հարկային քաղաքականության իրականացման հիմնական նպատակը անհրաժեշտ քանակության հարկային եկամուտների ձևավորումն է՝ ըստ գործող հարկային օրենսդրության ու սահմանված նորմատիվային ակտերի:

Բնութագրելով ՀՀ հարկային քաղաքականությունը՝ առաջին հերթին պետք է բացահայտել.

- հարկային քաղաքականության նպատակները,
- հարկային քաղաքականության իրականացման մեթոդները,
- հարկային քաղաքականության սուբյեկտներին:
Ընդունված են հարկային քաղաքականության հետևյալ հիմնական նպատակները՝
- պետության ակտիվ մասնակցությունը հասարակական վերարտադրության գործընթացներին,
- տնտեսության պետական կարգավորումը վարչական կամ տնտեսական համապատասխան մեթոդներով,
- եկամուտների կարգավորմանը նպատակաուղղված՝ կառավարության սոցիալական քաղաքականության աջակցությունը,
- բյուջեի եկամտային մասի մոտքերի ու ծախսային մասի օպտիմալ համամասնության ապահովումը:

Սահմանելով հարկային քաղաքականության նպատակները՝ հարկ է ընտրել դրանց իրագործման մեթոդներն ու եղանակները: Այս կամ այն մեթոդի օգտագործումն անմիջականորեն կախված է հարկման կոնկրետ խնդիրներից: Եթե տվյալ պահին կառավարությունը շահադրված է խթանել արտահանումը, պետք է դիմի հարկային ներգործության հետևյալ երկու մեթոդներից՝

- ընդլայնել արտահանողների հարկային արտոնությունները,
- խստացնել ներմուծողների հարկումը:

Ինչ վերաբերում է հարկման եղանակներին, դրանք իրենց հերթին պայմանավորվում են հարկային քաղաքականության նպատակներով ու մեթոդներով:

ՀՀ հարկային քաղաքականության ձևավորմանն ու իրագործմանը մասնակցում են կազմակերպական որոշակի լիազորություններով օժտված՝ պետական իշխանության համապատասխան մարմինները:

Հարկային քաղաքականության այս կամ այն ռազմավարության մշակման դեպքում անհրաժեշտ է այն արժեքավորել նաև բյուջետային քաղաքականության տեսանկյունից, քանի որ դրանք հիմնականում գործում են որպես մեկ ամբողջական համակարգի իրականացման գործոններ:

Յուրաքանչյուր երկրում իրականացվող հարկային քաղաքականության շնորհիվ մի դեպքում կարող են ապահովվել բարձր հարկային եկամուտներ՝ հարկային դրույքաչափերի անընդհատ վերանայման ճանապարհով, որի հիմնական նպատակը բյուջեի հարկային եկամուտների ավելացումն է և համախառն ներքին արդյունքի կառուցվածքում հարկային եկամուտների տեսակարար կշռի բարձրացումը:

Մյուս դեպքում՝ հարկային քաղաքականությունը կարող է հանգեցնել հարկային եկամուտների կրճատման և հարկերի խթանող դերի բարձրացման:

Հարկային քաղաքականության նշված ուղղություններից առաջինը մակրոտնտեսագիտության կողմից ընդունվել է որպես տնտեսությունը կաշկանդող, իսկ երկրորդը՝ որպես խթանող հարկային քաղաքականություն:

Հարկային ճկուն քաղաքականության իրականացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ հարկերի ավելացումը, հարկային դրույքաչափերի վերանայումները պետք է համատեղելի լինեն տնտեսական արդյունավետության բարձրացման, արտադրության գործոնների արդյունավետ բաշխման և օգտագործման հետ: Ռա նշանակում է, որ հարկային քաղաքականությունը պետք է խթանի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և բացառի այնպիսի երևույթների առկայությունը, որոնք կհանգեցնեն գների բարձրացման, պահանջարկի և առաջարկի կտրուկ փոփոխման, սոցիալական շերտավորման խորացման: Նման իրավիճակը կանդրադառնա վճարունակության մակարդակի իջեցման վրա, որի հետևանքով պահանջարկի աստիճանաբար կրճատումը կհանգեցնի նաև առաջարկի տեղաշարժերի՝ տնտեսավարող սուբյեկտները կսկսեն ուղիներ փնտրել հարկերից խուսափելու, ստվերային տնտեսության շրջանակները ընդլայնելու համար:

Երկրի հարկային քաղաքականության շնորհիվ ձևավորված հարկային համակարգը, առանձին հարկերի գծով սահմանված դրույքաչափերը պետք է նպաստեն հարկերի այնպիսի քանակության ձևավորմանը, որը կարող է համատեղելի լինել տնտեսության արդյունավետության բարձրացման, արտադրության կազմակերպման սկզբունքների ու պետության նպատակային խնդիրների հետ:

Անձնական (սեփական) ունեցվածքի պաշտպանությունը, այդ թվում նաև պետությունից, յուրաքանչյուր մարդու գործունեության մեջ համարվում է ուժեղագույն շարժառիթ և զրեթե կախված չէ նրա օրինապահության աստիճանից, քանի որ բացասական հույզերն ի հայտ են գալիս անկախ մարդու կամքից և ցանկությունից: Հարկերին հակազդելը, հարկատուների՝ հարկեր չվճարելու կամ դրանց փոքր մասը վճարելու ձգտումը միշտ էլ եղել է, կա և կլինի այնքան ժամանակ, քանի դեռ հարկերը կազմում են բյուջետային եկամուտների հիմնական մասը: Այն օբյեկտիվ երևույթ է և կախված չէ պետական կարգից, կառավարման ձևից, հարկային օրենքների որակից և հասարակության բարոյականությունից, այլ պայմանավորված է հարկերի հիմնական՝ ֆիսկալ գործառույթով, ինչպես նաև հարկի տնտեսաիրավական բովանդակությամբ՝ քաղաքացիների սեփականության մի մասի ստիպողական և պարտադիր բռնագրավմամբ և դրա միավորմամբ պետական կարիքների համար:

Հարկերից խուսափելու ձգտումը պետության ցանկացած ֆիսկալ միջոցառման հակազդեցության դրսևորումներից մեկն է: Այդ հակազդեցությունը իրական է՝ պայմանավորված այս կամ այն սեփականատիրոջ կողմից ցանկացած ոտնձգություններից այս կամ այն ձևով իր ունեցվածքը, կապիտալն ու եկամուտները պահպանելու ձգտմամբ: Քանի դեռ գոյություն ունեն պետությունը, մասնավոր սեփականությունը, պետությունից կպահանջվի այդ սեփականության հաշվին հարկերի ձևով ֆինանսավորում, իսկ հարկատուները դրան կհակազդեն իրենց հարկային բեռը թեթևացնելու փորձերով: Այն պայմանավորված է՝

- հարկային արտոնությունների առկայությամբ,
- հարկման տարբեր դրույքների առկայությամբ,
- օրենսդրական դրույքների ձևակերպման անճշտությամբ և աղավաղվածությամբ:

Այն թույլ է տալիս դատարաններում բավականին հաջող բողոքարկելու հարկային մարմինների գործողություններն ու որոշումները՝ հիմնվելով «ինչն օրենքով չի արգելվում, դա թույլատրելի է համարվում» սկզբունքի վրա:

Հարկային բեռի վերաբերյալ առկա մոտեցումների հստակեցման համար կարևոր նշանակություն ունի դրա տարբերակումն ըստ մակարդակների.

- հարկային բեռ միկրոմակարդակում,
- հարկային բեռ մակրոմակարդակում:

Միկրոմակարդակում հարկային բեռի որոշման կիրառվող մեթոդներից արժանահիշատակ է հարկային բեռի որոշման համընդհանուր մեթոդը, ըստ որի հարկային բեռը կազմակերպության կողմից վճարվող բոլոր հարկատեսակների հարաբերությունն է հասույթին՝ ներառյալ նաև այլ իրացումներից հասույթը, որի հաշվարկը կարելի է ներկայացնել ստորև բերված բանաձևով¹.

$$ՀԲ=ՎԲ/ԱԻՀ+ՈԻԵ\times 100\%$$

որտեղ՝

ՀԲ-ն ձեռնարկության հարկային բեռն է,

ՎԲ-ն՝ բոլոր փաստացի վճարվող հարկերի ընդհանուր գումարը,

ԱԻՀ-ն՝ արտադրության (աշխատանքներ, ծառայություններ) իրացումից հասույթը,

ՈԻԵ -ն՝ ոչ իրացվելի եկամուտները:

Սակայն պետք է փաստել, որ վերոնշյալ մեթոդով հաշվարկված հարկային բեռը բնութագրում է միայն արտադրված արտադրանքի կամ մատուցված ծառայության հարկատարությունը և իրական պատկերացում չի տալիս հարկատուի իրական հարկային բեռի մասին: Ուստի անհրաժեշտ է հարկային բեռի որոշման ժամանակ հաշվարկին մասնակից դարձնել նաև արտաբյուջետային ֆոնդեր վճարվող հարկերի և այլ վճարների, ինչպես նաև հաշվարկված, բայց չվճարված հարկերի գումարները: Դեռ ավելին, հարկային բեռի որոշման ժամանակ անհրաժեշտ է հաշվարկին մասնակից դարձնել նաև ձեռնարկության աշխատակիցների կողմից վճարվող եկամտահարկի և աշխատակիցների սոցվճարների գումարները, քանի որ դրանք ներառված են աշխատավարձերի գումարներում և, վերջին հաշվով, անուղղակիորեն վճարվում են գործատուների կողմից աշխատակիցներին վճարվող և գործատուի համար «ծախս», իսկ աշխատակցի համար՝ «եկամուտ» համարվող միջոցների հաշվին: Նույն տրամաբանությամբ, հարկային բեռի բաղադրիչ պետք է դիտարկել նաև գործատուի (ձեռնարկության կողմից) տրվող սոցվճարների գումարները, որը գործատուի համար ծախս է և բացասաբար է ազդում նրա ֆինանսական վիճակի վրա:

Վերոնշյալ մոտեցումներով հաշվարկվող հարկային բացարձակ կամ իրական բեռը գործատու համարվող ձեռնարկությունների կամ հարկ վճարող իրավաբանական անձանց համար կարելի է հաշվարկել ստորև բերված բանաձևի օգնությամբ.

$$ԲՀԲ=ՀՎ+ԱԲՖՎ+ՎԹ+ԵԿ+ԳՍ+ԱՍ,$$

որտեղ՝

ԲՀԲ-ն հարկային բացարձակ կամ իրական բեռն է,

ՀՎ-ն՝ ձեռնարկության կողմից փաստացի վճարված հարկային գումարները,

ԱԲՖՎ-ն՝ արտաբյուջետային ֆոնդերում վճարումները,

ՎԹ-ն՝ վճարումներում թերացումները կամ հաշվարկված, բայց չվճարված հարկերի գումարները,

ԵԿ-ն՝ ձեռնարկության աշխատակիցների եկամտահարկի գումարները,

ԳՍ-ն՝ գործատուի սոցվճարների գումարները,

ԱՍ-ն՝ աշխատակցի սոցվճարների գումարները:

Քանի որ հարկային բացարձակ կամ իրական բեռն արտացոլում է տնտեսավարող սուբյեկտի գործունեությունից հարկային ողջ պարտականությունների գումարը և պատկերացում չի

¹ Лукаш Ш.А. «Оптимизация налогов. Методы и схемы»: полн. практ. руководство. М., : Грос с Медия: РОСБУХ, 2008, стр. 23.

տալիս հարկային բեռի ծանրության մասին, ապա հարկային բեռի մակարդակի որոշման համար անհրաժեշտ է կիրառել հարկային բեռի հարաբերական ցուցանիշը, որն անհրաժեշտ է հաշվարկել որպես հարկային բացարձակ կամ իրական բեռի հարաբերությունն նոր ստեղծված արժեքին:

Նոր ստեղծված արժեքը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$\text{ՆՍԱ}=\text{Յ}-\text{ՆԾ}-\text{Ա}+\text{ՈԻԵ}-\text{ՈԻԾ}$$

կամ

$$\text{ՆՍԱ}=\text{ԱՎ}+\text{ՅՎ}-\text{ԱԲՖՎ}+\text{Շ},$$

որտեղ՝

ՆՍԱ-ն նոր ստեղծված արժեքն է,

Յ-ն՝ արտադրանքի, աշխատանքների կամ ծառայությունների իրացումից հասույթը (ներառյալ ԱԱՅ-ն),

ՆԾ-ն՝ նյութական ծախսերը,

Ա-ն՝ ամորտիզացիան,

ՈԻԵ-ն՝ ոչ իրացվելի եկամուտները,

ՈԻԾ-ն՝ ոչ իրացվելի ծախսերը (առանց հարկային վճարների),

ԱՎ-ն՝ աշխատանքի վարձատրությունը,

ՅՎ-ն՝ հարկային վճարները,

ԱԲՖՎ-ն՝ արտաբյուջետային ֆոնդերում վճարումները,

Շ-ն՝ ձեռնարկության շահույթը:

Զետևաբար, հարկային բեռի մակարդակը, որպես հարաբերական ցուցանիշ, կարելի է հաշվարկել ստորև բերված բանաձևի օգնությամբ.

$$\text{ՀՀԲ}=\text{ԲՅԲ}/\text{ՆՍԱ}\times 100\%$$

Ինչ վերաբերում է հարկային բեռի օպտիմալ մեծության որոշմանը, ապա հարկ է նշել, որ այդ հիմնախնդրի շուրջ տարակարծությունները մինչև օրս չարունակվում են:

Տնտեսագետների մի մասը որպես հարկային բեռի սահմանաչափի որոշման միջոց առաջարկում է, այսպես կոչված, «կարմիր սահմանագծի կանոնը» (Պ.Մոստովոյ և ուրիշներ)¹, որի համաձայն արդյունաբերական ձեռնարկություններից գանձվող հարկերի զումարը 3-5 տարի պետք է ընդհանուր շրջանառության նկատմամբ սահմանափակել որոշակի տոկոսաչափով: Հիշյալ հեղինակների կարծիքով նշված մոտեցման իրագործումը կնպաստի տնտեսության կայունության ապահովմանը և առաջարկի ու պահանջարկի իրական մակարդակների որոշմանը: Մեր կարծիքով, նշված մոտեցման կիրառումն արդարացված կարող է լինել այն երկրներում, որտեղ տնտեսությունում արդյունաբերությունը կունենա գերակշռող մասնաբաժին, ինչպես նաև որոշված կլինի, այսպես կոչված, «կարմիր սահմանագծի» չափը, որին նշված հեղինակները լուծումներ չեն առաջարկում: Բայց որպես խնդրի լուծման փորձ այն ուշադրության արժանի մոտեցում է: Այս մոտեցմանը նմանվող մոտեցման գործնականում կիրառման չհաջողված փորձ պետք է համարել Հայաստանի Հանրապետությունում հաստատագրված վճարների ու պարզեցված հարկի կիրառումը՝ որպես փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման խրախուսման միջոց, որը, թեպետ, նպաստեց գործարարությանը, բայց նշանակալիորեն խորացրեց հարկման բնագավառում առկա անարդարությունները:

Ուստի, նման և դրան նմանվող մոտեցումների գործնականում կիրառումը նպատակահարմար չէ, քանի որ հարկային բեռի բաշխվածությունը պետք է լինի հավասարաչափ, որի դեպքում յուրաքանչյուրը կվճարի այդ բեռի իր «արդարացի» բաժինը, որպեսզի նվազագույնի հասցվեն հարկման արդարության և համընդհանրության սկզբունքների խախտումները:

¹ Мостовой П. Произойдет ли “бостванизация” России? Эксперт, 1997 . стр. 44.

Տնտեսագետների մի ուրիշ խումբ, որպես հարկային բեռի որոշման միջոց, առաջարկում է «արդյունավետ դրույքաչափի» կիրառումը¹ (Յու.Պետրով, Ե.Եգորովա), որի համաձայն այն պետք է հաշվարկել հարկի ընդհանուր գումարի և ձեռնարկությունում ստեղծված հավելյալ արժեքի հարաբերությամբ:

Այս մեթոդաբանությամբ է բնութագրվում ընդհանուր հարկային ծանրության աստիճանը՝ ներդրումների կատարման նպատակահարմարության տեսանկյունից և դրանով առաջարկվում է հարկային արդյունավետ դրույքաչափի սահմանում շահույթի մինչև 58.9 տոկոսի չափով: Տվյալ սահմանաչափը գերազանցելու դեպքում, ըստ հեղինակների, բացառվում է ներդրումային գործընթացների զարգացումն ընդհանրապես:

Մեր կարծիքով, նման մոտեցմամբ հարկադրույքի չափի որոշումը և կիրառումն արդարացված չեն, քանի որ միայն շահույթը ձեռնարկության ֆինանսական վիճակի իրական պատկերը չի կարող տալ: Բացի դրանից, հարց է առաջանում, թե արդյոք ձեռնարկության համար «արդյունավետ» համարվող դրույքաչափը ձեռնտու² է նաև պետությանը և վերջինիս ֆինանսական միջոցների նկատմամբ ունեցած պահանջարկին, թե՞ ոչ՝ հարց, որի պատասխանը «արդյունավետ դրույքաչափի» մեթոդը չի տալիս: Հետևաբար, այս մեթոդը ևս գործնական կիրառության առումով արդարացված չէ՝ մանավանդ որ, որպես կանոն, չեն հարկվում ու չեն նորմավորվում ձեռնարկությունների կողմից կատարվող ծախսերը, որոնք «ուռճացնելով» հնարավոր է նվազագույնի հասցնել հարկվող շահույթի մեծությունը:

Հարկային «բեռի» սահմանման համար առաջարկվում է կիրառել նաև «հարկերի առաձգականության գործակիցը», որը բնութագրում է տնտեսական գործոնների (համախառն ներքին արդյունքի, ազգաբնակչության եկամուտների, մանրածախ կամ սպառողական զնի մակարդակի և այլնի) ազդեցությունը հարկերի ծավալների փոփոխությունների վրա: Այս գործակցով որոշվում է, թե յուրաքանչյուր մեկ միավոր փոփոխությունն ի՞նչ ներգործություն է ունենալու բյուջե վճարվող հարկերի գումարների վրա:

Պետք է փաստել, որ բյուջեի մուտքերի պլանային կամ փաստացի տվյալներով «հարկային բեռի» հաշվարկումը որոշակի ճշգրտումների կարիք ունի այն առումով, որ հստակեցման կարիք ունի հենց ինքը՝ «հարկային բեռ» հասկացությունը:

Բանն այն է, որ իրականում նշանակալիորեն միմյանցից տարբերվում են փաստացի (նաև պլանային) ու հաշվարկված հարկային պարտավորությունները: Փաստացի ու պլանային վճարումների նկատմամբ հաշվարկվածի շարունակական ու մեծ չափերով գերազանցումը հանգեցնում է հարկային ապառքների կուտակման, ինչպես նաև վկայում է հարկային ոչ ճիշտ քաղաքականություն իրականացնելու մասին: ՀՀ իշխանությունների կողմից դրա ընդունման փաստ հանդիսացան 1996-1997թթ. հարկային համաներումները:

Հարկային ապառքները «հարկային բեռի» բաղկացուցիչ մասն են և հարկատուների համար կարևոր է ոչ միայն այն, թե որքան վճարվեց բյուջե, այլև այն, թե որքան է նա ծանրաբեռնված հարկային պարտավորություններով: Ուստի «հարկային բեռը» պետք է ներառի նաև հարկային ապառքները, որոնց աճը վկայում է հարկային բեռի անարդարացիության մասին:

Բացի պետության հանդեպ ունեցած հարկային պարտավորությունների կատարումից՝ հարկատուները լրացուցիչ միջոցներ և ժամանակ են ծախսում նաև հարկային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ հաշվարկների, հաշվետվությունների ու հայտարարագրերի լրացման, համակարգչային ծրագրերի ներդրման, խորհրդատվական ու փաստաբանական ծառայությունների ստացման և այլնի համար, որոնք բացասաբար են ազդում հարկատուների վճարունակության և պետական բյուջեի մուտքերի մակարդակի վրա:

Այդ առումով անհրաժեշտ է կարևորել առանձին երկրների առաջավոր փորձի կիրառումը, երբ պետություններն իրենք են զնահատում և հարկատուներին իրազեկում հարկային հաշվետվությունների փոփոխությունների արդյունքում ունենալիք լրացուցիչ ծախսերի մասին: Այսպես, օրինակ, Միացյալ Նահանգներում եկամտահարկի գանձման համակարգում ցանկացած լուրջ

¹ Егорова Е., Петров Ю. «Сравнительный анализ эффективной ставки налогов в России и зарубежных странах, Налоговый вестник, 1995, №11, стр. 9-16.

փոփոխությունը իրականացնելու ժամանակ պարտադիր հաշվարկվում է ժամանակի այն գնահատականը, որը պահանջվում է յուրաքանչյուր հարկատուից նոր կանոններով հարկային հայտարարագիր (դեկլարացիա) լրացնելու համար¹: Սյուս կողմից, պետությունն իր հերթին հարկային եկամուտների հավաքագրումն իրականացնելու ընթացքում միջոցներ է ծախսում հարկային մարմինների պահպանման և հարկերի գանձման նկատմամբ վերահսկողության իրականացման, դատական համակարգի միջոցով անբարեխիղճ հարկատուներին պատասխանատվության ենթարկելու և այլնի համար, որոնց չարդարացված աճը սահմանափակում է ֆինանսական միջոցների նկատմամբ պետության ունեցած պահանջարկը: Նշված երկու դեպքերում էլ կատարված լրացուցիչ ծախսերը հասարակության համար ֆինանսական միջոցների կորուստներ են, քանի դեռ հավաքագրված միջոցների օգտագործումը չի ապահովում գոնե համարժեք արդյունավետություն: Բայց նույնիսկ վերջին պայմանի ապահովման դեպքում նախընտրելի է, որ պետությունը նպաստի նվազագույնի հասցնելու այդ ծախսերը, քանի որ այն անուղղակիորեն բխում է պետության շահերից և հարկման արդյունավետության բարձրացման պահանջներից: Սա այն դեպքն է, երբ պետական շահն անտագոնիստական հակասության մեջ է մտնում ծանր «հարկային բեռի» հետ և, վերջինս, «խարխլում է» պետականության հիմքերը:

Ուստի, առաջին հերթին, պետությունը պետք է շահագրգռված լինի յուրաքանչյուր առանձին վերցրած հարկատուի հարկային բեռի կարգավորման հարցում, որի ուղիները կարող են հարկային լծակների ու գործիքների միջոցով հարկային բեռի տեղափոխումը ճյուղից ճյուղ, չունևորից ունևոր, արտադրությունից առևտուր, վնասաբեր, բայց անհրաժեշտ ձեռնարկությունից գերշահույթ ապահովող ձեռնարկություն և այլն, ինչպես նաև պետության կողմից հարկատուներին մատուցվող ծառայությունների բարելավումը՝ կապված հարկային օրենսդրության պարզաբանման ու հստակեցման, հարկատուներին աջակցելու և հարկային մարմինների նկատմամբ հարկատուների վստահությունն ամրապնդելու, հաշվետվությունների ներկայացման գործընթացը թեթևացնելու և այլնի հետ:

Բացի վերոհիշյալներից, անհրաժեշտ է կարևորել նաև հարկ վճարողների ու հարկման օբյեկտների շրջանակների ընդլայնումը՝ ապահովելով հարկման համընդհանրության ու արդարության սկզբունքների կիրառումը, այսինքն՝ հարկման սկզբունքները պետք է փոխհամաձայնեցված գործեն ու միմյանց լրացնեն, որպեսզի հարկերին բնորոշ գործառույթներին «լիաթոք շնչելու» հնարավորություն տրվի:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկման արդյունավետությունը կարելի է սահմանել որպես հարկային եկամուտների նկատմամբ պետության ունեցած պահանջարկի այնպիսի ձևերի, մեթոդների ու մեխանիզմների միջոցով ապահովում, որոնք նվազագույնի են հասցնում պետության ու հարկատուների ծախսերի կորուստները՝ առանց վերջիններիս վարքագծի ձևափոխման:

Հարկման արդյունավետության գնահատականի հարցը ևս մինչև օրս շարունակում է վիճահարույց մնալ, այսինքն՝ հստակ չէ այն հարցի պատասխանը, թե հարկատուի եկամտի n° ր մասի գանձումն է արդյունավետ, 30, 40, թե՞ 50 տոկոսը: Այդ իսկ պատճառով հարկման արդյունավետության վերաբերյալ քննարկումները, շատ հաճախ, կառուցվում են միջազգային համեմատությունների վրա՝ հիմք ընդունելով մակրոտնտեսական մակարդակում պլանային կամ փաստացի վճարված հարկերի ընդհանուր գումարի և համախառն ներքին արդյունքի, իսկ միկրոմակարդակում՝ պլանային կամ փաստացի վճարված հարկերի ու համախառն եկամտի տոկոսային հարաբերակցության ցուցանիշները:

Մեր կարծիքով, այդ ցուցանիշները նշված մոտեցմամբ հաշվարկելու դեպքերում հարկման իրական վիճակն արտացոլել չեն կարող, քանի որ հաշվարկին մասնակից չի դարձվում հարկային մուտքերի աղբյուր հանդիսացող հարկային ապառքների ներուժը, որի հաշվառման և միջազգային համեմատությունների պարագայում պատկերը էապես կարող է փոխվել: Այդ առումով միջազգային համեմատությունների դաշտ պետք է տեղափոխել նաև փաստացի գանձված հարկերի ու հարկային ողջ պոտենցիալի (փաստացի գանձված հարկեր/փաստացի


¹ Бобоев М.,Кашин В., “Налоговая политика России на современном этапе”. Вопросы экономики, № 7, 2002, стр. 56, Горский И. “К оценке налоговой политики”, Вопросы экономики, № 7, 2002, стр. 46.

գանձված հարկեր+հարկային ապառքներ) տոկոսային հարաբերակցության ցուցանիշները, որոնք պատկերացում են տալիս անբարեխիղճ հարկատուների վարքի, կոռուպցիայի չափերի, հարկային համակարգի արդյունավետության և այլնի մասին: Մինչդեռ միայն փաստացի գանձված հարկերի հաշվառմամբ որոշված ցուցանիշները պատկերացում տալիս են միայն օրինապահ հարկատուների և հարկային վարչարարության արդյունավետության մասին:

Հարկման արդյունավետությունը բնութագրող ընդհանրացնող և միջազգային համեմատություններում կիրառվող ցուցանիշ է համարվում նաև բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի ցուցանիշը: Որպես կանոն, որքան բարձր է այս ցուցանիշը, այնքան մեծ է նաև հարկային եկամուտների և համախառն ներքին արդյունքի տոկոսային հարաբերակցության ցուցանիշը: Դա վկայությունն է նաև այն փաստի, որ հարկման արդյունավետության մակարդակը մեծապես պայմանավորված է երկրի զարգացածության ու հարկատուների վճարունակության աստիճանով, որն ապացուցվում է նաև փաստացի տվյալներով (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ¹



Գծապատկեր 2.1-ում արտացոլված մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի ցուցանիշի և համախառն ներքին արդյունքում հարկային եկամուտների տեսակարար կշռի միջև ուղղակի կապի² առկայությունը վկայությունն է այն բանի, որ հարկման մակարդակը էապես կախված է երկրների զարգացվածության մակարդակից:

Հարկման արդյունավետությունը բնութագրող ընդհանրացնող և միջազգային համեմատություններում կիրառվող ցուցանիշներից է անուղղակի և ուղղակի հարկերի տոկոսային հարաբերակցության ցուցանիշը, որը պատկերացում է տալիս հարկման արդարացիության սկզբունքի կիրառման մասին: Որքան բարձր լինի անուղղակի հարկերի մասնաբաժինը, այնքան պակաս ուշադրություն դարձված կլինի հարկման արդարության սկզբունքի պահպանմանը, քանի որ անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների ու ծառայությունների գների մեջ՝ հարկային բեռը տեղափոխելով սպառողների վրա, որի գերակշիռ մասն ազգաբնակչությունն է:

Հարկման արդյունավետությունը բնութագրող ընդհանրացնող և միջազգային համեմատություններում կիրառվող ու ոչ ավանդական ցուցանիշներ են համարվում «ոչ թափանցիկ հարկերը», այսինքն՝ հարկատուների կողմից տրվող կաշառքներն ու պետական տարբեր մարմինների հետ շփումներում ժամանակի կորուստը, որոնց առկայությունը և, առավել ևս, դրանց աճը նվազեցնում է հարկման արդյունավետության մակարդակը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գնահատականների համաձայն՝ անցումային տնտեսությամբ երկրներում հարկատուների եկամուտների 2.1-6.8 տոկոսը (ինչը

¹ World Development Indicators, The World Bank, 2001: երկրների յուրաքանչյուր խմբում ներառված են միայն որոշակի խումբ երկրներ:
² Զարգացած երկրների հարկային եկամուտներում արտացոլված են միայն կենտրոնական բյուջեների եկամուտները:

կարելի է համարել կաշառային հարկի «դրույքաչափ»¹⁾ տարբեր երկրներում օգտագործվում է զանազան պաշտոնյաներին կաշառելու («կաշառային հարկ» վճարելու) համար, իսկ այդ հարկի վճարման հաճախականությունը²⁾ տատանվում է 8-60%-ի միջակայքում³⁾:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գնահատականներով թե՛ կաշառային հարկի դրույքաչափը և թե՛ դրա վճարման հաճախականությունը հետազոտված բոլոր երկրներում առավել բարձր են փոքր և միջին ձեռնարկությունների մոտ, իսկ խոշոր ձեռնարկություններում այդ ցուցանիշները համեմատաբար ցածր են: Պակաս կարևոր չէ նաև այն ժամանակը, որը տնտեսավարող սուբյեկտների ղեկավար անձինք կորցնում են պետական պաշտոնյաների հետ տարբեր շփումներում: Անցումային տնտեսությամբ երկրների համար այդ ցուցանիշը, այսինքն՝ ժամանակային հարկի (որը բնութագրում է հարկատուի ղեկավար անձանց ընդհանուր աշխատաժամանակում պետական պաշտոնյաներին հատկացվող աշխատաժամանակի տեսակարար կշիռը) գնահատականները ևս հաստատում են հարկման ոչ ավանդական եղանակներին պատշաճ ուշադրություն դարձնելու անհրաժեշտության մասին⁴⁾:

Эмма Джанинян

Вопросы эффективности налоговой политики в Республике Армения

Аннотация

Особой проблемой повышения эффективности налоговой политики в Республике Армения являются слабое научное и методическое обеспечение проведения комплексного анализа деятельности налогоплательщиков, недостаточность (а в отдельных случаях и отсутствие) научно обоснованных методик определения фактической налоговой базы по косвенным данным, получаемым из различных источников. Для решения этой проблемы планируется осуществить целый ряд мероприятий по совершенствованию администрирования и оценки деятельности налоговых органов, а также анализ финансово-хозяйственного состояния налогоплательщиков, пресечения путей сокрытия доходов, занижения налогооблагаемой базы, "теневого" оборота товаров (работ, услуг) и денежных средств.

Emma Janinyan

Tax policy efficiency issues in the Republic of Armenia

Abstract

The main challenges Armenia faces in increasing the efficiency of the tax policy are the lack of analysis of behavior of tax-payers based on solid methodology or theory; lack (in some cases non-existence) of clearly specified methodology of estimating the actual tax base using secondary data provided by various sources. In order to address this issue many measures aimed at improving tax administration procedures, evaluating the performance of tax authorities, estimating the financial and operational performance of tax-payers, and indentifying and preventing tax evasion, tax base lowering and keeping some transactions unreported (goods and services, and incomes) practices are supposed to be undertaken.


¹ Պետական պաշտոնյաներին տրվող ապօրինի վճարումների տեսակարար կշիռը հարկատուների ընդհանուր եկամուտներում:
² Պետական պաշտոնյաներին ապօրինի վճարումներ տվող հարկատուների տեսակարար կշիռը հարկատուների ընդհանուր թվում:
³ "Transition report 1999. Ten years of transition", European bank for Recon struction and Development, 1999, viii+288p.
⁴ "Transition report 1999. Ten years of transition", European Bank for Recan struction and Development, 1999, viii+288p.

ՀՀ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵՔՂՅԵՐԻ ՀՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հիմնական դերն այն է, որ հավաքագրում է ժամանակավորապես ազատ դրամական միջոցները և ուղղորդում դրանք դեպի տնտեսության հեռանկարային ոլորտներ: Շուկայի մասնակիցներն իրավաբանական և ֆիզիկական անձինք են, որոնք կան մասնակցում են արժեթղթերի առքուվաճառքին՝ որպես թողարկողներ կամ ներդրողներ, կան սպասարկում են այդ շուկայի կանոնակարգված գործունեությունը՝ որպես ծառայություններ մատուցող մասնագիտացված անձինք, կան էլ պատասխանատվություն են կրում պետական կարգավորման կամ ինքնակարգավորման համար: Այսպիսով, արժեթղթերի շուկայի հիմնական կառուցվածքը կարելի է ներկայացնել գծապատկեր 1-ի միջոցով:

Գծապատկեր 1

Արժեթղթերի շուկայի հիմնական կառուցվածքը



Արժեթղթերի շուկայի կառուցվածքի առաջին տարրն, ինչպես նկատում ենք վերոնշյալ գծապատկերից, շուկան **կարգավորող մարմինն** է: ՀՀ-ում արժեթղթերի շուկայի կարգավորման հիմքը դրվեց 1993թ., որը հաճախ անվանում են շուկայի կենտրոնացված կարգավորման փուլ: Այս փուլում կառավարության ընդունած «Արժեթղթերի շուկայի կարգավորումն ու վերահսկումն իրականացնող պետական լիազորված մարմնի մասին» որոշմամբ կարգավորման մարմին սահմանվեց ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: 1995թ. փետրվարին նախարարությունն իր հերթին ստեղծեց արժեթղթերի շուկայի պետական կարգավորման ու վերահսկման տեսչությունը:

Այս համակարգը, կարելի է ասել, իրեն չարդարացրեց: Այդ ժամանակաշրջանում բաժնետոմսերով քիչ թե շատ կատարվում էին գործարքներ, սակայն դրանք գլխավորապես պայմանավորված էին երկրում տեղի ունեցող համատարած մասնավորեցման գործընթացներով և հետմասնավորեցման ժամանակահատվածում սեփականության վերաբաշխման հետ կապված ակտիվությամբ: Հետագայում մասնավորեցման տեմպերի նվազեցումը հանգեցրեց նաև բաժնետոմսերով գործարքների ծավալների նվազման: Բացի այդ, ֆինանսների նախարարության կողմից ստեղծված տեսչությունը, լինելով գործադիր մարմնի ստորաբաժանում, գործնականում ի վիճակի չէր մի կողմից իրականացնել պետական արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման համակարգային կարգավորումը, իսկ մյուս կողմից՝ որպես շահագրգիռ կողմ, բոլոր թողարկողների նկատմամբ հավասարության սկզբունքի կիրառումը և, որ ամենակարևորն է, չէր ապահովում կապիտալի միասնական շուկայական գնի կազմավորման և պահպանման սկզբունքը:

Այս փուլը տևեց մինչև 2000թ. օգոստոսը, երբ ուժի մեջ մտավ ավելի համապարփակ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը, որի հիմնական առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ նրա դրույթներին համապատասխան ստեղծվեց ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովը՝ ստանձնելով արժեթղթերի շուկայի կարգավորողի և վերահսկողի իրավասությունները: Այս փուլն անվանում են նաև արժեթղթերի շուկայի կարգավորման ապակենտրոնացված փուլ:

Արժեթղթերի շուկայի զարգացման տեսանկյունից՝ որպես «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի կարևորագույն դրույթ և շուկայի կարգավորման ու թափանցիկության

ապահովման կարևոր քայլ կարելի է առանձնացնել «հաշվետու թողարկող» հասկացության ներմուծումը: Օրենքը վերջիններիս նկատմամբ պահանջներ է կիրառում՝ կապված տեղեկատվական թափանցիկության ապահովման հետ, այսինքն՝ յուրաքանչյուր հաշվետու թողարկող ընկերություն պարտավոր է արժեթղթերի հանձնաժողովին ներկայացնել տարեկան ֆինանսական հաշվետվությունները և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև հանձնաժողովի որոշմամբ սահմանված այնպիսի տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են գրանցման հայտարարագրերում ներառվող տեղեկությունների կամ դրանց կից ներկայացվող փաստաթղթերի համար¹:

Այնուամենայնիվ, պետք է նշենք, որ այս մոդելը նույնպես ուներ մի շարք թերություններ և որոշակի անհամաձայնություններ ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկ կիրառության առումով: Այս օրենքը չի պարզաբանում կարգավորող մարմնի անկախության ապահովման հիմքերը, և, բացի այդ, Արժեթղթերի հանձնաժողովն ամբողջությամբ ֆինանսավորվում էր ՀՀ պետական բյուջեից: Պետք է նկատել նաև, որ ֆինանսական շուկայի մի հատվածը՝ փոխա-տվական կապիտալի շուկայի ամբողջ հատվածը, ինչպես նաև պետական պարտատոմսերի հատվածը, գտնվում էր ՀՀ կենտրոնական բանկի կարգավորման դաշտում, իսկ կապիտալի շուկայի հատվածը՝ Արժեթղթերի հանձնաժողովի կարգավորման և վերահսկողության ոլորտում, իսկ այս տրոհումը, բնականաբար, չի բխում ֆինանսական շուկայի կարգավորման առանց-քային նպատակից և պայմաններ է ստեղծում կապիտալի տարբեր գների ձևավորման և դրանից բխող բոլոր բացասական հետևանքների համար²:

Շատ հեղինակների կարծիքով՝ բոլոր այս խնդիրների լուծման հիմնական եղանակը երկրի ֆինանսական շուկայի զարգացման համատեղ քաղաքականության վարումն է, արժեթղթերի շուկայի և բանկային համակարգի դերերի ճշգրտումը՝ որպես տնտեսության ֆինանսավորման կարևորագույն ոլորտներ: Դա է պատճառը, որ 2006թ. հունվարի 1-ից ՀՀ-ում նույնպես ներդրվեց միասնական ֆինանսական վերահսկողության համակարգը, որի համաձայն՝ ֆինանսական շուկայի երեք ոլորտները՝ բանկերը, ապահովագրությունը և արժեթղթերի շուկան, անցան մեկ մարմնի՝ կենտրոնական բանկի վերահսկողության տակ³:

2005թ. դեկտեմբերի 8-ին ընդունվել է «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն լուծարվել է հայաս-տանյան ֆինանսական ոլորտում հնգամյա պատմություն ունեցող Արժեթղթերի հանձնաժողովը, և նրա բոլոր լիազորությունները վերապահվել են ԿԲ-ին:

Հարց է առաջանում. ինչո՞ւ հենց այս կառույցին: Բացատրությունը, հավանաբար, մեկն է. ՀՀ ֆինանսական համակարգում գերիշխող դիրք ունեցող ոլորտը և շուկայի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 92 %-ը⁴:

«Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքը հիմնականում հետապնդում է հետևյալ նպատակը. ՀՀ ֆինանսական համա-կարգի կայունության և դրա նկատմամբ վստահության բարձրացումը, ֆինանսական համա-կարգի մասնակիցների բնականոն զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը: Սակայն պետք է նշենք, որ «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքը միայն կարգավորում է Հայաստանի Հանրա-պետությունում ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները, նաև սահմանում է հանրապետության ֆինանսական համակարգի այլ մասնակիցների նկատմամբ կարգավորման և վերահսկողության

¹ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենք, 2000թ. Հոդված 31:

² Սալյնազարյան Ա.Բ., Արժեթղթերի շուկայի ներդրումային գործառնությունների իրականացումը և արդյունավետությունը, Երևան 2002, էջ 28:

³ Մինչ միասնական ֆինանսական վերահսկողության համակարգի ներդրումը՝ արժեթղթերի շուկան կարգավորվում էր ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովի կողմից, բանկային համակարգը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից, իսկ ապահովագրական ոլորտի կարգավորումը վերապահված էր ՀՀ ֆինանսների նախարարության կազմում գործող ապահովագրական տեսչությանը:

⁴ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք www.cba.am :

գործառնությունների՝ ԿԲ-ին փոխանցման կարգն ու պայմանները, այն բավարար չէ վերը նշված հանգամանքների լիարժեք դրսևորումը երաշխավորելու համար:

Այն բանից հետո, երբ ողջ ֆինանսական համակարգի կարգավորումն ու վերահսկողությունն անցավ ՀՀ կենտրոնական բանկին, համակարգի առանձին ոլորտներում կատարվեցին որոշակի օրենսդրական բարեփոխումներ, հատկապես ապահովագրական և արժեթղթերի շուկայի ոլորտներում: Կատարված օրենսդրական փոփոխությունների հիմնական նպատակը այդ ոլորտների հետագա զարգացումն ու բարելավումը ապահովելն է:


Ընդ որում, կենտրոնական բանկը, դառնալով ՀՀ-ում ֆինանսական շուկայի միասնական վերահսկող, միջոցառումներ է ձեռնարկում ֆինանսական շուկայի կայունացման, առաջխաղացման, զարգացման և նոր ֆինանսական գործիքների ստեղծման ու դրանց իրացվելիության ապահովման համար:

Ինչպես ցանկացած շուկայի, այնպես էլ կորպորատիվ արժեթղթերի շուկայի կարգավորող մարմինը ոչ միայն վերահսկում է, այլ նաև գործունեության կանոններն է թելադրում հիմնական մասնակիցներին՝ վաճառողներին ու գնորդներին: Այս շուկայում դրանք թողարկողներն ու ներդրողներն են:

Թողարկողները արժեթղթերի առաջին վաճառողներն են: Նրանք թողարկում և շուկա են դուրս բերում ամենատարբեր արժեթղթեր՝ ձևավորելով արժեթղթերի առաջնային շուկայում առաջարկը: «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «թողարկող է համարվում այն անձը, որն արժեթուղթ է թողարկում (թողարկել) կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկ է անում»¹: Ամենաընդհանուր դասակարգմամբ տարանջատում են հետևյալ թողարկողներին՝ պետությանը, կառավարման տարածքային մարմիններին, կազմակերպություններին, որոնք ըստ էության արժեթղթերի հիմնական թողարկողներն են, իսկ կորպորատիվ արժեթղթերի թողարկողները կազմակերպություններն (կորպորացիաները) են, որոնց կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (տես գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Կորպորատիվ արժեթղթեր թողարկող անձինք²



Ներդրողները շուկայի հաջորդ կարևոր մասնակիցներն են, առանց որոնց գոյության անհիմաստ է արժեթղթերի թողարկումը: «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «ներդրող է համարվում այն անձը, որին պատկանում է արժեթուղթը, կամ որը նախատեսում է ձեռք բերել արժեթուղթ»³:

Ներդրողները նույնպես բազմազան են և դասակարգվում են՝ տարբեր հատկանիշներից ելնելով: Ամենաընդհանուր դասակարգմամբ որպես առանձին դասի ներդրողներ տարանջատվում

¹ Տես «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, հոդված 3:


² Գծապատկերը կազմվել է Ա.Բ. Սալմազարյան, Արժեթղթերի շուկա, Երևան 2009, էջ 12, Արժեթղթեր թողարկող անձինք գծապատկեր 1.2-ի հիման վրա:

³ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, հոդված 3:

են անհատական, կոլեկտիվ (ինստիտուցիոնալ) և պետական ու տարածքային մարմիններ¹: Իսկ կորպորատիվ արժեթղթերի շուկայում ներդրողների դասակարգումը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Կորպորատիվ արժեթղթերի շուկայի ներդրողները²



Ինչպես կարելի է նկատել գծապատկեր 2 և 3-ից ինստիտուցիոնալ մասնակիցները հանդես են գալիս թե՛ որպես թողարկող, և թե՛ որպես ներդրող, սակայն մեր երկրում արժեթղթերի շուկայում նրանց գործունեությունը բավականին պասիվ է: Այն դեպքում, երբ զարգացած կապիտալի շուկաներում շրջանառության և ներդրումներ առնվազն 40%-ն ապահովում են ինստիտուցիոնալ ներդրողները, իսկ զարգացող շուկաներում այս կառույցների մասնաբաժինը կարող է հասնել 90%-ի:

ՀՀ ֆինանսական շուկայի հիմնական մասնակիցների քանակը ներկայացվում է աղյուսակ 1-ում, որտեղից նույնպես նկատվում է, որ ամենակտիվ մասնակիցը բանկային համակարգն է: Դա կարելի է հիմնավորել նրանով, որ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է առավել ճկուն և արդյունավետ կարգավորում և հիմնվելով եվրոպական մոդելի վրա՝ խթանում է ներդրումային բանկային գործի զարգացումը՝ թույլ տալով առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին արժեթղթերի շուկայում մատուցել ներդրումային ծառայություններ՝ առանց լրացուցիչ լիցենզիայի: Սակայն պետք է նաև նշել, որ որպես հաշվետու թողարկող հանդես են գալիս ընդամենը երեք առևտրային բանկ և միայն մեկ վարկային կազմակերպություն, մնացած տասը թողարկողները ֆինանսական կառույցներ չեն: Այսինքն, ցավոք բանկերի ու վարկային կազմակերպությունների քանակն ու արժեթղթերի շուկայում գործելու հնարավորությունը դեռևս արդարացված չեն:

ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեությունը սկսեց ակտիվանալ ավտոմեքենաների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության արդյունքում, սակայն ՀՀ արժեթղթերի շուկայում դեռևս մասնակցություն չունեն: Իսկ ինչ վերաբերում է կենսաթոշակային ֆոնդերին, ապա այդ շուկան լիարժեք կգործի միայն կենսաթոշակային պարտադիր կուտակային բաղադրիչը գործարկելուց հետո, որը նախատեսվում է 2014թ.: Կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի հայտնվելուն պես կբարձրանա ՀՀ կապիտալի շուկայում նրանց մասնակցության մակարդակը:

¹ Տե՛ս Ա.Բ. Սալմազարյան, Արժեթղթերի շուկա, Երևան, 2009թ., էջ 13:
² Գծապատկերը կազմվել է Ա.Բ. Սալմազարյան, Արժեթղթերի շուկա, Երևան, 2009թ., էջ 14, Արժեթղթերում ներդրող անձինք գծապատկեր 1.2-ի հիման վրա:

ՀՀ ֆինանսական շուկայի հիմնական մասնակիցների թիվը 2002-2012թթ.¹

Տարեթիվ	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Ընկերություն											
Առևտրային բանկեր	28	20	20	21	21	22	22	22	21	22	22
Վարկային կազմակերպություններ	6	6	9	10	17	21	24	27	32	32	32
Ապահովագրական ընկերություններ	23	22	26	23	15	10	12	12	11	9	7
Ներդրումային ընկերություններ	20	21	19	18	20	13	10	8	8	8	9

Արժեթղթերի շուկայում թողարկողներին և ներդրողներին, ինչպես նաև միմյանց ծառայությունների մատուցման գործունեություն է իրականացնում արժեթղթերի շուկայի մյուս կարևոր մասնակիցը՝ **ֆոնդային շուկայի մասնագիտացված և ինստիտուցիոնալ մասնակիցները**:

Ֆոնդային շուկայի մասնագիտացված մասնակիցներն են՝ բրոքերային և դիլերային ընկերությունները, արժեթղթերի տեղաբաշխողները, հավատարմագրային կառավարիչները, խորհրդատվական ընկերությունները, իսկ **ֆոնդային շուկայի ինստիտուցիոնալ մասնակիցներն են՝** արժեթղթերի առևտրի կազմակերպիչները (որոնք հանդես են գալիս բորսաների և արտաբորսայական շուկաների տեսքով), անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարողները, արժեթղթերի պահառուները և դեպոզիտարիաները, արժեթղթերով կատարված գործարքների քլիրինգ և վերջնահաշվարկ իրականացնողները:

ՀՀ-ում մասնագիտացված արժեթղթերի շուկայի մասնագիտացված և ինստիտուցիոնալ մասնակիցների գործունեությունը կարգավորվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի մասնագիտացված մասնակիցներ են համարվում ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, կարգավորվող շուկայի օպերատորը, արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատորը, արժեթղթերի փաթեթի կառավարիչը և օրենքով նախատեսված այլ անձինք: Իսկ ներդրումային ծառայություններ մատուցող անձ են համարվում ներդրումային ընկերությունները (բրոքերային և դիլերային ընկերությունները, հավատարմագրային կառավարիչները), օտարերկրյա ընկերության մասնաճյուղը, բանկը և վարկային կազմակերպությունը:

2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություն մատուցող 22 բանկ, 9 ներդրումային ընկերություն և 1 ներդրումային ֆոնդի կառավարիչ: Ներդրումային ընկերություններից ութը կարող են իրենց անունից կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել, յոթը՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել, յոթը կարող են նաև արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, յոթը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն և չորսը՝ փաթեթի կառավարում²: Ներդրումային գործառնությունների 73,3%-ը կազմել են առևտրային բանկերի կողմից իրականացված գործառնությունները, 26,7%-ը՝ ներդրումային ընկերությունների գործառնությունները:

Շուկայի զարգացման առաջին փուլում գործում էին թվով չորս ֆոնդային բորսաներ: Բորսաների բաժնետերերի կառուցվածքի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բաժնետերերի զգալի մասը հանդիսանում էին ոչ մասնագիտացված անձինք, որոնք մասնակցում էին բորսաների կառավարմանը, սակայն արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն չէին իրականացնում, նկատվում էին մի շարք թերություններ, որոնց կարգավորման համար «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ձևավորվեց Հայաստանի

¹ Աղյուսակը կազմվել է www.cba.am և www.nasdaqomx.am պաշտոնական կայքերի տվյալների հիման վրա:

² ՀՀ ԿԲ «Բանբեր», 2012, 4-րդ եռամսյակ, էջ 11, պաշտոնական կայք www.cba.am:

Ֆնդային բորսան (այսուհետև՝ ՅՖԲ), որն արդեն հանդես էր գալիս որպես ինքնակարգավորվող կազմակերպություն, որը օրենքով և իր կանոններով սահմանված կարգով իրականացնում էր արժեթղթերի հրապարակային առևտրի կազմակերպում և գնանշում: Ֆոնդային բորսայի անդամ կարող էին դառնալ միայն բրոքերային (դիլերային) ընկերությունները: 2006թ. հուլիսի 1-ի դրությամբ բորսայի անդամ են հանդիսացել 18 մասնագիտացված անձ:

ՅՖԲ-ում մինչև 2005թ. իրականացվում էր միայն բաժնետոմսերով առևտուր, սակայն 2005թ. իրականացվում է նաև կորպորատիվ պարտատոմսերով և արտարժույթով առևտուր: Ցուցակված արժեթղթերի քանակը ՅՖԲ-ում 2001-2003թթ. անընդհատ աճել է, իսկ 2003թ. հետո նկատվում է նվազման միտում և 2006թ. երկրորդ կիսամյակի վերջի դրությամբ ցուցակված արժեթղթերի քանակը հասավ 2002թ. մակարդակին: Նվազման նման միտումը պայմանավորված է ընկերությունների կողմից բորսա մուտք գործել չցանկանալով: Ընկերությունները չեն գիտակցում առավելությունները, որոնք նրանց ընձեռում է արժեթղթերի շուկայում իրենց արժեթղթերի ցուցակումը, այն նրանց համար միայն լրացուցիչ ծախսերի և հաշվետվությունների աղբյուր է: Ինչպես և նախորդ փուլում, այս փուլում նույնպես նկատվել են թե՛ ձեռքբերումներ, և թե՛ թերություններ:

Արդի փուլում որպես կարգավորվող շուկայի օպերատոր հանդես է գալիս «ՆԱՍՂԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ն (մինչև 27.01.2009թ.՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ): Այն հանդիսանում է NASDAQ OMX Group, Inc միջազգային խմբի մաս և ՀՀ-ում գործող միակ ֆոնդային բորսան է: Արդեն մոտ մեկ տասնամյակ է, ինչ ընկերությունը՝ հանդիսանալով Հայաստանի արժեթղթերի կազմակերպված շուկա, շուկայի մասնակիցներին է առաջարկում լիովին ավտոմատացված էլեկտրոնային առևտրային հարթակ: Ներկայումս ՆԱՍՂԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում իրականացվում է բաժնետոմսերի, կորպորատիվ պարտատոմսերի, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ ԿԲ կողմից թողարկված պետական պարտատոմսերի, ՌԵՊՈ գործիքների, արտարժույթի, ինչպես նաև վարկային ռեսուրսների առևտուրը:

Աղյուսակ 2

2008-2012թթ. ՆԱՍՂԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում իրականացված առևտրի ծավալները՝ ըստ առանձին գործիքների¹

Տարեթիվը	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Գործիքը					
Բաժնետոմսեր	123,262,246	97,900,300	127,626,810	200,276,860	413,146,210
Կորպորատիվ պարտատոմսեր	1,840,359,909	7,876,194,92	2,855,938,794	708,981,395	513,107,928
Պետական պարտատոմսեր	955,734,393	2,379,215,210	5,619,738,175	5,373,835,441	4,183,471,369
Արտարժույթ	275,775,861,630	372,933,009,865	255,885,050,000	283,589,377,430	335,048,125,451
Ռեպո	-	5,093,083,431	3,769,638,889	2,050,876,322	403,993,574
Վարկային ռեսուրսներ	-	-	1,152,336,400,000	2,179,478,350,000	6,642,461,000,00

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից ՆԱՍՂԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա առևտրային համակարգում առևտրի հիմնական առարկա են վարկային ռեսուրսներն ու արտարժույթը, որոնց առևտրի ծավալները նկատելիորեն գերազանցում են արժեթղթերի շուկայի գործիքներով իրականացվող գործարքների ծավալները: Նման ցուցանիշները հիմք են տալիս եզրակացնելու, որ ՆԱՍՂԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում իրականացված բարեփոխումները թեև բերել են ծավալային որոշակի ցուցանիշների աճի, սակայն չեն հանգեցրել որակական բարելավման:

¹ Աղյուսակը կազմվել է ՆԱՍՂԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա, պաշտոնական կայք www.nasdaqomx.am:


Արժեթղթերի շուկայի զարգացման համար առաջնային նախապայման են գործուն, անվտանգ և արդյունավետ հաշվարկաքլիրինգային, պահառուական ինտեգրացված համակարգերի ստեղծումն ու անհրաժեշտ իրավական բարեփոխումների իրականացումը: «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերությունը (ՀԿԴ) ՀՀ արժեթղթերի շուկայի ձևավորման առաջին իսկ փուլում ստեղծված ինստիտուտներից մեկն է: 1996թ. իր հիմնադրման պահից ՀԿԴ-ն բաժնետիրական ընկերություններից տրամադրում է ռեեստրի վարման, իսկ իրավաբանական այլ անձանց և անհատներին՝ արժեթղթերով հաշիվների բացման և վարման ծառայություններ:

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի ստեղծման համար հիմք հանդիսացավ «Ազգային կենտրոնացված ռեեստր» ՊՓԲԸ-ի ստեղծումը ՀՀ կառավարության 10.01.1996թ. թիվ 4 որոշմամբ, որի ձևավորման դրդապատճառը զանգվածային մասնավորեցման գործընթացի արդյունքում ձևավորված անվանական բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքների հաշվառման և փոխանցման համապատասխան համակարգի ստեղծման անհրաժեշտությունն էր: «Ազգային կենտրոնացված ռեեստր» ՊՓԲԸ-ից զատ ռեեստրի վարում կարող էին իրականացնել ինչպես թողարկողները, այնպես էլ «Արժեթղթերի ռեեստր» ՓԲԸ-ն: Իր գործունեության ընթացքում Ազգային կենտրոնացված ռեեստր պետական ձեռնարկությունը ռեեստրի վարման ծառայություն է մատուցում 44 թողարկողների (1996-1999թթ.): Այնուհետև ՀՀ կառավարության 08.04.1999թ. թիվ 211 որոշմամբ՝ «Ազգային կենտրոնացված ռեեստր» ՊՓԲԸ-ն վերակազմակերպվել է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ՓԲԸ-ի, որն էլ սկսեց արդեն ձևավորել կենտրոնացված ռեեստրավարման պահառության ֆունկցիաների իրականացումը: Իր գործունեության ընթացքում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ՓԲԸ-ն ռեեստրի վարման ծառայություն էր մատուցում թվով 392 թողարկողների:


2000թ. օգոստոս ամսին ուժի մեջ մտած «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով պահառության, ռեեստրավարման հաշվարկաքլիրինգային գործառույթների իրականացման գործառույթները վերապահեցին Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությանը, որը հանդիսանում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ՓԲԸ-ի իրավահաջորդը: Կենտրոնական դեպոզիտարիայի անդամ կարող են լինել ֆոնդային բորսան, մասնագիտացված անձինք, բանկերը (այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը): Իսկ ՀԿԴ ԻԿԿ կողմից մատուցվող ծառայությունների գների առավելագույն չափերը կարգավորվում էին ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովի կողմից: Սկսած 2006թ. հունվարի 1-ից՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի» մատուցած ծառայությունների գնային կարգավորումն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը՝ դեպոզիտարիայի մատուցած ծառայությունների գների առավելագույն սահմանմամբ:

Համաձայն 2007թ. ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի՝ կենտրոնական դեպոզիտարիան բաժնետիրական ընկերություն է, որն իրականացնում է կենտրոնացված պահառուի, կենտրոնացված ռեեստրավարի և արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատորի գործառույթները: Կենտրոնական դեպոզիտարիան, կարգավորվող շուկայի օպերատորի հետ կնքված պայմանագրերի հիման վրա, իրավունք ունի իրականացնել տվյալ կարգավորվող շուկայում արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների (պահանջների) որոշման և հաշվանցման (քլիրինգի) գործառույթը: Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք չունի իրականացնել ցանկացած այլ գործունեություն՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Ըստ նույն օրենքի՝ ՀՀ կենտրոնական բանկն իրականացնում է կենտրոնական պահառուի և (կամ) հաշվարկային համակարգի օպերատորի գործառույթներ՝ ՀՀ կամ ՀՀ կենտրոնական բանկի թողարկած արժեթղթերի գծով:

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում վարվող հաշիվների քանակը 2008-2012 թթ.¹



Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում սպասարկվող ընկերությունների քանակը 2008-2012թթ.²



Գծապատկերներ 4 և 5-ն ուսումնասիրելով՝ կարելի է նկատել, որ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում գրանցվել են թե՛ հաշիվների, թե՛ սպասարկվող ընկերությունների քանակական աճ, սակայն հաշվետու թողարկող հանդիսացել են շատ քիչ ընկերություններ, այնուամենայնիվ այստեղ ևս նկատվել է չնչին աճ:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ.


- կենտրոնական դեպոզիտարիայի ձևավորումը թույլ տվեց ՀՀ արժեթղթերի շուկայի հաշվառման համակարգը համապատասխանեցնել ոլորտին վերաբերող միջազգային չափորոշիչներին և սկզբունքներին,
- կենտրոնացված դեպոզիտարիայի առկայությունը նպաստում է ինչպես շուկայում ռիսկայնության իջեցմանը, այնպես էլ գործարքների հետ կապված ծախսերի նվազեցմանը,
- նշված ժամանակաշրջանների համար կենտրոնական դեպոզիտարիայում սպասարկվող ընկերությունների քանակն անընդհատ աճել է, ինչը, անշուշտ, դրական փաստ է:

Ուսումնասիրելով ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայի կառուցվածքը, առանձնահատկությունները՝ կարելի է ներկայացնել նրա ժամանակակից մոդելը (տե՛ս գծապատկեր 6):

¹ Աղյուսակը կազմվել է ՆԱՍԴԱՔ ՕԷՄԵՔՍ Արմենիայի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա, պաշտոնական կայք www.nasdaqomx.am:

² Աղյուսակը կազմվել է ՆԱՍԴԱՔ ՕԷՄԵՔՍ Արմենիայի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա, պաշտոնական կայք www.nasdaqomx.am:

ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայի ժամանակակից մոդելը



Амаля Саркисян

Структура рынка корпоративных ценных бумаг РА

Аннотация

Основное назначение фондового рынка состоит в том, что он позволяет аккумулировать временно свободные денежные средства и направлять их на развитие перспективных отраслей экономики. Участники рынка ценных бумаг - это физические лица или организации, которые продают или покупают ценные бумаги или обслуживают их оборот и расчёты по ним, это те, кто вступает между собой в определённые экономические отношения по поводу обращения ценных бумаг.

Amalya Sargsyan

The structure of corporate securities market in the Republic of Armenia

Abstract

The main role of the stock market is to accumulate temporarily free money resources and channel these resources to those industries of the economy with good growth potential to ensure their development. The participants of the corporate securities market are individuals or legal entities who either buy or sell securities, or service the circulation of securities, or operations with them being in legally binding relations with one another.

**ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Տնտեսական ճգնաժամերը մշտապես ուղեկցել են համաշխարհային տնտեսության զարգացման գործընթացին՝ շուկայական կապիտալիստական տնտեսակարգի հաստատումից ի վեր: Սակայն, հարկ է նշել, որ տնտեսության զարգացմանը զուգընթաց ճգնաժամային երևույթները նոր դրսևորումներ են ստանում և ժամանակի ընթացքում նորանոր մարտահրավերներ են նետում միջազգային հանրությանը և պետություններին: Համաշխարհային տնտեսության ընդլայնողականության մեծացման գնալով աճող տեմպերը պատճառ են դառնում այն իրողության, որ տարբեր երկրներում ու տարածաշրջաններում առաջացող ֆինանսատնտեսական տարաբնույթ ճգնաժամերը իրենց արագ տարածումն են գտնում աշխարհով մեկ՝ խաթարելով ազգային տնտեսություններում բնականոն գործընթացները և ուղեկցվելով բազմաթիվ բացասական երևույթներով: Այս փաստը ստիպում է պետական իշխանություններին և միջազգային հանրությանը նորանոր արդյունավետ միջոցառումներ մշակել ու իրականացնել այդ ճգնաժամերի բացասական ազդեցությունները մեղմելու և տնտեսությունն իր հավասարակշռության վիճակին վերադարձնելու ուղղությամբ: Անդրադառնալով վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին, կարող ենք ասել, որ երկրագնդի վրա երևի չի գտնվի այնպիսի մի մարդ, ում վրա այս կամ այն կերպ չանդրադարձավ այդ երևույթը, և ով իր վրա չզգաց դրա բացասական ազդեցությունները: Վերջիններս բավական տարաբնույթ էին և արտահայտվեցին, մասնավորապես

- շահույթների կրճատմամբ,
- գործազրկության աճով,
- սոցիալական լարվածությամբ,
- գների անկմամբ,
- պահանջարկի կրճատմամբ,
- արտաքին և ներքին շուկաների կորուստներով,
- ֆինանսական շուկաների փլուզումներով, բանկային և այլ ֆինանսական կառույցների սնանկացմամբ,
- տնտեսության թե՛ ֆինանսական, և թե՛ իրական հատվածներում իրացվելիության հիմնախնդիրներով¹:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ ներկայումս մեծապես կարևորվում է գտնել և վերհանել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման իրական և խորքային պատճառները՝ դրանց արդյունավետ կերպով հակազդելու և ապագայում նմանատիպ մարտահրավերներին հնարավորինս պատրաստ լինելու համար: Տնտեսագետները և վերլուծաբանները նշում են վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի մի շարք պատճառներ, մասնավորապես.

- տնտեսության պարբերաշրջանային զարգացումները,
- վարկային և հատկապես հիփոթեքային շուկաների գերակտիվացումը,
- հումքի բավական բարձր գները,
- տարբեր երկրներում անարդյունավետ ֆինանսական կարգավորման մեթոդների կիրառությունը:

¹ Վ.Հարությունյան, Կ.Սարգսյան, Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառները և դրա ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, հանրապետական գիտաժողովի նյութեր, Գիրք 1, Երևան, 2012:

Դիտարկելով տնտեսական ճգնաժամերի հաղթահարման ոլորտում առկա բավականաչափ հարուստ համաշխարհային փորձը, ակնհայտ է դառնում, որ տնտեսական ճգնաժամերի վերջնական հաղթահարման գործում հիմնական դերը պետությանն է պատկանում, որն իր հակաճգնաժամային քաղաքականության շրջանակում համապատասխան լծակների միջոցով ազդում է տնտեսական համակարգի վրա՝ մեղմելով ճգնաժամի բացասական դրսևորումները և վերադարձնելով տնտեսությունը հավասարակշռության վիճակի:

Ներկայումս, համաշխարհային տնտեսության մեջ մեծապես աճել է ֆինանսական հատվածը՝ ի հաշիվ ֆինանսական շուկաների գլոբալիզացիայի աճի: Այս երևույթը ունենալով որոշակի դրական կողմեր, ունի նաև բացասականը, կապված այն իրողության հետ, որ դա որոշակի լուրջ վտանգներ է ստեղծում տնտեսության համար: Ներկայումս, երբ ազգային տնտեսությունները, հիմնականում, բաց են իրենց բնույթով՝ ֆինանսական շուկաների գլոբալիզացիան նպաստում է այն բանին, որ ցանկացած ֆինանսական անկայունության դրսևորումներ կարող են շատ կարճ ժամանակահատվածում արագորեն տարածվել ամբողջ աշխարհում և ժամանակի ընթացքում էլ ավելի սուր դրսևորումներ ձեռք բերելով՝ վերածվել տնտեսական խոշոր ճգնաժամերի:

Տնտեսական ճգնաժամերին արդյունավետ կերպով դիմակայելու և դրանց բացասական ազդեցությունները մեղմելու համար հարկավոր է իրականացնել ոչ միայն տնտեսական ճգնաժամերի էության խորը և համակողմանի վերլուծություններ, այլև ուսումնասիրել, վերլուծել և գնահատել համաշխարհային տնտեսության մեջ տնտեսական ճգնաժամերի հաղթահարմանն ուղղված հակաճգնաժամային միջոցառումների կոնկրետ ուղղությունները և մեթոդները:

Անդրադառնալով հակաճգնաժամային միջոցառումների բովանդակությանը, ներկայացնենք աշխարհի առաջատար տնտեսությունն ունեցող երկրների՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Չինաստանի, ճապոնիայի և Ռուսաստանի հակաճգնաժամային միջոցառումների հիմնական ուղղությունները և առանձնահատկությունները՝ համեմատական վերլուծությունների միջոցով: Հարկ է նշել, որ այս երկրների զարգացման մինչճգնաժամային պայմաններն, ըստ էության, կախված էին համաշխարհային տնտեսությունում նրանց զբաղեցրած դիրքից: Հիմնականում, դրանով է պայմանավորված տնտեսության զարգացման առաջնահերթ ուղղությունները, տնտեսության ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև այն հիմնական պատճառները, որոնցով և պայմանավորված են ճգնաժամի ազդեցությունները տնտեսության վրա:

Ինչ վերաբերում է համաշխարհային տնտեսական առաջատար ԱՄՆ-ին, ապա նա հանդիսանալով միջազգային կապիտալի առաջատար շուկա ունեցող և պատրաստի արդյունաբերական ապրանքներ արտահանող երկիր, ուներ վճարային հաշվեկշռի հետևյալ առանձնահատկությունները: Ընթացիկ գործառնությունների հաշվեկշռը ճգնաժամի նախաշեմին այս երկրում բացասական մնացորդ ուներ և կազմում էր 2008 թվականին համապատասխանաբար -700 մլրդ դոլար: Այս բացասական սալդոյի մեծ չափերը, հիմնականում, արդյունք են 2000-ական թվականներից վարվող պահանջարկի խթանմանն ուղղված տնտեսական քաղաքականության: Ինչ վերաբերում է կապիտալի հաշվին, ապա ԱՄՆ-ի կապիտալի հաշիվը մինչև ճգնաժամը դրական սալդո է ունեցել՝ 750 մլրդ դոլար: Սա ապահովվում էր, մեծամասամբ, արտասահմանյան պորտֆելային ներդրումների հաշվին: ԱՄՆ, ֆինանսական համակարգի գերտաքացունը զարգացող երկրներից դեպի ածանցյալ արժեթղթերի սպեկուլյատիվ շուկա՝ կապիտալի մեծ ներհոսքի արդյունք էր¹:

Եվրոպական Միությունում վճարային հաշվեկշռը 2003-2008թթ. միջինը զրոյական է եղել՝ 2007 թվականին որոշակի դրական մնացորդով ընթացիկ գործառնությունների հաշվին՝ 40 մլրդ դոլարի չափով, ինչը նույն ժամանակահատվածում հավասարակշռվում էր կապիտալի հաշվի բացասական մնացորդով՝ այն է՝ -35 մլրդ դոլար: 2008 թվականին կապիտալի արտահոսքը այս տարածաշրջանից կտրուկ նվազեց, իսկ ներհոսքը, ընդհակառակը, աճեց, երբ եվրոպական

¹ U.S. Bureau of Economic Analysis (BEA)- www.bea.gov

ներդրողները սկսեցին հետ պահանջել իրենց ներդրված գումարները, ինչը հանգեցրեց կապիտալի հաշվի դրական մնացորդի կտրուկ աճի՝ ընդհուպ մինչև 210 մլրդ դոլար¹:

Ճապոնիայում նկատվում էր հակառակ միտումները: Ընթացիկ հաշվի դրական մնացորդը շարունակական աճում էր՝ հասնելով 2008 թվականի նախաշեմին մինչև 195 մլրդ դոլար, իսկ կապիտալ հաշվի մնացորդը բացասական մեծություն է եղել մինչև ճգնաժամային ժամանակահատվածում՝ կազմելով 2008 թվականին -170 մլրդ դոլար: Սա բնական է, եթե հաշվի առնենք, որ ճապոնիան միջազգային շուկայում հանդես է գալիս որպես պատրաստի արտադրանքի և կապիտալի արտահանող երկիր²:

Ինչ վերաբերում է Չինաստանին, ապա այս պետությունը թևակոխեց վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ առևտրային հաշվեկշռի 440 մլրդ դոլար դրական մնացորդով: Հարկ է նշել, որ նրա ֆինանսական հաշիվը նույն ժամանակաշրջանում նույնպես հավելուրդային էր: Դրական այս մնացորդը ապահովվում էր հսկայածավալ օտարերկրյա կապիտալ ներդրումներով դեպի այս մեծ հեռանկար ունեցող շուկա: Ըստ ԱՄՆ պաշտոնական տվյալների՝ 2000-2005թթ. ընկած ժամանակահատվածում դեպի Չինաստան ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմում էին բոլոր զարգացող երկրներ ուղղված այդ նույն ժամանակահատվածում օտարերկրյա ուղղակի ներդրումների շուրջ 20%-ը³: Սրան մեծապես նպաստում էր Չինաստանի վարած արտահանման խրախուսմանը և պետական ու օտարերկրյա ներդրումների աճին ուղղված հստակ պետական տնտեսական քաղաքականությունը: Այս երկրից արտահանվում են շուրջ հիսուն հազար անուն ապրանքներ, որոնցից ստացվող եկամուտն ապահովում է Չինաստանի արժույթային եկամուտների մոտ 80%-ը⁴:

Ինչ վերաբերում է համաշխարհային մյուս խոշոր առաջատարին՝ Ռուսաստանին, ապա մինչև ճգնաժամային ժամանակահատվածում նա ուներ դրական ընթացիկ հաշվի մնացորդ, ինչը արդյունք էր համաշխարհային շուկաներում հումքային ապրանքների գների թռիչքածն աճի (2000 թվականից ի վեր մոտ 3 անգամ)՝ որոնց գլխավոր արտահանողներից էր այս գերտերությունը, ինչպես նաև ծառայությունների և ներդրումների եկամուտների բացասական մնացորդի կտրուկ կրճատման: Ներկրումը այս ժամանակահատվածում արագ տեմպերով աճում էր, ինչն ուղեկցվում էր ներքին շուկայի տարողունակության և ազգաբնակչության համախառն վճարունակ պահանջարկի աստիճանական աճով: Ջուտ արտահանման ծավալները՝ սկսած 2000 թվականից կրճատվել էր ՀՆԱ 13%-ից մինչև ընդհուպ 1%՝ ի հաշիվ, հիմնականում, ներմուծման բարձր տեմպերով աճի: Սա ուղեկցվում էր կապիտալի արտահոսքի կրճատմամբ, ինչպես նաև ներդրումային եկամուտների աճով: Սրանով էր հենց պայմանավորված ներքին համախառն պահանջարկի, ազգաբնակչության սպառման ծավալների, ինչպես նաև կապիտալ ներդրումների զգալի աճը: Ինչ վերաբերում է ֆինանսական գործառնությունների հաշվեկշռի մնացորդին, ապա մինչ 2008 թվականի տարեվերջ այն դրական մեծություն է կազմել: Արտասահմանյան համախառն ներդրումները՝ 2000-2007թթ. ժամանակահատվածում կազմել են շուրջ 94.7 մլրդ դոլար: Հետևաբար, Ռուսաստանը՝ մինչև ճգնաժամային ժամանակահատվածում համաշխարհային շուկայում հանդիսացել է որպես հումքի արտահանող և կապիտալի ներմուծող⁵:

Ուսումնասիրելով նշված միտումները, գալիս ենք այն եզրահանգման, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի նախաշեմին զարգացող երկրներ համարվող Ռուսաստանի և Չինաստանի տնտեսությունները, ի հաշիվ առավել բարձր տնտեսական աճի տեմպերի, ներքին շուկայի պահանջարկի աճի, արժույթային զգալի մեծ պահուստների, ինչպես նաև այդ երկրների ֆինանսական շուկաներում «վատորակ» ֆինանսական ակտիվների շատ ցածր տեսակարար կշռի՝ համեմատաբար ավելի կայուն ու շահեկան վիճակում են գտնվել, քան զարգացած և համաշխարհային առաջատար համարվող Ամերիկայի Միացյալ Նահանգների և Եվրամիության երկրների տնտեսությունները: Այսպիսով, մինչև ճգնաժամային տարիներին հա-

¹ ec.europa.eu/eurostat

² Ministry of internal affairs. Statistics Bureau, Japan. - <http://www.stat.go.jp/english/index/>

³ Петрикова Е.М. Антикризисная политика ведущих стран мира//Банковский бизнес. Ежеквартальный научно-практический журнал

⁴ National Bureau of Statistics of China-www.stats.gov.cn/english/

⁵ www.gks.ru

մաշխարհային համախառն եկամտի մեծ մասը՝ ի հաշիվ հումքային ապրանքների գների կտրուկ աճի և բավականին էժան ֆինանսական միջոցների՝ բաշխվել է հիմնական հումք և պատրաստի արտադրանք արտահանող երկրներում, իսկ մնացած մասը՝ կապիտալ արտահանող երկրներում, հիմնականում՝ ԱՄՆ և ԵՄ:

Ըստ այդմ, այս երկրների տնտեսությունների գրաված դիրքերը համաշխարհային շուկայում կանխորոշեց նրանց տնտեսական զարգացման թույլ և ուժեղ կողմերը, ինչպես նաև ճգնաժամի ազդեցության հիմնական թիրախները՝ տնտեսության իրական հատվածում: Հաշվի առնելով վերոգրյալը, ներկայացնենք նշված երկրների հակաճգնաժամային քաղաքականության առանցքային ուղղությունները՝ մինչճգնաժամային զարգացումների և ճգնաժամի ազդեցությունների համատեքստում: Համեմատությունը կներկայացվի աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 1

ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Ճապոնիայի, Չինաստանի և Ռուսաստանի պետական հակաճգնաժամային քաղաքականության առաջնահերթությունները տնտեսության մեջ

Երկրի անվանումը	Վճարային հաշվեկշռի բնութագիրը՝ 2007թ. վերջի դրությամբ մլրդ դոլարով		Երկրի տնտեսության հիմնական բնութագիրը	Տնտեսության մեջ ճգնաժամի հիմնական պատճառները	Պետական հակաճգնաժամային քաղաքականության առանցքային ուղղությունները
	Ընթացիկ գործառնությունների հաշվի մնացորդ	Կապիտալ գործառնությունների հաշվի մնացորդ			
ԱՄՆ	-700	750	Պատրաստի արտադրանքի, պորտֆելային ու այլ ներդրումների ներմուծող և ուղղակի ներդրողների արտահանող	Ֆինանսական և բանկային ճգնաժամ, իրացվելիության հիմնախնդիրներ, պահանջարկի կտրուկ նվազում	Ֆինանսական համակարգի կայունացում, տնտեսության իրական հատվածին ֆինանսական ռեսուրսների ներգրավման խրախուսում, ներքին պահանջարկի խթանում
ԵՄ	40	-35	Պատրաստի արտադրանքի և ներմուծող, պատրաստի արտադրանքի և ծառայությունների արտահանող, ուղղակի կապիտալ ներդրումների ներմուծող, պորտֆելային ու այլ ներդրումների արտահանող	Բանկային համակարգի ճգնաժամ, տնտեսության մեջ իրացվելիության ու նաև վարկային ռեսուրսների ներգրավման հիմնախնդիրներ, պահանջարկի կտրուկ կրճատում	Ֆինանսական համակարգի կայունացման ապահովում, վարկային ճգնաժամի հաղթահարում, տնտեսության իրական հատվածին ֆինանսական ռեսուրսներով ապահովման աջակցություն, ներքին համախառն պահանջարկի խթանում
Ճապոնիա	195	-170	Պատրաստի արտադրանքի և կապիտալի արտահանող	Համաշխարհային պահանջարկի կրճատում	Արտահանող ճյուղերի աջակցություն, ներքին պահանջարկի խթանում
Չինաստան	380	60	Պատրաստի արտադրանքի և պորտֆելային ներդրումների արտահանող, հումքի և ուղղակի կապիտալ ներդրումների ներմուծող,	Համաշխարհային շուկայում պահանջարկի կտրուկ անկում և միջազգային շուկաների տարողունակության կրճատում	Արտահանող ճյուղերի օժանդակություն, ներքին պահանջարկի խթանում
Ռուսաստան	65	100	Հումքի և պորտֆելային ներդրումների արտահանող, պատրաստի արտադրանքի և ուղղակի ներդրումների ներմուծող	Հումքի գների կրճատում, հումքային եկամտների նվազում, արտասահմանյան ներդրումների արտահոսք, տնտեսության մեջ իրացվելիության խնդիրներ	Տնտեսության իրական հատվածի իրացվելիության աջակցում, տնտեսության վերակառուցում, արտահանող ճյուղերի աջակցություն, ներքին պահանջարկի խթանում

Դատելով աղյուսակում զետեղված տվյալներից՝ կարելի է ասել, որ եթե մասնավորապես, ԱՄՆ-ում և ԵՄ-ում ճգնաժամը տնտեսության իրական հատվածից դեպի ֆինանսական հատված տեղափոխվել է վարկավորման կրճատման ու ներքին պահանջարկի նվազման արդյունքում, ապա Չինաստանի և Ճապոնիայի տնտեսությունների վրա ճգնաժամի ազդեցության հիմնական պատճառը համաշխարհային պահանջարկի կտրուկ կրճատումն էր: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա այստեղ տնտեսության իրական հատվածում ճգնաժամի ազդեցության պատճառները միջազգային շուկաներում արտահանվող հումքի գների կտրուկ անկումը և պահանջարկի կրճատումն էր, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների արտահոսքը, ինչն էլ, իր հերթին, բերեց տնտեսության և բանկային համակարգում իրացվելիության հիմնախնդիրների: Այսպիսով, երկրի տնտեսության վիճակն ու առանձնահատկությունները, ինչպես նաև ճգնաժամի ազդեցության պատճառները և դրսևորումները պայմանավորեցին երկրների հակաճգնաժամային քաղաքականությունների առանցքային ուղղություններն ու պետական աջակցության գերակա ոլորտները:

Ամփոփելով վերոգրյալը, հարկ է նշել, որ ճգնաժամների պատճառների վերացմանն ու դրանց հաղթահարմանն ուղղված պետության հակաճգնաժամային միջոցառումների առաջնահերթ ուղղությունների համընկնումը տնտեսության իրական հատվածի կարգավորման փաստացի ուղղությունների հետ՝ հանդիսանում է տնտեսության պետական հակաճգնաժամային կարգավորման արդյունավետության կարևոր ցուցանիշներից մեկը:

Карен Саргсян

Анализ зарубежного опыта антикризисных мероприятий в контексте глобального финансово - экономического кризиса

Аннотация

Исследование и анализ мирового опыта регулирования кризисов делает очевидным тот факт, что без эффективной государственной антикризисной политики невозможно преодолеть отрицательные последствия кризисов и восстановить экономику. В этой связи необходимо учитывать как положительный, так и отрицательный зарубежный опыт в этой сфере. В данной статье проведен сравнительный анализ особенностей антикризисных политик ведущих зарубежных стран.

Karen Sargsyan

The analysis of anti-crisis measures foreign practice within the context of global financial - economic crisis

Abstract

The study and the analysis of world practice of crises regulation makes obvious the fact, that it is impossible to overcome negative impacts of crises and to restore the economy without effective state anti-crisis policy. Connected with this fact, it is necessary to take in account both positive and negative foreign practice in this sphere. The article provides a comparative analysis of foreign states anti-crisis policies peculiarities.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԿՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՆՊԱՏԱԿԸ. ԶԵՅՄՍ ԹՈՒԲՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՃՎՆԱԺԱՍԻ
ՀԱՂԱՅԱՐՄԱՆ ԼՃԱԿ**

Երբ 2008թ. սկսված ֆինանսական ճգնաժամն աստիճանաբար վերաճեց տնտեսականի, եվրոպական իշխանությունները ստիպված եղան ավելի կտրուկ քայլերի դիմել: Նախ եվրահանձնաժողովին իրավունք վերապահվեց տուգանել չափազանց մեծ բյուջեի դեֆիցիտ և պետական պարտք ունեցող երկրներին, իսկ այնուհետև նույն կառույցի նախագահ ժոզե Մանուել Բարոզոն առաջարկեց ֆինանսական հարկով հարկել ԵՄ այն տարածաշրջանի երկրները, որոնք կարող են տարեկան 35 մլրդ եվրոյով հարստացնել ԵՄ բյուջեն: Նրա խոսքերով, այս հարկատեսակը հնարավորություն կտա համապատասխան քայլեր ձեռնարկել անբարեխիղճ երկրների նկատմամբ:

Մեր օրերում ամբողջ աշխարհում անընդհատ իրականացվում են միլիոնավոր ֆինանսական գործառնություններ (արժեթղթերով և արտարժույթով): Եթե վերջիններս հարկվեն նույնիսկ շատ փոքր դրույքաչափով, ապա հնարավոր կլինի մեծապես ավելացնել գանձապետական մուտքերը և միաժամանակ պայքարել սպեկուլյատիվ գործառնությունների դեմ:

Ֆինանսական գործառնությունները հարկելու գաղափարը պատկանում է ամերիկացի տնտեսագետ Ջեյմս Թոբինին: Դեռևս 70-ական թվականներին նա առաջարկեց արտարժույթային գործառնությունների նկատմամբ հատուկ հարկատեսակ սահմանել: Նրա պատկերացմամբ, եթե այդ հարկի դրույքաչափը սահմանվի նույնիսկ 0,1%-0,25%, դա կարող է էականորեն սահմանափակել սպեկուլյատիվ գործառնությունների թիվը, որոնք հարկի կիրառման դեպքում կդառնան պակաս շահավետ¹: Նման գործառնությունների թվի կրճատումը նշանակում է նաև նրանց հասցրած վնասի կրճատում, ինչը դրական հանգամանք է հատկապես զարգացող երկրների համար: Թոբինի կատարած հաշվարկներով այս հարկատեսակը տարեկան կապահովի նվազագույնը 150 մլրդ դոլար եկամուտ, որը նրա հավաստմամբ պետք է տնօրինվի ԱՄՅ-ի (Արժույթի միջազգային հիմնադրամ) և ազգային բանկերի կողմից: «Թոբինի հարկ»-ի կողմնակիցներն առաջարկում էին այն կիրառել անհավասարության ու աղքատության դեմ պայքարելու, կրթության ու առողջապահության զարգացման համար, չնայած Թոբինն ավելի գլոբալ նպատակներ էր դնում դրա հիմքում: Ազատական տնտեսության կողմնակիցները ծայրահեղ բացասական վերաբերմունք ունեին այս գաղափարի նկատմամբ: Նրանց կարծիքով այն երկրները, որոնք կկիրառեն այս հարկատեսակը, աստիճանաբար կնվազեցնեն իրենց շփումն արտաքին աշխարհի հետ՝ վտանգելով իրենց հետագա զարգացման հնարավորությունները:

Ներկայումս եվրոպական պարտքային ճգնաժամի պայմաններում եվրամիությունը, հիմնվելով Թոբինի առաջարկի վրա, փորձում է կիրառել նոր հարկատեսակ («Ֆինանսական հարկ»(Financial transaction tax))՝ որպես պետական եկամուտների ապահովման լրացուցիչ աղբյուր: Ի տարբերություն Թոբինի, որն առաջարկում էր հարկման դաշտ տեղափոխել արտարժույթային գործառնությունները՝ եվրահանձնաժողովն առաջարկում է նման հարկ սահմանել արժեթղթերով և ածանցյալ ֆինանսական գործիքներով կատարվող գործարքների նկատմամբ:

Եվրամիության 11 երկրում (Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրիա, Բելգիա, Էստոնիա, Յունաստան, Իտալիա, Պորտուգալիա, Իսպանիա, Սլովակիա և Սլովենիա), որոնց բաժին է ընկնում ԵՄ տնտեսության 2/3-ը, արդեն պաշտոնապես առաջարկվել է ներդնել ֆինանսական գործառնությունների համար նոր հարկատեսակը և հարկման դաշտ տեղափոխել ԵՄ տարածքում իրականացվող բոլոր այն գործարքները, որոնց հիմքում ընկած են ֆինանսական գործիքները:

¹ „The Tobin Tax. Coping with financial volatility.

Պետությունները նախատեսում են այս հարկի գծով ձևավորված եկամուտներն ուղղել ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարմանը:

Բաժնետոմսերով, պարտատոմսերով, կոլեկտիվ ներդրումային հիմնադրամների փայերով, դրամական շուկայի գործիքներով կատարվող գործարքների և ռեպո գործառնությունների համար «Ֆինանսական հարկ»-ի դրույքաչափը սահմանվելու է 0,1%, իսկ ածանցյալ արժեթղթերի համար՝ 0,01%: Ըստ վերլուծաբանների՝ նոր հարկատեսակի ընդունման արդյունքում հարկման ենթակա կլինեն ֆինանսական կառույցների միջև իրականացվող գործառնությունների շուրջ 85%-ը¹: Սպասվում է, որ եվրոպական 11 երկրում նոր հարկատեսակի ներդրման արդյունքում պետական գանձարանի տարեկան լրացուցիչ մուտքերը կավելանան 30-35 մլրդ եվրոյով:

Հատկանշական է, որ երկրներն իրենց նախընտրությամբ կարող են փոփոխել նոր հարկի դրույքաչափերը՝ նույնիսկ ավելի բարձր հարկման դրույք սահմանելով: Հարկը նույն սկզբունքներով վերաբերում է գործարքի կողմ հանդիսացող յուրաքանչյուր մասնակցին: Այս պարագայում, գործարքի կնքման վայրի պարզաբանման համար առաջնորդվելու են «ռեզիդենտության» սկզբունքով: Համաձայն դրա՝ անկախ ֆինանսական գործարքի կնքման վայրից՝ այն պետք է հարկվի, եթե գործարքի կողմերից գոնե մեկը գրանցված է վերը նշված 11 երկրներից մեկում:

«Ֆինանսական հարկը» չի տարածվելու հասարակ քաղաքացիների ամենօրյա ֆինանսական գործառնությունների վրա, այսինքն՝ բանկային ավանդները, ապահովագրության պայմանագրերը, հիփոթեկային վարկերն ու բիզնեսի վարկավորումը, վարկային քարտերով իրականացվող գործառնությունները, ինչպես նաև վճարային գործարքներն այս հարկատեսակով չեն հարկվելու: Չեն հարկվելու նաև արժեթղթերի առաջնային թողարկումը (որն ուղղված է կազմակերպությունների կողմից նոր կապիտալ միջոցների ներգրավմանը), եվրոպական կենտրոնական բանկի և EFSF, ESM հակաճգնաժամային ֆոնդերի հետ կատարվող գործառնությունները: Նման քաղաքականությամբ եվրահանձնաժողովը ձգտում է նոր հարկատեսակով հարկման դաշտ տեղափոխել այն ֆինանսական գործառնությունները, որոնք, ի սկզբանե, նախատեսված են եկամտային հոսքերի ապահովման համար:

Եվրահանձնաժողովի առաջարկը քննարկումների մեծ ալիք բարձրացրեց: Կարծիքներն այս հարցի շուրջ հակասական էին: Ընդդիմադիրների կարծիքով այս հարկը բացասաբար կանդրադառնա հասարակության գործարար ակտիվության և բարեկեցության վրա, իսկ թերզարգացած ֆինանսական հատված և բանկերի կապիտալացման ցածր մակարդակ ունեցող երկրների համար այն կարող է նույնիսկ կործանարար լինել: Տնտեսագետ Ջեյմս Ուոթսոնի հավաստմամբ նոր հարկատեսակը կբերի կապիտալի թանկացմանը և կազմակերպությունների կողմից ներդրումների իրականացման կրճատմանը²:

Այս հարցում եվրահանձնաժողովը կարող է բախվել նաև ԵՄ խոշորագույն ֆինանսական կենտրոնի՝ Մեծ Բրիտանիայի բացասական կարծիքի հետ: Վերջինս համոզված է, որ, համաձայնվելով «Ֆինանսական հարկի» ներդրմանը, կվտանգի ֆինանսական միջոցների ապագա ներհոսքը: Ներկայումս եվրոպական գործառնությունների շուրջ 70%-ն իրականացվում է անգլիական «Սիթի բանկ»-ի միջոցով, իսկ նոր հարկատեսակի ներմուծումն էականորեն կկրճատի այս ցուցանիշը: Այսպիսով, Մեծ Բրիտանիան դեռևս չի պատրաստվում կիրառել «Ֆինանսական հարկ»-ը:

CFA ինստիտուտի կատարած հարցման արդյունքում (որին մասնակցել են ներդրումների հետ կապված 100 հազարից ավելի մասնագետներ ամբողջ աշխարհում) մասնագետների միայն 5%-ն է հավատում, որ նոր հարկատեսակը հաջողությամբ կգործի ԵՄ երկրներում, 44%-ը պնդում է, որ այն պետք է ընդունվի ոչ միայն ԵՄ 11, այլ գոնե Մեծ քսանյակի երկրների կողմից (հակառակ դեպքում այն ոչ միայն չի վերականգնի ֆինանսական շուկաների կայունությունը, այլ ավելի բացասաբար կանդրադառնա եվրոպայի տնտեսության վրա), իսկ 45%-ի համար «Թոբինի հարկ»-ի կրկնօրինակը որևէ դրական արդյունքի չի հանգեցնի: Ավելին, հենց ինքը՝

¹ Financial Transaction tax/Alternative investment management association.

² http://article.wn.com/view/2013/04/03/EU_financial_transaction_tax_seen_lift_Britains_financing_co.

Եվրահանձնաժողովն էր նախկինում գտել, որ երկարաժամկետ հատվածում այս հարկատեսակը կկրճատի Եվրոպայի տնտեսական աճը տարածաշրջանի համախառն ՀՆԱ-ի միջինում 1,15%-ի չափով¹: Ստացվում է այնպես, որ հանձնաժողովն ինքն է առաջարկում ներդնել մի հարկատեսակ, որը կարող է բացասաբար անդրադառնալ ԵՄ ՀՆԱ-ի աճի վրա:

Ֆինանսական հարկի կիրառման անհրաժեշտությունն արդարացված է այնքանով, որ այն կարող է հանդես գալ որպես ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման միջոց, սակայն փորձենք նշել, թե ինչ հնարավոր անցանկալի հետևանքների կարող է այն հանգեցնել:

Թվում է, թե ֆինանսական հարկն իր բացասական դրսևորումներով չի անդրադառնա այն երկրների քաղաքացիների վրա, որոնք կփորձեն կիրառել այս հարկատեսակը, քանի որ այն հիմնականում վերաբերում է ֆինանսական կազմակերպություններին և նրանց կողմից կատարվող գործառնություններին: Եվրահանձնաժողովը, ներմուծելով ֆինանսական հարկը, փորձում է հետ բերել այն գումարները, որոնք ճգնաժամի պայմաններում որպես օգնություն տրամադրվել էին ֆինանսական կազմակերպություններին: Իրականում այս հարկատեսակից առավել մեծ չափով կարող են տուժել հենց տնային տնտեսությունները և հասարակ քաղաքացիները (ապագա կենսաթոշակառուները): Քանի որ բանկերը, ներդրումային ընկերությունները, կենսաթոշակային ֆոնդերը մեծ թվով ֆինանսական գործառնություններ են իրականացնում քաղաքացիներին պատկանող միջոցներով, հետևաբար ֆինանսական հարկը կարող է կրճատել վերջիններիս խնայողությունները և ապագա կենսաթոշակային գումարները:

Ֆինանսական գործառնությունների հարկումը կարող է անդրադառնալ նաև ապրանքների գների բարձրացման վրա. մինչև վերջնական սպառողին հասնելը ապրանքները տարբեր կազմակերպությունների միջև կնքվող գործարքների օբյեկտ են հանդիսանում, և քանի որ ֆինանսական հարկը զանձվելու է յուրաքանչյուր գործարքի դեպքում, հետևաբար այդ հարկի գծով կատարվող ծախսերը կներառվեն ապրանքի գնի մեջ և կբարձրացնեն այն: Ստացվում է, որ այս ամենի արդյունքում մեծագույն հարվածը կարող են կրել վերջնական սպառողները:

Հնարավոր է նաև, որ առաջարկվող հարկատեսակի կիրառումը բացասաբար անդրադառնա ներդրողների վարքագծի վրա, քանի որ ֆինանսական գործառնությունների իրականացման հետ կապված ծախսերը (transaction costs) ևս կարող են աճի միտում դրսևորել:

Ֆինանսական հարկի կիրառման դեպքում կա հավանականություն նաև, որ գործառնությունները ԵՄ երկրներից կտեղափոխվեն դեպի ավելի մեղմ օրենսդրական կարգավորմամբ երկրներ, ինչն իր հերթին կհանգեցնի առանց ապահովվածության և ավելի թույլ վերահսկվող գործարքների թվի մեծացմանը: Ինչպես արդեն նշվել է, հարկումն իրականացվելու է «ռեզիդենտության» սկզբունքով, իսկ դա նշանակում է, որ եթե գործարքի կողմերը գրանցված չեն ԵՄ-ում, ապա այդ գործարքը ազատվում է ֆինանսական հարկից, նույնիսկ եթե գործարքի հիմքում ընկած է ԵՄ ռեզիդենտ կազմակերպության թողարկած ֆինանսական գործիք: Նույնը չի կարելի վերագրել այն դեպքին, երբ գործարքի կողմերից գոնե մեկը հանդիսանում է ԵՄ ռեզիդենտ: Նման դեպքում ֆինանսական հարկը զանձվում է, նույնիսկ եթե գործարքի հիմքում ընկած է ԵՄ ռեզիդենտ չհանդիսացող կազմակերպության թողարկած ֆինանսական գործիք: Այս ամենը ֆինանսական շուկայի մասնակիցներին կստիպի գործունեություն ծավալել ԵՄ սահմաններից դուրս, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ ԵՄ հետագա տնտեսական աճի վրա:

Այսպիսով, ԵՄ երկրների կողմից ֆինանսական գործառնությունները հարկելու ցանկությունը մեծապես պայմանավորված է ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարմամբ, սակայն մասնագետները միակարծիք չեն, թե արդյոք նոր հարկատեսակի ներդրումը կապահովի ցանկալի արդյունքը: Մեծ թվով միջազգային կազմակերպությունների (Արժույթի միջազգային հիմնադրամ (IMF), Համաշխարհային բանկ (WB), Միջազգային հաշվարկների բանկ (BIS), Միավորված ազգերի կազմակերպություն (UN) և այլն) հետազոտություններ և վկայում են այն մասին, որ ֆինանսական հարկի կիրառումը կարող է ոչ միայն չարդարացնել Եվրահանձնաժողովի սպասելիքները, այլ նաև ունենալ սպասվածի հակառակ ազդեցությունը: Այս ամենով հանդերձ, եթե

¹ Financial Transaction tax/ Alternative investment management association.

Ֆինանսական հարկի ներդրումը հաստատվի նաև Եվրամիության խորհրդի կողմից, ապա այն ուժի մեջ կմտնի արդեն 2014 թվականի սկզբին:

Татевик Василян

**Необходимость и цель налогообложения финансовых транзакций.
Предложение Джеймса Тобина, как инструмент преодаления
финансово-экономического кризиса**

Анотация

Недавний глобальный финансово-экономический кризис имел свое влияние на национальные экономики и государственные финансы. В Европе, так же как и на международном уровне, существует строгий консенсус по поводу того, что финансовый сектор должен способствовать борьбе с кризисом и уклонением от налогов. Некоторые страны Евросоюза уже приняли соответствующие меры по налогообложению финансового сектора. 28-го сентября 2011-го года Еврокомиссия сделала предложение по принятию налога на финансовые транзакции, который, в случае утверждения вступит в силу 1-го января 2014-го года. Налог будет взиматься по ставке 0,1% от сделок с акциями и облигациями, и 0,01% от сделок с деривативами.

Tatevik Vasilyan

**The necessity and the purpose of taxing financial transactions: James Tobin's
solution as a tool to fight financial crises**

Abstract

The recent Global Financial Crisis has seriously hit the economies and public finances of many nations. In Europe and internationally there is a strong consensus on the role of the financial sector that needs to contribute to fighting the negative impact of the crisis and tax aversion practices. Some EU member states have already undertaken respective actions and measures to tax their financial sectors. On September 28th, 2011, the European Commission proposed taxing financial transactions that will become effective from January 1st, 2014 if it is adopted. Stocks and bonds transactions will be taxed at the rate of 0.1%, and in case of derivative transactions the tax rate of 0.01% will be applied.

**ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ. ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ
ԱՆՂԱՄ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ**

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում Եվրամիության անդամ երկրների կողմից ձեռնարկվել են ճգնաժամի հաղթահարմանն ուղղված մեծ թվով միջոցառումներ, որոնց շարքում ֆիսկալ փոփոխությունները երկրներից յուրաքանչյուրի համար մեծ կարևորություն էին ներկայացնում: Վերջիններս առնչվում էին ֆիսկալ կարգավորման արդյունավետ մակարդակի և չեզոքության օպտիմալ հարաբերակցությունն ապահովելու խնդրին: Ճգնաժամը մեծ թվով երկրների ստիպեց առավել համակողմանի մոտեցում ցուցաբերել և հարկային քաղաքականությունն իրականացնել՝ հաշվի առնելով ազգային տնտեսության առանձնահատկությունները:

Տնտեսագետները ճգնաժամը դիտում են որպես մարտահրավեր և որպես հնարավորություն՝ փնտրելու և գտնելու համապատասխան «դեղատոմսեր» աշխարհի տնտեսությունների համար: Սկսած 2008թ.՝ Եվրամիության անդամ երկրներում անվստահություն էր դրսևորվում ֆիսկալ քաղաքականության իրականացման քայլերի վերաբերյալ: Նման իրավիճակը շարունակվում էր նաև 2009թ., երբ բյուջետային դեֆիցիտը կազմեց ՀՆԱ-ի 6,8%, այն դեպքում, երբ ՀՆԱ-ն կրճատվել էր 4,2%-ով՝ համեմատած 2008թ. ցուցանիշի հետ: Եվրամիության անդամ 27 երկրներից 24-ում գրանցվել էր բյուջեի դեֆիցիտի կտրուկ աճ, որի պատճառով երկրներին առաջարկվում էր քայլեր ձեռնարկել այն 3%-ի հասցնելու համար:

Վերլուծաբաններից շատերը գտնում են, որ ներկա ճգնաժամի առաջացման և հետագա խորացման պատճառներն անհրաժեշտ է փնտրել տնտեսության «գերլարման» մեջ, որի պարագայում աճող համախառն պահանջարկն սկսում է արտահայտվել ոչ թե արտադրության ծավալների աճով, այլ գների բարձրացմամբ¹: Մարեկ Դոդրովսկին իր աշխատություններից մեկում «գերլարման» հիմքերը տեսնում է տնտեսության հետևյալ հատվածներում. ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Իռլանդիայի, Իսպանիայի, Հունաստանի և Բալթյան երկրների անշարժ գույքի շուկաները (բնակարանների և այլ շինությունների մասով), կապիտալի ու նավթի շուկաները, ինչպես նաև գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության ոլորտները և այլն: ԱՄՆ-ի հարկային քաղաքականությունը մշակողները եկան այն եզրահանգման, որ նման ճգնաժամային պայմաններում անհրաժեշտ է էական քայլեր մշակել ԱՄՆ-ի ներդրումային գրավչությունը պահպանելու և հարկման բազայի հետագա անկումը կանխելու համար:

Եվրոպական երկրներում կրկնակի հարկումը, հարկային համակարգերի միջև համաձայնեցվածության բացակայությունը, գործարարությամբ զբաղվելու հարկային խոչընդոտները, հարկային վարչարարության հետ կապված ծախսերը որոշ արգելքներ են ստեղծում բաց և մրցունակ շուկա ձևավորելու համար, որի արդյունքում Եվրամիության անդամ երկրների մեծ մասը ճգնաժամի պայմաններում գրանցեց պետական պարտքի աճ: Արդյունքում, 2010թ. 27 երկրներում պետական պարտքը միջինում կազմում էր ՀՆԱ-ի 80,30%-ը: Համեմատության համար նշենք, որ վերջինս 2008թ. կազմում էր 62,3%: Նման իրավիճակում երկրներն սկսեցին

¹ MarekDobrowski in 'The Global Financial Crisis: Lessons for European Integration'

քայլեր ձեռնարկել դեֆիցիտի կրճատման և տնտեսությանը հետագա զարգացման հնարավորություններ տալու ուղղությամբ:

Երկրները, իրենց տնտեսական առանձնահատկություններից ելնելով, յուրովի էին պայքարում ճգնաժամի հաղթահարման համար: Որոշ երկրներ կիրառեցին ուղղակի միջամտության մեթոդներ, մասնավորապես պետական եկամուտների աճին ու ծախսերի կրճատմանն ուղղված միջոցառումներ: Այլ երկրներ նախընտրեցին գնալ անուղղակի կարգավորման ճանապարհով՝ հիմնականում ուշադրությունը կենտրոնացնելով հարկային լծակների վրա, ինչը փորձում էին ապահովել հարկայի բեռի ավելացմամբ: Շատերը վերջինս դիտում են որպես հարկային դրույքների ավելացում, մինչդեռ դրան կարելի է հասնել նաև հարկային բազայի ավելացմամբ և նոր հարկատեսակների կիրառմամբ: Քննարկման առարկա դարձավ նաև հարկային բեռի նվազմանն ուղղված քաղաքականությունը՝ նպատակ ունենալով զարկ տալ նոր ներդրումներին և աջակցել արդեն գործողներին՝ ճգնաժամի առաջ բերած խնդիրներին դիմակայելու համար: Նման քաղաքականությունը կարող էր նպաստել նաև հարկերից խուսափելու դեմ պայքարին, կրճատել տնտեսության ստվերայնության մակարդակն ու զսպել կոռուպցիոն ռիսկերը:

Տնտեսագետները միակարծիք չեն այն հարցի շուրջ, թե շահութահարկի, եկամտահարկի և սոցիալական ապահովության վճարների բարձրացումն ինչպիսի հետևանքների կհանգեցնի: Շատերի կարծիքով նման մոտեցումը ամենակործանարարն է ֆինանսական համակարգի և ամբողջ տնտեսության անկման պայմաններում: Վերջինս բացատրվում է նրանով, որ եկամտահարկի կրճատումը նպաստում է ներդրումների աճին, համախառն պահանջարկի և աշխատուժի առաջարկի ավելացմանը: Թվում է, թե ամեն ինչ շատ պարզ է. ընդամենը չբարձրացնելով շահութահարկը, եկամտահարկը և սոցիալական ապահովության վճարները՝ կարելի է ապահովել ցանկալի տնտեսական աճ, սակայն լուծումներ գտնելը շատ ավելի դժվարանում է, երբ մի կողմից գործ ունենք ճգնաժամի հաղթահարման խնդրի, իսկ մյուս կողմից՝ դեֆիցիտի կրճատման անհրաժեշտության հետ:

Որոշ երկրներ (Հունաստան, Իսպանիա, Պորտուգալիա), որոնք, 2011թ. չափազանց մեծ ծավալների հասած դեֆիցիտը կրճատելու համար բարձրացրեցին հարկադրույքները, հաջողության չհասան: Ստացվում է այնպես, որ հարկային բեռի ավելացումը անպայմանորեն չի հանգեցնում բյուջեի դեֆիցիտի կրճատման: Պետությունների կողմից դեֆիցիտի կրճատմանն ուղղված միջոցառումները պետք է առնչվեն բյուջեի և՛ եկամուտներին (ինչը պարտադիր չէ, որ ապահովվի հարկային բեռի մեծացման միջոցով), և՛ ծախսումներին (ինչը պարտադիր չէ, որ ապահովվի բյուջետային ծախսերի կրճատման միջոցով): Որոշ երկրների կողմից կիրառված միջոցառումների շարքում տեղ են գտել հարկահավաքման գործընթացների բարելավումը, հարկային խարդախությունների դեմ պայքարի միջոցառումները, բյուջետային ծախսերի ուղղումը ներդրումների ֆինանսավորմանը և զբաղվածության ապահովմանը:

Անդրադառնալով առանձին հարկատեսակներին՝ նշենք, որ սոցիալական ապահովության վճարներն ունեն իրենց ուրույն կարևորությունն ու նշանակությունը տնտեսության վերականգնման գործում: Սակայն դրանց չափազանց բարձր մակարդակը բացասաբար է անդրադառնում ցածր եկամուտ ունեցողների վրա: Այս հարկատեսակի փոփոխությունը յուրատեսակ միջոց է զբաղվածության մակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականության իրագործման ճանապարհին: Վիճակագրությունը փաստում է, որ տարբեր երկրներ տարբեր որոշումներ են ընդունել սոցիալական ապահովության վճարների փոփոխության հարցում. մասնավորապես՝ Իռլանդիան և Լատվիան ավելացրեցին այս հարկի գծով բյուջետային մուտքերը՝ բարձրացնելով վերջինիս դրույքաչափը, իսկ Կիպրոսը, Լիտվան, Պորտուգալիան, Սլովակիան, Ռումինիան նույն փոփոխությունն ապահովեցին հարկման բազայի ավելացմամբ: Այս հարցում այլ

մոտեցում ցուցաբերեց Բուլղարիան, որը կրճատեց հարկման դրույքը և միաժամանակ ավելացրեց հարկման բազան:


Ինչ վերաբերում է այլ հարկատեսակներին, նշենք, որ 2010 և 2011թթ. շատ երկրներում եկամտահարկի գծով հարկային մուտքերն ավելացան կամ ի հաշիվ դրույքաչափի, կամ՝ հարկման բազայի ավելացման: Եվրամիության երկրներում ունեցվածքի հարկը (property tax) 2011թ. 2010թ. համեմատ բարձր էր հատկապես Չեխիայում, Գերմանիայում, Հունաստանում, Պորտուգալիայում: Որոշ երկրներ, մասնավորապես՝ Ավստրիան, Դանիան, Հունգարիան և Պորտուգալիան, բարձրացրեցին նաև տնտեսության ֆինանսական հատվածից գանձվող հարկերը: Մեծ թվով երկրներում ուղղակի հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է անուղղակի հարկեր/ՀՆԱ հարաբերակցությանը:

Ինչպես արդեն նշել ենք, ճգնաժամը տարբեր դրսևորումներ ունեցավ ԵՄ անդամ երկրներից յուրաքանչյուրում: Տնտեսության գրեթե բոլոր ոլորտների մեծ, հարկային ոլորտում ևս գրանցվեցին փոփոխություններ (և՛ դրույքաչափերի, և՛ հարկման բազայի, և՛ հարկային վարչարարության հետ կապված):

Հարկման մասով 2008-2012թթ. հիմնական փոփոխությունները ներկայացված են գծապատկերներ 1-6-ում (եկամտահարկ, շահութահարկ, ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)):

Վիճակագրական տվյալների¹ համաձայն՝ երկրների մեծամասնությունում ճգնաժամի տարիներին եկամտահարկի դրույքաչափը համեմատաբար կայուն է մնացել (գծապատկեր 1)՝ չնայած նրան, որ որոշ երկրներ (Հունաստան, Իսպանիա, Լյուքսեմբուրգ, Պորտուգալիա), այնուամենայնիվ, բարձրացրել են այն՝ փորձելով ավելացնել բյուջետային եկամուտները:

Գծապատկեր 1




Ինչ վերաբերում է շահութահարկի դրույքաչափին, վերջինս նույնպես, ընդհանուր առմամբ, կտրուկ փոփոխությունների չի ենթարկվել, թեև որոշ երկրներում տեղաշարժվել է նվազման ուղղությամբ (գծապատկեր 2): Այն համեմատաբար զգալի չափով նվազել է Մեծ Բրիտանիայում (2008թ. կազմել է 30%, իսկ 2012թ.՝ 24%), Չեխիայում (2008թ. կազմել է 21%, իսկ 2012թ.՝ 19%) և Շվեդիայում (2008թ. կազմել է 28%, իսկ 2012թ.՝ 26.3%): ԵՄ անդամ երկրներից միայն երկուսը՝

¹ http://epp.eurostat.ec.europa.eu/cache/ITY_OFFPUB/KS-DU-12-001/EN/KS-DU-12-001-EN.PDF


Պորտուգալիան և Ֆրանսիան են ճգնաժամի տարիներին բարձրացրել շահութահարկի դրույքաչափը՝ 2008-2012թթ. ընթացքում փոփոխելով այն համապատասխանաբար 26.5%-ից 31.5% և 34.4% -ից 36.1%:

Գծապատկեր 2




Ուղղակի հարկերից անցում կատարելով անուղղակի հարկերին՝ նշենք, որ եթե եկամտահարկի և շահութահարկի դրույքաչափերը ճգնաժամի տարիներին մեծ տատանողականություն չեն դրսևորել, ապա անուղղակի հարկատեսակներից մասնավորապես ԱԱՀ-ն առավել զգալի փոփոխությունների է ենթարկվել մեծ թվով երկրներում (գծապատկեր 3): Այս հարկատեսակը 2008-2012թթ. ընթացքում հիմնականում աճի միտում է դրսևորել: ԵՄ անդամ երկրների շարքում ԱԱՀ-ի դրույքաչափի մեծ տատանումներով աչքի է ընկել Մեծ Բրիտանիան, որը 2009թ. այդ դրույքաչափը նախ նվազեցրեց՝ հասցնելով 15%-ի (2008թ. 17,5%-ի համեմատ), իսկ 2010թ. նորից դարձրեց 17,5%: Հաջորդող երկու տարիների ընթացքում սահմանվեց ավելի բարձր դրույքաչափ (2012թ. այն արդեն կազմում էր 20%):

Գծապատկեր 3




Այժմ փորձենք եկամտահարկի, շահութահարկի և ԱԱՀ-ի փոփոխության միտումները ճգնաժամի պայմաններում դիտարկել ՀՆԱ-ի հետ հարաբերակցության տեսանկյունից: Համեմատենք հատկապես 2008 և 2009թթ. համապատասխան ցուցանիշները, երբ սկսվեց ճգնաժամն ու շարունակվեց խորանալ: Գծապատկեր 4-ը ցույց է տալիս, որ եկամտահարկ/ՀՆԱ հարաբերակցությունը առանձին երկրներում բավականին տարբերվում է և հիմնականում դրսևորում է նվազման միտում: Օրինակ՝ Լատվիան, Լիտվան և Լեհաստանը 2009թ. կրճատեցին եկամտահարկի դրույքաչափը, որի արդյունքում նվազեց նաև եկամտահարկ/ՀՆԱ հարաբերակցությունը: Իսկ, օրինակ Կիպրոսում եկամտահարկի դրույքաչափը մնացել էր անփոփոխ, բայց եկամտահարկ/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել էր: Ֆինլանդիայում եկամտահարկի դրույքաչափի կրճատումը հանգեցրել էր ՀՆԱ-ի ավելացման: Անփոփոխ դրույքաչափի պայմաններում Դանիայում և Նիդերլանդներում վիճակագրական տվյալների համաձայն եկամտահարկ/ՀՆԱ հարաբերակցությունն ավելացել էր: Այսպիսով, ճգնաժամի տարիներին եկամտահարկ/ՀՆԱ հարաբերակցությունը չափազանց տարբեր դրսևորումներ է ունեցել ԵՄ անդամ երկրներում:

Գծապատկեր 4




Այժմ անդրադառնանք գծապատկեր 5-ին, որում արտացոլված է շահութահարկ/ՀՆԱ հարաբերակցության փոփոխության միտումները ճգնաժամի տարիներին: Շահութահարկ/ՀՆԱ հարաբերակցության տեսանկյունից լավագույն ցուցանիշները դրսևորել են Էստոնիան և Լյուքսեմբուրգը: ճգնաժամի ամբողջ ընթացքում Էստոնիան անփոփոխ է պահել շահութահարկի դրույքաչափը (21%), բայց, միևնույն ժամանակ ապահովել է շահութահարկ/ՀՆԱ ցուցանիշի աճ (2008թ.՝ 1.6%, 2009թ.՝ 1.9%)¹: Լյուքսեմբուրգն իր հերթին ևս ապահովեց շահութահարկ/ՀՆԱ հարաբերակցության աճ (2008թ.՝ 5.1%, 2009թ.՝ 5.5%), բայց, ի տարբերություն Էստոնիայի, նվազեցրեց շահութահարկի դրույքաչափը (2008թ.՝ 29.6%, 2009թ.՝ 28.6%): Նշենք նաև, որ ԵՄ անդամ շատ երկրներ էլ գրանցեցին շահութահարկ/ՀՆԱ հարաբերակցության բավականին մեծ չափով նվազում:

¹ <http://epp.eurostat.ec.europa.eu>




ԱԱՀ/ՀՆԱ-ի հարաբերակցության փոփոխության վրա ձգնաժամի ունեցած ազդեցությունը ներկայացված է գծապատկեր 6-ում: Այս ցուցանիշը ևս տարբեր երկրներում տարբեր կերպ է փոփոխվել: Օրինակ, Էստոնիան և Հունգարիան ԱԱՀ-ի դրույքաչափն ավելացնելով մեծացրեցին ԱԱՀ/ՀՆԱ հարաբերակցությունը, այն դեպքում, երբ Ֆինլանդիան և Շվեդիան նույն հարաբերակցության աճն ապահովեցին ԱԱՀ-ի դրույքաչափն անփոփոխ պահելով: Կան նաև այնպիսի երկրներ, որոնք առանձնացան ԱԱՀ/ՀՆԱ հարաբերակցության կրճատմամբ, նույնիսկ այն պարագայում, երբ դրույքաչափը պահել էին անփոփոխ (Կիպրոս, Բուլղարիա, Իռլանդիա, Հունաստան, Ռումինիա): Իսկ Լատվիան և Լիտվան բարձրացրեցին դրույքաչափը, բայց շարունակեցին մնալ ԱԱՀ/ՀՆԱ նվազող ցուցանիշ ունեցող երկրների շարքում:




Դիտարկենք իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում: Վերը թվարկված հարկատեսակների դրույքաչափերը դիտարկվող ժամանակաշրջանում (2008-2012թթ.) փոփոխություններ չեն կրել: Ինչ վերաբերում է եկամտահարկի, շահութահարկի և ավելացված արժեքի հարկի ու ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշներին¹, ապա վերջիններիս փոփոխությունը ներկայացված է գծապատկեր 7-ում:

¹ <http://www.armstat.am/file/doc/99471508.pdf>




Եթե փորձենք դիտարկվող հարկադրույքների տեսանկյունից Հայաստանը համեմատության մեջ դնել ԵՄ անդամ երկրների հետ, ապա կտեսնենք, որ 2008-2012թթ. ընթացքում ՀՀ-ում եկամտահարկի և շահութահարկի դրույքաչափերը ցածր են եղել ԵՄ միջինից (գծապատկեր 8-9): Ինչ վերաբերում է ԱԱՀ-ի դրույքաչափին, ապա վերջինս միայն 2008-2009թթ. է գերազանցել ԵՄ միջին ցուցանիշը (գծապատկեր 10):


Գծապատկեր 8



Գծապատկեր 9



Գծապատկեր 10



Այսպիսով, ընդհանրացնելով, կարող ենք նշել, որ ԵՄ անդամ երկրներում 2008թ. ճգնաժամը հաղթահարելու քայլերը հարկային քաղաքականության առումով միատարր չեն եղել: Վերջինս նաև պայմանավորված է նրանով, որ որոշ երկրներ իրենց հարկային քաղաքականության շրջանակներում ավելի շատ կենտրոնացած են ուղղակի հարկերի վրա, իսկ մյուսները՝ անուղղակի: Այնուամենայնիվ, հարկային համակարգում կատարվող փոփոխությունները տնտեսության վերականգնման և ապագա կայուն զարգացման համար մեծ կարևորություն ունեն ոչ միայն ԵՄ անդամ, այլ, առհասարակ, ճգնաժամից տուժած բոլոր երկրների համար: Նման

փոփոխությունները հնարավորություն են տալիս լուծել այնպիսի կարոր հարցեր, ինչպիսիք են պետական պարտքի և բյուջեի դեֆիցիտի կրճատումը, զբաղվածության աճի, ներդրումների ավելացման, ինչպես նաև ՀՆԱ-ի աճի ապահովումը: Այս առումով, պատահական չեն Քեյնսի այն խոսքերը, որ հարկերը շուկայական տնտեսությունում հանդես են գալիս որպես ճկունության ապահովման ներկառուցված մեխանիզմներ¹:

Татевик Василян

Изменения механизмов регулирования налогового бремени в условиях финансово-экономического кризиса: страны ЕС и Армения

Анотация

Примеры различных стран показывают, что во время глобального финансово-экономического кризиса были приняты различные меры для его преодоления. Начиная с 2008-го года наблюдается тенденция роста налогов в странах ЕС, которая продолжалась до 2012-го года. Мы смогли убедиться, что повышение налоговых ставок не обязательно приводит к росту ВВП. Повышенное налогообложение не всегда служит механизмом увеличения налоговых поступлений. В противоположность вышесказанному, пример некоторых стран показывает, что путем понижения налоговой ставки можно достичь роста ВВП. Начинаясь кризис заставил страны сформулировать свою налоговую политику в соответствии с особенностями национальных экономик.

Tatevik Vasilyan

Tools and mechanisms to be applied in the management of debt burden during the financial and economic crisis: EU member states and Armenia

Abstract

The experience of various nations shows that different measures were undertaken during the Global Financial Crisis (GFC) to fight the negative impact of the crisis. Starting from 2008 till 2012, the tax rates had been increasing in the EU member states. The author concludes that the increase of tax rates will not necessarily cause GDP growth. High tax rates not always ensure increase in the tax revenue. Contrary to the above stated argument, the example of some states shows that by reducing tax rates GDP growth can be ensured. Many EU members were mainly focused on indirect taxes, and the emerging crisis forced these nations to review their respective tax policies in compliance with the characteristics of national economies. During global financial crises each state needs to review its tax policy.

¹ "Кризис и налоги"/ Д.Р.Черник, Ю.Д. Шмелев/2011/ЗАО „Издательство „Экономика,,

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Որպես կանոն, միջազգային պրակտիկայում առանձնացվում է արտաքին պետական պարտքի կառավարման երկու մակարդակ՝ ղեկավար և օպերատիվ: Դրանցից յուրաքանչյուրը ներառում է տարբեր գործառույթներ:

Արտաքին պետական պարտքի կառավարման ղեկավար մակարդակը կարելի է դիտարկել որպես պետության կառավարման բարձրագույն մակարդակի «խաղի կանոնների» ձևակերպում: Այդ մակարդակում տրվում են արտաքին պետական պարտքի կառավարման համակարգի կազմակերպման ուղղությունները և հիմքերը: Արտաքին պետական պարտքի կառավարումը ղեկավար մակարդակում ներառում է քաղաքականության մշակման, նորմատիվային (կարգավորող) և ռեսուրսներով ապահովման գործառույթները:

Արտաքին պետական պարտքի կառավարման օպերատիվ մակարդակը իրենից ներկայացնում է արտաքին պետական պարտքի կառավարման ամենօրյա գործունեություն, որը համապատասխանում է ղեկավար մակարդակում տրված ընդհանուր ցուցումներին և գոյություն ունեցող կազմակերպչական ձևերին: Արտաքին պետական պարտքի կառավարման օպերատիվ մակարդակը ներառում է հաշվառման, վերլուծական, վերահսկման/մոնիթորինգի և գործառնական գործառույթներ: Արտաքին պետական պարտքի կառավարման ղեկավար մակարդակի քաղաքականության մշակման գործառույթը ներառում է արտաքին պետական պարտքի քաղաքականության և ռազմավարության մշակումը, ինչպես նաև ապահովում է երկրի տնտեսության կառավարման տարբեր պետական մարմինների գործունեության փոխհամաձայնեցումը: Ընդհանուր քաղաքական մոտեցումների ընկալումը անհրաժեշտ է երկրի արտաքին պետական պարտքի ընդունելի մակարդակը որոշելու համար, որն, իր հերթին, կախված է, նախ, պարտքի հոսքից (արդյունավետ օգտագործվող), ինչպես նաև լրացուցիչ արտարժութային ներհոսքի ապահովումից, որն անհրաժեշտ է արտաքին պետական պարտքի ոչ ռիսկային արտաքին փոխառությունների սպասարկման՝ մարման համար: Արտաքին պետական պարտքի վերաբերյալ նման հետևությունից բխում է, որ արտաքին պետական պարտքի քաղաքականությունը էական ազդեցություն ունի ազգային պլանավորման, վճարային հաշվեկշռի և պետական բյուջեի կառավարման, ինչպես նաև բոլոր այն պետական մարմինների գործունեության վրա, որոնք որոշում են, թե երկրին ինչպիսի ներդրումներ են անհրաժեշտ: Քաղաքականության մշակման գործառույթի արդյունքի հիմնական դրսևորում է ներքին և արտաքին պետական պարտքի կառավարման հստակ ձևավորված և իրականացվելի ռազմավարությունը:

Արտաքին պետական պարտքի կառավարման ղեկավար մակարդակի նորմատիվային (կարգավորող) գործառույթը ներառում է արտաքին պետական պարտքի կառավարման նպատակով կիրառվող իրավական, ինստիտուցիոնալ և վարչական միջոցառումները: Տվյալ գործառույթը նախատեսում է մշակել հստակ ձևակերպված այնպիսի նորմատիվային պայմաններ, որոնք կապահովեն հաշվառման, վերահսկման և գործառնական մակարդակներում արտաքին պետական պարտքի համաձայնեցված, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կենտրոնացված կառավարումը: Նշված նորմատիվային պայմանները պետք է ապահովվեն անհրաժեշտ արդյունավետ տեղեկատվական հոսքերով: Նորմատիվային (կարգավորող) գործառույթի իրականացումից ստացված հիմնական արդյունքը իրավական և վարչական բազայի ստեղծումը և շարունակական վերահսկումն է: Վերջինս անհրաժեշտ է արտաքին պետական պարտքին առնչվող բոլոր հաստատություններում՝ պարտականությունների սահմանման և կանոնակարգերի մշակման համար: Այլ կերպ, նորմատիվային (կարգավորող) գործառույթը ստեղծում է կազմակերպչական

մի կառուցվածք, որը արտաքին պետական պարտքի կառավարման համակարգի բաղադրիչներից մեկն է:

Արտաքին պետական պարտքի կառավարման ղեկավար մակարդակի ռեսուրսներով ապահովման գործառույթը դրսևորվում է արտաքին պետական պարտքի ձևակերպման և վերահսկման, վերլուծական գործունեության, ինչպես նաև գործառնական մակարդակներում որակավորված մասնագետների առկայությամբ: Սա ներառում է աշխատողների ընտրության և նշանակման գործընթացները, դրանց ուսուցումն ու խթանումը, ինչպես նաև միջոցառումներ՝ արդյունավետ աշխատանքի իրականացման համար: Առանձին դեպքերում, երբ հաստատությունը արտաքին պարտքի կառավարման ոլորտում խիստ մասնագիտական հմտությունների և գիտելիքների կարիք է զգում, տվյալ գործառույթը կարող է ներառել նաև արտաքին խորհրդատվությունը և վերջինիս գործունեության վերահսկումը: Նմանատիպ օրինակ են հանդիսանում համակարգչային համակարգերի ուսուցումը, պարտքի աուդիտի իրականացումը, պարտքի պայմանների վերանայման շուրջ բանակցային հմտությունների մասնագիտացումը և այլն:

Արտաքին պետական պարտքի կառավարման օպերատիվ մակարդակի հաշվառման գործառույթը պահանջում է յուրաքանչյուր փոխառությանը վերաբերող տեղեկատվության հիման վրա արտաքին պետական պարտքի վերաբերյալ մանրակրկիտ տեղեկատվության հավաքագրում: Արտաքին պետական պարտքի կառավարման հաշվառման գործառույթի հիմքերի ստեղծման անհրաժեշտ պայման է՝ հասկանալ, թե ինչպիսին է արտաքին պետական պարտքի կազմը և համապատասխանաբար ինչպիսի տեղեկատվություն պետք է հավաքագրվի: Առանձին փոխառությունների հաշվառման վրա հիմնված արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարումը պետք է դիտարկվի որպես մեկ ամբողջություն, որը հնարավորություն կընձեռի վերլուծության նպատակով համախմբել վիճակագրական տվյալները: Տվյալ գործառույթի իրականացման հիմնական արդյունքը հանդիսանում է ինչպես համախմբված, այնպես էլ առանձին փոխառությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

Արտաքին պետական պարտքի կառավարման օպերատիվ մակարդակի վերլուծական գործառույթը անմիջականորեն կապված է հաշվառման գործառույթի հետ, քանի որ վերլուծական գործառույթի իրականացման համար օգտագործվող տեղեկատվությունը հավաքվում է հաշվառման գործառույթի իրականացմամբ:

Վերլուծական գործառույթը ներառում է նաև մակրոտնտեսական վերլուծություն, որը հնարավորություն է տալիս արտաքին պետական պարտքի կառավարման գործընթացում իրականացնել առանձին դեպքերի խորացված ուսումնասիրություն, ինչպես նաև որոշել արտաքին պետական պարտքի ապագա կառուցվածքը: Տվյալ վերլուծությունը անհրաժեշտ է վճարային հաշվեկշռի և պետական բյուջեի վրա ունեցած տարբեր սցենարների ներգործության մշտական ստուգման համար: Վերլուծությունը նաև թույլ է տալիս ճիշտ որոշում կայացնել ընդունելի պայմաններով նոր վարկերի ներգրավման կամ ներքին փոխառությունների օգտագործման վերաբերյալ:

Անհատական դիտարկման տեսանկյունից, վերլուծական գործառույթը կապված է տարբեր տեսակի վարկային գործիքների, ինչպես նաև մարման ժամկետների ընտրության հետ: Նշված գործառույթը կիրառվում է նաև արտաքին պետական պարտքի կառավարման նոր ֆինանսական մեթոդների վերլուծության ժամանակ, այսպես, օրինակ՝ պարտքի կոնվերսիայի պլանավորման համար: Ակնհայտ է, որ վերլուծական գործառույթի արդյունքը վերլուծությունն է:

Վերահսկման գործառույթը, որպես առանձին կատեգորիա ամենադժվար դասակարգվող գործառույթն է: Իրականում վերահսկողությունը արտաքին պետական պարտքի կառավարմանը բնորոշ, հատուկ բաղադրիչ է: Անհրաժեշտ է նշել, որ վերահսկումը բնորոշ է հաշվառման, վերլուծական և գործառնական գործառույթներին: Այնուամենայնիվ, վերահսկման գործառույթի առանձնացումը կարևորվում է հայեցակարգային մոտեցման տեսանկյունից, քանի որ այն թույլ է տալիս հստակ բացահայտել տվյալ գործառույթի առանցքային դերը:

Արտաքին պետական պարտքի կառավարման օպերատիվ մակարդակի գործառնական գործառույթը ներառում է ինչպես փոխառությունների համաձայնագրերի, այնպես էլ այլ

համաձայնագրերի և պայմանագրերի կնքման հետ կապված գործողությունների լայն շրջանակ, որոնք հանգեցնում են որոշակի գործողությունների, փոխգործողությունների կամ գործարքների իրականացմանը: Գործառնական գործառույթը ներառում է՝

1. բանակցությունների վարումը,
2. փոխառության օգտագործումը,
3. պարտքի սպասարկումը:

Վերջիններից յուրաքանչյուրում իրականացվող գործունեությունը կամ գործողությունները բխում են փոխառության տեսակից: Գործառնական գործառույթը նախատեսում է տարբեր մեթոդների օգտագործում, այդ թվում՝ արտաքին պետական պարտքի վերակազմավորման տարբեր ձևերի (վերակառուցման և վերաֆինանսավորման) և կոնվերսիայի իրականացում, օրինակ՝ «պարտքի փոխանակում արժեթղթերով», «պարտքի դիմաց ապրանքի փոխանակում» և այլն:

Արտաքին պետական պարտքի կառավարման գործառույթները փոխադարձաբար կապված են միմյանց հետ: Ղեկավար մակարդակի քաղաքականության մշակման, նորմատիվային (կարգավորող) և ռեսուրսներով ապահովման գործառույթները պետական պարտքի կառավարման հիմնական և ուղղվածություն տվող գործառույթներ են: Մակրոտնտեսական պայմանները, ինչպես նաև վերլուծական, կառուցվածքային, վարչական և իրավական դաշտն ու մարդկային ռեսուրսների առկա պայմանները ներազդում են այդ գործառույթների վրա, իսկ իրենք իրենց հերթին, հանդիսանում են ազդեցության օբյեկտներ: Մարդկային և այլ ռեսուրսների ուղղությամբ մշակված ռազմավարությունից, կառուցվածքից և քաղաքականությունից է կախված թե ինչպես է իրականացվում արտաքին պետական պարտքի կառավարումը գործառնական մակարդակում:

Արտաքին պետական պարտքի հետ կապված որոշակի գործարքների իրականացման համար օգտագործվող փոխառությունները և այլ համաձայնագրերը, հանդես են գալիս տարբեր ձևերով, օրինակ՝ երկկողմ և բազմակողմ արտոնյալ արտահանման վարկերի, փոխառությունների, կոմերցիոն բանկերի կողմից տրամադրվող փոխառությունների, պարտքի վերակազմավորման, կոնվերսիայի և այլ տեսքերով: Եվ դրանից կախված փոփոխվում են և բանակցությունները, և փոխառության օգտագործումը, և սպասարկումը:

Միջազգային պրակտիկայում շատ երկրներում պարտքի կառավարման հիմքում դրվում են Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից 2001 թվականին ընդունված պետական պարտքի կառավարման սկզբունքները: Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից 2001 թվականին կազմվել ու ընդունվել են պետական պարտքի կառավարման խորհուրդներ, որոնք ուղեցույց են հանդիսանում անդամ երկրների պետական պարտքի կառավարման գործընթացում: Պետական պարտքի կառավարման խորհուրդներում, պետական պարտքի կառավարման սկզբունքներն են՝

1. Պարտքի կառավարման նպատակները և կոորդինավորումը: Պետական պարտքի կառավարման հիմնական նպատակը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, ռիսկի խելամիտ մակարդակի պայմաններում, կառավարության ֆինանսավորման պահանջումների բավարարումը հնարավորինս քիչ ծախսերով ապահովելն է և վճարումների նկատմամբ իր պարտավորությունների կատարումը:

Պարտքի կառավարումը պետք է տարածվի երկրի կառավարության հսկողության տակ գտնվող հիմնական ֆինանսական պարտավորությունների վրա:

Պարտքը կառավարողները, հարկաբյուջետային քաղաքականության խորհրդատուները և Կենտրոնական բանկը պետք է ունենան պարտքի կառավարման, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության նպատակների վերաբերյալ ընդհանուր միասնական ըմբռնում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գոյություն ունի փոխկախվածություն իրենց կողմից օգտագործվող քաղաքականության իրականացման գործիքների միջև: Պարտքը կառավարողները պետք է նախօրոք տեղեկացնեն իրենց տեսակետը հարկաբյուջետային քաղաքականությունը կարգավորող մարմիններին այն ծախսերի և ռիսկերի վերաբերյալ, որոնք կապված են

պետական կառավարման մարմինների, փոխառությունների պահանջի ֆինանսավորման և մակարդակի հետ:

Կախված ֆինանսական զարգացման մակարդակից՝ անհրաժեշտ է սահմանազատել նպատակներն ու պատասխանատվությունը պարտքի կառավարման և դրամավարկային քաղաքականության ոլորտներում:

Պարտքը կառավարողները, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն իրականացնող, կարգավորող մարմինները պետք է փոխանակվեն տեղեկատվությամբ, պետական կառավարման մարմինների իրացվելի միջոցների, ընթացիկ և ապագա պահանջի վերաբերյալ:

2. Թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Պարտքի կառավարման համար պատասխանատու ֆինանսական մարմինների պարտականությունների և նպատակների հստակությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է պարտքի կառավարման քաղաքականության իրականացման գործընթացում հրապարակել տեղեկատվություն՝ ֆինանսների նախարարության, կենտրոնական բանկի կամ պարտքի կառավարմանը մասնակցություն ունեցող այլ մարմինների միջև պարտավորությունների բաշխման վերաբերյալ: Տեղեկատվություն պետք է տրվի ինչպես պարտքի կառավարման քաղաքականության վերաբերյալ, այնպես էլ պարտքային պարտավորությունների առաջնային տեղաբաշխման, երկրորդային շուկաների կազմակերպման, դեպոզիտար համակարգերի և քլիրինգային ու հաշվարկային մեխանիզմների վերաբերյալ:

Անհրաժեշտ է հստակ սահմանել և հրապարակել պարտքի կառավարման նպատակները և պարզաբանել, թե ծախսերի և ռիսկի չափման համար ինչպիսի ցուցանիշներ ու հայտանիշներ են ընդունված:

Պարտքի կառավարման քաղաքականության ձևավորման ընթացքի հրապարակայնությունը և այդ ոլորտում հաշվետվողականությունը ապահովելու համար անհրաժեշտ է հանրությանը հնարավորինս իրազեկել պարտքի կառավարման գործընթացի վերաբերյալ:

Հասարակությանը պետք է տեղեկատվություն ներկայացվի նախկին, ընթացիկ և պլանավորված բյուջետային գործունեության, այդ թվում՝ դրա ֆինանսավորման և պետական կառավարման մարմինների համախմբված ֆինանսական վիճակի վերաբերյալ:

Կառավարությունը պետք է պարբերաբար տեղեկատվություն հրապարակի իր պարտքային պարտավորությունների և ֆինանսական ակտիվների մեծության և կառուցվածքի, մարման ժամկետների ու տոկոսադրույքների կառուցվածքի վերաբերյալ:

Պարտքի կառավարման պատասխանատու մարմինների բարեխիղճ աշխատանքի հաշվետվողականությունը և երաշխիքները վերահսկելու նպատակով անհրաժեշտ է, որ ամեն տարի պարտքի կառավարման բնագավառում իրականացված գործունեությունը ստուգվի արտաքին աուդիտորների կողմից:

3. Կազմակերպակարգային հիմքերը: Պարտքի կառավարման իրավական հիմքերում պետք է պարզաբանվեն փոխառությունների ներգրավման իրավունքների ու նոր պարտքային պարտավորությունների ստեղծման, ներդրումների իրականացման ու պետական կառավարման մարմինների անունից գործունեություն իրականացնելու վերաբերյալ հարցերը:

Անհրաժեշտ է հստակ սահմանել պարտքի կառավարման կազմակերպչական հիմքերը, ինչպես նաև ապահովել պարտականությունների և գործառույթների սահմանման հստակությունը:

Գործառնական վերահսկողության անհամազորության արդյունքում կառավարության վնասների ռիսկերի կառավարումը պետք է իրականացվի աշխատանքի վարման հուսալի մեթոդների օգնությամբ, այդ թվում հստակ ձևավորված այնպիսի դրույթների, հրահանգների, որոնք սահմանում են աշխատակիցների պարտականությունների շրջանակը, մոնիթորինգի և վերահսկման հստակ կանոնները, ինչպես նաև հաշվետվողականության մեխանիզմները:

Պարտքի կառավարման գործընթացը պետք է հիմնվի հուսալի կանոններով պաշտպանված, կառավարման ճիշտ և համալիր տեղեկատվական համակարգի վրա:

Պարտքի կառավարման ոլորտում զբաղված աշխատակիցները իրենց անձնական ֆինանսական գործերը պետք է վարեն շահերի բախման տեսակետից, վարքագծի կանոններին և հրահանգներին համապատասխան:

Կապված պետական պարտքի կառավարման աշխատանքների հնարավոր խախտումների հետ, պարտքի կառավարման ոլորտում անհրաժեշտ են աշխատանքային գործունեության վերականգնման հուսալի գործընթացներ, որոնք հնարավորություն կտան բնական աղետների, սոցիալական ցնցումների կամ ահաբեկչական ակտերի դեպքում իջեցնել ռիսկի չափը:

4. Պարտքի կառավարման ռազմավարությունը: Պետական պարտքի կառավարմանն առնչվող ռիսկերը անհրաժեշտ է մանրամասն հետազոտել և գնահատել: Փոխառությունների ներգրավման որոշում ընդունելիս և ռիսկերի իջեցման միջոցառումներ իրականացնելիս, պետական կառավարման մարմինները պետք է հաշվի առնեն ֆինանսական և պետական դրամական հոսքերի հետ կապված այլ ռիսկեր:

Պարտքը կառավարողը պետք է մանրակրկիտ գնահատի արտարժույթով պարտքի և կարճաժամկետ պարտքի կամ լողացող դրույթով պարտքային պարտավորությունների ռիսկերը և կառավարի դրանք:

Անհրաժեշտ է ծախսերի տեսանկյունից իրականացնել դրամարկղային միջոցների կառավարման քաղաքականության արդյունավետ միջոցառումներ, որոնք պաշտոնական մարմիններին կտան վստահ լինելու հնարավորություն՝ ժամկետը լրանալուն պես կատարել իրենց ֆինանսական պարտավորությունները:

5. Ռիսկերի կառավարման համակարգը: Անհրաժեշտ է մշակել ռիսկերի կառավարման այնպիսի համակարգ, որը պարտքը կառավարողին հնարավորություն տա որոշել ծախսերի և ռիսկերի միջև ցանկալի հարաբերությունը՝ կապված պետական պարտքային պարտավորությունների պորտֆելի և դրանց կառավարման հետ:

Պարտքի ռիսկի գնահատման համար կառավարողը, հնարավոր տնտեսական և ֆինանսական ցնցումներից ելնելով, պետք է հաճախակի անցկացնի պարտքային պարտավորությունների պորտֆելի սթրես-թեստավորում:

Եթե պարտքը կառավարողը, ելնելով իր ապագա սպասումներից, այսինքն՝ տոկոսավճարների և արտարժույթի դինամիկայից և օգուտ ստանալու նպատակից, ձգտում է ակտիվ կառավարել պարտքային պարտավորությունների պորտֆելը, ապա պետք է հաշվի առնի դրա հետ կապված ռիսկերը և պատասխանատվություն կրի իր գործողությունների համար:

Պարտքը կառավարողները փոխառությունների ներգրավման վերաբերյալ ընդունելիս պետք է հաշվի առնեն պետական կառավարման մարմինների ֆինանսական վիճակի վրա պայմանական պարտավորությունների ազդեցությունը, այդ թվում՝ դրանց ընդհանուր իրացվելիության վրա:

6. Պետական արժեթղթերի շուկայի զարգացումը և դրա արդյունավետ գործունեության ապահովումը: Պարտքը կառավարողները միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ծախսերի և ռիսկերի նվազեցման համար պետք է ապահովեն փոխհամաձայնություն՝ իրենց գործողությունների ռազմավարության ու իրականացվող գործառնությունների հարցում, որպեսզի վերջիններս համապատասխանեն պետական արժեթղթերի շուկայի արդյունավետ զարգացման շահերին:

Պետական կառավարման մարմինները իրենց ներքին և արտաքին պարտավորությունների համար պետք է ձգտեն ձևավորել ներդրողների մեծ բանակ, միաժամանակ պատշաճ ուշադրություն դարձնելով ծախսերին և ռիսկերին: Բացի այդ, նրանք իրենց վերաբերմունքը ներդրողների հանդեպ պետք է կառուցեն հավասարության սկզբունքի հիման վրա:

Պարտքի կառավարման գործառնությունները առաջնային շուկայում պետք է լինեն թափանցիկ ու կանխատեսելի:

Պարտքային պարտավորությունների տեղաբաշխման համար պետք է առավելագույնս օգտագործվեն շուկայական մեխանիզմներ, ինչպիսիք են՝ մրցութային աճուրդները և միսիոն սինդիկատները:

Պետական կառավարման մարմինները և կենտրոնական բանկը պետք է նպաստեն կայուն երկրորդային շուկաների զարգացմանը:

Ֆինանսական շուկայում պետական արժեթղթերի գործառնությունների հաշվարկների և քլիրինգի իրականացման համար օգտագործվող համակարգերը պետք է համապատասխանեն պրակտիկային:

Հայաստանի Հանրապետությունում պետական պարտքի կառավարման հիմնական սկզբունքները շարադրված են «Պետական պարտքի մասին» 26.05.2008թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունված ՀՀ օրենքում, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական պարտքի հետ կապված հարաբերությունները: Այն սահմանում է, որ պետական պարտքը կառավարության պարտքի և կենտրոնական բանկի պարտքի համագումարն է¹: Համաձայն հիշյալ օրենքի, պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը: Իսկ եթե պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը: Ինչ վերաբերում է պետական պարտքի կառավարման նպատակներին, ապա այն հիմնականում կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովումն է՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը:

Կառավարության պարտքի կառավարման նպատակներն են՝ կառավարության պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը, ինչպես նաև պետական պարտքի կառավարման և դրամավարկային քաղաքականությունների համակարգում: Օրենքով սահմանված են նաև ՀՀ պետական պարտքի կառավարման սկզբունքները: Համաձայն Օրենքի 10-րդ հոդվածի, պետական պարտքի կառավարումն իրականացվում է թափանցիկության, հաշվետվողականության, կանխատեսելիության և հրապարակայնության սկզբունքներով:

Միջազգային պրակտիկայում շատ երկրներում պետական պարտքի կառավարման հիմնական սկզբունքները ներառված են պետական փոխառությունների և պարտքի կառավարման մասին ընդունված օրենքներում²: Այսպես, օրինակ՝ Շվեդիայում պարտքի կառավարման հիմնական սկզբունքները և կարգերը ներառված են «Պետական փոխառությունների և պարտքի կառավարման մասին» օրենքում, որն ընդունվել և գործում է 1998 թվականից: Վերջինիս համաձայն, կառավարության փոխառություններ ներգրավելու իրավունքը հիմնվում է պառլամենտի տարեկան վավերացման վրա, որը հանդիսանում է հաջորդ տարվա պետական բյուջեի որոշման բաղկացուցիչ մասը: Պարտքի կառավարման սկզբունքները ներառում են ընդհանուր սահմանումը այն բանի, թե ինչպիսին պետք է լինի պարտքի կառուցվածքը:

Շվեդիայում պետական պարտքի մեծության ամրագրված լիմիտ չի սահմանվում, սակայն դրա փոխարեն օրենքում որոշվում են այն նպատակները, որոնց հասնելու համար կառավարությունը իրավունք ունի ներգրավել փոխառություններ: Կառավարությունը փոխառությունների ներգրավման իրավունքը փոխանցել է Շվեդիայի ազգային պարտքի վարչությանը: Մեր կարծիքով, Շվեդիայի պարտքի կառավարման նման մոդելի կիրառումը Հայաստանում կնպաստի պարտքի կառավարման որակի արդյունավետության բարձրացմանը:

Հայաստանում կառավարման ամբողջ գործընթացում հիմնական և կարևորագույն սկզբունք է հանդիսանում շուկայի թափանցիկության, տեղեկատվության ազատ փոխանակման ապահովումը, թողարկողի և նրա ֆինանսական գործակալի վարքագծի կանխատեսելիությունը:

¹ www.parliament.am

² politeconomy.ng.ru – Интернет-версия газеты «Независимая газета»

ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացում ցանկալի է կիրառել (տեղայնացնել) Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից 2001թ. ընդունված պետական պարտքի կառավարման սկզբունքները ամբողջությամբ և դրանք պետք է ամրագրել օրենսդրորեն: Վերջինս կբարձրացնի պետական պարտքի կառավարման որակը և հնարավորություն կտա իրականացնել պետական պարտքի կառավարման գործընթացի արդյունավետ վերահսկողություն:

Самвел Котанджян

Принципы и структура внешнего государственного долга

Аннотация

Достижение макроэкономической стабилизации, обеспечение устойчивого экономического роста, создание благоприятных условий для притока в страну иностранного капитала кардинально меняют отношение западных финансовых кругов к вопросам обслуживания страной своего внешнего долга. С другой стороны, совершенствование структуры внешнего долга с учетом основных принципов его управления, укрепление валютно-экономических позиций страны позволяют ей соблюдать имеющиеся долговые обязательства, что, как правило, ведет к снижению внешней задолженности или стабилизации ее размеров при заметном улучшении показателей, которые характеризуются тяжестью долгового бремени (отношение внешнего долга и платежей по его обслуживанию к ВВП, экспорту и др.).

Samvel Kotanjyan

Principles and structure of the public external debt

Abstract

Ensuring macroeconomic sustainability, investment-friendly business climate to attract foreign investments completely changes the attitudes of international financial institutions towards the service of external public debt. On the other hand, improvement of the structure of the external public debt, taking into consideration the main principles of debt management and increase in foreign exchange reserves, will enable the nation to meet debt obligation, thus resulting in decrease or sustainability of the external public debt while improving various economic variables and/or indicators that describe the heaviness of debt (external debt (principal + interest) to GDP ratio; external debt (principal + interest) to exports ratio).

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Արտաքին պետական պարտքի կառավարումն իրականացվում է կառավարության կողմից: Պետական պարտքն ապահովվում է պետության սեփականություն հանդիսացող և պետական գանձարանը ձևավորող ողջ ունեցվածքով: Արտաքին պետական պարտքի կառավարումն իրականացվում է գործադիր իշխանության մարմնի կողմից և ներկայացնում է պարտավորությունների այն հանրագումարը, որն ապահովվում է պետության սեփականություն հանդիսացող և պետական գանձարանը ձևավորող ողջ ունեցվածքով:

Արտաքին պետական պարտքի ծավալը ընդունելի է համարվում, եթե առկա են հիմնական պարտքի, ինչպես նաև դրանց տոկոսների մարման աղբյուրները: Պարտքի հիմնական գումարի մարման աղբյուրներից են համախառն ներքին արդյունքի չափը, ապրանքների և ծառայությունների արտահանման և պետության ոսկու-արտարժույթի պաշարների մակարդակը: Պարտքի սպասարկման (տոկոսավճար) աղբյուրներից են հարկային եկամուտները և էկոնոմիկայի մոնետիզացիայի մակարդակը:

Պետական արտաքին պարտքի ապահովվածության մակարդակը գնահատելիս կիրառվում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են արտաքին պարտքի չափերի և ապրանքների և ծառայությունների արտահանման հարաբերակցությունը, արտաքին պարտքի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը, պարտքի սպասարկման մասով վճարումների չափերի և ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալների հարաբերակցությունը:

Պետական արտաքին պարտքի ապահովվածությունը գնահատելիս այն համադրում են դրամի տեսքով ստացվող բյուջեի մուտքերի և էկոնոմիկայի մոնետիզացվածության մակարդակի հետ:

Հարկ է հաշվի առնել «վտանգի սահմանագծին» մոտենալու աստիճանը, որի սահմաններից դուրս ուրվագծվում է պարտավորությունների չկատարման ռիսկը:

Անթույլատրելի է համարվում ՀՆԱ-ի համեմատ 60%-ով արտաքին պարտքի ավելացումը: Այլ աղբյուրներում՝ 80%, Ռուսաստանում՝ 65%, Հայաստանում՝ 46%: Ինչպես կարելի է եզրակացնել երկրների մեծամասնության փորձից, սովորաբար մտահոգություն չի առաջացնում ՀՆԱ-ի 50-7%-ի չափով պարտավորությունը: Այսպես, օրինակ, 2011թ. Ռուսաստանը, արտասահմանյան վարկատուների հանդեպ ունեցած իր պարտավորությունների վերակառուցումից անմիջապես հետո, արտաքին պարտքի մասով վճարել է նախատեսվածից շուրջ 2 մլրդ դոլարով ավելի:

Ընդհանուր առմամբ դա գրեթե նույնքան է, որքան նախկինում՝ «պիկային» տարում: Քանի որ ոչ ոք պաշտոնապես չի հայտարարել արտաքին վճարումների ռազմավարությունը կանոնակարգելու մասին, մնում է ենթադրել, որ «մնացորդը» ոչ այլ ինչ է, քան արտաքին տնտեսական բարենպաստ կոնյունկտուրայից օգտվելու փորձ է: Միաժամանակ հասկանալի է, որ կոնյունկտուրան փոփոխական է, և, ըստ մասնագետների, այլևս անհնար է առանց պետական պարտավորությունների կառավարման երկարաժամկետ, իրատեսական քաղաքականության:

Պետական, հիմնականում արտաքին պարտքի արդյունավետ կառավարման խնդիրը առաջին անգամ ծագել է դեռ 1996թ.՝ նախագահական ընտրությունների ալիքի վրա: Ընտրություններն անցան, ալիքը մարեց, իսկ խնդիրը դուրս-ինչ չկորցրեց իր հրատապությունը: 1981թ. ԽՍՀՄ պարտքը կազմեց ընդամենը 5 մլրդ դոլար, 1985թ.՝ արդեն 25 մլրդ դոլար, 1991թ.՝ 68 մլրդ դոլար, դեֆոլտով հռչակված 1998թ. Ռուսաստանի՝ ԽՍՀՄ իրավաժառանգորդի, պարտքային գազաթնակետը բարձրացավ մինչև 158 մլրդ դոլարի¹:

¹ Госдолг платежом красен. “Валютный спекулянт” сентябрь 2003. стр.16-17.

Սակայն պետական պարտքի կառավարման համար կարևոր է ոչ միայն բացարձակ մեծությունը, այլ նաև նրա կառուցվածքը: Մասնագետները պարտքերը պայմանականորեն բաժանում են երկու մասի՝ շուկայական և ոչ շուկայական: Պարտքերի ոչ շուկայական մասը չի ենթարկվում վերակառուցման: Սովորաբար դրանք պետությունների և միջազգային ֆինանսական ինստիտուտների հանդեպ պարտքերն են:

Գոյություն ունի ֆինանսների նախարարության կողմից պատրաստված հայեցակարգ՝ պետական պարտքի կառավարման մասին: Փաստաթուղթը պատրաստվել է բավական վաղուց: Սակայն նրա ճակատագիրը դեռ բացարձակ անորոշ է: Պարտքի ճշգրիտ համեմատական ստուգում այդպես էլ չի կատարվել, բացակայում է պարտավորությունների թափանցիկ հաշվառումը: Այստեղից էլ առաջ են գալիս բավական լուրջ տարընթերցումները:

Լուծված չէ հիմնական ինստիտուցիոնալ հարցը՝ ո՞ր կազմակերպությունն է անմիջական պատասխանատվություն կրում պարտքային քաղաքականության իրականացման համար: Ֆորմալ առումով, ՌԴ-ում, օրինակ, այդպիսին է մնում Վնեշէկոնոմբանկը, բայց նրա կարգավիճակը մինչ օրս հստակեցված չէ¹: Իսկ Հայաստանում, չնայած հնչած բազմաթիվ առաջարկներին, դեռ հայտնի չէ՝ երբ կկազմավորվի պետական պարտքային գործակալությունը: Այս հանգամանքից տրամաբանորեն բխում է պարտքի կառավարման հարցում համակարգային մոտեցման բացակայությունը: Հիմա արտաքին պարտքի ուղղությամբ պետությունն աշխատում է մեկ, ներքին պարտքի ուղղությամբ՝ մեկ այլ կանոնով: Ընդ որում, այդ երկու ուղղությունները քիչ են փոխկապակցված իրար հետ:

Պետական փոխառությունների իրացման քաղաքականության գործընթացում ոչ միշտ են հաշվի առնվում պետական պարտավորությունների մասով վճարումների համակարգային առանձնահատկություններն ու գրաֆիկները: Արդյունքում, նոր փոխառությունների իրացումը նպաստել է պետական պարտքի մարման և սպասարկման մասով, այսպես կոչված՝ «պիկային» վճարումների առաջացմանը: Հայաստանում նման մտահոգիչ խնդիրներ դեռ չեն ծագել, սակայն ՌԴ-ում, գործող համակարգի նշված թերացումները լիովին իրականացվել են երկրի արտաքին պարտքի 2003թ., 2005թ., 2008թ. վճարային գրաֆիկների «պիկերում»: Ավելին, ֆինանսական մեկ տարվա վճարումները հաճախ իրականացվում են երկու-երեք ամսվա ընթացքում, ինչը զգալիորեն դժվարացնում է կանխիկ դրամական զանգվածի կառավարման գործընթացը և դաշնային բյուջեի դրամարկղային իրականացումը:

Ընդհանուր առմամբ, պետական իշխանության մարմինների կողմից պետական պարտքի կառավարման գործընթացում պետք է լուծվեն հետևյալ հիմնական հիմնահարցերը.

- պետական պարտքի ծավալի պահպանում՝ տնտեսապես անվտանգ մակարդակի վրա, պետական փոխառնական պարտավորություններով շուկայի գերհագեցման և դրանց գնանշումների կտրուկ տատանման բացառում, պետության համար պարտքի արժեքի նվազեցում,
- ողջ ծավալով և ճիշտ ժամանակին պարտավորությունների սպասարկման և մարման ապահովում:

Մոբիլիզացված միջոցների արդյունավետ օգտագործումն ու հատկացված վարկերի օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը պետք է առավելագույնս նպաստեն ֆինանսական քաղաքականությամբ նախանշված խնդիրների հանգուցալուծմանը:

Պետական պարտքի բնագավառի օրենսդրական բազայի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պետական պարտքի կառավարման իրավական կարգավորման հիմնահարցերը ներկայումս ստացել են ոչ լիարժեք և հաստակ իրավաբանական ամրագրում: Գործող օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների և լրացումների կատարումը թույլ կտա իրականացնել պետական պարտքի հավաստի հաշվառում և գործողություններ՝ նրա սպասարկման ուղղությամբ, ստեղծել պետական պարտքի կառավարման աշխատունակ մեխանիզմ, ավելացնել փոխառնական և պարտքային քաղաքականության արդյունավետությունը, գործնական վերահսկողություն ապահովել պետական պարտքի նկատմամբ՝ վարկատուների և

¹ Кабашкин В. Кто и как контролирует долги // РФ сегодня. 2002. №1, с. 110.

ներդրողների, ընդհանրապես ռուսական հասարակության համար պարտքային քաղաքականությունը թափանցիկ դարձնելու հիման վրա:

Այսպիսով, պետական պարտքի կառավարումն ասելով հասկացվում է պետության քայլերի հանրագումարը՝ վարկատուների եկամուտների վճարման և փոխառությունների մարման, արդեն թողարկված փոխառությունների պայմանների վերանայման, պետական նոր արժեթղթերի թողարկման պայմանների սահմանման ուղղությամբ:

Պետական պարտքի կառավարումն իրականացվում է գործադիր իշխանության կողմից՝ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում:

Պետական պարտքի կառավարման հիմնական նպատակներն են.

1. պետական պարտքի ծավալի պահպանումը՝ տնտեսապես անվտանգ մակարդակի վրա,
2. պետական պարտքի սպասարկման արժեքի պահպանումը,
3. միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում առավել ցածր գնով, լիարժեքորեն պետական պարտավորությունների կատարման ապահովումը:

Փոխառությունների մասով եկամուտների վճարումը և դրանց մարումը սովորաբար իրականացվում է բյուջետային միջոցների հաշվին: Սակայն պետական պարտավորությունների զգալի աճի և բյուջետային հարաճուն դժվարությունների պարագայում երկիրը կարող է դիմել նաև պետական պարտքի վերաֆինանսավորման տարբերակին: Վերաֆինանսավորումն ասելով հասկացվում է պետական հին պարտավորությունների մարումը՝ նոր փոխառությունների թողարկման ճանապարհով¹: Վերաֆինանսավորումը ակտիվորեն կիրառվում է արտաքին պետական պարտքի մարման և տոկոսների վճարման ժամանակ: Սակայն նոր փոխառությունների տրամադրման անփոփոխ պայման են համարվում վարկառու երկրի լավ հեղինակությունը՝ միջազգային ֆինանսական շուկայի շրջանակներում, նրա տնտեսական և քաղաքական կայունությունը: Վերջինս հիմք հանդիսացավ ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 3-ի որոշման համար՝ թողարկելու եվրոպարտատոմսեր, որոնք կարող են տեղաբաշխվել նաև արտաքին շուկաներում: Փոխառությունները մարվում են շահումային թողարկումների իրականացման (երբ շահումային գումարի հետ նաև վճարվում է պարտատոմսի անվանական արժեքը), ինչպես նաև՝ շահումային կամ տոկոսային փոխառությունների մասով մարման խաղարկությունների կազմակերպման կամ վարկառուներից պետական արժեթղթերի ետգնման ճանապարհով: Փոխառությունների դիմաց եկամուտների վճարումն իրականացվում է շահումային խաղարկությունների իրականացման, բանկերի կողմից կուպոնների ամենամյա վճարման կամ եկամտի գումարը, անկանխիկ ձևով, ձեռնարկությունների և կազմակերպությունների հաշվեհամարների փոխանցելու ճանապարհով: Եկամուտների ստացման անկանխիկ ձևը նախատեսված է եղել 1990թ. ձեռնարկությունների, բանկերի, ապահովագրական և ֆինանսավարկային այլ հաստատությունների վրա տեղաբաշխված 5%-անոց ներքին փոխառությունների համաձայն: Փոխառությունների մարման մասով շահումների, տարեկան տոկոսների, գումարների վճարումը կազմում է պետական պարտքի կառավարման ծախսերի հիմնական մասը: Վերջիններիս շարքին են դասվում նաև պետության արժեթղթերի պատրաստման, տեղափոխման և իրացման, շահումային խաղարկությունների կազմակերպման, մարման խաղարկությունների և այլ կարգի ծախսերը: Պետությունը պետք է հոգ տանի պետական վարկերի արդյունավետության համար: Փոխառնական գործողությունների արդյունավետության մասին մակերեսային պատկերացում կարելի է կազմել պետական վարկերի համակարգով ստացվող ամենամյա գումարների համատեղումից: Այս առումով համեմատաբար լիարժեք պատկերացում է տալիս հասույթների գերակա գումարների հարաբերակցությունը պետական վարկերի համակարգի ծախսերի դիմաց: Սակայն պետական վարկի համակարգով ստացվող գումարը և վարկային գործողությունների մասով ծախսերի համեմատ մուտքերի գերակայությունը չեն տալիս դրանց արդյունավետության սպառիչ բնորո-

¹ Օրինակ, ԽՍՀՄ-ում վերաֆինանսավորումը կիրառվել է 1966թ. պետական 3%-անոց ներքին փոխառության պարտավորության մարման համար: Այս փոխառության ժամկետի լրանալուց հետո պարտատոմսերը մեկ տարվա ընթացքում փոխանակվում էին նոր փոխառության պարտատոմսերի՝ 1982թ. ներքին շահումային փոխառությունների հետ՝ առանց փոխարժեքի տարբերության վճարման: Վերաֆինանսավորումը օգտագործվել է նաև պետության զանձապետական պարտավորությունների թողարկման դեպքում: Շրջանառությունից հնարավորին չափով առանձնացվում էին լրացուցիչ միջոցներ՝ բաժանորդագրությամբ բնակչության շրջանում տեղաբաշխված 1955-1956թթ. փոխառությունների մարման համար:

շումը¹: Հարկ է նաև հաշվի առնել պետական վարկի դրական ներգործությունը պետական բյուջեի վիճակի և երկրի դրամաշրջանառության, պետական կառույցների ֆինանսական գործունեության հանդեպ վստահության ամրապնդման, և որպես դրա հետևանք՝ հասարակության տնտեսական զարգացման բարենպաստ միտումների վրա:

Արտաքին պետական պարտքի մասով սահմանվում է նրա սպասարկման գործակիցը: Այն ներկայացնում է պարտավորությունների մասով բոլոր վճարների հարաբերակցությունը ապրանքների և ծառայությունների դիմաց տարադրամով երկրի ստացած մուտքերին (տոկոսների տեսքով): Ըստ Ս. Գլազկի, պետական պարտքի սպասարկման անվտանգ մակարդակ է համարվում դրա գոյությունը մինչև 25%-ի սահմաններում: Ռուսաստանում արտաքին պարտքի սպասարկման գործակիցը զգալիորեն գերազանցում է մատչելի սահմանները: Պետական վարկի արդյունավետության բարձրացման են նպատակաուղղվել պետական պարտքի կառավարման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են կոնվերսիան, համախմբումը (կոնսոլիդացիա), պարտատոմսերի փոխանակումը՝ ռեգրեսիվ հարաբերակցությամբ, մարման տարկետումը և փոխառությունների լուծարումը:

Կոնվերսիա ասելով սովորաբար հասկացվում է փոխառությունների եկամտաբերության փոփոխությունը: Պետական պարտքի դիմաց ծախսերի կրճատման նպատակով պետությունը առավել հաճախ նվազեցնում է փոխառությունների մասով վճարվող տոկոսների չափը: Բայց բացառված չէ նաև պետական արժեթղթերի եկամտաբերության բարձրացումը վարկատուների համար: Այդպիսի գործողություն, օրինակ, իրականացվել է 1990թ., երբ 3%-անոց շահումային փոխառնական պարտատոմսի եկամտաբերությունը բարձրացվեց մինչև 9%-ի, իսկ գանձապետական պարտավորություններինը՝ 5%-ից 10%-ի: Պետությունը շահագրգիռ է երկարաժամկետ փոխառությունների ստացման հարցում: Արդեն թողարկված փոխառությունների ժամկետների երկարաձգումը հնարավոր է պետական պարտքի համախմբման (կոնսոլիդացիա) շնորհիվ: Այսպիսով, համախմբում ասելով հասկացվում է փոխառության պայմանների փոփոխությունը՝ կապված նրանց ժամկետների հետ²:

Հնարավոր է նաև համախմբման համատեղումը կոնվերսիայի հետ: Այդպիսի գործողություն, օրինակ, իրականացվել է 1936թ., երբ բաժանորդագրությամբ, հետաձգման իրավունքով բնակչության շրջանում տեղաբաշխված յոթ երկրների պարտատոմսերը փոխանակվեցին նոր փոխառություններով, որոնք ավելի քիչ եկամտաբեր էին և ունեին շրջանառության անհամեմատ կարճ ժամկետ (մինչև 20 տարի): Պետական փոխառությունների միասնականացումը (ուճիֆիկացիա) սովորաբար իրականացվում է համախմբման (կոնսոլիդացիա) հետ միասին, սակայն կարող է իրականացվել նաև նրանից առանձին:

Փոխառությունների միասնականացումը մի քանի փոխառությունների միավորումն է մեկի մեջ, երբ նախօրոք թողարկված փոխառությունների պարտատոմսերը փոխանակվում են նոր փոխառության պարտատոմսերով: Այսպիսի միջոցը նախատեսում է միաժամանակ շրջանառող արժեթղթերի տեսակների քանակի կրճատում, ինչը հեշտացնում է պետության աշխատանքը և կրճատում պետական ծախսերը՝ պետական վարկերի համակարգի մասով: Փոխառությունների միասնականացումը 1930թ., երբ «Հնգամյակը՝ չորս տարում» փոխառության թողարկմանը զուգահեռ նրա պարտատոմսերով փոխանակվեցին ինդուստրիալացման և գյուղացիական տնտեսությունների ամրապնդման փոխառությունների պարտատոմսերը: Բացառիկ դեպքերում կառավարությունը կարող է իրականացնել պարտատոմսերի փոխանակում՝ ռեգրեսիվ հարաբերակցությամբ, այսինքն՝ երբ որոշ ժամանակ առաջ թողարկված պարտատոմսերը հավասարեցվում են նոր թողարկված մեկ այլ պարտատոմսի: Մասնավորապես, այդպիսի փոխանակում իրականացվել է հետպատերազմյան ժամանակահատվածում՝ պատերազմական շրջանի փոխառությունների պարտատոմսերը շրջանառությունից դուրս բերելու նպատակով:

¹ Серия публикаций Департамента природоохранной политики и экспертизы Российского представительства WWF.

² Օրինակ, 1938թ. իրականացվեց ազատ շրջանառող փոխառությունների համախմբում (կոնսոլիդացիա)՝ ինն պարտատոմսերը նորերով փոխանակելու ճանապարհով, որոնց շրջանառության ժամկետը մեծացվեց երկու անգամ (մինչև 20 տարի): Սակայն նաև հնարավոր է հակառակ գործողություն՝ պետական արժեթղթերի ժամկետների կրճատում: Այդպես, 1990թ. գանձապետական պարտավորությունների շրջանառության ժամկետը 16-ից նվազեց մինչև 8 տարի:

Ռեգրեսիվ հարաբերակցությամբ պարտատոմսերի փոխանակումը պետությանը ձերբազատում է պատերազմական տարիների արժեզրկված տարադրամով պետության կողմից վաճառված պարտատոմսերի դիմաց լիարժեք փողերով տոկոսներ վճարելու և մարելու անհրաժեշտությունից: Ռեգրեսիվ փոխանակում կատարվել է 1947թ.: Բաժանորդագրությամբ նախկինում տեղակայված 11 փոխառությունների պարտատոմսերը նոր փոխառության պարտատոմսերի հետ փոխանակվել են 3:1 հարաբերակցությամբ: Ազատ շրջանառող փոխառության պարտատոմսերը նորերի հետ փոխանակվել են 5:1 հարաբերակցությամբ: Փոխառնական պարտատոմսերի տերերը որոշակի առավելություններ ստացան դրամական կանխիկ խնայողություններ ունեցող անձանց համեմատ, քանզի հին փողերի փոխանակումը նորերով կատարվում էր 10:1 հարաբերակցությամբ:

Փոխառությունների կամ նախկինում թողարկված բոլոր փոխառությունների մարման տարկետումը իրականացվում է այնպիսի պայմաններում, երբ նոր փոխառությունների թողարկման մասով գործողության հետագա ակտիվ զարգացումը պետության համար չունի ֆինանսական արդյունավետություն: Դա տեղի է ունենում այն պահին, երբ կառավարությունն արդեն թողարկել է չափից շատ փոխառություններ և դրանց էմիսիայի պայմանները բավականաչափ շահեկան չեն պետության համար: Նման դեպքերում, նոր փոխառությունների պարտատոմսերից ստացվող մուտքերի մեծ մասը նպատակաուղղվում է նախկինում թողարկված փոխառությունների տոկոսների վճարմանն ու մարմանը: Այդ կարծի շրջանակը քանդելու համար կառավարությունը հայտարարում է փոխառությունների մարման տարկետման մասին, որը համախմբումից տարբերվում է նրանով, որ տարկետման ժամանակ ոչ միայն հետաձգվում են ժամկետները, այլ նաև դադարեցվում է եկամուտների վճարումը: Փոխառությունների համախմբման ժամանակ պարտատոմսերի տերերը դրանցից շարունակում են ստանալ իրենց հասանելի շահույթը: 1957թ. ԽՍՀՄ-ում որոշում ընդունվեց բնակչության շրջանում բաժանորդագրությամբ տեղաբաշխվող փոխառությունների թողարկումը դադարեցնելու, նաև նախկինում թողարկված փոխառությունների մասով մարումը 20 տարով տարկետելու մասին: Փաստացի, նման միջոցառման պատճառ հանդիսացավ պետական վարկերի ոլորտում ստեղծված փակուղային վիճակը, որը պայմանավորված էր բնակչության շրջանում բաժանորդագրությամբ տեղակայվող, այսպես կոչված, զանգվածային փոխառությունների հանդեպ անվստահությամբ: Կառավարությունը գիտակցում էր, որ այդպիսի պրակտիկայից հարկ է հրաժարվել, սակայն այլևս չէր կարող հույս փայփայել, որ կհաջողվի նոր վարկեր ներգրավել՝ պետական պարտքի վերաֆինանսավորման համար: Այդպիսով, որոշում կայացվեց փոխառությունների մարման տարկետում հայտարարելու մասին: Նախատեսվում էր տարկետված փոխառությունների մարումն սկսել 1977թ. և դա իրականացնել հավասար չափերով, 20 տարվա ընթացքում: Փաստացի մարումն սկսվեց 3 տարի շուտ, այսինքն՝ 1974թ., և ավարտվեց 1990 թվականին:

Պետական պարտքի կոնվերսիան, համախմբումը (կոնսոլիդացիա), միասնականացումը (ուճիֆիկացիա) և պետության պարտատոմսերի փոխանակումը սովորաբար իրականացվում են միայն ներքին փոխառությունների նկատմամբ: Ինչ վերաբերում է պարտավորությունների մարման տարկետմանը, ապա այդ միջոցառումը հնարավոր է կիրառել նաև արտաքին պարտավորությունների դեպքում: Որպես կանոն, արտաքին պարտքերի մարման տարկետումը իրականացվում է վարկատուների հետ համաձայնեցված: Ընդ որում, այդ տարկետումը չի ենթադրում պարտքի դիմաց տոկոսադրույքների վճարման դադարեցում:

Պետական պարտքի լուծարումը, անվավեր ճանաչումը ենթադրում է միջոցառում, որի արդյունքում պետությունը լիովին հրաժարվում է թողարկված պարտատոմսերի (ներքին, արտաքին կամ ողջ պետական պարտքի) համար պատասխանատվությունից:

Պետական արժեթղթերի անվավեր ճանաչումը կարող է ունենալ երկու պատճառ: Առաջին՝ պետական պարտքը անվավեր է ճանաչվում պետության ֆինանսական անկարողության, այսինքն՝ անվճարունակության դեպքում: Երկրորդ՝ պարտավորության անվավեր ճանաչումը կարող է հետևանք լինել այնպիսի նոր քաղաքական ուժերի իշխանության գալու, որոնք

որոշակի պատճառներով հրաժարվում են ճանաչել նախկին իշխանությունների ֆինանսական պարտավորությունները¹:

Կարևոր է համարվում նոր փոխառությունների թողարկման և պայմանների սահմանման հետ կապված պետական պարտականությունների կառավարման բնագավառը: Փոխառությունների էմիսիայի պայմանների սահմանման պարագայում, որոնցից հիմնականն են համարվում վարկերի համար արժեթղթերի եկամտաբերության մակարդակը, փոխառությունների ժամկետները, եկամուտների վճարման ձևերը, պետությունը պարտավոր է առաջնորդվել ոչ միայն փոխառությունների ֆինանսական արդյունավետության մասով առավելագույն արդյունքի հասնելու մտայնությամբ, այլ նաև պետք է հաշվի առնի ֆինանսական շուկայում առկա իրական կոնյունկտուրան: Նոր փոխառությունների հաջողությունը կարող է երաշխավորվել միայն այն դեպքում, եթե ճիշտ են հաշվարկված տնտեսության վիճակը, դրամաշրջանառության վիճակը, շրջանառող պարտատոմսերի եկամտաբերության մակարդակը և ժամկետները, վարկառուներին տրամադրվող արտոնությունները և այլ գործոններ: Պետական փոխառությունների պարտատոմսերի պատրաստումը, պահպանումը և ուղարկումը վերապահված է ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանումներին, պետական արժեթղթերի իրացումը՝ բանկային համակարգին: Բանկերն ազատ վաճառում և գնում են պետական փոխառությունների պարտատոմսերը բոլոր աշխատանքային օրերին, բացառությամբ՝ շահումային խաղարկության օրվանից մինչև պաշտոնական աղյուսակի օրն ընկած ժամանակահատվածի: Առկա պարտատոմսերը խաղարկության նախօրեին դրոշմակնքվում են, պաշտոնական աղյուսակի ստանալուց հետո դրանք ստուգվում են հատուկ հանձնաժողովի կողմից: Շահած պարտատոմսերը հանվում են հետագա շրջանառությունից, դրանցից ստացված շահույթները փոխանցվում են բյուջե: Հաջորդ օրը վերսկսվում են շահումային փոխառությունների պարտատոմսերի առք ու վաճառքի գործողությունները: Տոկոսային փոխառությունների և գանձապետական պարտավորությունների մասով գործողությունները իրականացվում են մշտապես:

Արտաքին պարտատոմսային փոխառությունները, որպես կանոն, արտերկրի ֆինանսական շուկաներում պետության անունից զետեղում են բանկային կոնսորցիումները: Այդ ծառայությունների դիմաց նրանք գանձում են միջնորդավճարային պարգևատրություններ: Միջկառավարական փոխառությունները սովորաբար լինում են ոչ պարտատոմսային: Միջկառավարական փոխառությունների բոլոր պայմանները (տոկոսի մակարդակ, փոխառության տրամադրման և մարման տարադրան և այլն) ամրագրվում են հատուկ համաձայնագրերով²:

Պետական պարտքի կառավարման ընթացքում նաև կիրառվում է վերակառուցում. վարկատուի համաձայնությամբ պարտավորությունների մարում, վճարման ժամկետի հետաձգմամբ (այսինքն՝ այլ պարտավորություններ ստանձնելով), մարվելիք պարտավորությունների չափով սպասարկման և մարման այլ պայմաններով (վճարման ժամկետների վերանայում, պարտքի մի մասի դուրս գրում): Օրինակ, Հայաստանը վերակառուցել է Վրաստանի էներգետիկ պետական պարտքը՝ վերջինիս խնդրանքով:

Համաշխարհային պրակտիկայում հայտնի են սուվերեն պարտքի վերակառուցման չորս հիմնական սխեմաներ.

- մեկ պարտավորությունների փոխարինումը մյուսներով («պարտատոմսեր-պարտատոմսեր»),
- պարտավորությունների փոխարինումը բաժնետոմսերով՝ պետական սեփականաշնորհման ծրագրի շրջանակներում («պարտատոմսեր-բաժնետոմսեր»),
- պարտավորությունների վաղաժամկետ հետգնում՝ դիսկոնտով («հետգնում»),
- պարտավորությունների մի մասի դուրս գրում:

¹ 1918թ. ՌՍՖՍՀ-ի կառավարությունը չեղյալ հայտարարեց նախահեղափոխական բոլոր ներքին և արտաքին փոխառությունները: Խորհրդային իշխանությունը չճանաչեց ցարական վարչակարգի և ժամանակավոր կառավարության ֆինանսական պարտավորությունները, որոնք փոխառական միջոցները հիմնականում նպատակաուղղում էին պատերազմի նախապատրաստմանը և մարտական գործողությունների վարմանը, ինչպես նաև՝ հեղափոխական շարժման ճնշմանը: Ներկայումս ՌԴ կառավարությունը ճանաչել է նախահեղափոխական արտաքին փոխառությունների մի մասը:

² Ֆինանսներ / Խմբ. Ռոդիոնովա Վ. Մ., - Մ.: Ֆինանսներ և վիճակագրություն, 1994, էջ 319-324:

Պետական պարտքի կառավարման և դրա նվազեցման նպատակով սովորաբար մշակվում է արտաքին պետական պարտավորությունների՝ հերթական ֆինանսական տարվա ծրագիրը, որտեղ նշվում են փոխառությունների նպատակները, աղբյուրներն ու ծավալները, ինչպես նաև վերադարձման ժամկետները¹:

Մշակվում է նաև դեֆիցիտի ծածկման պետական ներքին փոխառությունների ծրագիրը: Փոխառություններից ստացվող բոլոր, ներառյալ՝ պետական պարտքի մարման և սպասարկման միջոցները, բյուջեում արտացոլվում են որպես բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուր:

Պետական պարտքի կառավարման համակարգը իրենից ներկայացնում է բյուջետային, ֆինանսական, հաշվարկային, կազմակերպական և այլ ընթացակարգերի փոխկապակցված ամբողջականություն՝ նպատակաուղղված երկրի պետական պարտքի արդյունավետ կառավարմանն ու տնտեսության վրա պարտքային բեռի ծանրության թեթևացմանը: Ներկայումս արտաքին պարտքի կառավարման թերացումներից են.

- օրենսդրորեն պետական փոխառությունների նպատակների ամրագրման,
- վերակառուցման գործողությունների իրականացման, պարտավորությունները ներդրումների, կոնվերսիոն և կոնսոլիդացիոն փոխառությունների վերածելու կարգի,
- պետական փոխառությունների իրականացման դեպքում ընդունված որոշումների արդյունավետության համար պատասխանատվության,
- կառավարության, գործադիր իշխանության մարմինների, կենտրոնական բանկի և բանկային գործակալների լիազորությունների և պատասխանատվության սահմանների,
- պարտքի կառավարման պլանավորման համակարգերի և մեխանիզմների,
- պետական պարտքի կառուցվածքի հետ կապված ռիսկերի վերլուծության և գնահատման համակարգի,
- պետության պարտքային քաղաքականության և պետական պարտքի կառավարման բնագավառի քաղաքականության միջև համակարգման,
- պետական պարտքի և այլ հարցերի մասին հավաստի, բաց և կանոնավոր հաշվետվության *բացակայությունը*:

Պետական պարտքի կառավարման համակարգը անմիջականորեն կապված է բյուջետային գործընթացի հետ, քանզի պարտքային քաղաքականությունը և պետական պարտքի կառավարման համակարգը անմիջականորեն ներազդում են բյուջետային քաղաքականության ձևավորման վրա: Այդ հանգամանքի շնորհիվ պետական պարտքի կառավարման ոլորտում իրականացվող քաղաքականությունը և պարտքի կառավարման համակարգը անհրաժեշտ պայման են հանդիսանում հիմնավորված բյուջետային քաղաքականության ձևավորման և բյուջետային գործընթացի նորմալ գործունեության համար: Պետական պարտքի կառավարման շրջանակներում, իրարից առանձին, վարվում են պետական պարտքի հաշվառման երկու գրքեր.

- պետական պարտքերի գիրք՝ պետական ներքին պարտքի մասով,
- պետական պարտքերի գիրք՝ պետական արտաքին պարտքի մասով:

Պարտավորությունների հաշվառման մեթոդաբանությունն էապես տարբերվում է այն պետական մարմիններում, որոնք հաշվառում են իրականացնում ոչ միայն ըստ պարտքի դասակարգման, այլ նաև ըստ պարտավորությունների տեսակների, ինչն էլ դժվարացնում է պարտքի չափի հստակ որոշումը և բյուջեի հեռանկարային պլանավորումը՝ պետական պարտքի սպասարկման և մարման, ինչպես նաև փոխառությունների ներգրավման առումներով: Պարտքի դիմաց տոկոսների վճարումը և պարտքի հիմնական մասի աստիճանաբար մարումը կոչվում է պարտքի սպասարկում: Շուկայական բարեփոխումների սկզբում հետխորհրդային բազմաթիվ երկրների կառավարությունների չափից ավելի գաթակալվելը վարկերով բացասաբար անդրադարձավ բյուջեների, ու հետևապես՝ տնտեսության ճյուղերի և սոցիալական ոլորտի ֆինանսավորման վրա: Բյուջեի եկամուտների ձևավորման համար պահանջվող հարկային և ոչ հարկային

¹ Կառավարման ընթացակարգի արդյունքում պարտքը նվազում է, իսկ որոշ դեպքերում՝ ավելանում: Եթե պարտքը կան նրա մի մասը դուրս է գրվում, ապա միայն՝ նոր փոխառություններ վերցնելու պայմանով:

միջոցների անբավարարության պարագայում պետությունը կիրառում է իր հնարավորությունները՝ միջոցների փոխառնման ճանապարհով լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու համար: Այդպիսով կուտակվում է պարտավորություն, ինչն էլ ի վերջո հանգեցնում է պետական պարտքի մեծացմանը:

Самвел Котанджян

Роль государства в управлении государственным внешним долгом

Аннотация

В данной статье рассматриваются *вопросы, связанные с ролью* государства в управлении государственным внешним долгом. В частности, отмечается, что в условиях перехода экономики страны на рыночные рельсы, роль государства в управлении государственным внешним долгом не уменьшается, а, наоборот, возрастает. Вырабатывается стратегия управления внешним долгом с целью оптимизации его структуры, увеличения эффективности его использования и сокращения соотношения внешнего долга к ВВП. Государство участвует в управлении внешним долгом с помощью контролирующей и регулирующей функций.

Samvel Kotanjyan

The role of the government in managing external public debt

Abstract

The article discusses issues on the role of the government in managing external public debt. Namely, the author states, that in countries with economies in transition, the role of the government in managing public external debt doesn't decrease, rather than it increases. The government designs external debt management strategy in order to optimize the structure of the debt, increase the efficiency of the management procedures and to reduce external debt to GDP ratio. The government's regulating and oversight functions are crucial in managing external public debt.

ИРИНА АКОПЯН

*Старший научный сотрудник Института
экономики им. М.Котаняна НАН РА, к.э.н.*

АЛВАРД ЗАТИКЯН

*Старший научный сотрудник Института
экономики им. М.Котаняна НАН РА, к.э.н.*

ОСОБЕННОСТИ НАЛОГОВ НА СОБСТВЕННОСТЬ В АРМЕНИИ

При выборе конкретного направления налоговой политики в любом государстве необходимо учитывать, с одной стороны, протекающие в мире глобальные экономические и политические процессы, а с другой стороны, что не менее важно, местные экономические условия, особенности национального менталитета, способность властей вести успешную борьбу с коррупцией, а также способность оперативно вводить максимально четкие поправки в налоговое законодательство.

В Армении новые тенденции в развитии национальной экономики и связанные с ними требования к финансовой системе все более актуализируют вопрос совершенствования структуры налогов в направлении повышения роли прямых налогов. Несмотря на некоторое снижение в общих налоговых доходах доли косвенных налогов (в 2011г. по сравнению с 2010 годом на 0,5 процентных пункта), косвенные налоги, в частности, налог на добавленную стоимость, в республике продолжают оставаться доминирующими в общих налоговых доходах. Между тем известно, что по сравнению с косвенными прямые налоги обладают рядом несомненных преимуществ. Основные преимущества прямых налогов состоят в том, что они не перекладывают дополнительные расходы на потребителей, не ведут к росту инфляции, а также обладают способностью выполнять стимулирующие и регулирующие функции.

Структура прямых налогов в республике также является несовершенной. В развитых странах на сферу производства падает 10-20% налоговых доходов, а преобладающая часть формируется за счет подоходного налога и налога на собственность. Конечно, надо учитывать неблагоприятные социально-экономические условия республики по сравнению с развитыми странами, однако, даже в сравнении с новыми независимыми государствами в республике структура налогов является малоэффективной, отражая отрицательные тенденции в развитии экономики и оказывая негативное воздействие на экономическое развитие страны. Особенно низкий удельный вес падает на налоги, связанные с налогообложением собственности.

Анализ фактических данных по республике свидетельствует о низком удельном весе в налоговых доходах бюджета имущественных и ресурсных налогов и платежей (особенно это касается налога на имущество). Принятый в республике соответствующий закон о налоге на имущество регулирует имущественные отношения как физических, так и юридических лиц (в отличие от ряда стран, в частности России, где действует два отдельных закона, регулирующих налоги на имущество физических и юридических лиц).

Как известно, объектами налогообложения по налогам на имущество являются:

1. здания и строения (строения жилого назначения, многоквартирные жилые здания, нежилые площади, гаражи, строения общественного назначения, строения производственного назначения, незавершенные строения).
2. транспортные средства (автомобильный, водный транспорт, мотоциклы).

Как показывают статистические данные, доля налогов на имущество в консолидированном бюджете в Армении очень низка, причем удельный вес этих налогов по отношению к ВВП в последние годы не растет, составив в 2008г. 0,2%, в 2009г. - 0,3%, в 2010г. - 0,3%, в 2011г. - 0,3%. В общих налоговых доходах консолидированного бюджета налоги на имуществ-

во составили в 2008 году 1,3%, в 2009 году 2,0%, в 2010 году 1,9%, а в 2011 году -1,8%.¹ Данные свидетельствуют о снижении роли имущественных налогов в посткризисный период, но при этом в указанные годы вырос удельный вес таких налогов, как налог на добавленную стоимость, а также налог на прибыль.

Следовательно, в последние годы наблюдается даже некоторое снижение доли налогов на имущество в общих налоговых доходах, что является негативным проявлением динамики этого показателя.

Целесообразность повышения роли указанных налогов подтверждается его следующими особенностями и преимуществами:

1. База налогообложения по налогу на имущество более масштабна, по сравнению с другими видами налогов, поэтому даже незначительное повышение ставки налога на имущество физических и юридических лиц (естественно, с учетом социальных возможностей различных слоев населения) могут обеспечить значительный рост налоговых поступлений в бюджет.
2. По рассматриваемому виду налога плательщикам сложнее “войти в тень”, чем по таким видам налогов, как налог на прибыль, косвенные налоги и др., что является некоторой гарантией в деле стабильного наполнения доходов бюджета.
3. Платежи налогов на имущество в республике перечисляются в местные бюджеты (по физическим лицам с октября 2003г., по юридическим лицам – с января 2004г.), и это создает условия для стимулирования выполнения региональных программ и развития самоуправления отдельных территорий.
4. В отличие от косвенных налогов налоги на имущество обладают потенциальными регулирующими возможностями, особенно это касается функции выравнивания доходов, что в современных условиях республики очень актуально.

Указанные выше доводы свидетельствуют об эффективности реализации мер, направленных на повышение ставок налога на дорогостоящее движимое и недвижимое имущество. При этом повышение ставок налога на имущество, точнее, большая степень ее дифференциации, должна сопровождаться снижением ставок налога на добавленную стоимость и налога на прибыль юридических лиц.

В современных условиях остро стоит вопрос увеличения финансовой обеспеченности регионов, что позволит добиться большей сбалансированности в межбюджетном распределении средств, оптимизировать финансовые потоки по уровням бюджетной системы, а также создать условия для бюджетной устойчивости в перспективе. Следует отметить, что формирование посредством имущественных налогов собственной финансовой базы региональных бюджетов сложилось исторически и обусловлено в основном тем, что имущество (прежде всего недвижимое) имеет четкую территориальную принадлежность, что упрощает администрирование соответствующего налога на уровне территорий (за счет возможности эффективной организации количественного учета объектов налогообложения, повышения точности оценки налоговой базы и контроля за полнотой и своевременностью уплаты налога) и в результате повышается роль территории в наиболее полном его поступлении в бюджет. На деле же, как свидетельствуют вышеприведенные данные, существенных сдвигов в вопросе поступления имущественных налогов после передачи их сбора местным органам не наблюдается.

Основная доля налога на имущество приходится на налог на имущество юридических лиц. Указанный налог выполняет две функции: фискальную (обеспечение относительно значимых и стабильных поступлений доходов в региональные бюджеты) и экономическую (обеспечение заинтересованности налогоплательщиков в снижении налогооблагаемой базы путем освобождения от лишнего, неиспользуемого, не приносящего дохода имущества). Проблемой этого налога состоит в том, что он уплачивается с остаточной стоимости

¹ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն. Երևան, 2012, էջ 9-10:

основных фондов, в то время как в мире общепринята практика взимания данного налога с рыночной стоимости имущества. В Армении вопрос повышения роли имущественных налогов юридических лиц в деле оживления экономики и улучшения использования средств производства стоит довольно остро, особенно учитывая проблемы и возможности реанимации бездействующих предприятий. Поэтому обоснованными можно считать выдвинутое в отечественной научной литературе предложение¹: 1) установить налоговые льготы в отношении основных средств и недвижимого имущества для возобновивших деятельность предприятий, с применением нулевой ставки налога в первый год, а в отдельных случаях, также второй и третий годы работы, 2) установить временную прогрессивную шкалу обложения имущественным налогом для неработающих предприятий за простаивающие средства производства. Эти и ряд других мер могут оказать стимулирующее воздействие на реанимацию ряда предприятий в республике. Что касается налога на имущество физических лиц, то объемы их поступлений также очень низки. Отметим, что в развитых странах налоговые платежи по налогам на имущество налогоплательщиков - физических лиц составляет 3-5%. В Армении же удельный вес этих налогов составляет менее 1%. Между тем, учитывая сегодняшние реалии – необходимость ориентации на повышение роли прямых налогов, обеспечения социальной направленности налоговой политики, а также с учетом ориентации на устойчивое развитие экономики и ряда других факторов, низкие объемы поступления этих налогов неоправданны, тем более, если учесть, что они обладают высоким налоговым потенциалом, который можно реализовать при условии совершенствования методики и процедуры взимания данного налога. Кроме того, требуется установить более дифференцированные ставки данного налога в соответствии со стоимостью недвижимого и движимого имущества. Изучение зарубежного опыта налогообложения собственности показывает, что этот вопрос не находит однозначного решения в разных странах. В России, например, уже достаточно долгое время идет дискуссия по поводу введения налога на недвижимость.² Идея состоит в том, чтобы объединить в одном налоге земельный налог и налоги на имущество организаций и физических лиц с рыночной оценкой объектов обложения.

Однако наряду с наличием множества трудностей технического характера (учет недвижимости и ее владельцев, установление ставок, льгот и т.д.) введение данного налога натолкнулось на такое препятствие, как отсутствие “нормального” рынка недвижимости. Развитые страны, имея многовековой опыт обложения имущества в рыночных условиях, до сих пор не пришли к единой методике оценки недвижимости и используют их многочисленные разновидности. Отсюда ясно, что Армения должна делать упор не на кардинальные изменения в налоговом законодательстве по имущественным налогам, а на совершенствование методов оценки имущества и установление обоснованных ставок налога на различные виды собственности, дифференциация ставок по стоимости этого имущества. В то же время зарубежный опыт свидетельствует о достаточно высоких ставках налогов на недвижимость. Например, в Великобритании ставка равна 1% рыночной стоимости жилья, но при этом действует система вычетов: недвижимость до 120 тыс. фунтов не облагается налогом вообще. В США взимается единый налог на недвижимость в виде земельно-имущественного комплекса, ставка налога составляет в США 2- 6% от рыночной стоимости недвижимости, в Финляндии установлена специфическая ставка – примерно один евро за один квадратный метр площади. В Армении, согласно закону, налог на имущество для строений исчисляется по следующим годовым ставкам: для строений общественного и производственного назначения – 0,3% налогооблагаемой базы, а для строений жилого назначения, нежилых площадей в многоквартирном доме, а также незавершенного строения – до 3млн. драмов 0% , а от 3млн. драмов ставки дифференцированы (от 3 до 10, от 10 до 20, от 20 до 30, от 30 до 40, от 40 и выше млн драмов), начиная с 100драмов плюс 0,1% с суммы , превышающей

¹ Թ. Սահակեյան. Ֆինանսական ճգնաժամի դասերը: Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, 2008, էջ 6:

² В.Горский . Налог на недвижимость: за и против. Журн. “Финансы”, №2,2012, с.37.

3 млн. драмов, кончая 127100 драмов плюс 1% с части, превышающей 40 млн драмов. Для транспортных средств налогооблагаемая база исчисляется исходя из мощности, измеряемой в лошадиных силах, приходящихся на пассажирские автомобили.

Учет имущества, которое является объектом налогообложения, ведется органами, осуществляющими кадастровый учет, ведение государственного кадастра недвижимости и государственную регистрацию прав на недвижимое имущество и сделок с ним, а также органами, осуществляющими техническую инвентаризацию, от которых информация должна поступать в налоговые органы, которые и исчисляют размер налога. Налоговая база по идее должна определяться на основе рыночной стоимости объектов территориальными налоговыми органами на основе данных кадастров, содержащих информацию о стоимости одного квадратного метра недвижимости всех типов на данной территории. В российской экономической литературе высказано мнение¹ о целесообразности дифференциации налогоплательщиков на тех, кто имеет в собственности только один объект жилого недвижимого имущества и тех, кто имеет в собственности более одного объекта жилого недвижимого имущества. Для второй категории плательщиков необходимо применение более высоких ставок, а именно, в части “дополнительных” объектов. Введение двух категорий налогоплательщиков, имеющих один и более объектов обложения, определяется необходимостью обеспечения принципа справедливости и создания предпосылок для стимулирования легализации рынка аренды или помещений, в которых арендодателями выступают физические лица. Налоговая нагрузка на вторую категорию плательщиков должна быть выше. В случае признания коммерческого использования жилья совокупная сумма налога будет снижаться. Такое деление должно создать экономические стимулы для легализации доходов от сдачи в аренду жилья через снижение общего налога на недвижимость и учете этого налога при исчислении налога на доходы физических лиц.

В Армении, учитывая факт значительного социального неравенства в обществе, серьезная роль должна быть отведена задаче усиления социальной функции налога на недвижимость физических лиц: прогрессивная шкала в сочетании с системой налоговых льгот позволит обеспечить справедливое распределение налоговой нагрузки в соответствии с платежеспособностью налогоплательщика. В целом мероприятия по совершенствованию механизма налогообложения имущества физических лиц позволят более полно реализовать следующие функции: фискальную, регулирующую (механизм позволит стимулировать легализацию недостроенных жилых объектов и доходов от сдачи их в аренду), социальную (сочетание прогрессивной шкалы обложения с системой налоговых льгот), контрольную (контроль за доходами от аренды жилья и недостроенными объектами жилой недвижимости).

Важной проблемой является налогообложение объектов незавершенного капитального строительства. На установленный местным законодательством период с начала строительства такие объекты не должны облагаться налогом, а по окончании указанного периода они должны становиться объектом обложения. В России, например, по разным оценкам, от 50 до 70% элитного индивидуального жилья не зарегистрировано под предлогом его незавершенности. Еще более неблагоприятная ситуация царит в Армении. Очевидно, что необходимо четко определить предельные сроки освобождения собственника от уплаты налога, льготные ставки или льготные вычеты на определенное число лет. Помимо упорядочения законодательства по этому вопросу, такая мера будет также стимулировать скорейшее завершение строительства и регистрацию жилья.

К имущественным налогам относят также налог на землю, который представлен отдельным законом РА “О земельном налоге”, регулирующим вопросы исчисления и уплаты в бюджет этого налога. Использование земли в РА является платным, а плательщиками налога являются собственники земли, постоянные или временные пользователи земли. Надо отметить, что сумма налога на землю, и его доля по отношению к ВВП в последние

¹ Ю. Шмелев. О новой концепции налога на недвижимость физических лиц. Журн. Финансы, 2012, № 1, стр. 40.

годы также снизились, составив в 2009г. 4974млн драмов или 0,2% к ВВП, в 2010г. 4586 млн.драмов или 0,1% к ВВП, а в 2011г. 4430млн.драмов или 0,1% к ВВП.

Отдельным видом имущественного налога, или налога на собственность, можно считать ресурсный налог, точнее “платежи за использование природных ресурсов и на защиту окружающей среды”. Непрерывно углубляющиеся экологические проблемы предъявляют повышенные требования как к вопросу упорядочения платы за природные ресурсы, увеличению объема рентных платежей, эффективному использованию ресурсов, так и к необходимости повышения платы для возмещения нанесенного ущерба окружающей среде. В республике многочисленны факты, когда природные ресурсы, перешедшие к индивидуальным предпринимателям, слабо контролируются государственными органами, поскольку отсутствуют четкие правовые положения в отношении этих ресурсов. В наши дни все более актуализируется вопрос повышения контролирующей роли государства и ужесточения его налоговой политики в отношении использования природных ресурсов.

В современных условиях в связи с все большей ориентацией новых независимых государств на устойчивое развитие их, значительно актуализируется проблема эффективного использования ресурсов, то есть важное значение приобретает задача стимулирование ресурсосбережения, в частности энергосбережения. Считаем, что в Армении целесообразно принять дополнения к налоговым законам, предусмотрев систему льгот для хозяйствующих субъектов, достигших снижения материалоемкости и энергоемкости. Есть все основания, чтобы предприятия, осваивающие альтернативные источники энергии и занятые рециклингом материалов, внедряющих системы безотходного производства, получали бы налоговые льготы по налогам на имущество. В связи со сказанным выше обоснованной можно считать дискутируемую среди российских ученых позицию, согласно которой на современном этапе развития на первое место выходит проблема более эффективного использования ресурсов. Исходя из этого высказывается мнение о важности исследования вопроса перехода на ресурсный принцип налогообложения, в основе которого должна лежать зависимость от объема потребляемых ресурсов, а не от величины финансовых результатов деятельности. Считаем, что этот вопрос является спорным и требует серьезного научного обоснования и конкретных расчетов. В этой связи отметим, что в современной экономической литературе активно обсуждается также проблема более пропорционального и экономически обоснованного распределения налоговой нагрузки между отдельными видами ресурсов (трудовые, финансовые, капитальные, природные). Данная проблема требует глубокого изучения, что позволит выявить перегруженные и недогруженные налоговые пояса, создавая условия для расширения налоговой базы. Например, по мнению А. Швецова,¹ необходимы изменения структуры налогов с переходом на более эффективные виды налогообложения (в основном, налогообложение собственности и ресурсов), то есть фактически предлагается налог на прибыль заменить налогообложением расходов.

Для подтверждения обоснованности усиления роли налогообложения собственности и ресурсов можно привести тот довод, что налоговая политика должна быть направлена, с одной стороны, на создание системы, обеспечивающей более эффективное и, главное, ресурсоэкономное развитие, что связано с внедрением новых технологий и инноваций, а, с другой стороны, на решение задачи обеспечения более надежного и устойчивого источника пополнения финансовых ресурсов государства. Предлагаемый подход имеет также то преимущество, что обеспечивает более четкое выполнение контрольных функций. Последнее особенно важно в условиях Армении, где высок уровень “теневых” сектора и остро стоят экологические проблемы, что требует постепенного перехода к более “осязаемым” объектам налогообложения.

Серьезной проблемой можно считать также проблему рационального распоряжения средствами экологических платежей. В этом смысле положительную роль сыграло принятие

¹ А.Швецов. Налоговая система России. Журн. Вопросы экономики”, 2007, №4, стр.15.

Национальным Собранием РА закона “О целевом использовании экологических выплат предприятий”, согласно которому часть этих выплат будет направляться в местные бюджеты тех территорий, на которые они оказывают вредное воздействие. Кроме того, предполагается, что накопленные суммы будут использованы только на осуществление экологических программ в данном регионе. В списке предприятий, подпадающих под действие этого закона, указаны “Манес ев Валекс”, “Араратцемент”, “Разданцемент”, Зангезурский и Агаракский медномолибденовый комбинаты, Агаракский горнообогатительный комбинат. Наряду с этим целесообразно изменить и расходную политику государства в целом. Это значит, что необходимо направлять дополнительные бюджетные средства на субсидирование природоохранных мероприятий, что в наши дни приобретает особую злободневность.

Как уже было указано выше, одним из серьезных источников восполнения доходной части бюджета страны может стать решение проблемы упорядочения и повышения рентных платежей за использование природных ресурсов, а также платежей по защите окружающей среды (в Армении это статья дохода “плата за использование природных ресурсов и природоохранные платежи”). Фактически трудно уловить, какая часть этой статьи падает на рентные платежи. Государство, являясь собственником природных ресурсов страны, должно увеличить плату за их использование, то есть установить экономически обоснованные рентные платежи и ужесточить требования к эффективному использованию этих ресурсов. На деле же поступающие в бюджет средства по указанной выше статье составляют незначительные суммы: в консолидированном бюджете они составили в 2009г. 6120,5млн. драмов, в 2010г. - 9102,5 млн. драмов, в 2011г. - 12199,7 млн. драмов, соответственно - 0,2%, 0,3% и 0,3% к ВВП за эти годы.

Следует учесть, что платежи за использование природных ресурсов носят не налоговый характер, а являются лишь формой оплаты за пользование государственной собственностью, то есть они носят рентный характер. Исходя из вышесказанного, можно констатировать, что в Армении назрела необходимость разработки закона о рентных платежах, для чего следует произвести оценку возобновляемости, ограниченной возобновляемости и невозобновляемости природных ресурсов. Нужны также исследования ожидаемого социально-экономического эффекта от введения рентных платежей. По существу в республике отсутствует система взимания рентных платежей, которые зависели бы от цены ресурса, по которой предприниматели его покупают у государства. Вместо рентных платежей в республике взимается плата за использование природных ресурсов, плоская шкала которой не позволяет учитывать особенности горно-геологических, экономических и инфраструктурных условий месторождения, структуру, качество запасов и другие данные. Международным комитетом по устойчивому развитию предусмотрено, что после внедрения рентных платежей и специальных платежей, связанных с охраной окружающей среды, должно быть заключено межправительственное соглашение новых независимых государств о проведении согласованной политики природопользования. Указанные меры будут содействовать перераспределению рентных платежей в пользу государства и снижению налогового бремени у предприятий, внедряющих прогрессивные экологические технологии. Размеры платы должны быть дифференцированы по территориям и периодически должны пересматриваться. Основываясь на зарубежном опыте, необходимо разработать научно-обоснованную методику определения рентной составляющей в доходах хозяйствующего субъекта, подлежащую изъятию в бюджет. Это позволит государству иметь представление о размере ренты, включающейся в доходы хозяйствующих субъектов и более справедливо подойти к распределению налоговой нагрузки на различных предприятиях. Необходимо ввести систему рентных платежей для более полного изъятия дохода предпринимателя, связанного с более выгодным природным положением. Данная мера в значительной мере повысит наполняемость бюджета и сгладит социальную несправедливость в отношении плательщиков различных отраслей и объектов. В целом при осуществлении экологической политики необходимо разработать и внедрить экономические механизмы, известные в мировой

практике. Выделим те основные направления политики, которые могут найти применение в нашей республике:

- соответствующую (как сдерживающую, так и стимулирующую) экологически ориентированную налоговую политику,
- субсидирование природоохранных мероприятий,
- продажу права на загрязнение,
- плату за размещение отходов и за загрязнение,
- формирование экологических фондов,
- внедрение системы экологического страхования.

Вышеперечисленные аргументы доказывают важность разработки более эффективной системы налогообложения имущества и ресурсов в Армении. Вместе с тем пересмотр и упорядочение этих налогов связан с рядом сложностей. Так, относящаяся к собственности база налогообложения намного шире, чем источник его взимания (прибыль): в масштабе республики она в несколько раз превышает объемы ВВП. Поэтому при определении ставки налогообложения должны быть учтены возможности налогоплательщиков, то есть ставки налога должны быть приемлемы как для юридических, так и для физических лиц с низким уровнем доходов. Это делает необходимым дифференцированный подход к налогоплательщикам, что сопряжено с определенными сложностями в смысле обеспечения обоснованных решений данной проблемы.

Таким образом, налогово-бюджетная политика в республике в ближайшие годы, по нашему мнению, должна быть перестроена в направлении обеспечения более надежных и эффективных источников пополнения доходов государственного бюджета, рационального использования ресурсов, усиления регулирующих функций государства, а также активизации социальной направленности государственной налоговой политики.

**Իրինա Հակոբյան
Ալվարդ Ջատիկյան**

Հայաստանում սեփականության հարկման առանձնահատկությունները

Ամփոփագիր

Հայաստանի առկա սոցիալ-տնտեսական պայմանները թելադրում են կատարել այնպիսի հարկային բարեփոխումներ, որոնք ուղղված կլինեն ռեսուրսների արդյունավետ օգտագործման, բնապահպանական խնդիրների լուծման, սոցիալական արդարության սկզբունքի ուժեղացման նպատակներին: Այդ խնդիրների լուծումը պահանջում է սեփականության հարկման գծով օրենսդրական որոշակի բարեփոխումների իրագործում:

Հոդվածում հիմնավորվում է դիտարկվող հարկերի և վճարների առանձնահատկությունները, տրվում են դրանց գանձման մեխանիզմների բարելավման ուղիները:

**Irina Hakobyan
Alvard Zatikyan**

The peculiarities of taxing property ownership in Armenia

Abstract

The current social and economic developments in Armenia stress the need for such tax reforms that are aimed at more efficient allocation of resources; resolving environmental issues; stressing the principle of social justice. Resolving the stated issue several legislative reforms of taxing property ownership are required to be undertaken. The article justifies the peculiarities of discussed taxes and payments, and provides mechanism to improve collection of the mentioned payments and taxes.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՐԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆ

*ՆՇ ԳԱԱ Մ. Քոթասնյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, երկր. հանք. գիտ. դոկտոր*

ԵՐԿԱԹԱՅԱՆՔԵՐԻ ՇԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՆՔԱՅԱՐՍԱՑՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետությունը, եթե ոչ չատ, ապա գոնե բավականին հարուստ է երկաթի ռեսուրսներով: Հայաստանում, այժմյան դրությամբ, հայտնաբերված են հարյուրից ավելի հանքավայրեր ու հանքաերևակումներ, որոնցից, երկրաբանների, այդ թվում նաև մեր կարծիքով, առավել հեռանկարայինները, որոնք կարող են առաջնահերթ շահագործման առարկաներ դառնալ (բացառությամբ մեկից, որը դեռևս 50 տարի սրանից առաջ արդեն իսկ մանրագնին հետախուզված է, բայց մենք գտնում ենք, որ դրա շահագործումը չի կարելի թույլատրել), վեցն են՝ Հրազդանի և Աբովյանի մանրագնին հետախուզված, Սվարանցի և Բազումի նախնական փուլով հետախուզված հանքավայրերն ու Կամաքարի և Թթուջուր-Մարտունու որոնողական աշխատանքների փուլով գնահատված հանքաերևակումները: Վերջիններիս արդյունաբերական նշանակությունը այժմյան դրությամբ դեռևս պարզված չէ, սակայն համանմանական եղանակով դրանց հեռանկարները գնահատվում են միանգամայն դրական:

Նշված 6 հանքավայր-հանքաերևակումներից 3-ը՝ Հրազդանինը, Աբովյանինը և Սվարանցինը, մեր կառավարության կողմից շահագործման են տրվել չինական «Fortuna Oil» ընկերությանը, որն էլ արդեն իսկ ստուգողական հորատման աշխատանքներ է սկսել Հրազդանի հանքավայրում: Սակայն, ինչպես նշել ենք, այդ հանքավայրի շահագործումը պետք է արգելվի, քանի որ այն տեղադրված է Հրազդան քաղաքի անմիջական հարևանությամբ, այդ քաղաքի հյուսիսարևելյան ծայրամասում: Հանքավայրի հետախուզական աշխատանքներն ավարտվել են 1962թ. և անցած այդ 50 տարիների ընթացքում քաղաքն ընդհուպ մոտեցել է հանքավայրին, հանքավայրի 3 կողմերին տներ են կառուցվել: Հանքավայրը փաստորեն ներառվել է քաղաքի մեջ, և դրա շահագործումը լի է վտանգներով ոչ միայն մոտակա տների, այլև ամբողջ քաղաքի բնակչության համար: Հանքավայրը շահագործվելու է բացահանքի եղանակով և մեծածավալ պայթեցումներով, որոնց արդյունքով մթնոլորտ են շարժվելու հանքաքարերում առկա ծանր մետաղների ու թունահարույց տարրերի նրբահատիկ փոշիներ, որոնք էլ անցնելով մարդկանց օրգանիզմ կարող են առաջացնել զանազան հիվանդություններ՝ քաղցկեղից մինչև սրտանոթային: Հրազդանի հանքաքարերում երկաթից բացի առկա են նաև ոսկի, արծաթ, ցիրկոնիում, գալիում, նիկել, կոբալտ, տիտան, լիթիում, ստրոնցիում, պղինձ, կապար, ցինկ, որոնցից ամեն մեկն իրենից մեծ վտանգ է ներկայացնում, եթե մարդու օրգանիզմի համար պահանջվող չափաքանակից մեծ բաժին թափանցի այնտեղ:

Այսպիսով, հանդգնված ենք, որ այդ հանքավայրը չի շահագործվելու, և դրա հանքաքարերի հարստացում էլ չի կատարվելու: Ուստի դրա հանքահարստացման թափոնների հարցն էլ մենք այստեղ չենք քննարկելու:

Մենք շահագործման համար առաջարկում ենք մանրագնին հետախուզված Աբովյանի և նախնական փուլով հետախուզված Սվարանցի հանքավայրերը, բայց այն պայմանով, որ դրանք շահագործվեն մեր հանրապետության կողմից և պարտադիր կարգով վերջնարտադրանքների ստացումով՝ մետալուրգիական վերամշակման ենթարկվելով խտանյութերը:

Նախ, քննարկման ենթարկենք այն տարբերակը, որ նշված 2 հանքավայրերը պետք է շահագործվեն չինական «Fortuna Oil» ընկերության կողմից և դրանից հետո քննարկման առարկա կդարձնենք մեր կողմից նշված տարբերակը՝ Հայաստանի Հանրապետության կողմից շահագործվելու տարբերակը:

Արովյանի հանքավայրը գտնվում է Կոտայքի մարզում՝ Կապուտան գյուղի մոտակայքում, Արովյան քաղաքից 5 կմ հեռավորության վրա: Օգտակար հանածոն՝ մագնետիտային երկաթաքարը, տեղադրված է օլիգոցենի հասակի կոտրատված ու բրեկչացված անդեզիտային պորֆիրիտների և անդեզիտների միջև, որոնք էլ ծածկված են 50-160մ հզորությամբ բազալտների և անդեզիտաբազալտների հոսքերով (այս վերջիններս, հանքայնացումը ծածկող ապարները, որպես մակաբացման դատարկ ապարներ, հեռացվելու են թափոնակույտեր):

Հանքայնացումը ներկայացված է ոսպնյակաձև, երականման և երակիկացանավոր մարմիններով և ունի մագնետիտ-ապատիտային կազմավորում: Երկաթի պարունակությունը հանքային մարմնում տատանվում է մեծ սահմաններում՝ 10-15%-ից մինչև 60-69%-ի, որտեղ էլ ֆոսֆորի հինգօրսիդի (ապատիտի) պարունակությունը տատանվում է 3-ից մինչև 13%-ի սահմաններում:

Արովյանի հանքավայրի հանքաքարերի արդյունաբերական (հաշվեկշռային և արտահաշվեկշռային) պաշարների քանակը կազմում է 260,8 մլն տ, երկաթի 27,14% միջին պարունակությամբ (երկաթ մետաղի պաշարների քանակը կազմում է 70,8 մլն տ):

Երևանի մի քանի գիտահետազոտական ինստիտուտներում, Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում, Կրիվոյ-Ռոգում կատարված տեխնոլոգիական հետազոտություններով հաստատվել է երկաթաքարի 3-4 փուլերով մագնիսական թաց զատման արդյունավետությունը երկաթ մետաղի տարբեր պարունակությունների (աղքատ՝ 16-18,9%, միջին՝ 23-33% և հարուստ՝ 44-56,5%) համար:

Ընդ որում, խտանյութերի մեջ երկաթ մետաղի պարունակությունները բոլոր 3 տիպերի համար համարյա միևնույնն են՝ 64,68% I տիպի համար, 64,69% II տիպի համար և 62-68,5% (միջինը՝ 65,25%) III տիպի համար: Մետաղի կորզումները կազմում են. I տիպի համար՝ 58-69,5%, II տիպի համար՝ 72-85% և III տիպի համար՝ 89-96,5%: Երկաթի պարունակությունը հարստապոչերում (պոչանքներում) կազմում է. I տիպի համար՝ 7-7,7%, II տիպի համար՝ 6-13% (միջինը 8,65%) և III տիպի համար՝ 10,5-16% (միջինը՝ 13,25%):

Արովյանի հանքավայրի հանքաքարերում երկաթի միջին պարունակությունը կազմում է 27,14%, հետևապես հանքահարստացման պետք է տրվեն դրան մոտ պարունակություններով հանքաքարեր, որն էլ համապատասխանում է տեխնոլոգիական փորձարկման տրված II տիպին, որի պարագայում միջին կորզումը կազմում է 78,5% (պոչանքարներ կթափվեն երկաթ մետաղի և երկաթի հետ սերտորեն կապված հարակից բաղադրիչների 21,5%-ը):

Արովյանի հանքավայրի հանքաքարերում Ի.Գ.Սաղաքյանի և Գ.Յ.Փիջյանի¹ հետազոտություններով պարզվել է, որ հիմնական օգտակար տարրերի՝ երկաթի և ֆոսֆորի հետ համատեղ տարածված են մի շարք այլ տարրեր, որոնց մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում հազվագյուտ հողատարրերը: Մագնետիտ-ապատիտային հոծ հանքաքարերում հայտնաբերվել են ցերիում՝ 1-3% պարունակությամբ, լանտան՝ 0,3-0,5%, իտրիում՝ 0,05%, արծաթ՝ 0,001%, գալիում՝ 0,0003%, լիթիում՝ 0,0003%: Մագնետիտային հոծ հանքաքարերում, որտեղ մագնետիտ հանքանյութի պարունակությունը կազմում է 80-85%, հայտնաբերվել են. նիոբիում՝ 0,003-0,01%, արծաթ՝ 0,001%, լիթիում՝ 0,0003%, բերիլիում՝ 0,001%, որոնք բոլորն էլ երկաթ մետաղի հետ ուղիղ համեմատական քանակներով անցնելու են խտանյութերի մեջ: Ապատիտային հանքանյութում հազվագյուտ հողատարրերի ընդհանուր պարունակությունը կազմում է 2,48-ից-4,17%: Միահանքանյութային ապատիտներում հայտնաբերվել են իտրիում՝ 0,1-0,14%, լանտան՝ 0,64-1,1%, ցերիում՝ 1,36-2,3%, իտերբիում՝ 0,002-0,004%, արծաթ՝ 0,001%, լիթիում՝ 0,0006%, պրազեոդիմ՝ 0,05-0,09%, նեոդիմ՝ 0,22-0,44%, գադոլինիում՝ 0,03-0,04%, դիսպրոզիում՝ 0,06-0,17%, էրբիում՝ 0,0014-0,004%, տուլիում՝ 0,0003-0,0004%, լյուտեցիում՝ 0,0003-0,003%, որոնք բոլորն էլ խիստ հետաքրքրում են չինական ընկերությանը, քանի որ դրանք բոլորն էլ ունեն շատ բարձր արժեքներ, և չինական ընկերությունը ձեռք է բերելու ձրի: Դրանց կորզման տեխնոլոգիային Չինաստանում տիրապետում են բարձրագույն մակարդակով (մեզ հասած տեղեկության

¹ Магакьян И.Г., Пиджян Г.О. и др. Редкие и благородные элементы в рудных формациях Армянской ССР. Ереван: Изд. АН АрмССР, 1972, 394 с.

համաձայն Չինաստանը հազվագյուտ հողատարրերի գծով աշխարհում համարվում է մեծաշնորհային երկիր):

Ապատիտային հանքանյութի ընդհանուր քանակը՝ 260,8 մլն տ Աբովյանի հանքավայրի հանքաքարերում, կազմում է 20864 հազ. տ, հետևապես վերը թվարկված՝ չինական կողմին նվիրվող տարրերի քանակներն էլ կարող են կազմել. խորիումինը՝ 25036,8տ, լանտանինը՝ 181516,8տ, ցերիումինը՝ 381811տ, իտերբիումինը՝ 626տ, արծաթինը՝ 208,6տ, լիթիումինը՝ 125,2տ, պրազեոդիմինը՝ 14604,8տ, նեոդիմինը՝ 68851տ, գադոլինիումինը՝ 7302,4տ, դիսպրոզիումինը՝ 23993,6տ, էրբիումինը՝ 563,3տ, տուլիումինը՝ 73,0տ, լյուտեցիումինը՝ 344,3տ: Այսպիսով, եթե ապատիտային հանքանյութը չկորզվի, ապա դրա հետ պոչամբարներ թափվող հազվագյուտ հողատարրերի ընդհանուր քանակը կարող է կազմել 704723տ, իսկ թե ի՞նչ հետևանքներ կունենան դրանք շրջակա բնակավայրերի բնակչության վրա, այժմ դժվար է դրան պատասխանել, քանի որ այդ հողատարրերի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա բժշկության կողմից հետազոտված չէ: Ծանր մետաղներից շատ-շատերի, այդ թվում պղնձի, մոլիբդենի, ոսկու, արծաթի, կապարի, ցինկի, կադմիումի, սնդիկի, երկաթի, կոբալտի, վանադիումի, ինչպես նաև թունահարույց տարրերի՝ սելենի, տելուրի, մկնդեղի, բերիլիումի, որոնք առատորեն տարածված են Հայաստանի հանքաքարերում, վտանգավոր ազդեցությունը կենդանի օրգանիզմի, այդ թվում նաև մարդու օրգանիզմի վրա, հետազոտված է բավականին բարձր մակարդակով, բայց, ահա՛, վերը թվարկված 13 տարրերից 12-ի ազդեցությունը հետազոտված չէ բոլորովին: Կարծում ենք, դրանց մեծ մասը նույնպես կունենա վտանգավոր ազդեցություն:

Եթե չինական ընկերությունը Աբովյանի հանքավայրը շահագործելիս օգտագործի հանքահարստացման վերը նշված տեխնոլոգիան (նա հենց այդպես էլ կանի) պահպանելով տեխնոլոգիական բոլոր պարամետրերը, որում մենք խստագույնս կասկածում ենք, ապա պոչամբարներ կթափվի երկաթ մետաղի 70,8 մլն տ քանակի 21,5%-ը, կամ 15,2 մլն տ, որի արժեքը 2007 թվականի (նախաճգնաժամային տարվա) գներով կարող է կազմել 4 մլրդ 560 մլն դոլար: Դրա հետ մեկտեղ պոչամբարներ կթափվի ապատիտ (P_2O_5) հանքանյութի ամբողջ 20,86 մլն տ քանակը վերը թվարկված 13 տարրերով հանդերձ: Պոչամբար թափվող հազվագյուտ հողատարրերի ընդհանուր արժեքը՝ 2011թ. դրանց միջին հավասարակշռված գնով (մեկ տոննան 135375,81 դոլար) ընդերքում կազմում է ավելի, քան 168,8 մլրդ դոլար:

Աբովյանի հանքավայրի մազնետիտ-ապատիտային հանքաքարերում վերը նշված հեղինակների տվյալների հիման վրա մեր կողմից հաշվարկված վեց կարևորագույն հարակից բաղադրիչների քանակները կազմում են. ցերիումինը՝ 5216 հազ. տ, լանտանինը՝ 1043,2 հազ. տ, իտրիումինը՝ 130400տ, արծաթինը՝ 2608տ, գալիումինը՝ 782,4տ, լիթիումինը՝ 782,4տ, որոնց մի մասը կապված է ապատիտ հանքանյութի հետ. ցերիումինը՝ 381811տ, լանտանինը՝ 181516,8.տ, իտրիումինը՝ 25036,8տ, արծաթինը՝ 208,6տ, լիթիումինը՝ 125,2տ, մյուս մասը. ցերիումինը՝ 4834189տ, լանտանինը՝ 861683,2.տ, իտրիումինը՝ 105363,2տ, արծաթինը՝ 2399,4տ, գալիումինը՝ 782,4տ, լիթիումինը՝ 657,2տ սերտորեն կապված է երկաթի մազնետիտ հանքանյութի հետ (մազնետիտ հանքանյութի հետ կապված 3 հազվագյուտ հողատարրերի արժեքը՝ 2011թ. գներով կազմում է 785,35 մլրդ դոլար, որն ամբողջությամբ փոշիացվելու է): Հանքահարստացման գործընթացներում դրանց 78,5%-ը, հավանաբար, կարող է անցնել խտանյութերի մեջ և դուրս տարվել Հայաստանից, իսկ 21,5%-ը կթափվի պոչամբարներ՝ թունավորելով ու ապականելով շրջակա միջավայրը: Նշված տարրերից խտանյութերի մեջ անցնող քանակները կարող են կազմել. ցերիումինը՝ 3794838տ, լանտանինը՝ 676421,2.տ, իտրիումինը՝ 82710տ, արծաթինը՝ 1883,5տ, գալիումինը՝ 614,2տ, լիթիումինը՝ 516,0տ, որոնց ընդհանուր արժեքը կկազմի 617,63 մլրդ դոլար:

Պոչամբարներ թափվող տարրերի քանակները կկազմեն. ցերիումինը՝ 1039351տ, լանտանինը՝ 185261,9տ, իտրիումինը՝ 22653,2տ, արծաթինը՝ 515,9տ, գալիումինը՝ 168,2տ, լիթիումինը՝ 141,2տ, որոնց ընդհանուր արժեքը կկազմի 169,16 մլրդ դոլար:

Այսպիսով. պոչամբարներ թափվող երկաթի և դրա հետ կապված 6 տարրերի ընդհանուր արժեքը կարող է կազմել 173,72 մլրդ դոլար, իսկ խտանյութերի հետ դուրս տարվող տարրերի

ընդհանուր արժեքը՝ 634,3 մլրդ դոլար, որից երկաթի բաժինը կկազմի ընդամենը 16,68 մլրդ դոլար:

Արդյունահանված և մշակված հանքաքարերից խտանյութերի ելքը պետք է կազմի 25-40% (միջինը՝ 32,5%): Այդ պարագայում 260,8 մլն տ հանքաքարերի մշակման արդյունքում պոչամբարներ կթափվեն 176 մլն տ փշրված ու մանրացված օգտակար տարրերով համեմատաբար աղքատ հանքաքարեր: Եթե Աբովյանի հանքավայրից տարեկան արդյունահանվի և մշակվի 5 մլն տ հանքաքար, ապա պոչամբարներ թափվող՝ օգտակար տարրերով համեմատաբար աղքատ հանքաքարերի քանակը կարող է կազմել 3,375 մլն տ: Դրանք կնվազեն և շատ ավելի մաքուր կդառնան, եթե ՀՀ կառավարությունը շահագորգի մոտեցում ցուցաբերի մեր ընդերքի հարստությունների հանդեպ:

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում կատարված տեխնոլոգիական հետազոտությունների արդյունքով Աբովյանի հանքավայրի հանքաքարերի հարստացման ընթացքում հնարավոր է դարձել ստանալ ապատիտային անջատ խտանյութեր, որոնց մեջ են անցել հազվագյուտ հողատարրերի՝ ցերումի, լանտանի և նեոդիմի, ամբողջ պարունակության 80-90%-ը, որից նեոդիմի բաժինը կազմել է 19-20%, իսկ ցերիումինն ու լանտանինը՝ 60-71%-ը: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ երկաթի հետ տարածված հազվագյուտ և շատ թանկարժեք տարրերի կորզումը հանքաքարերից խտանյութերի մեջ հանքահարստացման գործընթացում, ինչպես նաև դրանց կորզումը խտանյութերից վերջիններիս մետալուրգիական փուլով վերամշակելու գործընթացում անհնարին չէ, որի համար էլ նոր և ավելի ժամանակակից ու կատարյալ տեխնոլոգիական հետազոտություններ են պահանջվում: Այդպիսի հետազոտություններ կարող է կատարվել ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիայի կողմից: Հանդգված ենք, որ նշված լաբորատորիայի կողմից կատարվելիք հետազոտություններով հանքահարստացման գործընթացում հանքաքարերից երկաթի կորզումը խտանյութերի մեջ հնարավոր է լինելու բարձրանել մինչև 94-97%-ի, իսկ հարակից բաղադրիչներինը՝ 90-94%-ի և ոչ պակաս: Այդպիսի խտանյութերից՝ մետալուրգիական փուլով դրանց վերամշակման գործընթացում օգտակար տարրերի կորզումները կարող են կազմել 96-98,5-99%, որի մասին են վկայում այդ լաբորատորիայի կողմից այլ մետաղների գծով կատարված աշխատանքները: Ընդ որում՝ երկաթը կարող է կորզվել 98,5-99%-ով, իսկ հարակից բաղադրիչները՝ 96%-ով:

Այս վերջիններս կարող են իրագործվել, եթե Հայաստանի Հանրապետությունը տեր կանգնի իր ընդերքի հարստություններին, և ՀՀ կառավարությունը կամ հայ գործարարներն իրենք շահագործեն երկաթահանքերը և այն էլ այն պայմանով, որպեսզի ստացվեն վերջնարտադրանքներ և ոչ թե միայն խտանյութեր:

Եվս մեկ պայման պետք է առաջարկենք Աբովյանի հանքավայրի շահագործման հետ կապված:

Ինչպես նշվել է, Աբովյանի երկաթի հանքավայրի հանքային մարմինները տեղադրված են անդեզիտային և անդեզիտաբազալտային կոտրատված ու փշրված պորֆիրիտների միջև և ծածկված են բազալտային և անդեզիտաբազալտային կազմի լավային հոսքերով, որոնք էլ Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում են քաղցրահամ և գերքաղցրահամ, սառնորակ, խմելու համար գերազանց համ ու որակ ունեցող ջրերի ջրագոյացման, կուտակման ու պահպանման հիմնական և գլխավոր միջավայր:

Աբովյանի հանքավայրի շրջակայքի հսկայատարածք (հատկապես դեպի հյուսիս և արևելք) լավային ծածկոցների տակից բխող աղբյուրներից է վերցված Երևան քաղաքի, հատկապես հյուսիսային հատվածի, կենցաղային ջրերի մի պատկառելի մասը (մոտ 25 տոկոսը), և Աբովյանի հանքավայրի շահագործման պարագայում, եթե նախօրոք չձեռնարկվեն անհրաժեշտ և պահանջվող միջոցառումներ, կաղտոտվեն ու կաղտորվեն այդ ջրերը և դրանք այլևս խմելու համար պիտանի լինել չեն կարող: Հետևապես, այդ ջրերի որակը չփչացնելու նպատակով անհրաժեշտ է մինչև հանքաքարերի արդյունահանման աշխատանքների սկիզբը մեկուսացնել բուն հանքավայրի տարածքի ջրերը շրջապատի ջրերից, որը պետք է կատարվի մոտավորապես 100 հա տարածքում: Կկատարվեն այդ աշխատանքները՝ կշահագործվի հանքավայրը, չեն

կատարվի, ուրեմն չպետք է շահագործվի նաև այդ հանքավայրը: Կարծում ենք, ավելի շուտ համոզված ենք, որ սա պարտադիր պայման է:

Սվարանցի հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզում, Սվարանց գյուղից 4,5 կմ դեպի հարավ, Բարգուշատ լեռնաշղթայի հյուսիսային լանջերի վրա: Այս հանքավայրում ԽՍՀՄ-ի տարիներին կատարվել են որոնողազնահատողական և ապա նախնական հետախուզական աշխատանքներ, որոնց արդյունքով հանքավայրի կենտրոնական մասում հնարավոր է դարձել կատարել պաշարների հեղինակային հաշվարկներ: Հանքանյութեր պարունակող հիմնական ապարները հանդիսանում են ներծին (ինտրուզիվ) գաբրոիդները, որոնք 1-3,5 կմ լայնությամբ տարածվում են 7 կմ: Գաբրոիդներում հանքային մարմինները ներկայացված են զառիթափ (70-90°) անկում ունեցող երականման մագնետիտ-օլիվինիտային կազմավորման հանքանյութերով: Այստեղ հայտնի են 13 հանքային երակներ, որոնք ուղեկցվում են երակիկացանային տիպի հանքայնացմամբ:

Երկրաբանահետախուզական աշխատանքներով հանքային մարմինները հետապնդված են 300-ից մինչև 1400մ, որոնց հզորությունները տատանվում են 10-ից մինչև 80մ-ի սահմաններում: Երկաթի միջին պարունակությունն առանձին հանքային մարմիններում տատանվում է 17,4-ից մինչև 23,4%: Հեղինակային հաշվարկված պաշարների քանակները կազմում են հանքաքարերինը՝ 430,7 մլն տ, երկաթ մետաղինը՝ 85 մլն տ (երկաթի միջին պարունակությունը առանձին հանքային մարմիններում կազմում է 19-20%): Հանքավայրի հանքաքարերի կանխատեսումային ռեսուրսները հետախույզ-երկրաբանների կողմից գնահատված են մեկ մլրդ տոննա, իսկ երկաթ մետաղինը՝ 200 մլն տ:

Սվարանցի հանքավայրի հանքաքարերի պարունակության հետազոտման, հանքահարստացման տեխնոլոգիաների մշակման, մետալուրգիական արդյունաբերության համար պիտանի խտանյութերի ստացման հարցերով զբաղվել են Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի, հանքահումքի կովկասյան ինստիտուտի (քաղ. Թբիլիսի) և Սվերդլովսկի «Ուրալմեխհոբ» ինստիտուտի լաբորատորիաներում և եկել են հետևյալ եզրահանգումներին.

- երկաթի 19-20% պարունակության հանքաքարերից ստացվող խտանյութի քանակը կազմում է հանքաքարերի 25-40%-ը, որտեղ երկաթի պարունակությունը կազմում է 53-55,5% է, իսկ կորզումը՝ 60,6-75,6%,
- ապացուցվել է կոնդիցիոն մագնետիտային խտանյութի ստացման սկզբունքային հնարավորությունները: Ուշադրության է արժանի այն փաստը, որ խտանյութերում առկա է վանադիումի և տիտանի բարձր պարունակություններ, որոնք կարող են զգալիորեն մեծացնել ապրանքային արտադրանքի արժեքը (համոզված ենք, որ այս հանգամանքը չինական ընկերությունը հաշվի չի առնելու և վանադիումն ու տիտանը դուրս է տանելու անվճար),
- արդյունաբերական հետաքրքրություն են ներկայացնում հանքաքարերի հարստապոչները, որոնցից, ինչպես ցույց են տվել տեխնոլոգիական հետազոտությունները, կարելի է ստանալ արժեքավոր արտադրանքներ (այս հարցը ևս չի հետաքրքրելու չինական կողմին և դրանք՝ հարստապոչները, շատ ու շատ օգտակար տարրերով հանդերձ թափվելու են պոչամբարներ),
- խտանյութերը կարող են օգտագործվել դոմենյան հալման համար՝ խառնելով դրանք այն հանքաքարերի հետ, որոնք ունեն ապարների ավելի թթու կազմ կամ հարուստ են կալցիումի օքսիդով,

Կատարված հետազոտությունների արդյունքով պարզվել է, որ. Սվարանցի հանքավայրի հանքաքարերի որակատեխնոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած երկաթի համեմատաբար ցածր պարունակությանը, ուղեկից օգտակար բաղադրիչների՝ վանադիումի, տիտանի, մագնեզիումի և արտադրության թափոնների (հարստապոչների) համալիր օգտագործման պարագայում այն կարող է ներկայացնել արդյունաբերական մեծ արժեք:

Հանքաքարերում, ինչպես նաև խտանյութերում հայտնաբերված հարակից բաղադրիչների պարունակություններից ելնելով, մեր կողմից հաշվարկվել են Սվարանցի հանքավայրում առկա՝ երկաթի հետ հարակից տարածված տարրերի քանակները: Եվ այսպես. վանադիումի քանակը

կազմում է՝ 700 հազ. տ, թալիումինը՝ 2500տ, ինդիումինը՝ 3000տ, բերիլիումինը՝ 20 հազ. տ, տանտալինը՝ 25 հազ. տ, նիոբիումինը՝ 42 հազ. տ, տիտանինը՝ 9 մլն տ, մագնեզիումինը՝ 150 մլն տ, հազվագյուտ հողերինը՝ 50 հազ. տ, գերմանիումինը՝ 1200տ, գալիումինը՝ 9900տ, սելենինը՝ 660տ, տելուրինը՝ 990տ և բիսմութինը՝ 660տ:

Հաշվարկները (կատարված 2007թ. նախաճգնաժամային տարվա գներով, իսկ հազվագյուտ հողատարրերինը՝ 2011թ. հավասարակշռված գինը օբսիդների համար) ցույց են տալիս, որ Սվարանցի հանքավայրի ընդերքում երկաթի հետ հարակից տարածված տարրերի ընդհանուր արժեքը ընդերքում կազմում է 578 մլրդ 728 մլն ԱՄՆ դոլար, իսկ սովորական մաքրության երկաթ մետաղինը՝ 60 մլրդ դոլար:

Սվարանցի երկաթով աղքատ (19-20%) հանքաքարերի հարստացման գործընթացում ստացվող խտանյութերի 25-40% ելքը (ընդ որում Աբովյանի հանքավայրում այդպիսի ելք ստացվում է 23-33% երկաթի պարունակությամբ հանքաքարերից) շատ բարձր է, և դա վկայում է այն մասին, որ ստացվող խտանյութերում երկաթի կորզումը ցածր է (60,6-75%), հետևապես և խտանյութերում երկաթի պարունակությունն է ցածր (53-55,5%): Այդ տեխնոլոգիայով հանքաքարերի հարստացման պարագայում հարստապոչերի քանակը կարող է կազմել 675 մլն տ, որտեղ երկաթ մետաղինը՝ 64,4 մլն տ (համարյա այնքան, որքան պարունակվում է Աբովյանի հանքավայրի ընդերքում): Եվ, այս բոլորը, երկաթի հետ հարակից տարածված տարրերի մեծաքանակ պարունակություններով հանդերձ, թափվելու են մեր հայրենիքի մակերևույթի վրա՝ թունավորելով և ապականելով բնական միջավայրն ու այդ միջավայրում ապրող մարդկանց:

Վանադիումը (700 հազ. տ քանակով) և տիտանը (9 մլն տ քանակով) սերտորեն կապված են երկաթ մետաղի հետ, հետևապես դրանց 67,8%-ը (երկաթի կորզմանն ուղիղ համեմատական քանակով) կարող է անցնել խտանյութերի մեջ, իսկ 32,2%-ը՝ հարստապոչեր և մյուս հարակից բաղադրիչների հետ միասին թափվել պոչամբարներ:

Խտանյութերի մեջ անցնող վանադիումի քանակը կարող է կազմել 474,6 հազ. տ, իսկ տիտանինը՝ 6,1 մլն տ: Պոչամբարներ թափվող տարրերինը. վանադիումինը՝ 225,4 հազ. տ, տիտանինը՝ 2,9 մլն տ: Զինական կողմին նվիրվող վանադիումի և տիտանի արժեքը կարող է կազմել 297,87 մլրդ դոլար, իսկ պոչամբարներ թափվողներինը՝ 141,52 մլրդ դոլար:

Պոչամբարներ են թափվելու երկաթի և երկաթի հետ սերտորեն կապված վանադիումի ու տիտանի թերկորզված քանակները, ինչպես նաև մյուս բոլոր հարակից բաղադրիչներն ամբողջությամբ, որոնք չեն կորզվելու: Հետևապես պոչամբարներ թափվող այդ բոլոր տարրերի ընդհանուր արժեքը կարող է կազմել 524,29 մլրդ դոլար:

Եթե մեր երկաթահանքերի շահագործման այդ կարևորագույն ու մեծ եկամտաբերություն խոստացող գործն իր վրա վերցնի ՀՀ կառավարությունը կամ այն հանձնի հայ գործարարներին այն պայմանով, որ դրանցից պետք է թողարկվեն վերջնարտադրանքներ, և այդ պայմանն էլ հաշվի առնելով շահագործող կազմակերպությունը նախօրոք հանքաքարերը տրամադրի ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիային՝ տեխնոլոգիաներ մշակելու ինչպես հանքահարստացման, այնպես էլ խտանյութերը մետալուրգիական փուլով վերամշակելու և մետաղներ ու մետաղարտադրանքներ ստանալու գծով, ապա համոզված կարող ենք ասել, որ Սվարանցի հանքաքարերից բարձր տոկոսներով կարող են կորզվել ոչ միայն երկաթը, վանադիումն ու տիտանը, այլև վերը թվարկված հարակից բաղադրիչներից շատերը: Եվ այդ պարագայում ձորերն ու կիրճերը չեն թափվի միլիարդավոր դոլարների հասնող մեր ընդերքի հարստությունները:

Սվարանցի հանքավայրի ընդերքից տարեկան 10 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում չինական ընկերությունը կարող է ստանալ 3,25 մլն տ խտանյութեր, որոնց մեջ կլինեն. երկաթ՝ 1362 հազ. տ, վանադիում՝ 4767տ, տիտան՝ 61290տ, որտեղ երկաթի արժեքը կկազմի 408,6 մլն դոլար, իսկ վանադիումինն ու տիտանինը՝ 2992,29 մլն դոլար: Քանի որ վանադիումն ու տիտանը չեն գնահատվելու, չինացիները յուրաքանչյուր տարի Հայաստանից նվեր են ստանալու 2992,29 մլն դոլարի արժողության վանադիում և տիտան: Դրա հետ

մեկտեղ տարեկան մեր ձորերն ու կիրճերը թունավորելու են 6,75 մլն տ հանքահարստացման պոչաքնքներով, որոնց մեջ կլինեն.

երկաթ՝ 644 հազ. տ, վանադիում՝ 2254տ, տիտան՝ 28980տ, թալիում՝ 25տ, ինդիում՝ 30տ, բերիլիում՝ 200տ, տանտալ՝ 250տ, նիոբիում՝ 420տ, մագնեզիում՝ 1500 հազ. տ, գերմանիում՝ 12տ, գալիում՝ 99տ, սելեն՝ 6,6տ, տելուր՝ 9,9տ, բիսմութ՝ 297տ, հազվագյուտ հողատարրեր՝ 500տ: Թվարկված տարրերի մեծ մասը ծանր մետաղներ են, որոնք խիստ վտանգավոր են կենդանական աշխարհի համար: Սելենը, տելուրը և բերիլիումը թունահարույց հատկություններով օժտված տարրեր են նույնիսկ իրենց միացությունների տեսքով, իսկ տարեկան 215,6տ քանակով շրջապատ թափված այդ տարրերը խիստ վտանգավոր են շրջակա միջավայրի համար:

Ի վերջո, երբ Սվարանցի հանքավայրի շահագործումն ավարտվի, չինական «Fortuna Oil» ընկերությունը մեր հայրենիքի մակերևույթի վրա կթողնի. հարստապոչեր՝ 675 մլն տ, որոնց մեջ կլինեն. երկաթ՝ 64,4 մլն տ, վանադիում՝ 225,4 հազ. տ, տիտան՝ 2898 հազ. տ, թալիում՝ 2500տ, ինդիում՝ 3000տ, բերիլիում՝ 20 հազ. տ, տանտալ՝ 25 հազ. տ, նիոբիում՝ 42 հազ. տ, մագնեզիում՝ 150 մլն տ, գերմանիում՝ 1200տ, գալիում՝ 9900տ, սելեն՝ 660տ, տելուր՝ 990տ, բիսմութ՝ 660տ, հազվագյուտ հողատարրեր՝ 50 հազ. տ:

Նախկինում, մենք տնտեսագիտական և բնապահպանական բնույթի մեր հողածններով, հիմնավորել ենք Հայաստանի Հանրապետությունում սև և գունավոր մետալուրգիաների մետալուրգիական գործարանների անհրաժեշտությունը, նպատակահարմարությունն ու առավելությունը: Վերջերս (2011-2012թթ.) ՀՀ հեռուստաալիքներով տրված հաղորդումներից և «Դելավոյ էքսպրեսս» թերթի հոդվածներից ստացած տեղեկությունները համալրեցին և ավելացրին մեր հիմնավորումների ցանկը մետալուրգիական գործարաններ ունենալու հարցում: Դրանք են.

- 2011թ. հաղորդում տրվեց այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության հետ պայմանավորվածություն է ձեռք բերել Գյումրի քաղաքում ինքնաթիռների մասերի արտադրություն կազմակերպելու գործում,
- 2012թ. Բելառուսի Հանրապետության հետ՝ Հայաստանում գյուղատնտեսական տրակտորների արտադրության համատեղ գործարան կառուցելու և տրակտորներ արտադրելու գործում:

Նշենք, որ երկու դեպքում էլ՝ ինչպես ինքնաթիռների մասերի արտադրության, այնպես էլ գյուղատնտեսական տրակտորների արտադրության համար գործարաններ պետք է կառուցվեն: Կարծում ենք, որ այդ գործարանները կկառուցվեն հեռահար նպատակներով, այնպես, որպեսզի ինքնաթիռների մասերի արտադրությունից որոշակի ժամանակ անց, Հայաստանի Հանրապետության կարիքների համար արտադրվեն ինքնաթիռներ և ուղղաթիռներ, իսկ գյուղատնտեսական տրակտորների արտադրությունը կազմակերպվի մոտակա և հեռավոր հարևանների պահանջները բավարարելու, հետագայում այլ տրակտորների և «տրակտորանման» այլ մեքենաների (տանկերի) ու մի շարք այլ զինատեսակների արտադրության հեռահար նպատակներով (պետք է հաշվի առնել, թե ինչպիսի «բարյացակամ» հարևաններով ենք շրջապատված և աչալուրջ պետք է լինենք ամեն օր ու ամեն ժամ): Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ թեկուզև միայն ինքնաթիռների մասերի և գյուղատնտեսական տրակտորների արտադրության համար անհրաժեշտ է լինելու ունենալ մեծաքանակ (տարեկան մի քանի միլիոն տոննա) սև և գունավոր մետաղներ ու մետաղարտադրանքներ: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ դրանց ներկրումը դրսից՝ հազարավոր կիլոմետրեր հեռվից, շատ ու շատ կարող է թանկացնել մեր արտադրանքների ինքնարժեքը, իսկ այդ պայմաններում մեր արտադրանքները մրցունակ լինել չեն կարող և պահանջարկ չեն գտնի ոչ դրսում և ոչ էլ ներսում՝ Հայաստանի Հանրապետությունում:

Մենք ունենք բավականին մեծաքանակ հումք սև և գունավոր մետաղների և մետաղարտադրանքների ստացման համար: Գունավոր մետաղների՝ պղնձի, կապարի, ցինկի, մոլիբդենի և դրանց հետ հարակից տարածված տարրերի՝ ռենիումի, ոսկու, արծաթի, սելենի, տելուրի, բիսմութի, գալիումի, գերմանիումի, ինդիումի և այլնի պաշարներն ու կանխատեսումային ռեսուրսները չափվում են տասնյակ միլիոնավոր և հարյուր հազարավոր տոննաներով, իսկ սև մետաղներից՝ 2-3 միլիարդավոր տոննաներով, որոնք՝ սև և գունավոր մետաղների պաշարներն

ու ռեսուրսները, երկրաբանաորոնողական և հետախուզական աշխատանքներով հնարավոր է կրկնապատկել ու եռապատկել:

Սև և գունավոր մետաղներ ու մետաղարտադրանքներ ունենալու պարագայում ոչ միայն կապահովենք նոր ստեղծվող ինքնաթիռի մասերի (հետագայում նաև ինքնաթիռների և ուղղաթիռների) ու տրակտորների գործարանների պահանջները, այլև կխթանենք հետխորհրդային տարիներին գործազրկության մատնված հարակից արտադրությունների՝ էլեկտրոնիկայի և միկրոէլեկտրոնիկայի, մալուխների, էլեկտրական մեքենաների, հաստոցների և այլնի վերագործարկմանն ու արտադրությունների հզորացմանը:

Ի հավելումն գրվածների, նշենք նաև հետևյալը.

2012թ. ապրիլի 20-ին «Շանթ» հեռուստաալիքով հաղորդում տրվեց այն մասին, որ Ռուսաստանի Դաշնության միլիարդատերերի առաջին տասնյակը զբաղեցնում են լեռնահանքային արդյունաբերությամբ զբաղվող ձեռներեց-գործարար մարդիկ: Ջարմանալին այն է, որ նավթի ու գազի գերհզոր պաշարների (ինչպես նաև ռեսուրսների) տիրապետող երկրում գերհարուստ մարդկանց առաջին եռյակը զբաղեցնում են ոչ թե նավթ ու գազ արդյունահանող ու արտահանող մարդիկ, այլ մետաղական օգտակար հանածոներ արդյունահանող և մետալուրգիական ձեռնարկություններ ունեցողները:

Համոզված ենք, որ Հայաստանի Հանրապետությունում մետալուրգիական ձեռնարկությունները միլիարդավոր դոլարներ կլցնեն այն ձեռներեցների բանկային հաշիվները, ովքեր մետալուրգիական գործարաններ կկառուցեն պղնձամոլիբդենային, ոսկեբեր, ոսկի-բազմամետաղային երկաթաքարային հանքավայրերի հունքային հենքի վրա և, ապահովելով ներքին կարիքները, միջազգային շուկա դուրս կբերեն ոչ թե հունք կամ կիսաարտադրանքներ (մետաղների խտանյութեր) այլ վերջնարտադրանքներ (մետաղներ ու մետաղարտադրանքներ): Առավել հարուստ կլինեն այն ձեռնարկատերերը, ովքեր մետաղական օգտակար հանածոների հանքավայրերը կշահագործեն համալիր, հանքաքարերից բարձր ու գերբարձր տոկոսներով կկորզեն բոլոր՝ հիմնական և հարակից, բաղադրիչները և մետալուրգիական փուլով թողարկված մետաղների (և ոչ մետաղների՝ սելենի, տելուրի) մի մասը (գոնե 10-20%), շուկա դուրս կբերեն մաքրված՝ զտված ու գերզտված վիճակով: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ վերջիններս իրենց չզտված տեսակներից թանկ են 6-15 և մինչև 100 անգամ:

Հայաստանի կառավարությունն էլ այս գործում շատ կարևոր դեր ունի կատարելու՝ հանք-շահագործողներին պարտավորեցնելու ներդրումներ կատարել մետալուրգիական գործարաններ կառուցելու համար, գերշահույթ ապահովելու նպատակով հանքավայրերը համալիր շահագործելու, բնական միջավայրը մաքուր պահելու նպատակով բոլոր հիմնական և հարակից, տարրերը բարձր տոկոսներով կորզելու համար և այլն:

Այդ միլիարդները կարող են մտնել պետական գանձարան, եթե **77** կառավարությունն ինքը ձեռնարկի մետալուրգիական գործարանների կառուցումն ու գործարկումը: Նշենք, որ միայն **77** երկաթահանքերի արդյունավետ շահագործումից ու ստացվող խտանյութերի մետալուրգիական փուլով նույնքան արդյունավետ վերամշակումից սպասվող արդյունքը տարեկան կարող է կազմել 5,78 մլրդ դոլար: Իսկ, եթե թողարկվող երկաթ մետաղի 20%-ը միջազգային շուկա դուրս բերվի զտված վիճակով, ապա միայն երկաթից սպասվող տարեկան ընդհանուր հասույթը կարող է կազմել 12,6 մլրդ դոլար:

Грачик Авакян

Оценка отходов обогащения руд и их экологических последствий при эксплуатации железорудных месторождений

Аннотация

В Армении планируют приступить к эксплуатации трех железорудных месторождений, лицензиями на которых владеет китайская компания «Fortuna Oil». Китайская компания в Армении не намерена построить металлургический завод, она будет организовать добычу

железной руды, производство железорудного концентрата и сопутствующих компонентов с отправкой их в Китай на обработку.

В статье рассматриваются вопросы ущерба и угроз, наносимых окружающей среде, в результате эксплуатации этих месторождений. Представлено количество выброса в окружающую среду полезных элементов, которые становятся вредными и опасными для среды обитания, а также дана их эколого-экономическая оценка.

Предложено пересмотреть вопрос о сдаче в эксплуатацию железорудных месторождений РА иностранным компаниям.

Hrachik Avagyan

Estimates of enriched scraps and their environmental damage caused by exploitation of iron ore mines

Abstract

Three Iron Ore Mines will be exploited in Armenia. In order to operate these mines licenses were granted to Chinese “Fortuna Oil” Company. The given company doesn’t intend to build a metallurgical plant in Armenia, but would produce concentrates of iron ore and supplementary elements to process them in China. The article discusses the issues of environmental damage and threats to the nature and the population of Armenia caused by the exploitation of these mines. The article provides the estimates of the environmental damage and the value of minerals thrown away that find their way into nature. The article proposes to reconsider the practice of granting licenses to foreign companies to exploit iron ore mines in Armenia.

ՀՐԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆ

*ՆԿԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, երկր. հանք. գիտ. դոկտոր*

ՀԱԶՎԱԳՅՈՒՄ ՏԱՐՐԵՐՆ ՈՒ ՀՈՂԱՏԱՐՐԵՐՆ ՄԻԼԻԱՐԴԱՎՈՐ ԴՈԼԱՐՆԵՐԻ «ԱՂՔՅՈՒՐՆԵՐ»

Հազվագյուտ հողատարրերին (հողատարրային մետաղներին) են պատկանում սկանդիումը, իտտրիումը, լանտանը և լատանոիդների խմբի 14 տարրերը՝ ցերիումը, պրազեոդիումը, նեոդիմը, պրոմեթիումը, սամարիումը, եվրոպիումը, գադոլինիումը, տերբիումը, դիսպրոզիումը, հոլմիումը, էրբիումը, թուլումը, իտտերբիումը և լուտեցիումը: Դրանք բոլորը ունեն շատ մոտ հատկություններ և բնության մեջ հանդիպում են միատեղ (միասին):

Հազվագյուտ հողատարրային մետաղները շատ ու շատ կարևոր են ժամանակակից արդյունաբերության համար: Մասնագետները դրանց համարում են «արդյունաբերության վիտամիններ» և գտնում են, որ ժամանակակից արդյունաբերությունը զարգանալ չի կարող առանց հազվագյուտ տարրերի և, հատկապես, առանց հազվագյուտ հողատարրերի: Հազվագյուտ հողատարրերն ունեն ինչպես ռազմավարական, այնպես էլ ռազմական նշանակություն: Դրանք բնության մեջ տարածված են շատ փոքր քանակներով: Բավական է նշել, որ, 2009թ. տվյալներով հազվագյուտ հողատարրերի բնական պաշարները համաշխարհային մասշտաբով գնահատված են 99 մլն տ, որից՝ 2ինական ժողովրդական Հանրապետության տարածքում՝ 36 մլն տ, ԱՄՆ՝ 13 Պետությունների Համագործակցության տարածքում (առանց Հայաստանի)՝ 19 մլն տ, ԱՄՆ՝ 13

մլն տ, Ավստրալիայի տարածքում՝ 5,4 մլն տ, Չնդկաստանի տարածքում՝ 3,1 մլն տ, Բրազիլիայի տարածքում՝ 48 հազ.տ, այլ պետությունների տարածքում՝ 22,03 մլն տ¹:

Հազվագյուտ հողատարրերի համաշխարհային արդյունաբերությունը (արդյունահանումը) 2008թ. կազմել է 124 հազ.տ, իսկ 2009-ին՝ 96,5 հազ.տ¹: Արդյունահանման քանակի նվազումը կապված է եղել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի և հազվագյուտ հողատարրերի նկատմամբ պահանջարկի կրճատման հետ:

Հազվագյուտ հողատարրերը կիրառություն են գտել արդյունաբերության յուրահատուկ բնագավառներում: Այսպես, նեոդիմը հանդիսանում է գերիզոր և բարձրջերմաստիճանային մագնիսների հանգուցային տարրը (այդպիսի մագնիսները կիրառվում են էլեկտրամոբիլների կուտակային մարտկոցներում, քանու տուրբիններում), լանտանը ռազմավարական նշանակության տարր է կատալիզատորների համար, որոնք կիրառվում են նավթավերամշակման արդյունաբերությունում բենզինի, դիզելային և հրթիռային վառելիքների ստացման գործում: Դիսպրոզիումը հանդիսանում է գերիզոր մշտական մագնիսների կարևորագույն բաղադրիչը, որոնք կիրառվում են խառնածին ավտոմոբիլներում, կենցաղային էլեկտրոնային սարքավորումներում, քանու տուրբիններում, ընդ որում տվյալ բնագավառում այդ մետաղին արդյունավետ-այլընտրանքային փոխարինող գոյություն չունի: Դիսպրոզիումը բարելավում է միկրոէլեկտրոնային բաղադրիչների բնութագիրը: Տերբիումը հանդիսանում է այն հազվագյուտ հողատարրը, որն իրավամբ հազվագյուտ է, քանի որ այն արդյունահանվում և կիրառվում է շատ քիչ քանակներով և, սպասվում է, որ 2015թ. դրա նկատմամբ պահանջարկը կարող է հասնել 480տ-ի: Տերբիումը ցիրկոնիումի երկօքսիդի հետ միասին կիրառվում է որպես բյուրեղային կարգավորիչ բարձրջերմաստիճանային վառելիքային տարրերի համար, էներգոարդյունավետ ֆլուօրեսցենտային լամպերի, հեռուստացույցների փողակների գունավոր պատկերավորման համար, ինչպես նաև նավերի ձայնային լուկատորային և սենսորային համակարգերում:

Հազվագյուտ հողատարրերի հիմնական և գլխավոր արտադրողն աշխարհում համարվում է Չինաստանը, որին, վերջին տարիներին, բաժին է հասնում համաշխարհային արտադրության 97%-ը (օքսիդների հաշվարկով): Մնացյալ 3%-ը մատակարարել են Չնդկաստանը, Ռուսաստանը, Բրազիլիան և Մալայզիան:

Թեթև հողատարրային մետաղների գլխավոր մատակարարը համաշխարհային մասշտաբով հանդիսանում է Ներքին Մոնղոլիայի (ՉԺՀ) Բոյան-Օբո հանքավայրը, որտեղ հազվագյուտ հողատարրերը կորզվում են երկաթի հանքաքարերից որպես հավելյալ արդյունք: Այդ հանքավայրում 2008թ. թողարկվել է 66 հազ.տ հազվագյուտ հողատարրերի օքսիդներ¹:

Չինաստանը հազվագյուտ հողատարրերի գծով մենաշնորհային դիրքում է: Այժմ Չինական ժողովրդական Հանրապետությունը մտադիր է սահմանափակել, կամ, նույնիսկ, ամբողջովին արգելել մի քանի հազվագյուտ հողատարրային մետաղների արտահանումը, որն էլ իրարանցում է առաջացրել համաշխարհային շուկայում: Փորձագետների կարծիքով չինական հողատարրերի արտահանման կրճատումը, անկասկած, կարող է առաջացնել այդ տարրերի գների հետագա աճ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը սկսեց բացահայտ ընդունել արտադրության ռազմավարական ճյուղերի խոցելիությունը՝ կապված հազվագյուտ հողատարրերի մատակարարման հետ: Հազվագյուտ հողատարրերի մատակարարման իրավիճակը գրավել է նաև ռազմական արդյունաբերության ուշադրությունը:

Հազվագյուտ հողատարրերը հանդիսանում են ռազմավարական կարևորագույն այն նյութերը, որոնք, մասնավորապես, կիրառվում են ճշգրիտ կողմորոշման զինատեսակների, լազերային, ռադարային, արբանյակային և գիշերային տեսանելի սարքերի մեջ:

Այսպիսով, մենք հակիրճ ներկայացրեցինք հազվագյուտ հողատարրերի կիրառության կարևորագույն կողմերը: Այժմ ներկայացնենք մի քանիսի միջազգային գները և միայն դրանից հետո խոսենք Հայաստանի հանքավայրերում դրանց առկայության մասին:

2011թ. գաղղիկնիումի մեկ կգ-ը արժեք 198,1 դոլ., դիսպրոզիումինը՝ 2306,4 դոլ., եվրոպիումինը՝ 4475,8 դոլ., իտտրիումինը՝ 173 դոլ., լանտանինը՝ 105,1 դոլ., նեոդիմինը՝ 308,1 դոլ.,

¹ <http://www.metalbulletin.ru/publications /3657/>

պրագեոդինը՝ 257,2 դոլ., տերբիումինը՝ 3527,4 դոլ., ցերիումինը՝ 121,8 դոլ., լուտեցիումի օքսիդինը՝ 1714,2 դոլ., հոլմիումի օքսիդինը՝ 644,9դոլ., սկանդիումի օքսիդինը՝ 5216,7 դոլ., իտտերբիումի օքսիդինը՝ 213,1 դոլ., էրբիումի օքսիդինը՝ 248,9 դոլ.¹:

Բերված տվյալները վկայում են այն մասն, թե որքան թանկ են հազվագյուտ հողատարրերը, այն տարրերը, որոնց գները տրվում են ոչ թե տոննաների հաշվով, այլ կիլոգրամների: Իսկ այդ գներն էլ վկայում են հազվագյուտ հողատարրերի կարևորության մասին և, այն մասին, թե մենք՝ Հայաստանի բնակիչներս, մեր գործարար մարդիկ, հանքավայրեր շահագործողները, և վերջապես, ՀՀ կառավարությունը որքան անտարբեր ենք մեր բնական հարստությունների հանդեպ:

Քանի որ խոսք գնաց մեր բնական հարստությունների՝ հազվագյուտ հողատարրերի մասին, ցանկանում են այստեղ աչքաթող չանել նաև մի քանի այլ հազվագյուտ տարրեր, որոնք առատորեն առկա են մեր մետաղական օգտակար հանածոների հանքավայրերում, որոնք ոչ միայն չեն կորզվում, այլև թափվում են պոչամբարներ կամ նվիրվում են խտանյութերի օտար գնորդներին, այսինքն ամբողջովին կորստի են մատնվում փոշիացվում են:

Հայաստանի Հանրապետությունում մետաղական օգտակար հանածոների հանքավայրերից հազվագյուտ հողատարրերի գծով որոշակի աստիճանի հետազոտված են միայն երկաթաքարային՝ Հրազդանի, Բազումի, Աբովյանի, Սվարանցի և, պղնձամոլիբդենային՝ Քաջարանի, հանքավայրերը, որոնցում էլ հայտնաբերված են հազվագյուտ հողատարրերի զգալի քանակության ռեսուրսներ: Հազվագյուտ այլ տարրերի գծով քիչ թե շատ բավարար հետազոտված են համարյա բոլոր տիպերի հանքավայրերը:

ՀՀ երկաթի 4 հանքավայրերում հայտնաբերված են հազվագյուտ հողատարրերի հետևյալ քանակի ռեսուրսներ, ընդ որում դրանց գերակշիռ մեծամասնությունը՝ Աբովյանի հանքավայրում: Ցերիում՝ 2256713տ, լանտան՝ 730800տ, իտտրիում՝ 236087տ, նեոդիմ՝ 1088,08տ, դիսպրոզիում՝ 379,18տ, պրագեոդիմ՝ 230,8տ, գադոլինում՝ 115,4տ, իտտերբիում՝ 9,89տ, էրբիում՝ 8,9տ, այլ հողատարրեր՝ 7,1 տ²:

Հազվագյուտ հողատարրերի ընդհանուր ռեսուրսները Հայաստանի Հանրապետությունում (Քաջարանի հանքավայրի այժմյան և պոչամբարներում առկա ռեսուրսների հետ միասին) կազմում են 3 մլն 939 հազ. 78,66տ, որն ավելի շատ է, քան Հնդկաստանի և Բրազիլիայի տարածքներում գտնվող ռեսուրսները համատեղ: Վերջիններս կորզում և վաճառում են այդ հողատարրերը, իսկ մենք՝ ոչ: Ինչո՞ւ:

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրում հայտնաբերված է սկանդիում հողատարր, որի ռեսուրսները այժմյան դրությամբ կազմում են 11656,6տ (պոչամբարներ թափված սկանդիումի քանակը կազմում է 1983,2տ): Այլ հազվագյուտ տարրերից, որոնց մասին արժե գրել այստեղ, շատ կարևոր և շատ արժեքավոր հողատարրերի մասին գրելիս, դրանք ռենիում և վանադիում տարրերն են, որոնք էլ, ինչպես նաև սկանդիում հողատարրը, փոշիացվում են: Սկանդիումը և վանադիումը չեն կորզվում և հանքահարստացման գործընթացում շրջանցելով խտանյութերը մեկեն թափվում են պոչամբարներ, իսկ ռենիումը, որի արժեքը 2012թ. համարյա 1,3 անգամ աճել է 2007թ. համեմատ (այժմ ռենիումի մեկ տոննան միջազգային շուկայում գնահատվում է 10248700 դոլ.), որը սերտորեն կապված է մոլիբդեն մետաղի հետ, հանքահարստացման գործընթացում մոլիբդենի հետ ուղիղ համեմատական քանակներով անցնում է խտանյութի մեջ, իսկ մնացած մասը թափվում է պոչամբարներ՝ մոլիբդենի չկորզված մասի հետ համամասնորեն: Բայց արժե նշել, որ ռենիումի խտանյութերի մեջ կորզված մասը նույնպես փոշիացվում է, քանի որ խտանյութերի վաճառքի ժամանակ դա չի գնահատվում և նվիրվում է օտար գնորդներին:

Այժմ Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրից Ջանգեզուրի կոմբինատը արդյունահանում և մշակում է 20 մլն տ հանքաքար, որի պարագայում փոշիացման է ենթարկվում. սկանդիում՝ 107,2տ, վանադիում՝ 6432,84տ, ռենիում՝ 3,34տ: Փոշիացվող սկանդիում հազվա-

¹ <http://tdm.96.ru/?p=829>
² Магакьян И.Г., Пиджян Г.О. и др. Редкие и благородные элементы в рудных формациях Армянской ССР. Ереван: Изд. АН АрмССР, 1972, 394 с.

գյուտ հողատարրի արժեքը կազմում է 559,23 մլն դոլար, վանադիում հազվագյուտ տարրինը՝ 2 մլրդ 549,2 մլն դոլար (վանադիումի մեկ տոննայի գինը 2011-2012թթ. տվյալներով կազմում է 396280 դոլար) և, վերջապես, ռենիում հազվագյուտ տարրինը՝ 34 մլն 230,7 հազ. դոլար: Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից տարեկան փոշիացման ենթարկվող 3 կարևորագույն տարրերի արժեքը կազմում է 3 մլրդ 142 մլն 660,7 հազ. դոլար (այստեղ՝ հաշվարկի մեջ, չեն մասնակցում հիմնական պղինձ, մոլիբդեն և ոսկի՝ խտանյութերի վաճառքի ժամանակ գնահատվող տարրերի թերկորված մասի, ինչպես նաև սելենի, տելուրի, բիսմութի, արծաթի, նիկելի, կոբալտի, կապարի, ցինկի, երկաթի, ծծմբի, պլատինի, պալադիումի, մկնդեղի, մագնեզիումի արժեքները, որոնք առկա են Քաջարանի հանքաքարերում, և որոնց մի մասն անցնում է խտանյութերի մեջ, մյուս մասը թափվում է պոչամբարներ, բայց և այնպես, դրանք բոլորն էլ կորստի են մատնվում՝ փոշիացվում են):

Քաջարանի հանքավայրի ընդերքից տարեկան 20 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը առավելագույնը կարող է թողարկել խտանյութեր.

- պղնձի 150 հազ.տ՝ պղնձի 28% պարունակությամբ,
- մոլիբդենի 15000տ՝ մոլիբդենի 50% պարունակությամբ:
Այս պարագայում կոմբինատի ստացած հասույթը կարող է կազմել.
- պղնձի խտանյութի վաճառքից (պղնձի գինը 2012թ. տվյալներով կազմում է 8130դ/տ)՝ 189,85 մլն դոլար,
- մոլիբդենի խտանյութի վաճառքից (մոլիբդենի գինը 2012թ. տվյալներով՝ 32600դ/տ)՝ 127,87 մլն դոլար:

Ընդհանուր հասույթը կարող է կազմել 317,72 մլն դոլար, այն պարագայում, երբ կորստի մատնվող (փոշիացվող) 3 կարևորագույն տարրերի՝ ռենիումի, վանադիումի և սկանդիումի արժեքը նույն՝ 2012թ., գներով կազմում է 3 մլրդ 142 մլն 661 հազ. դոլար (սկանդիումինը՝ 559,23 մլն դոլ., վանադիումինը՝ 2549,2 մլն դոլար և ռենիումինը՝ 34 մլն 230,7 հազ. դոլար), որը Ձանգեզուրի կոմբինատի կողմից ստացվող հասույթից մեծ է ավելի քան 9,89 անգամ:

Ինչպես հայտնի է, ՀՀ երկաթահանքերից 3-ը շահագործման են տրվել չինական «Fortuna Oil» ընկերությանը, որն էլ հանքավայրերի շահագործման պարագայում թողարկելու է միայն խտանյութեր և դրանք վերամշակման համար տեղափոխելու է Չինաստան (Հայաստանում սև մետալուրգիայի մետալուրգիական գործարան չի կառուցվելու): Համոզված կարելի է նշել, որ չինական կողմը, որը հազվագյուտ հողատարրերի հիմնական արդյունահանողն ու արտահանողն է աշխարհում, ՀՀ երկաթահանքերից ստացած խտանյութերից ոչ միայն երկաթ մետաղ է կորզելու, այլև կորզելու է երկաթից մի քանի հազար անգամ քանակարժեք հազվագյուտ տարրերն ու հողատարրերը, հատկապես՝ ցերիում, լանտան, իտտրիում, նեոդիմ, դիսպրոզիում, պրազեոդիմ, գադոլինիում հողատարրերը, ինչպես նաև՝ ոսկի, արծաթ, նիկել, կոբալտ, տիտան, վանադիում, թալիում, ինդիում, բերիլիում, տանտալ, միոբիում և այլ հազվագյուտ տարրեր: Այժմ տեսնենք, թե որքան կորուստ է ունենալու Հայաստանը (ասել է, թե մեր ժողովուրդը) երկաթահանքերի շահագործման հետևանքով կորստի մատնվող միայն հազվագյուտ հողատարրերի գծով (հաշվարկի մեջ չենք ներառելու երկաթի հետ հարակից տարածված ոսկին, արծաթը, նիկելը, կոբալտը, տիտանը, լիթիումը, ստրոնցիումը, պղինձը, կապարը, ցինկը, գալիումը, վանադիումը, թալիումը, ինդիումը, բերիլիումը, տանտալը, միոբիումը, մագնեզիումը, գերմանիումը, սելենը, տելուրը, բիսմութը և այլն):

Երկաթահանքերում 10 հազվագյուտ հողատարրերի ռեսուրսների արժեքը (չհաշված թուլիումի, որի գինը չենք կարողացել ճարել) կազմում է 479 մլրդ 83,44 մլն դոլար, որից առյուծի բաժինն ունենում է ցերիումը, որի արժեքը կազմում է 360 մլրդ 127,6 մլն դոլար:

Ավելի քան 1,5 տրիլիոն դոլարի արժողություն կունենան երկաթի հետ հարակից տարածված մյուս հազվագյուտ (և ոչ հազվագյուտ) փոշիացման ենթակա տարրերը, որոնցից Սվարանցի հանքավայրում տարածված 3 տարրերի՝ վանադիումի, տիտանի և մագնեզիումի արժեքը կազմում է 1 տրիլիոն 61 մլրդ 896 մլն դոլար: Սվարանցի հանքավայրի ընդերքից տարեկան 10

մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում փոշիացման ենթակա նշված 3 տարրերի արժեքը կարող է կազմել 10 մլրդ 618 մլն 960 հազ. դոլար:

Ահա՛, թե ինչեր ենք կորցնում, ինչեր ենք կորցնելու և թե ինչո՞ւ ենք այսքան աղքատ:

ՀՀ կառավարությունը պետք է վերանայի իր որոշումը երկաթահանքերի շահագործման իրավունքը չինական ընկերությանը տրամադրելու հարցում: Երկաթահանքերը պետք է շահագործվեն մեր պետության կողմից: Հայաստանում պետք է կառուցվեն սև և գունավոր մետաղների մետալուրգիական գործարաններ: Երկաթաքարերից և գունավոր մետաղների խտանյութերից պետք է կորզվեն հնարավորինս մեծ թվով օգտակար տարրեր (ժամանակակից տեխնոլոգիաների պայմաններում բոլոր՝ կորզելի պարունակություններով տարրերը), հատկապես հազվագյուտ տարրեր և հազվագյուտ հողատարրեր և այն էլ բարձր ու գերբարձր տոկոսներով (այստեղ օգտագործելով ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիայի նախկինում կատարված և կատարվող մշակումները): Շուտով՝ Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության հետ ձեռք բերած համաձայնությունների (Գյումրիում ինքնաթիռի մասերի արտադրության և Հայաստանում՝ հավանաբար Չարենցավանում, գյուղատնտեսական տրակտորների արտադրության կազմակերպման) իրագործման պարագայում մեզ անհրաժեշտ է լինելու ունենալ մեծաքանակ (տարեկան մի քանի մլն տ) ինչպես սև, այնպես էլ գունավոր մետաղներ: Պարզ ու հասկանալի է, որ դրանց արտադրությունը տեղում՝ Հայաստանի Հանրապետությունում ունենալը, տնտեսապես շատ ավելի ձեռնտու է, քան ներկրումը դրսից՝ Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից կամ Բելառուսի Հանրապետությունից: Նախ, մենք կունենանք հազարավոր նոր աշխատատեղեր, բազմապատիկ կմեծանա լեռնահանքային արդյունաբերությունների արդյունավետությունը, կկրճատվեն փոխադրական ծախսերը, կհարստանա մեր հանրապետությունը և, վերջին հաշվով, կնվազի կամ կդադարի արտագաղթը: Այստեղ անհրաժեշտ է ՀՀ կառավարության իմաստուն որոշում: Իմաստուն հայերն ասել են՝ «խելոքը կհարստանա, անխելքը միշտ աղքատ կմնա» և, որպեսզի այս ասացվածքը, հատկապես դրա երկրորդ մասը, մշտապես կպչուն չդառնա մեր ժողովրդին, անհրաժեշտ է, որ մենք խելոքանանք և բնության կողմից մեր ժողովրդին անվճար տրված բարիքը գետերն ու ձորերը չլցնենք:

Грачик Авакян

Редкоземельные элементы как источник миллиардных долларов

Аннотация

В статье сжато представлены направления применения редкоземельных элементов в ведущих отраслях современной промышленности. Рассмотрены нынешнее состояние процесса извлечения существующих редкоземельных элементов из рудных месторождений РА, а также проблемы его необходимости и эффективности.

Hrachik Avagyan

Rare elements and minerals as the “source” of billions of dollars

Abstract

The article concisely presents how the rare elements, minerals are used in modern leading industrial sectors. The article discusses the state of extraction of rare elements, minerals while exploiting the mines of metallic minerals, the necessity of extraction of the elements and minerals and the efficient of extraction.

ԱՇՈՏ ԲԱՅԱՂՅԱՆ

*ՆՄ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*ՆՄ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.*

**ՀՀ ԳՅՈՒԼԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ՈՒ ԼՈՒՃՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

ՀՀ գյուղատնտեսությունը, ինչպես ագրոպարենային համակարգի, այնպես էլ ողջ տնտեսության ամենաբարդ և աշխատատար ճյուղն է, որտեղ օգտագործվում են հանրապետության աշխատանքային ռեսուրսների մոտավորապես 45%-ը: Այն ապահովում է գյուղատնտեսական մթերքների արտադրության համարյա 98%-ը:

Գյուղատնտեսությունում ձևավորված գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, գյուղատնտեսական արտադրության ցածր եկամտաբերությունը և կոոպերացիայի զարգացման դանդաղ ընթացքը պայմանավորված է բնատնտեսական ներուժի օգտագործման ցածր մակարդակով: Բուսաբուծության ճյուղը, որն իր գործունեությունն իրականացնում է 1.2 մլն մասնատված հողակտորների վրա, ըստ ստեղծված իրավիճակի, դարձել է անարդյունավետ, որտեղ չափազանց ցածր է ապրանքային արտադրության մակարդակը, դանդաղ են ներդրվում նոր տեխնոլոգիաները (նույնիսկ ժամանակակից տեխնոլոգիաները), բացակայում է վարկավորման և ապահովագրական մատչելի համակարգը, հստակ չեն սպասարկման, մատակարարման, արտադրանքի իրացման կառավարման մեխանիզմները: Միաժամանակ գերիշխում են ապրանքայնության և մրցունակության ցածր մակարդակ ունեցող ընտանեկան գյուղացիական տնտեսությունները:

Հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրներից են՝

1. Գյուղատնտեսության փոքր չափերը և դրան սպասարկող ենթակառուցվածքների դանդաղ ձևավորումը, քանի որ փոքր հողակտորների վրա հնարավոր չէ ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը:
2. Հողատարածքների նպատակային օգտագործման ցածր մակարդակը, որն անհնարին է դարձնում կատարելու համապատասխան ցանքաշրջանառություն և իրականացնելու անհրաժեշտ չափով պահանջվող ագրոտեխնիկական միջոցառումներ:
3. Գյուղտեխնիկայով ապահովվածության ցածր մակարդակը, որը ֆիզիկապես մաշված է և բացասաբար է անդրադառնում շահագործման ծախսերի ու սպասարկումների սակագների վրա:
4. Արտադրության ինտենսիվացման ցածր մակարդակը և դրանով պայմանավորված ձեռքի աշխատանքի բարձր տեսակարար կշիռը:
5. Գյուղատնտեսական հումքի և մթերքների իրացման ու վերամշակման բնագավառին առանձնահատուկ առկա խոչընդոտները:
6. Մթերքների արտահանմանը խոչընդոտող դժվարությունները:
7. Գյուղատնտեսության մթերքների իրացման դժվարությունները՝ կախված հանրապետության բնակչության վճարունակության ցածր մակարդակից:

Այս գործոններով էլ պայմանավորված գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի արտադրողականությունը ցածր է, որի հետևանքով էլ գյուղացիական տնտեսությունների եկամուտները չեն ապահովում դրանց ընտանիքների սոցիալական բարվոք վիճակի պահանջները:

Հաշվի առնելով գյուղական ընտանիքների աղքատության բարձր մակարդակը (2008թ., 2009թ., 2010թ., համապատասխանաբար կազմել են՝ 27.5, 34.9, 36,0%), աշխատուժի շուկայում դրանց որոշակի անմրցունակությունը, ֆինանսատնտեսական համաշխարհային ճգնաժամի բացասական ազդեցությունը և այլ գործոններ՝ խոչընդոտում են գյուղացիական տնտեսությունների խոշորացմանը, և որի արդյունքում էլ դժվարանում է գյուղատնտեսության ոլորտում ՀՆԱ-ի ավելացումն ու տնտեսական աճի ապահովումը:

- Ուստի, բարելավման առումով ՀՀ գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ են՝
1. Պետության նպատակային աջակցությունը՝ ուղղված գյուղատնտեսական կոոպերատիվների, գործունեության արմատավորմանն ու զարգացմանը՝ շուկայական առանձին ենթակառուցվածքներին և ընտանեկան գյուղացիական տնտեսություններին համահունչ: Քանի որ ներկա պայմաններում գյուղացիական տնտեսությունների վարկավորման, տեխնոլոգիաների կատարելագործման, նյութատեխնիկական միջոցների մատակարարման խնդիրներն էլ ավելի արդյունավետ կիրականանան ագրովերամշակող կազմակերպությունների հետ համագործակցության խորացման միջոցով:
 2. Աշխատանքի արտադրողականության աճի հաշվին գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելացում, կրճատելով այդ ոլորտում աշխատողների թվաքանակը՝ այն օգտագործելով սպասարկող և վերամշակող փոքր ու միջին ձեռնարկությունների արտադրամասերում:
 3. Առաջավոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով գյուղատնտեսության տեղական արտադրության արտադրանքի մրցունակության բարձրացում՝ ներմուծվող պարենամթերքները փոխարինելով արտահանման ուղղվածություն ունեցող և արտաքին շուկայում մրցունակություն ապահովող տեղական արտադրանքով:
 4. Գոտիական մասնագիտացում և վերամշակող արտադրության ռացիոնալ տեղաբաշխում՝ հիմնված շուկայական ենթակառուցվածքների զարգացման գործոնների վրա, որը կօգնի բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և անհրաժեշտ ապրանքատեսակների արտադրության ընդլայնմանն ու խթանմանը:
 5. Հանրապետության մարզերի առանձին տարածաշրջանների համաչափ զարգացման և արդեն գործող տնտեսավարող սուբյեկտների կարողությունների ուժեղացման ու նոր սուբյեկտների ձևավորման նպատակով՝ պետական աջակցությամբ մատչելի վարկավորման ապահովում:

Մասնավորապես վերջին առաջարկությանը համահունչ հանրապետության կառավարության կողմից հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին» համապատասխան այդ ոլորտին տրամադրվել են մատչելի 14%-ով վարկեր, որի 4%-ը սուբսիդավորվում է պետության կողմից, իսկ ավելի կարիքավոր 225 համայնքների համար այն հասցվել է 6%-ի և արդյունքում 2011թ. ապրիլի սկզբից մինչև 2012թ. հոկտեմբերի սկիզբն ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողներին տրամադրվել է 25.2 մլրդ. դրամ, թվաքանակով 34.6 հազ. միավոր վարկի դիմաց: Տրամադրված վարկերից միայն 29.3 հազ. միավորը կամ 84.7%-ը տրամադրվել է 4%-ով, իսկ մնացած 5.3 հազ. միավորը կամ 15.3%-ը՝ 6%-ով կառավարության կողմից սուբսիդավորմամբ, որն ինչպես 2011թ., այնպես էլ 2012 թվականին գյուղատնտեսության ոլորտում դրական տեղաշարժերն արդյունք են մատչելի վարկային ներդրումների¹:

Գյուղատնտեսական կոոպերատիվների արմատավորումը, որպես շուկայական տնտեսվարման ձև, իր զարգացումը պետք է ստանա որոշակի ընդունված սկզբունքների վրա:

Գոյություն ունի կոոպերատիվների հետևյալ սկզբունքները՝

1. կոոպերատիվին կամավոր և բաց անդամակցություն,
2. անդամների կողմից կոոպերատիվի գործունեության ժողովրդավարական վերահսկողություն,
3. կոոպերատիվի անդամների տնտեսական մասնակցություն,
4. ինքնավարություն և անկախություն,

¹ www.google.am

5. կրթության, վերապատրաստման և տեղեկատվության ապահովում,
6. համագործակցություն կոոպերատիվների միջև,
7. համայնքի մասին մտահոգություն:

Կոոպերացումը (գյուղացիական տնտեսությունների խոշորացում), ըստ ուսումնասիրությունների վկայում են, որ հնարավոր պահանջներն ավելի արդյունավետ են օգտագործվում կամավորության սկզբունքով՝ դրանց միավորման և համատեղ արտադրատնտեսական գործունեության իրականացման պայմաններում:

Տնտեսությունների խոշորացումը՝ կոոպերացման, հողի շուկայի ակտիվացման միջոցով, անհրաժեշտ է ոչ միայն գյուղաբնակների, այլ նաև ինտեգրման գործընթացների խթանման, և երկրի մակրոտնտեսական կայունացման համար, ներառելով միաժամանակ տեղական արտադրողների և պարենամթերքի ներքին շուկայի պաշտպանության հիմնահարցը:

Կարևորելով գյուղատնտեսական կոոպերացիան, դրա սկզբունքների արդյունավետ կիրառումն ու օգտագործումը, այն կարող է դրական դեր խաղալ գյուղատնտեսությանն առընթեր ծագած խնդիրների հետագա բարելավման համար, հատկապես կնպաստի գյուղատնտեսության ոլորտում գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և գյուղական բնակավայրերի ամրապնդմանը: Առանձնապես կարևորվում է գյուղատնտեսության ոլորտի հիմնահարցերի լուծման, կապված մրցունակության բարձրացման, գյուղացիական տնտեսությունների խոշորացման, հատկապես՝ կոոպերատիվների, ասոցիացիաների, ընկերությունների կամավորության սկզբունքի հիման վրա միավորման և համատեղ արտադրատնտեսական գործունեության իրականացման առումով:

Գոյություն ունեն կոոպերատիվների հետևյալ ձևերը՝

1. արտադրական կոոպերատիվներ,
2. վերամշակող կոոպերատիվներ,
3. իրացնող կոոպերատիվներ,
4. մատակարարման կոոպերատիվներ,
5. սպասարկող, ծառայություններ մատուցող կոոպերատիվներ,
6. վարկային կոոպերատիվներ,
7. ապահովագրական կոոպերատիվներ:

ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության արդյունավետության ապահովման և կոոպերատիվների ստեղծման ու կայացման հիմնախնդիրներից են՝

1. արտադրության խոշորացման, կոոպերատիվների գործունեության նպաստավոր պայմանների և խթանման միջոցառումների ապահովումը,
2. արտադրատեխնիկական սպասարկման, մրցակցային, մատչելի ծառայությունների ձևավորման ու զարգացման համար պետական և մասնավոր հատվածների համագործակցության անհրաժեշտությունը,
3. գյուղմթերքների իրացման ու վերամշակման հարցով զբաղվող համապատասխան ենթակառուցվածքների առկա վիճակի բարելավումը,
4. կոոպերացիայի բնագավառի իրավական դաշտի անկատարությունը,
5. գյուղատնտեսությունում ապահովագրական գործուն համակարգի ձևավորմանն ուղղված նախադրյալների բացակայությունը և այդ ոլորտի բարձր ռիսկայնությունը,
6. հողային, ջրային, աշխատանքային ռեսուրսների օգտագործման ցածր արդյունավետությունը:

Այս հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ են օրենսդրաիրավական հիմքի ձևավորում և կատարելագործում, կոոպերացիայի սկզբունքով գործող կառույցների խթանում, տնտեսական լծակների կիրառում, պետական ծրագրերի իրականացում:


Գյուղատնտեսությունում ստեղծված իրավիճակից ելնելով կարելի է եզրակացնել, որ ոլորտում ծագած խնդիրների լուծման համար հրատապ պահանջ է կոոպերացման գործընթացի զարգացումը: Հետևաբար ՀՀ գյուղատնտեսության պայմաններից ելնելով, նախընտրելի են՝

1. Գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվներ, որտեղ գյուղատնտեսական արտադրանքներ արտադրելու նպատակով միավորվում են գյուղատնտեսական հողերը, անասնազլխաքանակը, աշխատուժը և այլ միջոցներ:
2. Ոչ առևտրային կոոպերատիվներ, որտեղ մատուցվում են ծառայություններ, և ստացված շահույթն անդամներին տրվում է ծառայության պահին, իսկ փոքր բաժնեմասերն օգտագործվում են կոոպերատիվի կարողություններն ընդլայնելու համար:

Կոոպերատիվների տարբեր ձևերի ստեղծման և գործունեության խթանման նպատակն է՝ արտադրության ու սպառման բնագավառի խնդիրների ճշգրիտ լուծումը, արտադրության արդյունավետության բարձրացումը, կոոպերատիվի անդամների եկամուտների ավելացումը և կոոպերացիայի զարգացման նպաստավոր միջավայրի ձևավորումը: Կարևորվում է գյուղատնտեսական կոոպերատիվների դերը և առավելությունները գյուղատնտեսական արտադրանքի իրացման հարցում:

Գծապատկեր

ՀՀ գյուղատնտեսական հումքի (մթերումների) գնումների ծավալները 2009-2011թթ., հազ.տ



Տվյալները՝ գյուղ. նախարարության:

Հիմնավորված է, որ արտադրողների և վերամշակողների համագործակցությունը տալիս է դրական արդյունքներ, որին նպաստում են դրանց անխափան ապահովման համար ՀՀ գյուղատնտեսական հումքի մթերումների ծավալների ավելացումը, մասնավորապես պտղի, բանջարեղենի և խաղողի գծով (տես գծապատկերը):

Ըստ գծապատկերի պարզվում է, որ գնումների ծավալներում ամենաբարձր մեծությունը գրանցվել է 2008 թվականին խաղողի գծով՝ 137.4 հազ. տոննա, որն ըստ տարիների ունեցել է նվազման միտում, իսկ որոշ աճման միտում գրանցվել է բանջարեղենի գծով, որը 2008 թվականի 39.0 տոննայից, 2011 թվականին կազմել է 51.0 հազ. տոննա:

Միաժամանակ պետք է նշել, որ գյուղատնտեսական մթերքների (հումքի) ձեռքբերման գործընթացի կազմակերպման ուղղությամբ իրականացված նախապատրաստական աշխատանքների շնորհիվ այդ գործընթացը 2012 թվականին իրականացվել է առանց լուրջ խոչընդոտների, և արդյունքում միայն պտղի մթերման ծավալը կազմել է 25.5 հազ. տոննա, որը գերազանցում է 2011 թվականի մակարդակը 1.8 անգամ՝ 14,3 հազ. տոննայի փոխարեն: Նույն տարում ավելի քան 40 վերամշակող ընկերություններ իրականացրել են խաղողի մթերում 156.6 հազ. տոննայի չափով, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մթերման ծավալի 21.4%-ը, որը նույնպես դրական երևույթ է:

Չնայած որոշ դրական տեղաշարժերի, դեռևս կան դժվարություններ իրացման գործընթացում: Մասնավորապես, արտադրված արտադրանքի մի մասը սպառվում է տնտեսության

կարիքների համար, զգալի մասը ենթարկվում է ապրանքափոխանակության և տրվում է տնտեսության մեջ կատարված ծառայությունների դիմաց, իսկ մնացածը վաճառվում է վերամշակող ձեռնարկություններին և իրացվում շուկայում: Արտադրանքի մի մասն էլ վերցնում են վերավաճառողները ցածր գներով, իրենք ստանալով ավելի բարձր եկամուտ, քան արտադրողները: Այս դժվարությունները հաղթահարելու համար, անհրաժեշտ է արտադրողների և վերամշակողների միջև կնքել համագործակցության երկարաժամկետ պայմանագրեր, որոնք կօգնեն գյուղացիներին իրացման գործում:

Հայաստանի Հանրապետությունում գյուղացիներն աշխատում են մասնատված, որը բացասաբար է ազդում ապրանքային արտադրության կազմակերպման գործընթացի և դրա արդյունավետության վրա, դանդաղ են ընթանում կոոպերացման գործընթացները: Չնայած այդ բոլորին, որպես առաջընթաց, 2012 թվականին մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հայեցակարգի» նախագիծը, որում հստակեցվել են գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանման քաղաքականության հիմնական ուղղությունները: Արդյունքում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևավորմանը, որոնցից 19-ն արդեն պաշտոնապես գրանցվել են: Միաժամանակ համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագրի շրջանակներում հանրապետության 6 մարզում ստեղծվել են արոտօգտագործողների սպառողական 54 կոոպերատիվ, որոնցից 49-ը պաշտոնապես գրանցվել են:

Այժմ գործում է մոտ 112 կոոպերատիվ տարբեր մասնագիտացման ուղղվածությամբ, որոնք հիմնականում ձևավորվել են միջազգային կազմակերպությունների և վարկային ծրագրերի աջակցությամբ (տե՛ս աղյուսակը):

Աղյուսակ

ՀՀ մարզերում գյուղատնտեսական կոոպերատիվներն ըստ մասնագիտացման ուղղությունների

Կոոպերատիվների մասնագիտացման ուղղությունները		Մարզերն ըստ կոոպերատիվների մասնագիտացման ճյուղերի	
1. Կաթի մթերում	11. Կաթի մթերման կայան	Արագածոտն 7	1(5), 11(1),3(1),
2. Գյուղմթերք մատակարարող	12. Այգեգործություն	Արարատ 14	4 (4), 5 (2), 6 (5), 3 (1), 15 (1), 20 (1)
3. Չրի արտադրություն	13. Ծխախոտագործություն	Արմավիր 16	7 (16)
4. Պտղաբուծություն	14. Այծաբուծություն	Գեղարքունիք 3	8 (1), 5 (2)
5. Կաթի արտադրություն	15. Մսի արտադրություն	Լոռի 9	8(4), 9 (1), 16 (1), 17 (3)
6. Բանջարաբուծություն	16. Մեղրի արտադրություն	Կոտայք 7	12 (5), 8 (2)
7. Բուսաբուծություն	Գյուղ.մթերք վերամշակում 17. վերամշակում	Շիրակ 9	18 (9)
8. Անասնաբուծություն	18. Թռչնաբուծություն	Սյունիք 9	19 (6), 10 (2), 5 (1)
9. Կտավատի ձեթի արտադրություն	19. Ասոցիացիաներ	Վ. Չոր 23	16 (7), 7 (7), 12 (5), 13 (1), 8 (3)
10. Սերմի արտադրություն	20. Ջերմոցային տնտեսություն	Տավուշ 5	11 (5)
Ընդամենը			112

Հիմնականում այն իրագործվել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի, ԱՄՆ-ի գյուղատնտեսական դեպարտամենտի մարքեթինգի աջակցության ծրագրի, «ՕԲՄՖԱՄ» և այլ կազմակերպությունների աջակցությամբ:

Այս իրավիճակում գործող կոոպերատիվների գործունեությունն ունի սահմանափակ բնույթ, չի բխում երկրի պարենային անվտանգության ապահովման շահերից, և բացակայում է խթանման պետական քաղաքականությունը: Կոոպերատիվների ստեղծման տեմպերը անբավարար են, քանի որ կան արտադրական, տնտեսական և իրավական առումներով չլուծված խնդիրներ:

Հանրապետությունում կոոպերատիվի շարժման գործում բավականին ներդրում ունի 2001թ. հիմնադրված «Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը, որը որպես սպառողական կոոպերատիվներ անդամակցում են մոտ 1200 գյուղացիական տնտեսությունների հետ: Այսպես, օրինակ, ՀՀ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի մոտ 50 համայնքներում հիմնադրվել է «Համայնքների արտոգտագործողների միավորում», որպես սպառողական կոոպերատիվներ:

Կոոպերատիվների տարբեր ձևերի ստեղծման և գործունեության խթանման միջոցով անհրաժեշտ է նպաստել ագրարային ոլորտի արտադրության և սպառման հիմնախնդիրների լուծմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը և մասնակից անդամների եկամուտների ավելացմանը:

Հանրապետությունում կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը ագրարային ոլորտի մրցունակության բարձրացման և գյուղական աղքատության կրճատման հիմնական միջոցն է, որը պետական աջակցության խիստ կարիք ունի: Կոոպերատիվների տնտեսական խթանման և կայունության համար անհրաժեշտ են՝

1. կոոպերատիվների համար տեխնիկական միջոցների մատակարարման մատչելի վարկերի տրամադրում, լիզինգային մեխանիզմների կիրառում,
2. կոոպերատիվներին հանրապետություն ներկրվող գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրման առաջնահերթություն,
3. պայմանագրային հարաբերությունների խթանում՝ գյուղատնտեսական կոոպերատիվների և գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ու արտահանող, ինչպես նաև թունաքիմիկատներ, վառելանյութ, տեխնիկական միջոցներ մատակարարող ընկերությունների հետ:

Չնայած վերոհիշյալ բոլոր ցանկություններին, այնուհանդերձ իրականացվել են բավարար չափով միջոցառումներ հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման համար՝

1. Գյուղատնտեսական կոոպերատիվներին և ոլորտում համատեղ գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին, կոոպերատիվների գործունեությունը խթանելու նպատակով ճապոնական դրամաշնորհների հաշվին, մատչելի պայմաններով, ներմուծվել է 61 միավոր տրակտոր:
2. «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» վարկային ծրագրի շրջանակներում հանրապետության անասնաբուժությանը մասնագիտացված 5 մարզի 33 համայնքներում ձևավորվել են սպառողական կոոպերատիվներ: Դրանց համահունչ, գյուղատնտեսության նախարարության խորհրդատվական համակարգի աջակցությամբ նույնպես ձևավորվել են 22 գյուղատնտեսական տարբեր մասնագիտացմամբ կոոպերատիվներ:
3. ՀՀ կառավարությունը ընդունել է նախարարության կողմից մշակված «ՀՀ գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգը», որտեղ գյուղացիական տնտեսությունների խոշորացման համար կարևորվում է կոոպերացիայի խթանումը՝ նպատակային պետական քաղաքականության իրականացմամբ:

Այսպիսով՝ ագրարային ոլորտում կոոպերացիայի զարգացման համար, որպես նախապայմաններ, անհրաժեշտ է իրականացնել՝ իրավական դաշտի բարելավում, գյուղաբնակների վստահության ապահովում, երաշխիքների հաստատում, առաջադիմական ձևերի ներդրում, արտադրատնտեսական հարաբերությունների կատարելագործում և պետական աջակցության մեխանիզմների բարելավում:

**Ашот Баядян
Лена Ованнисян**

**Необходимость развития кооперации, проблемы и пути решения
стимулирования ее деятельности в сфере сельского хозяйства РА**

Аннотация

Опыт всех стран, вставших на путь рыночных отношений, свидетельствует о том, что дальнейшего развития сферы сельского хозяйства и тенденций повышения ее эффективности можно достичь в условиях новых форм хозяйствования, в частности кооперации и малого и среднего предпринимательства. Деятельности последних может способствовать оказание государственной поддержки, поскольку она является важным условием формирования среднего слоя общества, преодоления бедности, обеспечения занятости. Последовательная реализация подобной программы позволит сделать более эффективной деятельность аграрного сектора.

**Ashot Bayadyan
Lena Hovhannisyan**

**Necessity of improving cooperation in agriculture: issues on encouraging
cooperation and approaches to reach it**

Abstract

It is required to establish and develop various forms of cooperatives, unions and associations and companies in agriculture that should be declared as one of the priority directions of the policy of the government. This would encourage the development of the economic activity in villages, alleviation of poverty among rural residents and improving the wellbeing of rural residents. In order to develop cooperation in agriculture, as prerequisites, it is required to design and implement legislative changes, ensure confidence among rural citizens, affirmation of guarantees, improvement of contemporary practices, establishment of economic and production relations and improvement of state support mechanisms.

**ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԼՃԱԿՆԵՐԸ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Տնտեսության գլոբալացումն էապես փոխեց գյուղատնտեսության ոլորտը, քանի որ տեխնոլոգիաները և արտադրության աճը նպաստեցին գների շարունակական իջեցմանը, իսկ մյուս կողմից առևտրի ազատականացումը հանգեցրեց գյուղմթերքների առավել ցածր արտադրողականությանը և առավել բարձր արտադրողականությանը աչքի ընկնող երկրների միջև մրցակցության սրացմանը:

Ընդհանուր առմամբ ագրոբիզնեսի զարգացումը բնութագրվում է «արտադրող-վերամշակող-մատակարարում-սպառում» շղթայի բոլոր օղակներում մեծաքանակ մասնակիցների առկայությամբ և ինտեգրացիոն համակարգի ամրապնդմամբ: Պետական կարգավորման արդյունավետ լծակների բացակայությունը հնարավորություն է տալիս այդ շղթայի բոլոր մասնակիցներին ներազդելու շուկայի վրա, իրենց վրա չվերցնելով հնարավոր ռիսկերը՝ դրանք փոխանցելով ագրոբիզնեսի շղթայի մյուս մասնակիցներին, հատկապես այն մասնակիցներին, որոնք գտնվում են շղթայի սկզբում կամ վերջում: Տնտեսվարող սուբյեկտները, որոնք այս կամ այն չափով ազդում են ներքին և արտաքին շուկաների վրա, միջնորդներն ու մեծածախ գնորդներն են, ինչպես նաև վերամշակող կազմակերպությունները: Նշված բոլոր սուբյեկտները ստեղծում են ավելացված արժեք, ձգտելով առաջարկել այնպիսի արտադրանք, որն առավելապես կհամապատասխանի վերջնական սպառողների պահանջմունքներին և կարիքներին:

Ագրոբիզնեսում շղթայի յուրաքանչյուր մասնակից ծագում է նվազեցնել կամ բաշխել ռիսկերը, քանի որ դրանք կարող են հանգեցնել նախատեսված վերջնական արդյունքի ձեռքբերման կորստին: Նշված նպատակը հենվում է նաև տնտեսական շահույթի ստացման և բազմաթիվ հնարավոր ռիսկերի ազդեցության գնահատման վրա: Օրինակ, վերամշակող կազմակերպության համար ներդրումային նախագծի հետգնումը զգալիորեն կախված է նախագծի ողջ ընթացքում հումքի առկայությունից: Ոչ բարենպաստ կլիմայական պայմաններն ու գյուղատնտեսական հումքարտադրողների արտադրական հզորությունների փոփոխությունները կարող են ազդել վերամշակող կազմակերպության վերջնական արդյունքի վրա:

Հումքային շուկաների գլոբալիզացիան և առևտրային հարաբերությունների ազատականացումը հնարավորություն է տալիս վերամշակող կազմակերպություններին գնահատելու իրավիճակը և շուկայական փոփոխությունները, ինչը միշտ չէ, որ համապատասխանում է գյուղատնտեսական հումք արտադրողների տնտեսական պլաններին: Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների գործունեության, ինչպես նաև դրանց արտադրատեխնիկական սպասարկման վրա խիստ բացասաբար են ազդում նաև տեխնիկայի, վառելանյութերի, պահեստամասերի և նորոգման նյութերի պակասությունն ու բարձր գները, որոնք, իրենց հերթին, բարձրացնում են տեխնիկայի շահագործման ծախսերը, հետևաբար՝ նաև գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների և արտադրվող մթերքների ինքնարժեքը: Ուստի խիստ կարևոր է ուշադրություն դարձնել գնային մրցակցությանը ագրոբիզնեսի շղթայում, հատկապես գյուղատնտեսական հումք արտադրող և վերամշակող կազմակերպություն փոխհամագործակցության համատեքստում: Օրինակ՝ վերջնական արտադրանքի գների փոփոխությունը հնարավոր է նոր տեխնոլոգիաների ներդրման և կիրառման շնորհիվ, ինչի արդյունքում կազմակերպությունները կունենան մրցունակ արտադրանք և մուտք կգործեն նոր շուկաներ, իսկ մյուս շուկաներում, որտեղ որ առկա էր՝ կգրանցվի արտադրանքի վաճառքների աճ: Մրցունակ արտադրանքով նոր շուկաներ մուտք գործելուց, վերամշակող կազմակերպություններին հնարավորություն կընձեռվի զգալի չափով ավելացնել տվյալ արտադրանքի արտահանումը, ինչի արդյունքում կազմակերպությունը հումքի և նյութերի ավելի մեծ քանակների գնման ճանապարհով կկարողանա որոշ

չափով ազդել վերջնական գների վրա: Ինչպես նաև կարևոր է, որ վերամշակող կազմակերպությունները գտնվեն գյուղմթերք արտադրողներին մոտ, քանի որ լոգիստիկ ծախսերը բավականին մեծ ազդեցություն են թողնում վերջնական արտադրանքի գների վրա: Այդ առումով, արտադրողները պետք է լավ հասկանան և վերլուծեն գյուղմթերքի վերամշակման արտաքին և ներքին շուկաները:

Առանձնահատուկ խնդիր է ինչպես վերամշակող կազմակերպությունների գործունեության ռիսկի գնահատումը, այնպես էլ՝ այդ ռիսկերի հնարավոր կանխարգելման ու պետական կարգավորման մեխանիզմների վերլուծությունը:

Ելնելով ռիսկերի բնույթից և ազդեցության մեխանիզմներից, վերամշակող կազմակերպության ռիսկերը կարող ենք դասակարգել ըստ հետևյալ խմբերի՝

- Արտադրական ռիսկեր՝ կապված հումքի վերամշակման գործընթացի հետ,
- Սարքեթինգային ռիսկեր՝ կապված գնորդների պահանջումների, ինչպես նաև առաջարկվող ապրանքների գների հետ,
- Ֆինանսական ռիսկեր՝ կապված շահութաբերության, ֆինանսական ռեսուրսների արժեքի, գնաճի և այլ ֆինանսական գործիքների հետ,
- Իրավաբանական և ենթակառուցվածքային ռիսկեր¹:

Վերամշակող կազմակերպությունները երբեմն ձգտում են նվազեցնել արտադրական ռիսկերը՝ համագործակցելով հենց գյուղմթերք արտադրողների հետ: Նմանօրինակ համագործակցության վառ օրինակ է գյուղատնտեսական կառույցների ուղղահայաց ինտեգրացիան՝ արտադրական պայմանագրերի կնքմամբ: Պայմանագրերի կնքումը նվազեցնում է ռիսկերը, քանի որ նույն վերամշակող կազմակերպությունները կարողանում են պայմանագրեր կնքել արտահանվող երկրի կազմակերպությունների հետ՝ հիմք ընդունելով արտադրողների հետ կնքված պայմանագրում առկա մթերվող արտադրանքի քանակությունը և գները: Երկարաժամկետ հեռանկարում այդ համագործակցության տեսակները բոլոր կողմերին տալիս են կայունություն: Ինտեգրացիայի ու արտադրական պայմանագրերի բացասական կողմն էլ այն է, որ պայմանագիր կողմը պարտավոր է կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ անկախ շուկայում տիրող իրավիճակից: Ներկայումս գյուղատնտեսական հումք արտադրողները ձգտում են վաճառել իրենց ապրանքները շուկայում և խախտել պայմանագրային պարտավորությունները, եթե իրենց արտադրանքի գինը էապես տարբերվում է վերամշակող կազմակերպության հետ պայմանագրում ֆիքսված գներից: Այս ոլորտը կարգավորման կարիք ունի, քանի որ ապրանք արտադրողի կողմից պայմանագրի խախտումները վերամշակող կազմակերպություններին լուրջ ցնցումների է տանում, և երբ վերամշակող կազմակերպությունները չեն կարողանում կատարել իրենց պարտավորությունները ըստ իրենց արտահանման պայմանագրերի, ապա ըստ պայմանագրերի մեծ տուգանքներ են վճարում չնատակարարված արտադրանքի համար, բացի այդ տուգանքներից արտահանող կազմակերպությունները կորցնում են իրենց գործընկեր կազմակերպություններին և դուրս մնում շուկայից: Սակայն հետագայում էլ վերամշակողներն են իրենց հերթին գնում հակընդդեմ քայլերի, օրինակ՝ երբ հումքի շուկան հագեցված է լինում թարմ մթերքներով, ավելին, քան պահանջարկն է, վերամշակող կազմակերպությունները շուկայից հումքը ձեռք են բերում շուկայականից ցածր գներով²:

Այս հանգամանքները հաշվի առնելով շատ կարևոր է, որ ստեղծվեն կոոպերատիվներ, որոնք էլ, որպես իրավաբանական անձինք պայմանագրային փոխհարաբերությունների մեջ կմտնեն վերամշակող կազմակերպությունների հետ: Այս մոդելը գործում է տարբեր զարգացած երկրներում, ինչպես նաև կարող ենք փաստել, որ նման փոխհարաբերություններով ամբողջությամբ կարգավորվում է ոլորտը:

Վերամշակող կազմակերպությունները սովորաբար մեծ ուշադրություն են դարձնում արտադրական ռիսկերին, քանի որ իրենց գործունեության գլխավոր նպատակը համարում են

¹ Бартон Т.Л. Комплексный подход к риск-менеджменту: стоит ли этим заниматься: учебник - М: «Вильямс», 2003. – 257-265 с.
² Аграрные отношения: теория, историческая практика, перспективы развития. /Буздалов И.Н., Крылатых Э.Н., Никонов А.А. и др. М.,2007.

ապրանքի որակական ու քանակական հատկանիշները, ոչ թե ֆինանսական արդյունքը (ֆինանսական արդյունքը՝ շահույթի ստացումը, կարող է կարճատև արդյունավետություն ապահովել, եթե կազմակերպությունը չի շեշտադրում ապրանքի որակական ու քանակական հատկանիշները): Միննույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ մարքեթինգն է հիմնական խնդիրը գյուղատնտեսական ապրանք արտադրողի համար: Օրինակ՝ բացասական շահութաբերությամբ ապրանք վաճառելը դառնում է վարկերի ոչ ժամանակին հետվերադարձելիության պատճառ:

Ոչ բերքատու տարիներին, որոնք կապված են բնակլիմայական վատ պայմանների հետ, արտադրողները հնարավորություն ունեն վաճառելու իրենց արտադրանքը բարձր գներով: Այս դեպքում վերամշակողները իրենց ռիսկը թողնում են սպառողների վրա: Ինչ վերաբերում է վերամշակող կազմակերպության գործունեության ռիսկի քանակական գնահատմանը, ապա այն իրականացվում է շահույթի տատանման վերլուծությամբ: Իսկ շահույթի և դրա ստացման համար կատարված ծախսերի փոխկապվածությունը բնութագրվում է լևերիջի ցուցանիշով¹, որի ոչ մեծ փոփոխությունը կարող է բերել տնտեսական ցուցանիշների կամ արդյունքների էական փոփոխության:

Ջարգացած երկրներում գյուղատնտեսությունը դիտվում է որպես ռազմավարական ճյուղ և դրան ակտիվ աջակցություն է ցույց տրվում պետական բյուջետային միջոցներից: Որպես օրինակ՝ նշենք, որ Ավստրիայում գյուղատնտեսությանը պետության կողմից աջակցության չափը կազմում է գյուղմթերքների արժեքի 44, Կանադայում՝ 35, Եվրամիությունում՝ 38, Ֆինլանդիայում՝ 72, Շվեյցարիայում՝ 76, ԱՄՆ-ում՝ 27-40%-ը²:

Պետության աջակցությունը գյուղատնտեսությանն իրականացվում է բազմաթիվ եղանակներով ու միջոցներով: Գյուղատնտեսության պետական կարգավորումը նպատակ ունի՝

- ա) թուլացնելու բնակչության սոցիալական լարվածությունը,
- բ) կայուն գների միջոցով մի կողմից ապահովել ֆերմերների նվազագույն եկամուտը, մյուս կողմից թույլ չտալ արտադրության ծավալների այնպիսի կտրուկ փոփոխություններ, որոնք կարող են առաջացնել ճգնաժամային իրավիճակներ,
- գ) շրջակա միջավայրի պահպանության, գյուղմթերքներ արտադրողների և սպառողների անվտանգության ապահովման համար պահանջվում է պետական հսկողություն սահմանել հողօգտագործման համակարգի և մթերքի որակի վրա:

Թվարկված միջոցառումների իրականացման համար պետությունը տնտեսության կարգավորումն իրագործում է օրենսդրական, վարչական մեխանիզմներով և տնտեսավարման այնպիսի լծակներով, ինչպիսիք են՝

- բյուջետային դոտացիաների և հատուցումների վճարումը,
- ֆերմերային ցածր տոկոսադրույքը կամ երաշխալային վարկերի տրամադրումը,
- պետական գնման երաշխավորման սահմանումը,
- պետական նպատակային ծրագրերի մշակումն ու իրականացումը առանձին ճյուղերի և շրջանների համար,
- հողերի՝ ժամանակավոր կոնսերվացումը,
- գյուղմթերքների ներմուծման կամ արտահանման խրախուսումը և այլ միջոցառումներ՝ պայմանավորված երկրի առանձնահատկություններով:

Մի շարք երկրներում գյուղատնտեսական կազմակերպությունները առանձնացնում են մարքեթինգային և գնային ռիսկերը որպես ամենաէականներ, քանի որ այդ ռիսկերից է կախված հենց իրենց տնտեսությունների գործունեության ողջ արդյունքը: Շուկաների բնութագրականը և դրանց կազմակերպվածության աստիճանը ազդում է ռիսկերի փոխանցման հնարավորությունների և մակարդակի վրա: Կարող ենք առանձնացնել մի շարք գործոններ, որոնք բնորոշում են գյուղատնտեսական կազմակերպությունների մարքեթինգային և գնային ռիսկերի չափանիշները՝

- Արտադրողները իրենց արտադրանքը ներկայացնում են համեմատաբար ոչ ճկուն շուկաներ:

¹ Շահույթի տատանման թույլատրելի մեծությունն է, կամ միջակայքը, որից ավելի շեղումը կարող է բերել զգալի կորուստների:
² Ղազարյան Զ., Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության պետական կարգավորման հիմնական ուղղությունները (Ազրոգիտություն, 1997, N 5, էջ 236):

- Ուղղահայաց ինտեգրացիոն համագործակցությունը վերամշակողներին առաջարկում է ընդունելի գներ, կամ էլ գները որոշվում են շուկայում, որտեղ գերակշիռ դիրք ունեն մի քանի խոշոր կազմակերպություններ:
- Ագրոբիզնեսում ինտեգրացիան մեծացնում է ազդեցությունը շուկայում ընդգրկված գործընկերների շահերի վրա, բացառությամբ վերջնական արտադրանք թողարկող գյուղատնտեսական ապրանք արտադրողների և վերջնական սպառողների: Հունք արտադրողները ստիպված են ընդունել այն գները, որոնք առաջարկվում են վերամշակող կազմակերպությունների կողմից, կամ էլ պատրաստ են գտնելու արտադրանքի իրացման այլընտրանքային աղբյուրներ: Սպառողները կարող են գները համաձայնեցնել իրենց ցանկություններին և վճարունակությանը այս կամ այն մթերքները գնելու համար: Շուկայում ազդեցության շնորհիվ ինտեգրացիոն համակարգերը առավել մեծ հնարավորություն ունեն ազդելու շուկայի վրա, տեղափոխել իրենց համար անընդունելի ռիսկերը ագրոբիզնեսի շղթայի այլ օղակներ:
- Գյուղատնտեսական ապրանքների որոշակի հատվածներ դարձել են առավել կենտրոնացված, որի արդյունքում անհատ արտադրողը չի կարող ազդեցություն ունենալ շուկայի վրա: Այդպիսի փոքր արտադրողները հեռանում են շուկայից կամ դառնում են խոշոր ագրոբիզնեսի աշխատակիցներ¹:

Ապրանքների գների ռիսկի կառավարումն իրականացվում է ֆյուչերսային կամ սփոթ շուկաներում: Սովորաբար նման շուկաներում գերակշռում են մի քանի գնորդներ, որոնք արդյունավետ կարող են որոշել պայմանագրային հարաբերությունների պայմանները՝ գները, ապրանքի որակի հավաստագիրը, քանակը և այլն: Համապատասխանաբար, գների ձևավորումը նույնիսկ մեծ և տարողունակ շուկաներում իրականացվում է կամ ոչ մեծաքանակ պրոֆեսիոնալ սուբյեկտների կողմից, կամ էլ զանգվածային վերավաճառողների կողմից:

Ռիսկերի կառավարման և բաշխման հիմնական գործիքները հանդիսանում են «արտադրող-վերամշակող-մատակարարում-սպառում» շղթայի բոլոր մասնակիցների համար հավասար և անհրաժեշտ պայմանների ձևավորմամբ մրցակցության ապահովումը: Հետազոտական և կոնստրուկտորական գործունեության նպատակով ենթակառուցվածքային ներդրումները և պետական աջակցությունը էական նշանակություն ունեն գյուղատնտեսության զարգացման համար:

Կենտրոնացվածությունը հնարավորություն է տալիս բաշխել ռիսկերը հունք արտադրողներից և վերամշակողներից դեպի սպառողները: Նման հարաբերությունների ընթացքում կարող ենք վերհանել կենտրոնացվածության հետևյալ հիմնական արդյունքները՝

- Սպառողները հնարավոր է ունենան երեք տեսակի ռիսկեր՝ համապատասխան առաջարկի և տեսականու ստացման, ապրանքի անվտանգության և որակի, ինչպես նաև գների:
- Ապրանքի որակի և անվտանգության ռիսկը զգալիորեն կարող է կրճատվել ապրանքների պահպանման, վերամշակման և նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունքում:
- Ապրանքի որակի ռիսկի կրճատման նպատակով որպես տարածաշրջանային գործիքներ, պետական մարմինները կարող են մշակել ապրանքի անվտանգության և որակի նշաններ:
- Մանրածախ սպառողները սահմանափակ ազդեցություն ունեն շուկայի վրա, սակայն ինչպես և ապրանք արտադրողները նույնպես հանդիսանում են սուբյեկտներ, որոնք վճարում են շուկայում հաստատված գնի դիմաց: Այդ գինն արտահայտում է ծախսերը և շահույթը, որոնք մեծանում են կենտրոնացվածության արդյունքում և կրճատվում մրցակցության հետևանքով երկու մակարդակներում՝ մեծածախ ոլորտում (ապրանքի արտադրության ուղղահայաց ինտեգրացիա, վերամշակում) և մանրածախ ոլորտում (հորիզոնական ինտեգրացիա): Գյուղատնտեսության զարգացման և վերամշակող կազմակերպությունների փոխկապակցվածության համատեքստում ռիսկերի կառավարման համար տնտեսվարող սուբյեկտները կարող են օգտագործել տարբեր գործիքներ: Կախված նպատակներից և

¹ Скляр М.Г. Рыночные аграрные отношения сегодня. Ставрополь, 2007; стр 45-58.

կիրառման պայմաններից կարելի է առանձնացնել երեք հիմնական գործիքներ՝ կառավարչական որոշումներ, մասնավոր հատվածի ծառայություններ և պետական ծրագրեր: Այդ գործիքները կարող են կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ՝ մեկը մյուսի հետ համակցված:

Կարծում ենք, արտադրական ռիսկերի կառավարման ընթացքում օգնություն ցույց տալու նպատակով, վերանշակող կազմակերպությունները կարող են ստեղծել հատուկ գյուղատնտեսական ծառայություններ և տրամադրել խորհրդատվություն՝ գյուղմթերք արտադրողներին: Գյուղատնտեսական կազմակերպությունները կարող են կառավարել ռիսկի որոշակի տեսակներ ինքնուրույն, ընդունելով տարբեր կառավարչական որոշումներ¹: Ի հաշիվ կիրառվող արդյունավետ մեթոդներին, ղեկավարները կարող են զգալիորեն լավացնել սեփական կազմակերպության գործունեության արդյունավետությունը: Ռիսկերի կառավարման ընթացքում ընդունվող կառավարչական որոշումներն են՝

1. Ծախսերի և եկամուտների վերլուծություն և ռիսկերի գնահատում:
2. Արտադրամարքեթինգային ռազմավարություն (մասնագիտացում, դիվերսիֆիկացիա, պահուստների կառավարում, արտադրական և մարքեթինգային պայմանագրերի կնքում, ենթակառուցվածքների զարգացում, որակի կառավարում և սննդի անվտանգության ապահովում և այլն):
3. Ագրոբիզնեսի տարբեր կառույցներում մասնակցության գնահատում, ինտեգրացման աստիճանի կառավարում, ներդրումների իրականացում, միավորումների ձևավորում և այլն:

Գոյություն ունեն նաև պետական ծրագրեր, որոնք միտված են կայունացնելու ապրանքների շուկայում իրացվող գյուղատնտեսական արտադրանքի գները, կազմակերպությունների եկամուտները՝ կրճատելով ռիսկը²: Գյուղատնտեսության զարգացման նպատակով ռիսկերի կառավարման պետական ծրագրերը բաժանվում են հետևյալ խմբերի՝

- Արտադրողների վարկավորում և բերքի ապահովագրության ծրագրերի սուբսիդավորում:
- Վերաապահովագրական հիմնադրամների ձևավորում, ինչպես նաև անկանխատեսելի հետևանքների պատճառով ստացված վնասների փոխհատուցման համար հատուկ հիմնադրամների ստեղծում:
- Տեսչական ծառայությունների ձևավորում՝ ապրանքների որակի և անվտանգության վերաբերյալ տեղեկատվություն:
- Պահանջարկի խթանման ծրագրերի մշակում:
- Տրանսպորտային և ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի ներդրում:
- Հետազոտական գործունեության համար տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների տրամադրում:

Ավանդական մեթոդներով իրականացվող ծրագրերի և պետական մասնավոր համագործակցության միջև տարբերությունն այն է, որ մասնավոր պետական համագործակցության ընթացքում ռիսկերի առավել զգալի մասը մասնավոր ընկերությունը կիսում է պետության հետ: Միևնույն ժամանակ պետական մասնավոր համագործակցության ոչ ճիշտ կառուցվածքը կարող է պետությանը տանել բարձր ռիսկի՝ կապված երկարաժամկետ պայմանագրերի առկայության հետ պայմանավորված պետական մասնավոր համագործակցության ձևավորմամբ: Ելնելով ռիսկերի բաշխման հիմնական սկզբունքից՝ յուրաքանչյուր ռիսկ իր մեջ պետք է ունենա պատասխանատու կողմ, կարող է առավել արդյունավետ կառավարել այն: Այդ առումով, այն ռիսկերը, որոնք կապված են գյուղատնտեսության հետ՝ պետք է իր վրա կրի մասնավոր հատվածը, իսկ պետությունը պետք է կրի այն ռիսկերը, որոնք կապված են վերահսկողության հետ և առավել ակնհայտ են, որոնցից են օրինակ՝ քաղաքական ռիսկերը և նորմատիվ իրավական կարգավորման ռիսկերը: Գոյություն ունեն նաև ռիսկեր, որոնք պետական կառավարման մարմինները կարող են նվազեցնել, առանց իրենց վրա վերցնելու, օրինակ՝ պահանջարկի փոփոխության

¹ Скляр М.Г. Рыночные аграрные отношения сегодня. Ставрополь, 2007.

² Бляхман Л.С. Основы функционального и антикризисного менеджмента: учебник - СПб.: В.А. Михайлова, 1999. - 389 с.

կամ էլ մնացորդային արժեքի ռիսկերը: Տվյալ դեպքում պետությունը հանդես է գալիս որպես սպառող և մեծացնում պետական գնումները:

Պետական երաշխիքներն իրենցից ներկայացնում են գյուղատնտեսությունում կատարվող ներդրումների պետական աջակցության օրինական ձև, երբ պետությունը ունի առավել լիարժեք իրավունքներ կանխատեսելու և վերահսկելու ռիսկը, և հետևաբար, նվազագույնի հասցնել դրա հետ կապված ծախսերը: Դրանով հանդերձ, նմանօրինակ երաշխիքները առաջացնում են խնդիրներ, քանի որ բյուջետային գործընթացի սահմաններում դրանք սովորաբար չեն ենթարկվում ստուգման այնպիսի մակարդակում, ինչպես, օրինակ, մշտական ու կանոնավոր ծախսերի ընթացքում: Նշված խնդիրները խորանում են այն գործոններով, որ երաշխիքները հաճախ իրենց հետ բերում են զգալի ֆիսկալ հետևանքներ, որոնք ավելի են խորանում հատկապես ճգնաժամի ժամանակ: Այն նկատի ունենալով հատկապես կարևոր է ռացիոնալ հեռանկարային քաղաքականության մշակումը, որի նախապայմաններ է հանդիսանում հարկաբյուջետային քաղաքականության թափանցիկությունը:

Երաշխիքները պետք է մանրամասն գնահատվեն և ունենան սահմանափակվածություն՝ գործողության ժամկետի և ընդգրկվածության առումով: Մասնավորապես, պետական կառավարման մարմինները պետք է խուսափեն մեծ տարողունակություն ունեցող երաշխիքներից, մանավանդ այն դեպքում, երբ դա ավելի մեծ է քան անհրաժեշտ է առաջադրված նպատակներին հասնելու համար: Մասնակի երաշխիքները կարող են նպաստել մոնոպոլ ռիսկի առաջացմանը և նեգատիվ ընտրություններին:

Ներկայումս զարգացած երկրներում կիրառվում են ռիսկերի կառավարման նոր մոդելներ¹: Պետության նման քաղաքականությունը պահպանում են արտադրության աճը և դիվերսիֆիկացիան, խթանելով ռիսկերի կառավարման համար ռազմավարությունների կիրառումը: Գյուղատնտեսության զարգացման համատեքստում արտադրության մակարդակի պահպանման ու խթանման ծրագրերը և դրանց արժեքը, նախկինում առավել բարձր էր, քանի որ անտեսվում էին արտադրության զարգացման խթանները և չէին հենվում արտադրողների եկամուտների ավելացման վրա:

Գծապատկեր 1

Ռիսկերի պետական կառավարման պետական քաղաքականության ծակների փոփոխությունը, Կանադայի օրինակով

1980-ական թվականներ Պետական քաղաքականություն	Քաղաքականության փոփոխություն	Ռիսկերի կառավարման ծրագրեր
Ուշադրությունը շեշտադրել արտադրանքի արտադրության վրա		Չեննարկել միջոցներ արտադրության դիվերսիֆիկացման համար
Հենվել գների վրա		Հենվել եկամուտների և շահույթի վրա
Գնահատել մարզերի զարգացման աստիճանը		Ներդնել զարգացման ազգային ծրագրեր
Անտեսել առևտրային սկզբունքները		Չեզոք դիրք զբաղեցնել միջազգային առևտրի նկատմամբ

Կանադան, ազգային տնտեսության մասշտաբով կիրառում է ռիսկերի կառավարման նոր մոդել (գծապատկեր 1): Պետության կողմից ռիսկերի կառավարման ծրագրերը հենվում են ապրանք արտադրողների եկամուտների կայունացման վրա, ռիսկերի կառավարման ռազմավարության ներդրման, տնտեսվարման նոր պայմաններին ընկերությունների հարմարվողականության վրա՝ արտադրության նոր հնարավոր զարգացման ուղղությունների միջոցով: Ռիսկերի կառավարման ռազմավարության համատեքստում առանձնանում են երկու հիմնական ծրագրեր՝

- Արտադրողների եկամուտների կայունացման ծրագիր (ԵԿԾ-CIAS), որն իր մեջ ներառում է արտադրողների եկամուտների կայունացման համար անհրաժեշտ միջոցառումների

¹ Скляр М.Г. Рыночные аграрные отношения сегодня. Ставрополь, 2007.

համակարգ և անհրաժեշտության դեպքում տրամադրում է օգնություն՝ գյուղատնտեսական համակարգում մեկ միասնական միջոցների սահմաններում:

- Արտադրության ապահովագրություն: Այս ծրագիրն իրենից ներկայացնում է գործիքների ամբողջություն, որոնք դուրս են գյուղատնտեսական արտադրանքի ապահովագրության ավանդական ծրագրերից:

Հայաստանի ռիսկային գյուղատնտեսության պայմաններում անհրաժեշտ է առանձնացնել դրանց կանխատեսման, հնարավորինս կանխարգելման և հետևանքների հաղթահարման հետևյալ ուղղությունները.

1. գյուղատնտեսության փոխադարձ ապահովագրության համակարգի ներդրման աջակցություն,
2. հակակարկտային համակարգի ամբողջական վերականգնում և հատուկ ցանցերի տեղադրում, փորձնական ծրագրի իրականացում,
3. ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրում,
4. երաշտի և սակավաջրության պայմաններում ոռոգման ջրի օգտագործման կանոնակարգում,
5. հակահեղեղային և սողանքների կանխարգելիչ միջոցառումների իրականացում,
6. գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի կանխատեսման ու ծրագրավորման համակարգի ներդրում:

Պետությունը պետք է մշակի արդյունավետ մեխանիզմների լուծումներ, որոնք մեծ չափով կպայմանավորեն վերամշակող մթերքների երաշխավորված իրացումը և զարգացումը: Օրինակ, ներկայումս վերամշակման արդյունաբերությունում առկա խնդիրներից է վերամշակող ընկերությունների՝ վարկային ռեսուրսներով ապահովվածության ցածր մակարդակը:

Սատչելի պայմաններով վարկային ռեսուրսների պակասը հնարավորություն չի տալիս պահանջվող ծավալներով մթերումներ իրականացնել, կատարել տեխնոլոգիական վերազինում: Առկա բազմաթիվ խնդիրներից պետք է կենտրոնանալ նրանց վրա, որոնց կարգավորման ուղղությամբ հնարավոր է որոշակի միջոցառումներ նախաձեռնել:

Քանի որ գյուղատնտեսությունը ըստ էության արտադրություն է բաց երկնքի տակ, այն ենթարկվում է կարկուտի, երաշտի, ցրտահարությունների, հեղեղների և այլ բնական աղետների, ուրեմն ավելի քան կարիք ունի ապահովագրության:

Ի՞նչ որն է խնդիրը, որ Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության համակարգը մինչ օրս չի գործում: Պատասխանը միանշանակ է, այս ոլորտում ռիսկերը մեծ են, և ապահովագրական ընկերությունների համար այս ոլորտը գրավիչ չէ: Այսպիսի վիճակը բնութագրական է ոչ միայն Հայաստանի, այլև աշխարհի բազմաթիվ երկրների համար: Գյուղատնտեսության ապահովագրությունը շահավետ գործունեություն չէ, և այս ոլորտում սահմանափակ թվով ապահովագրական ընկերություններ են ներգրավված:

Ի դեպ, այս դժվարություններով հանդերձ, Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության հարցը, թե՛ գիտական, և թե՛ գործնական առումով ամենաշատ քննարկվող հարցերից է: Այս հարցին լուծում տալու համար հարկավոր է ապավինել միջազգային փորձին: Իսկ միջազգային փորձը վկայում է, որ գյուղատնտեսության ապահովագրությունը պահանջում է պետական աջակցություն:

Հայաստանում, որպեսզի հնարավոր լինի քիչ թե շատ գրավիչ դարձնել այս ոլորտը, պետք է լուծվի մի քանի խնդիր: Նախ՝ առաջին հերթին պետք է կարգավորվի իրավաօրենսդրական դաշտը: Ծիշտ է Հայաստանում գործում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, սակայն սա ընդհանուր օրենք է, իսկ գյուղատնտեսությունն ունի իր առանձնահատկությունները, և պետք է այդ առանձնահատկություններն ինչ-որ կերպ նորմավորել, որպեսզի ապահովագրական ընկերությունները երաշխիք ունենան գործելու այս դաշտում: Խիստ կարևոր է, որպեսզի լուրջ ուշադրություն դարձվի ռիսկերի կանխարգելմանը: Վերջին ժամանակներս այս առումով որոշ աշխատանքներ տարվել են, և շատանում են հակակարկտային համակարգերը, կառուցվում են ջրագծեր և այլն: Վերջերս մեզ մոտ տնկվում են նոր այգիներ, որոնք պաշտպանվում են հատուկ ցանցի միջոցով, ինչը բավականին լայն տարածում

ունի ԵՄ-ում, ԱՄՆ-ում և այլ զարգացած երկրներում, բնականաբար ապահովագրական ընկերության տեսանկյունից այսպիսի այգիների ապահովագրությունը շահավետ է և քիչ ռիսկային:

Եվրոպական և ամերիկյան երկրների փորձը ցույց է տվել, որ գյուղատնտեսությունը հնարավոր չէ զարգացնել՝ առանց վարկավորման համակարգի արդյունավետ կիրառման: Հայաստանը ևս որդեգրելով այդ ռազմավարությունը՝ գյուղացիներին հնարավորություն ընձեռեց օգտվելով վարկային միջոցներից՝ հիմնել ու զարգացնել սեփական բիզնեսը: Այդ նպատակով հիմնվեցին գյուղական տարածքներում փոքր և միջին արտադրողների ու ձեռնարկատերերի համար համապատասխան ֆինանսական միջոցներն առավել մատչելի դարձնելու և վարկային քաղաքականությունը կարգավորելու առաքելություն ունեցող ընկերություններ:

Դրանցից մեկն էլ 2005 թ. հիմնված և այսօր ՀՀ ֆինանսների նախարարությանը կից գործող «Գյուղական ֆինանսավորման կառույց-ծրագրերի իրականացման գրասենյակ» (ԳՖԿ-ԾԻԳ) պետական հիմնարկն է: Այն ստեղծվեց գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և ՀՀ-ի միջև կնքված «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագրի իրականացման պայմանագրով՝ նպատակ ունենալով խթանել գյուղատնտեսական գործունեությունը: Գրասենյակը համագործակցում է ԳԶՄՀ (IFAD) և Համաշխարհային բանկի զարգացման միջազգային ընկերության հետ:

Гамлет Тадевосян

Вопросы управления рисками и рычаги государственного регулирования в сфере развития сельского хозяйства

Аннотация

В данной статье рассматриваются вопросы управления возможными рисками, связанными с промежуточными звеньями агробизнес цепочки, а именно: снижения рисков и применения распределительных механизмов. Отмечаются рычаги регулирования и государственного воздействия, упоминается также международный опыт в данном секторе. В частности, описаны применяемые государством программы которые направлены на стабилизацию рыночных цен на сельскохозяйственную продукцию и прибыли организаций, которые ведут к снижению рисков.

Hamlet Tadevosyan

The role of risk management and state regulation levers in developing the agriculture

Abstract

The article examines the management of possible risks associated with the intermediary elements of the agribusiness value chain, namely, lowering risks and application of allocation mechanisms. The article presents levers of state regulation and interventions, and addresses best practices worldwide. In particular, it describes the programs implemented by the government aimed stabilizing the market prices of agricultural products and profits of companies as well, resulting in low level of risks.

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ¹

Ազգային նորարարական համակարգի կայացման գործընթացում նորարարությունների ներդրման գնահատումը արդի կարևորագույն հարցերից մեկն է: Այս հարցի քննարկման արդյունքները վերջին տասնամյակում հիմք են ծառայում երկրի գիտական ներուժի գնահատման, երկրում նորարարական քաղաքականության ներդրման և իրականացման համար: Որքան երկրում ակտիվ է նորությունների ներդրումն ու նոր ապրանքների առևտրայնացումը, այնքան ավելի մեծ են երկրի հնարավորությունները միջազգային ասպարեզում ունենալու մրցակցային առավելություններ, ավելացնելու հայրենական արտադրանքի արտահանումը և ապահովելու տնտեսական աճ:

Ինչպես հայտնի է, գիտության և տեխնոլոգիաների զարգացումը և նորությունների ներդրումը բավական ծախսատար են, և կազմակերպությունները չեն հիմնվում միայն սեփական գիտական ներուժի վրա: Դրա փոխարեն լայն կիրառություն է ստացել գիտական արդյունքների ձեռքբերումը ներկրման (sourcing-in) միջոցով, ինչպիսիք են լիցենզիաների ձեռքբերումը, համատեղ հետազոտությունները, այլ ինստիտուտների հետազոտությունների արդյունքների գնումը և այլն: Նման զարգացման միտումները նպաստում են նորությունների տարածմանը և նորարարական ցանցերի ձևավորմանը նաև համացանցի միջոցով, որոնք միավորում են արդյունաբերությունը, ուսումնական հաստատությունները և հնարավորություն ընձեռում նորարարներին հաստատելու կապեր և առևտրայնացնելու իրենց գյուտերը և նորությունները:

Նոր գաղափարների և նորությունների առևտրայնացումը իրականում հետազոտությունների արդյունքների և տեխնոլոգիաների առևտրայնացման մի ամբողջական համակարգ է, որը ներառում է ֆինանսական ինստիտուտները (վենչուրային կազմակերպություններ, բիզնես հրեշտակներ, միջազգային օժանդակող կազմակերպություններ), լիցենզավորման և արտոնագրման հաստատությունները, հետազոտական ինստիտուտները, ուսումնական հաստատությունները, ինչպես նաև ձեռնարկությունները, որոնք ի վերջո դառնում են նոր տեխնոլոգիաների վերջնական կիրառողները:

Միջազգային ասպարեզում առանձնանում են նորարարությունների տարածման երեք հիմնական միտումներ: Նախ տեխնոլոգիաների առևտրայնացումը աճել է համալսարանների շրջանակներում, որին նպաստել են մի շարք իրավաօրենսդրական ակտեր (օրինակ՝ 1980թ. ընդունված Բահ-Դոլեի ակտը (Bayh-Dole Act) ԱՄՆ-ում և նմանատիպ մի շարք օրենքներ Եվրոպայում)²: Հաջորդ հաջող փորձը վերաբերում է կառավարական ծրագրերին, որոնք նպաստում են նոր տեխնոլոգիաների ներդրման (օր. ԱՄՆ-ի Առևտրի զարգացման դեպարտամենտի Առաջադեմ տեխնոլոգիաների ծրագիր/Advanced Technology Program կամ Մեծ Բրիտանիայում “Small Firms Merit Award for Research and Technology Programme”): Եվ վերջին հատկանշական միտումը կառավարություն և բիզնես համագործակցությունն է (գիտական կենտրոններ, տեխնոպարկեր), որտեղ պետության ներդրումային ծրագրերը աջակցում են հետազոտությունների առևտրայնացմանը:

¹ Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՀՀԲՀՀ – 2011, ՔԵ-009 «Հայաստանի և Բելառուսի շուկայի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը, ուղղված երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներդրվածանը, աղապատացմանը և ներդրմանը» թեմայի ֆինանսավորման շրջանակներում:

² OECD (2003). Turning Science into Business, Patenting and Licensing at Public Research Organisations. Paris: OECD.

Նորարարությունների և տեխնոլոգիաների առևտրայնացման նման միտումները հնարավորություն են տալիս բարձրացնել նորարարության կառավարման և քաղաքականության հարցերը, քանի որ դրանք նպաստում են այն փոփոխություններին, որոնք իրենց հերթին ազդեցություն են թողնում համալսարանների, կազմակերպությունների և կառավարության վրա: Համալսարանների և հետազոտական ինստիտուտների համար առևտրայնացումը նշանակում է կառավարության կողմից ներդրումների փոխհատուցման մակարդակի բարձրացում, որը իր հերթին աստիճանաբար նպաստում է համալսարանների ինքնաֆինանսավորման ավելացմանը: Այստեղ հիմնական չպարզաբանված հարցերից է համալսարան-արդյունաբերություն փոխհարաբերությունը, թե՛ ինչպես հետազոտությունները տեղափոխել դեպի շուկա, այսինքն՝ տեխնոլոգիաների առևտրայնացումը:

Չնայած առկա է բազմաթիվ գրականություն, թե ինչպես են նորարարությունները լիցենզավորվում, արտոնագրվում կամ ստեղծվում վենչուրային կազմակերպություններ և ռազմավարական միավորումներ, մենք դեռևս ունենք անբավարար տեսական և փորձնական արդյունքներ, որոնք ընդգծում են հիմնական գործընթացը, թե ինչպես են կառավարվում գիտական հետազոտությունները, ինչպես են գնահատվում դրանց արդյունքները, և ինչպես է իրականացվում տեխնոլոգիաների առևտրայնացումը տարբեր ինստիտուտների միջև:

Տարբեր մակարդակների ուսումնասիրությունները այս հարցում կարող են օգտակար լինել այս գործընթացի առանձնահատկությունները բացահայտելու, սակայն՝ ոչ լիարժեք գնահատելու համար: Օրինակ՝ ստեղծագործական ձիրքի զարգացմանն ուղղված դասերը շեշտադրում է ուսուցումը, ուսումնասիրությունը և տարբեր բացահայտումների հետազոտումը, բայց բաց է թողնում հիմնական խնդիրը՝ դրանց կապը արժեքավոր նորարարության ստեղծման հետ: Նույն կերպ գիտելիքի և նորարարության մասին գրականությունը շեշտադրում են նորարարության հատկորոշման և սեփականության կառավարման հարցերը, բայց բացառում են կազմակերպչական գործընթացի խթանիչ ուժերը:

Նկատենք, որ արտոնագրման գործընթացի մասին գոյություն ունի բազմաթիվ գրականություն, սակայն քիչ է այն բանի հիմնավորումը, թե ի՞նչն է խթանում կամ ինչպես խթանել գյուտարարին արտոնագրելու իր նորարարությունը: Մինչ բազմաթիվ ուսումնասիրություններ քննարկում են տեխնոլոգիական փնջերի (քլաստերների), վենչուրային կազմակերպությունների և այլ նման ինստիտուտների կառուցվածքը և գործողության մեխանիզմը, բաց են թողնված դրանց փոխկապվածության և դրանից բխող տեխնոլոգիական անցման կառավարման, տեխնոլոգիական դիֆուզիայի ամփոփ ցուցանիշների մշակման, արդյունավետության գնահատման հիմնահարցերը:

Այս հիմնահարցերի քննարկումը առկա է մի շարք ժամանակակից տնտեսագետների մոտ, որոնց հետազոտությունները կարող են արժեքավոր հիմք հանդիսանալ հետագա գիտահետազոտական ուսումնասիրությունների համար: Նման հետազոտություններից են Ջ. Ջորջի, Ռ. Կոթայի և Յ. Ջենգի հետազոտությունը, որը հիմք հանդիսացավ կազմակերպությունների ուսուցման (*organizational learning theory*) և դինամիկ ընդունակությունների (*dynamic capabilities theory*) տեսությունների ձևավորման¹ համար: Ջ. Վեստի ուսումնասիրությունները հենք հանդիսացան գիտելիքի տարածման տեսության (**knowledge spillover theory**) ձևավորման համար²: Տ. Կեյլը, Ե. Աուտիոն, Ջ. Ջորջը քննարկել են այն հարցը, թե որ ուսուցման գործընթացներին են դիմում ընկերությունները, որպեսզի նորարարությունները հարմարվեն և նպաստեն դինամիկ զարգացման ընդունակությունների ընդլայնմանը, և ո՞ր գործոններն են ազդում այս ընդունակությունների միջազգայնացմանը (դինամիկ ընդունակությունների տեսություն)³: OECD-ի կողմից մի շարք վերլուծություններ ներկայացնում են նորարարությունների առևտրայնացման հետ կապված ցուցանիշների մշակումը, որոնք նպաստել են գիտության ոլորտում որոշակի համենա-

¹ George, G., Kotha, R. and Zheng, Y. (2008). "Entry into insular domains: a longitudinal study of knowledge structuration and innovation in biotechnology firms". *Journal of Management Studies*, 45, 1448–74.

² West, J. (2008). "Commercializing open science: deep space communications as the lead market for Shannon Theory, 1960–73". *Journal of Management Studies*, 45, 1506–32.

³ Keil, T., Autio, E. and George, G. (2008). "Corporate venture capital, disembodied experimentation and capability development". *Journal of Management Studies*, 45, 1475–505.

տականների ձևավորմանը¹: Դ.Սիգելը ունի մի շարք հետազոտություններ, որոնք կապված են տեխնոլոգիաների առևտրայնացման հետ կապված տվյալների հավաքագրմանը և վերլուծությանը, ինչպես նաև համալսարաններում տեխնոլոգիական առևտրայնացման հարցերի քննարկմանը²:

Ուսումնասիրելով վերոնշյալ աղբյուրները՝ տեխնոլոգիաների փոխանցման/առևտրայնացման գործընթացը հնարավոր է ներկայացնել երեք հիմնական մակարդակներում՝

- Ներքին մակարդակ:
- Մասամբ ներքին մակարդակ:
- Արտաքին մակարդակ:

Դիտարկենք այդ մակարդակներից յուրաքանչյուրը: **Ներքին մակարդակում** տեխնոլոգիաների առևտրայնացումը իրականացվում է երկու ինստիտուտների՝ համալսարանների և ընկերությունների միջև: Վերջին միտումների համաձայն՝ համալսարանները, ավելի՛ քան ընկերությունները, բախվում են տեխնոլոգիաների առևտրայնացման հետ կապված հակասական պահանջումների բավարարման խնդրին: ԱՄՆ-ում և Եվրոպայում այս հարցով հիմնականում զբաղվում են համալսարանների՝ տեխնոլոգիաների գծով կառավարիչները, ինչպես նաև տեխնոլոգիաների լիցենզավորմամբ կամ արտոնագրմամբ զբաղվող գործակալները: Նմանատիպ ազենտները «կամուրջ են» ծառայում հաճախորդների (ձեռնարկությունների/ֆիրմաների) և մատակարարների (գիտնականների կամ հետազոտողների) միջև, որոնցից յուրաքանչյուրը գործում է բացառապես տարբեր միջավայրում, ունի տարբեր նորմեր, ստանդարտներ և արժեքներ: Հայաստանում այս դերը հիմնականում ստանձնում է դասախոսական կազմը: Այն ինստիտուցիոնալ միջավայրը, որում գործում են տեխնոլոգիաների առևտրայնացմամբ զբաղվող ազենտները, բավականին կրիտիկական դեր են խաղում առևտրայնացման արդյունավետության ապահովման գործում:

Այս խնդրի վերլուծությունը և առողջ միջավայրի ինստիտուցիոնալ ապահովումը տեխնոլոգիական ազենտների գործունեության համար կարող են հիմք ծառայել նորարարությունների առևտրայնացման արդյունավետության բարձրացման հարցում: Հատկապես հայաստանյան պարագայում տեխնոլոգիաների առևտրայնացումը համալսարաններից դեպի ձեռնարկություններ տեղի են ունենում ոչ կանոնակարգված, այլ ինքնաբերաբար:

Կազմակերպությունները և համալսարանները տեխնոլոգիաների առևտրայնացման համար հիմնվում են նաև, այսպես կոչված, «**մասամբ ներքին գործունեության**» վրա: Նման գործունեության կարևորագույն գործոն է համարվում բիզնես ինկուբատորը, որը սահմանվում է որպես կառավարության կողմից ստեղծված կազմակերպություն, որի նպատակն է մեծացնել ձեռնարկատիրական նախաձեռնությունների բարելավումը և աճը՝ բիզնեսին աջակցման, ռեսուրսների և ծառայությունների տրամադրման միջոցով: Բիզնես ինկուբատորների հիմնական նպատակներից են համարվում տնտեսական զարգացումը (հատկապես աշխատատեղերի ստեղծումը և ռեգիոնալ տնտեսությունում տարբեր ընկերությունների աճը), տեխնոլոգիաների առևտրայնացումը և ձեռնարկատիրության զարգացումը:

Իրենց հերթին արևմտյան շատ համալսարաններ իրենց կից ստեղծում են ինկուբատորներ, որպեսզի խթանեն սկսնակ բիզնեսի (**start-up**) ստեղծումը, որոնք նպատակ ունեն ներդնելու համալսարանական սեփականություն համարվող տեխնոլոգիաները կամ նորույթները: Համաձայն Պ. Պանի և Դ. Սիգելի³ հետազոտության ինկուբատորները ամենաարդյունավետն են աշխատում, երբ համալսարաններում առկա են լրացուցիչ ինովացիոն համակարգ, որը նրանք կոչել են «ձեռնարկատիրական համալսարան»: «Լրացուցիչ ինովացիոն համակարգ»-ը իր մեջ ընդգրկում է ինկուբատորներ, գիտատեխնիկական տեխնոպարկեր, բիզնես «հրեշտակներ», միջնորդ

¹ OECD (2003). *Turning Science into Business, Patenting and Licensing at Public Research Organisations*. Paris: OECD.

OECD (2009). *Patent Statistics Manual*, Paris: OECD.

² Siegel, D. (2003). "Data requirements for assessing the impact of strategic research partnerships on economic performance: analysis and recommendations". *Technology Analysis and Strategic Management*, 15, 207–25.

Siegel, D. S., Veugelers, R. and Wright, M. (2007). "Technology transfer offices and commercialization of university intellectual property: performance and policy implications". *Oxford Review of Economic Policy*, 23, 640–60.

³ Phan, P. and Siegel, D. S. (2006). "The effectiveness of university technology transfer: lessons learned, managerial and policy implications, and the road forward". *Foundations and Trends in Entrepreneurship*, 2, 77–144.

ծեռնարկատերեր (առևտրում փորձառու այն ազենտները, որոնք սկսել են իրենց ձեռնարկատիրական կարիերան գիտական մակարդակից), համալսարանի շրջանավարտներ:

Համաձայն վերը նշված հեղինակների՝ նորարարական համակարգերը առավելագույնս արդյունավետ են աշխատում, երբ վեներաբլիս ձեռնարկատերերը և այն ազենտները, որոնք ունեն արդյունաբերության հետ ուժեղ կապ, ընդգրկված են ինկուբատորների ձևավորման և գործունեության մեջ: Հայաստանյան պարագայում նման մակարդակը գրեթե բացակայում է, և որպես օրինակ կարող ենք բերել եզակի դեպքեր (օրինակ Սինոփսիս Արմենիա կազմակերպությունը)¹:

Հետազոտությունների և տեխնոլոգիաների առևտրայնացման հաջորդ մոտեցումը (**արտաքին մակարդակ**) վերաբերում է ավելի լայն մասշտաբի ինստիտուցիոնալ համակարգին: Այն ընդգրկում է համալսարանական տեխնոպարկերը, ռեզիդնալ քլաստերները/փնջակապերը, ակադեմիական սկսնակ բիզնեսը, լիցենզավորումը, պայմանագրային հետազոտությունները և խորհրդակցությունը, համատեղ վեներաբլիս կազմակերպությունները և միավորումները: Քննարկենք սրանցից յուրաքանչյուրի դերը տեխնոլոգիաների առևտրայնացման գործում:

Գիտական տեխնոպարկերը և ինկուբատորները՝ կառավարության կողմից ստեղծված կազմակերպություններ են, որոնց հիմնական նպատակը բիզնես գործընթացների արագացումն է (աքսելերացիան), որը հնարավորություն է տալիս կուտակել գիտելիքը, ուղղորդել այն և համատեղ օգտագործել ռեսուրսները²: Ի տարբերություն ինկուբատորների, որոնք առաջարկում են բիզնեսի աջակցման ծառայություն նորաստեղծ ընկերություններին, գիտական տեխնոպարկերը նախատեսված չեն նորաստեղծ ընկերությունների կամ բիզնեսի զարգացման համար: Դրանք սովորաբար լինում են լայնամասշտաբ նախագծեր, որոնք փոխկապակցում են տարբեր ոլորտներ և կազմակերպություններ՝ կորպորատիվ միավորումները, կառավարական լաբորատորիաները և փոքր ու միջին բիզնեսը: Միևնույն ժամանակ այս ինստիտուտները ունենում են դրական ազդեցություն և շահում են բարձր տեխնոլոգիական (high-tech) ձեռնարկությունների և վեներաբլիս կապիտալի հետ փոխկապակցման և փոխհամագործակցության արդյունքում:

Նորարարական նման պլատֆորմը և փոխկապակցվածությունը տարբեր ինստիտուտների միջև միանշանակ օժանդակում և նպաստում են տեխնոլոգիաների առևտրայնացմանը, սակայն նման տեխնոպարկերի արդյունավետության գնահատումը կամ դրա ազդեցությունը համագործակցող ինստիտուտների վրա շատ դժվար է գնահատել և որոշել չափորոշիչներ:

Համալսարանում հետազոտությունների մասշտաբն ու խորությունը կարևոր նշանակություն ունեն տեխնոլոգիաների առևտրայնացման հնարավորությունների մեծացման հարցում: Օրինակ՝ միջին մակարդակի համալսարանները, որոնք գտնվում են քաղաքներից որոշակի հեռավորության վրա, սովորաբար ունեն սակավ ռեսուրսներ գիտահետազոտական արդյունքների ստեղծման և դրանց առևտրայնացման համար: Հետևաբար ռեզիդնալ փնջակապերի ձևավորումն և զարգացումը մի մեխանիզմ է, որը օգնում է համալսարաններին հաղթահարել սահմանափակ ռեսուրսները և բարելավել տնտեսական ցուցանիշները տվյալ շրջանում: Իրականում փորձը ցույց է տալիս, որ տեխնոլոգիական անցումը ավելի արդյունավետ են մեծ քաղաքներում և բարձր գիտահետազոտական մակարդակ ունեցող շրջաններում: Եվ չնայած, որ ռեզիդնալ փնջակապերը գիջում են տեխնոլոգիաների առևտրայնացման արդյունավետությամբ, այնուամենայնիվ, նրանք հեշտացնում են համալսարանների և արդյունաբերության համագործակցությունը ինչպես տվյալ շրջանում, այդպես էլ դրանցից դուրս: Նրանք ընդգրկում է տեխնոլոգիաների առևտրայնացմամբ զբաղվող ազենտներին, ստեղծում հասարակական հետազոտական լաբորատորիաներ, ներգրավում վեներաբլիս կապիտալ ֆոնդեր և այլն:

Գիտական սկսնակ ձեռնարկությունները (**academic spin-offs and start-ups**) նեղ սահմանմամբ նոր ձեռնարկություններ են, որոնք գործում են համալսարանների կամ կորպորացիաների կողմից տրամադրված լիցենզիայով՝ հիմք ընդունելով մտավոր սեփականությունը: Կորպորացիան կամ համալսարանը կարող է ունենալ գիտական սկսնակ ձեռնարկության սեփականության իրավունք, որը ձեռք է բերվում արտոնագրային իրավունքի օգտագործման դիմաց կամ

¹ www.synopsys.am

² Phan, P., Siegel, D. S. and Wright, M. (2005). "Science parks and incubators: observations, synthesis and future research". *Journal of Business Venturing*, 20, 165–82.

լիցենզավորման ծախսերը փոխհատուցելու նպատակով¹: Կախված ինստիտուցիոնալ համակարգից համալսարանը կամ հետազոտողները կարող են ունենալ որոշակի մասնաբաժին նորաստեղծ ձեռնարկությունից: Որոշ երկրներում նման սկսնակ ձեռնարկությունների ստեղծումը իրականացվում է նաև պետական միջամտությամբ:

Այնուամենայնիվ համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ սրանց մեծ մասին իրականում չի հաջողվում ծառայել ազգային շուկային, չնայած կան եզակի կազմակերպություններ, որոնք ունենում են հսկայական հաջողություններ (օրինակ՝ Google): Գիտական սկսնակ ընկերությունների մեկ այլ դրական ազդեցություն է՝ գիտական աշխատատեղերի ստեղծումը և եկամուտների ձևավորումը²:

Ընկերությունները օգտվում են լիցենզիաներից տարբեր պատճառներով: Այդ պատճառներից են արտաքին գաղափարների և տաղանդի կիրառումը, նաև գաղափարների և տեխնոլոգիաների կիրառումը, ռիսկերի նվազեցումը, որոնք կապված են գիտահետազոտության հետ և այլն: Նման ռազմավարությունը ընկերություններին թույլ է տալիս ավելացնել իրենց նորարարությունների արագությունը, մասշտաբը և ազդեցությունը շուկայի վրա:

Վերջին տարիներին հատկապես արևմտյան համալսարաններում զգալի աճ է նկատվում իրենց գյուտերի լիցենզավորման տրամադրման առումով, սակայն, քանի որ համալսարանները հաշվետու են տարբեր շահագրգիռ կողմերին, իրենց լիցենզավորման տրամադրման նպատակները շատ ժամանակ լինում են բարդ և բազմանպատակային, քան ընկերությունների մոտ: Պետական համալսարանները այս առումով ավելի քիչ ճկուն քաղաքականություն ունեն, քան մասնավոր համալսարանները: Ավելին, ուսումնասիրելով պատմությունը կարող ենք նկատել, որ պետական համալսարանները ավելի քիչ են կենտրոնացնում տեխնոլոգիական անցման կամ առևտրայնացման վրա, որպես եկամտի աղբյուր, քան մասնավոր համալսարանները, քանի որ դրանք ունեն կայուն ֆինանսական օժանդակություն պետության կողմից:

Չնայած որ լիցենզավորումից եկած եկամուտները այնքան էլ մեծ չեն համալսարանների համար, սակայն դրանց արժեքային գնահատումը, ինչպես նաև արդյունավետության համեմատումը համեմատաբար չափելի են և հաշվարկելի:

Պայմանագրային հետազոտությունը և խորհրդատվությունը նույնպես ճանապարհ է հարթում դեպի հետազոտությունների և տեխնոլոգիաների առևտրայնացումը և կարող է բավական մեծ եկամտի աղբյուր դառնալ, սակայն ազդեցության և դրանց չափման որոշիչների գնահատումը բավականին բարդ է: Ընկերությունների համար պայմանագրային հետազոտությունը նպաստում է նոր գիտելիքի ներգրավման և գիտահետազոտական ներուժի մեծացմանը: Առևտրայնացման այս եղանակը ավելի բարենպաստ և արդյունավետ է դառնում, երբ համալսարանները ունենում են հետազոտական արդյունքների կենտրոններ: Նման օրինակ կարող ենք բերել Բելգիայում Բրուադ Բենդի Տեքնոլոջի ինստիտուտը (Institute for Broad Band Technology), որը միավորել է շուրջ 600 հետազոտողների՝ տարբեր համալսարաններից և գիտական կենտրոններից: Կենտրոնը բաղկացած է մի քանի մասնագիտացված հետազոտական խմբերից, որոնցից յուրաքանչյուրը կենտրոնացված է շուկայում գործող ընկերությունների փոփոխական պահանջումների բավարարմանը:

Գիտության և հետազոտությունների ծախսերի նվազման միտումներով շատ կազմակերպություններ և նույնիսկ՝ վերջնական սպառողներ, դիմում են **թափանցիկ կամ բաց նորարարությունների** կիրառման աղբյուրներին: Linux, Wikipedia, YouTube, MySpace, and Facebook - սրանք բոլորը օրինակներ են բաց նորարարության զանգվածային համագործակցության և շահագործման: Հարյուրավոր ծրագրավորողներ կիրառում են Linux համակարգը, մոտ 75 000 մարդ կամավոր աշխատում են Wikipedia ինֆորմացիոն կայքի զարգացման վրա, հազարավոր մարդիկ ներբեռնում են նյութեր YouTube (ամեն րոպեում 10 ժամ տևողությամբ վիդեո է ներբեռնվում), իսկ Facebook-ն ու MySpace-ը յուրաքանչյուրն ունեն 100 միլիոն ակտիվ օգտվողներ

¹ Wright, M., Lockett, A., Clarysse, B. and Binks, M. (2006). "University spin-out companies and venture capital". *Research Policy*, 35, 481–501.

² Clarysse, B., Wright, M., Lockett, A., Mustar, P. and Knockaert, M. (2007b). "Academic spin-offs, formal technology transfer and capital raising". *Industrial and Corporate Change*, 16, 609–40.

ամբողջ աշխարհում: Չնայած, որ տնտեսագետները քննարկել են բաց ինովացիաները¹, սակայն սրա հետ կապված չափորոշիչները և կառավարման խնդիրները գրեթե անենադժվարն են բացահայտվում:

Բաց ինովացիաների պարագայում ընկերությունները փնտրում են համախոհներ, ստեղծելու և միասին առևտրայնացնելու հետազոտության և տեխնոլոգիաների արդյունքները իրենց երկրում կամ իրենց երկրի սահմաններից դուրս: Հետևաբար ձեռնարկությունները և հետազոտողները կարող են համատեղ զարգացնել ինովացիաներ, որոնք իրենց առևտրայնացումը կստանան մեկ այլ երկրում: Այստեղ հիմնական խնդիրն է գտնել արտաքին ինովացիաները, ինտեգրել դրանք և ստանալ որոշակի շահույթ: Համացանցը կարևորագույն գործիք է ծառայում բաց ինովացիաների ներդրման և առևտրայնացման հարցում:

Ինովացիաների առևտրայնացման հարցում, ինչպես արդեն նշեցինք, ներկայիս տնտեսական հարաբերություններում մեծ դեր է խաղում համացանցը: Այնպիսի կայքեր, ինչպիսիք են Yet2.com, InnoCentive and TekScout հնարավորություն են տալիս տարբեր գիտնականների և կազմակերպություններին փոխհամագործակցելու փոխշահավետ պայմաններով: Հայաստանում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի միջոցով նույնպես փորձ է արվել զարգացնել նման փոխկապակցող օղակ միջազգային շուկայի հետ²: Մի շարք ծառայությունների կողքին Ձեռնարկությունների եվրոպական ցանցը աջակցում է նաև նորարարական, հետազոտական և զարգացման ծրագրերի իրականացմանը:

**Susanna Khachatryan
Olga Naumovich**

Modern trends commercialization of technological innovation

Abstract

The article reviews current approaches and methods of transfer of commercial innovation. The assessment of introduction of innovations is very crucial in building the national innovation system. The discussion results on this issue in the last decade are the basis for assessing the scientific potential of the country, introducing and successful implementing the innovation policy.

**Сусанна Хачатрян
Ольга Наумович**

Современные тенденции коммерциализации технологических инноваций

Аннотация

В статье рассматриваются современные подходы и методы рыночного трансфера инноваций. Оценка внедрения новшеств является очень важным в процессе становления национальной инновационной системы. Результаты обсуждения этого вопроса в последнее десятилетие являются основой для оценки научного потенциала страны, внедрения и успешной реализации инновационной политики.

¹ Lerner, J. and Tirole, J. (2002). "Some simple economics of open source". Journal of Industrial Economics, 52, 197–234.

² <http://smednc.am>

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

*ՄԳԱՄ Քոթանյանի անվան փնտրեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող*

ՌՈՒՋԱՆԱ ԱԼՈՅԱՆ

*ՄԳԱՄ Քոթանյանի անվան փնտրեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող*

ՀՀ ՓՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆԸ ՆՊԱՏՏՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հայաստանի տնտեսության զարգացման գործում իր ուրույն տեղն ունի ձեռնարկատիրական գործունեությունը, որը սկսեց դիտարկվել որպես ազգային և տարածքային տնտեսական քաղաքականության առանձին ուղղություն միայն այն ժամանակ, երբ երկրի զարգացումը բախվեց գործազրկության, կառուցվածքային փոփոխությունների, արտադրության ավանդական ոլորտների անկման, ներդրումների անկայունության հետ: Ժամանակակից ազրարային քաղաքականության կարևորագույն ուղղություններից է գյուղատնտեսությունում կազմակերպատնտեսական հարաբերությունների վերանայումը: Շուկայական հարաբերությունների ուղին բռնած բոլոր երկրների փորձը վկայում է, որ գյուղատնտեսության մեջ գործող տնտեսաձևերի հետագա զարգացման ընթացքն ունի արդյունավետության բարձրացման միտումներ, եթե աշխատանքները կոոպերացվում են, և որի պայմաններում գործում են փոխշահավետ տնտեսական հարաբերություններ:

Վերջին տարիներին հանրապետության ագրոպարենային ոլորտում ձևավորվել են տարբեր գործառույթ իրականացնող կոոպերացման սկզբունքով գործող կառույցներ՝ կոոպերատիվներ, միավորումներ և ասոցիացիաներ, որոնց գործունեության նպատակը ծառայած խնդիրների համատեղ լուծման կամ դրանց մեղմացման ճանապարհով գյուղական համայնքներում արտադրության զարգացման խթանումն է:

Արտադրական կազմակերպությունների զարգացման համար հաջորդ խոչընդոտը ներքին շուկայի ցածր գնողունակությունն է: Այդ իսկ պատճառով տնտեսության դինամիկ զարգացման համար ազրարային ոլորտում արտադրական կազմակերպությունների գործունեությունը պետք է ուղղված լինի դեպի արտաքին շուկաները: Ազրարային ոլորտի նորմալ զարգացումը հանրապետությունում էապես պայմանավորված է կոոպերացիայի ընդլայնմամբ, որն ինտեգրացված համակարգում միավորում է գյուղատնտեսական տարբեր ապրանքարտադրողներին հորիզոնական և ուղղահայաց սկզբունքով: Շուկայի պայմաններում կոոպերացիան կարող է կոորդինացնել տարբեր գործառույթներ, ինչպես գյուղատնտեսական արտադրանքի արտադրության, այնպես էլ ագրոսպասարկման ոլորտում:

Կոոպերացիայի գաղափարի իրականացումն արգելակվող պատճառներից են՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործընթացների բարդությունները, գյուղտեխնիկայի, վառելիքի, թունաքիմիկատների, դեղորայքի, պարարտանյութերի և այլ նյութական ռեսուրսների բարձր գները: Վերջիններիս հետ իրենց գործունեության ընթացքում անընդհատ առնչվում են գրեթե բոլոր ապրանքարտադրողները, մասնավորապես առջ ու վաճառքի ժամանակ, քանի որ նրանց և շուկայի միջև հանդես են գալիս միջնորդներ համարվող մատակարար, գնորդ սպառողը և նմանատիպ այլ սուբյեկտներ: Ուստի, նման իրավիճակից դուրս գալուն կարող են նպաստել գյուղատնտեսական կոոպերատիվ կազմակերպությունների ձևավորումը, որոնց անհրաժեշտությունը առաջին հերթին պայմանավորված է մի քանի հրապուրիչ կողմերով, որոնցից հիմնականները, մեր կարծիքով, հետևյալներն են: Նախ և առաջ, կոոպերացիայի մեջ ընդգրկված գյուղացու մոտ պահպանվում է այն զգացումը, որ իրեն հասանելիք եկամուտների հիմնական աղբյուրը իր սեփական աշխատանքն է, բնականաբար նա կծգտի ավելի շատ աշխատել, քանի որ վերջնական արդյունքում բարելավվելու է իր ընտանիքի սոցիալական վիճակը և մի շարք հարաբերությունների հետևանքով էլ պիտանի է դառնում ամբողջ հասարակությամբ:

Հանրապետությունում գյուղատնտեսության կոոպերացման գործընթացը զգալիորեն կբարձրացնի գյուղական բնակչության զբաղվածության, արտադրական ներուժի օգտագործման մակարդակը, կավելացնի գյուղատնտեսական մթերքների ու դրանց վերամշակումից ստացվող արտադրատեսակների ծավալները, և որի արդյունքում կբարձրանա նաև բնակչության կենսամակարդակը, կմեղմացնի պարենային անվտանգության հետ կապված խնդիրների լուծումը:

Գյուղատնտեսության զարգացմանը նպաստող իրական ուղիներից մեկն էլ տնտեսական դաշտում համագործակցության ստեղծումն է, ուստի այդ կապակցությամբ անհրաժեշտ է իրագործել հետևյալ միջոցառումները՝

- արտադրական ծավալների ավելացում,
- տնտեսվարող սուբյեկտների մրցունակության բարձրացում,
- հայրենական ապրանքների որակի բարձրացում,
- ներմուծման կրճատում և արտահանման ծավալների ավելացում,
- մարզերում տնտեսական զարգացման անհամասնությունների հաղթահարում,
- ֆինանսական միջոցների հոսք ոչ արտադրական ոլորտներից դեպի արտադրական ոլորտներ և այլ նմանատիպ միջոցառումներ:

Փոքր և միջին ձեռնարկությունների ձևավորումը գյուղատնտեսության զարգացման գործում իրենց ուրույն տեղն ունեն, և այդ ոլորտի առանձնահատկությունները և դրանց ունեցած բարձր ներուժը, ինչպես նաև համաշխարհային փորձը վկայում են այն մասին, որ գյուղատնտեսության զարգացման ներկա փուլում խիստ հրատապ և արդիական խնդիր է այդ ոլորտին ուղղված պետական համալիր ու նպատակային ծրագրի մշակումը և դրա հետևողական իրականացումը: Ըստ էության, նման ծրագրի հիմնական նպատակը պետք է լինի փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծումը, դրանց զարգացմանը նպաստող բարենպաստ միջավայրի ձևավորումը, պետական աջակցության արդյունավետ լծակների և մեխանիզմների նպատակամետ կիրառումը, որոնք ընդգրկված են ՀՀ կառավարության ուղեցույցում:

Ագրարային քաղաքականության հիմնական ուղղություններից է գյուղատնտեսությանը և այդ թվում գյուղին պետության կողմից ակտիվ աջակցության ցուցաբերումը, մասնավորապես այն առավելապես ուղղված է ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, մասնագիտական խորհրդատվության համակարգերի զարգացմանը և այլն:

Այդ նպատակի համար 2007թ. ՀՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ պետական աջակցության ծրագրի իրականացմանը, որի նպատակը գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման արդյունավետության բարձրացումն է, մշակաբույսերի համախառն արտադրանքի աճի ապահովումը: Ըստ իրականացվող ծրագրի միավոր հողատարածքի 1 հա-ի համար սահմանվել է 35 հազ. դրամ սուբսիդավորում: Սկզբնական շրջանում աջակցություն ստացած համայնքների թվում էին Արագածոտնի, Գեղարքունիքի և Աշոցքի մարզերը:

Ըստ կատարված ուսումնասիրությունների աջակցության ծրագրից օգտված համայնքներում հիմնական մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են ոչ միայն քանակապես, այլև աչքի են ընկել բարձր բերքատվությամբ, և արդյունքում աշնանացան ցորենի ու գարնանացան գարու համախառն արտադրանքի ավելացումը կրկնակի անգամ գերազանցել է պետական աջակցության գումարին:

Առավել ուշագրավ ցուցանիշներ են ձեռք բերել Գեղարքունիքի մարզի պետական աջակցություն ստացած տնտեսությունները (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աղյուսակի տվյալներից երևում է, որ 2011թ. 2007թ. նկատմամբ Գեղարքունիքի մարզում վարելահողերի տարածությունը ավելացել է 14073 հա-ով կամ 17.3%-ով. այլ հողատեսքերի կրճատման հաշվին, որն էլ հետագայում նպաստել է բուսաբուծության արտադրության արտադրանքի ավելացմանը:

Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերի ցուցանիշները՝ ըստ 2007-2011թթ.

Գեղարքունիքի մարզ	Գյուղատնտ. հողատեսքեր (հա)	Այդ թվում					
		վարելահողեր	բազմամյա տնկարկներ	խոտհարքներ	արոտավայրեր	այլ հողատեսքեր	
2007թ.	348700	81075	1113	37979	180822	47711	
2010թ.	348700	95148	1113	37979	180822	33638	
2011թ.	348700	95148	1113	37979	180822	33638	
Հողատեսքերի տեսակարար կշիռը %	2007	100	23.2	0.3	10.9	51.8	13.7
	2011	100	27.3	0.3	10.9	51.8	9.6
Մարզի տեսակարար կշիռը հանրապետության մեջ, %	2007	16.4	18.0	3.5	29.6	16.2	12.1
	2011	16.5	21.2	3.4	29.8	16.0	13.3

2007թ. Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքն ունեցել է կայուն աճի դինամիկա: Այսպես, 2007թ. այն կազմում էր 90.0 մլրդ դրամ, ապա 2010թ. 125.7 մլրդ դրամ, իսկ 2011թ. այն հասավ 152.8 մլրդ դրամի, որից բուսաբուծության համախառն արտադրանքը կազմում է 98.2 մլրդ դրամ, իսկ անասնապահությունը՝ 54.6 մլրդ դրամ¹:

Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի արտադրական ցուցանիշները՝ ըստ 2007-2011թթ.

Տարեթվեր	Ցանքատարածություն, հազ. հա	Միջին բերքատվությունը g/հա	Համախառն բերքը, հազ.տ	Ցանքատարածությունը, հազ. հա	Միջին բերքատվությունը g/հա	Համախառն բերքը, հազ.տ	Ցանքատարածությունը, հազ. հա	Միջին բերքատվությունը g/հա	Համախառն բերքը, հազ.տ
Հացահատիկ Կարտոֆիլ Բանջարեղեն									
2007թ.	42.0	26.8	112.6	15.5	174.1	271.3	2.1	250	50.0
2008թ.	42.4	27.0	114.8	15.5	178.3	277.9	2.0	271	56.5
2009թ.	42.1	26.4	111.0	14.7	172.5	254.3	1.6	309.5	51.3
2010թ.	43.7	24.9	108.9	12.9	180.1	233.0	1.6	309.1	51.5
2011թ.	42.2	30.1	127.2	15.5	189.5	255.5	1.8	306.1	56.5

Աղյուսակից երևում է, որ վերջին տարիներին կայունացել է հացահատիկի համախառն արտադրանքը, որը 2011թ. կազմել է շուրջ 127,2 հազ. տ., իսկ մեկ հեկտարից միջին բերքատվության ցուցանիշը՝ 30.1 ց, որը նախորդ տարվա ցուցանիշին գերազանցել է 5.2 ցենտներով, որը բավականին դրական արդյունք է:

Գեղարքունիքի մարզին է պատկանում հանրապետության հացահատիկի ցանքատարածությունների 28%-ը, և հացահատիկի արտադրության 34%-ը:

Մարզը համարվում է նաև հանրապետության կարտոֆիլ արտադրող տարածաշրջաններից մեկը: Վերջին տարիներին կարտոֆիլի մշակության ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման արդյունքում, 1 հա-ի միջին բերքատվությունը 2010թ. հասել է 180.1 ցենտների, իսկ 2011թ.՝ 189.5 ցենտների: Մարզի 81 հազար հեկտար վարելահողերը բաժանված են 64 հազար մանր գյուղացիական տնտեսությունների, որոնց մշակության արդյունավետությունը ցածր է :

Եթե 2007թ. Գեղարքունիքի մարզն արտադրում էր հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի շուրջ 14%-ը, ապա 2011թ. արտադրվել է 19.2%-ով, իսկ 2011թ. մարզի համա-

¹ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

խառն արտադրանքի կառուցվածքում բուսաբուծության համախառն արտադրանքը կազմում է շուրջ 64.3%:

Գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցման գործում կարևոր հիմնախնդիր է հողերի կամավոր միավորումը և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը: 2010թ. ընթացքում մարզի տարբեր տարածաշրջաններում կազմակերպվել են 10-ից ավելի կոոպերատիվներ, որոնք իրականացնում են արդյունավետ գործունեություն:

Տնտեսության մրցունակության բարձրացման և երկարաժամկետ կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականությունն անհնար է իրագործել առանց տնտեսության փոքր և միջին ձեռնարկությունների ճկունությունն ապահովող (ՓՄՁ) աջակցության:

Տնտեսության մեջ ՓՄՁ-ների դերի բարձրացումը նաև հասարակության միջին խավի ձևավորման, աղքատության հաղթահարման, զբաղվածության ապահովման կարևոր պայման է:

2012թ. Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման կենտրոնը ակտիվ մասնակցություն է ունեցել ՓՄՁ պետական աջակցության նոր ռազմավարության նախագծի մշակման աշխատանքներին: Այս փաստաթղթի նպատակն է՝ ՓՄՁ ոլորտի համար աշխարհում մրցունակ միջավայրի ապահովումը, ֆինանսական միջոցների հասանելիությունը, ինչպես նաև «պետություն-մասնավոր հատվածի» երկխոսության ամրապնդումը: Զգալի արդյունքների են հասել սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանման և շուկաների առաջնդման աջակցության ծրագրերին:

Տեղական արտադրանքի խթանման և տեղական ապրանքանիշերի ձևավորման ծրագրի նպատակն է՝ համայնքների համաչափ զարգացման խնդիրների լուծումը: Ծրագրի շրջանակներում գործողություններ են կատարվել Տավուշի մարզի Բագրատաշեն, Արարատի մարզի Ուրցաձոր, Շիրակի մարզի Ամասիայի և Արագածոտնի մարզի Արագածավան համայնքներում, որի արդյունքում կատարվել են 2 կմ ջրագծի վերանորոգում պտղատու այգիների ոռոգման համար, երկու հակակարկտային կայանների տեղադրում, պտուղների պահածոյացման փոքր արտադրամասերի և չորանոցների հիմնում: Վերոնշյալների վերաբերյալ ավելի պարզ պատկերացում ունենալու համար ներկայացնենք աղյուսակ 3-ը:

Աղյուսակ 3

2012 թվականի ընթացքում բավարարված աջակցության հայտերի թվաքանակի բաշխվածն ըստ մարզերի և աջակցության ուղղությունների

Հայաստանի ՓՄՁ Ձակի մասնաճյուղեր	ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում	Սկսնակ գործարարներին ձեռներեցության աջակցություն	Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն	Թողարկվող արտադրանք (մատուցվող ծառայությունների) և շուկայում առաջնդման աջակցություն	Խորհրդատվական աջակցություն	Ուսուցողական աջակցություն	Ձեռնարկությունների եկրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	Ընդամենը աջակցության հայտեր	Տեսակարար կշիռը ընդամենը աջակցությունում %
Արագածոտն	1	18	10	8	629	21	5	692	8.2
Արարատ	1	19	16	5	348	15	5	409	4.8
Արմավիր	3	14	6	7	94	15	0	139	1.6
Գեղարքունիք	4	24	14	8	660	48	12	770	9.1
Լոռի	8	19	4	10	897	54	6	998	11.8
Կոտայք	3	36	7	8	1248	64	12	1378	16.3
Շիրակ	1	13	5	2	830	58	8	917	10.8
Սյունիք	2	12	7	5	530	20	5	581	6.9
Վայոց Ձոր	6	16	14	9	773	45	16	879	10.4
Տավուշ	1	16	15	7	1019	62	5	1125	13.3
Երևան	0	22	22	28	370	113	20	575	6.8
Ընդամենը	30	209	120	97	7398	515	94	8463	100.0

Աղյուսակ 3-ից ակնհայտ է, որ աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 6.8%-ը գործում է Երևան քաղաքում, իսկ 93.2%-ը՝ ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր ու սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Միաժամանակ նույն աղյուսակից երևում է, որ ամենաշատ աջակցությունը ստացել է Կոտայքի մարզը՝ 1378, ամենաքիչը Արմավիրի մարզը՝ 139:

Աղյուսակ 4

ՓՄՁ-ներին տրամադրված աջակցությունը ըստ 2011-2012թթ.

Տրամադրված աջակցության ուղղություն	2011թ. ընթացքում տրամադրված աջակցություն, քանակ	2012թ. ընթացքում տրամադրված աջակցություն, քանակ
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	3588	7398
Ուսուցողական աջակցություն	-	515
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	95	209
Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն	17	120
Թողարկվող արտադրանքի/մատուցվող ծառայությունների արտահանման և շուկաներում առաջնդմանն աջակցություն	47	97
Վարկային երաշխավորությունների տրամադրում	11	30
Ձեռնարկությունների Եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	22	94
Ընդամենը	3780	8463

2012թ. ՓՄՁ պետական աջակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ Ձակի կողմից վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի արտահանման և շուկաներում առաջնդման գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության ուղղություններով գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է 8463 աջակցություն, 2011 թվականի 3780-ի փոխարեն (տե՛ս աղյուսակ 4-ը):¹

Աղյուսակ 5

Տրամադրված երաշխավորությունն ըստ 2006-2012թթ.

(մլն դրամ)

	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Երաշխավորություն	5.0	30.2	44.8	109.4	53.5	37.4	268.4
Վարկ	4.3	25.3	37.4	91.5	44.8	31.2	262.6
հայտերի քանակ	6	35	41	65	30	17	120

2012թ. ընթացքում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 120 սկսնակ գործարար, որոնց վարկի ընդհանուր գումարի չափը կազմում է 262.6 մլն դրամ, իսկ երաշխավորության չափը՝ 268.4 մլն դրամ (տե՛ս աղյուսակ 5-ը):

Վարկավորումն իրականացվում է «Ակբա-կրեդիտ Ազրիկոլ բանկ» և «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-երի միջոցով (տե՛ս աղյուսակ 6-ը):

2012թ. ՓՄՁ-Ձակի երաշխավորությամբ Արարատի մարզը ներկայացված 16 վարկային ծրագրի դիմաց ստացել է 36.730 հազ. դրամ, իսկ Գեղարքունիքի մարզը՝ համապատասխան՝ 14 և 28.5 մլն դրամ:

¹ Տվյալները ըստ Հայաստանի Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներն ըստ մարզերի 2012թ.ընթացքում

Մարզ	Քանակ	Վարկ	Երաշխավորություն
Երևան	22	49.192.265	50.158.395
Գեղարքունիք	14	28.480.000	28.821.544
Արագածոտն	10	24.706.000	25.009.694
Արմավիր	6	15.700.000	17.677.650
Լոռի	4	9.500.000	9.615.934
Սյունիք	7	13.305.800	13.475.923
Կոտայք	7	15.140.000	15.723.806
Շիրակ	5	13.320.000	13.482.563
Վայոց Ձոր	14	28.350.000	28.695.985
Տավուշ	15	28.320.000	28.664.907
Արարատ	16	36.630.800	37.097.716
ԸՆԴՀԱՆՈՒՐ	120	262.644.865	268.424.117

2008թ. վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման փորձնական ծրագիրն իրականացվեց Գեղարքունիքի մարզի ճամբարակի տարածաշրջանի և Շիրակի մարզի Աշոցքի և Ամասիայի տարածաշրջանների 60 համայնքներում: 2011թ. ձեռնարկվեց վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր, որին առաջին փուլում ՀՀ կառավարության կողմից նախատեսված 75 մլրդ դրամը տեղաբաշխվեց գարնանային աշխատանքների ծավալների մեծացման համար: Ծրագրի իրականացման հաջողությունը նպաստեց, որ կառավարությունը, սուբսիդավորելով վարկի տոկոսադրույքը, այն դարձրեց մատչելի հանրապետության առավել աղքատ 225 համայնքներում՝ 8%, իսկ մնացած համայնքներում՝ 10%: Գյուղատնտեսական մթերքների իրացման գործընթացի ապահովման ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարությունը վերջին 3 տարիների ընթացքում ձեռնամուխ եղավ արտահանմանը նպաստող քաղաքականության վարմանը:

Շնորհիվ դրա, 2011թ. գյուղատնտեսական մթերքների արտահանման ծավալը 2009թ. համեմատությամբ աճել է 12.3%-ով:

Գյուղատնտեսության պետական աջակցության նախորդ տարիների փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է այդ գործիքի նպատակաուղղումը կարևոր պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացմանը և սահմանամերձ ու բարձր լեռնային գյուղական բնակավայրերի զարգացմանը:

Այսպիսով, բերված տվյալները և դրանց գծով կատարված վերլուծությունները վկայում են, որ ՀՀ գյուղատնտեսության զարգացմանը նպաստող համապատասխան ուղիների իրագործումը հնարավորություն կտա էլ ավելի արդյունավետ դարձնելու ագրարային ոլորտի գործունեությունը:

Шушаник Костянн

Рузанна Алоян

Механизмы регулирования развития сельского хозяйства Армении

Аннотация

Опыт всех стран, вставших на путь рыночной экономики, свидетельствует о том, что дальнейшее развитие действующих форм хозяйствования в сельском хозяйстве и тенденции повышения их эффективности осуществимы в условиях кооперации. Одним из основных направлений аграрной политики является государственная поддержка сельского хозяйства и

села. Повышение роли малых и средних предприятий (МСП) является также важным условием формирования среднего слоя общества, преодоления бедности и обеспечения занятости.

Последовательная реализация подобной программы сделает наиболее эффективной деятельность аграрной сферы.

**Shushanik Kostanyan
Ruzanna Aloyan**

Regulation mechanisms to stimulate the development of the agriculture in Armenia

Abstract

The practices of all market oriented economies show that the future development of the agriculture and increase in efficiency of the utilized practices can be fulfilled by adopting new practices, namely through cooperation and by small and medium-sized enterprises (SME). In order to support SMEs state assistance to villages is stressed, since it could be considered a precondition for alleviating poverty, formation of the middle-class, and creating new employment. Consistent implementation of such programs will make the performance of the agricultural sector of the economy more efficient.

ՆՈՆԱ ԿՈՒՊԵԼՅԱՆՑ

*Տայասարանի ազգային ագրարային
համալսարանի հայցորդ*

ԲՈՒՍԱԲՈՒՃԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԵՏԲԵՐՔԱՅԱՎԱՔԱՅԻՆ ԳՈՐԾՆՆԹԱՑՆԵՐԻ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՍԱԲՈՒՃՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ՀԱՍԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՎՐԱ ՏԱՐԲԵՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հետբերքահավաքային գործընթացների կազմակերպումը նախ պետք է նպատակաուղղված լինի հետբերքահավաքային գործընթացների հիմնական սկզբունքների պահպանմանը, որոնք պայմաններ են ստեղծում արտադրողից մինչև սպառողը շղթայում նոր արժեքի ավելացման, բերքի կորուստների հնարավոր կրճատման ու որակի պահպանման, ապրանքայնության մակարդակի բարձրացման և վերջնական արդյունքում արտադրության ծավալների ավելացման և արտադրության արդյունավետության բարձրացման համար:

Գոյություն ունեն հետբերքահավաքային գործընթացների տասը հիմնական սկզբունքներ, որոնք հետևյալն են.

- բերքի ճիշտ հասունացում,
- բերքի ֆիզիկական մշակման հնարավոր կրճատում: Մշակման գործընթացում մերքի հետ հպումների սահմանափակում, փչացման հավանականության կրճատում,
- արևի ճառագայթներից մերքերների պահպանում,
- փաթեթավորման գործընթացի պարզության ապահովում: Փաթեթավորման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը պետք է ուղղվի փաթեթավորման փուլերի կրճատմանը, որը կհանգեցնի վնասման հավանականության նվազմանը: Փաթեթավորման համակարգը պետք է լինի որքան հնարավոր է պարզ: Այդ համակարգի բոլոր բաղադրատարրերը պետք

է համապատասխանեն հիգիենայի նորմերին: Փաթեթավորման գործընթացում կարևոր դեր ունի սպասարկող (աշխատող) անձնակազմի կարգապահությունը և հիգիենայի կանոնների խիստ պահպանումը,

- մթերքի մանրակրկիտ մշակում, տեսակավորում և համապատասխան փաթեթում փաթեթավորում,
- հարթ ստվարաթղթ արկղերի և տրանսպորտային տակդիրների ապահովում: Ստվարաթղթ արկղերը պետք է ունենան հարթ պատեր և պահպանեն իրենց ձևը փոխադրման ժամանակ,
- արագ սառեցման ապահովում: Մի շարք մթերքներ պետք է սառեցվեն մինչ հետերեքահավաքային մշակումը,
- հետերեքահավաքային գործընթացը պետք է ուղղվի շուկայի պահանջների բավարարմանը: Անհրաժեշտ է հստակ իմանալ ինչ են ցանկանում սպառողները: Անհրաժեշտ է իրականացնել համապատասխան մարքեթինգային ուսումնասիրություններ շուկայական իրավիճակի գնահատման համար,
- մթերքների մշակման և առաքման գործընթացի հստակ կարգավորում: Եթե արտադրողները շատ արագ մշակում են հավաքված բերքը և տեղյակ են լինում տվյալ փուլում շուկայի պահանջարկին, ապա իրենց արտադրանքը կարող է պահանջարկ ունենալ և վայելել բարձր համբավ¹,
- աշխատողները, որոնք զբաղվում են բերքի հավաքմամբ, մշակմամբ, փաթեթավորմամբ պետք է անհրաժեշտ հնտություններ ունենան, որպեսզի ներկայացվող պահանջներին համապատասխան իրականացնեն պահանջվող աշխատանքները: Գործընթացի ճիշտ կազմակերպման արդյունքում արտադրողները պետք է ստանան բարձր հատույց:

Բուսաբուծական արտադրանքի հետերեքահավաքային գործընթացների հիմնական փուլերը հետևյալներն են.

- բերքի հասունացումը,
- բերքահավաք,
- բուսաբուծական արտադրանքի (բերքի) ընդունում,
- բուսաբուծական արտադրանքի առանձնացում,
- բերքի պահպանում,
- չափորոշում և տեսակավորում,
- ստուգում և որակի վերահսկում,
- փաթեթավորում և տարավորում,
- գյուղատնտեսական հումքի վերամշակում,
- բուսաբուծական արտադրանքի փոխադրում,
- իրացում:

Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հետևություն անել, որ հանրապետությունում ամբողջությամբ չեն ապահովվում հետերեքահավաքային գործընթացների կազմակերպման սկզբունքները: Ստեղծված իրավիճակը բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետության և ծավալների վրա: Վերջինս մեծամասամբ պայմանավորված է հետերեքահավաքային գործընթացների կազմակերպման անկատարությամբ:

Չետերեքահավաքային գործընթացների առանձնահատկություններով պայմանավորված, նրա տարբեր փուլերի կազմակերպումը տվյալ տարվա արտադրանքի արտադրության ծավալների և արդյունավետության վրա ներգործության հետ մեկտեղ հետերեքահավաքային գործընթացների որոշ փուլեր առավել մեծ ազդեցություն են ունենում հաջորդ տարվա բերքի ծավալների և արդյունավետության վրա:

¹ Способ и время збора овощей и фруктов как важнейшей элемент послеуборочной обработки. “Агроогляд: овочі та фрукти” N8 (12) 20 февраля 2006г.

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բուսաբուծական արտադրանքի հետերքահավաքային գործընթացների կազմակերպման գործոններով պայմանավորված արտադրության ծավալների ավելացման և արդյունավետության բարձրացման հնարավորություններից են հետերքահավաքային գործընթացների կատարելագործման արդյունքում վերը նշված սկզբունքների պահպանումը:

Հոդվածում կարևորվել է հետերքահավաքային գործընթացների տարբեր փուլերի գործունեությամբ պայմանավորված հանրապետության բուսաբուծության համար առաջնահերթ համարվող գյուղատնտեսական մթերքների ծավալների վրա տարբեր գործոնների ազդեցության չափի գնահատումը, որը հիմք կարող է հանդիսանալ հետերքահավաքային գործընթացի կազմակերպման կատարելագործման ուղղությամբ հիմնավորված առաջարկություններ ներկայացնելու համար: Վերջինս հաշվի առնելով, անդրադարձել ենք բանջարեղենի, խաղողի, պտղի արտադրության ծավալների վրա ազդող գործոնների ազդեցության չափի գնահատմանը: Նշված մթերքները հանրապետության բուսաբուծության ճյուղի համախառն արտադրանքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն, և 2012թ. տվյալներով համապատասխանաբար կազմում են՝ 22.4; 8.1 և 12.5 %¹, համեմատաբար բարձր է նաև այդ մթերքներ հետերքահավաքային գործընթացի կարևոր փուլ համարվող արդյունաբերական վերամշակման ծավալները:

Նախ անդրադառնանք բանջարեղենի արտադրության ծավալների վրա ազդող գործոնների գնահատմանը: Գործոններից կարևոր ենք համարել բանջարեղենի արդյունաբերական վերամշակման ծավալները և ապրանքայնության մակարդակը:

Հանրապետությունում բանջարեղենի հիմնական արտադրական ցուցանիշների և արտադրության ծավալների վրա ազդող գործոն ցուցանիշների դինամիկան 2000-2011թթ. համար ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՀՀ-ում 2000-2011թթ. բանջարանոցային մշակաբույսերի հիմնական արտադրական և արտադրության ծավալների վրա ազդող գործոն ցուցանիշները ²

Տարեթվերը	Ցանքատարածությունը, հազ. հա	Բերքատվությունը, ց/հա	Համախառն արտադրանքը, հազ. տոննա	Ապրանքայնության մակարդակը, %	Արդյունաբերական վերամշակման ծավալը, հազ. տոննա
2000	20.0	189.1	375.7	66.3	39.44
2001	19.8	224.2	456.0	65.8	26.14
2002	20.2	232.3	466.0	66.1	52.1
2003	23.1	245.7	569.4	70.1	96.6
2004	22.2	266.3	600.8	70.4	35.8
2005	22.5	289.0	663.8	72.3	42.9
2006	24.4	309.8	780.0	74.8	67.6
2007	25.6	324.0	845.3	76.9	57.1
2008	24.2	321.4	825.3	75.0	39.0
2009	23.9	327.1	819.8	74.1	32.4
2010	23.5	294.2	707.6	74.3	29.7
2011	25.0	306.7	787.1	77.4	51.0

Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ բանջարեղենի համախառն արտադրության ծավալները ուսումնասիրվող ժամանակահատվածում աճի միտում են ունեցել մինչև 2007թ., այնուհետև այն մինչև 2010թ. նվազել է, իսկ 2011թ.-ից այն ունեցել է աճի միտում:

¹ Հաշվարկների համար հիմք է ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները:
² Հիմք է ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները, իսկ բանջարեղենի արդյունաբերական վերամշակման ծավալների համար՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալները:

Տվյալ դեպքում փորձել ենք նախ բացահայտել բանջարանոցային մշակաբույսերի համախառն արտադրության և արդյունաբերական վերամշակման ծավալների, այնուհետև նաև ապրանքայնության մակարդակի միջև եղած կապի բնույթը, ինչպես նաև բանջարեղենի բերքատվության, ցանքատարածությունների և նշված գործոնների միջև եղած կապը:

Որպես արդյունքային հատկանիշ դիտարկել ենք հանրապետությունում բանջարեղենի համախառն արտադրանքը (նշանակում ենք y_i -ով, հազար տոննա), հաջորդ գործոն հատկանիշն ընդունում ենք բանջարեղենի արդյունաբերական վերամշակման ծավալները (նշանակում ենք x_i -ով, հազ. տոննա): Ելակետային տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ելակետային տվյալներ ՀՀ-ում բանջարանոցային մշակաբույսերի համախառն արտադրանքի և դրա վրա ազդող գործոնի՝ արդյունաբերական վերամշակման ծավալի վերաբերյալ

Տարեթվերը	Արդյունաբերական վերամշակման ծավալը, հազ. տոննա	Համախառն արտադրանքը, հազ. տոննա
	x_i	y_i
2000	39.44	375.7
2001	26.14	456.0
2002	52.1	466.0
2003	96.6	569.4
2004	35.8	600.8
2005	42.9	663.8
2006	67.6	780.0
2007	57.1	845.3
2008	39.0	825.3
2009	32.4	819.8
2010	29.7	707.6
2011	51.0	787.1

Մեկ կամ այլ փոփոխականների շեղումը միջինից ընկած է կոռելյացիոն կապի գնահատման հիմքում: Գծային կապի դեպքում նրա սերտությունը չափվում է զույգային կոռելյացիայի գործակցով, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$r_{xy} = \frac{\sum_i (x_i - \bar{x})(y_i - \bar{y})}{\sqrt{\sum_i (x_i - \bar{x})^2 \sum_i (y_i - \bar{y})^2}} \quad (1)$$

Եթե միջինից շեղման նշանը համընկնում է, այդ դեպքում կապը ուղիղ է ($r_{xy} > 0$), եթե շեղման նշանը չի համընկնում, ապա կապը հակադարձ է ($r_{xy} < 0$):

Զույգային կոռելյացիայի գործակիցը չափվում է -1-ից (պատահական լրիվ հակադարձ կապ) մինչև 1 (լիարժեք ուղղակի կապի դեպքում): Բացարձակ մեծությամբ՝ $0 \leq |r_{xy}| \leq 1$: Որքան մոտիկ է r_{xy} նշանակությունը մեկին, այնքան կապը սերտ է, որքան մոտիկ է r_{xy} նշանակությունը 0-ին, ապա կապը թույլ է: Երբ $|r_{xy}| < 0.30$ -ից կապը համարվում է թույլ, $|r_{xy}| = 0.3-0.7$ կապը համարվում է միջին, իսկ երբ $|r_{xy}| > 0.7$ կապը համարվում է ուժեղ կամ սերտ¹:

Հիմք ունենալով 2-րդ աղյուսակի տվյալները, հաշվարկել ենք զույգային կոռելյացիայի գործակիցը բանջարեղենի համախառն արտադրանքի և արդյունաբերական վերամշակման ծավալների միջև: Հաշվարկային տվյալները ներկայացվում են աղյուսակ 3-ում:

¹ Статистика: учеб. /И.И. Елисеева и др. под. ред И.И. Елисеевой. –М.: Проспект, 2010, с. 78-81.

ՀՀ-ում բանջարանոցային մշակաբույսերի համախառն արտադրանքի և արդյունաբերական վերամշակման ծավալների միջև գոյգային կոռելյացիայի գործակցի հաշվարկային աղյուսակ

Տարեթվերը	$x_i - \bar{x}$	$y_i - \bar{y}$	$(x_i - \bar{x})(y_i - \bar{y})$	$(x_i - \bar{x})^2$	$(y_i - \bar{y})^2$
2000	-8.0	-282.4	2270.7	64.7	79730.9
2001	-21.3	-202.1	4312.4	455.5	40830.9
2002	4.6	-192.1	-887.0	21.3	36889.6
2003	49.1	-88.7	-4355.2	2412.6	7861.8
2004	-11.7	-57.3	669.0	136.5	3279.5
2005	-4.6	5.7	-26.3	21.0	32.9
2006	20.1	121.9	2453.1	404.7	14867.7
2007	9.6	187.2	1800.9	92.5	35056.3
2008	-8.5	167.2	-1418.4	71.9	27967.0
2009	-15.1	161.7	-2439.2	227.5	26157.7
2010	-17.8	49.5	-880.8	316.2	2453.6
2011	3.5	129.0	454.0	12.4	16649.6
Σ	-	-	1953.2	4236.7	291777.5

Տեղադրելով հաշվարկային տվյալները կոռելյացիայի գործակցի բանաձևի մեջ ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{1953.2}{\sqrt{4236.7 * 291777.5}} = \frac{1953.2}{35159.5} = 0.055$$

Կոռելյացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար բանջարեղենի համախառն արտադրանքի և արդյունաբերական վերամշակման ծավալների միջև գոյություն ունեցող կապը համարվում է թույլ (այն գտնվում է 0-0.3 միջակայքում):

Կոռելյացիայի գործակցի քառակուսին իրենից ներկայացնում է դետերմինացիայի գործակիցը¹՝

$$\text{Դետերմինացիայի գործակիցը} = r^2 \quad (2)$$

Դետերմինացիայի գործակիցը հաճախ առավել նախընտրելի է կապերի գնահատման համար: Այն կարող է արտահայտվել տոկոսներով: Դրա արժեքը մեր օրինակի համար կազմում է՝ $r^2=0.003$ կամ 0.3 %: Դետերմինացիայի գործակիցը ունենում է 0-1 արժեք և տվյալ դեպքում ակնհայտ է, որ կապը թույլ է:

Կիրառելով միևնույն մեթոդական մոտեցումը բանջարանոցային մշակաբույսերի համար՝ գնահատել ենք նաև կապի բնույթը՝ կախված տվյալ մշակաբույսի ապրանքայնության մակարդակից:

Արդյունքային հատկանիշ նույնպես դիտարկում ենք հանրապետությունում բանջարանոցային մշակաբույսերի համախառն արտադրանքը (նշանակում ենք y_i -ով, հազար տոննա), հաջորդ գործոն հատկանիշը ընդունում ենք ապրանքայնության մակարդակը (նշանակում ենք x_i -ով, %): Տեղադրելով հաշվարկային տվյալները բանաձևում ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{7168.2}{\sqrt{191.7 * 291777.5}} = \frac{7168.2}{7478.7} = 0.958$$

Կոռելյացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ ՀՀ-ում բանջարանոցային մշակաբույսերի համախառն արտադրանքի և ապրանքայնության մակարդակի միջև գոյություն ունեցող կապը սերտ է (այն մեծ է 0.7-ից):

¹ Статистика: учеб. /И.И. Елисеева и др. под. ред И.И. Елисеевой. –М.: Проспект, 2010, с. 81.

Ռեգրեսիոն անալիզի գործակիցը տվյալ օրինակի համար կազմում է՝ $r^2=0.918$ կամ 91.8 %: Կապը նույնպես սերտ է:

Հաշվի առնելով բանջարեղենի արդյունաբերական վերամշակման ծավալների ազդեցությունը ցանքատարածությունների վրա փորձել ենք գնահատել նաև այդ ազդեցությունը:

Այս դեպքում արդյունքային հատկանիշ դիտարկում ենք հանրապետությունում բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունը (նշանակում ենք y_i -ով, հազ.հա): Հաջորդ գործոն հատկանիշը ընդունում ենք արդյունաբերական վերամշակման ծավալները (նշանակում ենք x_i -ով, հազ.տոննա): Հիմք ունենալով համապատասխան ելակետային տվյալները, միևնույն մեթոդական մոտեցման կիրառմամբ՝ հաշվարկում ենք զույգային կոռելյացիայի գործակիցը բանջարեղենի արդյունաբերական վերամշակման ծավալի և ցանքատարածության ցուցանիշների միջև: Հաշվարկային տվյալները տեղադրելով համապատասխան բանաձևում ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{123.8}{\sqrt{4236.7 * 43.0}} = \frac{123.8}{426.8} = 0.290$$

Կոռելյացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ ՀՀ-ում բանջարանոցային մշակաբույսերի արդյունաբերական վերամշակման և ցանքատարածությունների միջև կապը թույլ է, միջինին մոտ (այն տատանվում է 0-0.3 սահմաններում): Այսինքն՝ արդյունաբերական վերամշակման ծավալների մեծացումը նպաստում է ցանքատարածությունների որոշակի ավելացմանը:

Ռեգրեսիոն անալիզի գործակիցը մեր օրինակի համար կազմում է՝ $r^2=0.084$ կամ 8.4 %: Այսինքն՝ կապը թույլ է:

Հաջորդ դեպքում արդյունքային հատկանիշ դիտարկում ենք հանրապետությունում բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունը (նշանակում ենք y_i -ով, ցեմտներ/հա), գործոն հատկանիշ ընդունելով, արդյունաբերական վերամշակման ծավալները (նշանակում ենք x_i -ով, հազ. տոննա): Հիմք ունենալով ելակետային տվյալները՝ հաշվարկում ենք զույգային կոռելյացիայի գործակիցը բանջարեղենի արդյունաբերական վերամշակման ծավալի և բերքատվության ցուցանիշների միջև: Տեղադրելով հաշվարկային տվյալները կոռելյացիայի գործակցի բանաձևում ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{-61.8}{\sqrt{4236.7 * 22691.9}} = \frac{-61.8}{9805.1} = -0.006$$

Կոռելյացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ ՀՀ-ում բանջարանոցային մշակաբույսերի արդյունաբերական վերամշակման և բերքատվության կապը հակադարձ է: Տվյալ դեպքում արդյունաբերական վերամշակման ծավալների աճը գրեթե չի անդրադարձել բերքատվության ցուցանիշի վրա: Վերջինս վկայում է, որ բերքատվության վրա անդրադարձել են նաև այլ գործոններ:

Ռեգրեսիոն անալիզի գործակիցը տվյալ դեպքում կազմում է՝ $r^2=0.00004$, այսինքն՝ կապ գրեթե գոյություն չունի:

Հաշվի առնելով խաղողի համախառն արտադրանքի համեմատաբար մեծ արժեքը և արդյունաբերական վերամշակման ծավալները, անդրադառնանք նաև խաղողի արտադրության ծավալների վրա ազդող գործոնների գնահատմանը: Գործոններից կարևոր ենք համարել խաղողի արդյունաբերական վերամշակման ծավալները և ապրանքայնության մակարդակը:

Հանրապետությունում խաղողի հիմնական արտադրական ցուցանիշների և արտադրության ծավալների վրա ազդող գործոն ցուցանիշների դինամիկան 2000-2011թթ. համար ներկայացված է աղյուսակ 4-ում:

**ՀՀ-ում 2000-2011թթ. խաղողի հիմնական արտադրական
և արտադրության ծավալների վրա ազդող գործոն ցուցանիշները ¹**

Տարեթվերը	Տարածությունը, հազ. հա	Բերքատվությունը, ց/հա	Համախառն բերքը, հազ. տոննա	Ապրանքայնության մակարդակը, %	Արդյունաբերական վերամշակման ծավալը, հազ. տոննա
2000	15.0	78.0	115.8	71.1	50.7
2001	14.8	81.4	116.5	65.4	50.9
2002	13.0	82.8	104.0	67.8	47.0
2003	13.1	71.4	81.6	80.4	50.9
2004	14.9	108.9	148.9	82.3	79.5
2005	14.9	119.7	164.4	83.4	95.6
2006	15.7	141.2	201.4	85.9	106.1
2007	15.9	153.6	218.9	85.3	144.4
2008	16.8	128.0	185.8	83.7	137.4
2009	16.5	144.9	208.6	83.9	127.7
2010	17.4	151.5	222.9	89.7	135.0
2011	16.3	158.0	229.6	85.1	128.9

Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ խաղողի համախառն արտադրության ծավալները ուսումնասիրվող ժամանակահատվածում նվազման միտում են ունեցել մինչև 2003թ., այնուհետև աճել են:

Տվյալ դեպքում փորձել ենք նախ բացահայտել խաղողի համախառն արտադրության և արդյունաբերական վերամշակման ծավալների, այնուհետև նաև ապրանքայնության մակարդակի միջև եղած կապի բնույթը, ինչպես նաև խաղողի բերքատվության, ցանքատարածությունների և նշված գործոնների միջև եղած կապը:

Որպես արդյունքային հատկանիշ դիտարկել ենք հանրապետությունում խաղողի համախառն արտադրանքը (նշանակում ենք y_i -ով, հազար տոննա), հաջորդ գործոն հատկանիշն ընդունում ենք խաղողի արդյունաբերական վերամշակման ծավալները (նշանակում ենք x_i -ով, հազ. տոննա):

Կիրառելով միևնույն մեթոդական մոտեցումները և հիմք ունենալով ելակետային տվյալները՝ հաշվարկել ենք զույգային կոռելյացիայի գործակիցը խաղողի համախառն արտադրանքի և արդյունաբերական վերամշակման ծավալների միջև: Տեղադրելով հաշվարկային տվյալները կոռելյացիայի գործակիցի բանաձևի մեջ ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{21032.2}{\sqrt{16560.0 * 29770.1}} = \frac{21032.2}{22203.4} = 0.947$$

Կոռելյացիոն գործակիցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար խաղողի համախառն արտադրանքի և արդյունաբերական վերամշակման ծավալների միջև գոյություն ունեցող կապը սերտ է (այն մեծ է 0.7-ից):

Դետերմինացիայի գործակիցը կազմում է՝ $r^2=0.896$ կամ 89.6 %: Կապը նույնպես սերտ է:

Այնուհետև խաղողի համար գնահատել ենք նաև կապի բնույթը՝ կախված տվյալ մշակարույսի ապրանքայնության մակարդակից:

Արդյունքային հատկանիշ նույնպես դիտարկում ենք հանրապետությունում խաղողի համախառն արտադրանքը (նշանակում ենք y_i -ով, հազար տոննա), հաջորդ գործոն հատկանիշն ընդունում ենք ապրանքայնության մակարդակը (նշանակում ենք x_i -ով, %): Հիմք ունենալով

¹ Հիմք է ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները, իսկ խաղողի արդյունաբերական վերամշակման ծավալների համար՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալները:

ելակետային տվյալները՝ հաշվարկում ենք զույգային կոռելյացիայի գործակիցը խաղողի համախառն արտադրանքի և ապրանքայնության մակարդակի ցուցանիշների միջև: Տեղադրելով հաշվարկային տվյալները բանաձևում ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{3450.1}{\sqrt{668.8 * 29770.1}} = \frac{2408.327}{4462.1} = 0.773$$

Կոռելյացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ ՀՀ-ում խաղողի համախառն արտադրանքի և ապրանքայնության մակարդակի միջև գոյություն ունեցող կապը սերտ է, միջինին մոտ (այն մեծ է 0.7-ից):

Դետերմինացիայի գործակիցը տվյալ դեպքում կազմում է՝ $r^2=0.597$ կամ 59.7 %: Այս դեպքում կապը միջին է:

Արդյունքային հատկանիշ դիտարկում ենք նաև հանրապետությունում խաղողի այգետարածությունը (նշանակում ենք y_i -ով, հազ.հա): Հաջորդ գործոն հատկանիշը ընդունում ենք արդյունաբերական վերամշակման ծավալները (նշանակում ենք x_i -ով, հազ.տոննա): Հիմք ունենալով ելակետային տվյալները՝ հաշվարկում ենք զույգային կոռելյացիայի գործակիցը խաղողի արդյունաբերական վերամշակման ծավալի և այգետարածքների ցուցանիշների միջև: Հաշվարկային տվյալները տեղադրելով կոռելյացիայի գործակցի բանաձևում ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{502.7}{\sqrt{16560.0 * 20.4}} = \frac{502.7}{580.8} = 0.865$$

Կոռելյացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ ՀՀ-ում խաղողի արդյունաբերական վերամշակման և այգետարածքների միջև կապը սերտ է (այն մեծ է 0.7-ից): Այսինքն՝ արդյունաբերական վերամշակման ծավալների մեծացումը նպաստում է այգետարածքների ավելացմանը: Դետերմինացիայի գործակիցը տվյալ դեպքում կազմում է՝ $r^2=0.748$ կամ 74.8 %: Այսինքն՝ կապը սերտ է:

Հաշվի առնելով խաղողի համախառն արտադրանքի արտադրության վրա արդյունաբերական վերամշակման հնարավոր մեծ ազդեցությունը՝ փորձել ենք գնահատել նաև վերջինիս ազդեցությունը խաղողի բերքատվության վրա:

Այս դեպքում արդյունքային հատկանիշ դիտարկում ենք հանրապետությունում խաղողի միջին բերքատվությունը (նշանակում ենք y_i -ով, ց/հա): Հաջորդ գործոն հատկանիշը ընդունում ենք արդյունաբերական վերամշակման ծավալները (նշանակում ենք x_i -ով, հազ.տոննա): Հիմք ունենալով հաշվարկային տվյալները՝ հաշվարկում ենք զույգային կոռելյացիայի գործակիցը խաղողի արդյունաբերական վերամշակման ծավալի և բերքատվության ցուցանիշների միջև: Տեղադրելով հաշվարկային տվյալները կոռելյացիայի գործակցի բանաձևում ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{13284.6}{\sqrt{16560.0 * 11786.4}} = \frac{13284.6}{13970.8} = 0.951$$

Կոռելյացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ ՀՀ-ում խաղողի բերքատվության և արդյունաբերական վերամշակման ծավալների միջև կապը սերտ է (այն մեծ է 0.7-ից): Այսինքն՝ արդյունաբերական վերամշակման ծավալների մեծացումը նպաստում է ագրոտեխնիկական միջոցառումների համեմատաբար լիարժեք կատարմանը և ճյուղի բերքատվության և արտադրության արդյունավետության բարձրացմանը: Դետերմինացիայի գործակիցը մեր օրինակի համար կազմում է՝ $r^2=0.904$ կամ 90.4 %: Այսինքն՝ կապը սերտ է:

Հաշվի առնելով պտղի և հատապտղի համախառն արտադրանքի համեմատաբար մեծ արժեքը և արդյունաբերական վերամշակման ծավալները, անդրադառնանք պտղի և հատապտղի արտադրության ծավալների վրա վերը կիրառված ազդող գործոնների գնահատմանը:

Հանրապետությունում պտղի և հատապտղի հիմնական արտադրական ցուցանիշների և արտադրության ծավալների վրա ազդող գործոն ցուցանիշների դինամիկան 2000-2011թթ. համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

ՀՀ-ում 2000-2011թթ. պտղի և հատապտղի հիմնական արտադրական և արտադրության ծավալների վրա ազդող գործոն ցուցանիշները¹

Տարեթվերը	Տարածությունը, հազ. հա	Բերքատվությունը, ց/հա	Համախառն բերքը, հազ. տոննա	Ապրանքայնության մակարդակը, %	Արդյունաբերական վերամշակման ծավալը, հազ. տոննա
2000	22.8	58.8	128.5	62.9	21.0
2001	22.7	47.6	102.4	67.3	10.0
2002	22.8	39.7	82.6	69.8	7.0
2003	25.7	48.1	103.1	63.0	4.3
2004	34.7	39.1	113.7	64.6	4.2
2005	34.9	104.9	315.6	65.2	6.6
2006	35.4	93.9	286.0	63.2	4.6
2007	38.0	79.7	260.2	48.7	5.7
2008	36.7	101.2	317.8	53.1	6.1
2009	37.0	104.4	332.2	58.0	3.4
2010	37.7	39.2	128.5	35.0	2.8
2011	37.1	73.5	239.4	52.1	6.0

Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ պտղի և հատապտղի համախառն արտադրության ծավալները ուսումնասիրվող ժամանակահատվածում ունեցել են տատանողական բնութագիր:

Կիրառելով միևնույն մեթոդական մոտեցումները հաշվարկվել են հետևյալ կոռելյացիայի և դետերմինացիայի գործակիցները:

Պտղի և հատապտղի արդյունաբերական վերամշակման ծավալների ազդեցությունը համախառն արտադրանքի վրա ստացվել է բացասական (հակադարձ կապ)՝ կոռելյացիայի գործակիցը կազմել է -0.353 (դետերմինացիայի գործակիցը՝ 0.125): Պտղի և հատապտղի ապրանքայնության մակարդակի ազդեցությունը համախառն արտադրանքի վրա եղել է բացասական՝ կոռելյացիայի գործակիցը ստացվել է -0.387 (դետերմինացիայի գործակիցը՝ 0.150): Պտղի և հատապտղի արդյունաբերական վերամշակման ծավալի ազդեցությունը այգետարածքի վրա եղել է նույնպես բացասական, կոռելյացիայի գործակիցը ստացվել է -0.947 (դետերմինացիայի գործակիցը՝ 0.897): Պտղի և հատապտղի արդյունաբերական վերամշակման և բերքատվության ցուցանիշի միջև կապը եղել է սերտ՝ կոռելյացիայի գործակիցը ստացվել է 0.881 (դետերմինացիայի գործակիցը՝ 0.776):

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տվել գնահատել հանրապետությունում հետբերքահավաքային գործընթացների կազմակերպմամբ պայմանավորված գյուղատնտեսական արտադրության ծավալների ավելացման և արդյունավետության բարձրացման հնարավորությունները: Վերջիններս որոշակիորեն հիմք կարող են հանդիսանալ հետբերքահավաքային գործընթացների կազմակերպման ուղղությունների բացահայտման համար:

Հաշվարկված կոռելյացիայի և դետերմինացիայի գործակիցները ամփոփ ձևով ներկայացվում են աղյուսակ 6-ում:

¹ Հիմք է ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները, իսկ պտղի և հատապտղի արդյունաբերական վերամշակման ծավալների համար՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալները:

Բանջարանոցային մշակաբույսերի, խաղողի և պտղի ու հատապտղի արտադրական որոշ ցուցանիշների վրա ազդող գործոնների ազդեցությունը բնութագրող կոռելյացիայի և դետերմինացիայի գործակիցները հաշվարկված 2000-2011թթ. տվյալներով

Արդյունքային հատկանիշ, y_i	Համախառն բերքը	Ցանքատարածությունը կամ այգետարածությունը	Բերքատվությունը
Գործոն հատկանիշ, x_i			
Բանջարեղենի համար			
Արդյունաբերական վերամշակման ծավալը	0.055 0.003	0.290 0.084	-0.006 0.0004
Ապրանքայնության մակարդակը	0.958 0.918		
Խաղողի համար			
Արդյունաբերական վերամշակման ծավալը	0.947 0.897	0.865 0.748	0.951 0.904
Ապրանքայնության մակարդակը	0.773 0.598		
Պտղի և հատապտղի			
Արդյունաբերական վերամշակման ծավալը	-0.353 0.125	-0.947 0.897	0.881 0.776
Ապրանքայնության մակարդակը	-0.387 0.150		

Կատարված հաշվարկները, վերջին 12 տարվա տվյալները հիմք ունենալով, հնարավորություն տվեցին բացահայտել հանրապետության բուսաբուծության համար առաջնային համարվող գյուղատնտեսական կարևորագույն մթերքների արտադրության ծավալների վրա, հետերքահավաքային գործընթացներով պայմանավորված, գործոնների ազդեցության չափը, մասնավորապես՝ կատարված հաշվարկներով բացահայտվեց, որ կոռելյացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար բանջարեղենի համախառն արտադրանքի և արդյունաբերական վերամշակման ծավալների միջև գոյություն ունեցող կապը թույլ է (կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.055), իսկ բանջարանոցային մշակաբույսերի համախառն արտադրանքի և ապրանքայնության մակարդակի միջև գոյություն ունեցող կապը սերտ է (կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.958): ՀՀ-ում բանջարանոցային մշակաբույսերի արդյունաբերական վերամշակման և ցանքատարածությունների միջև կապը թույլ է, միջինին մոտ (կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.290): Այսինքն՝ արդյունաբերական վերամշակման ծավալների մեծացումը նպաստում է ցանքատարածությունների ավելացմանը: Բանջարանոցային մշակաբույսերի արդյունաբերական վերամշակման և բերքատվության կապը հակադարձ է, գրեթե զրոյական (կոռելյացիայի գործակիցը կազմել է -0.006):

Հանրապետության համար խաղողի համախառն արտադրանքի և արդյունաբերական վերամշակման ծավալների միջև գոյություն ունեցող կապը սերտ է (կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.947): Խաղողի համախառն արտադրանքի և ապրանքայնության մակարդակի միջև գոյություն ունեցող կապը նույնպես սերտ է, միջինին մոտ (կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.773): Ինչ վերաբերում է ՀՀ-ում խաղողի բերքատվության և արդյունաբերական վերամշակման ծավալների միջև կապին, ապա այն սերտ է (կոռելյացիայի գործակիցը կազմում է 0.951), խաղողի արդյունաբերական վերամշակման և այգետարածքների միջև կապը սերտ է (կոռելյացիայի գործակիցը կազմում է 0.865):

Ինչ վերաբերում է պտղի և հատապտղին, ապա ուսումնասիրության արդյունքները հետևյալն են: Պտղի և հատապտղի արդյունաբերական վերամշակման ծավալների ազդեցությունը

համախառն արտադրանքի վրա ստացվել է բացասական (հակադարձ կապ)՝ կոռելյացիայի գործակիցը կազմել է -0.353 (դետերմինացիայի գործակիցը՝ 0.125), ապրանքայնության մակարդակի ազդեցությունը համախառն արտադրանքի վրա եղել է բացասական. կոռելյացիայի գործակիցը ստացվել է -0.387 (դետերմինացիայի գործակիցը՝ 0.150), արդյունաբերական վերամշակման ծավալի ազդեցությունը այգետարածքի վրա եղել է նույնպես բացասական, կոռելյացիայի գործակիցը ստացվել է -0.947 (դետերմինացիայի գործակիցը՝ 0.897), արդյունաբերական վերամշակման և բերքատվության ցուցանիշի միջև կապը եղել է սերտ. կոռելյացիայի գործակիցը ստացվել է 0.881 (դետերմինացիայի գործակիցը՝ 0.776):

Շատարված հաշվարկները կարող են հիմք հանդիսանալ հետքերքահավաքային գործընթացների կառավարման կատարելագործման ուղղությունների կանխորոշման համար:

Нонна Купелянц

Принципы послеуборочных процессов растениеводческой продукции и обусловленная деятельностью его разных этапов оценка степени воздействия различных факторов на объемы сельскохозяйственных производций, имеющих первостепенное значение для растениеводства республики

Аннотация

В статье автор представил необходимость соблюдения основных принципов послеуборочных процессов, которые создают предпосылки для увеличения вновь созданной стоимости в цепочке “производитель-потребитель”, возможного сокращения потерь урожая, повышения уровня товарности продукции и, в конечном итоге - увеличения объемов и повышения эффективности производства. В статье выделено 10 основных принципов. В рамках статьи особое значение придается оценке степени воздействия различных факторов на объемы сельскохозяйственных производций, имеющих первостепенное значение для растениеводства республики, обусловленной деятельностью разных этапов послеуборочных процессов. За основу расчетов приняты статистические данные последних 12 лет. В расчеты включены 6 факторов и 3 результативных признака. Произведенные расчеты могут стать основой для прогнозирования путей совершенствования управления послеуборочными процессами.

Nonna Kupelyants

The principles of post-harvesting processes of crop production and the assessment of the impact of various factors on the physical volumes of agricultural products required in various stages of post-harvesting processes in Armenia

Abstract

The author addresses the necessity of meeting the main principles of post-harvesting processes that ensure adding more value in the “from producers to consumers chain”; minimizing possible losses of the harvest; maintaining the required quality of goods; increasing both physical volumes of produced goods and production efficiency. The article presents 10 main post-harvesting principles. The author stresses the importance of assessing the impact of various factors on the physical volumes of agricultural products required in various stages of post-harvesting processes. The author uses the statistical data of the last 12 years (2000-2011) in estimating the impact of various factors. The author includes 6 factors and 3 indicators of performance in calculations. The results of calculations can be applied in improving the management of post-harvesting processes.

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*ՄԳՊԱՄ Բոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ. գ. թ.*

ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ

*ՄԳՊԱՄ Բոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող*

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ԶԱՌԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտում, արդեն 20 տարի գործում է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգ, որտեղ ձևավորվել են 340 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնք տնօրինում են վարելահողերի 82.0%-ը, բազմամյա տնկարկների 75.0%-ը և խոտհարքների 50.0%-ը: Մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում միջին հաշվով 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում 1.1 հա վարելահող, որը խոչընդոտում է կիրառելու ինտենսիվ տեխնոլոգիան և ապահովել արդյունավետ տնտեսավարում: Զբաղվածների տեսակարար կշիռը հանրապետության ընդհանուր զբաղվածների մոտ 45%-ն է կազմում: Ամերիկացի պարենամթերքների ինքնաբավության մակարդակը, ըստ էներգետիկ արժեքի, կազմում է մոտ 60.0%:

Այժմ ներկայացնենք ըստ մարզերի գյուղատնտեսության համախառն արտադրանքը, փաստացի գներով և դրանց տեսակարար կշիռը (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքը փաստացի գներով
և կառուցվածքն ըստ մարզերի (2008-2011թթ.)**

մլրդ. դր

Ընդամենը Հայաստանի	Տարիները							
	2008թ.		2009թ.		2010թ.		2011թ.	
	գումարը	տես. կշիռը %	գումարը	տես. կշիռը %	գումարը	տես. կշիռը %	գումարը	տես. կշիռը %
Հանրապետություն	628.1	100.0	552.1	104.2	636.7	100.0	825.2	100.0
ք.երևան	6.6	1.1	4.9	0.9	5.4	0.8	5.8	0.7
Արագածոտն	57.3	9.1	54.2	9.8	61.4	9.6	80.2	9.7
Արարատ	100.5	16.0	89.0	16.1	108.5	17.0	139.4	16.9
Արմավիր	119.9	19.1	108.8	19.7	104.5	16.4	136.2	16.5
Գեղարքունիքի	111.7	17.8	94.0	17.0	125.7	19.7	160.6	19.5
Լոռի	39.4	6.3	36.8	6.7	41.8	6.6	56.1	6.8
Կոտայք	47.2	7.5	39.6	7.2	39.9	6.3	51.1	6.2
Շիրակ	65.1	10.4	55.8	10.1	71.1	11.2	94.1	11.4
Սյունիք	39.1	6.2	33.4	6.1	36.3	5.7	47.9	5.8
Վայոց Ձոր	12.8	2.0	11.3	2.0	13.8	2.2	15.7	1.9
Տավուշ	28.5	4.5	24.3	4.4	28.3	4.5	38.3	4.6

Ըստ աղյուսակ 1-ում բերված ելակետային և հաշվարկային տվյալների, ակնհայտ է դառնում, որ ուսումնասիրվող տարիների ընթացքում համախառն արտադրանքի արժեքը (բացի 2009թ.) ունեցել է աճման միտում: 2009թ. նկատմամբ նվազման միտումը հետևանք էր նախորդ տարվա (2008թ.) վերջում սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի: Սակայն դրանից հետո հաջորդ տարիներին համախառն արտադրանքի արժեքը ունեցավ աճման միտում և 2011թ. 2009թ. նկատմամբ ավելացավ 273.1 մլրդ դրամով կամ 49.5%-ով, իսկ 2010թ. նկատմամբ՝ 188.5 մլրդ դրամով կամ 29.6%-ով: Միաժամանակ աղյուսակի տվյալներն ըստ տարիների վկայում են, որ կառուցվածքային առումով ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել

են Գեղարքունիքի, Արմավիրի և Արարատի մարզերը, որոնք տատանվել են 16.0-19.7%-ի սահմաններում:

ՀՀ տնտեսության ագրարային ոլորտն ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի 25.3 տոկոսը, այդ թվում գյուղատնտեսությունը՝ 18.8%-ը: Նախորդ տարվա համեմատ, համախառն արտադրանքի աճը 2011թ. վերջին կազմել է 14.0%: Տնտեսական աճը հիմնականում ապահովել է բուսաբուծության ճյուղի հաշվին, որոշակի աճ է ապահովել նաև անասնաբուծության ճյուղը: Նշված ճյուղերի համախառն արտադրանքի արժեքի և կառուցվածքի վերաբերյալ պատկերացումը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

**ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը
և կառուցվածքը, ըստ ճյուղերի (2007-2011թթ.)**

	2007-2009թթ.		2010թ.		2011թ.	
	համախառն արտադրանք մլրդ. դրամ	տես. կշիռը %	համախառն արտադրանք մլրդ. դրամ	տես. կշիռը %	համախառն արտադրանք մլրդ. դրամ	տես. կշիռը %
Բուսաբուծություն	439.5	67.3	443.9	54.6	456.0	55.3
Անասնաբուծություն	211.2	32.7	369.7	45.4	369.2	44.7
Ընդամենը	650.7	100.0	813.6	100.0	825.2	100.0

Այսպես, բուսաբուծության համախառն արտադրանքը 2011 թվականի վերջին կազմել է 456.0 մլրդ. դրամ, նախորդ տարվա 445.9 մլրդ. դրամի փոխարեն, իսկ անասնաբուծությունը՝ 369.2 մլրդ. դրամ, նախորդ տարվա 813.6 մլրդ. դրամի փոխարեն:

Բուսաբուծությունում համախառն արտադրանքի ավելացումը պայմանավորված է խաղողի արտադրության և կերային մշակաբույսերի ուղղությամբ:

Անասնաբուծության համախառն արտադրանքի որոշակի կրճատումը պայմանավորված է մսի (4.2%-ով) և կաթի արտադրության (3.6%-ով), իսկ ձվի արտադրության ծավալը՝ հակառակը ավելացել է (16.3%-ով):

Ելնելով այժմյան պայմաններից, որպես առաջարկություն, գյուղատնտեսությունում համախառն արտադրանքի ավելացումն անհրաժեշտ է ապահովել հիմնականում ի հաշիվ աշխատանքի արտադրողականության աճի՝ կրճատելով գյուղատնտեսության մեջ աշխատողների թվաքանակը, իսկ դրան համահունչ ավելցուկային աշխատուժն օգտագործելով ոչ գյուղատնտեսական գործունեության բնագավառներում:

Հայաստանը հայտնի է հողատեսքերի բազմազանությամբ, որոնց վերաբերյալ ավելի պարզ պատկերացնելու համար դրանց կազմն ու կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 3-ում :

Աղյուսակ 3

Հայաստանի Հանրապետության հողատեսքերն ու դրանց կառուցվածքը՝ ըստ 2011թ.

Հողատեսքերի կազմը	Հողատեսքերի տարածքը, հազ.հա	Կառուցվածքը, %
1. Գյուղատնտեսական նշանակության ընդհանուր հողեր	1391.8	100.0
այդ թվում՝		
վարելահող	494.3	35.5
բազմամյա տնկարկներ	63.8	4.6
արոտավայրեր	694.0	49.9
խոտհարքներ	138.9	10.0
խոպան հողեր	0.4	0.03
2. Անտառներ	308.0	-

Աղյուսակ 3-ի տվյալներից ակնհայտ է, որ հողատեսքերի կազմում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում արոտավայրերին՝ 49.9% և վարելահողերին՝ 35.5%:

Միաժամանակ նույն տարում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 285.2 հազ. հա, նախորդ տարվա 283.6 հազ. հա-ի դիմաց: Մշակովի հողատարածությունները մասնատված են 1.2 մլն. հողակտորների, որը հնարավորություն չի ընձեռում իրականացնել ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառում, արդյունավետ տնտեսվարում, և նպատակային նշանակությամբ չեն օգտագործվում վարելահողերի մոտ 33.0%-ը: Ուստի այս առումով կարևորագույն հիմնահարց է հողօգտագործման արդյունավետության բարձրացումը, որը գյուղատնտեսության վարման համակարգի հիմնական բաղադրիչներից մեկն է:

Ոռոգման համակարգում էլ կան չլուծված խնդիրներ, քանի որ հանրապետության 232.9 հազ հա. ոռոգելի հողատարածությունից ոռոգվում է ընդամենը 156.0 հազ. հա:

Ուստի այդ առումով անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի պետության կողմից հետևողականորեն իրականացվեն գյուղական ենթակառուցվածքների զարգացման, ոռոգման համակարգերի կատարելագործման, հողերի մելորատիվ վիճակի բարելավման, արոտավայրերի ջրարբիացման և մի քանի այլ միջոցառումներ:

Յուրաքանչյուր երկրի, այդ թվում նաև Հայաստանի համար կարևորվում է հիմնական մշակաբույսերից ստացվող համախառն բերքի և մեկ հեկտարից ստացվող բերքատվության քանակը:

Դրանց վերաբերյալ տվյալները ամփոփված են աղյուսակ 4-ում՝ փաստացին (2007-2012թթ.) և կանխատեսվածը (2013-2015թթ.):

Աղյուսակ 4

Հիմնական մշակաբույսերի համախառն բերքը և բերքատվությունը (2007-2015թթ.)

Անվանումները	Չափի միավոր	2007	2008	2009	2010	2011	2012	2013թ	2014թ	2015թ
Հացահատիկային մշակաբույսեր										
Համախառն բերքը	հազ տ	452.4	415.4	374.9	416.5	436.0	457.0	478.0	505.0	554.0
Բերքատվություն	ց/հ	25.9	24.1	22.6	24.5	25.1	25.7	26.3	27.2	29.2
Կարտոֆիլ										
Համախառն բերք	հազ տ	583.9	648.6	593.6	617.0	622.0	628.0	637.0	648.0	660.0
Բերքատվություն	ց/հ	183.3	188.7	184.4	196.0	200.0	203.2	208.2	213.9	220.0
Բանջարեղեն										
Համախառն բերք	հազ տ	845.3	825.3	819.8	876.0	897.0	927.0	956.0	990.0	1025
Բերքատվություն	ց/հ	324.0	321.0	327.1	365.0	370.0	379.9	388.0	399.2	410.0
Բոստան										
Համախառն բերք	հազ տ	206.3	182.2	216.1	222.0	226.0	231.0	235.0	244.0	252.0
Բերքատվություն	ց/հ	350.6	334.5	350.6	370.0	376.7	385.0	391.7	406.7	420.0
Պտուղ										
Համախառն բերք	հազ տ	260.2	317.8	332.2	305.0	321.0	348.0	386.0	423.0	460.0
Բերքատվություն	ց/հ	79.7	101.2	104.4	91.3	93.9	98.0	104.9	109.9	115.0
Խաղող										
Համախառն բերք	հազ տ	218.9	185.8	208.6	222.6	237.0	259.0	282.0	310.0	345.7
Բերքատվություն	ց/հ	153.6	128.0	144.9	145.5	146.3	146.3	145.4	149.8	155.0

Տվյալները՝ ԱՎԾ:

Ըստ աղյուսակ 4-ի տվյալների պարզվում է, որ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը դեռևս ցածր է, քանի որ անկատար են ագրոտեխնիկական մշակության կանոնները: Մասնավորապես խաղողագործության զարգացմանը խոչընդոտում է վերամշակող արդյունաբերության ոչ լիակատար լինելը և շուկայի պահանջներին անհամապատասխանությունը՝ ըստ սորտային կազմի ու այգիների բարձր նոսրության:

Միաժամանակ ՀՀ, ԱՎԾ-ի տվյալներով գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական օժանդակություն ստացած մարզերի տարածաշրջաններում մշակաբույսերի տարածքները 2008թ. գերազանցել են նախորդ տարվա մակարդակը 8.5%-ով, ցանքատարածությունների ընդհանուր ավելացումը կազմել է 5909.7 հա, չնայած հանրապետության գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները չեն ավելացել: 2010թ. մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 283.2 հազ. հա, նախորդ տարվա 300.0 հազ. հա-ի դիմաց: Հատկապես պակասել են ցանքատարածություններից բոստանային մշակաբույսերինը՝ 29.0%-ով, կարտոֆիլինը՝ 11,6%-ով, հացահատիկային մշակաբույսերինը՝ 7,1%-ով, իսկ կերային մշակաբույսերի տարածքները ավելացել են 1,7%-ով: «Թամարա ֆրուք» ՓԲԸ-ն կողմից օրգանիկ այգիների ստեղծման ծրագրի շրջանակներում 11 ֆիզիկական անձանց հետ կնքվել են պայմանագրեր, և արդյունքում հիմնվել է 38 հա հատապտղի օրգանական այգի:

Անասնապահության ճյուղում, անասնազլխաքանակի կայունացման տնտեսական հիմքը սեփական կերարտադրության իրական հնարավորությունների և ներկրվող կերերի սահմանային արդյունավետության ու անասնապահական մթերքների տեղական արտադրության հարաբերական առավելությունների գնահատումն է:

Հանրապետությունում կրճատվել է անասնազլխաքանակը և անասնապահական մթերքների արտադրությունը՝ սեփական կերարտադրության կրճատման և ներկրվող կերերի ծավալների սահմանափակման հետևանքով: Կրճատվել է կերային մշակաբույսերի տարածությունը, և անբավարար են օգտագործվում բնական կերհանդակները: Խոշոր եղջերավոր անասունների զլխաքանակը 2011 թվականի վերջին կազմել է 572.8 հազար գլուխ, այդ թվում կովերինը՝ 275.0 հազար գլուխ, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակին՝ 0.4%-ով:

Աղյուսակ 5

Անասնապահական մթերքների արտադրության ծավալները՝ ըստ 2010-2011թթ.

	2010թ.	2011թ.	2011թ.-ը 2010թ.նկատմամբ (աճի տեմպ) %
Միս (կենդանի քաշով), հազ. տոննա	124.7	127.5	102.2
Կաթ, հազ. տոննա	600.9	611.7	101,8
Չուլ, մլն. հատ	702.0	647.0	92.2

Ըստ աղյուսակ 5-ի, մսի իրացումը (կենդանի քաշով) 2011 թվականի վերջին կազմել է 127.5 հազար տոննա, որը նախորդ տարվա՝ 2010թ. մակարդակը գերազանցել է 2.2%-ով է, իսկ կաթի արտադրությունը համապատասխանաբար կազմել է 611.7 հազ. տոննա. որը նախորդ տարվան գերազանցել է 1.8 % -ով: Չվի արտադրությունը պակասել է 55 մլն հատով, կամ 7.8%-ով:

Անասնապահական մթերքների արտադրության ծավալների մասին ավելի պարզ պատկերացում ունենալու համար համապատասխան տվյալները ներկայացնենք աղյուսակ 5-ում: Գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման հետ միասին կարևորվում են սննդամթերքի անվտանգության և ստանդարտացման բնագավառները:

Հանրապետության պարենային անվտանգության ապահովման համար ամենակարևորը՝ հիմնական պարենամթերքի ինքնաբավարարման մակարդակի բարձրացումն է: Անհրաժեշտ է գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողներին բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով բարձրացնել պարենային ապահովության մակարդակը, ապահովելով առաջնահերթ անհրաժեշտության պարենամթերքով (պարենային ցորեն, հատիկաընդեղենային մշակաբույսեր, կաթ, կաթնամթերք, միս, սնամթերք) ինքնաբավարարման անհրաժեշտ պահանջը, կրճատել հանրա-

պետության տարբեր գոտիներում գյուղատնտեսության զարգացման անհամաձայնությունները և ավելացնել գյուղական բնակչության եկամուտները:

Փոքր հողակտորների վրա արդյունավետությունն ապահովող տնտեսվարմանը կնպաստեն ճյուղին սպասարկող ծառայությունների և շուկայական ենթակառուցվածքների ընդլայնումն ու մրցունակության բարձրացումը:

Գյուղատնտեսությունում շուկայական ենթակառուցվածքների (գյուղատնտեսական վարկեր տրամադրող առևտրային բանկեր, վարկային կազմակերպություններ, լիզինգային ընկերություններ և ամենակարևորը՝ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգը), գյուղացիական տնտեսությունների զարգացման ծրագրերի իրականացման գործընթացում իրենց պայմանները սահմանելիս, անհրաժեշտ է հաշվի առնվի և՛ հանրապետության, և՛ գյուղատնտեսության, և՛ մարզի առանձնահատկությունները:

Շատ կարևոր խնդիր է գյուղմթերքների շուկայի ձևավորման հարցը, որը պայմանավորված է շուկայում ցածր վճարունակ պահանջարկով, գյուղատնտեսական մթերքներ գնող-իրացնող ենթակառուցվածքների ձևավորման դանդաղ ընթացքով և արտահանման դժվարամատչելիությամբ: Ագրովերամշակման ենթակառուցվածքում, վերջին տասնամյակում, ավելացել են հզորությունների օգտագործումը, և բավականին մատչելի է դարձել գյուղատնտեսական հումքի մթերումների հարցը: Մթերվել է 168.3 հազար տոննա պտուղ-բանջարեղեն և խաղող (18.9 մլն դրամ), որից 33.3 հազար տոննա պտուղ-բանջարեղեն (2.1 մլրդ դրամ) և 135.0 հազար տոննա խաղող (16.8 մլրդ դրամ): Թարմ պտուղբանջարեղենի առաջարկը զիջել է ներքին շուկայի պահանջարկին, որի հետևանքով էլ գյուղմթերքների գները բարձրացան: Գների բարձրացմանը նպաստում է նաև արտադրողից մինչև սպառողը շուկայում միջնորդ վերավաճառողների առկայությունը:

Գյուղատնտեսության զարգացման հիմնական ուղին ինտենսիվացման մակարդակի բարձրացումն է: Միջազգային փորձից ելնելով, երկրի տնտեսության որոշ ճյուղերի զարգացումը և գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը հանգեցրել է տնտեսվարող սուբյեկտների թվաքանակի կրճատմանը, մեկ տնտեսության հաշվով հողատարածության մեծացմանը՝ ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման և աշխատողների թվաքանակի նվազմանը:

Գյուղատնտեսության զարգացմանը նպաստել են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից մի քանի ծրագրերի իրականացման կառավարության աջակցությունը, որի վերաբերյալ պատկերացում ունենալու համար, ըստ 2008-2011թթ., համապատասխան տվյալները ներկայացնենք աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ֆինանսավորումը՝ ըստ 2008-2011թթ.

(մլն. դրամ)

Միջոցառման անվանումը	2008	2009	2010	2011
1. Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողների	1645.0	1602.8	558.0	1498.1
2. Անտառապահպանական, անտառապաշտպանական, անտառավերականգնման աշխատանքների իրագործում	1465.0	1465.0	765.5	708.7
3. Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում	369.1	844.7	547.1	636.0

Տվյալները՝ գյուղ. նախարարություն:

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ֆինանսավորումն ամենաբարձրագույնն է եղել ըստ ոլորտների 2009թ., մասնավորապես գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման ու բարելավման նպատակով:

Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերանորոգում ծրագրով կատարվել են գետերի, հեղեղատների հունների մաքրման

աշխատանքներ: Արաքս գետի վրա Երվանդաշատ և Ջանֆիդա համայնքներում իրականացվել է համապատասխանաբար՝ 152.2 և 154.9 դրամի ավապաշտպան արգելաթմբերի վերանորոգում:

Գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակի բարձրացումը (տե՛ս աղյուսակ 7) հնարավորություն կտա ավելացնելու գյուղացիական տնտեսությունների դրամական հոսքերը և վերարտադրողական կարողությունները: Այն էականորեն կմեղմի նաև գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրները:

Աղյուսակ 7

**Գյուղատնտեսական մթերքի ապրանքայնության միջին կշռված մակարդակի կառուցվածքը՝
ըստ 2008-2011թթ. %**

	Հացա- հատիկ	Կարտո- ֆիլ	Բանջար	Բոստան	Պտուղ հատապտուղ	Խաղող	Միս	Կաթ	Չուլ	Բուրդ	Մեղր
2008թ.	23.0	42.3	75.0	92.0	53.1	83.7	80.3	45.1	44.2	48.6	50.4
2009թ.	25.3	38.4	74.1	93.2	58.0	83.9	81.0	46.0	39.5	39.2	51.3
2010 թ.	23.8	35.0	74.3	91.8	35.0	89.7	76.6	49.4	40.4	37.9	50.2
2011թ.	32.7	40.5	77.4	95.2	52.1	85.1	79.8	51.4	39.7	42.0	62.6

Գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2009-2012թթ. էջ 4:

Պարենի միջազգային շուկաներում բացասական ազդեցությունից փոքր-ինչ զերծ մնալու համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի միջոցառումներ:

Մասնավորապես՝

- ՀՀ գյուղատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումը: Ըստ միջազգային փորձի՝ գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը, որպես կանոն հանգեցնում է տնտեսվարող սուբյեկտների թվաքանակի կրճատման, մեկ տնտեսության հաշվով հողատարածության մեծացման և ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման՝ զբաղվածների թվաքանակի նվազեցման:
- Տեղական արտադրանքի արտադրության խթանում, որը հնարավոր է ապահովել տեղա-կան արտադրության արտադրանքների մրցունակության բարձրացման և արտադրության ծավալների ավելացման միջոցով:
- Մասնագիտական խորհրդատվության տրամադրում, այսինքն՝ նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրի իրականացում, վերջինիս ուղղությամբ գյուղացիական տնտեսություն-ների և գյուղատնտեսությունում զբաղված տնտեսվարողներին խորհրդատվական ու տեղեկատվական աջակցություն:
- Պարենի երկարաժամկետ պահուստների ստեղծում:
- Միջազգային և տեղական պարենային շուկաների ամենամայա մոնիտորինգ:
- Պետության կողմից սուբսիդիաների տրամադրում, երկարաժամկետ և ցածր տոկոսա-դրույքով վարկերի տրամադրում: Կարևորելով գյուղատնտեսությունում տնտեսվարողների վարկավորման պահանջը, հատկապես կապված շրջանառու միջոցների անհրաժեշտու-թյան հետ, գործող բանկային համակարգի վարկավորման պայմանները (վարկավորման ժամկետ, գրավի առարկայի հնարավորություններ, տոկոսադրույք և այլն) բավականին անհասանելի են գյուղացիական տնտեսությունների հիմնական մասի համար:

Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ավելի քան 50%-ի պիտանելիության ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր է արտադրողականությունը, և բարձր՝ շահագործման ծախսերի ու ծառայությունների սակագները: Գործող տեխնիկայի սահմանափակման քանակի և նոր ստեղծված գյուղացիական տնտեսությունների մեծ թվի հետևանքով դրանց միայն մի մասն է ապահովված սեփական միջոցներով: Ապահովվածության ցուցանիշը սարքին տեխնիկայի համար 100 գյուղացիական տնտեսության հաշվով կազմում է՝ կոմբայններինը՝ 0,3, տրակտորինը՝ 3,4, տրակտորային կցասայլերինը՝ 1,6, գութաններինը՝ 0,9, շարքացաններինը՝ 0,5, խոտհնձիչներինը՝ 0,5, հավաքիչ-մամլիչներինը՝ 0,4 միավոր: Անհրա-ժեշտ է հիմնավորել գյուղատնտեսական տեխնիկայով վերազինման հիմնական ուղղություն-

ները և գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման միջոցով բարձրացնել օգտագործվող հիմնական ռեսուրսների մատչելիության մակարդակը, դրանց ներմուծման և օգտագործման ծավալների ընդլայնումը:

Գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների ընդլայնումը և կամավորության և տնտեսվարման բազմաձևության սկզբունքով կոոպերացիայի զարգացումը հանդիսանում է ագրարային բարեփոխումների խորացման կարևորագույն նախադրյալը: Ներկա դժվարությունների հաղթահարման ամենաարդյունավետ ուղին ճյուղի սպասարկող ծառայությունների և շուկայական ենթակառուցվածքների ընդլայնումն ու մրցունակության բարձրացումն է: Կոոպերատիվների կարողությունների ուժեղացման և գործունեության խթանման նպատակով ճապոնական դրամաշնորհների հաշվին ներմուծված 61 միավոր տրակտորներ մատչելի պայմաններով տրամադրվել են գյուղատնտեսական կոոպերատիվներին և համատեղ գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին:

Գյուղատնտեսական արտադրական ենթակառուցվածքների (արտադրատեխնիկական սպասարկումներ, մատակարարումներ, ոռոգման համակարգ, հողերի մելիորատիվ վիճակի պահպանում և բարելավում, գյուղական ճանապարհների վերականգնում և այլն) կատարելագործման համակարգի մշակման և դրա կիրառման գործընթացին կնպաստեն գյուղատնտեսական պետական կառավարման մարմինների բյուջետային, վարկային, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացումը: Գյուղատնտեսության զարգացման կարևոր ուղղություններից մեկը համալիր մեքենայացումն է, որն ագրարային ոլորտի մրցունակության բարձրացման, արտադրանքի արտադրության ավելացման, արտադրական ներուժի լիարժեք օգտագործման կարևորագույն պայմանն է: Սակայն Հայաստանի գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի և խիստ մասնատված հողակտորների պայմաններում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառությունը լուրջ դժվարության է հանդիպում:

Իրատեսորեն գնահատելով գյուղատնտեսության հիմնախնդիրները և զարգացման համար պահանջվող ուղղությունները՝ ագրարային հատվածի առանձնահատկություններով պայմանավորված պետական աջակցության արդյունքում, դրանց կենսագործման միջոցառումներից են՝

- Կարևորել գյուղացիական տնտեսությունների խոշորացումը, մասնավորապես կամավորության սկզբունքի վրա հիմնված կոոպերատիվների, ընկերությունների, ասոցիացիաների ձևավորման միջոցով:
- Ավելացնել կարևորագույն պարենամթերքների տեղական արտադրանքի արտադրության ծավալները:
- Բարձրացնել կարևորագույն պարենամթերքների նկատմամբ հանրապետության ինքնաբավության մակարդակը:
- Պայմաններ ստեղծել նոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրանքի և ապրանքային տեսքի որակների համար:
- Բարելավել արտաքին ապրանքաշրջանառության ընդհանուր և գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշիռը՝ կրճատելով հաշվեկշռի բացասական մնացորդը:
- Արտահանվող արտադրանքի կառուցվածքում մեծացնել գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների մասնաբաժինը:
- Բարենպաստ պայմաններ ստեղծել գյուղատնտեսության զարգացման՝ մասնավորապես, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար:
- Բարձրացնել գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը, որը եականորեն կմեղմի գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրները:
- Ավելացնել գյուղատնտեսությունում տնտեսվարողների և գյուղատնտեսական մթերքներ վերամշակողների եկամուտները:
- Բարձրացնել գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսվարողների մրցունակությունը:
- Ավելացնել գյուղատնտեսությունում տնտեսվարողների և գյուղատնտեսական մթերքներ վերամշակողների եկամուտները:

Лена Ованнисян
Лиана Азатян

О нынешнем состоянии сельского хозяйства РА и возможных путях его развития

Аннотация

В статье анализируются основные показатели динамики развития сельского хозяйства РА. Дается оценка тенденциям, сложившимся в аграрном секторе экономики страны. Представлены пути дальнейшего возможного развития экономики сельского хозяйства, основанные на условиях кооперативных хозяйств.

Lena Hovhannisyan
Liana Azatyan

On current state of agriculture of Armenia and possible development directions

Abstract

The article analyzes main indicators reflecting the dynamics of the growth of the Agriculture in Armenia. The author addresses the trends in the Industry. The article presents the future possible development directions of the Agriculture sector of the economy based of development of cooperatives.

ԱՏՈՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՄԱՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ և
ՄԻՋԱԳԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԿԱՆ ԽԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Փակույթերի դեկան, Կ. Գ. Թ., դոցենտ*

ՀԱՐԿԱՅԻՆ ԽԹԱՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ¹

Ժամանակակից պայմաններում ինչպես ամբողջությամբ վերցրած ազգային տնտեսության այնպես էլ առանձին ընկերության մրցունակության ու դինամիկ զարգացման գլխավոր գրավականը տեխնոլոգիական նորամուծությունների շարունակական կիրառությունն է: Նորամուծությունները բարձր աստիճանի անորոշությամբ ու մեծ ռիսկերով ուղեկցվող գործընթացներ են, որոնց հաջող ելքը շատ դեպքերում պայմանավորված է բարենպաստ ինստիտուցիոնալ պայմաններով: Այս տեսակետից նորամուծությունների բարենպաստ ելքի կարևորագույն նախապայմաններից մեկը պետության կողմից վարվող կարգավորման արդյունավետ քաղաքականությունն է: Ընդ որում՝ միջազգային փորձը վկայում է, որ տնտեսական մրցակցության մեջ լուրջ հաջողություններ են արձանագրում այն երկրների տնտեսական միավորները, որոնք օգտվում են պետության ինչպես ուղղակի, այնպես էլ՝ անուղղակի աջակցության հնարավորություններից:

Հարկային քաղաքականությունը այն կարևորագույն լծակներից է, որն էականորեն ազդում է տեխնոլոգիական և սկսնակ ընկերությունների (**Start-Up**) զարգացման վրա՝ հնարավորություն

¹ Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՀՀԲՀՀ – 2011, ՔԵ-009 «Հայաստանի և Բելառուսի շուկայի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը, ուղղված էրկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներդրվածանը, ադապտացմանը և ներդրմանը» թեմայի ֆինանսավորման շրջանակներում

ընձեռնելով նաև ներգրավել զգալի օտարերկրյա ներդրումներ, որոնք իրենց հետևից բերում են նաև նորագույն գիտելիք և կառավարման փորձ: Բազմաթիվ երկրներ, մասնավորապես ասիական մի շարք հաջող զարգացման փորձ ունեցող երկրները կիրառել են այդ լծակը հարկային նվազ դրույքաչափերի, հարկային արձակուրդների և արտոնությունների տեսքով **Start-Up** ընկերությունների և հատկապես վեճնուրային ներդրողների համար՝ խրախուսելու սեփական երկրներում մրցունակ տեխնոլոգիական ընկերությունների զարգացումը: Երկրները նաև շարունակաբար վերանայում ու բարելավում են ոլորտի հետ կապված իրենց հարկային ու մաքսային քաղաքականությունները, որոնք սովորաբար կիրառվում են երկու ձևով՝ վերանայելով ընդհանուր հարկման կառուցվածքը, երբ կիրառվում են նվազեցված դրույքաչափեր, ինչպես նաև ոլորտի եկամտահարկի նվազեցումը: Եվ երկրորդը՝ տարատեսակ հարկային խթաններ կարող են կիրառվել յուրահատուկ բիզնեսների համար, ինչպես, օրինակ վարկերը գիտահետազոտական աշխատանքների համար, որոնք հատկապես կարևոր են վեճնուրային կապիտալի ներգրավման համար:

Մեծ հաշվով, խնդիրը հանգում է պետության նորամուծային քաղաքականության արդյունավետությանը: Այս հարցում հղումները միայն կարգավորման անուղղակի մեթոդների նպատակահարմարությանը, մեր կարծիքով, այնքան էլ տեղին չեն: Ջարգացած երկրներում հատկապես գիտության ոլորտի նկատմամբ կառավարությունները վարում են ուղղակի աջակցության քաղաքականություն ու այն լրացնում անուղղակի աջակցության բազմակողմանի ու տարաբնույթ գործիքներով: Այդուհանդերձ, մինչև վերջին 1-2 տասնամյակները ընդունված էր համարել, որ նորարարությունների խթանման գործընթացը պետք է աջակցվի ուղղակի պետական ֆինանսավորմամբ: Հատկանշական է, որ բազմաթիվ երկրների նորարարամետ քաղաքականության չափորոշիչների մեջ էական տեղ էր զբաղեցնում ազգային գիտահետազոտական կենտրոններին ու ենթակառուցվածքներին պետության կողմից հատկացվող լրավճարների մեծությունը: Սակայն, ինչպես փորձը ցույց է տալիս, նման սուբսիդավորումը բավականին ծախսատար և դժվար հասանելի է հատկապես թույլ զարգացած և զարգացող երկրների ընկերությունների համար:

Այդուհանդերձ, վերջին տարիներին ազգային նորամուծային քաղաքականության ներդրման հարցում էական դեր է խաղում հարկային օրենսդրական լծակների համարժեք գործադրումը: Նորարարությունների բնագավառի նպատակամետ հարկային խթանման քաղաքականություն են որդեգրել բազմաթիվ զարգացող և զարգացած երկրներ, որոնց հաջողվել է մի շարք խթանող հարկային լծակներով ակտիվացնել նորարարական գործընթացը՝ մասնավորապես նոր տեխնոլոգիաների ներգրավումը, հարմարեցումը և ներդրումը¹:

Այնուամենայնիվ, պետք է նախ և առաջ ընդունել, որ իրականում նորարարամետ հարկային քաղաքականության համար գոյություն չունի մեկ ընդհանրական և համապարփակ մոտեցում: Տարբեր երկրներ առաջնություն են տալիս այս կան այն հարկային իրավաօրենսդրական խթաններին, և դրանք հիմնականում ընտրվում են՝ առաջին հերթին հաշվի առնելով տվյալ երկրի զարգացման առանձնահատկությունները: Որպես միասնական ելակետ պետք է ընդունել սակայն, որ բոլոր երկրներում նորարարամետ քաղաքականության հաջողության ակնկալիքով սահմանվում են որոշակի հարկային զեղչեր կամ արտոնություններ՝ հաշվի առնելով տվյալ երկրի ինստիտուցիոնալ առանձնահատկությունները: Նշված քաղաքականության հաջող իրականացման կարևորագույն նախապայմաններից մեկը կիրառվող օբյեկտի շրջանակների հստակ որոշարկումն է: Մասնավորապես դա վերաբերում է ինվազիոն նախագծերի գիտատեխնիկական նորույթների շրջանակի հստակեցմանը:

Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) մշակած նորմերի համակարգի կամ այսպես կոչված «Օսլոյի ուղեցույցի»՝ ապրանքի կամ գործընթացի **գիտատեխնիկական նորույթը** իր մեջ ներառում է այն ապրանքները և գործընթացները, որոնք տեխնիկապես նոր են և կատարելագործված, ինչպես նաև անցել են որոշակի հարմարեցման

¹ Overview of Singapore Tax Incentives, SINGAPORE TAX INCENTIVES – 2013, Rikvin Pte Ltd <http://www.rikvin.com/taxation/singapore-tax-incentives/>

շրջան¹: Հարմարեցված են համարվում այն նոր ապրանքները և գործընթացները, որոնք հաջողությամբ ներդրվել են շուկայում կամ կիրառվել արտադրության գործընթացում:

Նորարարամետ քաղաքականության խթանման ժամանակ գործադրվող հարկային լծակները թույլ են տալիս իրացնել հետևյալ նպատակները.

- բոլոր ընկերություններում անկախ դրանց չափից, բնագավառից և տարածաշրջանից խթանել գիտական հետազոտությունները,
- խթանել նորարարական գործընթացները բարձր տեխնոլոգիաների ոլորտում (բիոտեխնոլոգիա, նանոտեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, այլընտրանքային էներգետիկա, շրջակա միջավայրի պաշտպանություն և այլն),
- զարգացնել երկրի գիտատար փոքր և միջին բիզնեսը,
- աջակցել սկսնակ ընկերությունների (**start-up**) զարգացմանը,
- խթանել երկրում որոշակի ճյուղերի զարգացումը և այլն:

Վերջին հաշվով, ֆինանսական ռեսուրսներով նորարարական նախագծերի ապահովվածությունը առանցքային նշանակություն ունի երկրի տեխնոլոգիական զարգացման համար: Այս տեսանկյունից ևս երկրի հարկային համակարգը կարող է ստեղծել նպաստավոր պայմաններ՝ նոր ներդրողներին և առկա ձեռնարկություններին սեփական միջոցների ակտիվ վերաներդրումը խրախուսելու նպատակով: Այդպիսի միջոցներից են հարկային հատուկ ռեժիմի կամ արտոնության սահմանումը՝ կապված շահույթի վերաներդրվող մասի, ամորտիզացիոն հատկացումների (հատկապես՝ արագացված ամորտիզացիայի), վնասների փոխհատուցման ապահովագրման հետ: Տնտեսական աճի ավելի լավ հեռանկարներ ունի այն հասարակությունը, որն ընդունակ է ստեղծելու կրթության, գիտության, տեխնոլոգիաների և նորարարության սիներգետիկ համակարգ, երբ փոխգործակցության շնորհիվ համակարգի ընդհանուր արդյունքն ավելի մեծ է, քան նրա մասերի արդյունքների գումարը:

Փաստենք, որ բոլոր զարգացած երկրները ակտիվորեն օգտագործում են պետական կարգավորման անուղղակի մեթոդները, առաջին հերթին՝ հարկային և ամորտիզացիոն գործիքների մեխանիզմները: Այդ մեթոդները հիմնվում են որոշակի արտոնությունների տրամադրման վրա: Մասնավորապես, այդպիսի միջոցներից են գիտահետազոտական աշխատանքների վրա կատարված ծախսերի մի մասի վերագրումը ձեռնարկության արտադրական ծախսերին, հարկերի վճարման հետաձգումը այն ձեռնարկությունների համար, որոնք ներդնում են նոր գիտատար արտադրանք, շահութահարկի նվազեցում, որը համամասնական է ձեռնարկության կողմից գիտահետազոտական աշխատանքների վրա կատարված ծախսերին և այլն:

Հայաստանի Հանրապետության տնտեսության ներկայիս իրավիճակն այնպիսին է, որ հույժ կարևորվում են հարկային ու մաքսային լծակների միջոցով նորագույն տեխնոլոգիաների ինչպես ստեղծման ու ներդրման, այնպես էլ արտաքին շուկաներից դրանց փոխառման գործընթացների արդյունավետ խթանման գործիքակազմի ընտրությունը և գործադրումը: Այս առումով, նախ անհրաժեշտ է դիտարկել այդ բնագավառում առկա լավագույն միջազգային փորձը ու ՀՀ տնտեսության մեջ դրա առավել ուշագրավ տարրերի տեղայնացման հնարավորությունները: Ուսումնասիրելով տարբեր երկրների փորձը խթանող հարկային քաղաքականության համատեքստում հնարավոր կլինի նաև մշակել որոշակի առաջարկներ կամ հանձնարարականներ՝ ուղղված հայաստանյան հարկային նորարարական քաղաքականության ձևավորմանը:

Միջազգային փորձի ընդհանուր պատկերը

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ հնարավոր է ճկուն հարկային քաղաքականության և հարկային զեղչերի որոշակի հավաքածուի շնորհիվ խթանել երկրում նորարարությունների ստեղծումը, տարածումը և հարմարեցումը, միևնույն ժամանակ՝ կարճաժամկետում պահպանելով բյուջեի մուտքերը ցանկալի մակարդակում, իսկ երկարաժամկետում՝ էապես ավելացնել դրանք:

¹ The Measurement of Scientific and Technological Activities, OECD/EUROSTAT. Oslo Manual. OECD. Paris. 1997.

Տարբեր երկրներ կիրառում են նորամուծային գործընթացների օժանդակության տարբեր հարկային խթաններ կամ գործիքներ: Դրանցից յուրաքանչյուրը նպատակ ունի որոշակի լրացուցիչ միջոցներ ձևավորել ընկերությունում, որը կուղղորդի ՊՏՀ զարգացմանը: Հարկային զեղչերից կարելի է առանձնացնել լրացուցիչ հարկային զեղչերը, հարկային հետազոտական վարկը, ամորտիզացիան ֆոնդերի հատուկ ռեժիմի սահմանումը, ներդրումային հարկային վարկը, շահույթից հարկային զեղչը և այլն:

Մինչև 1970-ական թվականները եկամտահարկի և շահութահարկի դրույքաչափերը զգալիորեն բարձր էին աշխարհի շատ երկրներում, և արդեն ակնհայտ էր դրանց բացասական ազդեցությունը ընկերությունների դինամիկ զարգացման վրա¹: Դանդաղել էին այնպիսի մակրոտնտեսական ցուցանիշների աճը, ինչպիսիք էին աշխատուժի վերարտադրությունը և արտադրական ներդրումների ծավալները: Ակնհայտ էր, որ ընկերությունները չունեին բավարար միջոցներ ներդրումներ անելու, ընդլայնվելու և առավելա՛ն՝ նոր տեխնոլոգիաների կիրառման համար:

ԱՄՆ-ն առաջիններից էր, որը ամբողջական առաջարկի խթանման շրջանակներում 1980-ական թվականներին սկսեց հարկային զեղչերի միջոցով խրախուսել արդյունաբերության ոլորտի գիտահետազոտական ներուժի զարգացումը: Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ում 1986-2003թթ. հարկային դրույքաչափերը 50%-ից նվազեցվել են մինչև 35%: Ամենաակնառու փոփոխությունը եղել է կորպորացիաների շահութահարկի նվազեցումը՝ 46-48%-ից մինչև 34-35%²:

ԱՄՆ-ում կիրառվում է հիմնականում երկու տեսակի հարկային զեղչեր՝ ամորտիզացիոն հատկացումները և հարկային վարկեր հաշվարկված հարկային պարտավորություններից: Հարկային զեղչերի մասին օրենքները ժամանակի ընթացքում անընդհատ շտկվեցին և հարմարեցվեցին ընթացիկ իրավիճակին, որպեսզի առավելագույնս նպաստեն տեխնոլոգիական և նորարարական ներուժի զարգացմանը: Արդեն 1996թ. ուժի մեջ մտավ նաև այլընտրանքային աճողական հարկային վարկը (Alternative Incremental Research Credit, AIRC)³, որը նախատեսված է այն ընկերությունների համար, որոնք հնարավորություն չունեն անընդհատ հարկային վարկեր ստանալու, քանի որ իրենց հարկային զեղչերի հաշվարկման բազան առանձին ժամանակահատվածներում կրճատվում է:

ԱՄՆ-ի հարկային վարկավորման ոլորտում հետաքրքիր է նաև առանձին ոլորտների խրախուսման փորձը: ԱՄՆ-ն առանձնացրել է 5 հիմնական ոլորտներ, որտեղ առավել ինտենսիվ էին կիրառվում հարկային զեղչերը: Դրանք էին քիմիական արդյունաբերությունը (ներառյալ դեղագործությունը), էլեկտրոնային տեխնիկայի արտադրությունը՝ ներառյալ հեռահաղորդակցությունը և համակարգչային տեխնոլոգիաները, տրանսպորտային միջոցների արտադրությունը՝ ներառյալ մեքենաշինական և ավիացիոն տեխնիկան, տեղեկատվական տեխնոլոգիաները և մասնագիտացված ծառայությունները: Այդ ոլորտները միասին զրավեցին ամբողջ հարկային վարկի 80%-ը, որոնք առանձնացվել էին ԱՄՆ-ի կառավարության կողմից հռչակված գիտատեխնոլոգիական և նորարարական քաղաքականության խթանման շրջանակներում⁴:

ՊՏՀ զարգացմանն ուղղված հարկային խթանները **Եվրոպայում** սկսել են կիրառվել վերջին երկու տասնամյակում: Չնայած որ 2007թ. արդեն եվրոպական 15 երկրներ կիրառում էին նորարարական հարկային քաղաքականություն, սակայն ոչ բոլոր երկրներում է այն հանդիսացել որպես պետության ՊՏՀ զարգացմանն ուղղված քաղաքականության հիմնական գործիք: Եվրոպական մի շարք երկրներում, ինչպիսիք են Իսպանիան, Պորտուգալիան հարկային խթանները վճռական դեր են ունեցել ՊՏՀ զարգացման գործում, մինչդեռ մի շարք այլ երկրներում (Գերմանիա, Իտալիա, Բելգիա) դրանց կիրառումը տնտեսությունում էական փոփոխության չի հանգեցրել: Նման երկրներում առավել էական են եղել նորամուծությունների ուղղակի աջակցման միջոցառումները: Միևնույն ժամանակ երկրների մի մասը միաժամանակ կիրառում է և՛ անուղղակի (հարկային) և՛ ուղղակի խթանման միջոցներ (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա):

¹ **Иванова Н.И.**, Налоговое стимулирование инновационных процессов, Москва 2009, ст. 9.

² Tax Incentives for Innovation in the United States, USA Innovation Tax Incentives (BHH Draft) 15 January 2001, page 6-7.

³ **Տե՛ս** նույն տեղը, էջ 7:

⁴ **Տե՛ս** F.Moris "The U.S. Research and Experimentation Tax Credit in the 1990s". U.S. Internal Revenue Service, Statistics of Income program InfoBrief. Science Resources Statistics. NSF 05-316. July 2005.

Եվրոպական երկրներից կարելի է նախ և առաջ առանձնացնել **Ֆրանսիան**, որը վերջին տարիներին սկսել է իրականացնել ակտիվ քաղաքականություն՝ հատուկ հարկային խթանների օգնությամբ նորարարությունների զարգացման համար: Արդեն 2008թ. կառավարությունը հայտարարում է գիտության և բարձրագույն կրթության աջակցումը որպես բյուջետային առաջնային քաղաքականություն և 39.5 միլիարդ եվրո ներդրում է կատարում ԳՏՀ զարգացման ոլորտում (ՀՆԱ-ի 2.1%)¹: Որպես նորարարությունների զարգացման ռազմավարական ուղղություններ առանձնացվել են կենսատեխնոլոգիաները, էկո- և նանոտեխնոլոգիաները: Ֆրանսիայում մեծ տեղ է հատկացվում նաև ԳՏՀ խթանման անուղղակի մեթոդներին, մասնավորապես հարկային լծակներին: Ֆրանսիայի հարկային քաղաքականության գործիքակազմի յուրահատկությունը պայմանավորված է մեծմասամբ դրանց կիրառման առանձնահատկություններով:

2000-2002թթ. **Մեծ Բրիտանիայում** սահմանվել են նորարարությունների զարգացմանն ուղղված մի շարք հարկային զեղչեր փոքր և միջին բիզնեսի ոլորտում: Դրանք հետագայում ներդրվեցին նաև խոշոր բիզնեսի ոլորտում: Ներկայումս Մեծ Բրիտանիայում կիրառվում են ԳՏՀ հարկային խթանման երեք հիմնական լծակներ՝

- ԳՏՀ ծախսերի հարկման դրույքաչափերի նվազեցումը:
- Շահույթ չստացող փոքր կազմակերպությունների ԳՏՀ ծախսերի ուղղակի փոխհատուցումը:
- Հարկային զեղչերը այն կազմակերպություններին, որոնք իրականացնում են վարակիչ հիվանդությունների համար պատվաստանյութերի հետազոտություններ:

Ըստ մասնագետների գնահատականի՝ հարկային զեղչերը փոքր և միջին ձեռնարկություններում թույլ են տալիս կրճատել ԳՏՀ ծախսերը մինչ 15.75%, իսկ խոշոր ձեռնարկություններում՝ մինչև 8,4%²: Շահույթ չունեցող ընկերությունները կարող են ստանալ շուրջ 24.5% փոխհատուցում ԳՏՀ ծախսերի դիմաց: 2008թ. հետազոտությունները ցույց տվեցին, որ ընկերությունները սկսել էին ավելի դրական արձագանքել հարկային զեղչերին, և այդ պայմաններում ԳՏՀ ծախսերը ի հաշիվ հարկային զեղչերի 4%-ից աճել էին 8%-ի³:

Անուղղակի միջոցներով, մասնավորապես՝ հարկային լծակներով, նորանուծություններ ոլորտի խթանման հետաքրքիր փորձ է կուտակել Ճապոնիան: Այդ երկրի հարկային լծակների համակարգի բաղկացուցիչ մասն է համարվում «Հատուկ հարկային միջոցառումների մասին» օրենքը⁴, որը թույլ է տալիս կառավարել երկրի արդյունաբերության գիտական հատվածի կառուցվածքը և զարգացման տեմպերը: Այդ օրենքը ներառում է հարկային զեղչերի համակարգ, որը տրամադրվում է մասնավոր հատվածի ընկերություններին՝ հետազոտություններ և փորձարարական գործունեություն իրականացնելու համար:

2000թ. ընդունվեց արդյունաբերական տեխնոլոգիաների զարգացմանը ուղղված ազգային ռազմավարություն, որը նպատակ ուներ ամբողջությամբ վերակազմավորել երկրի նորարարական համակարգի կառուցվածքը՝ նպաստելով տեխնոլոգիական նմանակման (իմիտացիա) ռեժիմից դեպի սեփական գիտական մշակումներին անցմանը: Այս նպատակով 2003–2006թթ. ներդրվեց 12%-անոց հատուկ «հարկային վարկը»՝ ֆիրմայի գիտահետազոտական ծախսերը հոգալու համար: Որպես լրացուցիչ խթան, որը կնպաստեր բիզնեսի ոլորտում գիտության զարգացմանը 2006-2008թթ. բոլոր ընկերություններին առաջարկվել էր 5% հարկային վարկ, որը կտրամադրվեր յուրաքանչյուր լրացուցիչ հետազոտական բաժին ստեղծելու համար: Եվս մեկ խթան էր 12%-ոց հարկային զեղչը, որը տրամադրվում էր արդյունաբերական ընկերություններին ու համալսարաններին կամ ազգային հետազոտական ինստիտուտների միջև համատեղ հետազոտական և գիտական փորձարկումներ իրականացնելու համար⁵:

Միջազգային հարուստ փորձի դիտարկումը կարելի է սահմանափակել Չինաստանի և Մինգապուրի օրինակներով: Չինաստանը համարվում է նորարարամետ քաղաքականությամբ

¹ **Stu** France's Action to Promote Innovation, Directorate-General of Global Affairs, Development and Partnerships, 2010, էջ՝ 2:

² Chris Cassley, Impact of the R&D tax credit, adding value, reducing costs, investing for the future CBI. Brief. February 2009, p. 5

³ Н.И. Иванова, Налоговое стимулирование инновационных процессов, Москва 2009, էջ. 73

⁴ Grant Thornton, Quarterly newsletter on important tax and business developments in Japan, Japan tax bulletin, July 2009

⁵ **Stu** նույն տեղը:

դիմամիկ զարգացող երկիր, որի նպատակն է համաշխարհային շուկայում առաջնություն ձեռք բերել տեխնոլոգիամետ նորարարությունների ոլորտում: Մասնավորապես հարկային խթանման քաղաքականությունը դրսևորվում է բազմաթիվ տարբերակներով՝ սկսած հարկային վարկերից մինչև շահութահարկի զեղչեր, ԳՏՀ ծախսերի խթանում և տեխնոլոգիական սարքավորումների նորացման խրախուսում: Ընդ որում, եթե տարիներ առաջ հարկային լծակները ուղղված էին շահութահարկի և ԱԱՀ-ի մակարդակի իջեցմանը, ապա այժմ հիմնական շեշտը դրվում է հարկման բազայի ընդլայնման և հարկային վարկերի խոշոր զեղչերի մասին¹:

Սինգապուրի կառավարությունը իր հերթին ակտիվ դեր է խաղում երկրի տնտեսական զարգացման գործում՝ բիզնեսին տրամադրելով ֆինանսական արտոնություններ: Այսպես անդրազգային կորպորացիաների ներգրավման դեպքում Սինգապուրը ներդրման առաջին 10 տարվա ժամանակահատվածի համար սահմանել է ընդամենը 10%-ոց շահութահարկ: Սինգապուրի կառավարությունը ներդրել է հարկային զեղչերի փաթեթ, որոնք մեծ ազդեցություն ունեն բիզնեսի վրա: 2008թ. եկամտահարկի մասին օրենքը (Income Tax (Amendment) Act 2008)² ենթարկվեց որոշակի փոփոխությունների, որոնցով նորարարական ընկերություններին տրամադրվում են հարկային զեղչեր: Օրինակ՝ սեփական (կորպորատիվ) գիտության և հետազոտության մեջ յուրաքանչյուր 100 դոլար ներդրման դեպքում ընկերությունը իրավունք է ստանում հարկման ենթակա եկամուտը կրճատել 150 դոլարով: Ինչ վերաբերում է սկսնակ բիզնեսներին, ապա այդ դեպքում տրամադրվում են հարկային արձակուրդներ, որոնք կարող են հասնել մինչև 15 տարի: Բացի դրանից, այն ընկերությունը, որը առաջին անգամ է գրանցվում երկրում, առաջին 3 տարվա ընթացքում ազատվում է շահութահարկից 100 հազար սինգապուրյան դոլարի չափով:

Նորարարամետ հարկային քաղաքականության խնդիրները ՀՀ-ում

Հայաստանում դեռևս չի ձևավորվել մի այնպիսի հարկային քաղաքականություն, որն ունակ լինի ստեղծել գրավիչ միջավայր բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացման համար: Դեռևս չկա նաև այն օրենսդրական ենթակառուցվածքը, որը հրապուրիչ կլինի գլոբալ վենչուրային կապիտալի համար, ինչը ունակ կլինի ֆինանսավորել նորարարական ռիսկային Start-Up նախագծերը: Հարկ է սակայն նշել, որ, առանձին վերցրած, միայն հարկային միջավայրի փոփոխությունը նվազ արդյունքի կհանգեցնի, եթե այն շաղկապված չլինի տեխնոլոգիական զարգացման միասնական ռազմավարության մշակման և իրականացման հետ՝ ներառյալ կրթությունը, գիտությունը, ներքին և արտաքին սպառման շուկաները և պետական արդյունավետ կարգավորումը, մասնավորապես մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը:

Փաստենք, որ տեխնոլոգիական-ինովացիոն զարգացման խթանման տեսանկյունից ՀՀ ներկայիս հարկային համակարգը տարբերակված մոտեցում չի ցուցաբերում, սակայն առաջարկում է մի շարք արտոնություններ ներդրողներին, որոնք ընդհանուր առմամբ վերաբերում են նաև տեխնոլոգիական կամ ինովացիոն բնագավառի ընկերություններին: Մասնավորապես, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը շահութահարկի գծով ընկերության պարտավորությունը որոշելիս կատարված գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների մասով նվազեցում է կատարում: Համաձայն հիշյալ օրենքի 15-րդ հոդվածի՝ «հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերի չափով՝ այդ ծախսերի կատարման տարվա ընթացքում ամբողջովին»³: Այսպես, 500 միլիոն դրամը գերազանցող օտարերկրյա ներդրումները երկու տարով ազատվում են շահութահարկից, իսկ հետագա 8 տարիներին շահութահարկ վճարում են 50 տոկոսով, նրանցից չեն գանձվում մաքսատուրքեր հիմնադիր կապիտալի և ներկրվող հումքի վրա, իսկ «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքը հինգ տարի ժամկետով ներդրումները պաշտպանում է անբարենպաստ փոփոխություններից: Բացի

¹ Taxation and Investment in China 2012, Publication of Deloitte.

² Taxation and Investment in Singapore 2012, Publication of Deloitte.

³ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը: Ընդունված ՀՀ ԱԺ կողմից 1997թ. սեպտեմբերի 30-ին: <http://parliament.am/legislation.php?sel=alpha<ype=3&lang=arm#21>

այդ, տարեկան հարկային վնասները տեղափոխվում են հաջորդ ֆինանսական տարի: Գործում են նաև արտոնություններ արտահանողների համար, օրինակ բացակայում են արտահանման տուրքերը, արտադրանքի և ծառայությունների արժեքի մեջ առկա ԱԱՀ-ն ենթակա է վերադարձի¹:

2010 թվականին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով 300 մլն դրամ և ավելի ներդրում կատարելու դեպքում ընկերությունների կողմից վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետները երեք տարի ժամկետով հետաձգելու արտոնություն է տրամադրվել:

Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի պատվերով ՀՀ-ում տեխնոլոգիական ընկերություններում իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ ոլորտի քանակական և որակական աճին խոչընդոտող ամենակարևոր գործոնն՝ ըստ տվյալ ոլորտը ներկայացնող ընկերությունների, դա տեխնոլոգիական բուհերի շրջանավարտների անբավարար որակավորումն է, որին հաջորդում են ֆինանսավորման աղբյուրների, պետական աջակցության և ոլորտի ազգային ռազմավարության բացակայությունը և ոլորտի հարկային դաշտի անկատարությունը²: Անհրաժեշտ է նաև նշել, որ հարկային դաշտի գործոնը սերտորեն կապված է նաև ֆինանսական միջոցների ներգրավման և պետական աջակցության գործոնների հետ: Այսինքն ներդրումային միջոցների ներգրավման համար բարենպաստ դաշտ ստեղծող և ոլորտի ազգային ռազմավարությունից բխող հարկային կարգավորումը, ինչպես և նոր որակյալ մասնագետների համակարգը ՀՀ-ում ինովացիոն-տեխնոլոգիական զարգացման կարևորագույն գործոններից է:

ՀՀ-ում ՏՏ ոլորտի հիմնական մաքսային դժվարությունները կապված են ՏՏ ապրանքների ներմուծման հետ, երբ ներկրողը հավելյալ ծախսեր է կրում՝ անարդյունավետ վարչարարության, մաքսային օրենսգրքում ՏՏ և բարձր տեխնոլոգիական ապրանքների համար ոչ հստակ սահմանումների պատճառով: Երբեմն հնացած ապրանքների դասակարգման բազան կարող է առաջացնել խնդիրներ: Վիճարկելի են նաև գնորդման մեթոդները, հատկապես տեխնոլոգիական բարդ ապրանքների համար, որոնք ազդում են վճարվող ԱԱՀ-ի չափի վրա, քանի որ հաճախ մաքսային մարմինները կարող են չճանաչել արտադրողի հավաստագիրը և դրանում նշված գինը:

Հարկային քաղաքականության մեջ, ընդհանուր առմամբ, հարկավոր են այնպիսի փոփոխություններ, որոնք խրախուսեն նորամուծություններ պարունակող բիզնես-ժրագրերից շահույթների ստացումը: Այս առումով հատկապես վենչուրային ֆինանսավորման վրա հիմնված նորարարական ընկերությունների շահույթների հարկումը, անկասկած, պետք է իրականացնել զեղչման ռեժիմով կամ ընդհանրապես ազատել հարկումից այն դեպքում, երբ ստացված շահույթները կրկին վերաներդրվում են այդ ընկերությունների հետագա ընդլայնման մեջ (գիտահետազոտական ժրագրերի ֆինանսավորում, նոր սարքավորումների և տեխնոլոգիաների ձեռքբերում, փորձանմուշների փորձարկում, շուկաների որոնում և հատվածավորում, նորամուծությունների կառավարման գծով մենեջերների ուսուցում ու նորերի վարձում և այլն): Մյուս կողմից, վենչուրային ֆինանսավորման վրա հիմնված ընկերությունների հարկումը կարող է կատարվել վերջնական եկամուտներից: Բոլոր դեպքերում, նման հիմնադրամների հարկումը պետք է ունենա խթանող ուղղվածություն և ոչ թե զուտ ֆիսկալ նպատակներ հետապնդի, ինչպես սովորական բիզնեսների դեպքում է:

Մինչդեռ, ՀՀ հարկային օրենսդրությունը, որպես կանոն, նման խնդիրների լուծման նպատակ չի հետապնդում: Ասենք, շահութահարկի հաշվարկման ընթացքում այնպիսի ծախսեր, ինչպիսիք են փորձարարության, գիտահետազոտական սարքավորումների ձեռքբերման կամ մարքեթինգային հետազոտությունների վրա կատարված ծախսերը, ոչ մի կերպ չեն ներառվում եկամուտների նվազեցումների մեջ: Մինչդեռ, նորամուծություններ իրականացնող ցանկացած ընկերության համար հենց այդ ծախսերն են հիմնական: Մյուս կողմից, հենց հարկային ծանր

¹ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=73140>

² Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ. 2011 թ. հետազոտություն: http://www.mineconomy.am/uploads/Industry_Report_2011.pdf

բեռնի պատճառով ստվերում «թաքնված» ընկերություններին գտնելու դժվարությունները խոչընդոտում են ռիսկային ֆինանսավորմանը:

Նորանուծությունների հարկման համակարգը միաժամանակ ռիսկային ֆինանսավորում ենթադրող ձեռնարկչության պլանավորման տեսանկյունից, պետք է լինի կանխատեսելի: Այսինքն, սահմանված հարկման կանոնները պետք է լինեն կայուն և տևական հեռանկարին միտված: Այլ կերպ, սահմանված հարկերը պետք է մեծ ռիսկ պարունակող ներդրողներին հնարավորություն տան բիզնեսի տարբերակները մշակել՝ ելնելով որոշակի այլընտրանքների առկայությունից: Այսինքն՝ հարկերը ամրագրվեն ոչ թե բացարձակ միարժեքությամբ, այլ՝ կախված ռիսկային գործարար նախագծի ելքի աստիճանից, ասենք, որոշակի միջակայքում, օրինակ, շահութահարկի դեպքում՝ 5-10 տոկոսի սահմաններում:

Բացի այդ, հարկավոր է վենչուրային հիմնադրամների կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար բացառել հարկային օրենքների հետադարձ ուժը, եթե դրանք ի վնաս են արդեն կատարված ռիսկային ներդրմանը: Ընդհանուր տնտեսական օրենսդրության կատարելագործումը ևս կարող է լուրջ խթան դառնալ վենչուրային հիմնադրամների ձևավորման ճանապարհին: Այստեղ կարևորվում է ոչ միայն ընդհանուր օրենսդրության զարգացումը, այլև՝ հենց ռիսկային ներդրումներին միտված օրենքների մշակումը և կիրառումը:

Atom Margaryan

The role of tax incentives in the system of technology transfer factors

Abstract

The article deals with international practices applied in innovation-oriented fiscal policy and the possibility of adopting these tools and instruments by the Republic of Armenia. In particular, the article examines the possibility of using fiscal instruments such as research and development tax incentives, research tax credits, special depreciation rules for innovative companies, investment tax credits, income tax rebates, and etc.

Атом Маргарян

Роль налоговых стимулов в системе факторов трансфера технологий

Аннотация

В статье рассматриваются международный опыт инновационно ориентированной налоговой политики и возможности локализации ее элементов в Республике Армения. В частности, изучены возможности использования таких налоговых инструментов, как налоговые льготы для научных исследований и опытно-конструкторских работ, исследовательский налоговый кредит, специальный режим амортизационных отчислений для инновационных компаний, инвестиционные налоговые кредиты, скидки по налогу на прибыль и т.д.

ԲՈՂՉԱ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Բրազիլիան, Ռուսաստանը, Յնդկաստանը, Չինաստանը և Հարավաֆրիկյան Հանրապետությունը 21-րդ դարի սկզբին դարձել են երկրներ, որոնց դինամիկ զարգացումը գրավել է բոլորի ուշադրությունը: Դա պայմանավորված է նրանով, որ ԲՈՂՉԱ երկրները առաջ են անցել զարգացող մի շարք երկրներից ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալներով, արտասահմանում կատարվող ուղղակի օտարերկրյա ներդրումների և ներգրավված օտարերկրյա կապիտալի մեծություններով, ինչպես նաև Համաշխարհային համախառն արդյունքի ստեղծմանն իրենց մասնակցությամբ: Այս երկրներն ունեն զարգացման մեծ ներուժ, տնտեսական կայուն ու դինամիկ աճ:

ԲՈՂՉԱ երկրների ինտեգրման գործընթացն առավել ակնհայտ կերպով է ընթանում Ռուսաստանի, Յնդկաստանի և Չինաստանի միջև: 2008թ. Ռուսաստանի տնտեսական զարգացման նախարարությունը մշակեց մինչև 2020թ. Ռուսաստանի արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների նախագիծ, որը կողմնորոշված էր համաշխարհային շուկաներ ռուսական գործարարության ակտիվ թափանցմանը: Միաժամանակ նախատեսվում էր Ռուսաստանի արտաքին առևտրի վերակողմնորոշում ԵՄ երկրներից դեպի Յնդկաստան ու Չինաստան, որոնք Ռուսաստանի համար պետք է դառնան առաջատար, գլխավոր շուկաներ, քանի որ ավելի դինամիկ են զարգանում, քան ԵՄ շուկան:

Ռուսաստանը, Յնդկաստանը և Չինաստանը ակտիվորեն մասնակցում են համաշխարհային և տարածաշրջանային ինտեգրման գործընթացներին: Այսպես, Ռուսաստանը և Չինաստանը համարվում են Ասիա-Խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության և Համագործակցության Շանհայական կազմակերպության անդամներ: Ռուսաստանը ԱՊՀ-ի և Եվրասիական տնտեսական միության անդամ է, Չինաստանը մասնակից է Հարավարևելյան Ասիայի երկրների ասոցիացիայի: Իր հերթին Յնդկաստանը մտնում է Հարավային Ասիայի տարածաշրջանային կոոպերացման ասոցիացիայի մեջ: Յնդկաստան, Չինաստան և Ռուսաստան եռակողմ համագործակցությունը կղիպչի նշված կազմակերպությունների, եթե ոչ բոլոր անդամ երկրների շահերին ու տարածքներին, ապա գոնե նրանց, ովքեր գտնվում են Արևելյան, Կենտրոնական ու Հարավային Ասիայում: Անհրաժեշտություն է առաջանում մշտական երկխոսության Հարավային Ասիայի տարածաշրջանային կոոպերացման ասոցիացիայի և Ասիա-Խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության, կամ Հարավային Ասիայի տարածաշրջանային կոոպերացման ասոցիացիայի և Համագործակցության Շանհայական կազմակերպության, կամ ԱՊՀ-ի և Համագործակցության Շանհայական կազմակերպության միջև: Եթե Յնդկաստանը մտներ Համագործակցության Շանհայական կազմակերպության մեջ, ապա ռուս-ինդկա-չինական եռակողմ համագործակցությունը նշված կազմակերպության շրջանակներում կարող է ստանալ միջազգային իրավական հիմք համատեղ խնդիրների լուծման համար¹: Համագործակցության շանհայական կազմակերպությունը ունի նաև հեռանկար դառնալու այս երեք երկրների շահերի համաձայնեցման հարթակ, որը, վերջին հաշվով, կտանի ուժերի ևս մեկ համաշխարհային բևեռի ձևավորմանը Ասիայում: Տնտեսական զարգացման համաձայնեցումը Համագործակցության շանհայական կազմակերպության շրջանակներում կարող է խթանել Ասիայի ամբողջ տնտեսության տնտեսական աճի արագացումը: Ըստ ճապոնացի տնտեսագետների, հատկապես տնտեսական աճը Ասիայում կարող է դառնալ հիմք համաշխարհային տնտեսությունը արդի գլոբալ ճգնաժամից դուրս բերելու համար:

¹ Лузянин с. Г., Центральная Азия и проблемы безопасности в трехстороннем сотрудничестве России, Индии и Китая, М., 2005, стр. 1.

Ռուսաստանի, Չինաստանի ու Չինաստանի եռակողմ համագործակցության խորացման օբյեկտիվ հիմքը միջազգային փոխհամագործակցության հիմնական ոլորտներում (միջազգային առևտուր, արտադրություն, ինտեգրում և անվտանգություն) արդի գլոբալ և տարածաշրջանային մարտահրավերների աճն է: Ռազմավարական հեռանկարում այս երեք երկրներն ունեն իրենց ուժերի կոոպերացման լայն հնարավորություններ: Նման համագործակցության հիմնական ուղղություններ կարող են դառնալ երկաթգծերի և ավտոճանապարհների, նավթագազամուղների շինարարության մասշտաբային անդամայրցամաքային նախագծերը, որոնք միացնում են Կենտրոնական, Հյուսիս-Արևելյան և Հարավային Ասիան: Համագործակցության մեծ ներուժ կա գիտատեխնիկական ոլորտում, որում այս երեք երկրներից յուրաքանչյուրը մշակում է կոնկրետ առաջարկություններ՝ ներառյալ չինական և հնդկական աշխատուժի օգտագործումը ռուսական Չեռավոր Արևելքի յուրացման համար:

ԲՌՀՉԱ երկրների ինտեգրման նախադրյալներն են՝

- աշխարհագրական գործոնը; Ռուսաստանը, Չինաստանը և Չինաստանը գտնվում են միևնույն աշխարհամասի վրա և միմյանց հետ ունեն ընդհանուր սահմաններ (Ռուսաստանը Չինաստանի հետ, Չինաստանը Չինաստանի հետ),
- տարանցիկության գործոնը; Ռուսաստանը, Չինաստանը և Չինաստանը միմյանց հետ կապված են տրանսպորտային և հաղորդակցության կապերով,
- մշակութային գործոնը; ԲՌՀՉԱ երկրների միջև բացակայում է լեզվական ընդհանրությունը, սակայն Ռուսաստանը քաղաքակրթական հարաբերություններում զարգացել է որպես ծայրամասային մշակույթ Արևմուտքի և Արևելքի միջև, իր մեջ զուգակցում է այս երկու բևեռների տարրերը, բայց ոչ մեկին էլ նույնական չէ, դրա համար էլ հնարավոր չէ հստակորեն որոշել, թե որ մշակույթն է ավելի մեծ ազդեցություն թողել Ռուսաստանի զարգացման վրա,
- քաղաքական գործոնը; ռուսական պետության պատմական զարգացումը և Ռուսաստանի հասարակաքաղաքական կառուցվածքի ձևավորումը իրականացվեցին ուժեղ կենտրոնացված իշխանությամբ արևելյան բռնապետությունների օրինակով, որին ներկայումս անվանում են ուղղահայաց իշխանություն,
- արդյունաբերական գործոնը, Ռուսաստանը և Բրազիլիան համարվում են Չինաստան և Չինաստան օգտակար հանածոների մատակարարներ,
- տնտեսական գործոնը; ԲՌՀՉԱ բոլոր երկրները միմյանց միջև իրականացնում են համագործակցություն առևտրային գործարքների և փոխադարձ ներդրումների ձևերով:

Առաջին համաձայնագիրը Բրազիլիայի, Ռուսաստանի, Չինաստանի և Չինաստանի միջև դա Առևտրի և համագործակցության մասին պայմանագիրն էր, որը ստորագրվեց 2002թ.:

ԲՌՀՉԱ երկրները հարաբերական ակտիվ ազդեցություն են թողնում Ռուսաստանի ՀՆԱ-ի աճի վրա: Եթե 1995թ. Ռուսաստանի ներմուծումը Բրազիլիայից, Չինաստանից և Չինաստանից կազմել է ընդհանուր ներկրման ծավալի 5,5%-ը, ապա 2010թ. այն հասավ 14,5%-ի¹: Ընդ որում՝ հիմնական մասնաբաժինը պատկանում է Չինաստանին, որը ներմուծման գծով երկրորդ առևտրային գործընկերն է ԵՄ-ից հետո: Չինաստանը նաև երկրորդ ռուսական առևտրային գործընկերն է արտահանման գծով և նրան է բաժին ընկնում Ռուսաստանից արտահանվող ապրանքների ընդհանուր ծավալի 5,6%-ը:

Եթե վերլուծենք ԲՌՀՉԱ երկրների փոխադարձ առևտրային և ներդրումային հարաբերությունների զարգացման աղյուսակների տվյալները, ապա կարելի է գալ այն եզրահանգման, որ տնտեսական համագործակցությունը այս երկրների միջև ընդլայնվում է, և հիմքեր են ստեղծվում նրանց ինտեգրման համար:

¹ Федеральная служба статистики Российской Федерации: Внешняя торговля России со странами дальнего зарубежья.

Առևտրային հոսքերը ԲՈՂՉԱ երկրների միջև 2006-2010թթ.¹

(մլրդ. ռուբլիներով)

Արտահանող կողմը	Ներմուծող կողմը			
	Բրազիլիա	Ռուսաստան	Հնդկաստան	Չինաստան
Բրազիլիա 2006 թ.	—	3.44	0.89	10.20
2007 թ.	—	3.74	0.99	18.30
2008 թ.	—	4.65	0.95	25.90
2009 թ.	—	3.51	3.44	28.30
2010թ.	—	4.00	3,70	31.00
Ռուսաստան 2006 թ.	0.94	—	2.40	17.70
2007	1.71	—	2.47	19.60
2008	3.33	—	3.77	21.20
2009	1.08	—	5.94	16.67
2010թ.	2.00	—	7.55	21.80
Հնդկաստան 2006	1.10	0.73	—	10.90
2007	1.45	0.90	—	14.60
2008	2.52	0.94	—	18.60
2009	2.41	1.53	—	16.09
2010թ.	3.00	2.62	—	24.00
Չինաստան 2006	6.50	14.40	15.30	—
2007	11.40	28.50	24.00	—
2008	16.60	26.80	26.90	—
2009	14.10	22.84	28.70	—
2010թ.	16.30	24.75	31.00	—

Ներդրումային հոսքերը ԲՈՂՉԱ երկրների միջև 2006-2010թթ.²

(մլն ԱՄՆ դոլարներով)

Ներդրող կողմը	Ընդունող կողմը			
	Բրազիլիա	Ռուսաստան	Հնդկաստան	Չինաստան
Բրազիլիա 2006 թ.	—	—	—	—
2007 թ.	—	500.00	—	210.00
2008 թ.	—	—	50.00	—
2009 թ.	—	—	—	—
2010թ.	—	—	—	—
Ռուսաստան 2006 թ.	—	—	—	500.00
2007 թ.	9.30	—	13.00	54.00
2008 թ.	—	—	401.00	25.00
2009 թ.	—	—	2.00	16.00
2010թ.	—	—	2.70	21.00
Հնդկաստան 2000-2001թ.	5.40	3.50	—	7.90
2001-2002 թթ.	5.10	1741.90	—	13.30
2002-2003 թթ.	5.20	0.20	—	29.60
2003-2004 թթ.	5.00	1.40	—	26.60
2004-2005 թթ.	8.90	1.10	—	8.90
2007 թ.	42.00	3.00	—	82.00
2008 թ.	50.80	19.00	—	94.90
2009 թ.	11.00	10.00	—	73.00
2010թ.	14.00	12.80	—	81.00

¹ Ministry of commerce, China, India, Brasil, SA, Russia, Total import & Export, 2007-2010.

² World Investment Report, 2007-2010.

Ներդրող կողմը	Ընդունող կողմը			
	Բրազիլիա	Ռուսաստան	Հնդկաստան	Չինաստան
Չինաստան 2003 թ.	6.67	30.62	0.15	—
2004 թ.	6.43	77.31	0.35	—
2005 թ.	15.09	203.33	11.16	—
2006 թ.	10.09	452.11	5.61	—
2007 թ.	51.13	477.61	22.02	—
2008 թ.	—	538.61	—	—
2009 թ.	—	231.00	—	—
2010թ.	—	301.00	—	—

Այսպես, 2006-2010թթ. բրազիլական արտահանման բաժինը Ռուսաստանի ընդհանուր ներմուծման մեջ աճել է 1,3-ից մինչև 1,8%: Իր հերթին Չինաստանից արտահանումը Բրազիլիայի ընդհանուր ներմուծման ծավալում նույն ժամանակահատվածում ավելացել է 8,7-ից մինչև 10,5%, իսկ Հնդկաստանում՝ 7,3-ից մինչև 11,2%:

Ինչ վերաբերում է Հարավաֆրիկյան Հանրապետության և ԲՌՀՉ-ի կապերին, չնայած ԲՌՀՉԱ երկրների ներսում արտահանման էական աճին, կա բավարար ներուժ այդ պետությունների միջև տնտեսական կապերի ընդլայնման և Հարավ- Հարավ առանցքով առևտրի ծավալների ավելացման համար: Հնդկաստանը և Չինաստանը աշխարհի խոշորագույն սպառողներն են (հատկապես՝ նավթի և այլ հանքային ռեսուրսների), իսկ Ռուսաստանը, Բրազիլիան և Հարավաֆրիկյան Հանրապետությունը՝ այդ ռեսուրսների առաջատար մատակարարները: ԲՌՀՉ - Հարավաֆրիկյան Հանրապետություն և Հարավաֆրիկյան Հանրապետություն - ԲՌՀՉ արտահանման գործառույթները ներկայացնենք աղյուսակներ 3 և 4-ի օգնությամբ:

Աղյուսակ 3

ՌՀՉ - Հարավաֆրիկյան Հանրապետություն արտահանման կապերը¹

(մլրդ ԱՄՆ դոլար)

Արտահանող երկիր	Հարավաֆրիկյան Հանրապետություն		
	1990թ.	2000թ.	2009թ.
Բրազիլիա	0.2	0.3	1.3
Ռուսաստան	—	0.03	0.2
Հնդկաստան	0.0	0.3	1.9
Չինաստան	0.0	1.0	7.4

Աղյուսակ 4

Հարավաֆրիկյան Հանրապետություն - ԲՌՀՉ արտահանման կապերը²

(մլրդ ԱՄՆ դոլար)

Արտահանող երկիր	Տարի	Բրազիլիա	Ռուսաստան	Հնդկաստան	Չինաստան
Հարավաֆրիկյան Հանրապետություն	1990թ.	—	—	—	—
	2000թ.	0.2	0.03	0.4	0.3
	2009թ.	0.4	0.2	2.0	5.6

Հարավաֆրիկյան Հանրապետության առևտրային ռազմավարությունը նպատակ է հետապնդում կապեր հաստատել աֆրիկյան աշխարհամասի հյուսիսի առաջատար ազգային տնտեսությունների հետ և փոխլրացնող արդյունաբերական հանգույցներ ստեղծել հարավի դինամիկ զարգացող երկրների հետ: Նկատի առնելով աղքատ բնակչության մեծ թվաքանակը, գործազրկության և մի շարք այլ հիմնախնդիրների առկայությունը Հարավաֆրիկյան Հանրապետության ինտեգրումը գլոբալ տնտեսությանը չպետք է քայքայի ազգային արտադրությունը և խորացնի գործազրկությունը: Այս պատճառով Հարավաֆրիկյան Հանրապետությունը ձգտում է

¹ Direction of Trade Statistics, IMF.

² Direction of Trade Statistics, IMF.

իր առևտրային հարաբերությունները կառուցել այնպես, որ այն ապահովի փոխլրացնող հանգույցների ձևավորումը արդյունաբերությունում, գյուղատնտեսությունում և ծառայությունների ոլորտում՝ աչառակապանով երկիրն արտաքին քայքայիչ մրցակցությունից: Հարավաֆրիկյան Հանրապետությունը Հարավաֆրիկյան մաքսային միության իր գործընկերների հետ միասին 2009թ. ստորագրեց արտոնյալ առևտրային համաձայնագիր Հարավի ընդհանուր շուկայի հետ: Ներկայումս բանակցություններ են ընթանում Հնդկաստանի հետ նման համաձայնագիր ստորագրելու համար: Հարավաֆրիկյան Հանրապետությունը և Չինաստանը 2010թ. ստորագրեցին Համալիր ռազմավարական գործընկերության համաձայնագիր, որի նպատակն է Հարավաֆրիկյան Հանրապետությունից Չինաստան բարձր ավելացված արժեքով արտահանման զարգացումը և չինական ներդրումների հոսքերի ավելացումը հանքային հանածոների շահագործման աշխատանքներում: Հարավաֆրիկյան Հանրապետության և Հնդկաստանի ու Բրազիլիայի միջև առևտրային արգելքների հաղթահարման համար ստեղծվել են աշխատանքային խմբեր: Հարավաֆրիկյան Հանրապետությունը անդամակցում է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը: Այն ակտիվ դերակատարում ունի Հարավային Աֆրիկայի տնտեսական ինտեգրման գործընթացում:

ԲՌՀՉԱ երկրները չեն համարվում Ռուսաստանի կողմից կատարվող ուղղակի ներդրումների կարևոր օբյեկտներ: Օրինակ, Չինաստանին բաժին է ընկնում ռուսական ներդրումների միայն 1,5%-ը¹: Այնուամենայնիվ, Ռուսաստանը մշակում է երեք ընդհանուր ռազմավարություններ Բրազիլիայի, Հնդկաստանի և Չինաստանի համար: Ռուսաստանի արտաքին քաղաքականության տեսության համապատասխան լատինամերիկյան երկրների հետ քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային համագործակցությունը համարվում է Ռուսաստանի միջազգային գործունեության գերակայություններից մեկը: Ռուսաստանը կառուցվածքային հարաբերություններ է զարգացնում Լատինական Ամերիկայում գործող բոլոր տարածաշրջանային միավորումների հետ:

Բրազիլիան համարվում է Ռուսաստանի առաջատար առևտրային գործընկերը Լատինական Ամերիկայում, չնայած վերջին տարիներին փոխադարձ առևտրային հոսքերը նրանց միջև էական կրճատվել են: 2009թ. Բրազիլիայից ներմուծումը Ռուսաստան կազմեց 3,51 մլրդ ԱՄՆ դոլար, որը 30%-ով կրճատվել էր 2008թ. համեմատ (տե՛ս աղյուսակ 1): Ռուսական շուկայում ավանդական բրազիլական ապրանքներ են պարենամթերքը և գյուղատնտեսական հումքը, որոնք կազմում են Բրազիլիայից Ռուսաստան ներմուծվող ապրանքների 96%-ը: Այսպես, Բրազիլիային է բաժին ընկնում Ռուսաստանում սպառվող խոզի մսի 45%-ը, տավարի մսի՝ 40%-ը, թռչնամսի՝ 15%-ը: Ռուսական արտահանումը Բրազիլիա 2009թ. կազմեց 1,1 մլրդ ԱՄՆ դոլար, որը 20%-ով նվազել էր 2008թ. համեմատ: Ռուսական ընկերություններին է պատկանում պարարտանյութերի բրազիլական շուկայի 27%-ը²:

Առևտրային հարաբերությունների զարգացումը Բրազիլիայի և Ռուսաստանի միջև պայմանավորված է գործունեության տարբեր ոլորտներում համագործակցության փոխադարձ շահերով: 2006թ. այս երկու երկրները պայմանավորվեցին տիեզերական և ռազմական ոլորտներում փոխշահավետ համագործակցության մասին, սահմանեցին միմյանց միջև արտաքին առևտուր 10 մլրդ ԱՄՆ դոլարի չափով: Վերջին ժամանակներս ընդլայնվել են ռուսական և բրազիլական գիտական կենտրոնների համատեղ գործունեությունները: Բրազիլական շուկան գրավիչ է ռուսական ընկերությունների համար(հատկապես ավիոչինարարական արդյունաբերության): Ընդլայնվում է ռուս-բրազիլական համագործակցությունը էներգետիկայի ոլորտում: Ներկայումս այս երկու երկրների միջև դիտվում է արտաքին առևտրային կապերի կայուն աճ:

Ռուսաստանի և Հնդկաստանի միջև առևտրաշրջանառությունը 2009թ. առաջին անգամ հասավ 7,5 մլրդ ԱՄՆ դոլարի, որը 163%-ով ավելին էր նախորդ տարիների համեմատ (աղյուսակ 1): Այս երկու երկրների միջև փոխադարձ առևտրի կառուցվածքում դինամիկ զարգանում են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մետալուրգիան, մեքենաշինությունը, տեղեկատվական և բիոտեխնոլոգիական, տիեզերական, էներգետիկ և դեղագործական ճյուղերը: Շնորհիվ Հնդկաս-

¹ Инвестиционное сотрудничество России и Китая.Двусторонний форум.

² Тюрденов В. Л., о сотрудничестве группы БРИК, а также Мексики и ЮАР, 2007., стр. 11-14.

տանի շուկայի մեծության և բարձր տեխնոլոգիաների ոլորտում նվաճումների, ռուսական ընկերությունների առջև բացվում են լայն հնարավորություններ համագործակցության զարգացման համար: Ռուսական տնտեսության համար Հնդկաստանի գրավչությունը մշտապես աճում է նաև ֆինանսական ծառայությունների ոլորտում, կապված այն բանի հետ, որ զարգացած մի շարք երկրներ իրենց որոշ ֆինանսական կառուցվածքներ տեղափոխում են Հնդկաստան, քանի որ աշխատակազմի պահպանումը այստեղ անհամեմատ էժան է, քան, օրինակ, Շվեյցարիայում: Դրական զարգացում է դիտվում նաև Ռուսաստանի և Հնդկաստանի միջև փոխադարձ զբոսաշրջության ոլորտում:

Ռուսաստանը դեռևս չի համարվում կարևոր օտարերկրյա ներդրող Հնդկաստանում: Այնուամենայնիվ, Հնդկաստանը ոչ միայն շարունակում է մնալ որպես ռուսական ռազմական տեխնիկայի հիմնական գնորդ, այլև դառնում է երկիր, որի հետ կարելի է շահավետորեն առուժախ անել, և որտեղ նպաստավոր է կապիտալի ներդրումը: Ռուսաստանը հաջողությամբ ամրապնդում է իր դիրքերը հնդկական շուկայում: Այսօր Ռուսաստանի և Հնդկաստանի միջև ռազմատեխնիկական ոլորտում ստորագրվել են 15 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր գումարի չափով պայմանագրեր: Ռուսաստանի և Հնդկաստանի միջև ներկայումս կառավարական մակարդակով ձեռք է բերվել համաձայնություն, որ Հնդկաստանի պարտքը նախկին ԽՍՀՄ-ին կփոխակերպվի ներդրումների, որը Ռուսաստանը պետք է կատարի Հնդկաստանում: Այսպես, կողմերը որոշել են Հնդկաստանի տարածքում տիտանի դիօքսիդի արտադրության համատեղ ձեռնարկության ստեղծման մասին, որը մասամբ պետք է ֆինանսավորվի այդ պարտքի հաշվին: Նախատեսվում է պարտքի ընդհանուր գումարից 1 մլրդ ԱՄՆ դոլարի հատկացում համատեղ ձեռնարկությանը: Նախատեսվում է երկու ատոմային ռեակտորների, նաև՝ ատոմակայանի շինարարություն:

Ռուսաստանի և Չինաստանի միջև երկկողմ առևտուրը 21-րդ դարի սկզբին ավելի դինամիկ է զարգանում, քան Բրազիլիայի և Հնդկաստանի հետ, չնայած 2010թ. արտաքին առևտրաշրջանառությունը Ռուսաստանի և Չինաստանի միջև կազմել է 39 մլրդ ԱՄՆ դոլար, որը 21%-ով ցածր է 2009թ. մակարդակից¹: Չինաստան ռուսական արտահանման մեջ առաջին տեղում է վառելիքաէներգետիկ համալիրի արտադրանքը (ամբողջ արտահանման 47,5%-ը): Ի տարբերություն ռուսական արտահանման, Ռուսաստանը Չինաստանից ներկրում է մեքենա-շինական և էլեկտրոնային արտադրանք (ավտոմեքենաներ, շինարարական սարքավորումներ, էլեկտրոնիկա և կապի սարքավորումներ):

Ռուսաստանի և Չինաստանի ներդրումային ոլորտում տեղի է ունենում երկկողմ փոխգործողության մասշտաբների կայուն ավելացում: Նման համագործակցությունը բացատրվում է նրանով, որ երկու երկրներում էլ աճում է ազգային տնտեսությունների տարբեր ճյուղերում փոխադարձ ներդրումներ կատարելու գրավչությունը: Հեռանկարային է նաև Ռուսաստանի և Չինաստանի միջև համագործակցությունը ֆինանսական ոլորտում՝ Համագործակցության շահապակաս կազմակերպության շրջանակներում:

Բրազիլիայի, Հնդկաստանի և Չինաստանի ներքին շուկաներում ռուսական ընկերությունների աշխատանքների ընդհանուր հիմնախնդիրներից են սակագնային և ոչ սակագնային առևտրային սահմանափակումները, մտավոր սեփականության իրավունքի խախտումները, կրկնակի հարկումը և այլն: Որպես կանոն, արտաքին շուկաներ դուրս գալիս օտարերկրյա տնտեսական սուբյեկտները բախվում են տեղական միջավայրի խիստ պայմանների: ԲՌՀՉԱ երկրներում լայնորեն կիրառվում են ոչ սակագնային սահմանափակումները, որոնք ներմուծողների համար համարվում են ավելի ազդիչ: Օրինակ, Բրազիլիան տարբեր ճյուղերում սահմանում է ներմուծման լիցենզիաներ (բժշկական սարքավորումներ, հաստոցներ և այլն), Չինաստանում գործում են յուրօրինակ մաքսային ընթացակարգեր: ԲՌՀՉԱ երկրների բոլոր շուկաների համար ընդհանուրն այն է, որ մաքսային ընթացակարգերը ապրանքների առևտրում բարդ են և ոչ թափանցիկ: Տեխնիկական առևտրային սահմանափակումները ևս պակաս դեր չեն խաղում ԲՌՀՉԱ երկրներում:

¹ Индия, Образ 2020г././ Плановая комиссия Индии, 2000/, стр. 16.

ԲՌՅՁԱ երկրների համագործակցությանը խոչընդոտող հիմնախնդիրների լուծման համար այս երկրների կառավարությունները կնքում են երկկողմ պայմանագրեր: Հիմնական փաստաթուղթը, որը թույլ է տալիս լուծել այդ հիմնախնդիրները, ազատ առևտրի մասին համաձայնագիրն է:

ԲՌՅՁԱ երկրների ինտեգրման գործընթացում կարևոր դեր են խաղում այս երկրների առաջատար միջազգային կորպորացիաները, որոնց ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են վերջիններիս ուժեղ և թույլ կողմերը: Որպես ուժեղ կողմեր դիտարկվում են՝

- կոնկրետ շուկայական պայմաններում մարքեթինգի ամբողջ համալիրն արդյունավետ ու արագ կառավարելու նրանց իմացությունը,
- շուկային սկզբունքորեն նոր ապրանքներ և ծառայություններ ներկայացնելու նրանց ունակությունը,
- շնորհիվ որակավորված աշխատուժի բարձր ներուժի և նրա հարաբերական ցածր արժեքի, ավելի ցածր գներով (քան այն գներն են, որ սահմանում են զարգացած երկրների հիմնական մրցակիցները) որակյալ ապրանքներ և ծառայություններ արտադրելու նրանց ունակությունը,
- հիմնական մրցակիցների մոտ իր արտադրանքի, աշխատակազմի և ամբողջությամբ կորպորացիայի բավականին բարձր վարկանիշի պահպանումը,
- խորը տնտեսական ճգնաժամի պայմաններում մրցունակության ապահովումը:

ԲՌՅՁԱ երկրների կորպորացիաների թույլ կողմերը բնութագրում են ամենից առաջ այն, որ այս երկրների ՀՆԱ-ի զգալի մասը արտադրվում է վառելիքէներգետիկ համալիրի, ծանր մետալուրգիայի և ծանր մեքենաշինության ընկերություններում: Ռեսուրսակողմնորոշված տնտեսությունում ֆինանսական ռեսուրսները վերաբաշխվում են արդյունահանող ճյուղերում, որը արգելակում է վերամշակող արդյունաբերության և բարձր տեխնոլոգիաների ոլորտների (որոնց ընկերությունները արդյունավետ մարքեթինգային քաղաքականություն իրականացնելու համար միջոցների կարիք ունեն) տնտեսական զարգացումը: ԲՌՅՁԱ երկրներից յուրաքանչյուրի կորպորացիոն հատվածն ունի իր առանձնահատկությունները: Խոշոր հնդկական ընկերությունները, որոնք ըստ սեփականության ձևի՝ մասնավոր են, տարբերվում են Բրազիլիայի, Ռուսաստանի և Չինաստանի ընկերություններից դեպի արտաքին շուկա առավել բարձր կողմնորոշվածությամբ: Շատ հնդկական ընկերություններ ներկայացնում ծառայությունների ոլորտը:

Ռուսական ընկերությունները ցուցաբերում են ճգնաժամային պայմաններում կենսակայունության բարձր աստիճան: Դա հաստատվեց նրանով, որ ԲՌՅՁԱ երկրներից արդի ճգնաժամի ամենալուրջ հետևանքները զգաց Ռուսաստանը, մինչդեռ Հնդկաստանն ու Չինաստանը ցուցադրեցին դրական դիմամիկա, իսկ Բրազիլիայում տնտեսական աճը դանդաղեց մինչև զրո:

Արտաքին շուկաներ դուրս գալու համար ԲՌՅՁԱ երկրների խոշոր ռեսուրսակողմնորոշված կորպորացիաները օգտագործում են միաձուլման և կլանման ռազմավարությունը և գործնականում չեն ապավինում մարքեթինգային ռազմավարությանը: Դա չի համապատասխանում զարգացած պետությունների շուկաներում գործող ժամանակակից մրցունակ ընկերությունների զարգացման մակարդակին:

Մարքեթինգային ռազմավարությունը, որպես կանոն, օգտագործվում է ԲՌՅՁԱ երկրների բարձր տեխնոլոգիաների, մեքենաշինության և ծառայությունների ոլորտի կորպորացիաների կողմից և այն ձևավորվում է զարգացած երկրների միջազգային ընկերությունների փորձի հիմքի վրա:

ԲՌՅՁԱ երկրների կորպորացիաների գործունեությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասն է օժտված մարքեթինգային ռազմավարության ստեղծման լիարժեք գործընթացի կազմակերպման համար նոր գաղափարների և ժամանակակից տեխնոլոգիաների ձևավորման ինքնուրույնությամբ:

Ինչպես տեսնում ենք, ԲՌՅՁԱ համագործակցությունը ի զորու է դառնալու հզոր տնտեսական միավորում, որը վճռորոշ ազդեցություն կունենա գլոբալ, այդ թվում քաղաքական գործընթացների վրա, և չնայած բազմաթիվ խնդիրներին ու ԲՌՅՁԱ երկրների առջև ծառայած մարտահրավեր-

ներին (աղքատության բարձր մակարդակ, տարածաշրջանների անհամաչափ զարգացում, սոցիալական ասպահովության ոլորտի թերություններ և այլն) այս համագործակցությունը կենսունակ է և ունի մեծ հեռանկարներ:

Тамар Маргарян

Процесс интеграции стран БРИКС

Аннотация

Бразилия, Россия, Индия, Китай и Южно-Африканская Республика в начале 21-го века стали странами, привлечшими к себе внимание всего мирового сообщества, своим динамичным развитием. Такой интерес был вызван тем, что страны БРИК опередили многие развивающиеся страны по объемам экспорта товаров и услуг, по величине прямых иностранных инвестиций за рубеж и привлекаемого иностранного капитала, а также по участию в создании мирового внутреннего валового продукта.

Движущей силой этого интенсивного процесса являются крупнейшие международные корпорации стран БРИКС, которые в начале 21-го века вошли в состав ведущих компаний развитых государств.

Tamar Margaryan

Integration processes among Brics nations

Abstract

The article discusses how BRICS emerged at the beginning of the 21st century and perspectives on integration processes among these nations. Dynamically growing economies of Brazil, Russia, India, China and the South African Republic attracted these nations to form a union at the begging of the 21st century. The BRICS nations outperformed many developed countries in terms of the exported of goods and services, outward and inward FDI flows, and portfolio investments to these countries, and their role in generating the world GDP. And the drivers of these intensive processes are the transnational corporations from BRICS nations that were in line with the multinational corporations from the developed world at the beginning of the 21st century.

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԸ ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծումը արտահայտեց իրոք անկախ երկրների միջև որակական նոր միության ստեղծման փորձ: Սակայն ԱՊՅ գոյության 20 և ավելի տարիները ցույց տվեցին, որ համագործակցության ստեղծումը ոչ թե միավորման նոր ձև է, այլ զարգացման ինքնուրույն ուղի անցած երկրների անջատման ձև:

Տնտեսական տեսակետից ԱՊՅ երկրները ունեին օբյեկտիվ հիմքեր իրենց տնտեսությունների ինտեգրման համար, քանի որ դրանք պատմականորեն խիստ կապակցված էին որպես ԽՍՀՄ միասնական ժողովրդատնտեսական համալիրի տարրեր: Անկախ զարգացման առաջին տարիներին բոլոր երկրներն էլ ձգտում էին լուծել մեկ ընդհանուր խնդիր՝ ստեղծել շուկայական տնտեսության հիմքերը: Սակայն բոլոր երկրները դա արեցին տարբեր ձևերով և տարբեր ժամանակահատվածներում: Այդ խնդիրը, որքան էլ տարօրինակ թվա, չխթանեց ԱՊՅ երկրների շահերի միավորմանը¹: Մերձբալթյան երկրները (Լատվիա, Լիտվա, Էստոնիա) չհանդիսանալով ԱՊՅ անդամ, շուկայական բարեփոխումներ իրականացնելիս ավելի մեծ հաջողությունների հասան, քան ԱՊՅ անդամ երկրները:

Դրա հետ մեկտեղ ազգային-պետական անկախության ձևավորման փուլի դժվարությունները և տնտեսական համակարգերի արմատական վերափոխումները առաջացրին խորը ճգնաժամ, որի հետևանքով ԱՊՅ երկրների արտադրության ծավալների խորն անկում գրանցվեց՝ 35%-ից մինչև 55%՝ 1990թ. մակարդակի համեմատ:

Ըստ Տնտեսական միության Միջազգային տնտեսական կոմիտեի գնահատումների, ներկայումս ԱՊՅ երկրներին է պատկանում համաշխարհային արդյունաբերական ներուժի 10%-ը, բնական ռեսուրսների հիմնական տեսակների պաշարների 25%-ը: Էլեկտրաէներգիայի արտադրությամբ Համագործակցության երկրները աշխարհում չորրորդն են (էներգակիրների արտադրության համաշխարհային ծավալի 10%-ը): Այս երկրներին է բաժին ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 3,75%-ը:

Ճգնաժամային երևույթների աստիճանական հաղթահարման անհրաժեշտ նախապայմանը դարձավ տնտեսական բարեփոխումների իրականացումը: Ընդ որում՝ կախված կոնկրետ պայմաններից ու սոցիալ-տնտեսական վիճակից, արմատական վերափոխումների խորությունը և տեմպը սկզբնական շրջանում այդ երկրներում տարբեր էր: Օրինակ, եթե Ռուսաստանում և Ղրղզստանում տիրապետում էին (ոչ միշտ հետևողականորեն) «շուկային թերապիայի» տարրերը, ապա ասիական տարածաշրջանում, ինչպես նաև Բելառուսում շուկայական մեխանիզմի ձևավորման աշխատանքները կատարվում էին ավելի սահուն: Ուկրաինան փորձում էր ամբողջությամբ կրկնել այն բարեփոխումները, որոնք կատարվել էին Ռուսաստանում:

Հետխորհրդային երկրներում սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացման կարևոր օբյեկտիվ նախադրյալ էր Ռուսաստանում կատարված բարեփոխումների արդյունքները: Չէ որ այն երկրները, որոնք մտել էին ԱՊՅ մեջ, Ռուսաստանին շարունակում էին ընկալել որպես «ավագ եղբոր»², շատ բաներում հետևելով ռուսական վերափոխումների նպատակներին ու արդյունքներին: Մերձբալթյան երկրները չանդամակցելով ԱՊՅ-ին, իրականացնում էին բարեփոխումներ առանց Ռուսաստանին նայելու՝ հետևելով արևմտյան երկրների և միջազգային կազմակերպությունների խորհուրդներին, ինչը մեծ մասամբ պայմանավորված էր շուկայական հարաբերությունների պայմաններում նրանց բնակչության ապրելու ներքին պատրաստակամու-

¹ Международные экономические отношения., Учебник, 2-ое изд., Под. ред. Смитиенко, М, 2008.

² Россия в глобализирующемся мире: модернизация российской экономики /под. ред. акад. Д.С.Львова, М., Наука,2007.

թյամբ: ԱՊՀ երկրներում նման ներքին պատրաստակամություն չկար, երկրների ղեկավարները չունեին բարեփոխումների իրականացման հստակ ծրագիր:

1990-ական թվականների վերջին ԱՊՀ երկրներում աստիճանաբար ձևավորվեցին տնտեսությունների բարեփոխման գործընթացի ընդհանուր ուղղվածությունները, որոնցից շատերը արդիական են նաև այսօր: Դրանք են՝

- ազգային տնտեսության կառուցվածքային վերակառուցում շուկայական հիմքերով, տեխնոլոգիական հետամնացության և միակողմանի զարգացման բացասական հետևանքների հաղթահարում,
- արտադրության արդիականացման համար պայմանների ստեղծում, արտադրության արդյունավետության բարձրացում և ռեսուրսային ներուժի օգտագործում համաշխարհային ապրանքային և հումքային շուկաներ դուրս գալու համար: Սա պետք է նպաստի համաշխարհային տնտեսությանը հետխորհրդային երկրների ինտեգրմանը:
- մասնավոր սեփականության՝ որպես հարաբերությունների տիրապետող ձևի, հաստատում, այդ հիմքի վրա մասնավոր ձեռնարկատիրության խթանում,
- ազգային շուկայական ենթակառուցվածքների զարգացում. բանկային, ներդրումային, ապահովագրական, առևտրամիջնորդային, անշարժ գույքի և այլն,
- մակրոտնտեսական կայունության ձեռքբերում, արտադրության անկման դադարեցում, ֆինանսավարկային ճգնաժամի վերացում, գնաճի ճնշում, ազգային արժույթի ամրապնդում,
- ընդհանուր տնտեսական ու քաղաքական բարենպաստ պայմանների ստեղծում օտարերկրյա կապիտալի ներգրավման համար:

Հետխորհրդային երկրների տնտեսական բարեփոխումների հիմնական ուղղությունը և խորը տնտեսական փոխկապվածությունը հաստատվում է հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների անկումների ու վերելքների, ֆինանսական ճգնաժամերի ժամանակային համընկմամբ (1992-1994թթ., 1998թ.)¹:

Կապված աշխարհագրական մոտիկությամբ և ձևավորված ընդհանուր տրանսպորտային ենթակառուցվածքով, ԱՊՀ երկրները շահագրգռված են Համագործակցության տարածքով դեպի հեռավոր արտասահմանյան երկրներ տարանցումների իրականացմամբ: ԽՍՀՄ փլուզումից հետո բարեփոխումների ակտիվ շրջանը ցույց տվեց, որ նախկին հանրապետությունների հույսերը ներքին խնդիրները հաջողությամբ լուծելու համար դեպի արևմտյան շուկա սեփական տնտեսությունների վերակողմնորոշման միջոցով անհրաժեշտ է: Աստիճանաբար հասկանալի էր դառնում, որ ազգային արտադրության զարգացման համար միջազգային տնտեսական կազմակերպություններից էական օգնություն ստանալու հնարավորությունները սահմանափակ են:

Փոխադարձ տնտեսական կապերի խզումը ԱՊՀ երկրներից ոչ մեկի շահերին չէր համապատասխանում: Այն ուժեղացնում էր արտադրության անկումը, նվազեցնում արտադրական հզորությունների օգտագործման մակարդակը: Ըստ փորձագիտական գնահատումների, ԱՊՀ երկրներում բարեփոխումների սկզբնական շրջանում արտադրության անկման ուղիղ կեսը բացատրվում էր փոխադարձ ապրանքաշրջանառության կրճատմամբ, որի անկման տեմպերը 1,5-2 անգամ գերազանցում էին արտադրության անկման տեմպերին:

1992-1996թթ. բարեփոխումների սկզբնական շրջանը բնութագրվեց ԱՊՀ-ում միջին հաշվով հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների խորն անկմամբ: Դիտվեց ընդամենը մեկ դրական միտում՝ Համագործակցության անդամ երկրների միջև առևտրաշրջանառության աճ 1992-1997թթ.: 1992-1994թթ. ընկած ժամանակահատվածը, որը բնութագրվում էր ընդհանուր մակրոտնտեսական անկայունությամբ, ազգային տնտեսության իրական հատվածում ճգնաժամի աճով և ֆինանսական ու սոցիալական ոլորտներում անկայունությամբ (որն արտահայտվեց սպառողական զանգվածի աճով), հանգեցրին շուկայական բարեփոխումների սեղմանը կամ էլ զգալի արգե-

¹ Интеграционные процессы в странах СНГ: тенденции, проблемы и перспективы /под. ред. д-ра экон. Наук, проф. Б. М. Смитиенко, М., Финакадемия, 2008., стр. 17-23.

լակմանը: ԱՊՀ երկրներում միջին հաշվով 1991-2000թթ. ՀՆԱ-ն նվազեց 34%-ով, արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 40%-ով, գյուղատնտեսական արտադրանքը՝ 28 %-ով:

Պետք է նշել, որ ըստ տնտեսական զարգացման մակարդակի և բարեփոխումների ուղղվածության, երկրները բաժանվեցին առանձին խմբերի: Առաջատար դիրքերում Մերձբալթյան երկրներն էին: Նրանք ավելի հետևողական էին շարժվում դեպի շուկա և հետխորհրդային տարածքում ունեին բնակչության 1 շնչին ընկնող ամենաբարձր ՀՆԱ-ի ցուցանիշները (Էստոնիա՝ 16,2 հազ. դոլար, Լիտվա՝ 14,3 հազ. դոլար, Լատվիա՝ 13,6 հազ. դոլար՝ 2008թ. տվյալներով): Սլավոնական երկրներում՝ Ռուսաստան՝ 11,0 հազ. դոլար, Բելառուս՝ 7,8 հազ. դոլար, Ուկրաինա՝ 6,7 հազ. դոլար: Կովկասյան երկրներում՝ Ադրբեջան՝ 5,7 հազ. դոլար, Հայաստան՝ 4,4 հազ. դոլար, Վրաստան՝ 3,2 հազ. դոլար: Մոլդովայում այն կազմեց 1,9 հազ. դոլար: Տնտեսական զարգացման ոչ բարձր մակարդակով էին բնութագրվում ասիական խմբի երկրները (Ղազախստան՝ 8,6 հազ. դոլար, Թուրքմենստան՝ 7,6 հազ. դոլար, Ուզբեկստան՝ 2,1 հազ. դոլար, Ղրղզստան՝ 1,9 հազ. դոլար, Տաջիկստան՝ 1,3 հազ. դոլար):

1997թ., համեմատած նախորդ տարիներին, աճեցին ՀՆԱ-ի և արդյունաբերական արտադրության ծավալները: Սակայն 1998թ. ԱՊՀ մի շարք երկրներում ՀՆԱ-ի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների աճի տեմպերը նորից դանդաղեցին, իսկ որոշ երկրներում էլ դարձան բացասական: Սա կապված էր Ռուսաստանում ֆինանսական ճգնաժամի հետևանքների հետ: Այստեղ արտահայտվեց ինտեգրման թերություններից մեկը. անդամ պետությունների տնտեսությունների փոխկապվածությունը բերում է ոչ միայն դրական, այլև բացասական արդյունքների: 1999թ. մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների մակարդակը նվազեց և 1991թ. նկատմամբ կազմեց 30%-ից ավելի: Հարկ է նշել, որ հիմնական կապիտալում ներդրումների մակարդակը և բեռնափոխադրումների ծավալները կրճատվեցին ավելի քան 70%-ով: 1998թ. ճգնաժամի ազդեցությունը ԱՊՀ երկրների տնտեսությունների վրա բազմապլանային էր: Ինչպես Ռուսաստանի, այնպես էլ մյուս երկրների տնտեսությունների վրա այն ունեցավ «մաքրող» ազդեցություն: Ճգնաժամը բերեց հայրենական արտադրանքի ներքին պահանջարկի աճի՝ խթանելով ազգային արտադրության ծավալների աճը:

ԱՊՀ երկրները տնտեսությունում դրական արդյունքների հասան 1999-2000թթ.: Համագործակցության երկրների մեծ մասի համար 2000թ. տվյալները լավագույնն էին բարեփոխումների ողջ շրջանում: Տնտեսական աճը ուղեկցվեց գնաճի մակարդակի իջեցմամբ, ապրանքների ու ծառայությունների արտադրության ծավալների աճով, ներդրումային ակտիվության բարձրացմամբ: ԽՍՀՄ նախկին հանրապետությունները թույլ էին կապված համաշխարհային շուկայի հետ. արտահանվում էր արտադրվող արտադրանքի շուրջ 3%-ը, ներմուծվում՝ օգտագործվող ռեսուրսների 4-7%-ը: Համակարգային վերափոխումների պայմաններում տեղի ունեցավ ազգային տնտեսությունների կառուցվածքային անհամամասնությունների խորացում:

2000թ. հետո ԱՊՀ երկրները թևակոխեցին տնտեսական բարեփոխումների նոր շրջան: Բարեփոխումների սկզբնական փուլը (1992-1998թթ.), որպես առավել դժվար ու ցավոտ, վերջացավ: Յուրաքանչյուր երկրում հստակորեն նախագծվեց հետագա սոցիալ-տնտեսական վերափոխումների ծրագիրը, և միաժամանակ, ի մի բերվեցին անցած բարեփոխումների արդյունքները:

Հետխորհրդային երկրներում բարեփոխումների առաջին շրջանի երկարատև ու հիվանդագին լինելը բացատրվում է նրանով, որ անցումը շուկային կրում էր ինքնուրույն ազգային պետությունների ստեղծման դժվար ու ծայրահեղ հակասական գործընթացի ազդեցությունը: Այդ պատճառով էլ ԱՊՀ երկրներում շուկայական տնտեսության ստեղծումը այնքան արագ ու արդյունավետ չէր, որքան արևելաեվրոպական երկրներում: Այնուամենայնիվ, 21-րդ դարի սկիզբը Համագործակցության երկրների համար լուրջ տնտեսական հաջողություններով նշանավորվեց: ԱՊՀ երկրներում տնտեսական առաջընթացի կարևոր բնութագրիչներ են նաև ներդրումային ակտիվության աճը, գնաճի իջեցումը:

ԱՊՀ երկրները իրենց տնտեսությունների բարեփոխումների գործընթացում անցում կատարեցին ներմուծմանը փոխարինող կարճաժամկետ ծրագրերից երկարաժամկետ արդյունաբերական քաղաքականության և նորարարության հիմքի վրա կառուցվածքային ձևափոխումների:

Օրինակ, Ղազախստանում 2003թ. իրականացվում է «Արդյունաբերական-նորարարական զարգացման ծրագիր մինչև 2015թ.»: Դրա նպատակը օտարերկրյա ներդրումների հիմնական հոսքերը արդյունահանող ճյուղերից վերանշակող ճյուղեր ուղղորդելն է, որի համար մշակվել են համապատասխան հարկային արտոնություններ և արտոնյալ պայմաններ աշխատատար արտադրանք արտադրողների համար: Այս առումով ստեղծվում են հատուկ տնտեսական գոտիներ, մասնավորապես, ստեղծվում են 4 տեխնոպարկեր նորարարության զարգացման համար: Ալաթաու քաղաքում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, Ստեպնագորսկում՝ բիոտեխնոլոգիաների, Կուրչատովում՝ միջուկային հետազոտությունների, Պրիոգերսկում՝ կապի միջոցների:

Բարեփոխումների ընթացքում ԱՊՀ երկրներում ընդլայնվեցին արդյունաբերություն, ֆինանսական հատված և ծառայությունների ոլորտ օտարերկրյա ներդրողների մուտքի հնարավորությունները: Դա ակտիվացրեց ազգային ընկերությունների գործունեությունն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում՝ ուժեղացնելով այդ երկրների դիրքերը համաշխարհային տնտեսությունում:

ԱՊՀ անդամ երկրների գլխավոր խնդիրը ընդհանուր տնտեսական տարածքում բազմակողմանի և հավասարակշռված տնտեսական ու սոցիալական զարգացումն է: ԱՊՀ անդամ երկրները հարևաններ են և դատապարտված միասնական տարածքում ապրելու և համագործակցելու: Սա փոխազդեցության յուրօրինակ ձև է և առանձնանում է աշխարհատնտեսական կապերի ողջ համակարգից:

ԱՊՀ անդամ երկրները գիտակցում են, որ Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությունը պարտադիր է: Պետք է օգտագործել ռուսական շուկայի լայն հնարավորությունները որպես արտահանման հիմնական ուղղություն, քանի դեռ համաշխարհային շուկայում ամուր դիրքեր չեն նվաճվել: Համագործակցության երկրների բաց շուկայական տնտեսության ձևավորման և արտաքին տնտեսական գործունեության ազատականացման քաղաքականությունը նախադրյալներ է ստեղծում նրանց համաշխարհային տնտեսություն ներգրավելու համար: Փոխադարձ առևտրի զարգացումը տնտեսական ինտեգրման անհրաժեշտ պայման է: ԱՊՀ երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալները դեռևս ցածր մակարդակի վրա են: Դրա դինամիկան և աճի տեմպերը անհավասարաչափ են: Նրանք, ում համար արտահանման գլխավոր ուղղվածությունը հուսմքն է, ձգտում են երրորդ երկրների շուկաներ, իսկ կապիտալ և սպառողական ապրանքներ ներմուծողները գերադասում են դրանք ներկրել հեռավոր արտասահմանից: Արդյունքում, չնայած տարածաշրջանային առևտրում արժեքային ծավալների աճին, Ռուսաստանի բաժինը ԱՊՀ երկրների արտահանման և ներմուծման մեջ աստիճանաբար նվազում է: 1990թ. նրանց փոխադարձ առևտրի տեսակարար կշիռը կազմել է արտահանման գործառնությունների ընդհանուր ծավալի 60%-ը, 1995թ.՝ 29,8%, 2000թ.՝ 20,0%, 2010թ.՝ 17,7%, այսինքն՝ կրճատվել է 3,4 անգամ:

ԱՊՀ երկրները աստիճանաբար հեռանում են տնտեսական ձգողության ռուսական կենտրոնից և վերակողմնորոշվում դեպի այլ արտաքին առևտրային գործընկերներ, հիմնականում՝ Եվրամիության շուկաներ: Ղազախստանի համար այն 3,3 անգամ ծանր է, քան Ռուսաստանի շուկան, Հայաստանի համար՝ 3,8 անգամ և այլն¹: Ի հայտ են եկել ձգողության ավելի հեռանկարային կենտրոններ. Ադրբեջանի, Վրաստանի և Տաջիկստանի համար՝ Թուրքիան, Թուրքմենստանի և Հայաստանի համար՝ Իրանը, Ղրղզստանի համար՝ Միացյալ Արաբական Էմիրությունները:

Սկզբնական շրջանում Ռուսաստանը ԱՊՀ երկրների համար հզոր տնտեսական ու քաղաքական ձգողության կենտրոն էր, քանի դեռ նրանք չէին գտել իրենց տեղը համաշխարհային տնտեսությունում: Համագործակցության մյուս երկրների հետ համեմատած ռուսական գիտատեխնիկական, արդյունաբերական, էներգետիկ և ֆինանսական ներուժի էական գերազանցությունը մղում էր նրանց Ռուսաստանի հետ առևտրի զարգացման: Այսօր Ռուսաստանին է

¹ Россия между Западом и Востоком: мосты в будущее, М.: Международные отношения, 2010.

բաժին ընկնում ԱՊՀ ընդհանուր բնակչության 77,4%-ը, միասնական ՀՆԱ-ի և արդյունաբերական արտադրանքի 71,7%-ը:

Վերջին տարիներին ՌԴ ղեկավարությունը փորձեր է անում պահպանել իր առաջատար դիրքերը ԱՊՀ-ում, վարում ԱՊՀ ամրապնդման քաղաքականություն: Դա պայմանավորված է այնպիսի պատճառներով, ինչպիսիք են միջպետական համագործակցության անհրաժեշտությունը, որի նպատակը պայքարն է ընդհանուր վտանգների դեմ (միջազգային ահաբեկչություն, ծայրահեղականություն, անջատվողականություն և այլն), տարածաշրջանային կազմակերպության շրջանակներում ռազմաքաղաքական համագործակցությունը, համագործակցությունը տնտեսական, տեղեկատվական, գիտատեխնիկական, բնապահպանական և այլ ոլորտներում:

Тамар Маргарян

Результаты рыночных реформ и характер экономического развития в странах СНГ

Аннотация

Статья посвящена характеристике группы государств, которые образовались на обломках СССР при обвале огромной союзной империи. На основе выделения специфики развития отмеченной группы государств, обосновано, что государства постсоветского пространства так или иначе связаны с Российской Федерацией или зависят от нее.

Tamar Margaryan

The results of the market reforms and the nature of economic developments in CIS countries

Abstract

The article presents the state of the developments in the states that were part of the former Soviet Union and had to emerge as independent nations after the collapse of the USSR. By identifying the peculiarities of the development of these nations, the author justifies that the former Soviet states are somehow connected with the Russian Federation or depend on this nation.

ՉՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

1. Գյուղատնտեսական զբաղվածությունը և եկամուտը

Զբաղվածության և արժանապատիվ վարձատրության ապահովումը Հայաստանի սոցիալ-տնտեսական քաղաքականությունում առաջնային խնդիր է, որը կոչված է կանխելու աշխատունակ բնակչության արտագաղթը և հաղթահարելու աղքատությունը:

Ինչպես հայտնի է, ՀՀ անկախության առաջին տարում (1991թ.) իրականացված արմատական հողային բարեփոխումների արդյունքում գյուղատնտեսությունը և ամբողջ ագրարային ոլորտը գրեթե ամբողջովին դրվեց մասնավոր հիմքերի վրա: Գյուղատնտեսության մեջ զբաղվածների թիվն արհեստականորեն կրկնապատկվեց, մանր գյուղացիական տնտեսությունները դարձան երկրի պարենային ապահովության երաշխիքը:

Անցել է ավելի քան 20 տարի, բայց մինչև հիմա էլ չկա արժանահավատ վիճակագրական տեղեկատվություն այն մասին, թե իրականում որքան գյուղացիական տնտեսություններ են գործում, և որքան աշխատողներ են ընդգրկված գյուղատնտեսության ոլորտում: Այսպես, Հայաստանի վիճակագրական տարեգրքում նշվել է, որ գյուղատնտեսությունում (ներառյալ անտառտնտեսությունը) 1990թ. աշխատել են 289.1 հազ., 1996թ.՝ 586 հազ., 2001թ.՝ 570 հազար մարդ:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության (ՏՏԿԱՀ) 2011թ. արդյունքների համաձայն գյուղատնտեսության ոլորտում աշխատողների թիվը կազմում է 457.4 հազ. մարդ (տնտեսության մեջ զբաղվածների 38.9%), այդ թվում մշտական աշխատող են համարվում 293.2 հազ, (64.1%), իսկ ոչ մշտական՝ 164.2 հազար մարդ (35.9%):

Գյուղատնտեսությունում աշխատողների թվով գերակշռում են կանայք (մոտ 56%): Գյուղատնտեսական աշխատանքն ունի սեզոնային բնույթ, այդ պատճառով էլ աշխատողների 38%-ը զբաղված է ոչ լրիվ աշխատանքային օրով: Կան նաև այնպիսի զբաղվածներ, որոնք չեն ցանկացել, կամ չեն ունեցել հնարավորություն աշխատել լրիվ աշխատանքային օրը: Ամբողջությամբ վերցրած, գյուղատնտեսությունում զբաղվածների միջին շաբաթական աշխատած ժամերը 2011թ. կազմել են 21.1, այն դեպքում, երբ արդյունաբերությունում ու շինարարությունում՝ 45, առևտրում և տրանսպորտում՝ 51 ժամ:

Համեմատության համար հիշենք, որ կոլտնտեսականն ամսվա ընթացքում աշխատում էր միջին հաշվով 22 օր և վաստակում մոտ 180 ռուբլի (1986-1988թթ. դրությամբ): Եթե հաշվի առնենք սպառողական գների ինդեքսը (1987-2012թթ.), ապա 180 ռուբլ. հավասարազոր է 2012թ. 150 հազար դրամի: Բացի այդ կոլտնտեսականն անձնական օժանդակ տնտեսություններից ամսական վաստակում էր գրեթե 100 ռուբլի (ավելի քան 80 հազար դրամ): Բնականաբար հարց է առաջանում. ինչ եկամուտ է ստանում ներկայիս գյուղացին սեփականաշնորհված ամբողջ հողատարածքից:

ՏՏԿԱՀ-ի տվյալներով, 2011թ. բարենպաստ տարում (13.9% գյուղատնտեսական արտադրանքի աճ) գյուղական բնակավայրի տնային տնտեսությունը (միջինը 4.2 շնչի հաշվով) գյուղմթերքի և կենդանիների վաճառքից ստացել է 20.1 հազար դրամական եկամուտ և մոտ 24 հազար դրամ ոչ դրամական եկամուտ (սննդամթերքի սպառումը սեփական տնտեսությունից): Ընդ որում՝ գյուղատնտեսական գործունեությունն ապահովում է գյուղական ընտանիքի ամբողջական եկամտի 32.5%-ը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ գյուղատնտեսական գործունեությունից ստացված իրական եկամուտները նվազման միտում ունեն, քանի որ այսպես կոչված «Գների մկրատը» խեղդում է գյուղացուն, ստիպելով նրան հրաժարվել հողի մշակումից:

2. Զբաղվածության և գործազրկության տարածքային պատկերը

Քանի որ գյուղատնտեսության մեջ զբաղվածների թիվն արիեստականորեն ուռճեցվում է, ապա զբաղվածության ու գործազրկության տարածքային իրական պատկերը նույնպես խեղաթյուրվում է: Այդ մասին են վկայում հետևյալ աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 1

Զբաղվածության և գործազրկության մակարդակը

	Զբաղված հազ. մարդ	Գործազուրկ հազ.մարդ	Զբաղվածության մակարդակը, %	Գործազրկության մակարդակը, %
ք. Երևան	333.3	143.9	41.9	30.2
Արագածոտն	62.1	3.7	77.2	5.7
Արարատ	120.9	10.7	63.4	8.1
Արմավիր	127.2	7.9	63.0	5.8
Գեղարքունիք	86.8	9.1	60.9	9.5
Լոռի	103.2	23.3	48.8	18.4
Կոտայք	107.3	25.7	47.0	19.3
Շիրակ	83.4	19.9	41.1	19.3
Սյունիք	62.0	9.8	64.2	13.6
Վայոց Ձոր	27.2	3.2	65.3	10.6
Տավուշ	61.7	8.4	64.7	11.9
ՀՀ	1175.1	265.7	54.4	18.4

Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, Երևան, 2012թ., էջ 204:

Նշենք, որ զբաղվածության մակարդակը ներկայացված է աշխատանքային ռեսուրսների նկատմամբ զբաղվածության թվի տեսակարար կշռով, իսկ գործազրկության մակարդակը՝ տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ, գործազուրկներ) մեջ գործազուրկների տեսակարար կշռով: Աղյուսակում բերված տվյալներով Երևանի բաժինը զբաղվածների ընդհանուր կազմում 28.4% է, իսկ գործազուրկների թվում՝ 54.2%, ունենալով հանրապետության բնակչության թվի 1/3 մասը: Եվ դա այն դեպքում, երբ Երևանում են կենտրոնացված պետական հիմնարկները, արդյունաբերական արտադրանքի 40.2%-ը, բնակարանային շինարարության 64.3%-ը, առևտրի շրջանառության 85.1%-ը, ծառայությունների 86.7%-ը (2012թ. դրությամբ):

Մինչդեռ, ասենք, Շիրակի մարզում զբաղվածների ավելի քան 60%-ն ընդգրկված է գյուղատնտեսության ոլորտում, իսկ գյուղական բնակչության տեսակարար կշիռը 2011թ. մարդահամարի տվյալներով կազմել է 41.7%: Ակնհայտ է, որ հանրապետության գրեթե բոլոր քաղաքներում, մասնավորապես Գյումրիում ու Վանաձորում գործազրկության մակարդակը շատ ավելի բարձր է, քան Երևանում:

Զբաղվածության իրական պատկերն ըստ տնտեսության ճյուղերի և մարզերի աղավաղվում է, այսպես կոչված թաքնված (ոչ ֆորմալ) զբաղվածության պատճառով: Հարցումների ժամանակ մարդիկ խուսափում են ցույց տալ իրենց զբաղվածության իրական կարգավիճակը, հատկապես, երբ նրանք ոչ մի տեղ չեն գրանցված որպես ինքնուրույն կամ վարձու աշխատող: Գրեթե չկա մի գործարար, որը լիարժեք ներկայացնի իր աշխատողների իրական թիվը:

Հետևապես զբաղվածությունն ըստ աշխատանքի բնույթի (ֆորմալ, ոչ ֆորմալ) կունենա ավելի մեծ քանակական արտահայտություն, քան զբաղվածների պաշտոնական թվաքանակը: Այնուամենայնիվ հարցումների ժամանակ պարզվել է, որ գյուղատնտեսական գործունեության ոլորտում 2011թ. կան 127.7 հազար ոչ ֆորմալ (թաքնված) զբաղվածներ (2008թ.՝ 164.6 հազ): Ակնհայտ է, որ ոչ ֆորմալ զբաղվածությունը գերազանցապես կենտրոնացված է մայրաքաղաքում:

Ի դեպ՝ գյուղատնտեսական աշխատանքը նույնպես համարվում է ոչ ֆորմալ, քանի որ հողատեր գյուղացին չունի ֆերմերի կամ վարձու աշխատողի կարգավիճակ: Հայաստանում

փաստորեն ձևավորվել է այնպիսի իրավիճակ, երբ ոչ ֆորմալ դաշտում աշխատողները մեծամասնություն են կազմում և չեն մասնակցում պարտադիր սոցիալական ապահովագրական ֆոնդի ձևավորմանը:

3. Ջրաղվածության ծրագրավորումը

ՀՀ կառավարության որոշումներում ու ծրագրերում առաջնային հիմնախնդիր է համարվում հանրապետությունում արտադրողական ուժերի համաչափ զարգացումը, որն իր հերթին ենթադրում է նոր աշխատատեղերի ստեղծում հատկապես աղետի գոտում և գյուղաբնակ մարզերում: Միաժամանակ գյուղատնտեսությունը պետք է դնել արդյունաբերական հիմքերի վրա, կիրառել նոր տեխնոլոգիաներ, նպաստել մանր գյուղացիական տնտեսությունների խոշորացմանը և կոոպերացիայի տարբեր ձևերի կիրառմանը: Հետևապես ձեռքի աշխատանքի աստիճանաբար դուրս մղումը, գյուղատնտեսության ինտենսիվացումը, նպաստելով աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, կհանգեցնեն գյուղացիական զբաղվածության հարաբերական և բացարձակ կրճատմանը:

Համեմատության համար նշենք, որ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող 92 առևտրային կազմակերպություններ, ունենալով ընդամենը 2430 աշխատող 2012թ. թողարկել են հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի 3.3%-ը: Եթե ունենանք 10 անգամ ավելի նման կազմակերպություններ, ապա նրանց աշխատողների թիվը կկազմեր 24.3 հազ. մարդ, իսկ արտադրանքը՝ մոտ 280 մլրդ դրամ: Նույն քանակությամբ արտադրանք թողարկելու համար 2012թ. գյուղացիական (բնակչության) տնտեսություններում աշխատել են մոտ 160 հազար. մարդ: Աշխատանքի արտադրողականության տարբերությունը կազմում է գրեթե 7 անգամ:

Հետևապես մանր գյուղացիական տնտեսությունները չեն կարող լինել մրցունակ, փոխհատուցել անընդհատ աճող արտադրական ծախսերը, ապահովել երկրի պարենային անվտանգությունը և նույնիսկ գյուղական ընտանիքի գոյատևումը: Մինչդեռ «ՀՀ կայուն զարգացման» ծրագրով (2008թ.) անգամ 2021 թ. կպահպանվեն 308 հազ. գյուղացիական տնտեսություններ, որոնց տեսակարար կշիռը գյուղատնտեսական արտադրանքի մեջ կկազմի 88.6%: Գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը մնում է նույնը՝ 504.3 հազ.մարդ: Նման ցուցանիշների պայմաններում ենթադրվում է, որ գյուղատնտեսական գործունեությունից աշխատանքային եկամուտը կկազմի 164.1 հազար դրամ, իսկ գյուղական աղքատությունը՝ 9.1% (այդ ցուցանիշը 2011թ. եղել է 34.5%):

Մեր կարծիքով, հեռանկարային ծրագրերը կազմելիս պետք է հիմք ընդունել արժանապատիվ զբաղվածության ցուցանիշը: Նույն ՏՏԿԱՀ-ի տվյալներով գյուղատնտեսության մեջ աշխատողների 8.5%-ը 2011թ. շաբաթվա ընթացքում բոլորովին չի աշխատել, իսկ 16%-ն աշխատել է 1-10 ժամ: Հետևապես, գյուղատնտեսության մեջ զբաղվածների առնվազն 25-30%-ը թաքնված գործազուրկ է: Եթե այդ ցուցանիշը հավասարաչափ բաշխենք մարզերի վրա, ապա կունենանք հետևյալ պատկերը:

Արագածոտն - Այստեղ 2011թ. զբաղվածների (62.1 հազար մարդ) 73%-ն ընդգրկված են եղել գյուղատնտեսության մեջ: Եթե իրական զբաղվածության ցուցանիշն ընդունենք 70%, ապա իրական գործազուրկների թիվը կկազմի ոչ թե 3.7 հազար մարդ, ինչպես նշված է աղյուսակ 1-ում, այլ 13.7 հազար մարդ: Գործազրկության փաստացի մակարդակը կլինի ոչ թե 5.7%, այլ 26.3%: Հետևապես այս մարզում առաջիկա 10 տարիների ընթացքում պետք է ստեղծել առնվազն 15 հազ. նոր աշխատատեղեր, պահպանելով նվազագույն գործազրկության մակարդակը 5%-ի սահմաններում:

Արարատ - 120.9 հազար զբաղվածներից գյուղատնտեսության մեջ ընդգրկված են 72.4 հազարը (60%): Նույն ձևով հաշվարկներ կատարելու դեպքում, գործազրկության մակարդակը կկազմի ոչ թե 8.1, այլ մոտ 20%: Հետևապես այստեղ գյուղատնտեսական թաքնված գործազրկությունը վերացնելու համար պահանջվում է ստեղծել 20-22 հազար նոր աշխատատեղեր:

Արմավիր - Գյուղատնտեսության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը կազմում է 64.6%: Փաստորեն այստեղ գործազրկության մակարդակը ոչ թե 5.8% է, այլ 24.1%: Այս գյուղատնտե-

սական մարզում ևս անհրաժեշտ է զարգացնել վերանշակող արդյունաբերությունը, շինարարությունը, ծառայությունների ոլորտը և ստեղծել առնվազն 25 հազ. նոր աշխատատեղեր:

Գեղարքունիք - Անասնապահական այս մարզում գյուղացու զբաղվածությունը գրեթե չունի սեզոնային բնույթ, սակայն այն լիարժեք չի կարելի համարել, քանի որ նրա աշխատանքը չունի ինտենսիվ բնույթ և ցածր է աշխատանքի արտադրողականությունը, հետևապես և եկամուտը: Աղքատության մակարդակը այդ մարզում 2011թ. կազմել է 37% (հանրապետության միջինը՝ 35%): Հետևապես նույն ձևով հաշվարկներ կատարելու դեպքում պահանջվում է ստեղծել 20 հազար նոր աշխատատեղեր:

Լոռի - Նախկինում ագրոարդյունաբերական այդ մարզում զբաղվածների մեծ մասը (55%), ընդգրկված են գյուղատնտեսությունում: Այստեղ գյուղացու աշխատանքի արտադրողականությունը գրեթե 40%-ով ցածր է, քան հանրապետության միջինը: Գործազրկության մակարդակը փաստորեն կազմում է ոչ թե 18.4%, այլ 32%: Եթե անգամ ընդունենք, որ գործազրկության մակարդակը պետք է իջեցնել մինչև 9-10%, ապա արդյունաբերական և այլ բնույթի նոր աշխատատեղերի ստեղծման պահանջը կկազմի մոտ 30 հազար մարդ:

Կոտայք - Այստեղ արդյունաբերության մեջ 1990թ. աշխատում էին 48.7 հազար մարդ, մինչդեռ 2002թ.՝ միայն 9 հազար մարդ: Ոչ գյուղատնտեսության ոլորտում 2011թ. զբաղվածների թիվը կազմել է 63 հազար, իսկ գյուղատնտեսությունում՝ 44.3 հազար մարդ: Գործազրկության մակարդակը խիստ բարձր է (19.3%): Մոտավոր հաշվարկներով, մարզում գործազրկությունը 2 անգամ կրճատելու համար պահանջվում է ստեղծել 25-26 հազար նոր աշխատատեղեր:

Շիրակ - Մարզում 2011թ. մարդահամարի տվյալներով մշտական բնակչության թիվը կազմել է մոտ 252 հազար, իսկ առկա բնակչությունը՝ 233.3 հազար մարդ: Համեմատության համար հիշենք, որ նախկին Լենինականի (Գյումրիի) բնակչության թիվը 1987թ. սկզբին եղել է 228.4 հազար մարդ: Ներկայումս գյուղական մշտական բնակչության (2011թ. մարդահամարով՝ 105 հազ.) գրեթե 40%-ը ձևականորեն զբաղվում է գյուղատնտեսական գործունեությամբ: Գործազուրկ են համարվում 20 հազար մարդ: Առնվազն նույնքան էլ նոր աշխատատեղեր պետք է ստեղծել:

Սյունիք - Միակ մարզն է, որտեղ զբաղվածների գերակշռող մասը (61.1%) ընդգրկված է ոչ գյուղատնտեսական ոլորտում: Այստեղ է կենտրոնացված հանրապետության լեռնահանքային արդյունաբերությունը: Այնուամենայնիվ, գործազրկության իրական մակարդակը 2 անգամ կրճատելու համար պահանջվում է ստեղծել 10-12 հազար նոր աշխատատեղեր:

Վայոց Ձոր, Տավուշ - Երկու մարզերում գյուղատնտեսության ոլորտում աշխատում են 54 հազար մարդ (զբաղվածների 61% -ը): Եթե ընդունենք, որ նրանց 30%-ը թաքնված գործազուրկ է, ապա այդ լեռնային մարզերում պետք է ստեղծել 16 հազար նոր աշխատատեղեր:

Այսպիսով, եթե հաշվի չառնենք Երևանը, ապա հանրապետության 10 մարզերում, ամբողջությամբ վերցրած, պահանջվում է տնտեսության ոչ գյուղատնտեսական ոլորտներում ստեղծել 180-190 հազար նոր աշխատատեղեր, ընդունելով որ գյուղատնտեսական զբաղվածության իրական թվաքանակը կազմում է 340 հազար մարդ: Այս հաշվարկները մոտավոր են, սակայն զբաղվածության տարածքային ծրագրեր կազմելիս, ՀՀ կառավարությունը կարող է հաշվի առնել սույն հոդվածում նշված մեթոդական մոտեցումները և փաստարկները:

Асмик Джанерян

Проблема занятости в сельском хозяйстве Республики Армения.

Аннотация

В статье рассмотрена реальная картина занятости в сельском хозяйстве РА, приведены данные результатов исследования уровня жизни, отраслевой и территориальной структуры занятости, доходов домашних хозяйств от сельскохозяйственной деятельности, а также данные об уровне безработицы в сельской местности.

Принимая в основу показатель достойной занятости, в статье рассчитана реальная численность занятых в сельском хозяйстве РА по марзам, а также обосновано количество несельскохозяйственных рабочих мест, которые необходимо создать.

Hasmik Janeryan

Issues of agricultural employment in the Republic of Armenia

Abstract

The article provides the current state of employment in the Republic of Armenia starting from the independence the nations gained in 1991; addresses the results of the Household's Integrated Living Conditions Survey of 2011 on structure of employment by regions and industry, income received from the sales of crops and livestock, and unemployment rates as well. Taking into account the Decent Work Index, the article calculates the actual number of employed in agriculture in various marzes (regions) of Armenia and identifies the number of new non-agricultural jobs that need to be created (overall 200,000 jobs excluding number of jobs in Yerevan).

ԱՆՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

S.գ.դ., պրոֆեսոր

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏՊՏՏ ասպիրանտ

ԼԻԼԻԹ ՍԱՆՈՒԶԱՐՅԱՆ

ՏՊՏՏ ասպիրանտ

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՐԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապահովագրական շուկան բարդ, բազմագործոն, դինամիկ համակարգ է, որն իր մեջ ներառում է բազմաթիվ փոխազդող, փոխկապակցված բաղադրիչներ և տարրեր, ինչպիսիք են ապահովագրողներն ու ապահովադիրները, ապահովագրական միջնորդները, ապահովագրական «արողուկտներն» ու սակագները, հաճախորդների սպասարկման քաղաքականությունը և այլն:

Ապահովագրական շուկան, հանդիսանալով տնտեսական հարաբերությունների ամբողջություն, կապ է ստեղծում շուկայի երկու հիմնական մասնակիցների՝ ապահովագրողների և ապահովադիրների միջև, ինչն էլ իր հերթին հանգեցնում է ապահովագրության ու ապահովագրական ծառայության հասարակական ճանաչմանը:

Տնտեսագիտական գրականության մեջ հաճախ հանդիպում ենք ապահովագրական շուկայի, ապահովագրական շուկայում գործարքի առարկայի անենատարբեր բնորոշումների: Սասնավորապես, Ա.Ա.Գվոզդենկոն նշում է, որ «Ապահովագրական շուկան իրենից ներկայացնում է ապահովագրական ծառայության առք ու վաճառքի գծով տնտեսական հարաբերությունների ամբողջություն, որն արտահայտվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց դրամական միջոցների հաշվին ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում վերջիններիս գույքային շահերի պաշտպանության մեջ»¹:

¹ Гвозденко А.А. Страхование.- М.: Изд-во Проспект, 2006г, стр. 193.

Իսկ օրինակ, ըստ Ն.Բ.Գրիշենկոյի՝ «Ապահովագրական շուկան կարելի է դիտարկել որպես.

ա) դրամական հարաբերությունների ստեղծման ձև՝ ուղղված հասարակության ապահովագրական պաշտպանվածության ապահովման նպատակով ապահովագրական ֆոնդի ձևավորմանն ու տեղաբաշխմանը,

բ) ապահովագրական ձեռնարկությունների (ապահովագրողների) ամբողջություն, որոնք մասնակցություն են ունենում համապատասխան ապահովագրական ծառայությունների մատուցմանը»¹:

Մեկ այլ հեղինակի՝ Վ.Վ.Շախովի բնորոշմամբ «Ապահովագրական շուկան յուրահատուկ սոցիալ-տնտեսական միջավայր է, ... որտեղ առք ու վաճառքի առարկա է հանդիսանում ապահովագրական պաշտպանվածությունը, ձևավորվում է դրա առաջարկն ու պահանջարկը»²:

Քննարկելով նման բնորոշումները, կարելի է ամել հետևյալ եզրահանգումները: Առաջին, նման բնորոշումներից պարզ է դառնում, որ ապահովագրական շուկան չի սահմանվում, ելնելով դրա՝ որպես ֆինանսական շուկայի հատված լինելուց: Եվ երկրորդ, առաջանում են մի շարք հարցեր, որոնց պատասխանը չի կարող միանշանակ լինել, մասնավորապես՝ ի՞նչ է «ապահովագրական ծառայությունը» կամ «ապահովագրական պաշտպանվածությունը», և ինչպե՞ս կարող են դրանք առք ու վաճառքի առարկա հանդես գալ, քանի որ, բոլոր դեպքերում, առք ու վաճառքի կամ գործարքի առարկան պետք է լինի իրական, ճանաչելի և չափելի: Հետևաբար, այս առումով հնարավոր չէ համաձայնել նման բնորոշումների հետ:

Ապահովագրական շուկայի տնտեսագիտական բովանդակության բացահայտման համար, առաջին հերթին անհրաժեշտ է այն քննարկել որպես ֆինանսական շուկայի հատված: Իսկ ֆինանսական շուկայում, ինչպես հայտնի է, գործարքի առարկան փողն է, որի շուրջ էլ ձևավորվում են մնացած բոլոր հարաբերությունները: Ապահովագրական ընկերությունները, որպես ֆինանսական ինստիտուտներ, ֆինանսական շուկայից գնում են փող, որի դիմաց վճարում են իրավունքներով, այն է. պատահարի տեղի ունենալու դեպքում նրանք կրում են փողը վաճառողի վնասների ռիսկը, այսինքն՝ փոխհատուցում են այն: Հետևաբար ապահովագրական շուկայում ևս առք ու վաճառքի առարկան փողն է և ոչ թե «ապահովագրական ծառայությունը» կամ «ապահովագրական պաշտպանվածությունը»:

Ապահովագրական շուկան պատկերացնելու համար անհրաժեշտ է դիտարկել երկու իմաստով՝ լայն և նեղ: Առաջին դեպքում այն իրենից ներկայացնում է որպես հարաբերությունների համակարգ, իսկ երկրորդ դեպքում՝ որպես դրանց դրսևորման ձև:

Այսպիսով, լայն առումով ապահովագրական շուկան հարաբերությունների համակարգ է, որն առաջանում է ապահովագրողների և ապահովադիրների, ինչպես նաև բոլոր այն անձանց և ենթակառուցվածքների միջև, որոնք առնչվում են այդ հարաբերություններին՝ պայմանավորելով և սպասարկելով ապահովագրության ամբողջ գործընթացը:

Իսկ նեղ առումով ապահովագրական շուկան այն ինստիտուտն է, մեխանիզմը, վայրը կամ հաղորդակցության միջոցը, որի շնորհիվ միմյանց հետ հանդիպում են ապահովագրողն ու ապահովադիրը:

Ինչպես բոլոր այլ շուկաներում, այնպես էլ ապահովագրական շուկայում որպես իմնական մասնակիցներ հանդես են գալիս գնորդը, վաճառողը և միջնորդը: Ապահովագրական շուկայի առաջին մասնակիցներն ապահովագրողներն են՝ ապահովագրական ընկերությունները, ապահովագրական գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք³, որոնք իրականացնում են ապահովագրական ֆոնդի ձևավորման և օգտագործման գործընթացը: Հարաբերությունների մակերևույթին ապահովագրական ընկերությունները «ապահովագրություն վաճառողներ» են, որոնք որոշակի գումարի դիմաց ստանձնում են ապահովադիրների որոշակի ռիսկը:

¹ Грищенко Н.Б. Основы страховой деятельности.- М. 2001, стр. 59.

² Шахов В. В. Страхование: Учебник для вузов. – М.: Страховой полис, ЮНИТИ, 1997, стр. 48.

³ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, Հոդված 3, կետ 11:

Ներկայումս ՀՀ ապահովագրական շուկայում ապահովագրական ծառայություններ են առաջարկում 7 ապահովագրական ընկերություններ¹: Միաժամանակ, վերջին տարիների զարգացումները ցույց են տալիս, որ նկատվում է այս թվի կրճատման միտում: Կարծում ենք, որ առաջիկա 2 տարիների ընթացքում ապահովագրական ընկերությունների թիվը կարող է կրճատվել 2-ից 3-ով: Մասնավորապես ՀՀ ԿԲ խորհուրդը 12.04.2011թ. նիստում լուծարման թույլտվություն տվեց «Գրիար-Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ին և ընկերության լիցենզիան ուժը կորցրած ճանաչեց: «Ալֆա Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ն ևս լուծարման թույլտվություն ստացավ, իսկ ընկերության թիվ 0050 ԱՊՈ «Ոչ կյանքի ապահովագրության իրականացման» լիցենզիան ուժը կորցրած ճանաչվեց: ՀՀ կենտրոնական բանկից 03.05.2011թ. ստացված թույլտվության հիման վրա «Ռասկո» ապահովագրական ՍՊԸ-ին փոխանցվեց «Այ Էս Ջի» ապահովագրական ՍՊԸ-ի ապահովագրական պորտֆելը:

Ապահովագրական շուկայի հաջորդ մասնակիցներն ապահովադիրներն են՝ «ապահովագրության պայմանագրի այն կողմը, որին կամ որի մատնանշած անձին (շահառու) ապահովագրողը պարտավորվում է հատուցել ապահովագրության պայմանագրով նախատեսված իրադարձության (ապահովագրական պատահարի) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար պայմանագրով նախատեսված իրադարձության (ապահովագրական պատահարի) տեղի ունենալու ուժով՝ ըստ ապահովագրության պայմանագրի պայմանների»²: Այլ կերպ ասած, ինչպես արդեն վերևում նշվեց, դրանք յուրահատուկ «ապահովագրության զնորդներ» են, որոնք որոշակի գումար վճարելով փոխանցում են իրենց որոշակի ռիսկը ապահովագրողին:

Ապահովագրական շուկայի կարևոր մասնակիցներն են ապահովագրական միջնորդները (ապահովագրական գործակալ, ապահովագրական բրոքեր): Դրանք «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն «երրորդ անձի կողմից՝ ապահովագրողների (վերաապահովագրողների) և ապահովադիրների միջև ապահովագրական հարաբերությունների հաստատմանը, նրանց միջև ապահովագրության պայմանագրի կնքմանը դրող, նպաստող, աջակցող կազմակերպչական, այլ փաստացի և իրավական գործողությունների իրականացնող անձինք են», որոնք մասնավորապես իրականացնում են՝

- «ա) ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում՝ նաև ապահովագրական խորհրդատվության իրականացում,
- բ) ապահովադիրների՝ կոնկրետ ապահովագրողների հետ ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման կազմակերպում,
- գ) ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կատարման օժանդակում, ներառյալ՝ ապահովագրավճարների հավաքման և հատուցումների փոխանցման իրականացումը՝ ապահովադրի կամ ընկերության թույլատրած չափերով»³:

Ապահովագրական շուկայի այս մասնակիցներն իրենց գործունեությամբ ավելի մոտ են ապահովադիրներին և արձագանքում են ապահովագրական ծառայությունների շուկայական կոնյունկտուրայի փոփոխություններին, ինչն ապահովագրողին թույլ է տալիս առաջարկել ապահովագրական շուկայում մեծ պահանջարկ ունեցող ապահովագրության տեսակներ: Այլ կերպ ասած, նրանք գլխավորապես ծառայություններ են մատուցում ապահովադիրներին:

Անդրադառնալով ՀՀ ապահովագրական շուկայում այս մասնակիցներին, կարելի է նշել, որ ներկայումս ապահովագրական բրոքերային գործունեություն իրականացնող ընկերությունների թիվը 3-ն է, իսկ գործակալների թիվը գերազանցում է 7 000-ը:

Ներկայումս զարգացած ֆինանսական շուկա ունեցող երկրների ապահովագրական շուկաներում ծառայություններ են մատուցում բազմաթիվ այլ մասնակիցներ, օրինակ «ասիսթանս ընկերությունները», որոնք արտերկրում ապահովագրական պատահարի ի հայտ գալու

¹ Այս և ՀՀ ապահովագրական շուկայի վերաբերյալ մյուս տվյալները բերվում են www.armstat.am և www.cba.am համացանցային կայքերից:

² «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, Հոդված 3, կետ 15:

³ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, Հոդված 3, կետ 12:

դեպքում ապահովագրական պայմանագրի սպասարկման ծառայություններ իրականացնող կազմակերպություններ են:

ՀՀ-ում ապահովագրական գործընթացները սկսել են զարգանալ դեռևս Խորհրդային Միության տարիներին: Խորհրդային տարիներին մենաշնորհային դիրք է ունեցել դեռևս 1925թ. ձևավորված «Պետտապ» ապահովագրական ընկերությունը, որն էլ իր համապատասխան ստորաբաժանումն է ունեցել նաև ՀՀ-ում (նախկինում՝ Հայկական ԽՍՀ):

ԽՍՀՄ փլուզումից հետո, ՀՀ ապահովագրական շուկայի զարգացմանը ամենասկզբից նպաստել են օրենսդրական դաշտի մի շարք փոփոխությունները: Արդյունքում ապահովագրական շուկայի զարգացման գործընթացը ՀՀ-ում կարելի է տարանջատել չորս հիմնական փուլերի:

Առաջին փուլը 1988թ. «Կոոպերացիայի մասին» ԽՍՀՄ օրենքի ընդունումն էր, որը վերջ դրեց ապահովագրական ոլորտում պետական մենաշնորհին՝ հնարավորություն տալով ապահովագրական գործունեություն իրականացնել այլ ապահովագրական ընկերություններին նույնպես:

Դրան հաջորդեց 1991թ. «ՀՀ տարածքում տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու կարգի մասին» ՀՀ նախարարների խորհրդի որոշումը: Վերջինս սահմանում էր, որ բոլոր տեսակի ձեռնարկությունները կարող են իրականացնել լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեություն միայն պետական կառավարման համապատասխան մարմինների կողմից թույլտվություն (գործունեության լիցենզիա) ստանալուց հետո, իսկ ապահովագրական գործունեությունը լիցենզավորող պետական մարմինը ՀՀ ֆինանսների նախարարությունն էր: Այս փուլի կարևոր առանձնահատկությունն այն էր, որ արդեն իսկ 1996թ. ՀՀ-ում լիցենզավորվել և գործում էր 83 ապահովագրական ընկերություն:

Այսպիսով, ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման առաջին փուլը խորհրդանշվեց պետական մենաշնորհի վերացմամբ և մասնավոր ապահովագրական ընկերությունների լիցենզավորման պահանջի հաստատմամբ:

Ապահովագրական շուկայի զարգացման հաջորդ փուլը սկզբնավորվում է 1996թ. «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ: Հատկանշական էր նաև այն, որ նույն թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց ապահովագրական պահուստների ձևավորման ու տեղաբաշխման, ապահովագրական ընկերությունների և միջնորդների լիցենզավորման գործընթացը կանոնակարգող որոշումը, այնուհետև 1998թ. ընդունվեց նաև ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (ապահովագրության մասով՝ գլուխ 54), ինչով առավել ամրապնդվեց և կանոնակարգվեց ապահովագրությունը կարգավորող ՀՀ օրենսդրական դաշտը: Այս փուլին բնորոշ առանձնահատկությունն այն էր, որ արդյունքում ՀՀ ապահովագրական շուկայում ապահովագրական ընկերությունների թիվը զգալի կրճատվեց՝ 83-ից հասնելով 20-ի:

ՀՀ-ում ապահովագրական շուկայի զարգացման երրորդ փուլը կարելի է նշանավորել 2005 թվականին «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, որը կանոնակարգում է ՀՀ-ում ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները, այդ թվում՝ ՀՀ ֆինանսական համակարգի այլ մասնակիցների նկատմամբ կարգավորման և վերահսկողության գործառույթները ՀՀ կենտրոնական բանկին փոխանցելու հետ կապված միջոցառումները:

Այսպիսով, 2006թ. ֆինանսական համակարգի մասնակիցների և ապահովագրական գործունեություն իրականացնողների նկատմամբ կարգավորման և վստահության գործառույթները ՀՀ ֆինանսների նախարարությունից փոխանցվեցին ՀՀ կենտրոնական բանկին: Վերջին փոփոխությունների տրամաբանությունն այն էր, որ ֆինանսական բոլոր հաստատությունների կարգավորումն ու վերահսկողությունը իրականացվեր կենտրոնացված կարգով, մեկ պետական մարմնի՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից, իսկ ապահովագրական ընկերությունները՝ որպես ֆինանսական ինստիտուտներ չէին կարող բացառություն կազմել:

Այս փուլի կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ 2007թ. ընդունվեց «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որին համապա-

տասխան էլ փոփոխություններ կատարվեցին ՀՀ ապահովագրության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերում:

ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման համար նշանակալի դեր խաղացին 2010թ. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև 2011թ. ՀՀ-ում «քաղաքացիական և պետական ծառայողների համար սոցիալական փաթեթի» ներդրումը, ինչը կարելի է դիտարկել որպես ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման չորրորդ փուլ: Որպես այս փուլին բնորոշ առանձնահատկություն կարելի է նշել այն, որ վերջինով պայմանավորված, ապահովագրության դաշտ մուտք գործեցին շուրջ 550 հազար քաղաքացիներ:

Այժմ անդրադառնանք ՀՀ ապահովագրական ընկերությունների, ապահովագրական շուկան բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծությանը:

Այսպես, 2006թ. սկսած նկատվում է ՀՀ ապահովագրական շուկայի զարգացում: Դրա մասին է վկայում ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող հիմնական ցուցանիշի՝ հաշվեգրված ապահովագրավճարների մեծության զգալի աճը՝ 2006թ. 5.9 մլրդ դրամի փոխարեն 2011թ. կազմելով 22.4 մլրդ դրամ: Նշված ցուցանիշի վերջին 2 տարիների աճը մեծապես պայմանավորված էր ՀՀ-ում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության և քաղծառայողներին հատկացվող սոցիալական փաթեթի շրջանակներում առողջության պարտադիր ապահովագրության ներդրմամբ:

Ստորև բերված աղյուսակ 1-ից պարզ երևում է, որ 2006թ. համեմատ ՀՀ ապահովագրական ընկերությունների ակտիվներն աճել են գրեթե 4 անգամ, պարտավորությունները՝ 7, իսկ չբաշխված շահույթը՝ 6 անգամ: 2006թ. ապահովագրական հատուցման մեծությունը պայմանավորված էր Սոչիում ինքնաթիռի վթարով¹: Ինքնաթիռն ապահովագրված էր ՀՀ-ում գործունեություն ծավալող ապահովագրական ընկերությունում, որն էլ իր հերթին այն վերաապահովագրել էր:

Վեց տարիների ընթացքում գրեթե 3 անգամ կրճատվել է ապահովագրական ընկերությունների թիվը, ինչը առավելապես պայմանավորված է ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների, մասնավորապես՝ ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի խստացմամբ: 2010 թվականի ընթացքում 3 ընկերություններ փոխանցել են իրենց ապահովագրական պորտֆելներն այլ ընկերությունների: Միացումների արդյունքում գործող ապահովագրական ընկերությունների միջև մրցակցության ակտիվացում է նկատվում:

Աղյուսակ 1

ՀՀ ապահովագրական ընկերությունների քանակը և հիմնական ցուցանիշները 2006-2011թթ.²

մլն դրամ

Ցուցանիշ	2006	2007	2008	2009	2010	2011
Ապահովագրական ընկերությունների քանակ	23	13	11	12	10	8
Ընդհանուր կապիտալ	5,991	7,449	7,497	12,288	12,585	14,115
Ակտիվներ, այդ թվում՝	8,704	8,376	11,698	16,964	25,563	31,502
Ապահովագրավճար	5,876	4,814	7,769	8,103	8,253	22,411
Պարտավորություն	1,216	1,626	2,149	2,723	2,917	8,599
Ապահովագրական հատուցում	27,343	923	1,375	1,901	1,746	8,070
Չբաշխված շահույթ	324	625	720	899	-970	1,860

Ապահովագրական շուկայի զարգացման մակարդակը բնութագրող միջազգայնորեն ընդունված ցուցանիշ է համախառն ապահովագրավճարների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ ՀՀ ՀՆԱ-ն 2011թ. կազմել է 3776,4 մլրդ. դրամ, ապահովա-

¹ Ապահովագրությունն իրականացվել է «Գրանդ» ապահովագրական ընկերության կողմից:

² Աղյուսակը կազմվել է www.cba.am կայքի տվյալների հիման վրա:

գրական ընկերությունների համախառն ապահովագրավճարների ծավալը՝ 22,4 մլրդ. դրամ: Բերված թվերը ցույց են տալիս, որ ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող մյուս ցուցանիշը՝ կազմում է 0,59%: Համեմատության համար նշենք նաև, որ 2011 թվականի տվյալներով զարգացած արդյունաբերական երկրներում ոչ կյանքի ապահովագրության գծով ապահովագրավճարներ ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 3.57%, զարգացող երկրներում՝ 1.30%, իսկ կյանքի ապահովագրության գծով՝ համապատասխանաբար 5.01% և 1.42%¹:

Ինչ վերաբերում է ՀՀ ապահովագրական շուկային, ապա կարելի է ասել, որ ներկայումս ՀՀ-ում չեն ձևավորվել կյանքի ապահովագրություն իրականացնող ապահովագրողներ:

Նշենք նաև, որ համաշխարհային ապահովագրավճարների ծավալը կազմում է 4.06 տրիլիոն ԱՄՆ դոլար, որը համարժեք է ՀՆԱ-ի 7%-ին, իսկ ապահովագրական ընկերությունների ակտիվները 22.6 տրիլիոն ԱՄՆ դոլար է, որը հավասար է համաշխարհային ֆինանսների 12%-ին²:

Աղյուսակ 2

ՀՀ ապահովագրական շուկան բնութագրող ցուցանիշների շարժը 2006-2011թթ.3

Ցուցանիշ	Տարեթիվ	2006	2007	2008	2009	2010	2011
ՀՆԱ շուկայական գներով (մլրդ. դրամ)		2,656	3,149	3,568	3,142	3,460	3,776
Ապահովագրավճար/ՀՆԱ		0.22%	0.15%	0.22%	0.26%	0.24%	0.59%
Ընդհանուր կապիտալ/ՀՆԱ		0.23%	0.24%	0.21%	0.39%	0.36%	0.37%
Ապ. ակտիվներ/բանկային ակտիվներ		1.66%	1.10%	1.14%	1.28%	1.64%	1.52%

Ապահովագրական շուկայի բնութագրման ևս մեկ կարևոր ցուցանիշ է մեկ շնչին ընկնող ապահովագրավճարների ծավալը, որը 2006թ. համեմատությամբ աճել է և ներկայումս կազմում է մոտ 18.15 ԱՄՆ դոլար: Համեմատության համար կարելի է նշել, որ 2011 թվականի դրությամբ զարգացած արդյունաբերական երկրներում ոչ կյանքի ապահովագրության գծով նշված ցուցանիշը կազմել է 1543.5 ԱՄՆ դոլար, իսկ զարգացող երկրներում՝ 56.3 ԱՄՆ դոլար: Նույն ցուցանիշը կյանքի ապահովագրության գծով զարգացած երկրներում 2011թ. կազմել է 2168.1 ԱՄՆ դոլար, իսկ զարգացող երկրներում՝ 61.5 ԱՄՆ դոլար⁴:

ՀՀ-ում նշված ցուցանիշի ցածր մակարդակը, մեր կարծիքով, պայմանավորված է երկու հիմնական գործոնով՝ առաջինը բնակչության հիմնական զանգվածի ցածր կենսամակարդակն է և մեկ բնակչին ընկնող ՀՆԱ-ի ցածր ցուցանիշը⁵, որը 2007-2011թթ. համապատասխանաբար կազմել է 3903, 3073, 2633, 2885 և 3102 ԱՄՆ դոլար⁶, իսկ երկրորդը՝ ՀՀ-ում ապահովագրական մշակույթի և մտածողության համապատասխան տիպի բացակայությունն է:

Զնայած այն հանգամանքին, որ ապահովագրական ընկերությունների ակտիվները արագորեն աճում են, ապահովագրական ընկերությունների ակտիվների և բանկային ակտիվների հարաբերակցությունը նվազում է՝ բանկային ակտիվների առավել արագ աճի պատճառով (2008թ. հակառակ փոփոխությունը պայմանավորված է համաշխարհային ֆինանսական ճգնաժամով):

Վերադառնալով ՀՀ ապահովագրական ընկերությունների ակտիվներին՝ նշենք, որ ակտիվների մեջ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում բանկերում ներդրված ավանդներին: 2011թ. տվյալներով ՀՀ ապահովագրական ընկերություններն ակտիվների ընդամենը 8%-ն են ներդրել արժեթղթերում, ինչը պայմանավորված է կապիտալի շուկայի թերզարգացմամբ: Զնչին

¹ Swiss Re, sigma No 3/2012.

² Swiss Re, sigma No 3/2012

³ Աղյուսակը կազմվել է www.armstat.am և www.cba.am համացանցային կայքերի տվյալների հիման վրա:

⁴ Swiss Re, sigma No 3/2012:

⁵ Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ֆինանսական միջազգային կառույցների կողմից առաջարկվող չափանիշներով «զարգացող շուկաներ» են համարվում այն երկրները, որտեղ մեկ բնակչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը կազմում է մվազագույնը 10000 ԱՄՆ դոլար:

⁶ Տվյալները բերվում են www.armstat.am և www.minfin.am համացանցային կայքերից:

տոկոս են կազմում ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրված փոխառությունները, որոնք տրամադրվում են մեծամասամբ ընկերության սեփականատերերին և ղեկավար անձանց:

Աղյուսակ 3

ՀՀ ապահովագրական ընկերությունների ակտիվների տեղաբաշխումը 2007-2011թթ.

մլն դրամ


Ցուցանիշ	2007	2008	2009	2010	2011
Ներդրումներ արժեթղթերում	1,214	1,513	812	2,572	2,446
Ավանդներ բանկերում	3,583	6,304	10,352	13,332	14,594
Փոխառություններ	237	7	132	699	1,095
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	77	146	214	317	495

Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ ՀՀ ապահովագրական ընկերությունների ներդրումները արժեթղթերում տարեցտարի նվազել են, սակայն ծավալային արժեքով նույն են մնացել: Ակտիվների շուրջ կեսը ներդրված է ավանդներում, և միայն չնչին մասն են կազմում փոխառությունները: Ինչպես և երևում է գծապատկեր 1-ից, ներդրումները բազմազանությամբ հարուստ չեն:

Ֆինանսական շուկայում այդպիսի սակավ ներդրումային գործիքներ ունենալու արդյունքում ապահովագրական շուկայի ներդրումներից ստացված միջին տոկոսային եկամտաբերությունը կազմում է 2-3%, այն դեպքում, երբ շուկայում ավանդների տոկոսադրույքները տատանվում են 8%-ի շուրջ: Տոկոսային եկամտաբերության ցածր մակարդակը ոչ միայն ներդրումային գործիքների սակավությամբ է պայմանավորված, այլ նաև հնարավոր է, դրանք որպես փոքր գումարներ, ապահովագրական ընկերությունները չեն կարողացել իրենց հարմար պայմաններով ավանդներ ներդնել:

Գծապատկեր 1

ՀՀ ապահովագրական ընկերությունների ակտիվների տեղաբաշխման շարժը 2007-2011թթ.¹



ՀՀ ապահովագրական ընկերությունների ակտիվների ծավալների աճին զուգընթաց համեմատաբար աճում է նաև տոկոսային եկամտաբերությունը: Ներդրումներից ավելի բարձր եկամուտ ստանալու նպատակով ապահովագրական ընկերությունները հաճախ նաև ռեպո համաձայնագրեր են կնքում:

¹ Գծապատկերը կազմվել է www.cba.am համացանցային կայքի տվյալների հիման վրա:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում որոշ արտասահմանյան ապահովագրական ընկերություններ (կենսաթոշակային ֆոնդեր) 2008թ. իրենց ներդրումների ուղղությունը փոխեցին անշարժ գույքի ուղղությամբ՝ պայմանավորված արժեթղթերի շուկայում տեղի ունեցող անորոշությամբ և ռիսկերի ավելացմամբ, չնայած այն հանգամանքին, որ անշարժ գույքն իրացվելի չի համարվում: Այս գործոնը կարող է որպես օրինակ ծառայել ՀՀ ապահովագրական ընկերությունների համար: Մասնավորապես ՀՀ կապիտալի շուկայի թերզարգացման պատճառով ներդրումները կարելի է ուղղել անշարժ գույքի ձեռքբերմանը: Ընկերությունների ներդրումների զանազանության ապահովման համար անհրաժեշտ է, որ ընկերությունների ղեկավարները գիտակցեն ներդրումային դիվերսիֆիկացիայի անհրաժեշտությունը, քանի որ այն արդյունավետ մեխանիզմ է առավել եկամուտ ստանալու համար՝ կշռված ռիսկերի դեպքում:

ՀՀ-ում առողջության պարտադիր ապահովագրության հեռանկարային ներդրման հետ կապված ապահովագրական ընկերություններում կարող է ակտիվների զգալի աճ տեղի ունենալ, որի արդյունավետ կառավարման համար առաջարկում ենք, որպեսզի ապահովագրական ընկերություններն այս պահից ստեղծեն ներդրումների կառավարման բաժիններ՝ որպես հակակշիռ ռիսկերի կառավարման բաժնին, որն իր հերթին ոչ միայն կվերահսկի ապահովագրական ռիսկերը, այլ նաև ներդրումային, գործառնական և ֆինանսական ռիսկերը, կսահմանի նաև ուղենշային պորտֆել (պայուսակ), որով պետք է առաջնորդվեն ներդրողները: Շատ երկրներում, ֆինանսական միջոցների տնտեսական նպատակով, որպես այլընտրանք այդ ծառայությունները պատվիրակվում են մասնագիտացված կազմակերպություններին:

2011թ. ՀՀ ապահովագրական ընկերությունների ակտիվների տեղաբաշխումը փոփոխություն է կրել, մասնավորապես՝ շուրջ 14%-ով ավելացել է բաժնետոմսերի մասնաբաժինը, շուրջ 3%-ով նվազել պարտատոմսերի մասնաբաժինը՝ հավասարվելով 2010թ. պարտատոմսերի մասնաբաժնին: Նվազեցվել է նաև կանխիկը՝ շուրջ 3%-ով՝ հավասարվելով 2009 և 2010թթ. մասնաբաժիններին, այլ ներդրումների մասնաբաժինը, որը ներառում է նաև անշարժ գույք, հեջավորման ֆոնդեր և այլընտրանքային այլ ակտիվներ, մնացել է կայուն:

Ինչ վերաբերում է կենսաթոշակային ակտիվների ներդրմանը բաժնետոմսերում, ապա միջազգային միտումը՝ դրանք այլ երկրների բաժնետոմսերում ներդնելն է, քանի որ տվյալ երկրի բաժնետոմսերի մասնաբաժինը ընդհանուր բաժնետոմսերում 64.7%-ից 1998 թվականին նվազել է մինչև 46.5% 2012 թվականին: Տեղական բաժնետոմսերում ներդրումների ավելացում նկատվում է միայն Ավստրալիայում և Շվեյցարիայում: Վերջին տասը տարիների կտրվածքով՝ տեղական բաժնետոմսերում ներդրումներն աշխարհում առավելագույնն են ԱՄՆ-ում և նվազագույնը՝ Կանադայում¹:

Տվյալ երկրի ամրագրած եկամտով ակտիվներում ներդրումների մակարդակը շարունակում է մնալ բարձր: Միջին հաշվով տվյալ երկրի պարտատոմսերում ներդրումների մասնաբաժինը պարտատոմսերի ընդհանուր ներդրումների մեջ 1998թ. 88.2%-ից իջել է միայն 5.7%-ով՝ 2012 թվականին դառնալով 82.5%: ԱՄՆ-ը և Կանադան ներդրումներ կատարել են հիմնականում իրենց երկրների պարտատոմսերում, մինչդեռ Ավստրալիան ամենաշատ ներդրումներն է կատարել այլ երկրների ամրագրված եկամտով ակտիվներում²: Ընդհանուր առմամբ՝ ակտիվների ռազմավարական տեղաբաշխման տարբերություններն աշխարհում կարելի է մասնավորապես բացատրել պարտավորությունների կառուցվածքով:

Այսպիսով, ՀՀ ապահովագրական շուկայի մեր կողմից իրականացրած վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները:

Առաջին, ապահովագրական շուկան ֆինանսական շուկայի կարևոր հատվածներից մեկն է: Հետևաբար շուկայի այդ հատվածում նույնպես գնվում և վաճառվում է փողը: Որպես փող վաճառողներ հանդես են գալիս ֆիզիկական և իրավաբանական անձինք, իսկ որպես փող գնողներ՝ ապահովագրական ընկերությունները, որոնք այդ փողի դիմաց վճարում են պարտավորու-

¹ Towers Watson. (2012). Global Pension Assets Study 2012. New-York: Towers Watson.

² Սույն տեղում:

թյուններով՝ կրելով ապահովագրողների կամ շահառուների ռիսկերը և հատկապես նրանց կողմից չդիվերսիֆիկացվող ռիսկերը:

Երկրորդ, ներկայումս ՀՀ-ում ամբողջությամբ ձևավորված չէ ապահովագրական շուկայի ինստիտուցիոնալ կառուցվածքը: Դեռևս ձևավորված չեն ապահովագրական շուկային այնպիսի կարևոր ինստիտուտներ, ինչպիսիք են «ասիսթենս ընկերությունները», ակտուարային ծառայություններ մատուցող կազմակերպությունները, ինչպես նաև շուկայական ինքնակարգավորվող կազմակերպությունները:

Երրորդ, ՀՀ ֆինանսական շուկայում ներդրումային ֆինանսական գործիքների սակավության պատճառով, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների ներդրումների եկամտաբերության բարձրացման և ներդրումների դիվերսիֆիկացման նպատակով հնարավոր ենք համարում ապահովագրական ներդրումներ ուղղել նաև ՀՀ-ում անշարժ գույքի ձեռքբերմանը, քանի որ ներկայումս ՀՀ-ում որոշակիորեն ձևավորվել է բավարար իրացվելի անշարժ գույքի շուկա և այն առավել եկամուտ ստանալու արդյունավետ մեխանիզմ է:

**Ашот Салназарян
Армен Варданян
Лилит Манучарян**

Особенности современного этапа развития страхового рынка РА

Аннотация

На современном этапе развития рыночной экономики РА возрастает роль и значение страхования, а также рынка страхования как важного механизма обеспечения экономической устойчивости.

В статье раскрывается экономическое содержание и дается определение рынка страхования, рассматриваемого в качестве сегмента финансового рынка.

Одновременно, исходя из фактических данных, обстоятельно анализируется современное состояние рынка страхования, выявляются особенности его формирования и проблемы, решение которых может способствовать дальнейшему развитию рынка страхования РА.

**Ashot Salnazaryan
Armen Vardanyan
Lilit Manucharyan**

Contemporary peculiarities of the development of insurance market in the Republic of Armenia

Abstract

The role of insurance is of crucial importance to the current state of economic development of the Republic of Armenia. Insurance market plays a key role as an important mechanism in ensuring the sustainability of the economy. The article views the insurance market as an integral part of the financial market and provides its essence and structure. Meanwhile, by relying on the statistical data, the article provides a detailed analysis of the current state of development of the insurance market, indicates the peculiarities that affected the growth of the market and identifies those issues to be addressed to ensure the future development of the insurance market in the Republic of Armenia.

**ԱՐՏԱՀԱՆՄԱՐԻ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Արտահանման ազդեցությունը տնտեսական աճի վրա դիտարկվել է գրեթե բոլոր տնտեսագիտական դպրոցների ներկայացուցիչների կողմից: Ամփոփելով ուսումնասիրված տեսություններն ու տարբեր հեղինակների հետազոտությունները՝ հանգել ենք այն եզրակացության, որ տնտեսական աճի վրա արտահանման ազդեցությունը կարելի է ներկայացնել հետևյալ մեխանիզմի միջոցով.


1. Եթե արտահանումն աճի, դա կնպաստի մասշտաբի էֆեկտից տնտեսման, ինչպես նաև՝ լրացուցիչ արտարժույթի ներհոսքի,
2. մասշտաբի էֆեկտից տնտեսումը կարող է հանգեցնել ռեսուրսների տնտեսման և առավել արդյունավետ բաշխման, իսկ արտարժույթի լրացուցիչ քանակը, եթե ուղղվի հումքի և նոր տեխնոլոգիաների ներմուծմանը, ապա կհանգեցնի տրամաբանորեն հաջորդ փուլին՝ արտադրության արդյունավետության բարձրացում, արտադրողականության աճ, ավելի բարձր ավելացված արժեքի ստեղծում, որն էլ իր հերթին կհանգեցնի տնտեսական աճի:

Իհարկե, այստեղ մենք օգտագործեցինք «եթե»-ների մի ամբողջ շարք, և ցանկացած պահի «եթե»-ներից որևէ մեկի չիրագործման պարագայում այս շղթան կխզվի, և տնտեսական աճի վրա արտահանման ազդեցության մեխանիզմը կընդհատվի: Իսկ դրանց բոլորի կենսագործման պարագայում, շղթան կհասնի իր ավարտական փուլին՝ տնտեսական աճի: Ընդ որում՝ եթե տնտեսական աճի արդյունքում արտադրվի միջազգային շուկայում մրցունակ արտադրանք, ապա շղթան կսկսվի նորից՝ առավել բարձր մակարդակից:

Այժմ անդրադառնանք ՀՀ տնտեսության վերլուծությանը:

Գծապատկեր 1

Տնտեսական աճի ինդեքսների համադրում, Հայաստան և աշխարհ




Դիտարկելով ՀՀ տնտեսական աճի տեմպերը և համադրելով դրանք աշխարհի միջինի հետ՝ մենք նկատում ենք, որ մինչև ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանն աճել է առաջանցիկ տեմպերով (գծապատկեր 1):

Այդուհանդերձ, անդրադառնալով ՀՀ տնտեսական աճի բաշխվածությանը՝ ըստ ոլորտների՝ կարող ենք տեսնել, որ մինչև 2008թ. էապես աճել է շինարարության տեսակարար կշիռը՝ ի հաշիվ գյուղատնտեսության և արդյունաբերության, որն ամենևին էլ գովելի երևույթ չէ (գծապատկեր 2):

Գծապատկեր 2

ՀՀ տնտեսական աճի բաշխվածությունը



Եվ հենց սրանով էլ պայմանավորված 2009թ. ՀՀ տնտեսությունում գրանցվեց 14.1% անկում:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ՀՀ տնտեսական աճի հենասյուները ճիշտ չէին ընտրված, և Հայաստանը կարիք ունի տնտեսական աճի ապահովման նոր մոդելի, որի հիմքը պետք է լինի արտադրական ոլորտի զարգացումը:

Սակայն անպատասխան է մնում մեկ հարց. ի՞նչ արտադրել: Հայաստանի ներքին շուկան շատ սահմանափակ է, հետևաբար ՀՀ տնտեսությունը չի կարող երկարատև զարգացում ունենալ՝ բավարարելով մեծամասամբ ներքին պահանջարկը: Փոխարենը՝ արտաքին պահանջարկը Հայաստանի համար գրեթե անսահմանափակ է և կարող է տնտեսության հետագա զարգացման շարժիչ ուժ դառնալ: Ուստի, հենց պատրաստի արտադրանքի արտահանումը կարող է ՀՀ հետագա զարգացման գրավականը դառնալ:

Հայտնի է, որ համաշխարհային տնտեսությունում առավել արագ աճ են արձանագրում այն երկրները, որոնց արտահանման մեջ գերակշռում են միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքները: Ուսումնասիրելով ՀՀ արտահանումն այս տեսանկյունից (աղյուսակ 1)՝ մենք նկատում ենք, որ չնայած ՀՀ արտահանման մեջ ինչպես 2001, այնպես էլ՝ 2011թ. գերակշռում է ցածր տեխնոլոգիատարության արտահանումը, այդուհանդերձ 2011թ. 2001-ի համեմատ աճել է ռեսուրսատար ապրանքների արտահանումը՝ ի հաշիվ ցածր, միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների արտահանման, որը տնտեսական աճի նպաստելու տեսանկյունից բացասական երևույթ է:

Դիտարկելով առանձին ապրանքախմբերի արտահանումը՝ կարող ենք փաստել, որ արտահանման հիմնական մասը կազմում են արտահանման կառուցվածքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեցող 4 ապրանքախմբերը (թանկարժեք քարեր և մետաղներ, ոչ թանկարժեք մետաղներ, պատրաստի սննդի արտադրանք և հանքահումքային մթերքներ), որոնց տեսակարար կշիռը 2000-2011թթ. ընթացքում ՀՀ արտահանման ծավալներում կազմել է միջինը 81.3%¹: Սա նշանակում է, որ ՀՀ արտահանումը բարձր աստիճանի կենտրոնացվածություն ունի:

¹ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ըստ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տվյալների:

ՀՀ արտահանման տեխնոլոգիատարությունը ¹

	<i>Ռեսուրսատար, տոկոս</i>	<i>Ցածր տեխնոլոգիատար, տոկոս</i>	<i>Միջին և բարձր տեխնոլոգիատար, տոկոս</i>	<i>Ընդհանուր, տոկոս</i>
2001	11,9	71,8	16,3	100
2002	9,3	77,9	12,8	100
2003	8,2	81,6	10,2	100
2004	12,7	79,6	7,7	100
2005	11,4	82,9	5,7	100
2006	16,3	74,7	9	100
2007	17,3	70,7	12	100
2008	19,3	71,3	9,4	100
2009	25,5	66,2	8,3	100
2010	31,3	62	6,7	100
2011	34,1	58,1	7,8	100

Այսպիսով, ՀՀ արտահանումը տնտեսական աճին նպաստելու տեսանկյունից ամենևին էլ լավատեսական սցենարով չի զարգացել, ուստի անհրաժեշտություն է առաջանում արտահանման զարգացման նոր մոտեցումների: Այդ նպատակով մենք առաջարկում ենք տարանջատել կարճաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածները և կարծում ենք, որ կարճաժամկետ ժամանակահատվածում արտահանմամբ պայմանավորված տնտեսական աճ Հայաստանը կարող է ապահովել այն պարագայում, եթե զարգացնի արտահանման այն ոլորտները, որոնք արդեն իսկ ունեն համեմատական առավելություն և զգալի կառուցվածքային վերափոխումների կարիք չեն զգում: Հաշվարկները ցույց են տվել², որ ներկայումս այդ ոլորտներն են ծուկ և խեցգետնավորներ, մրգեր և բանջարեղեն, խմիչքներ և ծխախոտ:

Այսինքն՝ կարճաժամկետ հատվածում տնտեսական աճ ապահովելու համար մենք առաջարկում ենք արտահանման մասնագիտացում նշված ոլորտներում:

Իսկ երկարաժամկետ հատվածում արտահանմամբ պայմանավորվող տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է արտահանման կառուցվածքի բարելավման սկզբունքի հիման վրա իրականացնել արտահանման դիվերսիֆիկացիայի: Ընդ որում, արտահանման տեսանկյունից դիվերսիֆիկացման ենթակա ոլորտների ընտրության համար հիմք կարելի է ընդունել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2010թ. «Հայաստանի տնտեսական զեկույց»-ում հրապարակված ոլորտները, որոնցից յուրաքանչյուրում ինչպես ապրանքատեսականու ընդլայնման, այնպես էլ համապատասխան սպառման շուկայի վերաբերյալ իրականացվող բազմակողմանի հետազոտությունն էլ կտա անհրաժեշտ արդյունք:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության և սննդարդյունաբերության ոլորտում արտադրության և արտահանման ցուցանիշների աճ կարող են գրանցել ոլորտի գրեթե բոլոր արտադրատեսակները (հատկապես՝ դեղաբույսերը, համեմունքները, թարմ և չորացրած մրգերն ու բանջարեղենը և դրանց բոլոր վերամշակված տարբերակները՝ պահածոներ, հյութեր, սառեցված մրգեր, հանքային ջրերը և պահածոյացված մսամթերքը, ոգելից խմիչքները): Առավել զգալի արդյունք ստանալու համար նշված խնդիրների լուծմանը զուգահեռ անհրաժեշտ է խթանել հայկական գյուղատնտեսությունում շատ քիչ մշակվող այնպիսի մշակաբույսերի

¹ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ըստ ՀՀ ԱԿԾ վիճակագրական տվյալների:

² Սարգսյան Լ., Արտահանման դերը տնտեսական աճի ապահովման գործում (ՀՀ օրինակով) թեկնածուական աստիճանի հայցման ատենախոսություն, 2012թ., էջ 98-100:

արտադրությունը, ինչպիսիք են գետնախնձորը, մասուրն ու թեյի վարդը: Ինչպես գիտենք Չայաստանում առկա է գյուղատնտեսական հողերի թերզբաղվածություն, հետևաբար լրիվ իրատեսական է գետնախնձորի և մասուրի ու թեյի վարդի պլանտացիաներ ստեղծելու գաղափարը, առավել ևս, որ նշված մշակաբույսերի աճեցումը հնարավորություն կտա զարգացնելու նաև դրանց հետ առնչվող շատ հարակից ճյուղեր: Մասուրի և վարդի հասունացումը Չայաստանում համընկնում է իսլամական երկրներում ռամադանի շրջանի հետ (մասուրի և վարդի թերթիկների հյութերը, հատկապես ռամադանի ժամանակ, որպես ըմպելիք լայնորեն օգտագործվում են Պարսից ծոցի երկրներում), ուստի առկա է բավականին մեծ ծավալով դրանց արտահանման ռեալ հնարավորություն: Գետնախնձորը շատ երկրներում անփոխարինելի միջոց է, ինչպես սննդում կիրառության, այնպես էլ բժշկության մեջ, քիմիական արտադրությունում՝ հատկապես կոսմետիկայի բնագավառում, ավելին՝ գետնախնձորի աճեցումը օգտակար է նաև գյուղատնտեսական հողերի որակի բարելավման տեսանկյունից, հետևաբար դրա արտադրությունը կարևորում ենք ոչ միայն արտահանման, այլ ավելի շուտ բազմաթիվ հարակից ճյուղերի զարգացման նկատառումներով: Վերոնշյալ փոփոխությունների իրականացման արդյունքում արտադրված էկոլոգիապես մաքուր գյուղ. մթերքի և սննդի հիմնական թիրախային շուկաները կդառնան Եվրամիության, ԱՄՆ-ի շուկաները, առաջարկվող նոր արտադրատեսակների (թեյի վարդ, մասուր) լայնածավալ արտադրությունը կարտահանվի Մերձավոր Արևելքի շուկաներ:

Թեթև արդյունաբերության ոլորտում համեմատական առավելություն ունեն գրեթե բոլոր ապրանքատեսակները: Թեպետ ներկայումս այս ոլորտը բավարար չափով մրցունակ չէ, սակայն, եթե հաշվի ենք առնում, որ երկրում առկա են բրդի, մետաքսի սեփական արտադրություն հիմնելու նախադրյալներ, գորգագործության, հագուստի, կոշիկեղենի արտադրության մեջ հարուստ ավանդույթների, էժան և որակյալ աշխատուժի առկայությունը, ինչպես նաև ԱՊՀ երկրների շուկաներ ազատ մուտքի հնարավորությունը, հեռանկարային է դառնում ոլորտում արտահանման և արտադրության փոխկապակցված աճի հնարավորությունը: Բացի այդ, տեքստիլ արդյունաբերությունը քիմիական արդյունաբերության հետ փոխկապակցված զարգացնելու պարագայում լայն հնարավորություն է բացվում նաև քիմիական արհեստական մանրաթելերի և դրանցից արտադրանքի արտահանման ծավալների մեծացման համար:

Պատրասի հագուստի, ինչպես նաև կոշիկեղենի ու կաշվե իրերի արտադրության ոլորտը ևս զարգացման զգալի հեռանկար ունի: Վերջին ժամանակներս ոլորտում հայտնված արտերկրյա մի քանի հայտնի ընկերություններ ցույց տվեցին, որ հնարավոր է առկա ռեսուրսներով միջազգայնորեն մրցունակ արտադրանք թողարկել: Ուստի, կարծում ենք, որ պետական աջակցությամբ ներդրումները տվյալ ոլորտ ուղղելու պարագայում, կարող ենք ստանալ ցանկալի արդյունք: Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ թեթև արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում աշխատում են արտաքին պատվերների հիման վրա, որոնք էլ պատահական բնույթ են կրում: Դրան հավելենք նաև այն, որ ոլորտում գործող փոքր ընկերություններն ու անհատ ձեռնարկատերերը չեն կարող օգտվել մասշտաբի էֆեկտից, որի պարագայում առավել արդյունավետ կօգտագործվեն առկա ռեսուրսները: Ուստի խզում է առաջանում արտահանմամբ պայմանավորվող տնտեսական աճի ապահովման շղթայում: Ուստի անհրաժեշտ է համապատասխան կառույցների (օրինակ՝ ներկայացուցչությունների) աշխատանքի միջոցով ապահովել տվյալ պատվերների ստացումը արտասահմանյան ընկերություններից և դրանց բաշխումը տեղական ընկերությունների միջև, քանզի առանձին կազմակերպության համար բավականին բարդ է փնտրել և գտնել անհրաժեշտ և կայուն գործընկերներ:

Մեքենաշինության ոլորտում կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ Չայաստանում այս ոլորտում համեմատական առավելություններ ունեն նվազ նյութատար և առավել գիտատար ենթաճյուղերը, որոնց վրա էլ պիտի կենտրոնացվի հիմնական ուշադրությունը: Ընդ որում, մյուս ենթաճյուղերի մեքենաշինական արտադրանքի ներմուծումը, մեր կարծիքով, չի կարելի դիտարկել որպես բացասական երևույթ, հատկապես սա վերաբերում է հիմնականում արդյունաբերական նպատակներով ներմուծվող մեքենա-սարքավորումներին, օրինակ՝ վերամշակող մեքենա-սարքավորումներին:

Ընդ որում, ճշգրիտ մեքենաշինության, ինչպես նաև քիմիական արդյունաբերության ոլորտները ՀՀ տնտեսությունում տնտեսական աճ ապահովելու տեսանկյունից կարևորվում են բարձր ավելացված արժեք պարունակող արտադրանքի արտահանման հնարավորությամբ, սակայն ներկայումս այս ոլորտները դեռևս բավարար չափով զարգացած չեն, ուստի պետական աջակցությամբ ոլորտները զարգացնելու պարագայում կունենանք հետագա կայուն տնտեսական աճի հիմք՝ ի դեմս այս ոլորտների ևս:

Ինչ խոսք, բացի առանձին ոլորտների արտադրության և արտահանման զարգացման միջոցառումներից անհրաժեշտ է կիրառել նաև արտահանման խրախուսման առավել արդյունավետ գործիքներ՝ Հայաստանում արտահանմամբ պայմանավորվող տնտեսական աճ ձեռք բերելու համար:

Лилит Саркисян

Перспективы экспортно-ориентированного роста в Армении

Аннотация

В статье рассматриваются пути воздействия экспорта на экономический рост в мировой экономике, а также производится сравнительный анализ экспорта и экономического роста Армении с различными странами. Анализ экспорта и экономического роста РА показывает, что оба показателя не развивались наилучшим способом. По-этому, Армения нуждается в новой модели обеспечения экономического роста.

Lilit Sargsyan

The perspectives of the export-led growth in Armenia

Abstract

The article discusses how exports affect the growth of the world economy and compares the indicator of economic growth and exports performance with the one of the different economies. The analysis of export performance and economic growth in Armenia depicts that the correction between these two variables is weak. Therefore, Armenia needs a new export-led growth model.

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ձեռնարկատիրության ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՄՆԱԿԱՐՑԵՐԸ ԶՅ-ՈՒՄ**

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը ուղղված և նրա նորմալ կենսագործունեությունն ապահովող գործարար միջավայրի ստեղծումը շուկայական հարաբերությունների արմատավորման հիմնական նախապայմաններից է: Շուկայական հարաբերությունների զարգացումը ենթադրում է սեփականության տարբեր ձևերի ազատ և իրավահավասար զարգացում: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժն է: Այն շուկայական տնտեսության արմատավորման և կայացման հիմնական երաշխիքն է: Չնայած զարգացած պետության «դեմքը» խոշոր կորպորացիաներն են, սակայն շուկայական տնտեսության իրական հիմքը ՓՄՁ-ն է՝ որպես գործարար կյանքի առավել զանգվածային, դինամիկ և ճկուն ձև: Այն խթանում է ձեռնարկատիրական հմտությունները, ճկուն է փոփոխվող շուկայական տնտեսության պայմաններում, նպաստում է տնտեսական գործունեության դիվերսիֆիկացմանը և կարող է նշանակալի ներդրում ունենալ արտահանման խթանման և նոր աշխատատեղերի ստեղծման գործում: ՓՄՁ ոլորտը հսկայական ներուժ է պարունակում աշխատատեղերի ստեղծման առումով, մեղմում է սոցիալական բևեռացումը, խթանում է միջին խավի ձևավորման գործընթացը, որը երկրում տնտեսական և սոցիալական կայունության ապահովման հիմնական երաշխիքներից է: ՓՄՁ-երը նպաստում են զբաղվածության աճին ավելի արագ տեմպերով, քան խոշոր կազմակերպությունները և երկարաժամկետում կարող են զբաղվածության զգալի բաժին ընդգրկել: ՓՄՁ թվաքանակի աճը մեծացնում է նրանց ազդեցությունը երկրի տնտեսական զարգացման գործընթացների վրա և կարող է հնարավորինս կարճ ժամանակում իրականացնել տնտեսության կառուցվածքային վերակառուցումը:

Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի՝ 01.01.2011թ.¹, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտները դասակարգվում են.

- գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռներեցներ, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամ.
- փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռներեցներ, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամ.
- միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռներեցներ, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

Փոքր ձեռնարկատիրությունը լուծում է բազմաթիվ կարևոր խնդիրներ .

- շուկայական տնտեսությունում ապահովում է անհրաժեշտ շարժունակություն, ստեղծում մասնագիտացված և կոոպերացված ձեռնարկություններ:
- ոչ մեծ կապիտալ ներդրումների միջոցով, օգտագործելով հումքի տեղական աղբյուրները, արտադրում է ապրանքներ և ծառայություններ, որոնք նշանակալիորեն նվազեցնում են երկրի տնտեսության կախվածությունը ներմուծումից:

¹ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, 01.01.2011թ.:

- Երբ ՓՄՁ-ների ստեղծմամբ հաճախ ավելի արդյունավետ է ընթանում պարապուրդի մատնված և ոչ շահութաբեր խոշոր կազմակերպությունների վերակառուցման և արդիականացման գործընթացը:
- ՓՄՁ ոլորտում նկատելի է նորարարական ՓՄՁ-ների թվի ավելացումը, ինչը նպաստում է նորարարությունների ներդրման և առևտրայնացման գործընթացին:
- ոչ մեծ կապիտալ ներդրումների միջոցով և համեմատաբար կարճ ժամանակահատվածում ապահովում է խոշոր կազմակերպություններից ազատված աշխատուժի համար զգալի թվով նոր աշխատատեղեր՝ լուծելով սոցիալական լուրջ խնդիր:
- ՓՄՁ-ները, լինելով խիստ ճկուն, շատ արագ են հարմարվում շուկայի պահանջներին՝ յուրացնելով նոր ապրանքների արտադրությունը և սպասարկման արդիական ձևերը:
- ՓՄՁ-ների գործունեության ընդլայնումը ստեղծում է ձեռնարկատիրությանն աջակցող միջավայր և մրցակցային դաշտ, առանց որոնց անհնար է շուկայական տնտեսության գոյությունը:
- ՓՄՁ-ների զարգացումը ժամանակակից հասարակության հիմքը կազմող միջին խավի ձևավորման և կայացման հիմնական պայմանն է:
Սակայն նշենք, որ ՓՄՁ-ները, առավելությունների հետ միասին, ունեն նաև թերություններ:

Այսպես.

- բարձր է ռիսկի մակարդակը, որով էլ պայմանավորվում է շուկայում զբաղեցրած անկայուն դիրքը,
- խոշոր ընկերություններից կախվածությունը,
- լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու դժվարությունները,
- սեփական բիզնեսի կառավարման գործում ոչ արհեստավարժ լինելը,
- պայմանագրերի կնքման ժամանակ գործընկերների կողմից ցուցաբերվող անվստահու-թյունը և զգուշությունը,
- ինքնաշահագործումը և արտաժամյա աշխատանքը,
- փոփոխությունների նկատմամբ բարձր զգայնությունը:

Նշենք, որ ապրանքների և ծառայությունների շուկայի որոշակի սեգմենտի նեղ մասնագի-տացումը, փոքր մեկնարկային կապիտալով սեփական գործ սկսելու հնարավորությունը, միջոցների արդյունավետ օգտագործումը, կառուցվածքային փոփոխություններին և արտաքին բացասական ազդակներին արագ հարմարվելը, ճկունությունը, կառավարչական հիերարխիայի բացակայությունը իհարկե արժանիքներ են: Սակայն, որոշակի պայմաններում, դրանք դառնում են թերություններ և խոչընդոտում ՓՄՁ հետագա զարգացումը: Այսպես, փոփոխվող շուկա-յական միջավայրին արագ արձագանքումը ՓՄՁ դարձնում է խիստ ճկուն և շարժունակ, սակայն կախվածության մեջ է դնում շուկայի կառուցվածքից, սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմաններից: Փոքր կապիտալը նեղացնում է արտադրության սահմանները, սահմանափակում լրացուցիչ ռեսուրսների ներգրավման հնարավորությունները: ՓՄՁ-ները, իրենց վրա վերցնելով խոշոր կազմակերպությունների որոշ արտադրական փուլեր, իրականացնելով խոշոր կազմա-կերպությունների պատվերները, ավելի շահութաբեր և ճկուն է դարձնում խոշոր արտադրու-թյունները: Սակայն նշված կապերի խզման դեպքում փոքր ձեռնարկությունը, եթե չի համագոր-ծակցում այլ խոշոր պատվիրատուի հետ, կարող է կանգնել սնանկացման եզրին: Արտադրության փոքր ծավալները և զբաղվածների փոքր թիվը պայմանավորում են կառավարման պարզու-թյունն ու արդյունավետությունը: Սակայն այս դեպքում էլ հարկ է նշել սեփականատիրոջ և մենեջերի գործառույթների համատեղման մասին, ինչը, կրճատելով կառավարչական ծախսերը, շատ հաճախ հանգեցնում է սեփականատիրոջ կողմից ապաշնորհ կառավարման: Փոքր ձեռնար-կատիրության ոլորտում նկատվում է զբաղվածության վերաբաշխում արտադրության ոլորտից առևտրի և սպասարկման ոլորտ, քանի որ առևտրից ստացվում է ավելի շատ շահույթ, ինչը չի կարող ապահովել դրական կառուցվածքային տեղաշարժեր և էական ազդեցություն ունենալ երկրի տնտեսության ընդհանուր վիճակի վրա:

Տարածված է այն կարծիքը, թե ՓՄՁ-ներում համեմատաբար արագ և փոքր ծախսերով են ներդրվում նորարարական գյուտերը և նոր տեխնոլոգիաները: Սակայն, մեր կարծիքով, այս հարցը փոքր-ինչ վիճարկելի է: Հարկ է նշել, որ նորարարությունների ներդրումը, որպես կանոն, պահանջում է հսկայական հաստատուն, անվերադարձ ծախսեր, որոնք կարող են փոխհատուցվել միայն իրացման մեծ ծավալների դեպքում, ինչի արդյունքում էլ ցածր կլիմի նաև արտադրանքի միավորի գինը: ՓՄՁ-ի համեմատ, խոշորները ավելի ազատ մուտք ունեն դեպի փոխառու ֆինանսական միջոցներ և ի զորու են իրականացնել մի քանի նախագիծ միաժամանակ, ինչը հնարավորություն է տալիս էականորեն նվազեցնել ռիսկերը: Խոշոր կազմակերպությունները, ունենալով մեծ հեղինակություն և ճանաչում, ավելի հեշտ են մուտք գործում նոր շուկաներ և մեծապես օգտվում են նորարարություններից՝ արտադրության և իրացման մեծ մասշտաբների պայմաններում: Սակայն նշենք նաև, որ կան օբյեկտիվ պատճառներ, որոնց հետևանքով նորարարական գործընթացը որոշ դեպքերում ավելի արդյունավետ է դառնում հենց ՓՄՁ-ում: Ամենաէականն այն է, որ փոքր ձեռնարկությունները զերծ են բյուրոկրատիզմից, ինչը բնորոշ է խոշոր կազմակերպություններին:

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ տնտեսության զարգացման համար կարևորագույն նախապայմաններից է խոշոր, միջին և փոքր ձեռնարկությունների համագործակցությունը: Շուկայական տնտեսությունում ՓՄՁ զարգանում է հիմնականում երկու ուղղություններով՝ ինքնուրույն կամ խոշոր կազմակերպության հետ սերտ կապերի մեջ: Փոքր ձեռնարկության ինքնուրույն զարգացման ռազմավարությունը հիմնականում պայմանավորված է գործունեության այնպիսի ոլորտների ընտրությամբ, որտեղ ձեռնարկության չափը չի ազդում նրա գործունեության արդյունավետության վրա կամ էլ հենց փոքր չափերն են ապահովում նրա արդյունավետությունը: Արդյունքում փոքր ձեռնարկությունը ի զորու է մրցակցել ցանկացած չափի ձեռնարկության հետ՝ օգտագործելով իր հիմնական առավելությունը՝ ճկունությունը: Փոքր ձեռնարկության ինքնուրույն զարգացման այս ռազմավարությունը, այսպես կոչված, «օպտիմալ չափի» ռազմավարություն է, որն արդարացված է փոքր խանութների, սրճարանների, սպասարկման անհատականացված ծառայությունների մատուցման, ոչ ստանդարտ սարքավորումների և փոքր սերիական արտադրանքի թողարկման բնագավառներում և ուղղված է նեղ մասնագիտացված կամ հատուկ պահանջարկի բավարարմանը:

Փոքր ձեռնարկությունների գործունեության թերությունների վերացման և առավելությունների դրսևորման արդյունավետ տարբերակ է վերջիններիս գործունեության համակցումը խոշոր կազմակերպությունների հետ: ՓՄՁ և խոշոր կազմակերպությունների համակցումը ապահովում է հզոր դրական սիներգիկ արդյունք:

Համակցման հիմնական ձևերն են.

- Կապալ, որը ենթադրում է ՓՄՁ և խոշոր ձեռնարկատիրության այնպիսի համագործակցություն, որի դեպքում փոքր ձեռնարկությունը պարտավորվում է խոշոր ձեռնարկության առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:
- Ֆրանչայզինգ, որը ևս արդյունավետ համակցման ձև է, երբ խոշոր կազմակերպության արտոնագրով արտադրություն է կազմակերպվում, որը և՛ փոքրի, և՛ խոշորի համար ապահովում է դրական արդյունք: Այսպես, փոքր ձեռնարկությունը հնարավորություն է ստանում օգտագործել խոշոր կազմակերպության ապրանքային նշանը, ստանալ ֆինանսական աջակցություն, գործարարություն ծավալելու մշակված տեխնոլոգիա (նաև նորարարություններ), ինչպես նաև համատեղ գովազդից օգտվելու թույլտվություն:

Այսօր աշխարհում նկատվում է փոքր, միջին և խոշոր ձեռնարկատիրության ակտիվ համագործակցության գործընթաց: Բացահայտվել է հետաքրքիր օրինաչափություն, ըստ որի այդ համագործակցությունը արտահայտվում է փոքր և միջին ձեռնարկությունների՝ խոշորների շուրջ խմբավորմամբ՝ արտադրատեխնոլոգիական, գիտատեխնիկական և առևտրային կապերի հիման վրա՝ սահմանափակվելով տվյալ տարածաշրջանի աշխարհագրական սահմաններով:

Այս երևույթը առաջին անգամ մանրամասն ուսումնասիրվել է Մ.Պորտերի¹ կողմից, և նրա կողմից էլ տրվել է կլաստերի սահմանումը:

Այժմ կոոպերացման կատարյալ ձև են կլաստերները, որոնք մրցակցող և համագործակցող ձեռնարկությունների, մատակարարների, ծառայություններ մատուցող ձեռնարկությունների, հետազոտական և փոխկապակցված ինստիտուտների աշխարհագրական խմբավորումներ են: Այս պայմաններում ձեռնարկությունները հաճախ կենտրոնացվում են այնպիսի վայրերում, որտեղ բիզնեսի կազմակերպման պայմանները ավելի բարենպաստ են, իսկ որակյալ աշխատուժն ու հետազոտական ինստիտուտների փորձագիտական գիտելիքները՝ մատչելի: Կլաստերներն անկախ ընկերությունների և կազմակերպությունների խմբեր են, որոնք համագործակցում և մրցակցում են, աշխարհագրորեն կենտրոնացված են մեկ կամ մի քանի տարածաշրջաններում, մասնագիտացված են ընդհանուր տեխնոլոգիաներով և կապված են հմտություններով, կոնկրետ ոլորտում գիտատար են կամ ավանդական: Խոշոր ձեռնարկությունների դերը կլաստերի մեջ փոքր և միջին ձեռնարկություններ ներգրավելու, կոոպերացիոն կապեր և կապալային հարաբերություններ հաստատելու մեջ է: Ուղղակիորեն կարող ենք նշել, որ կլաստերները ստեղծվում են փոքր և միջին ձեռնարկատիրության հիմնական առավելությունները գործնականում կիրառելու նպատակով:

Ձեռնարկատիրական կլաստերները և ցանցերը կարևոր գործիք են ՓՄՁ-ների զարգացման և աճի համար, քանի որ նպաստում են աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, նորարարական հնարավորությունների, նորարարությունների առևտրայնացման աճին և ապահովում են զբաղվածության բարձր մակարդակ:

ՓՄՁ և խոշոր ձեռնարկությունների կոոպերացման տարածաշրջանային կառուցվածքներից են ինկուբատորները: ԳՅ-ում գործում է «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը» որի առաքելությունն է խթանել Հայաստանի տնտեսական զարգացումը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների աջակցման, տեղեկատվական հասարակության ձևավորման և այդ ոլորտում նոր ձեռնարկությունների ստեղծման առումով:

ՓՄՁ և խոշոր ձեռնարկությունների համակցման տարածաշրջանային կառույցներից են տեխնոպարկերը: Տեխնոպարկերը հատուկ տարածքներ են, որտեղ միավորվում են հետազոտական ինստիտուտները, արդյունաբերական ձեռնարկությունները, գործարար կենտրոնները, բուհերը, ինչպես նաև սպասարկման ծառայություններ մատուցող երթակառուցվածքները: Տեխնոպարկի ստեղծման նպատակն է մեկ ընդհանուր տարածքում համախմբել այդ ոլորտի մասնագետներին: Տեխնոպարկի մոդելը բաղկացած է պարզ և բարդ ծառայություններից, ռեսուրսների ներգրավման աղբյուրներից, որոնք համախմբվելով կազմում են ինովացիոն ընկերություններին ծառայություններ մատուցող համալիր: Տեխնոպարկի ժամանակակից մոդելն ունի հետևյալ առանձնահատկությունները՝ շինության առկայություն՝ նախատեսված տասնյակ փոքր ֆիրմաների տեղակայման համար, որը նպաստում է փոքր և միջին նորարարական նոր ձեռնարկությունների ձևավորմանը, և մի քանի հիմնադիրների առկայություն, որի դեպքում կառավարման մեխանիզմը բարդ է, քան մեկ հիմնադրի դեպքում, բայց առավել արդյունավետ է՝ հատկապես ֆինանսավորման տեսանկյունից:

Տեխնոպարկերի կառուցվածքի զարգացման վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք վերակազմավորվում են տվյալ երկրի պայմաններին, կազմակերպչական գործընթացներին և նորարարական նախագծերին համապատասխան: Երևանում ներկայումս գործում է «ՎԻՍՏԵՐ» տեխնոպարկը, որն առաջին կոմերցիոն տեխնոլոգիական պարկն ու բիզնես ինկուբատորն է Հայաստանում: Տեխնոպարկը համալրված է նորագույն ենթակառուցվածքներով, ուր հանգրվանում են սկսնակ ընկերությունները: Այն հարթակ է ընկերությունների համար, որոնք մտադիր են ծավալել և արտահանել իրենց գործունեության արդյունքները: Տեխնոպարկի հաջողության գրավականներն են արդյունավետությունը, ցածր ինքնարժեքը և միջավայրը:

2008 թվականից շրջանառության մեջ է դրվել նաև Գյումրու տեխնոպարկի ստեղծման նախագիծը և կառավարության կողմից հաստատված հեռանակարային ծրագրով նախատես-

¹ Porter M. "On Competition" 1998 Harvard Business Review Book.

ված են միջոցառումներ մինչև 2015 թվականը: Տեխնոպարկի ստեղծմամբ հնարավորություն կընձեռվի արտադրական գործընթացներում ընդգրկելու Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի բարձր որակավորում ունեցող մասնագետներին՝ ՓՄՁ սուբյեկտների ստեղծման ճանապարհով՝ մատնանշելով գերակայությունները և զարգացնելով մրցունակ ուղղությունները: Տեխնոպարկի ստեղծման հիմնական խնդիրներից է ՓՄՁ զարգացման աջակցությունը, որի լուծման համար հատուկ ուշադրության է արժանի տեխնոպարկի կազմակերպական կառուցվածքում բիզնես-ինկուբատորի ներառումը:

Անտեսելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում առկա են մի շարք խոչընդոտներ ՓՄՁ ոլորտի և խոշոր ձեռնարկությունների համակցման արդյունավետ կապեր հաստատելու գործում (հակամենաշնորհային քաղաքականության անարդյունավետությունը, շուկայում գերիշխող խմբի դերը, վեներալային կապիտալի անմատչելիությունը, մենաշնորհային շուկան և մրցակցության բացակայությունը, բիզնես կրթության ցածր որակը, դեպի սպառողը կողմնորոշման ցածր աստիճանը և այլն), կան նաև որոշակի առավելություններ, որոնք կարող են նպաստել համագործակցության ընդլայնմանը: Դրանք են.

- Նախկին խոշոր ձեռնարկություններում հիմնական ֆոնդերի բեռնվածության ցածր մակարդակը:
- Ներքին շուկայում մի շարք ապրանքատեսակների գծով թույլ մրցակցությունը, ինչը հնարավորություն կտա խոշոր և ՓՄՁ համագործակցության դեպքում առաջացած սիներգիկ էֆեկտի հաշվին շուկայում կայուն դիրք զբաղեցնել:
ՓՄՁ-ները, անկախ զարգացման փուլից, բախվում են հետևյալ խնդիրների հետ.
- Օրենսդրության անկատարություն:
- Հարկային համակարգի անկատարություն (հարկային արտոնությունները խիստ սահմանափակ են):
- Ֆինանսավարկային համակարգի անկատարություն (փոխառու միջոցների մատչելիության առումով):

ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունը ՀՀ-ում հիմնականում իրականացվում է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից, որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 282-Ն որոշմամբ: Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի առաքելությունը փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցությունն է և ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը: ՓՄՁ ոլորտի հիմքային պետական ծրագիրը ՀՀ կառավարության ՓՄՁ ոլորտին վերաբերող տարեկան ծրագրերն են :

2012 թվականին Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի գործունեության մեջ առանցքային են եղել ՓՄՁ աջակցության ընթացակարգերի բարելավումը¹: 2012թ. Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կազմում ձևավորվել են աջակցության ծրագրերի նոր ստորաբաժանումներ, սկսնակ գործարարների աջակցության և ֆինանսական ծրագրերում ներդրվել են աջակցության նոր մեխանիզմներ և ընթացակարգեր: Առանձնակի կարևորվում են միջազգային կառույցների հետ համագործակցության ուղղությամբ առկա ձեռքբերումները:

Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ը ակտիվ մասնակցություն է ունեցել ՓՄՁ պետական աջակցության նոր ռազմավարության նախագծի մշակման աշխատանքներին: Այս փաստաթղթի նպատակը ՓՄՁ ոլորտի համար աշխարհում մրցունակ միջավայր ապահովելն է՝ ձեռներեցության որակյալ կրթության, ֆինանսական միջոցների հասանելիության, հարկային համակարգի պարզեցման, պետական տարբեր քաղաքականությունների մեջ ՓՄՁ թիրախավորման, ինչպես նաև ձեռներեցության աջակցության ենթակառուցվածքների հզորացման և «պետություն-մասնավոր հատված» երկխոսության ամրապնդման միջոցով:

ՓՄՁ պետական աջակցության 2012 թվականի ծրագրի իրականացման համար ՀՀ 2012թ. պետական բյուջեից հատկացվել է 150,0 հազ. ՀՀ դրամ: Բացի այդ, միջազգային և օտարերկրյա

¹ «Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ» հիմնադրամի կողմից 2012թվականի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվություն:

կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում ներգրավվել է շուրջ 122 մլն ՀՀ դրամ:

ՓՄՁ պետական աջակցության 2012 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի արտահանման և շուկաներում առաջնդման, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության ուղղություններով գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է 8463 առաջարկություն:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 6,8% գործում են Երևանում, իսկ 93,2%-ը ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

2012 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում տրամադրվել է 179,2 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն 30 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 315,5 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ:

Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 10,5 մլն ՀՀ դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 6,0 մլն դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 14%:

Վերջին մի քանի տարիներին ՓՄՁ-ն ՀՀ տնտեսության դինամիկ զարգացող ոլորտներից է: Այն նշանակալի դեր է խաղում երկրի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ամենակարևոր ցուցանիշի՝ համախառն ներքին արդյունքի ձևավորման գործում: Ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության 2011թ. տվյալների¹, ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 42,5%: 2011թ. ՓՄՁ և խոշոր կազմակերպությունների կողմից վճարված հարկերի տեսակարար կշիռը ՀՀ պետբյուջեի հարկային եկամուտների ընդհանուր գումարի մեջ կազմել է համապատասխանաբար՝ 26.8% և 73.2% : ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների թվաքանակը 2011թ. կազմել է զբաղվածների ընդհանուր թվաքանակի 42,2%-ը: Չնայած վերջին տարիների խոստումնալից ցուցանիշներին, երկրում դեռ չեն իրականացվում ՓՄՁ ոլորտի որակական վերափոխումներին ուղղված ծրագրեր: Համաձայն մեր հետազոտությունների, ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից մեծամասամբ ֆինանսավորվել են ծառայությունների ոլորտին վերաբերող ծրագրեր, ինչը ներկա փուլում, տնտեսության զարգացման իմաստով, ռազմավարական չէ: Նշենք, որ Հայաստանի ՓՄՁ ոլորտում անհրաժեշտ է տեղայնացնել միջազգային լավագույն փորձը, որից հետո միայն հնարավոր կլինի խոսել խոշոր դոնորներից ներդրումների ներգրավման, վենչուրային ֆինանսավորման վերաբերյալ:

Ամփոփելով նշենք, որ ՓՄՁ-ներին կարելի է կոնկրետ տնտեսապես աջակցել՝ նրանց տրամադրելով հարկային արձակուրդներ, հարկային արտոնություններ, ձեռնարկություններին տրվող տեղեկատվական աջակցություն:

Վերը նշված միջոցառումների հստակ իրականացման արդյունքում գործող տնտեսական դաշտը բավականաչափ բարենպաստ կլինի ՓՄՁ ոլորտի զարգացման համար, որն էլ ռազմավարական նշանակություն կունենա շուկայական տնտեսության կայացման գործում:

Economy	average farmland size	competitive average farmland size	farmland size to ensure economies of scale
United States	200 hectares	600 hectares	1500 hectares
United Kingdom	55 hectares	80 hectares	200 hectares
France	25 hectares	50 hectares	100 hectares
Denmark	25 hectares	50 hectares	100 hectares
Sweden	25 hectares	50 hectares	100 hectares

Source: Durst, Ron. 2009. Federal Farm Policies and Farm Households. U.S. Department of Agriculture. Economic Research Service. Economic Information Bulletin No. 54. May.

In 2011 about 70% of the gross agricultural output was produced by 69,000 large farms (or 36% from the total number of farms). The estimated output of 26,000 thousand farms (1.4% of total number) was more than 1 million US dollars (or 42% of agricultural output). The share of small farms was estimated at 1.5% using 14% of the land, while the number of small farms comprised 50%.³

The advantages of cooperation are not only the shared funds to be allocated on purchase of equipment and be used by the members of cooperatives; purchasing supplies and/or services; shared costs on marketing activities to have an access to new markets or increase the share in established ones, but also the specialization: the members will utilize modern technology in compliance with the requirements of cooperatives.

Currently, the small farms owing to the lack of funding can't afford purchasing their own equipment. As a result, the labor productivity is rather low, use of equipment and machinery is limited, and the bulky part of agricultural work is done manually. Armenian farmers mainly use tractors and agricultural tools that require review of adopted practices in compliance with the land condition and size of the farm. Currently, about 95% of the machinery and equipment used in the agriculture is obsolete (useful economic life of the equipment and/or machinery expired), and the

¹ Source: Government decree N 1476-N, 04.11.2010, RA, p. 11.

² Source: Durst, Ron. 2009. Federal Farm Policies and Farm Households. U.S. Department of Agriculture. Economic Research Service. Economic Information Bulletin No. 54. May.

³ Source: Farms, Land in Farms, and Livestock Operations 2012 Summary (February 2013), USDA, National Agricultural Statistics Service, pp. 6-19.

productivity is rather low resulting in high operational costs. Therefore, agricultural equipment leasing practices could be considered a remedy to this issue.

The access to the long-term loans especially to leasing is limited. The farmers are required to ensure a down-payment of 30% of the amount of the equipment; meanwhile the machinery is imported, thus additionally increasing the price of machinery. Therefore, it is proposed to make the down-payment 10% of the amount of the equipment and/or machinery. Farmers face high interest rates as well, and the transfer of the property rights from the lessor to lessee only happens at the end of lease period. The lessor forces the lessee to make insurance payments for the machinery and/or equipment, thus putting additional pressure on the farmers. Therefore, co-sharing of insurance payments between lessor and lessee is proposed.

Profits reported by those engaged in the agricultural sector are, in general, lower than the level of profitability reported by other sectors of the economy. The factors that affect the level of profitability in the agricultural sector of the economy are associated with the following risks: weather, bank loans or credits, investments, innovation, prices, insurance, and etc.

In order to mitigate the risks in the agricultural sector of the economy the Government of Armenia needs to start playing more active role in regulating this sector, by allocating more funds, providing tax incentives and etc. However, the most viable tool to increase the competitiveness of the sector is to provide access to the loans to empower the capacity of rural communities, especially in those ones close to the border and in the highland area to improve the wellbeing of the rural residents.

The Government of Armenia initiated a pilot project of subsidizing bank loans in 2008 implemented in 15 rural and one urban communities of Chambarak region of Gegharkunik Marz and in 44 rural communities of Ararat and Ashotsk regions of Shirak Marz. This project was funded and implemented by the Rural Finance Facility.¹

Although the Government of Armenia has made significant efforts to develop and renovate and/or rehabilitate the irrigation system, there are key challenges ahead that need to be addressed, since out of 232.9 thousand hectares of irrigated land only 156 thousand hectares were irrigated in 2012.²

Several state agencies and non-profit organizations provide technical assistance (consulting services and access to information) to various beneficiaries. Access to market information (both local and overseas), recent regulatory and legislative changes, technological progress assist the entrepreneurs in reporting operational efficiency.

Within the framework of Agricultural Reform Support Project funded by the World Bank and started in September, 1997 regional Agriculture Support Regional Centers (ARSC) have been established. In all marzes of Armenia³ ARSCs provide technical assistance to the farmers, provide access to various databases, conduct trainings and etc.

Various legislative reforms have been undertaken to regulate the agricultural sector of the economy as well.

Although Armenia has reported a progress in developing the agricultural sector of the economy new targeted initiatives (reforms, programs and measures) are required to regulate the activities of other related industries (financial markets); ensure efficient functioning of land and agricultural products markets; foster cooperation and forming of agricultural cooperatives, and etc.

¹ Source: Government decree N 706-N, 12.06.2008, RA, pp. 8-9.

² Source: Government decree N 1476-N, 04.11.2010, RA, p. 14.

³ Source: www.minagro.am

**ՀՀ ագրարային ոլորտում տնտեսավարողների
մրցունակության բարձրացման ուղիները**

Ամփոփագիր

Ագրարային ոլորտի զարգացման ներկա փուլում տնտեսական կառավարման կարևորագույն խնդիրներից մեկը ներքին և արտաքին շուկաներում արտադրանքի մրցունակության բարձրացումն է:

ՀՀ ագրարային ոլորտում տնտեսավարողների մրցունակության բարձրացման հիմնական ուղղություններն են՝ տնտեսավարման ձևերի կատարելագործումը, գյուղացիական տնտեսությունների չափերի օպտիմալացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, մեքենայացման մակարդակի բարձրացումը, ռիսկերի կառավարման կատարելագործումը, ոլորտին պետական աջակցության վիճակի բարելավումը, իրավական դաշտի կատարելագործումը, իրացման համակարգի զարգացումը և այլն:

Алиса Мелкумян

**Пути повышения конкурентоспособности
аграрного сектора экономики РА**

Аннотация

В современном этапе развития аграрного сектора экономики одной из основных проблем экономики управления является повышение конкурентоспособности продукции на внутреннем и внешнем рынках.

В аграрном секторе РА основными направлениями повышения конкурентоспособности являются: улучшение экономических форм, оптимизацию размеров хозяйств, повышение производительности труда, совершенствование управления рисками, улучшение условий государственной поддержки, совершенствование правового поля, развитие системы распределения.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

յ. գ. դ., պրոֆեսոր

ԱԼՎԱՐԴ ՍԱՐԳՍՅԱՆ

յ. գ. թ., դոցենտ

ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

յ. գ. թ., դոցենտ

ԼԵՎՈՆ ՍԱՅԱԿՅԱՆ

յ. գ. թ., ասիստենտ

ԽՈՇՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՑԱՆՅԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՍՈՂԵԼԸ¹

Ֆինանսական հաշվառման ներդրման զուգահեռ ՅՅ-ում նոր որակական հատկանիշներ է ստանում հաշվապահական տեղեկատվությունը: Ներկայումս հաշվապահական հաշվառման հիմնարար մոտեցումները սահմանվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Սակայն ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) որդեգրումը չի նշանակում, որ հաշվապահական հաշվառման համակարգի բոլոր հիմնահարցերը ստանում են իրենց պատասխանները: Առհասարակ ֆինանսական հաշվառման հիմնարար մոտեցումներից մեկն այն է, որ ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով, կամ արժեքի չափման այլ մոտեցմամբ, սակայն ոչ վաճառքի գներով: Կան մոտեցումներ, որոնց համաձայն բացահայտվում են որոշակի ակտիվների իրական արժեքները, սակայն նրանք չեն ծառայում որպես հաշվառման հիմք: Ներկայիս տնտեսական զարգացումները առևտրի ոլորտում հանգեցրեցին մի շարք փոփոխությունների, օրինակ, խոշոր առևտրային ցանցերի ձևավորումը, առևտրի ոլորտում հաշվառման ավտոմատացումը և այլն, որոնք իրենց հերթին էլ նոր խնդիրներ են առաջ դնում հաշվապահական հաշվառման համակարգի առջև: Հաշվառման տեսանկյունից նման խնդիր դարձավ տեղեկատվական համակարգերի մասնակի կամ բացարձակ ինտեգրումը հաշվապահական գործընթացների մեջ: Տնտեսության մեջ տեղեկատվական համակարգերի առաջին կիրառությունները եղել են հաշվապահական հաշվառման ոլորտում: Ներկայումս տեղեկատվության շրջանառության ձևերի զարգացումները հրամայական են հանդիսանում հաշվապահական հաշվառման համակարգերի նոր որակի՝ տեղեկատվական-վերլուծական համակարգերի ստեղծման համար: Ժամանակակից պահանջներին բավարարող տեղեկատվական համակարգը նախատեսված է ոչ միայն հաշվապահական տեղեկատվական հոսքերի պարզագույն մշակման և ներկայացման համար, այլ ներառում է տրամաբանական և գիտական բաղկացուցիչ, որը նպաստում է առավել արդյունավետ կառավարչական որոշումների ընդունմանը և կառավարչական հաշվառման հիմնախնդրների լուծմանը: Բացի այդ, աստիճանաբար կանոնակարգվում էին առևտրի ոլորտում գործարար փոխհարաբերությունները և առևտրի կազմակերպման մոտեցումները: Եթե 15-20 տարի առաջ դժվար էր պատկերացնել առևտրի գործընթացը առանց սակարկման, ապա ներկայումս առավել դժվար է պատկերացնել առևտրի սրահ առանց հստակ գնանշման: Փոխվեցին նաև ապրանքաշրջանառության կազմակերպման ձևերը, դառնալով հնարավորինս տարանջատված: Նման և շատ հանգամանքների արդյունքում առևտրի ոլորտում ձևավորվեցին հաշվառման առանձնահատկություններ, որոնք գտան իրենց

¹ Հոդվածը ներկայացված է ՀՊՏՀ 2013թ. ներքին դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

օպտիմալ լուծումները: Այդպիսի առանձնահատկություններից ամենակարևորն այն է, որ ապրանքային հաշվառումը կրեց երկշերտ բնույթ: Առաջին հարթությամբ այն հաշվառվում է ինքնարժեքի սկզբունքով, իսկ մյուս հարթությամբ՝ վաճառքի գների սկզբունքով: Նշվածներից մեկը կամ մյուսը չեն նսեմացնում մյուսի կարևորությունը, քանի որ դրանցից յուրաքանչյուրը ունի իրեն հատուկ գործառույթները:

Այսպես, հարկային և ֆինանսական հաշվառման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ապրանքային հաշվառման վարումը ինքնարժեքի հարթությամբ, իսկ ներքին վերահսկողության կամ կառավարչական հաշվառման տեսանկյունից նաև կարևոր է հաշվառումը վաճառքի գներով:

Շատ հաճախ ապրանքային հաշվառումը վաճառքի գներով կոչվում է մանրածախ հաշվառման մեթոդ: Մանրածախ բառը պատահական չէ, քանի որ այս մեթոդը իր լավագույն կիրառությունը գտնում է մանրածախ ապրանքաշրջանառության ոլորտում:

Մանրածախ մեթոդով հաշվառումը, դա այնպիսի հաշվապահական գործընթացների, գրանցումների, հաշվարկների և հաշվետվությունների համակարգված ամբողջություն է, որի հիմքում ընկած է ապրանքային մնացորդը և շրջանառությունը վաճառքի գներով հաշվառելու սկզբունքը:

Հարց է ծագում, թե ինչպիսի հանգամանքներում հաշվառման, որ սկզբունքները որքանով են արդյունավետ և որքանով են նպատակահարմար:

Այսպես, առևտրի ոլորտում տնտեսվարող կազմակերպությունների գործունեությունը պայմանականորեն կարելի է տարանջատել երեք ուղղությունների՝

1. մեծածախ,
2. մանրամեծածախ,
3. մանրածախ:

Մեծածախ ապրանքաշրջանառությունը կարելի է բնութագրել հետևյալ հատկանիշներով՝ առկա է առևտրային բազա կամ պահեստ, որտեղ տեղակայված են ապրանքային մնացորդը, որտեղից էլ կազմակերպվում է իրացումը: Գնորդները հիմնականում միջնորդ կազմակերպություններն են, գնային քաղաքականությունը կախված է խմբաքանակից, առաքման վայրից, վճարման ժամանակագրությունից: Ինչպես նաև կարևոր է հիշել, որ վճարահաշվարկային փաստաթուղթը հանդիսանում է հաշիվ -ապրանքագիրը:

Մանրածախ ապրանքաշրջանառությունը ի տարբերություն մեծածախի, ունի որոշակի առանձնահատկություններ, այսպես՝

- առկա է առևտրային սրահ, անկախ պահեստային տարածքից,
- վաճառահանված ապրանքները հստակորեն գնանշված են,
- գնանշումից գատ կարող են գործել սահմանված զեղչեր,
- գնորդների շրջանակը ազատ է,
- գնորդները կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք,
- անդեմ գնորդի հետ վճարահաշվարկային փաստաթուղթ հանդիսանում է ՀԳՄ կտրոնը,
- իրացման գործընթացը զուգորդում է անհապաղ վճարմամբ:

Մանրամեծածախ ապրանքաշրջանառության պարագայում կարող են համադրվել վերջիններիս յուրահատուկ հատկանիշները:

Գործունեության առանձնահատկությունների տարանջատումը իր հերթին առաջացնում է նաև հաշվառման մոտեցումների առանձնահատկություններ: Մանրածախ և մանրամեծածախ բնագավառների դեպքերում առավել նպատակահարմար է կիրառել նաև հաշվառման մանրածախ մեթոդը:

Ինչպիսի մեթոդ էլ ընտրվի, այն ունի հետևյալ նպատակը՝ ապրանքային մնացորդի և շրջանառության արժեքային գնահատումը: Ապրանքային պաշարների հաշվապահական հաշվառման հիմնական խնդիրը՝ իրացված կամ սպառված միավորների ինքնարժեքի որոշումն է: Ապրանքային պաշարների ինքնարժեքի որոշման մեթոդները սահմանված և նկարագրված են ՀՀՄ 2 «Պաշարներ» ստանդարտում: Առհասարակ իրացված պաշարների ինքնարժեքի որոշման

բանաձևի ընտրությունը կախված է հետևյալ հարցից՝ արդյոք ապրանքային պաշարները փոխադարձ փոխարկելի են, թե ոչ: Փոխադարձ փոխարկելի պաշարների ինքնարժեքի որոշման համար կարող են կիրառվել ԱՄԱԵ և միջին կշռված մեթոդները: Ինչպես ստանդարտը որոշակի հանգամանքներում թույլատրում է կիրառել նաև ինքնարժեքի որոշման մանրածախ մեթոդը և ստանդարտ ծախսումների մեթոդները: Վաճառված (իրացված կամ այլ ելքագրված) ապրանքների ինքնարժեքի որոշումը հավելագնի մեթոդով ենթադրում է, որ առկա է առևտրային հավելագնի հարաբերականորեն կայուն տոկոսադրույք:

Այն կարող է կիրառվել հետևյալ նպատակներով՝

- իրացման ծավալի նկատմամբ՝ ինքնարժեքի որոշման նպատակով,
- իրացման ծավալի նկատմամբ՝ համախառն շահույթի որոշման նպատակով,
- վաճառքի գներով արտահայտված ապրանքային մնացորդի նկատմամբ՝ մնացորդի ինքնարժեքի գնահատման համար,
- ինքնարժեքով արտահայտված ապրանքային մնացորդի նկատմամբ՝ մնացորդի գումարը վաճառքի գներով որոշելու համար և այլն:

Սովորաբար, այս մեթոդը կիրառվում է վաճառված ապրանքների ինքնարժեքի որոշման համար, հաշվառման այս մեթոդը իր կիրառությունը գտնում է հիմնականում առևտրային սրահներում՝ հաշվառման գործընթացների պարզեցման համար: Մի ժամանակաշրջանից մյուսը առավել հեշտ է գրանցել ձեռքբերումները, արտահայտված վաճառքի գներով, և հաշվառել իրացումից հասույթը, քան թե որոշել վաճառված ապրանքների ինքնարժեքը:

Հավելագնի մեթոդի կիրառությունը նպատակ է հետապնդում հեշտացնել հաշվառման գործընթացը և հիմք է ծառայում ապահովել ապրանքային մնացորդի փաստացի գույքագրման արդյունքների համադրումը հաշվառված մնացորդի հետ: Այս մեթոդի դեպքում հաշվառման վարման համար պարտադիր չեն ապրանքային քարտում անալիտիկ գրանցումները: Առևտրային հավելագնի միջոց մանրածախ մեթոդը հիմնականում կիրառվում է փոքր բիզնեսում:

Խոշոր առևտրային ցանցերում ապրանքային պաշարների հաշվառումը առաջ է բերում այլ խնդիրներ, որոնց լուծման գրավական տեսնում ենք մանրածախ մեթոդի առաջարկվող գործիքակազմը: Մանրամեծածախ առևտրի ոլորտում հաշվառման ներդրման սկզբունքները և ներքին վերահսկողության վարման կանոնների ընտրության մեջ կիրառելով մանրածախ մեթոդի գործիքակազմը կստեղծվի այլընտրանքային հակակշիռ գոյություն ունեցող տեղեկատվական աղբյուրներին: Իսկ նրա հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ այդպիսի տեղեկատվական հոսքը կարելի է ձևավորել իրարից անկախ միավորներից:

Մանրամեծածախ առևտրի ոլորտի առանձնահատկությունը հաշվի առնելով՝ յուրահատուկ են նաև հաշվառման վարման մոտեցումները: Ուսումնասիրելով առևտրային հավելագնի տոկոսադրույթի կիրառության եղանակները հաշվառման տեսանկյունից ակնհայտ է դառնում այն փաստը, որ եթե նման տոկոսադրույթ լինի փոփոխական և դժվար որոշելի, ապա վերջինիս կիրառությունը կլինի ոչ նպատակահարմար: Հետևաբար, ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է վարել երկու տարբեր հաշվառումներ՝ մեկը ըստ ինքնարժեքների, մյուսը ըստ վաճառքի գների:

Սակայն մինչև հաշվառման ներդրման և գործընթացների նկարագրությանը, փորձենք ձևակերպել թե ինչ խնդիրներ պետք է լուծել հաշվառման միջոցով:

Նախ մանրամեծածախ առևտրի ոլորտի զարգացումը հանգեցրեց առևտրային ցանցերի ձևավորմանը: Ներկայումս գրեթե բոլոր վաճառակետերը հանդիսանում են առևտրային ցանցի միավորներ: Գործունեության նման կազմակերպումը ունի մի շարք առավելություն աշխատանքի կազմակերպման, մենեջմենթի, լոգիստիկայի, մարքեթինգի և վերահսկողության տեսանկյուններից: Հաշվապահական հաշվառման տեսանկյունից առավել կարևորություն ունի ներքին վերահսկողության ճիշտ կազմակերպումը: Վերջինս անհնար է իրականացնել առանց համապատասխան հաշվապահական տեղեկատվության, իսկ տեղեկատվության օրինակներ են՝ ապրանքային քարտերը, ապրանքային մնացորդը արտահայտված բնեղեն արտահայտությամբ և, իհարկե, ապրանքային մնացորդը արտահայտված վաճառքի գներով: Գույքագրումների կամ ստուգումների իրականացումը ամփոփվում է հենց փաստացի մնացորդների համադրությամբ ապրանքային

մնացորդը արտահայտված վաճառքի գներով: Այսպիսով, ակնհայտ է, որ հաշվառման արդյունքով ձևավորված տեղեկատվությունը պետք է լինի այնպիսին, որ այն համադրվի ներքին վերահսկողության տեղեկատվության հետ: Բացի այդ, կարևոր է նաև ապրանքային միավորների հաշվառումը ըստ իրենց սահմանված վաճառքի գների, հակառակ դեպքում իրացման գործընթացի նկատմամբ անհնար կլինի սահմանել հսկողություն:

Առևտրային ցանցերի գործունեության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հաշվապահական հաշվառման տեղեկատվությունը առնվազն պետք է ապահովի

- յուրաքանչյուր ապրանքային պաշարի (ապրանքի, արտադրանքի) անալիտիկ հաշվառումը ըստ առանձին առևտրային սրահների,
- յուրաքանչյուր առևտրային սրահի ապրանքային մնացորդի հաշվառված մեծությունը ըստ վաճառքի գների,
- վաճառքի գներից տարբերվող գներով իրացման վերաբերյալ տեղեկատվության,
- դեբիտորներ, կրեդիտորների անալիտիկ հաշվառում՝ ըստ առաջացման աղբյուրների (օրինակ դեբիտորների դեպքում՝ թե որ առևտրային սրահից է կատարվել իրացումը, կրեդիտորների դեպքում՝ թե ինչպիսի ապրանքների մատակարարումից, որ պահեստը կամ սրահն է եղել անմիջապես բեռնաթափման վայրը և այլն),
- վաճառքի կետների (առավել հաճախ այն նույնականացվում է առևտրային սրահի առանձին դրամարկղային կետերի հետ, որտեղ կատարվում է վճարումը գնորդի կողմից, POS) դրամական միջոցների հաշվառում՝ մուտքային մասով համադրելի վաճառված ապրանքների գումարների հետ, իսկ ելքային մասով՝ ըստ համապատասխան ուղղությունների և այլն:

Թվարկումը կարելի է շարունակել, սակայն բավարարվենք նվազագույնով:

Նման պահանջների բավարարմանը առավել բարձր մակարդակով կարելի է հասնել ավտոմատ համակարգերի ներդրմամբ, ֆինանսական հաշվառման պատշաճ կազմակերպմամբ, և օպերատիվ հաշվառմամբ՝ **հիմք ընդունելով հաշվառման մանրաձախ մեթոդը:**

Ինքնարժեքի որոշման տեսանկյունից կիրառվող մանրաձախ մեթոդի տարրերից օգտագործվում է առևտրային հավելագինը, իսկ առհասարակ ապրանքային հաշվառման տեսանկյունից մանրաձախ հաշվառման ողջ գործիքակազմը:

Մանրաձախ հաշվառման գործիքակազմի մեթոդական հիմքը՝ ցուցանիշների սկզբնական և վերջնական մնացորդների միջև կապերի արտացոլումն է՝ ըստ այնպիսի հատկանիշներ կրող հաշվարկային մեծությունների, որոնք համադրելի են մեկ այլ ցուցանիշի հաշվարկման մեջ, ողջ գործիքակազմը իրենից ներկայացնում է միևնույն ցուցանիշի երկու տարբեր ժամանակաշրջանների մնացորդների միջև թվաբանական-հաշվարկային կապը:

Ապրանքային պաշարների մնացորդի հաշվառման տեսանկյունից մի քանի եղանակներ կամ մոտեցումներ կան, դրանք են՝

- զուտ անալիտիկ հաշվառում,
- քանակագումարային հաշվառում ըստ ինքնարժեքի (սինթետիկ հաշվառում),
- քանակագումարային հաշվառում ըստ վաճառքի գների (հավելագնի մեթոդ),

Սակայն մեր կողմից առաջարկվում է կիրառել զուտ գումարային մեթոդը:

Ջուտ անալիտիկ կամ քանակային հաշվառումը հատուկ է օպերատիվ հաշվառմանը, երբ ապրանքանյութական միավորների հաշվառումը վարվում է ըստ անալիտիկ քարտերի, արտահայտված բնեղեն չափիչներով:

Քանակագումարային հաշվառումը ըստ ձևավորված փաստացի ինքնարժեքների հատուկ է ֆինանսական հաշվառմանը, երբ միավորների հաշվապահական հաշվառումը տարվում է և՛ անալիտիկ, և՛ սինթետիկ հաշիվների միջոցով:

Քանակագումարային հաշվառումը ըստ վաճառքի գների և զուտ գումարային հաշվառման եղանակները կրում են յուրահատուկ բնույթ, դրանք հատուկ են միայն հաշվառման մանրաձախ մեթոդին, որոնք կիրառելի են միայն առևտրային բնագավառում:

Քանակագումարային ըստ վաճառքի գների հաշվառման եղանակի հիմնաքարը՝ ապրանքային միավորների, ապրանքաշրջանառության և մնացորդի հաշվառումն է ոչ թե ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով, ինչպես ընդունված է ֆինանսական հաշվառման, կամ փաստացի ձևավորված արժեքով, ինչպես ընդունված է հարկային հաշվառման մեջ, **այլ հաշվառումն է՝ արտահայտված վաճառքի գներով:**

Իսկ զուտ գումարայինի դեպքում հաշվառումը ապահովում է միայն ապրանքային մնացորդը և շրջանառության մեծությունը գումարային տեսքով, այս դեպքում էական չէ անալիտիկ հաշվառումը: Ջուտ գումարային մնացորդի մեծությունը օգտագործվում է որպես հակակշիռ, չնայած ունենալով կիրառության սահմանափակ շրջանակներ, այն ապահովում է վերահսկողական ֆունկցիա տեղեկատվական հոսքերի նկատմամբ, կարող է կիրառվել ներքին ստուգումների ժամանակ:

Մանրածախ մեթոդի ներդրման նպատակահարմարությունը խիստ սուբյեկտիվ որոշում է, քանի որ կախված է կառավարման կառուցվածքային բնույթից, օրինակ, այս եղանակի ներդրումը և հետագա վարումը կլինի անիմաստ, եթե կազմակերպության գործունեության մեջ ընդունված չէ գույքագրումների անցկացումը ներքին վերահսկողության նպատակներով, կամ առևտրային սրահներին տրված են այնչափ լիազորություններ, որոնք ինքնուրույն կերպով կարող են կազմակերպել իրենց առևտրային գործընթացը, և հետևաբար նրանցից պահանջվում է ապահովել որոշակի շահութաբերության մակարդակ և այլն: Հետևաբար պետք է լինեն այնպիսի հանգամանքներ, որոնց արդյունքում մանրածախ հաշվառման մեթոդի ներդրումը ապահովի աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

Առևտրային գործունեությունը ենթադրում է կատեգորիաներ, որոնցում տեղի ունեցող փոփոխությունները հանդիսանում են մանրածախ հաշվառման առարկան, դրանք են՝

- առևտրային սրահների, պահեստների, բազաների ապրանքային շրջանառությունը,
- դրամական միջոցների հոսքերը,
- վաճառքների գծով դեբիտորական պարտքերը:

Տնտեսական գործունեության հաշվապահական հաշվառումը ներառում է բազմաթիվ այլ տնտեսական կատեգորիաներ՝ ներառելով կազմակերպության ակտիվները և պասիվները, սակայն առևտրային սրահների տեսանկյունից տնտեսական միջոցների կազմը ներառում է միայն վերոհիշյալ թվարկվածը, հետևաբար թվարկումը ոչ թե պայմանական բնույթ է կրում, այլ՝ օբյեկտիվ:

Մանրածախ հաշվառման մեթոդի կիրառությունը ենթադրում է գործառնությունների դասակարգված գրանցումներ կատարելու ընթացակարգեր, որոնց արդյունքները օգտագործվում են հաշվարկային բանաձևերում, իսկ արդյունքում ստացված մեծությունները կծառայեն որպես փաստացի արդյունքների հետ համադրման լավագույն տարբերակ:

Մանրածախ հաշվառման մեջ առաջարկում ենք օգտագործել հետևյալ երեք հիմնական հաշվարկային բանաձևերը՝

- *Ապրանքային մնացորդի,*
- *Դրամարկդի մնացորդի,*
- *Դեբիտորական պարտքերի:*

Ապրանքային մնացորդի հաշվարկային բանաձևում օգտագործվող ցուցանիշները

	Ցուցանիշի կամ բանաձևի նկարագրությունը	Հաշվարկային բանաձևը
<i>Q</i>	<i>ապրանքատեսակի մնացորդի քանակն է բնեղեն չափիչով</i>	
<i>P</i>	<i>տվյալ ամսաթվի դրությամբ տվյալ միավորի սահմանված վաճառքի գինը (այսուհետ՝ վաճառքի գին)</i>	
<i>I₀</i>	Ապրանքային մնացորդ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	$I_0 = \sum Q * P$
<i>I₊</i>	Ապրանքային մնացորդի ավելացումներ՝ ձեռքբերումներ, մուտքեր	
<i>I₋</i>	Իրացման ծավալ և այլ ելքեր	
<i>I₁</i>	Ապրանքային մնացորդ ժամանակաշրջանի վերջին դրությամբ	$I_1 = I_0 + I_+ - I_-$

Սակայն առևտրային սրահների մուտքային և ելքային գործողությունների նման խոշոր դասակարգումը բավարար չէ՝ ներկայացնենք առավել մանրամասն:

	Ցուցանիշի կամ բանաձևի նկարագրությունը	Հաշվարկային բանաձևը
I_+	Ապրանքային մնացորդի ավելացումներ՝ ձեռքբերումներ, մուտքեր	$I_+ = M_1 + M_2 + P_+ + D_+ + R_+$
M_1	Ձեռքբերումներ (հնարավոր է նաև վերադարձ գնորդից դեպքը, որը կարող ենք դիտարկել որպես ձեռքբերում)	<i>ձեռքբերման ապրանքային քանակ X տվյալ պահին գործող վաճառքի գին</i>
M_2	Ներքին տեղաշարժեր	<i>այլ սրահներից կամ պահեստից ստացման ապրանքային միավորների քանակ X տվյալ պահին գործող վաճառքի գին</i>
P_+	Վաճառքի գների թանկացում, վաճառքի գների փոփոխություն սահմանելու դեպքում	<i>(նոր գին – վաճառքի գին) X փոփոխվող գինը կրող ապրանքային մնացորդ՝ առ գների փոփոխության ամսաթվի դրությամբ</i>
D_+	Բացասական զեղչեր, վաճառքի գնից բարձր գնով իրացնելու դեպքում	<i>(վաճառված գին – վաճառքի գին) X իրացված ապրանքների քանակ</i>
R_+	Գույքագրմամբ բացահայտված ավելցուկ	<i>ավելցուկ ապրանքային միավորների քանակ X տվյալ պահին գործող վաճառքի գին</i>

Նույն կարգով ներկայացնենք ելքային գործառնությունները՝

	Ցուցանիշի կամ բանաձևի նկարագրությունը	Հաշվարկային բանաձևը
I_-	Իրացման ծավալ և այլ ելքեր	$I_- = S + D + M_- + P_- + R_-$
S	Իրացված ապրանքների գումար (հնարավոր է նաև վերադարձ մատակարարին դեպքը, որը կարող ենք դիտարկել որպես իրացում) Իրացման ծավալը հաշվի առնելիս ցանկալի է անտեսել ԱԱՀ	<i>իրացման քանակ X վաճառված գին</i>
D	Չեղչեր, վաճառքի գնից ցածր գնով իրացնելու դեպքում	<i>(վաճառքի գին - վաճառված գին) X իրացված ապրանքների քանակ</i>
M_-	Ներքին տեղաշարժեր	<i>այլ սրահներ կամ պահեստ տեղափոխված ապրանքային միավորների քանակ X տվյալ պահին գործող վաճառքի գին</i>
P_-	Վաճառքի գների իջեցում, վաճառքի գների փոփոխություն սահմանելու դեպքում	<i>(նոր գին – վաճառքի գին) X փոփոխվող գինը կրող ապրանքային մնացորդ՝ առ գների փոփոխության ամսաթվի դրությամբ</i>
R_-	Գույքագրմամբ բացահայտված պակասորդ	<i>պակասորդ ապրանքային միավորների քանակ X տվյալ պահին գործող վաճառքի գին</i>

Առևտրային կազմակերպության դրամարկղային գործողությունների տարանջատումը ըստ դրամական հոսքերի բնույթի կատարվում է համաձայն ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի, որի պահանջների կատարումը պարտադիր է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Եթե դրամական հոսքերի բնույթը ուսումնասիրենք առևտրային կետերի կամ սրահների մակարդակով, ապա այստեղ դրամական հոսքերի դասակարգումը առավել ընդգծված է արտահայտվում: Դրամական հոսքերը մուտքային մասով արտահայտվում են հաճախորդների կողմից վճարումների և դեբիտորի մարումների տեսքով, իսկ ելքային մասով՝ ընթացիկ ծախսերի, մատակարարներին վճարումների կամ գլխավոր դրամարկղ գումարի հանձնման տեսքով:

Դրամարկղի մնացորդի հաշվարկային բանաձևում օգտագործվող ցուցանիշները

	Ցուցանիշի կամ բանաձևի նկարագրությունը	Հաշվարկային բանաձևը
C_0	Դրամարկղի սկզբնական մնացորդ	
C_{in}	Կանխիկ մուտքեր	
C_{out}	Կանխիկ ելքեր	
C_1	Դրամարկղի վերջնական մնացորդ	$C_1 = C_0 + C_{in} - C_{out}$
C_{in}	Կանխիկ մուտքեր	$C_{in} = C_{ins} + C_{inD}$
C_{ins}	Կանխիկ մուտքեր վաճառքից	
C_{inD}	Կանխիկ մուտքեր դեբիտորներից	

Դրամարկղի ելքերը կարող են դասակարգվել ըստ նպատակային ուղղությունների, որոնց ընտրությունը կախված է կոնկրետ կազմակերպության վարած ներքին քաղաքականությունից, օրինակ, եթե թույլատրվում է կատարել վճարումներ մատակարարներին, կատարել ընթացիկ ներքին ծախսեր, վճարել աշխատավարձ և այլն: Սակայն գլխավոր դրամարկղ գումարի հանձնումը հատուկ է բոլոր առևտրային կետերին, անկախ իրականացման ձևերից՝ ինկասսոցիոն, բանկային փոխանցմամբ և այլն:

Կարևոր է հիշել, որ ներկայացված հաշվարկային բանաձևերում չէին քննարկվում անկանխիկ գործառնությունները, իսկ դրանց առկայության դեպքում մոտեցումները նույն են:

Դեբիտորական պարտքերի հաշվարկային բանաձևի կառուցման եղանակը նույն է ինչ որ սինթետիկ հաշվառման մեջ:

Դեբիտորական պարտքերի *մնացորդի* հաշվարկային բանաձևում օգտագործվող ցուցանիշները

	Ցուցանիշի կամ բանաձևի նկարագրությունը	Հաշվարկային բանաձևը
D_0	Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի սկզբնական մնացորդ	
SD	Իրացման ծավալ՝ հետաձգված վճարումով	
C_{inD}	Վճարումներ դեբիտորներից	
D_1	Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի վերջնական մնացորդ	$D_1 = D_0 + SD - C_{inD}$

Վերոհիշյալ բանաձևերը հիմք են ծառայում առևտրային սրահների ակտիվների զուտ գումարային մնացորդի որոշման համար: Այսպես, առաջարկվում է թվաբանական կտրվածքով գումարել վերոհիշյալ երեք հաշվարկային բանաձևերը, որոնց հանրագումարը իրենից կներկայացնի «առևտրային ցանցի ակտիվները», այսինքն, կունենանք առևտրային սրահի միկրոհաշվեկշիռ, սակայն բացի զուտ թվաբանական գումարումից, այստեղ ի հայտ է գալիս զուտ գումարային մեթոդի առավելությունը, երբ ապրանքային մնացորդը որևէ անսաթվի դրությամբ կարելի է ստանալ արտահայտված ապրանքների վաճառքի գներով, չօգտագործելով իրացման ծավալի ցուցանիշը: Հենց այս մոտեցման մեջ է կայանում զուտ գումարային մեթոդով հաշվառման առավելությունը, քանի որ այն հակակշռում է հաշվապահական տեղեկատվական հոսքերին:

Զուտ գումարային մեթոդով մանրածախ հաշվառման բանաձևի կառուցման ուղղությունը հետևյալն է. եթե հիմք վերցնենք ապրանքային մնացորդի, դրամական միջոցներ և դեբիտորական պարտքերի հաշվարկային բանաձևերը՝

- $D_1 = D_0 + SD - C_{inD}$
- $C_1 = C_0 + C_{ins} + C_{inD} - C_{out}$
- $I_1 = I_0 + M_1 + M_2 + P_+ + D_+ + R_+ - S - D - M_- - P_- - R_-$

ապա դրանց հանրագումարը իրենից կներկայացնի առևտրային սրահի ակտիվների հանրագումարը՝

$$4. D_1 + C_1 + I_1 = D_0 + SD - C_{inD} + C_0 + C_{ins} + C_{inD} - C_{out} + I_0 + M_1 + M_2 + P_+ + D_+ + R_+ - S - D - M_- - P_- - R_-$$

Հաջորդ քայլի ընթացքում կրճատվում է միևնույն ցուցանիշը, որը ունի տարբեր թվաբանական նշաններ, այսինքն՝ C_{inD} ցուցանիշը:

$$5. D_1 + C_1 + I_1 = D_0 + SD + C_0 + C_{ins} - C_{out} + I_0 + M_1 + M_2 + P_+ + D_+ + R_+ - S - D - M_- - P_- - R_-$$

Հիմք ընդունել, որ իրացման փաստացի ծավալը արտահայտվում է համարժեք դրամական մուտքի կամ դեբիտորական պարտքերի աճի տեսքով, այսինքն՝

$$6. S = SD + C_{ins}$$

Տեղադրելով այն 5. բանաձևում, կստանանք՝

$$7. D_1 + C_1 + I_1 = D_0 + SD + C_0 + C_{ins} - C_{out} + I_0 + M_1 + M_2 + P_+ + D_+ + R_+ - SD - C_{ins} - D - M_- - P_- - R_-$$

$$\Rightarrow$$

$$8. D_1 + C_1 + I_1 = (D_0 + C_0 + I_0) + M_1 + (M_2 - M_-) - C_{out} + (P_+ - P_-) + (D_+ - D) + (R_+ - R_-)$$

Հաշվի առնելով, որ գործնականում առևտրային սրահներում դրամարկղի մնացորդները օրվա վերջին գրեթե միշտ կան զրոյացվում են՝ մնացորդը հանձնվում է գլխավոր դրամարկղ, կամ նվազեցվում են մինչև սահմանված չափը, կարելի է ասել, որ այն ժամանակաշրջանի տարբեր պահերի կրում է միևնույն մեծությունը, հետևաբար այն անտեսվում է:

$$9. D_1 + I_1 = (D_0 + I_0) + M_1 + (M_2 - M_-) - C_{out} + (P_+ - P_-) + (D_+ - D) + (R_+ - R_-)$$

Հետևաբար, առևտրային սրահի ակտիվների մնացորդը կարելի է հաշվարկել ժամակաշրջանի կտրվածքով հետևյալ տրամաբանությամբ՝

- | | |
|---|-------------|
| 1. Ապրանքային և դեբիտորական պարտքերի մնացորդ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ + | $D_0 + I_0$ |
| 2. ձեռքբերումներ արտահայտված վաճառքի գներով + M_1 | |
| 3. սրահների միջև ներքին տեղաշարժերի զուտ գումար | $M_2 - M_-$ |
| 4. դրամարկղից ելքագրված գումարներ | $-C_{out}$ |
| 5. վերագնահատումների տարբերություն | $P_+ - P_-$ |
| 6. առևտրային զեղչերի տարբերություն | $D_+ - D$ |
| 7. գույքագրման արդյունքներ | $R_+ - R_-$ |

Վերոհիշյալ զուտ գումարային բանաձևը կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների՝ կախված առևտրային ընկերության վարած մեներջմենթից: Հետևաբար, հիմք ընդունելով այն ենթադրությունը, որ առևտրային սրահներում հետաձգված վճարումով իրացումը առհասարակ տարածված բնույթ չի կրում, առավելս կարելի է ասել, որ հազվադեպ է հանդիպում պրակտիկայում, ապա առաջարկվող հաշվարկային բանաձևը կարող է ազատվել դեբիտորական պարտքի մնացորդի ցուցանիշից:

Այսպիսով, ՀՀ առևտրային սրահների ապրանքային մնացորդի որոշման համար այլընտրանքային մոտեցում կարող է ծառայել մեր կողմից առաջարկվող հաշվարկային բանաձևը, որի էական տարբերությունը և առավելությունը կայանում է հետևյալի մեջ՝

- մնացորդի որոշման ժամանակ չի օգտագործվում իրացումից հասույթի մեծությունը,
- մնացորդը արտահայտվում է վաճառքի գներով՝ զուտ գումարային տեսքով, ինչպես մանրածախ մեթոդի կիրառության ժամանակ,
- օգտագործվող տեղեկատվության շրջանակները կրում են հասանելի բնույթ:

Ամփոփելով, նշենք, որ առաջարկվող հաշվարկային բանաձևը հիմք է հանդիսանալու ներքին վերահսկողական համակարգում որպես այլընտրանք կամ հակակշիռ արդեն իսկ ձևավորված տեղեկատվական հոսքերին և հաշվետվություններին, հնարավորություն է ընձեռելու գույքագրման անցկացման ընթացակարգերի կրճատմանը, գույքագրման արդյունքներին էքսպրես գնահատմանը, մանրածախ հաշվառման մեթոդով որոշված տեղեկատվության հավաստիության ստուգմանը և այլն:

**Вардан Саркисян
Алвард Саркисян
Лиана Григорян
Левон Саакян**

Альтернативная модель учета товарных запасов в крупных торговых сетях

Аннотация

Наряду с внедрением финансового учёта всё больше возрастает роль бухгалтерской информации, которая своими особенностями проявляется в коммерческих организациях Республики Армения. В настоящее время основные положения бухгалтерского учёта определяются международными стандартами финансовой отчётности. Но внедрение МСФО связано с некоторыми трудностями, так как бухгалтерский учёт более широкое понятие и включает в себе финансовый учёт. Учитывая особенности бухгалтерского учёта товарных запасов мы предлагаем такие методические подходы, которые являются альтернативными к существующим механизмам учёта и источникам информации. Используя некоторые инструменты розничного метода учёта формируются новые подходы, с помощью которых решаются ряд задач финансового и управленческого учёта, включая ряд задач внутреннего контроля. С помощью предлагаемого метода можно усовершенствовать методы инвентаризации и контроля на коммерческих организациях Республики Армения. Новый подход является сочетанием розничного метода учёта и синтетического учёта.

**Vardan Sargsyan
Alvard Sargsyan
Liana Grigoryan
Levon Sahakyan**

Alternative model of inventory accounting in large trade networks

Abstract

Along with the introduction of financial accounting in the Republic of Armenia accounting related information obtains new qualitative characteristics, which comes forth with its peculiarities in trade networks. Currently, the main approaches of accounting are defined by the International Financial Reporting Standards (IFRS). However, the adoption of IFRS does not mean that all main issues related accounting may be addressed, for the scope of accounting is wider than that of financial accounting. Subject to the peculiarities of inventory accounting in trade networks of the Republic of Armenia, as an addition to the existing accounting toolkit we propose methodological solutions, which will serve as an alternative to the existing accounting mechanisms and information sources. As a result of the proposed methodological solution, a powerful toolkit is designed by using some tools of retail method of accounting, through which a number of financial and managerial accounting issues are solved, including several internal supervision related issues as well. With the help of the proposed method for inventory accounting, it is possible to optimize the inventory and supervision functions in trade networks of the Republic of Armenia. This approach by its nature may be considered as a specific combination of retail method of accounting and synthetic accounting.

«ԻՊՐԱՄ» ՀԱՍԱԿԱՐԳԻ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԱՃԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ-ՈՒՅԳՐԵՍԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

21-րդ դարը տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջան է: Ներկայումս ձեռնարկատիրական գործունեության կազմակերպումը հնարավոր չէ պատկերացնել առանց էլեկտրոնային եղանակով իրականացվող գործարքների: Էլեկտրոնային առևտուրը բաղկացած է 4 հիմնական փուլերից՝ մարքեթինգ, արտադրություն, վաճառք, վճարումներ: Ներկայումս մեծ գործածում ունի էլեկտրոնային առևտրի վճարման կարևոր տարրերից մեկը՝ էլեկտրոնային փողը:

Էլեկտրոնային փողը դրամական միավոր է¹, որը՝ թողարկվում է ստացված դրամական միջոցների դիմաց և պահպանվում է էլեկտրոնային կրիչների վրա, համարժեք է իրական դրամական միավորներին: Էլեկտրոնային փողի առավելություններից են՝ գործարքներն իրականացվում են ակնթաթորեն, կարելի է գնումներ կատարել աշխարհի ցանկացած վայրից, օրվա բոլոր ժամերին, գործում են լիցքավորման և կանխիկացման լայն հնարավորություններ, գումարների անվտանգությունը երաշխավորվում է բազմաստիճան համակարգերով, պահպանվում է վճարային պատմությունը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում որպես էլեկտրոնային փող թողարկող հանդիսանում է «Իդրամ» ՍՊԸ-ն՝ «Իդրամ» վճարահաշվարկային համակարգի օպերատորը, որը հիմնադրվել է 2008 թվականի մայիսի 8-ին²: Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվել է 2009 թվականի դեկտեմբերի 29-ին («Դրամական փոխանցումների լիցենզիա N 13»)³: «Իդրամ» ՍՊԸ-ն առաջինը Հայաստանում ստացել է էլեկտրոնային փող թողարկելու թույլտվությունը կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2012 թվականի մարտի 6-ին: Ընկերության գործունեության նպատակն է ինտերնետ միջավայրում զարգացնել դրամական փոխանցումների և այլ վճարումների իրականացման հնարավորությունները:

Կոռեյացիոն-ռեգրեսիոն վերլուծությունը կարելի է կիրառել որպես վճարահաշվարկային համակարգի գործունեության լավարկման միջոց՝ օգտագործելով ինտերնետից և համակարգից օգտվողների հիմնական ցուցանիշները:

«Իդրամ» համակարգի օգտվողների թվաքանակի աճի համար կատարենք կոռեյացիոն-ռեգրեսիոն բազմագործոն վերլուծություն՝ օգտվելով 2004-2012թթ. ցուցանիշներից: Որպես ուսումնասիրվող գործոններ ընտրենք ընկերության գրանցված օգտատերերի և ՀՀ-ում ինտերնետի բաժանորդների քանակը (2004-2012թթ.) և ներկայացնենք դրանք աղյուսակային տեսքով (աղյուսակ 1):

Որոշենք ընտրված գործոններից՝ ինտերնետի բաժանորդների քանակի ազդեցությունը գրանցված օգտատերերի թվաքանակի վրա: Կատարենք հետևյալ նշանակումները՝

Y-ը՝ գրանցված օգտատերերի թվաքանակը,

X-ը՝ ինտերնետի բաժանորդների քանակը:

Երկու հատկանիշների միջև կապի սերտությունը քանակապես արտահայտվում է կոռեյացիայի գործակցի միջոցով: Ներկայացնելով հատկանիշների միջև կապի սերտության քանակական բնութագիրը՝ կոռեյացիայի գործակիցը հնարավորություն է տալիս որոշելու գործոնային հատկանիշների օգտակարությունը բազմակի ռեգրեսիայի հավասարում կազմելու դեպքում⁴:

¹ <http://www.ecb.int/stats/money/aggregates/emon/html/index.en.html>

² http://idram.am/index.php?lang=arm&level_id=271

³ <http://www.idram.am/cb/licenzia.1320>

⁴ Елисеєва И.И., Юзбашев М.М. Общая теория статистики: Учебник – 4-е изд., перераб. и доп.- М.: Финансы и статистика, 2002.-480 с.

ՀՀ-ում ինտերնետ ծառայությունները բնութագրող ցուցանիշներ (2004-2012թթ.)¹

Տարիներ	Ինտերնետի բաժանորդների քանակը (x)	Գրանցված օգտատերեր (y)
2004	18100	1211
2005	22900	4212
2006	20600	7794
2007	19400	13617
2008	80400	19484
2009	120200	25652
2010	218400	32431
2011	383600	48241
2012	1835000	56650
Ընդամենը	2718600	209292

Կոռելյացիայի գործակցի մեծությունը թույլ է տալիս նաև գնահատել ռեգրեսիոն հավասարման համապատասխանությունը բացահայտված պատճառահետևանքային կապերին: Կոռելյացիան և ռեգրեսիան սերտորեն կապված են միմյանց հետ. առաջինը գնահատում է վիճակագրական կապի սերտությունը, երկրորդը հետազոտում է դրա ձևը: Ե՛վ մեկը, և՛ մյուսը ծառայում են երևույթների միջև հարաբերակցությունները բացահայտելու, կապի առկայությունը կամ բացակայությունը որոշելու համար: Կոռելյացիայի գործակիցը տվյալ խնդրում ստացվում է 0.8, ինչը վկայում է կապի ուժեղ սերտության մասին²:

Հետևաբար ռեգրեսիայի հավասարումը կունենա հետևյալ տեսքը³. $Y = a_0 + a_1 X$, որտեղ a_0 -ն և a_1 -ը որոշմանը ենթակա գործակիցներն են:

Ավանդական եղանակով ռեգրեսիոն գործակիցը որոշելու համար կիրառում են տարբեր մեթոդներ՝ մասնավորապես փոքրագույն քառակուսիների մեթոդը, որը ենթադրում է միջին քառակուսային շեղումների մինիմիզացման գաղափարը, սակայն խուսափելով ժամանակատար ավանդական եղանակից, օգտվելով Excel ծրագրի հնարավորություններից⁴, կարող ենք հեշտությամբ հաշվել ռեգրեսիոն գործակիցները (աղյուսակ 2):

Ռեգրեսիոն վիճակագրության որոշումը Excel ծրագրի օգնությամբ

Ռեգրեսիոն վիճակագրության տարրերը	Արժեքներ
Բազմակի R	0.782275284
R քառակուսի	0.61195462
Ճշգրտված R քառակուսի	0.556519566
Ստանդարտ սխալ	12947.84203
Դիտարկումներ	9
Ռեգրեսիա	1
Մնացորդ	7
Ընդհանուր	8
F	5.236
Նշանակալի F	0.012720979
Ազատ անդամ	15437.62147
X փոփոխական 1	0.025878543

¹ <http://www.armstat.am/am/?nid=45>

² <http://economyreview.ru/analiz-informacii/koefficient-korreljacji-koefficient-pirsona>

³ Девятко И. Ф. Д25 Методы социологического исследования.— Екатеринбург: Изд-во Урал, ун-та, 1998.— 208 , с 171.

⁴ <http://chapters.comsoc.org/tomsk/system/regression.htm>

Կատարված հաշվարկներից հետևում է, որ $a_0 \approx 15437.6$, $a_1 \approx 0.026$, ռեգրեսիոն հավասարումը կունենա հետևյալ տեսքը՝

$$Y = 15437.6 + 0.026X_1:$$

Ռեգրեսիոն գործակիցները կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝

- ազատ անդամը՝ $a_0 = 15437.6$, կարելի է հասկանալ հետևյալ կերպ, այն դեպքում, եթե գրանցված օգտատերերի թվաքանակը 0 է, ապա ինտերնետի բաժանորդների քանակը կկազմի 15437, սակայն գործնականորեն անհնարին է, այդ իսկ պատճառով a_0 գործակիցը համարում են որպես օժանդակ մեծություն, որն օգտագործվում է օպտիմալ կանխատեսումների համար:
- a_1 -ը անհրաժեշտ է դիտարկել որպես գործոնի ազդեցությունը գրանցված օգտատերերի թվաքանակի մեծության վրա, այն դեպքում, երբ մյուս անկախ փոփոխականը մնում է անփոփոխ¹: Այսպես. $a_1 = 0.026$, որը ցույց է տալիս, որ ինտերնետի բաժանորդների քանակի 1000-ով աճը կհագեցնի գրանցված օգտատերերի թվաքանակի աճը 26-ով:

Այժմ իրականացնենք ստուգում ըստ F-չափանիշի²: F-թեստի իրականացման համար օգտվենք Excel ծրագրի արդյունքում ստացված տվյալներից (աղյուսակ 2): Մեր օրինակի համար ստացել ենք $F_{\text{հաշ}} = 5.236$: Հաշվարկների համար կիրառենք Excel-ի միջոցով ստացված F-ցուցանիշի հակադարձ մեծությունը՝ $1/5.236 \approx 0.191$, $f_1 = k$, այսինքն մեր դեպքում՝ 1, իսկ $f_2 = n - k - 1 = 9 - 1 - 1 = 7$: Ըստ աղյուսակի³, գտանք որ $F_{\text{կրիտ}} = 5.59$, այսինքն, $F_{\text{հաշ}} < F_{\text{կրիտ}}$, ինչը վկայում է էականության բարձր մակարդակի մասին:

Իրականացնենք նաև ստուգում էականության կամ նշանակալիության α մեծության կիրառմամբ: Աղյուսակ 2-ի տվյալների գնահատման արդյունքում ստացել ենք, որ $F_{\text{նշանակալ}} = 0.013$, ինչը նույնպես վկայում է բարձր նշանակալիության մասին:

Ստացված տվյալներից (աղյուսակ 2) երևում է, որ դետերմինացիայի գործակիցը՝ $R^2_{\text{հաշվ}} \approx 0.612 > R^2_{\text{կրիտ}} \approx 0.582^4$, այն դեպքում, երբ $n = 9$, $k = 1$, 90% ճշտությամբ կարելի է ասել, որ ռեգրեսիոն հավասարումն էական է:

Հոդվածում կատարված հաշվարկների արդյունքում, պարզ դարձավ, որ ՀՀ 2004-2012թթ. ինտերնետ բաժանորդների քանակության աճը մեծ ազդեցություն է ունեցել «Իդրամ» համակարգի գրանցված օգտատերերի քանակության աճի վրա: Ընդ որում, 1% ինտերնետ բաժանորդների քանակության աճը հանգեցնում է, արդյունք է դառնում «Իդրամ» համակարգի գրանցված օգտատերերի քանակության 0.026-ի աճի:

Ани Акелян

Оценка роста числа пользователей системы «Идрам» на основе корреляционно-регрессионного анализа

Аннотация

В результате проведенных расчетов и на основании корреляционного коэффициента выявлено, что увеличение числа абонентов интернет связи в течение 2004-2012 гг. оказало большое влияние на рост числа зарегистрированных пользователей системы «Идрам». При этом увеличение абонентов интернет связи на каждый 1000 приводит к повышению числа зарегистрированных пользователей системы «Идрам» на 26.

¹ Девятко И. Ф. Д25 Методы социологического исследования. – Екатеринбург: Изд-во Урал, ун-та, 1998. — 208, с. 173.

² Орлов А.И. Математика случая: Вероятность и статистика – основные факты: Учебное пособие. – М.: МЗ-Пресс, 2004. – 110, с. 79.

³ <http://www.vsetabl.ru/183.htm>

⁴ Սույն տեղում:

Estimation of increase in the number of users of "Idram" payment system based on regression and correlation analysis

Abstract

Based on calculations it was identified that there was a strong correlation between the number of internet subscribers and users of "idram" payments system in 2004-2012. By estimating the respective regression equation the author finds that the increase in the number of internet subscribers by 1,000 subscribers will cause an increase in the number of "idram" payment system users by 26 users.

ԱՆԻ ԱՔԵԼՅԱՆ

ՆՊԾՆ, ԿԾՁԷԿ ամբիոնի դասախոս

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁ

Հեռահաղորդակցության և կապի պահանջարկը գնալով մեծանում է տնտեսվարման ներկա իրավիճակում, որը պայմանավորված է նաև վճարահաշվարկային համակարգում տեղի ունեցող բարեփոխումների արդիականությամբ: Դրանք առաջացնում են բազմաթիվ փոփոխություններ նոր հեռահաղորդակցային տեխնոլոգիաների իրացման գործընթացներում՝ առավել հասանելի և դյուրին դարձնելով վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների տեսակները և դրանց գործնական կիրառության տեղայնացման հնարավորությունները: Այդ տեխնոլոգիաների թվին է պատկանում էլեկտրոնային փողը:

Եվրոպական կենտրոնական բանկի (ECB), Եվրոպական հանձնաժողովի (European Commission) և Միջազգային հաշվարկների բանկի (BIS) մի շարք ուսումնասիրությունների և քննարկումների արդյունքում տրվել է էլեկտրոնային փողերի սահմանման հետևյալ մեկնաբանությունը. «Էլեկտրոնային փողերն իրենցից ներկայացնում են թողարկողի պարտավորությամբ սահմանափակված դրամական միջոցներ, որոնք տրվում են հաճախորդի կողմից փոխանցված միջոցների փոխարեն և գրառվում էլեկտրոնային սարքավորման (համակարգչի կամ միկրոչիպի) վրա»¹:

Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի², էլեկտրոնային փողը թողարկողի նկատմամբ դրամական պահանջ արտահայտող դրամական արժեք է, որը՝

- պահվում է էլեկտրոնային սարքի վրա,
- թողարկվում է ստացված դրամական միջոցների դիմաց, որոնց արժողությունը չի կարող ավելի փոքր լինել, քան թողարկված էլեկտրոնային փողի արժեքը,
- ընդունվում է որպես վճարամիջոց թողարկողից տարբերվող այլ անձանց կողմից:

Ըստ էության, էլեկտրոնային փողն իրենից ներկայացնում է էլեկտրոնային եղանակով գրառված դրամական արժեք³: Հաճախորդը գնում է էլեկտրոնային արժեք, որը պակասեցվում է յուրաքանչյուր գործարքի ժամանակ:

Էլեկտրոնային փողը կարելի է սահմանել որպես փողի էլեկտրոնային տարբերակ, քանի որ դրան բնորոշ են փողի գրեթե բոլոր հատկանիշները (աղյուսակ 1): Հիմնական նմանությունն այն է, որ էլեկտրոնային փող օգտագործելիս բանկից կամ որևէ այլ տեղից թույլտվություն ստանալու

¹ Reassessing the 'Threat' of E-Money: New Evidence from the Euro Area Matthew Greenwood-Nimmo Leeds University Business School, Leeds, UK. Joint ECB/DNB Payment Systems Conference, Frankfurt. May 26th, 2009.

² <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2144>.

³ "Payment Systems For The Internet-Consumer Requirements", by Rita Walczuch and Ruud Duppen, University of Maastricht, The Netherlands. p. 3.

անհրաժեշտություն չկա. մարդիկ գնում են մետաղադրամներին և թղթադրամներին համարժեք էլեկտրոնային փող և օգտագործում այն որպես սովորական փող (աղյուսակ 2): Մյուս կարևոր նմանությունը փողի հետ նրա անանունությունն է, այսինքն՝ էլեկտրոնային փող օգտագործելու համար ֆինանսական հաստատությունում հաշվի առկայություն չի պահանջվում: Այդ հատկանիշով էլ այն էականորեն տարբերվում է հասանելիության միջոցներից, ինչպիսիք, օրինակ, դեբետային քարտերն են:

Աղյուսակ 1

Կանխիկ և էլեկտրոնային փողերի դասակարգման տարբերությունները

	Առավելությունները	Թերությունները
Կանխիկ փող	<ul style="list-style-type: none"> • չի պահանջում տեխնիկական սարքավորումներ, • վճարումը բավականին պարզ է, • կեղծիքներն ավելի հեշտ է հայտնաբերել, • համակարգային ռիսկն աննշան է, • ապահովվում է վերջնականությունը, • հարմար է փողը տանը, այլ ոչ բանկում պահելու համար: 	<ul style="list-style-type: none"> • այն կարող է կորել կամ գողացվել, • կանխիկի շրջանառությունը թանկ է, • մանրի հետ կապված խնդիրների առաջացում, • կեղծիքները շատ են, • լայնորեն կիրառվում է անօրինական գործառնություններում, • կանխիկը տոկոսներ չի բերում:
էլեկտրոնային փող	<ul style="list-style-type: none"> • անձի նույնականացում (pin-ի կիրառություն), • շրջանառությունն ավելի էժան է, • մանրի հետ կապված խնդիրներ, • մաքրությունը, • այն կարող է փոխանցվել ցանցի միջոցով (օրինակ՝ ինտերնետի), • տոկոսների ստացման հնարավորություն, • առանց անմիջական շփման վճարումների իրականացման հնարավորություն, • հնարավոր է՝ հեռախոսի և ինտերնետի միջոցով վերալիցքավորման հնարավորություն 	<ul style="list-style-type: none"> • պահանջում է որոշակի տեխնիկական սարքավորումներ, • էլեկտրոնային փողեր օգտագործողները չեն կարող հայտնաբերել խարդախությունները, • խարդախությունը կարող է առաջացնել համակարգային ռիսկ, • անվտանգության միջոցառումները շատ թանկ են, • հարմար չէ փողը տանը, այլ ոչ բանկում պահելու համար:

Համաձայն Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի դիրքորոշման¹, էլեկտրոնային փողերը դիտարկվում են որպես կանխավճարային ֆինանսական գործիք և իրենցից ներկայացնում են կազմակերպությունների դրամական պարտավորություններ, որոնք իրենց շրջանառության ընթացում ապրանքների և/կամ ծառայությունների դիմաց վճարումների իրականացման ժամանակ փոխարինվում են իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց միջև պահանջների:

էլեկտրոնային փողերն ընդունված է դասակարգել 2 խոշոր խմբերի՝ կախված նրանից, թե որտեղ է արտացոլված թողարկողի պարտավորությունը.

1. էլեկտրոնային քսակ (e-purse)², որն իրենից ներկայացնում է քարտի վրա գրառված էլեկտրոնային փող (card-based e-money). որպես կանոն, կիրառվում են միկրոպրոցեսորային քարտեր, որոնցից տեղեկատվությունը փոխանցվում է կենտրոնական համակարգիչ,
2. վիրտուալ փող (e-cash)³, որն իրենից ներկայացնում է ծրագրային ապահովման վրա գրառված էլեկտրոնային փող (computer-based e-money). որպես կանոն, համակարգչի հատուկ ծրագրային ապահովումը հնարավորություն է տալիս ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար վճարվող դրամական միջոցները փոխանցել հեռահաղորդակցման ցանցերի (օրինակ՝ ինտերնետի) միջոցով:

¹ <http://www.cbr.ru/today/?Prtid=rops>, Указание Центрального Банка России от 3 июля 1998г. N276-У “О порядке выдачи разрешений кредитным организациям – резидентам на распространение платежных карт или prepaid-финансовых продуктов других эмитентов” (в ред. от 05.10.98 N 373-У).

² http://ec.europa.eu/internal_market/finservices-retail/docs/onlineservices/e-purse_en.pdf

³ http://en.wikipedia.org/wiki/Electronic_cash

Ի տարբերություն արժեթղթային քարտերի (օրինակ՝ հեռախոսային քարտերի), էլեկտրոնային փողերը որպես վճարամիջոց են ընդունվում ոչ միայն թողարկողի, այլ տարբեր կազմակերպությունների կողմից:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ որպես էլեկտրոնային փող թողարկողներ կարող են հանդես գալ¹.

1. առևտրային բանկերը,
2. վարկային կազմակերպությունները,
3. էլեկտրոնային փողեր թողարկելու հատուկ իրավասություն ունեցող լիցենզավորված կազմակերպությունները,
4. դրամական փոխանցումների իրականացման և էլեկտրոնային փողերի թողարկման միասնական լիցենզիա ունեցողները:

Ընդհանուր առմամբ գոյություն ունեն էլեկտրոնային փողերի կարգավորման 3 մոտեցում²՝

1. լիցենզավորում,
2. թույլտվությունների տրամադրում,
3. ազատ շրջանառություն (չկարգավորվող գործունեություն):

Շատ քիչ երկրներում է էլեկտրոնային փողերի թողարկումը հանդիսանում չլիցենզավորված գործունեություն: Համաձայն ԱՄՆ օրենսդրության³, էլեկտրոնային փողերի թողարկումը դիտարկվում է որպես «դրամական (փողի) փոխանցում», որը նման է ավանդական փողային փոխանցումներին կամ վճարային գործիքների վաճառքին (ճանապարհային չեկերին): Ուստի էլեկտրոնային փողեր թողարկողները դիտարկվում են որպես դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություններ, որոնց համար սահմանվում են դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների համար կիրառվող նույն պահանջները:

Եթե էլեկտրոնային փողեր թողարկող կազմակերպությունը բանկ կամ այլ վարկային կազմակերպություն չէ, ապա նման կազմակերպությունը պետք է ստանա էլեկտրոնային փողերի թողարկման հատուկ լիցենզիա, իսկ տվյալ կազմակերպության նկատմամբ պետք է օրենսդրորեն սահմանվեն մի շարք պահանջներ⁴, մասնավորապես՝

1. թողարկողի հուսալիությանը և ապահովությանը ներկայացվող պահանջներ,
2. էլեկտրոնային փողերի շրջանառության գործընթացի լիարժեք իրավական կարգավիճակի ապահովում,
3. էլեկտրոնային փողերի շրջանառության անվտանգության ապահովում⁵,
4. էլեկտրոնային փողերի կանխիկացման հնարավորություն, որի համար հաճախորդից գանձվող գումարը չպետք է գերազանցի կանխիկացման համար խիստ անհրաժեշտ գումարը: Բացի այդ պայմանները պետք է ամրագրվեն թողարկողի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով, որով կարող է ամրագրվել կանխիկացվող գումարի նվազագույն սահման (10 եվրոն չգերազանցող),
5. ֆինանսական և այլ հաշվետվությունների ներկայացում, օրինակ՝ տարեկան ֆինանսական հաշվետվություններ, տարին երկու անգամ սեփական կապիտալի և էլեկտրոնային փողերի զծով ֆինանսական պարտավորությունների, ինչպես նաև՝ ներդրումային ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն,
6. փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հետ կապված պահանջների բավարարում,
7. սպառողների շահերի պաշտպանության մեխանիզմների ապահովում,
8. բանկային գաղտնիքի օրենսդրությամբ սահմանված պահանջների բավարարում:

¹ <http://denga.biz/tag/elektronnye-dengi/>

² Александр Гусев. WEB-технология в России. Опыт создания банковского WWW-сервера в России. Журнал "Банковские технологии", август 2008 г., 56.

³ <http://www.uniformlaws.org/ActSummary.aspx?title=Money%20Services%20Act> Uniform Money Services Act

⁴ <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:32000L0046:EN:HTML> Directive 2000/46/EC of the European Parliament and of the Council "On the Taking up, Pursuit of and Prudential Supervision of the Business of Electronic Money Institutions".

⁵ CEPSCO, "Common Electronic Purse Specifications: Technical Specification", September 1999, p 196.

Որոշակի սահմանափակումներ են դրվում էլեկտրոնային փող թողարկող կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության ոլորտների վրա¹: Այսպես, էլեկտրոնային փող թողարկող կազմակերպություններին չի թույլատրվում իրականացնել այլ գործունեություն, բացառությամբ՝

- այլ ծառայությունների մատուցում, որոնք կապված են էլեկտրոնային փողերի թողարկման հետ (պրոցեսինգ),
- այլ վճարամիջոցների (վճարային գործիքների), բացառությամբ վարկային գործիքների, թողարկում և կառավարում,
- այլ կազմակերպությունների օգտին տեղեկատվության գրառում/մուտքագրում էլեկտրոնային սարքավորումների վրա:

Էլեկտրոնային փողերի կառավարման միջազգային փորձից պարզ է դառնում, որ էլեկտրոնային փողը դիտարկվում է որպես փողի էլեկտրոնային տարբերակ, քանի որ դրան բնորոշ են կանխիկ փողի գրեթե բոլոր հատկանիշները: Այն տնտեսապես շահավետ է, գործառնական ռիսկերի կառավարման տեսանկյունից, առավել քիչ ռիսկային և հարմարավետ է օգտագործման նպատակով: Էլեկտրոնային փողերի կիրառումը հիմնականում կնվազեցնի շրջանառության մեջ կանխիկ դրամի գործածումը:

Ани Акелян

Иностранный опыт управления электронными деньгами

Аннотация

Из международного опыта управления электронными деньгами видно, что электронные деньги рассматриваются в качестве электронного варианта денег, поскольку им присущи практически все признаки наличных денег. Они экономически выгодны, характеризуются меньшей степенью риска с точки зрения управления предпринимательскими рисками и удобны для пользования. В дальнейшем использование электронных денег приведет к снижению оборота наличных драмов.

Ani Akelyan

Best practices of regulating the electronic money worldwide

Abstract

Taking into account the best practices of regulating the electronic money, it becomes obvious, that the electronic money is considered a digital equivalent of cash, since it almost has the same features cash has. It provides more benefits and is economical, less risky from viewpoint of business risk management, and convenient to use. The further use of electronic money will cause reduction of cash (Armenian drams) in circulation.

¹ «Предоплаченные инструменты розничных платежей-от дорожного чека до электронных денег». Антон Владимирович Пухов. Библиотека Центра исследований платежных систем и расчетов. 2008, 298 с 198.

ԱՐԱՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

*ՄԱՐԻՏ Մարքեթինգի ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

ԿԱՐԱՊԵՏ ԱՈՒՔԵԼՅԱՆ

*ՄԱՐԻՏ Մարքեթինգի ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու*

**ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒԿԱՅԻ ԱՈՒՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Կրթությունը և դրա հետ անխզելիորեն կապված գիտությունը տնտեսական աճի, տնտեսության մրցունակության ու արդյունավետության բարձրացման ամենակարևոր շարժիչ ուժն է և երկրի ու յուրաքանչյուր քաղաքացու բարեկեցության կարևորագույն գործոնը:

Հայաստանի համար կրթական ենթահամակարգը ՀՀ տնտեսության միջազգային մրցունակության ամենակարևոր գործոններից մեկն է: Իսկ ըստ Մ.Պորտերի՝ որպես երկրի մրցունակության ապահովման գործոն այն իր նշանակալիությամբ գերազանցում է նույնիսկ հայկական սփյուռքի գործոնին¹:

Սակայն ՀՀ անկախացումից հետո տեղի ունեցող գործընթացներից ամնասն չմնաց նաև կրթական համակարգը և որպեսզի այն համապատասխանեցվեր միջազգային չափանիշներին ու միաժամանակ մրցունակ մնար ներքին և արտաքին շուկայում, անհրաժեշտ էր մեծ ուշադրություն դարձնել բարեփոխումների իրականացմանը հենց նույն համակարգում: Դրան հասնելու համար պահանջվում է ինչպես գիտական, այնպես էլ մանկավարժական և տնտեսական հիմնարար աշխատանք՝ կրթական որակները բարելավելու, ազգային կրթական համակարգը բարեփոխելու գործընթացները պատշաճ կազմակերպելու համար:

Մի կողմից կրթական ծառայությունների մատուցման տնտեսական արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, մյուս կողմից Եվրոպական բարձրագույն ընդհանուր տարածքին մեր հանրապետության ինտեգրման գործընթացի մեկնարկը պահանջում են նոր մոտեցումներ ցուցաբերել կրթության կազմակերպման գործընթացին, որակի կառավարմանը, ակադեմիական ծրագրերի իրականացման ռիսկերի գնահատմանը, աշխատանքի շուկայի փոփոխվող պահանջներին արագ արձագանքմանը, մրցունակ համալսարանական դիրքերի ամրապնդմանը: Կարևորվում է նաև կրթական ծառայությունների մատուցման գնային ճկուն քաղաքականության մշակումը և ՀՀ-ում գործող պետական և մասնավոր համալսարանների կառավարման արդյունավետության աստիճանի բարձրացումը:

Որպեսզի ՀՀ կրթական համակարգը համապատասխանեցվի միջազգային չափանիշներին և միաժամանակ մրցունակ դառնա ներքին և արտաքին շուկայում, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել մարքեթինգային բարեփոխումների իրականացմանը հենց նույն համակարգում: Այս տեսանկյունից կարևոր դերակատարում կարող է ունենալ կրթության ոլորտի մարքեթինգը, որը, սովորաբար, կապված է ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության հետ, ինչը ենթադրում է, որ մարքեթինգը նպաստում է ոչ թե կազմակերպության շահույթի ստացմանը, այլ սոցիալական որոշակի արդյունքների հասնելուն: Հետևաբար, կազմակերպությունը կարող է նախաձեռնել առևտրային ծրագրեր՝ գլխավոր նպատակին հասնելու համար անհրաժեշտ ջանքերի ֆինանսավորման նպատակով:

Այդպիսի կազմակերպությունները դանդաղ են ընդունում մարքեթինգի հայեցակարգն ու դանդաղ են մոտենում նրա սկզբունքների ու գործիքների օգտագործման անհրաժեշտությանը: Սակայն «Ոչ առևտրային կազմակերպությունների մարքեթինգ» գրքի հեղինակներ Մ.Կինելլի և

¹ Professor Michael E. Porter "Armenian Competitiveness:Towards a Strategy for Economic Development" Institute for Strategy and Competitiveness Harvard Business School, Armenia 2020 Summit,Cambridge, Massachusetts, 8 March 2005.P. 43.

Պ.Մակդուգալի խոսքերով, հիմնականում գոյություն ունեցող ավանդույթների և պետական հաստատուն ֆինանսավորման վրա հիմնված բուհերն ու կազմակերպությունները ժամանակակից պայմաններում ստիպված են նմանվել այն կազմակերպություններին, որոնք կարող են նաև սնանկանալ, եթե հաշվի չառնեն շրջակա միջավայրում տեղի ունեցող փոփոխությունները¹:

Շատ բուհեր արդեն հասկացել են մարքեթինգային գործունեության անհրաժեշտությունը, այդ պատճառով մի շարք անգլիական համալսարաններ նույն Մ.Կինեյլի և Դ.Մակդուգալի վկայությամբ, արդեն ունեն մարքեթինգի բաժիններ, որոնք հագեցած են պրոֆեսիոնալ աշխատակիցներով և հատուկ ուշադրություն են դարձնում որակյալ կրթական ծառայությունների մատուցմանը²:

Մեր երկրում բարձրագույն կրթության որակի գնահատումը իրականացվում է միայն հավատարմագրման միջոցով, որը, փաստորեն, մինչև այժմ գործող օրենսդրությամբ բուհի ստեղծումից՝ լիցենզավորումից հետո միայն մեկ անգամ է կատարվում և դրանով ամեն ինչ վերջանում է: Այս համակարգի արդյունքում ունենք հավատարմագրված բուհեր (ուսումնական հաստատություններ), մասնակի հավատարմագրված բուհեր, այսինքն՝ առանձին մասնագիտություններ և չհավատարմագրված բուհեր, որոնք բավարարվում են լիցենզավորումով և ամենատարբեր պատճառներով քայլ չեն կատարում դեպի հավատարմագրումը:

Այստեղ հայեցողական դիրքորոշում է որդեգրել նաև ՀՀ ԿԳ նախարարությունը, ակնկալելով համակարգային փոփոխություններ և խնդրի ավելի ամբողջական և արմատական լուծում: Արդյունքում՝ այսօր ունենք տարբեր տարիների հավատարմագրված բուհեր, հավատարմագրված առանձին մասնագիտություններ և ավելի մեծ թվով լիցենզիաներ՝ ի հաշիվ նաև ՀՀ պետական բուհերի, որոնք ունեն գործունեության լիցենզիա, բայց հավատարմագրված չեն: Ու, ըստ էության, ներկայիս գործող համակարգը որևէ կերպ չի կարող իրականացնել որակի ամբողջական գնահատում, վերահսկողություն, քանզի դրա համար չկան նախ և առաջ անհրաժեշտ օրենսդրական և ենթաօրենսդրական հիմքեր, նաև մեխանիզմներ ու գործիքներ: Իսկ դա կարող է տարբեր կերպ դրսևորվել՝ մասնավորապես որակի կառավարման և վերահսկման ներքին համակարգերի տեսքով, ինչպես նաև մարքեթինգային օղակների ստեղծման ճանապարհով:

Այս առումով ՀՀ բուհերում միայն առաջին քայլերն են կատարվում և քննարկվել կարող են միայն շատ սկզբնական արդյունքներ: Այստեղ կարևոր դերակատարում ունի կրթության մարքեթինգը, որը առաջին հերթին, պայմանավորված է տնտեսական զարգացման մեջ կրթության հատուկ կարևորությամբ: Սահմանվում է տնտեսական աճի վերին սահմանը, որի տեմպերը, ինչպես վկայում է նոր ինդուստրիալ երկրների փորձը, կարող են շատ բարձր լինել: Ժամանակակից տեխնոլոգիաները մատչելի են բոլորին, սակայն տարածումը կապված է հասարակության կրթվածության մակարդակից և կրթական համակարգից: Բոլորին հայտնի այդ միտքը, ցավոք, կառավարության կողմից միայն ձևական է աջակցվում՝ չնայած որ շատ երկրներում այն նույնիսկ ոչ ամբողջական է ընդունվում հասարակության կողմից: Այսպիսով, կրթության մարքեթինգը կապված է կրթության մտքի տարածման հետ:

Բացի այդ, աշխարհի երկրների մեծ մասում կրթական հաստատությունները ֆինանսավորվում են բյուջեի միջոցներով, նվիրատվություններով և այլ միջոցներով, որոնք ստացվում են կրթական ծառայությունների մատուցման համար վերցված վարձից:

Իսկ ֆինանսավորման աղբյուրների տարատեսակները կրթական համակարգի մեջ մտնող կազմակերպությունների մեծամասնության համար պահանջում են մարքեթինգի համալիրի անընդհատ ընդլայնում: Կրթության մարքեթինգի այս շեշտը դիտարկվում է նաև այլ հեղինակների կողմից: Բ. Դեվիսը և Լ.Էլիսոնը «Ռազմավարական մարքեթինգ դպրոցի համար» գրքում կրթության մարքեթինգը սահմանում են որպես մի միջոց, որի օգնությամբ դպրոցներն ակտիվորեն տեղեկացնում և առաջ են տանում իրենց նպատակները, արժեքները և արտադրանքը սովորողներին, ծնողներին, անձնակազմին և հասարակությանը³:

Ըստ էության, բուհը կարելի է դիտարկել որպես «երիտասարդ մասնագետ» ապրանք

¹ Кинел М., Макдугл П. Маркетинг некоммерческих организаций: методология и практика. - М.: Экономика, 2002. стр. 48.

² Նույն տեղում, էջ 59:

³ Девис Б., Элисон Л. Стратегический маркетинг для школ: методология и практика. — М.: Экономика, 1997.

արտադրողներ, իսկ բուհերի հիմնական խնդիրն է ապահովել աշխատանքի շուկայի օպտիմալ հագեցումը անհրաժեշտ որակավորմամբ աշխատակիցներով: Վերջին հաշվով պետք է պատրաստվեն այնպիսի մասնագետներ, որոնք համապատասխանում են գործատուների և գիտատեխնիկական պրոցեսի պահանջներին¹:

Հենց այստեղ, ցավոք սրտի, հանդիպում ենք էական դժվարությունների, որտեղ էլ հենց ակնհայտ է դառնում մարքեթինգի անհրաժեշտությունը:

Սա նշանակում է, որ կրթության բնագավառում մարքեթինգի հիմնական խնդիրն է որոշել, թե որ բնագավառում որ մասնագետի կարիքն է զգացվում, որքան մասնագետներ են պետք, և արժե արդյոք զբաղվել այդ մասնագետների պատրաստմամբ:

Սակայն պետք չէ միանշանակ ընդունել բուհի՝ որպես երիտասարդ մասնագետ ապրանք արտադրողի մասին կարծիքը, քանի որ նույնիսկ պրոֆեսիոնալ կարևոր հմտությունների, գիտելիքների և կարողությունների ձևավորման ժամանակ, որոնք գործատուների կողմից օգտագործվում են աշխատանքի շուկայում մասնակցում է ոչ միայն բուհը: Աշխատանքի շուկայում բուհը հանդիսանում է ոչ թե շրջանավարտներ արտադրող, այլ թողարկում է կադրեր, որոնք կրթական ծրագրով նախատեսված գիտելիքների պաշարը ստացել են յուրովի՝ այնպես, ինչպես իրենք են ընդունել: Իսկ ընդհանուր առմամբ, մեր կարծիքով բուհի խնդիրն է իր ուսանողներին ծանոթացնել բնագավառի վիճակին, համաաշխարհային պրակտիկայում ընդունված և կիրառված կամ կիրառվող միջոցառումներին, առկա հիմնախնդիրներին և զարգացման ուղղություններին: Մնացածը իրականանում է ինքնաբերաբար: Կախված վերոհիշյալի մատուցման որակից՝ շրջանավարտներին մնում է միայն շուկայում գտնել իրենց տեղը:

Մեկ այլ հայեցակետ այդ հարցի շուրջ. որպես առքուվաճառքի մասնակից հանդես են գալիս երեք կողմ՝ բուհը, ապագա մասնագետը և գործատուն: Սակայն գոյություն ունի նաև չորրորդ հիմնական տարրը՝ պետությունը, որն իր զարգացման հեռանկարը սահմանում է ելնելով այն դրույթից, որ երկրի ապագայի մասին դատում են կրթության հանդեպ վերաբերմունքից:²

Ամեն դեպքում, մարքեթինգը ցանկացած բնագավառում կապված է փոխհարաբերությունների կառավարման և արտադրողների, և սպառողների միջև կոմունիկացիոն գործընթացի հետ: Կրթության բնագավառում մարքեթինգը կապված է ուսումնական հաստատությունների և նրանց հաճախորդների փոխհարաբերությունների կառավարման հետ և նրա գործունեության անհրաժեշտ և կարևոր մասն է: Բուհերը, որոնք այդ անհրաժեշտությունը չեն զգացել և ակտիվ չեն միացել մարքեթինգային գործունեությանը, կարող են արդեն մոտակա ժամանակաշրջանում հայտնվել ոչ շահավետ իրավիճակներում և չեն կարողանա մրցակցությունը պահպանել կրթական ծառայությունների շուկայում:

Այստեղ կարևոր է նշել, որ կրթական ծառայությունների շուկան իրենից ներկայացնում է բոլոր պոտենցիալ սպառողների ամբողջությունը, որոնք ձգտում են բավարարել կրթական պահանջմունքները և ընդունակ են մտնել վաճառողի հետ փոխանակման հարաբերությունների մեջ: Այս շուկայում համալսարաններն արդեն վաղուց հանդես են գալիս որպես ինքնուրույն օպերատորներ, իսկ այդ շուկան իրենից ներկայացնում է օլիգոպոլիստական մրցակցության տարրերով մոնոպոլիստական բնույթի շուկա: Գինը իր մեջ բացի արժեքային տարրերից ներառում է նաև այլ տարրեր՝ ռիսկ, վստահելիություն, որակի առկայություն և այլն, իսկ գնի ընկալումը մեծամասամբ կապված է արտադրանքի մասին այն տեղեկատվությունից, որին տիրապետում է գնորդը:

Կրթական ծառայությունների գնագոյացման հարցում կարելի է առաջարկել առանձնացնել երկու մոտեցում: Առավել տարածված է գնի սահմանումը՝ կախված ծախսերի մակարդակից («ծախսային գին» կամ «առաջարկի գին»): Մյուսը գնի սահմանումն է սպառողի տեսանկյունից («սպառման գին» կամ «պահանջարկի գին»):

Հայաստանի կրթական ծառայությունների շուկայում առայժմ գերակշռող է «առաջարկի

¹ Сон Т.А. Формирование рынка образовательных услуг (www.marke-ting.spb.ru).

² Стрижов А.М. Понятие качества образовательной услуги в условиях рыночных отношений//Стандарты и мониторинг в образовании. — 1999. — № 3. — С. 47—50.

գինը», սակայն շուկայի հավասարակշռության համար գինը պետք է հաշվի առնի նաև շուկայի մյուս սուբյեկտների և հատկապես սպառողի շահերը: Ներկայումս այս գործոնը գործնականում անտեսված է, քանի որ բացակայում են գնի վրա դրա ազդեցության որոշման հիմնավորված մոտեցումներ: Դրանից ելնելով՝ կրթական ծառայությունների գնագոյացման հարցին կարելի է մոտենալ հետևյալ կերպ. կրթական ծառայությունների ստացման հետ կապված ծախսերը դիտարկել որպես ներդրումներ՝ ապագայում եկամուտների ստացման նպատակով: Նման մոտեցումը թույլ կտա որոշել այն գումարը, որը կրթական ծառայություն սպառողները տնտեսապես նպատակահարմար կհամարեն և պատրաստ են վճարել:

ՀՀ-ում բուհերն առաջարկում են կրթության արտադրանքների և ծառայությունների լայն տեսականի (օրինակ՝ համալսարանները) և օգտագործում են տարբերակված գներ: Այսպես, մեկ ծառայության գինն ավելի ցածր է սահմանվում, քան աճող պահանջարկ ունեցող ծառայություններինը, օրինակ՝ իրավաբանության, միջազգային տնտեսության, մարքեթինգի և ձեռնարկատիրություն:

Գնագոյացումն այս դեպքում պետք է հաշվի առնի ոչ թե արտադրության ավանդական արժեքային բնութագրիչները և կրթական ծառայությունների մատուցումը (ինքնարժեք և շահույթ, հավելավճար), այլ նպատակային լսարանի ներկայացուցիչների գնահատման աստիճանն ապրանքանիշի նկատմամբ: Սպառողների էնոցիոնալ, հոգեբանական վարքագծի վրա բրենդի ազդեցության գիտակցումը հիմնովին փոխում է կրթական ծառայությունների գնագոյացման մասին ավանդական պատկերացումները:¹

Կոնկրետ բուհի ապրանքանիշին, որոնք ունեն վստահելի և բարձր վարկանիշ, որն ընդունակ է ներկայացնել որակյալ պրոֆեսիոնալ կրթություն երկար հեռանկարի համար, սպառողի համար դառնում է որոշիչ, երբ նա որոշում է բաժանվել իր փողերի հետ: Կարելի է պնդել այն տեսակետը, որի համարժեք բրենդն իրենից ներկայացնում է ավելացված արժեք և աճող աստիճանով կորոշի բուհի կրթական ծառայության վերջնական գինը: Սա վկայում է կրթական շուկայում մրցակցության մեծացման, բուհի մարքեթինգային կոմունիկացիաների դերի մեծացման մասին, նրա ծառայությունների դիրքորոշման, ձևավորման և իր ունիկալ բրենդի հաստատման մասին:

Բուհերում ներկայիս սահմանված կրթավճարները, մեր կարծիքով, հիմնավոր չեն և կարիք ունեն բազմակի բարձրացման: Որակյալ կրթական ծառայության մատուցումը պահանջում է նաև բարձր կրթավճար, այնպիսին, որը չուղղվի միայն բուհերի գոյատևմանը (ինչպես կատարվում է հիմա), այլ ծառայի ուսանողի շահերին և էապես խթանի բարձրագույն կրթության որակի բարձրացմանը:

Դժվարությամբ հայթայթվող կրթավճարների գործող պրակտիկան ուսանողի համար խիստ ռիսկային է, քանի որ ներկայումս հանրապետությունում հնարավոր չէ գնահատել ուսման վարձի հիմնավորվածությունը ըստ մատուցվող կրթության ծառայության որակի:

Հետևաբար, ներկայումս կրթական ոլորտում հրատապ է համարվում աշխատուժի շուկայի պահանջներին համապատասխան բարձրագույն կրթությամբ մասնագետների որակի իրատեսական գնահատումը և կրթական ծառայությունների մատուցման արժեքի հիմնավորման մեթոդաբանության մշակումը:

Բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման իրատեսական արժևորումը մի կողմից հնարավորություն կտա հիմնավոր սահմանել ուսման վարձերը, մյուս կողմից՝ շրջանավարտներին կկողմնորոշի «կրթավճար - կրթության որակ - աշխատատեղ» շղթայում ճիշտ դիրքորոշվելու և կրթության ոլորտ (բուհ) ընտրելու հարցում:

Ստացվում է այնպես, որ կրթության որակի բարձրացման նպատակով գործող կրթավճարների բազմապատիկ բարձրացումները առօրյա ֆինանսական ծանր իրավիճակում ընդհանրապես բարձրագույն մասնագիտական կրթությունը կդարձնեն անհասանելի ազգաբնակչության համար, և կարծես պետք է անվերապահորեն մերժեն նման գաղափարը: Ամենապարզ հաշվարկներն էլ հավաստում են, որ նույնիսկ նման բարձր կրթավճար հայթայթելու պարագայում էլ ուսանողը չի

¹ Садовников В.А., Тихонов А.Н. Развитие университетов в условиях рыночной экономики. –М.: Изд.-во МГУ. 1994.- с 89.

ծգտի ստանալ բարձրագույն կրթություն, որովհետև առանց այն էլ գերհագեցած ներկայիս որակավորված աշխատուժի շուկան պահանջարկ չունենալուց բացի, բուհի շրջանավարտին լավագույն դեպքում կարող է առաջարկել կրթավճարների հետագա փոխհատուցման ոչ համարժեք վարձատրություն: Ուրեմն, միայն բարձրագույն կրթության ծախսերի փոխհատուցման համար ներկայիս բուհի շրջանավարտը առնվազն պետք է անընդմեջ աշխատի 10 տարի, որը կասկածի տակ կդնի բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու ձգտումը:

Այս առումով, ներկայիս սոցիալական լարվածության մեջ գտնվող և որակավորված աշխատուժն ըստ էության չգնահատող հանրապետությունում իրոք որ որակի բարձրացման նպատակով կրթավճարների աճը անհիմաստ կհամարվի: Սակայն քննարկվող հարցը եթե քննարկի եվրախորհրդին և Բոլոնյան գործընթացին անդամակցող հանրապետության շահերից, ապա պարզ կդառնա, որ կրթության որակը չի համապատասխանում եվրոպական չափանիշներին: Բացի այդ, ընդունելի չէ նաև այն իրավիճակը, երբ բարձրագույն կրթությամբ շրջանավարտը ավանդաբար իր մասնագիտական հմտությունները առավելապես ձեռք է բերում պրակտիկ աշխատանքի ընթացքում, և ոչ թե նախօրոք՝ բուհում:¹

Այս առումով, կրթական ծառայությունների շուկայի ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև մրցակցային ոլորտում գործունեության իրականացումը բուհերից պահանջում է

- կառուցել գործունեությունը՝ ելնելով շուկայական հարաբերությունների պահանջներից, որոնք ակտիվորեն ներթափանցելով բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտ, ստանում են դրսևորման հատուկ ձևեր,
- կրթական մարքեթինգի զարգացում և կիրառում,
- գործունեության իրականացում՝ ելնելով կրթական ծառայությունների առանձնահատկություններից, մասնավորապես նրանից, որ դրանք և մատուցվող ծառայության մի տեսակ են, և մտավոր ծառայություն, բուհը դա իրականացնում է նաև իր պահանջների բավարարման համար և անհրաժեշտ է ճկուն գնային քաղաքականության մշակում և իրականացում, ինչը պահանջում է նոր մոտեցումներ կրթական ոլորտում գնագոյացման մեթոդաբանությանը:

Այսօր բարձրագույն մասնագիտական կրթության զարգացումը Հայաստանում մրցակցային տնտեսության ձևավորման կարևորագույն հարցերից է: Այն ավելի ու ավելի է ամրապնդում իր դիրքը որպես տնտեսության այն առաջատար ճյուղերից մեկը (գիտատեխնիկական նորարարությունների հետ միասին), որը կոչված է ապահովել Հայաստանի անցումն առավել զարգացած երկրների խումբ:

Ներկայումս Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Հավասարապես մատչելի որակյալ կրթության ապահովման և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով երկրում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր՝ կրթական բոլոր մակարդակներում: Ուստի այս ոլորտի զարգացումը ներկայումս երկրի զարգացման առաջնային գերակայություններից մեկն է:

Ոլորտի զարգացման քաղաքականությունը ուղղված պետք է լինի նրան, որ բարեփոխումների արդյունքները մշակակալի ազդեցություն ունենան երկրում տնտեսական աճի, աղքատության կրճատման, անհավասարության մեղմման և մարդկային զարգացման գործընթացների վրա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

Այնուամենայնիվ, ժամանակակից տնտեսության մեջ կրթության առաջնահերթ զարգացումը պահանջում է կուտակված բազմաթիվ հիմնախնդիրների լուծում, որոնց շարքում կենտրոնական տեղ են զբաղեցնում կրթության ֆինանսավորման հարցերը: Արդի ժամանակաշրջանի այս մարտահրավերները կանգնած են ոչ միայն Հայաստանի առջև: Ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրները 20-րդ դարի վերջին ստիպված էին հաշվի նստել նմանօրինակ խնդիրների հետ, որոնց լուծման մոտեցումները շատ երկրներում արդեն իսկ որոշարկված են:

Կարևորելով ներկա տնտեսության շուկայականացման պայմաններում բուհական համա-

¹ Ա.Ճուղուրյան, Բոլոնյան գործընթացի նպատակները և ակնկալիքները, Բանբեր, ՀԳՏՀ, #3 2007:

կարգի արդիականացման և բարեփոխումների դերը՝ *Ս.Օ. Քելենջյանը* (և ուրիշները) նշում են որ գիտելիքի տնտեսության անցումն անհրաժեշտաբար պահանջում է նոր կրթական համակարգերի ստեղծում, որոնք պետք է հիմնվեն ֆիրմաների և կրթական հաստատությունների սերտ համագործակցության վրա: Այստեղ հեղինակներն առաջ են քաշում «*Աուսորսիմգի*» գաղափարը, ըստ որի ֆիրմաներում որոշակի ուսումնական գործառույթներ պետք է հանձնվեն կրթական ծառայություններ մատուցող հաստատություններին¹, ինչպես միջազգային պրակտիկայում արվում են մի շարք խոշոր ֆիրմաների կողմից:

Մեր կարծիքով նշյալ գաղափարն ճայաստանում առավել արդիական է և կիրառվում է հակադարձ կերպով, այսինքն՝ աուսորսիմգի իրականացնողը բուհն է, իսկ մասնավոր հատվածը կրթական որոշակի «բլոկների» ուսուցման ծառայության մատուցողը:

Ժամանակակից հասարակության կողմից բարձրագույն մասնագիտական կրթության ներկայացվող պահանջներն այսօր էապես փոփոխված են: Որակյալ կրթությունը պետք է դառնա կանոն, իսկ երիտասարդ սերնդի մրցունակության կարևորագույն չափանիշ պետք է դիտարկվի կրթություն ստանալու և նոր գիտելիքներ ձեռք բերելու ունակությունը:

Ֆինանսավորման նոր տեխնոլոգիաների կազմավորման հայեցակարգային հիմք պետք է հանդիսանան ներդրումները բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում², կամ այլ կերպ՝ ներդրումները մարդկային կապիտալում: Բարձրագույն մասնագիտական ֆինանսավորման նոր մոտեցումները պետք է հիմնված լինեն աղբյուրների դիվերսիֆիկացման և ֆինանսավորման նոր գործիքների զարգացման վրա:

Ընդհանուր առմամբ, ինտեգրվելով ժամանակակից տնտեսությանը՝ կրթությունը դարձել է այն ոլորտներից մեկը, որոնց գործունեությունը ենթակա է տնտեսական գնահատման «գինորակ» չափանիշներով: Անցումը շուկայական տնտեսության առաջ քաշեց նախ կրթության երաշխավորված որակի, ինչպես նաև ծախսերի օպտիմալացման պահանջներ, ինչն էլ իր հերթին ենթադրում է բարձրագույն մասնագիտական հաստատությունների վիճակի փոփոխություն, նրանց վերափոխումը շուկայի սուբյեկտների, «որոնք վարում են պետության, բիզնեսի ու անհատների պաշարների ներգրավման ինքնուրույն քաղաքականություն»³:

Բարձրագույն կրթական համակարգի մրցունակ լինելու միակ գրավականը կրթության որակն է: Կրթության որակի ճիշտ գնահատումը համարվում է անհրաժեշտ փուլ բարձրագույն կրթության կառավարման գործընթացներում: Գնահատման իրականացումը պետք է հիմնված լինի կրթական հաստատությունների թույլ և ուժեղ կողմերի վրա, ինչպես նաև վարկանիշային ցուցանիշների ներքին վտանգների և հնարավորությունների վրա: Այն պետք է վերհանի բուհերի թերությունները և ճանապարհներ առաջարկի դրանք վերացնելու և հետագա աշխատանքները արդյունավետ ձևով կազմակերպելու համար: Այստեղ անհրաժեշտ է կիրառել այն երկրների փորձը, որոնք արդեն ունեն կայացած բարձրագույն մասնագիտական կրթական համակարգ և ժամանակի փորձությունն անցած որակի գնահատման հաջողված տարբերակներ: Կրթական որակի ամբողջական գնահատումը պետք է ներառի դասախոսական գործընթացի գնահատումը, կադրերի արհեստավարժության և նյութատեխնիկական բազայի մակարդակի գնահատումը: Այս տարատեսակ գնահատականները ստեղծում են կրթական հաստատության որակի ընդհանուր պատկեր, որը հնարավորություն է տալիս այդ հաստատությանը ունենալ օբյեկտիվ ներուժային նկարագիր և մշակել ծրագրեր իրենց հաստատության կրթական որակները բարձրացնելու ասպարեզում:

¹ Календжян С.О., Голубкин В.Н., Клеева Л.П. “Управление знаниями в ходе современных экономических трансформаций” // Межвузовский сборник научных трудов - “Проблемы экономики и трансформации образовательных систем” Ереван, изд. РАУ, 2007г., с. 52.

² А.И. Ковалев, В.В. Войленко, “Маркетинговый анализ”, Москва 2007.

³ Поташник М. М., Моисеев А.М. Управление современной школой (В вопросах и ответах). Пособие для руководителей образовательных учреждений и органов образования, М.: Наука, 1997. - С. 33.

**Арарат Закарян
Карапет Аракелян**

Особенности и проблемы рынка образовательных услуг в Армении

Аннотация

Образование является главной движущей силой экономического роста, повышения конкурентоспособности и эффективности народного хозяйства и важнейшим фактором благосостояния страны и каждого гражданина.

Но образовательные услуги, их цены и качество очень разнообразны и не всегда соответствуют потребностям рынка труда. В связи с этим важное значение приобретают функции маркетинга образовательных услуг, основной проблемой которого является выявление потребностей рынка и подготовка соответствующих специалистов в вузах. Статья посвящена обсуждению и анализу этих проблем.

**Ararat Zakaryan
Karapet Arakelyan**

The peculiarities of the market of providers of educational services in Armenia and challenges to be faced

Abstract

Education is the most important driver of economic and competitiveness growth, and the enhancer of efficiency-driven practices and the factor that affects the welfare of the nation and the wellbeing of each citizen.

However, the educational services, their prices and quality vary significantly and not always meet the requirements of the labor market. The focus is on the importance of functions of marketing educational services the objective of which is to identify the requirements of the labor market and produce high-quality college graduates by higher education institutions. The article discusses and analyzes these issues.

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ
ՏԻՊԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԷՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Տնտեսագիտական գրականության մեջ չկա խնայողությունների էության համընդհանուր սահմանում: «խնայողություն» հասկացությունը միանշանակ չի մեկնաբանվում: Խնայողությունները հաճախ դիտարկվում են որպես բնակչության կուտակած ունեցվածքի կամ հարստության մաս¹: Առավել հաճախ, խնայողությունները մեկնաբանվում են, որպես որոշակի ժամանակահատվածում եկամտի չօգտագործված մասը²: Որոշ դեպքերում խնայողությունները նույնացվում են որպես բնակչության ֆինանսական ներուժ, որն իրենից ներկայացնում է ժամանակավորապես ազատ կամ ռեզերվային (պահեստային) դրամական միջոցներ, որոնք կարող են օգտագործվել ներդրումների նպատակներով³:

Չհերքելով նշված մոտեցումները՝ այնուամենայնիվ պետք է նշենք, որ դրանք ընդգծում են հասկացության առանձին կողմերը: Առաջին դեպքում ընդգծվում է խնայողությունների կուտակային բնույթը՝ սուբյեկտների շահերի տեսակետից, իսկ վերջինում՝ հասարակության համար դրանց ներդրումային նշանակությունը: Սակայն դեռևս չի ձևավորվել խնայողությունների հստակ տրամաբանական սահմանում: Մեր կարծիքով բնակչության խնայողությունները որպես տնտեսական կատեգորիա իրենցից ներկայացնում են տնտեսական հարաբերությունների մի համակարգ, որը ձևավորվում է ընթացիկ սպառումը գերազանցող տնօրինվող եկամտի մի մասի օգտագործման, ինչպես նաև պահպանման և ավելացման համար տնտեսական շրջանառության մեջ ներգրավման ճանապարհով:

Տնային տնտեսությունների եկամուտները, որպես կանոն, սահմանափակում են անարգել աճող պահանջումների բավարարման հնարավոր աստիճանը: Դա նախասահմանում է եկամուտների մի մասի խնայման անհրաժեշտությունը՝ ապագայում ավելի մեծ քանակությամբ ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար: Բնակչության խնայողությունները հանդիսանում են տնային տնտեսությունների՝ պահանջումները բավարարելու համար եկամտային սահմանափակումները հաղթահարելու միջոցներից մեկը: Բնակչության խնայողությունների ծավալը համարվում է մակրոտնտեսական պարամետրերից մեկը, որը բնութագրում է տվյալ երկրում սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը, բնակչության բարեկեցությունը և նրանց կյանքի որակը:

Ժամանակակից մակրոտնտեսական տեսությունը հիմնվում է այն փաստի վրա, որ շուկայական տնտեսության պայմաններում խնայողություններ և ներդրումներ անելու որոշումները, ըստ էության կայացվում են տարբեր մարդկանց կողմից: Խնայողությունների և ներդրումների սուբյեկտների միջև եղած տարբերությունների համապատասխանեցումը հանդիսանում է տնտեսության մակրոտնտեսական օպտիմալացման լուրջ խնդիր:

Անհրաժեշտ է խնայողություններն առանձնացնել ունեցվածքից և ներդրումներից: Առաջին հերթին, ներդրումները երբեք չեն ֆինանսավորվում ունեցվածքի հաշվին, որոնք իրենցից ներկայացնում են ընթացիկ ծախսերի ոլորտից դուրս բերված եկամտի մի մասը՝ առանց ոչ սպառողական պահանջումների մեջ ներգրավելու: Այլ կերպ ասած՝ ունեցվածքի ձևավորումը

¹ Балабанов И.Т. Финансы граждан: (Как россиянам создать и сохранить богатство) - М.: Финансы и статистика, 1995. - 222 с.: ил. - С.44.
² Кашин Ю. Финансовые активы населения (сбережения): подход к оценке уровня жизни. //Вопросы статистики. - 1998. - Хо 1998, -с.44.
³ Плышевский Б. Сбережения и инвестиции в российской экономике периода реформ. //Экономист. - 2003. №2, -с.43.

հանգեցնում է ավելի մեծ ծավալներով կանխիկ պաշարների ստեղծմանը, քան անհրաժեշտ է գործառնությունների իրականացման համար: Դա նշանակում է, որ խնայողությունը, որպես անհատի կողմից չօգտագործված եկամուտ, կարող է իր մեջ ներառել ունեցվածքը, որպես եկամտի մաս, որն ընդհանրապես չի օգտագործվում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն, որ խնայողությունները ոչ միշտ են նույնականացվում ներդրումների հետ: Ներդրումների ֆինանսավորումը կարող է իրականացվել պահուստների, չօգտագործված արտադրական հնարավորությունների կամ վարկավորման հաշվին: Մյուս կողմից բնակչության խնայողությունները ոչ ամբողջությամբ է կարելի դիտարկել որպես ներդրումային ռեսուրս: Որպեսզի կարողանանք ճիշտ գնահատել, թե խնայողությունների որ մասը կարելի է դիտարկել որպես ներդրումային ռեսուրս, մենք փորձել ենք անել խնայողությունների տիպականացում:

1. Ընթացիկ խնայողություններ

Սրանք այն խնայողություններն են, որոնք դեռ չեն ծախսվել, սակայն նախատեսված են ընթացիկ ժամանակահատվածում սպառման վրա ծախսելու համար: Այսինքն՝ տվյալ պարագայում խնայողությունները հանդիսանում են ընթացիկ եկամտի դեռևս ամբողջությամբ չծախսված մնացորդը: Քանի որ տարբեր տնտեսական սուբյեկտների մոտ տարբեր են եկամուտների ստացման պարբերականությունները, հարկ ենք համարում հստակեցնել «ընթացիկ» եզրույթի ընկալումը: Օրինակ՝ վարձու աշխատողները ստանում են ամենամսյա եկամուտներ, իսկ ձեռներեցների եկամուտները կարող են լինել ասենք եռամսյակային: Ուստի ընթացիկ ժամանակահատվածը վարձու աշխատողների համար ամիսն է, իսկ ձեռներեցների համար՝ եռամսյակը: Հարկ է հաշվի առնել նաև եկամուտների սեզոնայնությունը, քանի որ օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում եկամուտները խիստ սեզոնային են՝ ամռան ամիսներին դրանք կարող են ունենալ շաբաթական պարբերականություն, իսկ ձմռան ամիսներին՝ ընդհանրապես չլինել: Ուստի այս բնագավառում ընթացիկ ժամանակահատված է համարվում տարին և ամռան ամիսներին կուտակված ֆինանսական միջոցները կարող են որակվել որպես ընթացիկ խնայողություններ: Կարծում ենք, որ ճիշտ չէ ընթացիկ խնայողությունները դիտարկել որպես ներդրումային կապիտալ: Դրանք ավելի շուտ հանդիսանում են սպառման համահարթեցման մեխանիզմ:

2. Առաջին անհրաժեշտության խնայողություններ

Խնայողություններ, որոնք արվում են ոչ հեռու ապագայում նախատեսված անհրաժեշտ ծախսերը հոգալու համար: Անհրաժեշտ ծախսեր կարող են լինել, օրինակ, ուսման վարձը, կյանքին վտանգ սպառնացող առողջական խնդիրները հոգալու, կամ էլ սպառման մակարդակը պահպանելու համար նախատեսված ծախսերը: Այլ կերպ ասած՝ սրանք խնայողություններ են, որոնք նախատեսված են ապագայում առաջին անհրաժեշտության ծախսերը հոգալու համար: Հարկ է նշել, որ տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում առաջին անհրաժեշտություն համարվող ծախսերը: Օրինակ՝ մեր իրականությունում առաջնային անհրաժեշտության խնդիր է համարվում երեխաներին հետոպրոցական ուսումնառության համար: ՀՀ տարբեր գյուղերում իրականացված դիտարկումները վկայում են այն մասին, որ երեխաների ուսման համար անհրաժեշտ ծախսերը հաճախ արվում են ընթացիկ սպառման խիստ սահմանափակման, ինչպես նաև տարվա ընթացքում անհավասարաչափ կենսամակարդակ և կյանքի որակ ապահովելու հաշվին: Ասվածի վառ օրինակ է հանդիսանում այն հանգամանքը, որ գյուղաբնակ ընտանիքները ձմռանը, խուսափելով ջեռուցման ծախսերից, սահմանափակում են իրենց տան բնակելի մակերեսը: Իսկ կյանքի որակի նվազեցման հաշվին ջեռուցման վրա խնայված գումարները կարող են ուղղվել երեխայի ուսման ծախսերը հոգալուն: Նշված հանգամանքը հակասում է տնային տնտեսությունների կողմից սպառման համահարթեցման գաղափարին, որն առաջ է քաշվում «Կյանքի պարբերաշրջանի» հիպոթեզում, որը զարգացրել են Ա. Անդոն և Ֆ. Մոդիլիանի¹: Այն տեսակետին, որ տնային տնտեսությունները խնայողություններ են անում սպառման մակարդակի համահարթեցման նպատակով: Ուստի, առաջին անհրաժեշտության խնայողու-

¹ M. A. Ando and F. Modigliani, "Tests of the Life Cycle Hypothesis of Saving: Comments and Suggestions", Oxford Institute of Statistics Bulletin, vol. xix (May, 1957), pp. 99-124.

թյունները իրենց բնույթով սկզբունքորեն տարբերվում են սպառման համահարթեցման նպատակով արվող խնայողություններից:

3. Մնացորդային խնայողություններ

Խնայողություններ, որոնք իրենցից ներկայացնում են եկամուտների՝ ընթացիկ ժամանակահատվածի սպառողական ծախսերը գերազանցող մասը և արվում են ինքնաբերաբար՝ հետագայում «ըստ ցանկության» ծախսելու համար: Այս խնայողությունների առանցքային առանձնահատկությունն այն է, որ խնայողություններ անելիս տնային տնտեսության համար միանշանակ չէ ո՛չ դրանց օգտագործման վերջնական նպատակը, ո՛չ էլ ժամկետը, սակայն դրանք նախատեսված են ցանկացած ժամանակ «ըստ ցանկության» ծախսելու համար:

4. Նախազգուշողական խնայողություններ

Խնայողություններ, որոնք արվում են չնախատեսված հանգամանքների պարագայում գումարային որոշակի պաշար ունենալու համար: Որպես կանոն՝ այս շարժառիթով պայմանավորված խնայողական վարքագիծն ուղղորդվում է հոռետեսական սպասումներով, և չնախատեսված հանգամանքներ ասելով՝ նկատի ունենք դժբախտ պատահարները, աշխատանքի կորուստը, առողջական չնախատեսված խնդիրները և այլն: Եվ պատահական չէ, որ նման խնայողությունները տնտեսագիտական գրականությունում հանդիպում են նաև «սև օրվա համար արվող խնայողություններ» ձևակերպմամբ: Ի տարբերություն մնացորդային խնայողությունների, այս խնայողությունները նախատեսված են ծախսելու ոչ թե ըստ ցանկության, այլ ըստ անհրաժեշտության: Իսկ «առաջին անհրաժեշտության» խնայողություններից դրանք տարբերվում են նրանով, որ «առաջին անհրաժեշտության» խնայողությունների օգտագործման նպատակներն ու ժամկետները հստակ են, իսկ նախազգուշողական խնայողությունների դեպքում՝ ոչ: Եվ քանի որ ինչպես մնացորդային խնայողությունները, այնպես էլ նախազգուշողական խնայողությունները օգտագործելու կարիք կարող է զգացվել տարիներ անց, դրանք կարող են օգտագործվել նաև ներդրումային նպատակներով, օրինակ, ներգրավել բանկերում, որպես ժամկետային ավանդ: Քանի որ նշված տեսակի խնայողություններ անելու հիմնական նպատակը դրանց օգտագործումից հավելյալ եկամուտներ ստանալը չէ, կարելի ասել, որ դրանք առանձնապես զգայունություն չեն ֆինանսական շուկայի եկամտաբերության նկատմամբ, սակայն, եթե վերջինս բարձրանա, դա կարող է հանգեցնել տնային տնտեսությունների խնայման սահմանային հակվածության մեծացման:

5. Ծավալային նպատակադրմամբ խնայողություններ

Խնայողություններ, որոնք նպատակաուղղված արվում են ապագայում խոշոր ծախսեր անելու նպատակով: Խոշոր ծախսեր ասելով նկատի ունենք օրինակ՝ անշարժ գույքի ձեռքբերումը, վերանորոգումը, կառուցումը, կամ էլ երկարատև օգտագործման ապրանքների գնումը և այլն: Այս խնայողությունները ծախսվելու են այն ժամանակ, երբ հասնեն նախատեսված ծախսերը հոգալու համար բավարար մակարդակի:

6. Ժամկետային նպատակադրմամբ խնայողություններ

Խնայողություններ, որոնք կապված են առողջության պահպանման պրոֆիլակտիկ գործողությունների, արարողությունների, ժամանցի կամ էլ հանգստի ծախսերի հետ: Նկատենք, որ այս խնայողությունները, արվում են հստակ նպատակի վրա և ժամկետներում ծախսելու համար՝ ի տարբերություն «նախազգուշողական» խնայողությունների, որոնք արվում են որպես ապահովագրություն՝ առողջության հանկարծակի, չնախատեսված վատթարացման պարագայում: Ընդ որում, դրանք նախատեսված ժամկետներում ծախսվելու են անկախ կուտակված ծավալներից՝ ի տարբերություն ծավալային նպատակադրմամբ խնայողությունների: Իսկ նպատակների իրականացման համար չբավականացող ֆինանսական միջոցները կարող են համալրվել փոխառությունների հաշվին: Տվյալ, ինչպես նաև «ծավալային նպատակադրմամբ խնայողությունները» արվում են անկախ այն հանգամանքից, թե որքան է ֆինանսական շուկայի եկամտաբերությունը:

7. Ներդրումային խնայողություններ

Խնայողություններ, որոնք կուտակվում և օգտագործվում են ներդրումային գործունեություն իրականացնելու նպատակներով: Ներդրումային գործունեություն ասելով՝ նկատի ունենք խնայողությունների օգտագործման այնպիսի տարբերակները, որոնք միտված են հավելյալ եկամտի ստեղծմանը, կամ էլ ապագայում ավելի մեծ արժեք ունեցող ակտիվի ձեռքբերմանը: Նշենք, որ ամենևին պարտադիր չէ, որ այդ ներդրումը լինի արդարացված, այսինքն՝ ձեռք բերված ակտիվի գինն իրոք բարձրանա, կամ էլ հավելյալ եկամուտը լինի երաշխավորված: Տվյալ պարագայում էականը ոչ թե խնայողությունների օգտագործումից ստացած փաստացի օգուտն է, այլ այն ստանալու ակնկալիքները:

Այս տիպականացումն անելու հիմքում ընկած են երկու հիմնական կանխավարկած, որոնք հակասում են տնտեսագիտության տեսության մեջ ընդունված ենթադրությունների:

1. Խնայողությունները ոչ միշտ են արվում ընթացիկ սպառման լիարժեք բավարարումից հետո: Հաճախ դրանք կարող են արվել ընթացիկ սպառման խիստ սահմանափակման և որոշ պահանջմունքների չբավարարված մնալու հաշվին:
2. Արվող խնայողությունները ոչ միշտ են զգայուն ֆինանսական համակարգի եկամտաբերության հանդեպ: Հաճախ խնայողություններ կարող են արվել անգամ զրոյական եկամտաբերության պայմաններում:

Ըստ մեր առաջարկած տիպականացման խնայողությունների տարբեր տեսակների բնութագիրները, ինչպես նաև՝ ֆինանսական համակարգի եկամտաբերության հանդեպ հավանական զգայունության և ընթացիկ սպառման հետ փոխառնչության նկարագրությունը ներկայացնում ենք ստորև՝ աղյուսակի տեսքով:

Խնայողությունների տիպականացման աղյուսակ

Խնայողության տեսակը	Ծախսման կոնկրետ նպատակի հստակությունը	Ծախսման կոնկրետ ժամկետի հստակությունը	Ֆինանսական համակարգի եկամտաբերության հանդեպ հավանական զգայունությունը	Ընթացիկ սպառման հետ փոխառնչության նկարագրությունը
Ընթացիկ խնայողություններ	Կանխորոշված	Կանխորոշված	Ոչ զգայուն	Արվում են ընթացիկ սպառման լիարժեք բավարարումից հետո
Առաջին անհրաժեշտության խնայողություններ	Կանխորոշված	Կանխորոշված	Ոչ զգայուն	Կարող են արվել ընթացիկ սպառման սահմանափակման հաշվին
Մնացորդային խնայողություններ	Չկանխորոշված	Չկանխորոշված	Սահմանափակ զգայուն	Արվում են ընթացիկ սպառման լիարժեք բավարարումից հետո
Նախագգուշողական խնայողություններ	Չկանխորոշված	Չկանխորոշված	Սահմանափակ զգայուն	Կարող են արվել ընթացիկ սպառման սահմանափակման հաշվին
Ծավալային նպատակադրմամբ խնայողություններ	Կանխորոշված	Չկանխորոշված	Ոչ զգայուն	Կարող են արվել ընթացիկ սպառման սահմանափակման հաշվին
Ժամկետային նպատակադրմամբ խնայողություններ	Չկանխորոշված	Կանխորոշված	Ոչ զգայուն	Կարող են արվել ընթացիկ սպառման սահմանափակման հաշվին
Ներդրումային խնայողություններ	Չկանխորոշված	Չկանխորոշված	Շատ զգայուն	Կարող են արվել ընթացիկ սպառման սահմանափակման հաշվին, եթե դրանից ակնկալվող օգուտը գերազանցում է ընթացիկ սպառման բավարարվածությունը

Ինչպես երևում է աղյուսակից, ըստ մեր առաջարկած կանխավարկածի՝ միայն «մնացորդային» և «ընթացիկ» խնայողություններն են արվում ընթացիկ սպառման լիարժեք բավարարումից հետո: Մնացած բոլոր տեսակի խնայողությունները կարող են արվել որոշ ընթացիկ պահանջմունքների չբավարարված մնալու հաշվին: Ինչ վերաբերում է ֆինանսական համակարգի եկամտաբերության հանդեպ հավանական զգայունությանը, ապա ըստ մեր կանխավարկածի՝ այն շատ բարձր է միայն ներդրումային նպատակով արվող խնայողությունների պարագայում:

**Гриша Гарибян
Тигран Мкртчян**

Типизация видов сбережений домашних хозяйств и анализ их сущности

Аннотация

Для сберегательного поведения домашних хозяйств существуют разные мотивации, в зависимости от которых существенно меняется характер этих сбережений и чувствительность к влияющим на них факторам. Целью данной статьи является проведение типизации отдельных видов сбережений и анализа их возможной чувствительности к доходности финансовой системы.

**Grisha Gharibyan
Tigran Mkrtchyan**

Identifying patterns in saving behavior adopted by the households and the analysis of nature of various types of behavior

Abstract

There are many incentives and motives that force households to adopt saving behavior. These motives significantly change the nature of savings and make them sensitive to the factors that influence saving decision. Therefore, the article attempts to identify various types of savings (behavior) and analyze the possible impact of the latter ones on the profitability of the financial system.

ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Բորթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ԱՆՅՈՒՄ ԲԱԶՄԱՍՏԻՃԱՆ (ԲԱԶՄԱԲԱՂԱԴՐԻՉ) ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Կենսաթոշակային բարեփոխումների միջոցով բաշխողական կենսաթոշակային համակարգից անցում է կատարվելու Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից 1994թ.¹ առաջարկված բազմաստիճան (բազմաբաղադրիչ) կենսաթոշակային մոդելի (three-pillar pension model): Մոդելի հիմքում 1980 թվականի վերջին Չիլիում նախաձեռնված կենսաթոշակային բարեփոխումներն են: 2010թ. դեկտեմբերի 22-ին ընդունվեց կենսաթոշակային բարեփոխումների օրենսդրական փաթեթը («Պետական կենսաթոշակների մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին», «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին», «Եկամտային հարկի մասին» օրենքները), որոնք 2012թ. փոփոխվեցին և/կամ լրացվեցին: Դրանով օրենսդրորեն ապահովվեց նոր համակարգի անցումը, հստակեցվեցին անհրաժեշտ բիզնես գործընթացները: Իսկ համակարգի անցման այլ միջոցառումները՝ ենթաօրենսդրական ակտեր, պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների լիցենզավորում, այդ ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժույթային սահմանափակումներ, երաշխիքային ֆոնդի գումարների կառավարում, "AMPS" համակարգ, և այլն, որի պատասխանատուները ՀՀ կառավարությունը և ԿԲ-ն են, պետք է իրականացվեն 2013թ.:

¹ World Bank (1994) "Averting the Old Age Crisis". New York, Oxford University Press, 402 p.

Կենսաթոշակային համակարգը, ըստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ներառում է պետական կենսաթոշակային ապահովությունը (պետական կենսաթոշակային համակարգ կամ բաշխողական բաղադրիչ) և պարտադիր ու կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչները:

Պետական կենսաթոշակային համակարգն ապահովում է պետական կենսաթոշակ բյուջեի միջոցներից, որոնք ձևավորվում են աշխատողների կողմից վճարված եկամտային հարկի գումարներից (2013թ.-ից): Այս համակարգի նպատակը սոցիալական համերաշխության և սոցիալական արդարության ապահովումն է: Պետական կենսաթոշակի նվազագույն չափը պետք է համադրելի լինի կենսաապահովման նվազագույն բյուջեի հետ: Այս համակարգի «0» աստիճանը սոցիալական ծերության կենսաթոշակն է, որը վճարվում է 65 տարին լրացած անձանց, ուն աշխատանքային ստաժը չի գերազանցում 7 տարին 2013թ.-ից (10 տարի՝ 2016թ.-ից): 1-ին աստիճանի դեպքում աշխատանքային կենսաթոշակ (ապահովագրական) կենսաթոշակ (հիմնական կենսաթոշակ+ապահովագրական (աշխատանքային) ստաժի մեկ տարվա արժեք x աշխատանքային ստաժ) նշանակվում է նրանց, որոնց 63 տարին լրացել է և ունեն առնվազն 25 տարվա ստաժ, իսկ դրանից պակաս լինելու դեպքում՝ առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ:

2014թ. հունվարի 1-ից պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի պարտադիր մասնակից են դառնում 1974թ. հունվարի 1-ից հետո ծնված այն անձինք, ովքեր վարձու աշխատողներ են, նոտարներ, անհատ ձեռնարկատերեր, ինչպես նաև պայմանագրային եկամուտներ ունեցողներ: Պարտադիր բաղադրիչի մասնակիցը, եթե աշխատավարձը չի գերազանցում 500,000 ՀՀ դրամը, իր բազային եկամտից 5%-ի չափով ամսական կուտակային վճար (կենսաթոշակային խնայողություններ) է կատարում, իսկ մնացած 5%-ը վճարվում է պետական բյուջեից: Այդ վճարները կառավարում են պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչ ընկերությունները, իսկ դրանց կառավարումից ստացված եկամուտները և այդ վճարները կուտակվելու են յուրաքանչյուր մասնակցի կենսաթոշակային հաշվին, որը կստանա անուիտետների, ծրագրային վճարների և միանվագ վճարների տեսքով: Պարտադիր բաղադրիչին միացած անձինք, նախքան անցումը, աշխատանքային ստաժի համար ստանում են նաև աշխատանքային կենսաթոշակ:

Այս բաղադրիչի առավելությունն այն է, որ կենսաթոշակային ապագա վճարներն ուղիղ կապի մեջ են կենսաթոշակային խնայողությունների և դրանց ներդրումից ստացված եկամուտների հետ: Անհատներն իրենք են խնայում իրենց ծերության համար: Բյուջեի վրա երկարաժամկետ հատվածում սոցիալական բեռի թեթևացում կարձանագրվի: Պարտադիր բաղադրիչը կխթանի խնայողությունների ստեղծմանը, սակայն բարձր տնտեսական աճ և կապիտալի (արժեթղթերի) շուկայի արագ զարգացում կարող է չարձանագրվել:

Սակայն այս համակարգն իր մեջ պարունակում է որոշակի խնդիրներ, կարող է սոցիալական խնդիրներ առաջացնել: Ըստ ՀԲ-ի՝ կենսաթոշակային համակարգի հիմնական նպատակը «աղեկվատ, մատչելի, կայուն և ռոբաստ կենսաթոշակային եկամուտների ապահովումն է»¹: Ռոբաստ համակարգը ենթադրում է «հիմնական շուկային դիմակայելու կարողություն», իսկ շուկերը կարող են լինել տնտեսական ճգնաժամները, ժողովրդագրական խնդիրները և քաղաքական անկայունությունը: Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի պրոֆեսոր Ն. Բարն առանձնացնում է երեք՝ ֆոնդերի սխալ կառավարման, ներդրումային և անուիտետների շուկայի (կենսաթոշակի տարիքից հետո ակնկալվող կյանքի տևողություն, ինչպես նաև եկամտաբերությունը, որը կենսաթոշակառուի համար կապահովի ապահովագրական ընկերությունը) ռիսկեր²:

Տնտեսական ճգնաժամների պարագայում կարող են կասեցվել ինչպես մասնակիցների, այնպես էլ պետբյուջեից կատարվող վճարները, կարող է արձանագրվել ֆոնդերի ակտիվների արժեքի նվազում: Օրինակ՝ Էստոնիայում, պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքներով, 2009թ. երկրորդ կեսին կասեցվեցին

¹ World Bank (2005), Income Support in the 21st Century: An International Perspective on Pension System, p. 6.

² Barr, N. (2002) Reforming pensions: myths, truths, and policy choices, *International Social Security Review*, Vol. 55, No. 2, p. 5.

ինչպես մասնակիցների, այնպես էլ պետբյուջեից կատարվող վճարները: 2010թ. պետբյուջեից վճարները դեռ կասեցված էին, սակայն պարտադիր բաղադրիչի մասնակիցները կարող էին կամավոր իրենց եկամուտներից պարտադիր վճարները կատարել: 2011թ. մասնակի էին վերականգնվել բյուջեից վճարները, և միայն 2012թ. բոլոր մասնակիցների և բյուջեից վճարները վերադարձան նույն մակարդակին: 2014-2017թթ. կառավարությունը ավելացնելու է իր հատկացումները և փոխհատուցելու է այն մասնակիցներին, որոնք 2010-2011թթ. շարունակել էին իրենց կանոնավոր կուտակային վճարումները կատարել (մասնակիցների մոտ 37%)¹: Արդյունքում՝ ճգնաժամի հետևանքով էստոնիայում ապագայում ստացվող թոշակների չափը կկրճատվի:

Ճգնաժամների պարագայում նաև կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունը բացասական կարող է լինել և կորուստներ գրանցել: Նույն էստոնիայում "EPI" ինդեքսը, որն արտացոլում է բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ միջին կշռված եկամտաբերությունը, 2008թ. 24% անկում էր գրանցել՝ ֆոնդերի միջոցների սխալ կառավարման հետևանքով, ինչն էլ 2011թ. հանգեցրեց օրենսդրական փոփոխությունների²: Եթե ապագայում ՀՀ-ում ճգնաժամի հետևանքով պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունը նույնիսկ -35%, իսկ գնաճը 10% արձանագրվի, ապա այս դեպքում պարտադիր մասնակիցներին փոխհատուցում չի նախատեսվում:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «մասնակիցների համար կուտակային վճարները կատարվում են բազային եկամտի 10% դրույքաչափով», սակայն մասնակիցը վճարում է 5%-ը, մնացած 5%-ը համալրվում է պետբյուջեից, հետևաբար՝ մասնակիցների պարտադիր կուտակային վճար կդիտարկվի իր կողմից կատարած 5% վճարումը, որի գնաճով ճշգրտած վերադարձելիությունը երաշխավորվում է (20%-ը՝ երաշխիքային հիմնադրամի, 80%-ը՝ պետբյուջեի միջոցներից): Թեպետ դեռևս չկա որևէ փաստաթուղթ, որը կկարգավորի երաշխիքային ֆոնդ փոխանցած պարտադիր ներդրումային ֆոնդերի վճարների կառավարումը, այն մեծ կարևորություն կստանա միայն այն դեպքերում, երբ պարտադիր ֆոնդերի եկամտաբերությունը գերազանցի -40%-ը (եթե ֆոնդերը կառավարեն միայն պարտադիր մասնակիցների վճարները) առաջիկա երկու տարիների ընթացքում: Սա քիչ հավանական է ներդրումային գործիքների դիվերսիֆիկացիայի պատճառով:

Ինչ վերաբերում է ֆոնդերի ակտիվների կառավարման և ներդրումային ռիսկերին, ապա քանի դեռ կառավարությունը որոշում չի ընդունել պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժույթային սահմանափակումների վերաբերյալ, ապա դժվար է կոնկրետ նշել, թե հիմնական վտանգները որոնք կլինեն: Արտասահմանում ներդրելու պարագայում առաջանում է արժույթային ռիսկը: Արտասահմանում ներդրվող գումարների ծավալների աճը կհանգեցնի ՀՀ դրամի արժեզրկման, թանկ ներմուծման և, ի վերջո, սպառողական գների աճին (չնայած արտահանող ընկերությունները կշահեն): Մյուս կողմից՝ Հայաստանում պարտադիր կենսաթոշակային ակտիվների ներդրման ֆինանսական գործիքները հիմնականում կլինեն բանկային ավանդը (2012թ. նոյեմբերին 1 տարուց ավելի ժամկետի համար 12.90% է եղել, 8.18%՝ ԱՄՆ դոլարով), ինչպես նաև պետական պարտատոմսերը (առաջնային շուկայում ՀՀ երկարաժամկետ պետական պարտատոմսերի միջին եկամտաբերությունը 2012թ. նոյեմբերին կազմել էր 15.42%): 2012թ. նոյեմբերի վերջին ՀՀ առևտրային բանկերի կողմից մասնավոր ռեզիդենտ ձեռնարկություններին տրված վարկերի ծավալը գերազանցում էր ավանդների ծավալներին այդ նույն ժամանակահատվածում 1.83 անգամ: Առաջիկա 5-7 տարվա ընթացքում բավականին բարձր եկամտաբերություն կարձանագրվի պարտադիր ֆոնդերի մոտ: Բանկային ավանդների հետագա աճը կհանգեցնի տոկոսադրույքների նվազեցմանը, վարկավորման ծավալների աճին:

Սակայն ներքին փոքր շուկան և արժեթղթերի շուկայի զարգացվածության ցածր մակարդակը չեն կարող երկարաժամկետ ժամանակահատվածում ապահովել բարձր եկամտա-

¹ ASISP (2011) Annual National Report 2011: Pensions, Health Care and Long-term Care, pp. 8-11.

² Նույն տեղում, էջ 8-10:

բերություն, եթե վերջինս չզարգանա, կամ էլ վարկավորումը հիմնականում ուղղվի դեպի արտահանող ձեռնարկություններին: Իսկ արժեթղթերի շուկան կարող է արագ չզարգանալ ԶԶ-ում: Տարտուի համալսարանից Լինա Կուլուն և Ջանո Ռեյլյանը պնդում են, որ «*չնայած տեսականորեն խնայողությունների խթանումը պարտադիր բաղադրիչի իրագործման միջոցով կարող է հանգեցնել տնտեսական աճի և զարգացնել կապիտալի շուկան, սակայն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի անցումային տնտեսությամբ երկրները հատուկ դեպքեր են հանդիսանում: Եվրոպական զարգացած երկրների հետ համեմատած, որոնք ունեն գործող արժեթղթերի շուկա, ԿԱԵ երկրների արժեթղթերի շուկան (հատկապես Էստոնիայի արժեթղթերի շուկան) հավանաբար չի կարող երաշխավորել կայուն տնտեսական զարգացում ապագա 40-50 տարիների ընթացքում: Էստոնական ներդրումային ֆոնդերում կուտակված միջոցների մեծամասնությունը ներդրված է պետական պարտատոմսերի մեջ Լիտվայում, Նիդեռլանդներում, Ֆրանսիայում և Ավստրիայում (տես, Սորմունեն, 2003թ.): Միջոցների ներդրումը եվրոպական արժեթղթերի շուկայում կօգնի հաղթահարել այլընտրանքային ներդրումների խնդիրը, բայց բարդ է ենթադրել ԿԱԵ երկրներում տնտեսական աճի խթանում»¹:*

2012թ. «ՆԱՍՊԱԲ ՕԵՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի հարթակում 410,796,210 ԶԶ դրամ ծավալի բաժնետոմսերի առք ու վաճառք է իրականացվել (7 ընկերության բաժնետոմսեր, որից 2-ը՝ բանկ), իսկ կորպորատիվ պարտատոմսերի ծավալը եղել է 402,202,653.52 ԶԶ դրամ²:

2011թ. ԶԶ-ում վարձու աշխատողների մոտ 42%-ի աշխատավարձը ցածր էր 65,001 ԶԶ դրամից, իսկ հարկերը վճարելուց հետո 2012թ. զուտ աշխատավարձը էապես չէր գերազանցում նվազագույն սպառողական զանբյուրի արժեքը՝ 50,443 դրամ (առողջապահության նախարարության կողմից 1 շնչի հաշվով մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի զանբյուրը՝ հաշվարկված III եռամսյակի միջին ընթացիկ գներով)³:

Ի դեպ՝ Լարի Վիլմորը նշել է, որ զարգացող երկրների համար կենսաթոշակային համակարգի մոդել կարող է հանդիսանալ Նոր Զելանդիան, որտեղ բացակայում է պարտադիր բաղադրիչը, մինչդեռ ուշադրությունը ուղղվել է Զիլիին⁴:

Կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաներ կարող են առաջարկել կենսաթոշակային ֆոնդերը, բանկերը և ապահովագրական ընկերությունները կենսաթոշակների, կուտակային կենսաթոշակային ավանդների կամ վճարների տեսքով: Այս բաղադրիչի մասնակից կարող են դառնալ անհատները և ձեռնարկությունները, որոնք ստանում են հարկային արտոնություններ, ընդ որում՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք միաժամանակ մի քանի սխեմաների կարող են մասնակցել: ԶԶ կառավարությունը 2011թ. հուլիսի 28-ի որոշմամբ ամրագրել է կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժույթային սահմանափակումները: ԶԶ ԿԲ խորհուրդը սահմանել է կամավոր կուտակային կենսաթոշակային ավանդի պայմանագրին ներկայացվող պարտադիր պահանջները: 2012թ. «Կապիտալ Ինվեսթմենթս» ՓԲԸ-ն (նախկինում՝ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ) ԶԶ ԿԲ-ից կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի լիցենզիա է ստացել: Ֆոնդի կանոնադրության հաստատումից հետո 2013թ. առաջարկելու է սխեմաներ: 2012թ. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն առաջարկում է կուտակային կենսաթոշակային ավանդ: Հաշվի առնելով ներկայիս բարձր ժամկետային ավանդերի տոկոսադրույքները և պետական պարտատոմսերի եկամտաբերությունը՝ ավելի արդյունավետ կլինի անհատին տնօրինել իր եկամուտները առաջիկա 5-7 տարիների ընթացքում: Հետևաբար՝ մասնակցությունն այս կենսաթոշակային սխեմաներին կլինի սահմանափակ: Էստոնիայում, որտեղ կամավոր բաղադրիչը գործում է 1998թ., մասնակցությունը տարբեր կենսաթոշակային սխեմաներին սահմանափակ է եղել (2011թ. մայիսի 9-ի դրությամբ ՀՆԱ-ի 0.6%), 2011թ. օրենսդրական փոփոխություններ իրականացվեցին, հարկային

¹ Kulu, Liina and Janno Reiljan (2004) “Old-Age Pension Reform in Estonia on the Basis of the World Bank’s Multi-Pillar Approach” University of Tartu, p. 16.

² <http://www.nasdaqomx.am/am/market.htm>

³ http://www.armstat.am/file/article/sv_09_12a_6300.pdf

⁴ Larry Willmore (2000) Three Pillars of Pensions? A Proposal to End Mandatory Contributions, DESA Discussion Paper No. 13, United Nations, p. 9.

արտոնություններ տրամադրվեցին 2012թ.-ից մասնակցությունն այս բաղադրիչին ընդլայնելու նպատակով¹:

Պարտադիր բաղադրիչը հնարավորություն կտա ավելի բարձ կենսաթոշակ կուտակել ֆորմալ զբաղվածների (գրանցված աշխատողների) համար: Կամավոր բաղադրիչը կարող է ավելացնել կենսաթոշակային խնայողությունները ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածների (չգրանցված աշխատողների) համար: Սակայն համեմատաբար ցածր եկամուտներ ունեցողները կունենան ցածր կենսաթոշակային խնայողություններ, մինչդեռ նախքան կենսաթոշակի անցնելը պետք է կրճատեն ընթացիկ սպառումը, որը շատ չի տարբերվի նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից: Երկրում խնայողությունների խթանումը կարող է չհանգեցնել արժեթղթերի շուկայի արագ զարգացման, ինչպես նաև միջնաժամկետ հատվածում տնտեսական զարգացման: Կամավոր կուտակային բաղադրիչն ունի այլընտրանք, իսկ պարտադիր կուտակային բաղադրիչը ոչ մի այլընտրանք չունի: Սակայն մի բան պարզ է, որ այն միջոցների եկամտաբերությունը, որոնք փայերի տեսքով կհայտնվեն կենսաթոշակային ֆոնդերի մոտ, առնվազն 3 տարի ավելի քիչ եկամտաբերություն կունենան՝ բանկային ավանդի համեմատ: Մյուս կողմից՝ տարեցտարի պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մոտ ակտիվների ծավալների աճը կարող է հանգեցնել տոկոսադրույքների իջեցմանը, սակայն ներդնելու սահմանափակ հնարավորությունները կարող է չապահովեն այն եկամտաբերությունը, որն անհատը կկարողանար ապահովել ինքնուրույն կառավարելով իր կողմից կուտակվող միջոցները՝ հաշվի առնելով գնաճը:

Анна Макарян

ПЕРЕХОД К МНОГОУРОВНЕВОЙ ПЕНСИОННОЙ СИСТЕМЫ

Аннотация

С переходом к новой пенсионной системе Армения может столкнуться с некоторыми проблемами. В статье предпринята попытка представить недостатки и преимущества новой системы. Автором анализированы экономические риски, связанные с устойчивостью многоуровневой пенсионной системы, особенно со вторым уровнем (обязательным накоплением). В статье рассмотрены также перспективы развития фондового рынка в Армении и его роль в обеспечении экономического роста. Рассмотрены возможные варианты инвестирования пенсионными фондами в краткосрочном периоде и задачи, с которыми они могут столкнуться в долгосрочном периоде. Автор приходит к выводу о том, что регулярные платежи, поступающие в пенсионные фонды, находясь в собственном распоряжении лиц, смогут обеспечить более высокую прибыль, чем прибыль, обеспечиваемые фонды в долгосрочной перспективе.

Anna Makaryan

SHIFT TO THE MULTI-PILLAR PENSION SYSTEM

Abstract

With the shift to a new pension system Armenia will face some challenges. The article attempts to present the threats and advantages of the new system. The author analyzes the economic risks to the robustness of the multi-pillar pension system, especially to the 2nd pillar (mandatory savings), and discusses the perspectives of the development of the stock market in Armenia and its role in ensuring economic growth. The article discusses the possible investment options that the funds will opt for in the short-run and challenges that they will start facing in the long-run. The author concludes that the individuals managing the own regular payments to the funds could ensure higher profits than the funds would pay in the long-run.

¹ ASISP (2011) Annual National Report 2011: Pensions, Health Care and Long-term Care, p. 11.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԼՂՅ-ՈՒՄ

Յուրաքանչյուր քաղաքակիրթ պետություն պարտավոր է իր քաղաքացիներին պաշտպանել տնտեսական և սոցիալական ցնցումներից, որոնք կարող են ծագել աշխատանքի կորստի կամ եկամուտների կտրուկ անկման, հաշմանդամության, ծերության, հիվանդության և այլ պատճառներով: Այն պետք է արտացոլվի սոցիալական աջակցության և սոցիալական ապահովագրության քաղաքականության, զբաղվածության, գործազրկության, առողջապահական պետական նպատակային ծրագրերի մեջ:

ԼՂՅ-ում իրականացվող և իրականացվելիք գերակա ծրագրերը, որոնք ներառում են ԼՂՅ սոցիալական ապահովության նախարարության, ԼՂՅ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության, ԼՂՅ սոցիալական ապահովության պետական հիմնադրամի ծրագրերը, ուղղված են հիմնականում աշխատանքի, բնակչության զբաղվածության, պետական կենսաթոշակային ապահովության, ընտանիքի, հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության, ծնելիության և բազմազավակության խթանմանը և բխում են «Պետական կենսաթոշակների մասին», «Երեխաների իրավունքների մասին», «ԼՂՅ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Բնակչության զբաղվածության մասին» ԼՂՅ օրենքներից և կառավարության առանձին որոշումներից:

ԼՂՅ-ում սոցիալական առումով խոցելի ոլորտներից է կենսաթոշակային բնագավառը, որը ներառում է պետական կենսաթոշակային ապահովության և պարտադիր կենսաթոշակային ապահովագրության համակարգերը:

Ընդհանուր առմամբ կենսաթոշակային համակարգի բարեփոխումները ներկայում օրակարգային հարց է աշխարհի շատ երկրների կառավարությունների համար: Կենսաթոշակային բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- բնակչության ծերացում և կյանքի միջին տևողության երկարում,
- աշխատուժի նվազում և որպես հետևանք՝ աշխատող անձանց ու կենսաթոշակառուների համամասնության փոփոխում,
- ծնելիության նվազում,
- աշխատունակ տարիքի անձանց միգրացիա:

Վերոնշյալ գործոնները բացասական ազդեցություն են ունենում ցանկացած երկրի տնտեսության, հետևաբար՝ նաև կենսաթոշակային համակարգի վրա:

Երկրի սոցիալ-տնտեսական ներկա իրավիճակի վերլուծությունը վկայում է կենսաթոշակային բնագավառում առկա հիմնախնդիրների մասին, որոնք հետևանք են զբաղվածության մակարդակի կրճատման, ժողովրդագրական ստեղծված իրավիճակի և բնակչության սեռատարիքային կառուցվածքի վատթարացման:

Համակարգի զարգացման և ֆինանսական կայունության ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել լուրջ բարեփոխումներ՝ լուծելով երկու կարևոր հիմնախնդիր.

- ոլորտի զարգացման քաղաքականության ծրագրավորում (ռազմավարության մշակում, օրենսդրական դաշտի կատարելագործում, օրենսդրության միասնական կիրառման ապահովում, օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում),
- ոլորտի վարչական կառավարման հստակ համակարգի ձևավորում և դրա շարունակական կատարելագործում (ոլորտի մասնակիցների՝ պետական մարմինների, գործատուների և քաղաքացիների իրավունքների և պարտականությունների օրենսդրորեն հստակ սահմա-

նագատում, տվյալների փոխանակման ինքնաշխատ համակարգերի աստիճանական ներդրում):

2014թ. ինչպես ԳՂ-ում, այնպես էլ ԼՂԳ-ում նախատեսվում է համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող կենսաթոշակային բաշխողական համակարգից անցում ինքնաֆինանսավորվող կուտակային կենսաթոշակային համակարգի: Կուտակային կենսաթոշակային համակարգի պարագայում կառավարությունը առանձնացնում է ֆինանսական միջոցները և արդեն գիտի իր ֆինանսական պարտավորությունների չափը: Կուտակային կենսաթոշակի չափը կախված է լինում անձի կատարած կուտակային վճարների չափից և դրանց ներդրումներից ստացված եկամուտներից: Այսինքն՝ ֆինանսական շուկան, անձի գիտելիքն ու տեղեկացվածությունը և նրա ակտիվությունն են մեծապես որոշելու անձի կուտակային կենսաթոշակի չափը: Զետևաբար՝ կուտակային համակարգի ներդրմամբ իրականացվում է ռիսկերի բաժանում պետության և անձի միջև:

Միջազգային փորձը վկայում է, որ կուտակային կենսաթոշակային համակարգի առավելություններն ամփոփվում են հետևյալ չափորոշիչներում.

- «Աշխատավարձ/եկամուտ-կենսաթոշակային վճարներ-կենսաթոշակ» կապը ուղիղ համեմատական է, իրական և տեսանելի:
- Կենսաթոշակային միջոցները յուրաքանչյուր աշխատողի (վճարում կատարողի) անձնական սեփականությունն են և ժառանգության իրավունքով կարող են փոխանցվել հարազատներին:
- Անհատական հաշիվներում կուտակված կենսաթոշակային միջոցները թափանցիկ են, վերահսկելի և կառավարելի հաշվետիրոջ համար:

Անհրաժեշտ է նշել, որ չնայած վերոնշյալ առավելություններին, կուտակային կենսաթոշակային համակարգը զերծ չէ նաև ռիսկերից, մասնավորապես շուկայական, ավելին, աշխարհի ոչ մի երկրում կուտակային կենսաթոշակները չեն երաշխավորվում շուկայական ռիսկերից: Կուտակային կենսաթոշակի երաշխիքները տրամադրում է պետությունը՝ օպտիմալ կարգավորման և պատշաճ վերահսկողության տեսքով: Շուկայական ռիսկերը կարող են ապահովագրվել ապահովագրական ընկերությունների կողմից, սակայն դրանք լրացուցիչ ծախսեր են, որոնք անխուսափելիորեն նվազեցնելու են անձի կուտակային կենսաթոշակի չափը, քանի որ ապահովագրական ծախսերը պետք է կատարվեն կուտակված կենսաթոշակային ակտիվների հաշվին: Այդ առումով օրենսդրությամբ պետք է ամրագրվեն պահուստային հիմնադրամների ձևավորումը, որոնց հաշվին երաշխավորվում են ակտիվների կառավարչի ակնհայտ ապօրինի կամ խարդախ վարքի հետևանքով կուտակային համակարգի մասնակիցներին հասցված վնասները:

Ընդհանուր առմամբ, կենսաթոշակային համակարգի բարեփոխումները ցանկացած երկրում երկարատև և դժվար գործընթաց է, որը պահանջում է բազմաոլորտային արմատական փոփոխություններ՝ սկսած մարդկային գործոնի կատարելագործումից և վերջացրած քաղաքական որոշումների հետևողականության ապահովմամբ: Բնական է, որ բարեփոխումների երկար ճանապարհը պարունակում է ռիսկեր, որոնց մեծ մասն արդեն այսօր տեսանելի են և անհրաժեշտ է հաշվի առնել ծրագրի իրականացման ընթացքում:

ԼՂԳ-ում վերջին տարիներին արձանագրվում է տնտեսական աճ: 2010թ. երկրի ՀՆԱ-ն 2009թ. համեմատ աճել է 5.5%-ով, իսկ 2011թ. 2010թ. համեմատ գրանցվել է ՀՆԱ-ի 9.1% աճ: 2011թ. բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 936 հազ. դրամ (այսինքն՝ մեկ շնչին ամսական հասնում էր 78 հազ. դրամ)¹: ԼՂԳ-ում տնտեսական աճից ստացվող եկամուտները բնակչության տարբեր խմբերի միջև բաշխվել են անհավասարաչափ: Կարծում ենք, որ բևեռացման նման պայմաններում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող իրական եկամտի կամ միջին աշխատավարձի հաշվարկը դառնում է անիմաստ, քանի որ հարուստների եկամտի ավելացումը սոցիալապես անապահով բնակչության անփոփոխ եկամտի դեպքում մեխանիկորեն հանգեցնում է բնակչության ճնշող մեծամասնության եկամտի միջին մեծության աճի: Նշանակում է՝ միջին եկամտի ցուցանիշը ճիշտ պատկերացում չի տալիս իրական կենսամակարդակի մասին:

¹ ԼՂԳ ազգային վիճակագրական ծառայություն: ԼՂԳ սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-դեկտեմբերին, էջ 4-7:

Ուստի, տնտեսական աճի պարագայում էապես կարևորվում է նաև եկամուտների բաշխման հիմնախնդրի կարգավորումը, որպեսզի հնարավոր լինի բարձրացնել բնակչության բարեկեցության մակարդակը, նվազագույնի հասցնել բեռնացվածության աստիճանը սոցիալական խմբերի միջև:

Յուրաքանչյուր երկրում սոցիալապես անապահով կամ անբավարար եկամուտներ ունեցող բնակչության շահերի պաշտպանության նպատակով եկամուտների վերաբաշխումը պետության առաջնային խնդիրներից է: Բաշխման հիմնախնդրում կարևոր տեղ պետք է հատկացնել նվազագույն աշխատավարձին, տարբերակված գներիին, հասարակության անապահով խավերին պետության կողմից ցույց տրվող օգնությանն ու ծախսերին առնչվող հարցերի ուսումնասիրությանը:

Եկամուտների համահարթեցման հիմնական գործիքներից մեկը սոցիալական տրանսֆերտների համակարգն է, որոնք նպատակաուղղվում են բնակչության այն խավերի օժանդակությանը, որոնք դուրս են մնում շուկայական ոլորտում եկամուտների բաշխման գործընթացից՝ անկարող լինելով ինքնուրույն ապահովել իրենց կենսամակարդակի համար բավարար պայմաններ: Խոսքը լրիվ կամ մասնակի անաշխատունակ քաղաքացիների մասին է՝ հաշմանդամներ, լքյալ ծերեր, թոշակառուներ և սոցիալապես անպաշտպան այլ խավեր: Բացի այդ, սոցիալական տրանսֆերտները ուղղվում են նաև հատուկ վաստակ ունեցող անձանց, օրինակ՝ պատերազմի վետերանների, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման մասնակիցների, աշխատանքի վաստակավոր գործիչների, բազմազավակ մայրերի օժանդակությանը:

Գործնականում հայտնի են բազմաթիվ սոցիալական վճարումների տեսակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները: Սակայն դրանք բոլորն էլ ծառայում են նույն նպատակին՝ սատարել հասարակության կարիքավոր խավերին: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ ԼՂՀ-ում սոցիալական տրանսֆերտների կառավարման խնդիրն է՝ ընտրել և կիրառել հնարավոր արդյունավետ ձևեր եկամուտների համահարթեցման գործընթացներում:

Ընդ որում, աղքատության և գործազրկության բարձր մակարդակների առկայության դեպքում, էապես կարևորվում է պետության կողմից իրականացվող եկամուտների վերաբաշխումը ընդհանուր նշանակության կամ նպատակային նպաստների տեսքով: Կարծում ենք, որ ընդհանուր նշանակության նպաստների կամ պետական ծախսերի գերակայությունը կարող է տեղի ունենալ պետական բնակարանային շինարարության, անվճար բժշկական օգնության, ապահովագրության, պետական ուսումնական հաստատություններում անվճար բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն տալով:

ԼՂՀ-ում պետական նպաստների կիրառումը սոցիալական ոլորտի կարևոր միջոցառումներից է, որն ընդգրկում է անապահով և պետական հոգածության կարիք ունեցող սոցիալական խավերին: Այս համակարգը գործում է շուրջ տասնհինգ տարի, որով սահմանված են չորս տեսակի նպաստներ՝ առանձին խմբերի մինչև 18 տարեկան երեխաներին, միայնակ մայրերին, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի և մինչև մեկ տարեկան երեխաներին սննդով ապահովման համար տրվող նպաստներ: Վերջին տարիների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները, նպաստառուների թվի շարժը՝ խոսում է ծրագրի հասցեականության մեծացման մասին: Չնայած դրան, կարծում ենք, որ այդ ծրագրերը անընդհատ պետք է բարելավել, այն նպատակաուղղելով սոցիալապես անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը, ժողովրդագրական վիճակի բարելավմանը: Ընդհանուր առմամբ՝ 2010թ. ԼՂՀ-ում պետական նպաստների ծրագրով ծախսվել է շուրջ 2276 մլն դրամ՝ նախորդ տարվա 2242,0 մլն դրամի փոխարեն: 2010թ. գրանցվել է 19917 նպաստառու¹:

ԼՂՀ-ում ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ երեխաների անվամբ 2010թ. բացվել է 88883 ժամկետային ավանդ՝ 507,1 մլն դրամի չափով, որը 60-ով գերազանցել է 2009թ. բացված ավանդների թիվը, իսկ գումարը 30,2 մլն դրամով²:

¹ www.mss.nkr.am

² ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն: ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. հունվար-դեկտեմբերին, էջ 103-106:

2011թ. ԼՂՀ-ում՝ ըստ առանձին կատեգորիաների պետական նպաստների չափը կազմել է¹.

- ալիմենտ ստացող երեխաների նպաստը՝ 7800 դրամ (2010թ.՝ 6000 դրամ),
- չորս անչափահաս երեխա ունեցող ընտանիքների երեխաների նպաստը՝ 7800 դրամ (2010թ.՝ 6000 դրամ),
- 2-րդ խմբի հաշմանդամների երեխաների նպաստը՝ 9000 դրամ (2010թ.՝ 6000 դրամ),
- մինչև երկու տարեկան երեխա խնամող անձանց տրվող նպաստը՝ 15 000 դրամ (2010թ.՝ 12 000 դրամ):
- չաշխատող կանանց հղիության և ծննդաբերության նպաստը՝ 149 500 դրամ (2010թ.՝ 138 000 դրամ):

Վերոնշյալից պարզ է, որ ԼՂՀ-ում դեռևս լուրջ խնդիր է սոցիալական վճարումների փոքր չափը, որն ամենևին չի համապատասխանում նվազագույն կենսամակարդակի լիարժեք ապահովման պահանջներին:

Յետևապես, դեռևս անհրաժեշտ է խթանել կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների սոցիալական ապահովությունը, պաշտպանել նրանց օրինական շահերը և իրավունքները, ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթության իրավունքը, ավելացնել վերարտադրողական ներուժը, հատուկ ուշադրության կենտրոնում պահել ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաների սոցիալական ապահովության խնդիրները:

ԼՂՀ-ում առանձնահատուկ կարևոր հիմնախնդիր է լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովումը՝ աշխատանքի խթանման, զբաղվածության խրախուսման, բնակչության եկամուտների ավելացման և հավաքագրված միջոցների բաշխման արդարացի մեխանիզմների ներդրման միջոցով: Այս տեսանկյունից կարևորվում է զբաղվածության այնպիսի քաղաքականության մշակումն ու իրականացումը, որն առաջին հերթին կնպաստի տնտեսության զարգացմանը, մի կողմից՝ զարգացնելով գործազուրկների հմտություններն ու բարձրացնելով նրանց տնտեսական ակտիվությունը, մյուս կողմից՝ շահագրգռելով գործատուներին պահպանել գործող աշխատատեղերը, ստեղծել նոր աշխատատեղեր:

Չանրապետության պաշտոնական վիճակագրությունը ամեն ամիս ամրագրում է զբաղվածության ծառայությունում գրանցված գործազուրկների թիվը: 2011թ. ԼՂՀ-ում գործազրկության մակարդակը, հաշվարկված որպես զբաղվածության ծառայությունում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության հարաբերակցություն, կազմել է 5.2%: 2011թ. աշխատանք փնտրող անձանց թվաքանակը հանրապետությունում կազմել է 3595 մարդ, որոնցից 3382-ը կանայք: Նախորդ տարվա համեմատությամբ նույն ցուցանիշը նվազել է 124 մարդով: Գրանցվածների 94.3%-ը կամ 3391 մարդ ստացել է գործազուրկի կարգավիճակ: Գրանցված 3391 քաղաքացիներից գործազրկության նպաստ է ստացել 477 անձ:

2011թ. աշխատանքի է տեղավորվել 64 մարդ, որից 49՝ գործազուրկ: 2010թ. համեմատ այդ ցուցանիշը նվազել է 21-ով: Աշխատանքի տեղավորվածների 85.9%-ը կանայք են: Գործազուրկների թվի մեջ մեծ է քաղաքային բնակչության տեսակարար կշիռը՝ 94.3%²:

Չանրապետությունում գործազրկությունը մեծ է երիտասարդների շրջանում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դա պայմանավորված է հիմնականում մասնագիտական կողմնորոշման համակարգի բացակայությամբ, աշխատաշուկայի ներկայիս պահանջներին երիտասարդների մասնագիտական կրթության և որակավորման անհամապատասխանությամբ, աշխատանքային փորձի բացակայությամբ:

2011թ. շարունակում էր բարձր մնալ մեկ տարուց ավելի գործազուրկի կարգավիճակ ունեցող անձանց թվաքանակը, որը կազմում էր գործազուրկների թվաքանակի 53.3%-ը (2010թ.՝ 61.4% փոխարեն)³: Կարծում ենք, որ երկարատև գործազրկությունը լուրջ հիմնախնդիր է, քանի որ ժամանակի ընթացքում կորցնելով աշխատանքային հմտությունները, քաղաքացիները դառնում են աշխատաշուկայում անմրցունակ:

¹ www.mss.nkr.am

² ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն: ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-դեկտեմբերին, էջ 56-61:

³ Հաշվարկները կատարվել են ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների հիման վրա:

Ակնհայտ է, որ ոչ պաշտոնական տվյալներով գործազրկության մակարդակը անհամեմատ բարձր է: ԼՂՀ-ում գործազուրկների զգալի մասը չի գրանցվում, որովհետև տրվող նպաստը պարզապես խորհրդանշանական բնույթ ունի: Այդ առումով, զբաղվածության ոլորտի հիմնախնդիրներից են թաքնված գործազրկության բացահայտումը և աշխատաշուկայի ուսումնասիրությունների միջոցով իրական գործազրկության մակարդակի ճշտումը, երկարատև գործազուրկների ընդգրկումը նպատակային ծրագրերում, գործատուների հետ համագործակցության արդյունքում թափուր աշխատատեղերի համալրման ընդլայնումը:

Այսպիսով, ԼՂՀ-ում գերխնդիր է նոր աշխատատեղերի ստեղծումը, իսկ ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության խնդիրն է՝ աջակցել այդ աշխատատեղերի ստեղծմանը առաջին հերթին օրենսդրական համապատասխան դաշտի ստեղծմամբ, ինչպես նաև պետական մասնակցությամբ այնպիսի կառույցների ձևավորմամբ, որոնց միջոցով ներքին և արտաքին որոշակի ռեսուրսներ կհավաքագրվեն աշխատատեղերի ստեղծման համար, որը ձեռնտու կլինի նաև գործատուներին: Աշխատանքի պետական կարգավորման քաղաքականությունը պետք է նպաստի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Գտնում ենք, որ կարևոր է պետական և մասնավոր հատվածների աշխատանքի վարձատրության մակարդակների միջև առկա տարբերության կրճատումը, որը կարելի է իրականացնել փուլային տարբերակով՝ հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական ցուցանիշները:

ԼՂՀ-ում եկամուտների անհավասարության պատճառ է նաև վարվող հարկային քաղաքականությունը: ԼՂՀ պետական բյուջեի հարկային մուտքերի մեծ մասը բաժին է ընկնում անուղղակի հարկերին (62,8%)¹, որոնք բնույթով սպառողական հարկեր են և, ներառված լինելով ապրանքների գների մեջ, ըստ էության վճարվում են սպառողների կողմից: Ստացվում է, որ նրանք՝ հանրապետության բնակչության գերակշռող մասը կազմող սոցիալապես անապահով սպառողները ավելի շատ հարկեր են վճարում, քան եկամուտ ստանում: Բացի դրանից, պետական բյուջեում անուղղակի հարկերի մեծ բաժնի պատճառով անապահով, աղքատ խավերը պետությունից սոցիալական տրանսֆերտների ձևով ստացած եկամուտների զգալի մասը ստիպված կրկին «վերադարձնում են» պետությանը: Այս պարագայում անհրաժեշտ են կոնկրետ քայլեր պետական բյուջեի հարկային մուտքերում բնակչության առավել ապահովված խավերի կողմից վճարվող ուղղակի հարկերի, մասնավորապես՝ եկամտահարկի և շահութահարկի բաժնի (ընդամենը 13,6%)² մեծացման ուղղությամբ:

Մեր կարծիքով, ԼՂՀ տնտեսության երկարաժամկետ զարգացումների առանցքային ուղեցիներից պետք է լինի ներքին ռեսուրսների արդյունավետ հավաքագրումը, մասնավորապես հարկերի հավաքագրման մակարդակի բարձրացման ապահովումը:

Սկսած 2010թ. օգոստոս ամսից ԼՂ Հանրապետությունում արձանագրվել է պարբերական գնաճ: Ընդգծենք, որ երկրում գնաճը պայմանավորված էր ինչպես համաաշխարհային շուկայի զարգացումներով. պարենային որոշ ապրանքատեսակների գնաճ, առանձին պարենային ապրանքատեսակների սեզոնայնություն, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխություն, այնպես էլ ֆորս-մաժորային որոշ իրավիճակներով՝ բնական աղետներ ու դրանց հետ կապված ցածր բերքատվություն: 2010թ. 2009թ. համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 108.9%, այդ թվում՝ պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 108.5%, ոչ պարենային ապրանքներինը՝ 108.6%, ծառայությունների սակագներինը՝ 109,8%: 2010թ. սպառողական գների միջին ամսական հավելածը կազմել է 0,9 տոկոս, իսկ 2009թ՝ 0,4 տոկոս: 2011թ. 2010թ. համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 104%³: Գնաճը շարունակվել է նաև 2012թ.:

Այն, որ հանրապետությունում գնաճ է արձանագրվել բոլոր ապրանքատեսակների ու ծառայությունների մասով, ակնհայտ է, բայց պարենային, մասնավորապես առաջին անհրաժեշտության ապրանքների թանկացումը, ինչ խոսք, առավելապես ծանր է բնակչության համար և լուրջ սոցիալական լարվածություն է ստեղծում: Գները կարելի է կարգավորել, եթե խոսքը

¹ Հաշվարկները կատարվել են ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների հիման վրա:

² Հաշվարկները կատարվել են ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների հիման վրա:

³ ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն: ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-դեկտեմբերին, էջ 44-56:

առնչվում է տեղական հունքով արտադրությանը: Իսկ եթե այն ներկրվող է, ապա գնաճից խուսափելու միակ ձևը տեղական արտադրության խթանումն է: Բացի այդ անհրաժեշտ է կատարելագործել մրցակցային միջավայրը և պայքարել տեղեկատվական անհամապատասխանության դեմ:

Այսպիսով, սոցիալական քաղաքականությունը ցանկացած երկրի կյանքի բոլոր կողմերի՝ աշխատավարձի մակարդակի, ժողովրդագրական իրավիճակի, աշխատանքային շուկայի, մշակութային ու ազգային սովորույթների, քաղաքացիական հասարակության կառույցների և պետական իշխանության ինստիտուտների զարգացման մակարդակի արտացոլումն է: Այդ է պատճառը, որ սոցիալական ոլորտում բարեփոխումների իրականացումը, առանց հասարակական կյանքի սոցիալ-տնտեսական բոլոր կողմերի արմատական փոփոխությունների, անհնարին է:

Рузанна Мангасарян

Основные социальные проблемы и их проявление в НКР

Аннотация

Основные социальные проблемы требуют соответствующего вмешательства со стороны государства. Социальная политика государства должна способствовать созданию нормальных условий для жизнедеятельности населения и, в целом, обеспечить стабильность жизни общества. С точки зрения проводимой социальной политики государства наиболее уязвимой сферой в НКР является пенсионная система. В связи с этим в данной статье рассматриваются основные проблемы существующей пенсионной системы, которые являются следствием сокращения общего уровня занятости, сложившейся демографической ситуации. Основной задачей государства является обеспечение достойного уровня жизни слоев общества, имеющих низкие доходы. В этих условиях первоочередной задачей государственной политики по поддержке социально-уязвимых слоев населения должно стать справедливое перераспределение доходов. Инфляция, особенно подорожание товаров первой необходимости, ощутимая для всего населения, создает серьезную социальную напряженность. Единственный способ избежать повышения цен в НКР – стимулирование развития местного производства. Кроме того, необходимо усовершенствовать конкурентную среду и бороться с информационной асимметрией.

Ruzanna Mangasaryan

Main social issues and developments in the Nagorno Karabagh Republic

Abstract

The main social issues require respective interventions by the government. The social policy of the government needs to ensure descent living conditions and access to employment possibilities and stability for the population. One of the most vulnerable areas of the social policy of the government in the Nagorno Karabagh Republic (NKR) is the pension system. The article discusses the main issues and shortcoming of the existing pension system due to low level of employment and demographic situation. One of the main objectives of the Government is to ensure descent quality of life for the low income population. Hence, the primary objective of the social policy of the government aimed at supporting vulnerable groups of the population is the income distribution. Inflation, especially increase of prices of goods of the first necessity that affects everyone in the country could result in serious social distress. The only way to avoid price increase in the Nagorno Karabagh Republic is to support local production. Moreover, it is required to improve the competitive environment and fight information asymmetry.

**ԱՊՊԱ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Շուկայական տնտեսության մեխանիզմի ապահովման կարևորագույն ինստիտուտներից մեկը ապահովագրությունն է: 2008թ. սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որը մինչ այժմ շարունակում է գործել (աշխարհի գրեթե բոլոր երկրների կառավարությունները ջանքերի մեծ լարումով հակաճգնաժամային ծրագրեր են իրականացնում դրա հետևանքները հաղթահարելու համար), ցույց տվեց, որ դրա առաջացման հիմնապատճառներից մեկը ապահովագրության ոլորտում տեղ գտած բացթողումները և սխալներն էին: Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական շուկան ունեցավ իր ձևավորման առանձնահատկությունները և այն մեզանում գտնվում է կայացման փուլում: Այդ շուկայի անբաժան մասն է կազմում նաև ավտոքաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը (ԱՊՊԱ): Վերջինս Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ մտավ 2011թ. հունվարի 1-ից: Այս տեսանկյունից զգալի հետաքրքրություն են ներկայացնում ապահովագրական շուկայի և նրա բաղկացուցիչ մասը կազմող ԱՊՊԱ-ի ձևավորման և զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում:

Ապահովագրական շուկայի ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում համարվում է բնականոն, քանի որ դա թելադրված է շուկայական տնտեսության պայմաններով: Անցումը պլանային տնտեսակարգից շուկայականին տնտեսական և սոցիալական ոլորտներում հանգեցրեց մի շարք կառուցվածքային փոփոխությունների: Փոփոխություններն առավել խորն էին հատկապես սեփականության ոլորտում, որտեղ նախկին պետական սեփականության գերակայությունը իր տեղը զիջեց մասնավորին: Այստեղ էլ օբյեկտիվորեն անհրաժեշտություն առաջացավ այդ սեփականության պաշտպանության համար: Պահանջվեց սեփականության տարբեր սուբյեկտների, ինչպես նաև հասարակության առանձին անդամների պաշտպանվածության հստակ և արդյունավետ մեխանիզմի ստեղծում, այն դեպքում, երբ պետական միջոցներով վերջիններիս գույքային շահերին հասցված վնասների կամ կորուստների հատուցման նախկինում ընդունված կարգը հնարավոր և նպատակահարմար չէր այլևս կիրառել: Այս ամենի արդյունքում ապահովագրական ընկերությունների գործունեության համար առաջացավ իրավատնտեսական տարածություն, որն էլ հիմք հանդիսացավ ՀՀ-ում բոլորովին նոր ապահովագրական համակարգի ներդրման համար:

Ապահովագրության դերն ու նշանակությունը առավելապես մեծանում է անցման ժամանակաշրջանում, որի պայմաններում այն հանդես է գալիս որպես հասարակության սոցիալ-տնտեսական կայունության երաշխավորող՝ բարելավելով երկրի վիճակը ինչպես միկրոտնտեսության, այնպես էլ մակրոտնտեսության մակարդակներում:

ԱՏՍ ապահովագրության տեղն ու դերը ՀՀ ապահովագրական համակարգում

ՀՀ ապահովագրական շուկայում ավտոտրանսպորտային միջոցների (ԱՏՍ) ապահովագրության տեղն ու դերը ավելի պատկերավոր հասկանալու համար փորձենք կատարել վերջին մի քանի տարիների որոշակի վերլուծություններ:

Հարկ է նշել, որ գոյություն ունեցող շուկայում ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունն ունի իր ուրույն տեղը, և ապահովագրությանը քիչ թե շատ ծանոթ քաղաքացին ծանոթ է նաև ապահովագրության այս ձևին: Ասվածի ապացույց է հանդիսանում նաև այն, որ ներկայումս ՀՀ-ում գործունեություն ծավալող բոլոր ապահովագրական ընկերություններն ունեն ինչպես ցամաքային տրանսպորտային միջոցների ապահովագրության (Կասկո), այնպես էլ՝ երրորդ անձանց նկատմամբ տրանսպորտային միջոցների սեփականատերերի քաղաքացիա-

կան պատասխանատվության կամավոր, ինչպես նաև պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) ձևերի իրականացման թույլտվություն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է լիցենզավորված, գործունեություն իրականացնող և ԱՏՄ ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների թվաքանակը 2002-2012 թվականներին:

Աղյուսակ 1

ՀՀ-ում լիցենզավորված, գործունեություն իրականացնող և ԱՏՄ ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների թվաքանակ¹

	31.12. 2002	31.12. 2003	31.12. 2004	31.12. 2005	31.12. 2006	31.12. 2007	31.12. 2008	31.12. 2009	31.12. 2010	31.12. 2011	31.12. 2012
Լիցենզավորված ընկերությունների քանակը	23	22	26	23	15	10	12	11	12	11	8
Գործունեություն իրականացնող ընկերությունների քանակը	19	19	21	20	15	10	11	11	12	9	7
Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն իրականացնող ընկերությունների քանակը	16	16	18	17	14	9	10	10	11	9	7

Այժմ ներկայացնենք ԱՊՊԱ ոլորտի որոշ կարևոր տվյալներ և դրանց դինամիկան 2011թ. հունվարի 1-ից մինչև 2013թ. մարտի 31-ը:

Աղյուսակների տվյալներից երևում է, որ 2011թ. ընթացքում առկա է եղել 392 722 գործող ԱՊՊԱ պայմանագիր, որից «Գարանտ Լիմենս» ԱՓԲԸ-ի մասնաբաժինն ընդհանուր ցուցանիշի մեջ կազմել է 6,87%, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 17,24%, «Կասկադ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 6,28%, «Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ-ի մասնաբաժինը՝ 11,35%, «Ռասկո» ԱՄՊԸ-ի մասնաբաժինը՝ 6,27%, «Ռեսո» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 14,95%, «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 33,06%, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 3,95%: Հաշվեգրված ապահովագրական վճարները կազմել են 14 804 227 հազ. դրամ, իսկ բավարարված և վճարված ընդհանուր գումարը կազմել է 5 561 871 հազ. դրամ: Այդ ցուցանիշները 2012թ. փոփոխվել են՝ կազմելով համապատասխանաբար 390 266 գործող ԱՊՊԱ պայմանագիր, որից «Գարանտ Լիմենս» ԱՓԲԸ-ի մասնաբաժինն ընդհանուր ցուցանիշի մեջ կազմել է 7,47%, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 20,91%, «Կասկադ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն չի կնքել ԱՊՊԱ պայմանագրեր, «Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ-ի մասնաբաժինը՝ 12,07%, «Արմենիա Ինշուրանս» ԱՄՊԸ-ի մասնաբաժինը՝ 6,93%, «Ռեսո» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 15,17%, «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 31,01%, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 6,4%: Պայմանագրերի գծով հաշվեգրված ապահովագրական վճարները կազմել են՝ 15 130 857 հազ. դրամ, իսկ բավարարված և վճարված ընդհանուր գումարը՝ 9 169 720 հազ. դրամ: 2013թ. առաջին եռամսյակում եղել է 367 860 գործող ԱՊՊԱ պայմանագիր, որից «Գարանտ Լիմենս» ԱՓԲԸ-ի մասնաբաժինն ընդհանուր ցուցանիշի մեջ կազմել է 5,52%, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 21,42%, «Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ-ի մասնաբաժինը՝ 13,11%, «Արմենիա Ինշուրանս» ԱՄՊԸ-ի մասնաբաժինը՝ 5,88%, «Ռեսո» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 15,12%, «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 30,59%, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը՝ 8,3%: Պայմանագրերի գծով հաշվեգրվել է 7 383 627 հազ. ՀՀ դրամ ապահովագրավճար, իսկ վճարվել է 2 763 663 հազ. ՀՀ դրամ ապահովագրական հատուցում: Բերված տվյալներից հետևում է, որ եթե 2011թ. բավարարված և վճարված ընդհանուր գումարը կազմել է հաշվեգրված ապահովագրական վճարների 37,56%-ը, ապա 2012թ. այդ ցուցանիշը կազմել է 60.6%, իսկ 2013թ. առաջին եռամսյակում՝ 37.42%:

¹ ՀՀ կենտրոնական բանկ:

ԱՊՊԱ ոլորտի առանձին տվյալները ըստ ապահովագրական ընկերությունների և Բյուրոյի՝ 2011թ. հունվարի 1-ից 2011թ. դեկտեմբերի 31-ը

Ընկերության անվանումը	Տ/Մ-ների քանակ, որոնց վերաբերյալ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ առկա է գործող ԱՊՊԱ պայմանագիր	Հաշվեգրված ապ. վճարներ (հազ. դրամ)	Վերադարձված կամ վերադարձման ենթակա ապ. վճարներ (հազ. դրամ)	Հատուցում ստանալու համար ներկայացված դիմումների քանակ	Կարգավորված դիմումներ						ՉԱՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	ՏԶՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	ՆԶՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	Ապ. հատուցումների կարգավորման նպատակով կատարված ուղղակի ծախսեր (հազ. դրամ)
					Բավարարված և վճարված		Բավարարված, սակայն դեռևս չվճարված		Հատուցումից հրաժարվելու մասին դիմումների քանակ	Մերժված դիմումների քանակ				
					Քանակ	Ընդհանուր գումար (հազ. դրամ)	Քանակ	Ընդհանուր գումար (հազ. դրամ)						
Գարանտ-Լիմենս	26 973	1 028 441	23 480	2 023	1 966	465 119	25	2924	0	7	85 275	55 206	65 290	18726
Ինգո Արմենիա	67 700	2 572 023	50 881	4 662	4 339	1 018 633	26	7 705	27	170	225 405	99 714	109 409	11 812
Կասկադ Ինշուրանս	24 689	888 189	16 793	1 429	1 362	331 953	63	15 141	308	36	91 527	10 741	100 889	136
Նաիրի Ինշուրանս	44 571	1 946 336	29 015	3 156	2 828	605 660	59	16 546	78	26	229 046	36 102	94 194	5 641
Ռասկո	24 643	876 140	13 501	1 383	1 208	257 744	0	0	9	26	134 265	18 148	101 943	3281
Ռեսո	58 737	1 984 975	28 520	3 358	3 041	706 110	37	7 448	13	25	229 618	44 037	165 414	1 778
Ռոսգոսստրախ Արմենիա	129 865	4 871 878	111 482	9 319	8 503	1 816 666	129	32 313	33	53	442 774	113 329	353 432	64 162
Սիլ Ինշուրանս	15 544	636 245	14 902	1 719	1 510	261 460	52	10 526	3	2	53 487	31 978	46 532	1 268
Բյուրո	-	-	-	188	164	98 526	1	240	3	4	-	-	79 377	2 672
Ընդամենը	392 722	14.804.227	288 574	27 197	24 921	5 561 871	392	92 842	474	349	1 491 397	409 255	1 116 479	109 475

360

ԱՊՊԱ ոլորտի առանձին տվյալները ըստ ապահովագրական ընկերությունների և Բյուրոյի՝ 2013թ. հունվարի 1-ից 2013թ. մարտի 31-ը

Ընկերության անվանումը	Տ/Մ-ների քանակ, որոնց վերաբերյալ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ առկա է գործող ԱՊՊԱ պայմանագիր	Հաշվեգրված ապ. վճարներ (հազ. դրամ)	Վերադարձված կամ վերադարձման ենթակա ապ. վճարներ (հազ. դրամ)	Հատուցում ստանալու համար ներկայացված դիմումների քանակ	Կարգավորված դիմումներ						ՉԱՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	ՏԶՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	ՆԶՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	Ապ. հատուցումների կարգավորման նպատակով կատարված ուղղակի ծախսեր (հազ. դրամ)
					Բավարարված և վճարված		Բավարարված, սակայն դեռևս չվճարված		Հատուցումից հրաժարվելու մասին դիմումների քանակ	Մերժված դիմումների քանակ				
					Քանակ	Ընդհանուր գումար (հազ. դրամ)	Քանակ	Ընդհանուր գումար (հազ. դրամ)						
Գարանտ-Լիմենս	29 183	1 081 392	22 838	3 552	3 466	711 328	101	32 149	68	19	162 305	41 916	94 835	611
Ինգո Արմենիա	81 638	3 252 959	98 811	9 930	10 644	2 142 316	121	24 957	107	56	484 766	116 956	158 339	13 514
Կասկադ Ինշուրանս	-	-	8 618	769	566	132 570	119	46 671	7	93	-	-	-	90
Նաիրի Ինշուրանս	47 109	1 859 054	53 758	4 979	4 761	998 414	73	19 584	24	48	444 893	59 432	155 340	7 504
Արմենիա Ինշուրանս	27 065	1 030 132	30 298	2 843	2 782	556 916	4	212	7	50	229 250	34 504	125 796	7 151
Ռեսո	59 236	2 215 366	49 168	5 980	5 668	1 172 654	37	8 064	15	76	553 027	72 876	228 892	47 909
Ռոսգոսստրախ Արմենիա	121 037	4 617 904	159 927	14 403	14 109	2 855 681	77	22 329	42	121	1 001 557	164 371	308 559	100 858
Սիլ Ինշուրանս	24 998	1 074 051	21 272	3 399	3 445	578 777	94	20 726	7	9	247 786	32 823	69 776	422
Բյուրո	-	-	-	256	220	21 064	9	1 706	-	3	-	-	158 765	3 251
Ընդամենը	390 266	15 130 857	444 690	46 111	45 661	9 169 720	635	176 398	277	475	3 123 584	522 878	1 300 302	181 309

Ա ՊՊԱ ոլորտի առանձին տվյալները ըստ ապահովագրական ընկերությունների և Բյուրոյի՝ 2012թ. հունվարի 1-ից 2012թ. դեկտեմբերի 31-ը

Ընկերության անվանումը	Տ/Մ-ների քանակ, որոնց վերաբերյալ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ առկա է գործող ԱՊՊԱ պայմանագիր	Հաշվեգրված ապ. վճարներ (հազ. դրամ)	Վերադարձված կամ վերադարձման ենթակա ապ. վճարներ (հազ. դրամ)	Հատուցում ստանալու համար ներկայացված դիմումների քանակ	Կարգավորված դիմումներ						ՉԱՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	ՏՉՊՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	ՆՉՊՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	Ապ. հատուցումների կարգավորման նպատակով կատարված ուղղակի ծախսեր (հազ. դրամ)
					Բավարարված և վճարված		Բավարարված, սակայն դեռևս չվճարված		Հատուցումից հրաժարվելու մասին դիմումների քանակ	Մերժված դիմումների քանակ				
					Քանակ	Ընդհանուր գումար (հազ. դրամ)	Քանակ	Ընդհանուր գումար (հազ. դրամ)						
Արմենիա Ինշուրանս	21 645	371 802	6 830	760	785	156 677	14	2 914	0	21	409 046	34 492	99 872	1 747
Գարանտ-Լիմեյթեդ	20 319	454 602	7 840	867	884	191 085	179	44 912	0	0	406 485	46 611	62 666	434
Ինգո Արմենիա	78 799	1 800 720	41 108	3 125	3 255	658 501	27	10 729	13	16	1 413 183	128 981	157 139	526
Նաիրի Ինշուրանս	48 233	950 790	21 213	1 477	1 449	273 720	77	13 264	0	18	968 783	61 921	141 190	1 685
Ռեսո	55 633	1 045 524	21 927	1 841	1 826	363 048	74	14 744	0	18	1 118 625	74 887	171 779	4 721
Ռոսգոսստրախ Արմենիա	112 694	2 151 243	55 637	4 582	4 669	878 887	131	48 418	11	21	2 073 724	167 097	161 682	31 664
Սիլ Ինշուրանս	30 537	608 946	12 188	1 072	1 021	189 361	68	11 088	4	0	586 489	34 388	77 416	103
Բյուրո	-	-	-	75	58	52 384	3	2 624	3	5	-	-	168 074	1 060
Ընդամենը	367 860	7 383 627	166 760	13 799	13 947	2 763 663	573	148 693	31	99	6 976 335	548 377	1 039 818	41 941

361

2-4 աղյուսակների աղբյուրը՝ Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո, www.paap.am

Ծանոթագրություն. ՉԱՊ՝ յուրաքանչյուր պայմանագրի գծով հաշվարկված չվաստական ապահովագրավճարների պահուստի հանրագումար:
 ՏՉՊՊ՝ տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների պահուստ:
 ՆՉՊՊ՝ ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների պահուստ:

Սկսած 2013թ. հունվարի 1-ից ԱՏՄ-ից օգտվող այն քաղաքացիները, ովքեր 2012թ. ավտոճանապարհային պատահար չեն ունեցել, օգտվում են ապահովագրավճարների 3% զեղչից: Ներկայումս քննարկվում է 2014թ. սկսած բոնուս-մալուս համակարգի կիրառման հարցը, այսինքն՝ 2013թ. կնքված ԱՊՊԱ պայմանագրերով մեկ տարվա ընթացքում մի քանի անգամ ավտոճանապարհային պատահար ունեցած վարորդներից գանձվող ապահովագրավճարը կարող է ավելանալ, իսկ 2013թ. ավտոճանապարհային պատահար չունեցած վարորդներից գանձվող ապահովագրավճարը կարող է նվազել, ինչը, մեր կարծիքով, որոշ չափով կնվազեցնի ճանապարհատրանսպորտային պատահարները, ավելի ռացիոնալ և խնայողական կդարձնի վարորդների վարքագիծը, ինչպես նաև կբարձրացնի ապահովագրական ընկերությունների գործունեության արդյունավետությունը (շահութաբերությունը): ԱՏՄ-ի համակարգի արդյունավետության բարձրացման լուրջ ռեզերվ է հանդիսանում կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրումը, ապահովագրող-ապահովադիր կողմերի միջև իրավունքների և պարտավորությունների հստակեցումը, ինչպես նաև նրանց միջև տնտեսական պատասխանատվության այնպիսի գործիքակազմի կիրառումը, որը կբխի կողմերի միջև փոխադարձ շահերի հաշվառումից, տնտեսական պատասխանատվության նոր համակարգի ձևավորումից, որը կբխի ինչպես ապահովագրվողի, այնպես էլ ապահովագրողի հնարավորությունների լիարժեք օգտագործումից:

Армен Маркосян

Формирование системы ОСАГО и тенденции ее развития в РА

Аннотация

В статье рассмотрены предпосылки возникновения, место и значение обязательного страхования автогражданской ответственности (ОСАГО) - одной из разновидностей системы страхования в РА. Сравнительный анализ приведенного в статье богатого цифрового материала позволил получить общее представление о страховых компаниях по ОСАГО, а также о состоянии рынка ОСАГО в целом. Представлены применяемые в сфере новшества, а также проекты, находящиеся на стадии обсуждения .

Armen Markosyan

CMTPLI system forming and development patterns in the Republic of Armenia

Abstract

The article presents one of the lessons of insurance market: the forming, place and the role of Compulsory Motor Third Party Liability Insurance (CMTPLI) in the insurance system of Armenia. The article provides various data that allow comparing the performance of different insurance companies engaged in CMTPLI market in a specific timeframe, and identifying the CMTPLI market trends. The article presents the new techniques and practices utilized by the market players, and the projects that are still under consideration.

TATOUL MANASSERIAN

Doctor of Sciences in Economics

Lead Research Associate

M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences of the Republic of Armenia

ECONOMIC PRECONDITIONS OF DEMOGRAPHIC SECURITY

Demographic security is an essential part of economic security and deals with the reduction and elimination of threats related to the structure and changes in human population. In particular, it deals with overpopulation, aging, graying, urbanization, migration, brain drain, zero population growth (ZPG), and others, to name a few. Demographic security is in an interdependent relationship with human security, food security, energy security, environmental security, and other components of economic and national security.

Population growth trends

Human population had been reproduced six times more on Earth starting the year 1800 (1). It began to multiply fast at some stage during the Industrial Revolution. The absolute number of people in the world was around 500 million in 1650, and two centuries were required before it became twice more. After 80 years – in 1930 the number of people turned to two billion (2), in 1950 this number was around 2.5 billion (3), and less than 40 years took for approaching four billion. Presently, 6.7 billion inhabit the world (4) and by adding more than 215,000 people to the world's population daily according to one source (5) and 95 million annually according to another (6), or 800 million people in a decade (7), it may end up with 8.2 billion people in 2025. Eighty five percent of this number will reside in today's less developed countries (8). This speedy growth puts significant burden on the land, thus reducing the space for wild plants, animals, fish and birds. Also, it becomes tougher to open new jobs, provide better conditions for living, including various social benefits especially in less developed parts of the world taking into account that the richest 20 percent of humans make 83 percent of gross world product (GWP) whereas 20 percent of the poorest people manage to make only 1 percent (9). And this trend is less likely to change significantly in the years to come.

Overpopulation

It is a local trend that turned into a global concern and is considered to be among major threats to demographic security. Moreover, many regional problems such as growing nationalism, racism, ethnic and religious conflicts, increasing of military spending, environmental degradation, polarization of society, as well as global social and political problems are being presented as direct consequences of non-controlled human fertility.

Graying, aging, ZPG

Interestingly many of mentioned consequences are also taking place in many developed nations (the United States, Japan, many EU countries), where the fertility rates are extremely slow and the latest achievements of science and technologies result in longer and better life, "birth dearth", and "graying" societies, thus provoking conflicts between different generations, between retired elderly people with chronic diseases and young working people who provide means to support social security and Medicare policies (10). The conditions are socially even worse in those developed nations where the number of births and deaths are more or less equal and thus close to zero population growth. It has been estimated that the share of people below fifteen years is reducing and the share of those above retirement age and benefiting from longer life expectancy is growing. In such OECD countries as Germany, Italy, Spain, Denmark, Sweden, the portion under

fifteen and over sixty-five is nearly equal, in others – over 14 percent of the population is beyond 65 and only 20 percent is under 15 (11). More and more people will receive pension and medical benefits while less young people will have to work harder to pay taxes for the benefits of elderly citizens. It is the estimate of OECD that in 2030, 27 percent of the population of Switzerland and 26 percent of the population of Germany will be over 65. 20 percent of the population in the United States and Japan will be over 65 (12). In sum, graying trend will change the aged dependency ratio (the ratio of those over 65 compared to those of working age of 15-65) globally: in the United States this ratio will reach .32 from present .20 by 2030, in Switzerland the ratio will rise from .21 to .47, and in Germany from .22 to .44 (13). The population of Japan is aging faster than that of the United States. The share of Japan's GDP released to social expenditures is expected to grow from 14 to 27 percent between 1983 and 2025 (14). Paradoxically, aging is not only typical for developed countries. Regardless the efforts of Chinese government to implement a one-child family policy, it is estimated that by the year 2040, 35 percent of people will be over sixty years that is 5 times more of present ratio (15). Thus, aging population and graying societies turn into equally disturbing concerns for both developing and developed nations.

One of the underlying issues of demographic security is the maximum number of people that can be sustained in the world. Recent trends reveal signs of degeneration or as some forecasts suggest – population default in case of a disaster to the extent of the Black Death that reduced the population of Europe by half in the fourteenth century (16). In addition, food shortage may be among the limiting factors to further growth of global population. In mid 1990s the global prices of wide grain increased by 50%, while the global reserves of grain had dropped to a record low of 49 days (the previous lowest level was in 1973 when reserves were only for 55 days) (17). This in turn illustrates, the threatening trend towards decline of per capita grain production, as well as seafood capture, and the reduction of per capita irrigated area that may allow to feeding only 750 million people more in coming years (18). Today more than a billion people are hungry, and have no stable sources to earn food.

Some people believe that in parallel with the improvement of the quality of life for poor people human birth rates will decrease as it had happened in Germany, then in some CIS countries. However, economic growth in China, Turkey, and many others did not lower fertility rates, but had increased them (19).

Wars

It is hard to underestimate the role of wars in decelerating the world population growth. According to some calculations, in 1950 – 1962 there were around ten wars worldwide with one thousand and more deaths. During the next twenty years this number had almost doubled, then mushroomed fast in 1983 up to thirty and did not decrease since then, including fifty and more countries particularly in 1990-1994 (20). Deaths are not the only consequence of wars. All armed conflicts end up with high number of refugees. It has been estimated that the registered refugee numbers have grown from 15 million people at the beginning of the decade to 23 million people. There were around 2.5 million refugees since 1950 up to 1975 in addition to 27 million non-registered refugees in different parts of the world and more than 10 million illegally migrated people. One of the harmful outcomes of dramatic political and economic changes in developing nations and countries with transition economies are the so called “economic refugees” with an approximate number of 100 million people (21) compelled to look for better conditions for living and social welfare. There are some other limiting causes of population growth deceleration in the world such as communicable diseases (HIV/AIDS, malaria, tuberculosis, etc.), high mortality rates and diminishing births in newly independent states, industrialized nations and Asian countries.

Environment, AIDS

Continuous search for more resources through exploiting mother nature carry remarkable and deepening destruction on the biosphere, many kinds of flora and fauna had disappeared, others had been harmed significantly. Demographic changes bring to further corrosion of the ozone layer, global warming, acid rain, and growing vulnerability to infection and fatal viruses.

Overpopulation, ZPG, graying, aging, urbanization, and other demographic trends have their diverse impact on environment. High fertility rates demand sufficient food, infrastructure and other resources to sustain adequate quality of life. However, based on real developments, it becomes obvious that high rates of population growth result in essential dissonance with the resources of used land, running to ecological relapse, high exposure to different illnesses, civil, ethnic and other conflicts (22). In case required means are not available locally attempts to attain resources somewhere else abroad becomes quite explicable (23). These occurrences are being aggravated taking into consideration poverty levels in developing countries. Interestingly, more than the half of population in less developed countries currently lives in environmentally vulnerable regions (24). Notwithstanding endless efforts of local and international human health related organizations number of diseases continue to threaten the lives of people worldwide. Given fast growing number of global population this struggle becomes more and more complicated and less effective in terms of the number of infected people and victims of illnesses. Microorganisms become a subject of particular concern (25). Among special threats to human health are chemicals, genetically modified organisms (GMOs) and pesticides (26). According to World Health Organization data in addition to other risky chemicals the mammary glands of each mother in the world are presently infiltrated with DDT and that 25 percent of all humans on Earth are vulnerable to chronic intestinal parasitic infections (27). Other data warns that 2.4 million people die from AIDS annually that is one twentieth part of all deaths from different causes (28). Evidently there are fewer chances to survive in this unprecedented battle with microbes-bacteria, viruses, infections and diseases (29).

Urbanization, migration, refugees

Human mobility is among key features and current trends in the ever changing world. People changing their birthplace for various reasons are not always welcomed by the host nations, and do frequently face discrimination, creating stress, hostility, political instability, and tensions whether they change the towns within the same country or cross the national borders (30). This is the case when migrants move from South to North or from East to West. The differential population growth rates like the rates of some Muslim and non-Muslim neighboring countries are among other challenges for demographic security resulting in significant relocation of people from one country to another. Majority of people in more than 40 countries is Muslim and approaching to the half of population in another seven. Comparative analysis suggests that the annual rates of growth in mentioned countries are almost three percent whereas their neighboring less developed nations registered 2.3 percent growth rates (31). A decade prior to the collapse of Soviet Union, the population of the Russia had grown at 0.7 percent annually, while the populations of such Muslim states as Turkmenistan, Uzbekistan, Kyrgyzstan, and Tajikistan had been growing at 2-3 percent annually. Moreover, 17 percent of the USSR population was Muslim and this part was growing at four times more rates than those of Russians (32). It has been estimated that in 2025, there will be six times more people living in the South compared to the number of inhabitants in the industrialized North. (33) There is also the following observation on demographic issues related to the trends in North and South: it appears that the actual development aid may not be passing through North to South, but vice versa. Another assumption is that developing countries may have been subsidizing the developed countries totaling hundreds of billions of dollars annually, in particular, \$400 billion net goes from Latin America to the industrialized nations, and according to the UNDP data the total "aid" from the South to the North of \$500 billion a year; whereas the overall aid to the developing nations from the North is around fifty billion dollars (34).

High fertility rates in rural areas of developing countries force many people to move to cities for anticipated social welfare and economic progress. The same is true while crossing the national borders in search of better conditions for life, therefore the number of political, economic refugees, and legal, illegal migrants is always difficult to estimate. Despite the efforts of the developed nations in North America and European Union (EU) to improve the immigration laws and strengthen the border control, however, around 300,000 people illegally cross the border and decide to stay in the United States each year (35), and almost a million more into EU (36). Aside from illegal migrants millions of migrants cross national borders quite legally each year and there are many people employed by legal contracts outside their homeland. Mobility is also typical inside developing countries – from towns to cities, and is defined as an increasing process of urbanization with its social, economic, environmental, political and other consequences to the nation, region and the world economy. According to official data 36 percent of people on Earth were living in cities in mid 1960s. This indicator had gone up to fifty in early 1990s. (37) Intensive process of urbanization results in expanding "mega-polices" and "mega-cities." Some forecasts draw the following demographic picture for the year 2034: Mexico City and Shanghai will approach 39 million, Beijing 35 million, Sao Paulo 32 million and Bombay 31 million. (38) This in turn requires providing adequate housing, sanitation, transportation, jobs, security, and other amenities, maintaining order and preventing epidemics. In the year 2025 some expect to count over five billion people living in urban areas with a big number of them in developing countries (39) and with an estimated half of the developing nations poor people will reside in urban areas. (40) Finally, as a consequence of urbanization some 476,000 hectares (41) of agricultural land in developing countries passes to urban possession (42).

Demographic threats and Malthusian theory

In late 18th century Thomas Malthus suggested that the number of people need to be in harmony and balance with food supplies because all humans actually follow similar laws as all other plants and animals (43). However, like other representatives of the Mother Nature people are also unable to limit fertility rates, eradicate hunger, poverty, illnesses, wars and only the nature's self-regulating functions may create anticipated balance in numbers. One of the disturbing outcomes of overpopulation is the growing poverty around the world. The number of hungry people is not decreasing, but growing daily. Many people are seriously concerned about the future – considering difficulties in feeding people today, essential cut of natural resources, rise of pollution, and ecological relapse expressed in global warming, acid rain, ozone layer erosion, reducing forest zones with more inhabitants in the world. One of the major concerns continues to be the scarcity of resources for sustainable development and the growing gap between rich and poor people.

Some predict that the human population will reach nine billion by the year 2045 (44), others see it as early as before 2035 (45), and another forecast based on present fertility rates estimates 13.7 billion in 2095 (46). Finally a minimum number of 7.5 billion and a maximum of 9 billion in 2050 have been calculated by the United Nations and U.S. Census Bureau. (47)

Taken actions

Several efforts were made to solve demographic security issues globally. In 1974 World Population Conference in Bucharest, Romania firstly demonstrated political fragmentation between North and South. Developed countries attempted to pass the World Population Plan of Action with clear indication of family planning principles. Limiting high fertility rates was a central issue at 1984 International Population Conference in Mexico City, as well as at the Rio de Janeiro "Earth Summit" of 1992 and the 1994 Cairo conference. All projected actions have failed since the religious groups, gender-related organizations and political leaders from less developed nations strongly opposed the adoption of resolutions for immediate action. In 1989, however almost eighty countries committed to give four percent of developed nations' foreign aid for family planning and

had adopted Amsterdam Declaration with a jointly drafted plan to balance the global birth rates and provide contraceptives to the three quarters of women globally. In 1994 the U.N. International Conference on Population and Development again called for firm action on family planning. Since the global forums are not always fruitful in terms of actions, developed nations attempt to solve global problems and have initiated several projects. Kennedy Administration started to promote population growth limitation with adequate funding from the US state budget and supported the United Nations Population Fund with relevant programs in 130 countries. Later administrations continued to fight with demographic threats by spending needed funds and expanding links of cooperation with other interested parties (48). Collective actions are needed to keep people from moving to already unsafe and environmentally risky territories and stimulating economic growth in rural areas.

Solutions

As it can be seen from actions taken previously anticipated solutions become more complicated. Some suggest that two hectares (49) per person are needed to maintain average person in a developed country (50). Consequently more than twelve billion hectares are needed to support current population number. Arms race spending also cut the funding that could otherwise be directed to solve demographic issues and improve social welfare. Arable land and environmentally vulnerable territories need to be preserved for the years and generations to come and keep them away from solely commercial interests. Risky chemicals and pesticides need to be restricted for food processing industries worldwide. Proper actions by local governments and international structures may minimize 40 million unintentional pregnancies annually, stop 70,000 annual deaths from insecure abortions, most of them taking place in less developed countries (51). Tax deductions for dependents also work in the opposite direction of limiting fertility rates (52). For solving issues related to aging and graying population countries like Japan try to develop robots to replace workforce that will decrease in coming years and other nations try to pass a growing portion of tax burden to the shoulders of immigrants in order to feed elderly people in host countries (53). As it can be seen from the contemporary trends, reduction and elimination of many demographic threats may not be feasible only due to the measures taken by local governments. Demographic security largely depends on coordinated regional and global efforts and international cooperation.

Bibliography:

1. Bleier, Ronald, Full House? Is lower population growth due to misery? <http://desip.igc.org/Monster.html>
2. Pirages, Dennis, **Demographic Change and Ecological Security**, Environmental Change and Security Project Report, Woodrow Wilson International Center for Scholars, Spring 1997
3. Bleier, Ronald, Full House? Is lower population growth due to misery? <http://desip.igc.org/Monster.html>
4. Pirages, Dennis, **Demographic Change and Ecological Security**, Environmental Change and Security Project Report, Woodrow Wilson International Center for Scholars, Spring 1997
5. Bleier, Ronald, Full House? Is lower population growth due to misery? <http://desip.igc.org/Monster.html>
6. Irvine, Sandy "The Cornucopia Scam: Contradictions of Sustainable Development, Part 2: Misconceptions About Fundamental Causes.", *Wild Earth, Winter 1994/95, pp. 72-82*
7. Michael Tobias, *World War III: Population and Biosphere At the End of Millennium*, Bear & Company, Santa Fe, New Mexico, 1994.
8. 1996 World Population Data Sheet.
9. United Nations Development Program, *Human Development Report 1995*, New York: Oxford University Press, 1995
10. Michael Boskin, the former Chairman of the U.S. Council of Economic Advisers
11. Figures from "1996 World Population Data Sheet."
12. *Aging Populations: The Social Policy Implications*, Paris: OECD, 1988.
13. *Aging Populations: The Social Policy Implications*.

14. Linda Martin, "The Graying of Japan," *Population Bulletin*, July, 1989.
15. Jean-Claude Chesnais and Wang Shuxin, "Population Aging, Retirement Policy and Living Conditions of the Elderly in China," *Population* (Volume 2); H. Yuan Tien et al., "China's Demographic Dilemmas," *Population Bulletin*, June, 1992.
16. Bleier, Ronald, Full House? Is lower population growth due to misery? <http://desip.igc.org/Monster.html>
17. Bleier, Ronald, Feeding the Population Monster, A review essay on a book of Michael Tobias World War III: Population and the Biosphere At the End of the Millennium, Bear and Company, Santa Fe, New Mexico, 1994
18. Brown, Lester, *Tough Choices*, 1996
19. Michael Tobias, World War III: Population and Biosphere At the End of Millennium, Bear & Company, Santa Fe, New Mexico, 1994.
20. Michael Renner, *Fighting for Survival: Environmental Decline, Social Conflict, and the New Age of Insecurity*, Worldwatch publication, 1996
21. United Nations figures cited in Hal Kane, *The Hour of Departure: Forces that Create Refugees and Migrants*, Washington: Worldwatch Institute, 1995.
22. Thomas Homer-Dixon, *On the Threshold: Environmental Changes as Causes of Acute Conflict, International Security*, Fall, 1991
23. Alfred Crosby, *America's Forgotten Pandemic: The Influenza Epidemic of 1918*, Cambridge: Cambridge Univ. Press, 1990.
24. *World Resources 1992-93*, New York: Oxford University Press, 1992.
25. Laurie Garrett, *The Coming Plague: Newly Emerging Diseases in a World out of Balance*, New York: Farrar, Straus and Giroux, 1994.
26. Dennis Pirages, Demographic Change and Ecological Security, Woodrow Wilson International Center for Scholars Environmental Change and Security, Project Report Spring 1997.
27. World Health Organization, *The World Health Report 1995* (Geneva: World Health Organization, 1995) Chapter 1.
28. John Bongaarts, "Global Trends in AIDS Mortality," *Population and Development Review* (March, 1996)
29. Emerging Viruses, Emerging Threat, *Science*, January 19, 1990.
30. Johan Galtung. "Cultural Violence." *Journal of Peace Research* 27.3, 1990.
31. John Weeks, "The Demography of Islamic Nations," *Population Bulletin* (December, 1989)
32. Central Intelligence Agency, *USSR: Demographic Trends and Ethnic Balance in Non-Russian Republics*, Washington: April, 1990
33. 1996 World Population Data Sheet.
34. Michael Tobias, World War III: Population and Biosphere At the End of Millennium, Bear & Company, Santa Fe, New Mexico, 1994.
35. "The Floodgates are Bursting," *Business Week*, Sept. 9, 1991; Myron Weiner, *The Global Migration Crisis: Challenge to States and to Human Rights*, New York: HarperCollins, 1995.
36. Susan Kalish, "Immigration: IRCA Tops Out," *Population Today*, November, 1992.
37. The World Bank, *World Development Report 1992*, New York: Oxford Univ. Press, 1992.
38. Leon Bouvier, "Planet Earth 1984-2034," *Population Bulletin*, Feb., 1984.
39. *World Resources 1996-97*.
40. *World Resources 1988-89*, 1996-97.
41. 1 hectare = 2.47 acres
42. *World Resources 1996-97*.
43. Thomas Malthus, *An Essay on the Principle of Population*, London, 1798.
44. Thomas F. Homer-Dixon, "Environmental Scarcities and Violent Conflict: Evidence from Cases", Toronto, 1994.
45. Bleier, Ronald, Feeding the Population Monster, A review essay on a book of Michael Tobias World War III: Population and the Biosphere At the End of the Millennium, Bear and Company, Santa Fe, New Mexico, 1994
46. U.S. Census Bureau Data
47. United Nations and U.S. Census Bureau Data
48. Peter Donaldson, "On the Origins of the United States Government's International Population Policy," *Population Studies*, November, 1990.
49. about 5 acres
50. Sandy Irvine, *The Cornucopia Scam: Contradictions of Sustainable Development, Part 2: Misconceptions About Fundamental Causes*, Wild Earth, Winter 1994/95.
51. Bleier, Ronald, Full House? Is lower population growth due to misery? <http://desip.igc.org/Monster.html>

52. Bleier, Ronald, Feeding the Population Monster, A review essay on a book of Michael Tobias World War III: Population and the Biosphere At the End of the Millennium, Bear and Company, Santa Fe, New Mexico, 1994
53. Fred Hiatt, "Japanese Robots Reproducing Like Rabbits," *The Washington Post* (January 2, 1990).

Թարուլ Մանասերյան

Ժողովրդագրական անվտանգության տնտեսական նախադրյալները

Ամփոփագիր

Ժողովրդագրական անվտանգությունը հանդիսանում է տնտեսական անվտանգության բաղկացուցիչ մասը և պայմանավորված է բնակչության կառուցվածքի և թվաքանակի փոփոխությունների հետ կապված սպառնալիքների կրճատմամբ և վերացմամբ: Մասնավորապես, դա վերաբերում է այնպիսի առանցքային խնդիրների, ինչպես բնակչության տարաբնակեցումն է, «ծերացումը», ուրբանիզացիան, միգրացիան, «ուղեղների արտահոսքը», բնակչության զրոյական աճը (ZPG) և այլն: Ժողովրդագրական անվտանգությունը և սոցիալական, պարենային, էներգետիկ, բնապահպանական և ազգային ու տնտեսական անվտանգության այլ բաղադրիչները փոխկապակցված են: Այդ խնդիրներից շատերը գոյություն ունեն ինչպես Հայաստանում, այնպես էլ տարածաշրջանում: Այս հոդվածում բացահայտվում է թվարկած խնդիրների էությունը նաև համաշխարհային մասշտաբով և վերլուծության է ենթարկվել դրանց ազդեցությունն ինչպես տնտեսության, այնպես էլ պետությունների տնտեսական զարգացման վրա:

Татул Манасерян

Экономические предпосылки демографической безопасности

Abstract

Демографическая безопасность является составной частью экономической безопасности и имеет дело со снижением и устранением угроз, связанных с структурой и изменениями в численности населения. В частности, это относится к проблемам перенаселения, старения, урбанизации, миграции, утечки мозгов, нулевого прироста населения (ZPG) и прочим. Демографическая безопасность и проблемы социальной, продовольственной, энергетической безопасности, охраны окружающей среды, и другие компоненты экономической и национальной безопасности взаимосвязаны. Многие из этих проблем существуют и в Армении, и в регионе. В данной статье выявлена суть перечисленных тем также в мировом масштабе и проанализировано их влияние как на экономику, так и на экономическое развитие государств.

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Մ Գ Ա Ա թղթակից անդամ, Կ. Գ. Դ., պրոֆեսոր
Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,*

ԲԵՆԻԱՄԻՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
ատաջատար գիտաշխատող, Կ. Գ. Դ., պրոֆեսոր*

ԷՐԱ ԲԱԲԱՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
ատաջատար գիտաշխատող, աշխ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԵՐԶՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, Կ. Գ. Թ.*

«ԿԱՆԱՋ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» ԱՆՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անցումը «կանաչ տնտեսությանը» դրական ազդեցություններ կարող է ունենալ տարածա-
շրջանի հարստացման, աղքատության նվազեցման, բնակչության զբաղվածության աստիճանի
վրա, ինչպես նաև պայմաններ կստեղծի երկարաժամկետ տնտեսական բարգավաճման համար:
Տարբեր երկրներում այս ուղղությամբ իրականացված քայլերը հաջող կարող են ընդօրինակել
նաև այլ երկրներում, ուստի դրանց ծանոթ լինելը և վերլուծությունը կարևոր նշանակություն է
ծեռք բերում: Սույն հոդվածը նպատակ ունի ներկայացնել որոշ գաղափարներ և միջոցառումներ,
որոնց իրականացումը, կարծում ենք, կօժանդակի «կանաչ տնտեսությանն» անցման բարձր
արդյունավետություն ապահովելուն: «Կանաչ տնտեսությանն» անցման պայմաններում ներառ-
վելու են՝

- անցման հուսալի գիտելիքային և իրավական հիմքերի ստեղծումը,
- պետական ներդրումների և ծախսերի առաջնությունն այն ոլորտներում, որոնք խթանում
են տնտեսության ճյուղերի վերածումը «կանաչ»-ի, «անկայուն» ոլորտներում ծախսերի
խելամիտ կրճատումը և բնական կապիտալի սպառման խնայողական ռեժիմի կիրառումը,
- հարկային և շուկայական գործիքների կիրառումը սպառողների նախապատվությունների
փոփոխությամբ՝ «կանաչ» ներդրումների ու նորարարությունների խթանման համար,
- նոր տնտեսական համակարգին հարմարվելու նպատակով այնպիսի ներդրումների կատա-
րումը, որոնք կնպաստեն համապատասխան հմտությունների ամրապնդմանն ուսուցման և
կրթության մեջ,
- միջազգային տնտեսական կառավարման նպատակային ամրապնդումը:

Ստորև կներկայացնենք թվարկված պայմանների էությունը և կիրառման գործառնությունների
վերաբերյալ որոշ դատողություններ:

«Կանաչ տնտեսության» անցման¹ կոնկրետ քայլեր այժմ իրականացվում են աշխարհի շատ երկրներում: Կառավարությունները դրանով ձգտում են արագացնել «կանաչ տնտեսության» անցման պայմանների ստեղծումն իրենց երկրում և հնարավորինս շուտ ստանալ ակնկալվելիք արդյունքները: Այսպիսի մոտեցումը կարևորում է յուրաքանչյուր երկրի կառավարման համակարգում որոշակի փոփոխությունների իրականացումը: Փորձենք ներկայացնել նրանցից մի քանիսը, որոնք մեր կարծիքով առավել կարևորություն ունեն.

1. Տնտեսության կառավարման բազմակողմ հիմնավորված համակարգի ստեղծում

Լավ մշակված կարգավորող համակարգը ոչ միայն կարող է սահմանել այն իրավական նորմերը, որոնք նպաստում են դեպի «կանաչ տնտեսության» անցման գործընթացների իրականացմանը, այլ նաև կարող է հեռացնել դրանց խանգարող արգելքները: Կարգավորման համակարգը կարող է կանոնակարգել առավել վնասակար գործունեությունը, որն անհամատեղելի է կայուն զարգացմանը, մշանակել նվազագույն ստանդարտներ, կամ էլ ամբողջությամբ արգելել գործունեության որոշ տեսակներ: Բացի դրանից կարգավորման ճշգրիտ համակարգը նվազեցնում է օրենսդրության փոփոխության պահանջը, ինչպես նաև, գործարար ռիսկը, բարձրացնում է ներդրողների նկատմամբ վստահությունը շուկայում:

Ընկերությունների համար հաճախ ավելի լավ է գործ ունենալ սահմանված և պարտադիր կատարվող ստանդարտների հետ, քան աշխատել անորոշության կամ անբարեխիղճ մրցակցության պայմաններում:

Վարչահրամայական չափորոշիչները շատ դեպքերում խնդրի լուծման ամենապարզ միջոցներն են և չեն վնասում շուկայական գործիքների արդյունավետությանը: Բացի այդ կարգավորման չափորոշիչները կարող են լինել քիչ ծախսատար: Մի շարք իրավիճակներում վարչահրամայական չափորոշիչները հեշտ է գործադրել, և դրանք առաջացնում են քիչ քաղաքական խնդիրներ: Նորմատիվներն ու ստանդարտները կարող են դառնալ արդյունավետ գործիքներ բնապահպանության և կայուն ապրանքների ու ծառայությունների շուկաների ձևավորման ոլորտում նպատակների իրականացման համար: Տեխնիկական ստանդարտները սովորաբար մշակվում և ներդրվում են ազգային մակարդակով, չնայած գոյություն ունեն նաև միջազգային ստանդարտներ, օրինակ՝ այնպիսիք, որոնց նպատակն է էներգաարդյունավետության բարձրացումը, արտանետման սահմանափակումը և, մասնավորապես, այնպիսիք, որոնք կապված են մաքուր զարգացման մեխանիզմի հետ: Այդ պահանջները կարող են ներկայացվել արտադրանքի կառուցվածքին, կոնկրետ հատկություններին կամ աշխատանքային բնութագրերին: Սակայն, ստանդարտները բավարար չեն գործողությունների խթանման և արդեն սահմանված պահանջների կատարելագործման համար՝ ի տարբերություն շատ շուկայական գործիքների, որոնք կարող են դառնալ կայուն կատարելագործման խթան: Կայուն պետական գնումները կարող են աշխուժացնել կայուն ապրանքների և ծառայությունների շուկաները:

Ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում պետական գնումները կազմում են ընդհանուր պետական ծախսերի էական մասը: Օրինակ՝ Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում և Բրազիլիայում պետական գնումները կազմում են ՀՆԱ-ի համապատասխանաբար 35% և 47%-ը:

Կիրառելով կայուն պետական գնումների մեթոդը՝ պետությունը կարող է ձևավորել բարձր և երկարատև պահանջարկ «կանաչ» ապրանքների և ծառայությունների նկատմամբ: Այդպիսի փորձը դրդում է կազմակերպությանը կատարել ավելի երկարաժամկետ ներդրումներ նորարարություններում, իսկ արտադրողներին՝ տնտեսել մասշտաբների հաշվին՝ կրճատելով ծախսերը: Օրինակ, կայուն պետական գնումների ծրագրերն Ավստրիայում, Դանիայում, Ֆինլանդիայում,

¹ Հարությունյան Վ., Եղիազարյան Բ., Բաբայան Է., Թերզյան Հ. «Կանաչ տնտեսության» անցման անհրաժեշտությունը և արդյունավետ ուղիների մշակման ու իրագործման հիմնախնդիրները // «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» (գիտական հոդվածների ժողովածու-1(13)), -Եր., «Անանիա Շիրակացի» ՄՀՀ, 2012:

Գերմանիայում, Նիդեռլանդներում, Շվեյցարիայում և Մեծ Բրիտանիայում թույլ տվեցին կրճատել CO₂-ի արտանետումները միջինում 25%-ով¹:

2. Պետական ներդրումների և ծախսերի գերակայությունը տնտեսության «կանաչ» ոլորտների զարգացման գործում

Սուբսիդիաները, որոնք ներկայացվում են հասարակության հետաքրքրությունների շրջանակներում և ունեն դրական արտաքին ազդեցություն, կարող են լինել էական խթան «կանաչ տնտեսության» անցման համար: «Կանաչ» սուբսիդիաները կիրառվում են տարբեր նպատակներով²:

- անկայուն ակտիվներում և համակարգերում միջոցների սառեցումից խուսափելու համար անհրաժեշտ չափորոշիչների արագ ընդունման համար,
- «կանաչ» ենթակառուցվածքի ձևավորման և «կանաչ» տեխնոլոգիաների ներդրման համար,
- սկզբնական մակարդակում գտնվող «կանաչ» ճյուղերի աջակցման համար:

Հարկային խթանները կարող են նպաստել ձևավորվող «կանաչ տնտեսությունում» ներդրումների կամ մասնավոր կապիտալի կենտրոնացմանը: Նման խթանները կարող են ուղղված լինել ինչպես ապրանքների և ծառայությունների սպառմանը, այնպես էլ արտադրությանը:

Հարկային արտոնությունների մեկ այլ տեսակ է արագացված ամորտիզացիան, որը օգտագործվում է էներգիայի արտադրության խթանման նպատակով: Վերջինս թույլ է տալիս ներդրողին արագ ամորտիզացնել հիմնական ֆոնդերի արժեքը և դրանով կրճատել հարկվող շահույթը: 2005 թվականից Մեքսիկայում³ գործունեություն ծավալող այն երկրներին է թույլ տրվում աշխատել արագացված ամորտիզացիայով, որոնք կատարում են ներդրումներ ենթակառուցվածքներում՝ առանց էկոլոգիայի վրա բացասական ազդեցություն ունենալու:

«Կանաչ տնտեսության» անցման համար բարենպաստ միջավայր ստեղծելու հաջորդ կարևոր պայմանը պետական ծախսերի սահմանափակումն է բնական կապիտալը սպառող ճյուղերում:

Պետության տեսանկյունից սուբսիդիաների տրամադրումը շատ դեպքերում կապված է էական տնտեսական և էկոլոգիական ծախսերի հետ: Ապրանքների գների արհեստական իջեցումը սուբսիդավորման հաշվին բերում է անարդյունավետություն, մեծ քանակությամբ թափոնների և սպառման, որի արդյունք են հանդիսանում արժեքավոր, չվերականգնվող ռեսուրսների պակասուրդը կամ վերականգնվող ռեսուրսների էկոհամակարգերի անկումը: Օրինակ, ձկնորսության ճյուղում համաշխարհային սուբսիդիաները գնահատվում են տարեկան 27 մլրդ ԱՄՆ դոլար⁴, դրա հետ մեկտեղ ապացուցված է, որ այդ սուբսիդիաների 60%-ը վնասում է ամբողջ ճյուղը: Գնահատականների համաձայն ձկնային պաշարների սպառումից առաջացող տնտեսական շահույթը կազմում է 50 մլրդ դոլար տարեկան՝ գրեթե ծովային մթերքների արժեքի կեսը:

Սուբսիդիաները նվազեցնում են «կանաչ» ներդրումների շահութաբերությունը: Երբ սուբսիդավորման պայմաններում «ոչ կայուն» գործունեության որոշ տեսակներ դառնում են էժան կամ նվազ ռիսկային, այդ դեպքում նվազում է «կանաչ» այլընտրանքներում ներդրումների գրավչությունը: 2008 թվականին վառելիքի սպառման սուբսիդավորման ծավալն ըստ գնահատականների կազմել է 557 մլրդ ԱՄՆ դոլար⁵: Եվս 100 մլրդ դոլար կազմել է սուբսիդիաներն արտադրության համար: Ըստ գնահատականների վառելիքի սպառման և արտադրության սուբսիդավորման լրիվ

¹ Collection of Statistical Information on Green Public Procurement in the EU: Collection of Statistical Information on Green Public Procurement in the EU: Report on Data Collection Results. Report on Data Collection Results. Pricewaterhouse Coopers, Significant and Ecofys (2009), pp. 5-7.

² http://www.unep.org/greeneconomy/Portals/88/documents/ger/GER_synthesis_ru.pdf

³ Accelerated Depreciation for Environmental Investment (Depreciación acelerada para inversiones que reportan beneficios ambientales). ОЭСР-МЭА, База данных по изменению климата.

⁴ Sumaila, U.R., Khan, A.S., Dyck, A.J., Watson, R., Munro, G., Tyedmers, P., and Pauly, D. A Bottom-Up Re-estimation of Global Fisheries Subsidies. Journal of Bioeconomics 12: 201-225 (2010), pp. 213, 201-202.

⁵ Analysis of the Scope of Energy Subsidies and Suggestions for the G20 Initiative. ИЭА, ОПЕК, ОЭСР и Всемирный банк (2001), p. 4.

ընդհատումը 2020 թվականին թույլ կտա 5.8%-ով կրճատել համաշխարհային պահանջարկը էլեկտրաէներգիայի նկատմամբ և 6.9%-ով նվազեցնել գոլորշային գազերի արտանետումները:

Սուբսիդավորման համակարգի բարեփոխումը հնարավոր է, եթե այն անցկացվում է մեծ ուշադրությամբ հատկապես բնակչության աղքատ խավերում: Սուբսիդիաները երբեմն հիմնավորվում են նրանով, որ նրանք ձեռնտու են աղքատ տնային տնտեսություններին, սակայն, եթե այդ օգնությունը նպատակաուղղված չէ, ապա ֆինանսավորման հիմնական մասը հաճախ ուղղվում է բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին: Սուբսիդիաների բարեփոխումները հաճախ հանգեցնում են սուբսիդավորվող ապրանքների գների աճին: Ցածր եկամուտ ունեցող խմբերը սովորաբար ստանում են սուբսիդիաների միայն մի փոքր մաս, բայց ծախսում են իրենց հիմնական ապրանքների եկամուտներից շատ՝ ներառյալ օգտակար ապրանքները, ջուրը և էլեկտրաէներգիան: Կապված այդ բարեփոխումների հետ պետք է դիտարկվի աջակցության կարճաժամկետ միջոցառումներ: Բարեփոխումների այդպիսի ռազմավարությունը ենթադրում է աղքատ տնային տնտեսությունների համար նպատակային սուբսիդիաների ներգրավում, կամ էլ այն ոլորտների ֆինանսավորման կառավարում, որոնք պահանջում են պետական ներդրումներ, ինչպիսիք են առողջապահությունը և կրթությունը:

3. Հարկային և շուկայական գործիքների կիրառումը «կանաչ» ներդրումների և նորարարությունների խթանման համար

Հարկային և շուկայական գործիքները կարող են լինել «կանաչ» ներդրումների խթանման արդյունավետ միջոցներ: Առկա էական գնային անհամաչափությունները հաճախ խոչընդոտում են «կանաչ» ներդրումները կամ դրանց հետագա աճը: Տնտեսության մի շարք հատվածներում, օրինակ, տրանսպորտի ոլորտում, այնպիսի բացասական արտաքին ներգործությունները, ինչպիսիք են շրջակա միջավայրի աղտոտումը, առողջական վիճակի վատթարացումը կամ աշխատանքի արտադրողականության անկումը, որպես կանոն, չեն արտացոլվում ծախսերի կազմում, ինչը նվազեցնում է ավելի «կայուն» ապրանքներին և ծառայություններին անցման գրավչությունը: Նման իրավիճակ է ստեղծվում թափոնների պարագայում՝ թափոններից արտադրվող ապրանքի և վերամշակման ծառայության գինը, որպես կանոն, չի արտացոլում թափոնների վերամշակման բոլոր ծախսերը: Այս խնդրի լուծումը կայանում է նրանում, որ ապրանքի կամ ծառայության գնի մեջ ներառվի այդ կողմնակի ծախսերը, կիրառելով ուղղիչ հարկը, վճարը կամ տուրքը կամ, որոշ դեպքերում, այլ շուկայական գործիքները, ինչպիսիք են վաճառքի իրավունքով թույլտվությունները: Հարկերը խթանում են արտանետումների կրճատումը, բնական պաշարների առավել արդյունավետ օգտագործումը և նորարարությունները: Բնապահպանական հարկերը կարելի է բաժանել երկու լայն կատեգորիաների՝ հարկերն ըստ «վճարում է աղտոտողը» սկզբունքի, որոնք զանձվում են արտադրողից կամ սպառողից աղտոտման վայրում, և հարկերն ըստ «վճարում է սպառողը» սկզբունքի, օրինակ՝ բնական պաշարների արդյունահանման կամ օգտագործման հարկերը: Օրինակ, Սինգապուրը, որտեղ 1980-ական թվականներին ներդրվեց աշխարհում առաջին վճարովի ավտոճանապարհների համակարգը, այժմ հանդիսանում է թափոնների վերամշակման և ջրի պակասուրդի խնդիրների լուծման համար գնագոյացման գործիքների կիրառման առաջատարներից մեկը: Պարզվեց, որ աղտոտման համար վճարի ներդրումը նույնպես խրախուսում է նորարարության և նոր տեխնոլոգիաների օգտագործումը, քանի որ ընկերությունները սկսում են փնտրել առավել «մաքուր» այլընտրանքներ: Օրինակ, Շվեդիայում, ազոտի օքսիդների արտանետման համար հարկի ներդրումը հանգեցրեց արտանետումների կրճատման, առկա տեխնոլոգիայի կիրառման էական ընդլայնմանը. մինչև հարկի ներդրումն այն օգտագործել էին ընկերությունների 7%-ը, իսկ ներդրմանը հաջորդող տարում՝ արդեն 62%-ը¹:

¹ Taxation, Innovation and the Environment: Executive Summary. OЭCP (2010), p. 6.

Բնապահպանական հարկերը նպաստում են նոր աշխատատեղերի ստեղծմանը և շրջակա միջավայրի պահպանմանը: Բնապահպանական հարկերը նախատեսված են, որպեսզի իրականացվեն շրջակա միջավայրի աղտոտման և սակավ բնական ռեսուրսների օգտագործման վճարներ, և, միաժամանակ, խթանվեն նոր աշխատատեղերի ստեղծումը՝ աշխատանքի վարձատրության ծախսերի նվազեցման միջոցով՝ հարկերի և սոցիալական ապահովության վճարների շնորհիվ: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ), իրականացրեց համաշխարհային աշխատաշուկայի վրա բնապահպանական հարկի ազդեցության ուսումնասիրությունը: Հաստատվեց, որ ածխածնի արտանետումների համար վճարի ներդրումը և ստացված միջոցների օգտագործումն աշխատանքի վարձատրության ծախսերի նվազեցման համար՝ սոցիալական ապահովության վճարների նվազեցման շնորհիվ, կարող է հանգեցնել հինգ տարվա ընթացքում 14.3 մլն նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչը համարժեք է համաշխարհային զբաղվածության մակարդակի բարձրացմանը 0.5%-ով¹: 1999թ. Գերմանիայի կառավարությունը սկսեց փուլ առ փուլ բարձրացնել շարժիչային վառելիքի, էլեկտրաէներգիայի, նավթի և գազի հարկերը, ինչը պետք է ավարտվեր 2003թ.: Ստացված միջոցներն անմիջականորեն օգտագործվել էին աշխատանքի վարձատրության ոչ աշխատանքային բաղադրիչի կրճատման համար՝ սոցիալական գործընկերոջ կողմից կենսաթոշակային ֆոնդ ներդրման նվազեցման շնորհիվ: Գերմանիայի տնտեսական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից իրականացվող արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ եթե այդ չափավոր բնապահպանական հարկը չներդրվեր, ապա վճարը կենսաթոշակային հիմնադրամին կլիներ 1.7%-ով բարձր: Առկա գնահատականներով աշխատանքի վարձատրության ծախսերի ոչ աշխատանքային բաղադրիչի նվազեցումը կհանգեցներ լրացուցիչ 250000 աշխատատեղերի ստեղծմանը՝ ամբողջական զբաղվածության հաշվարկով և կկրճատեր CO₂ արտանետումները 3%-ով 2010 թվականին:

Բնապահպանական հարկերի հնարավորություններից կարող են օգտվել բոլոր երկրները: Բազմաթիվ զարգացող երկրներն ավելի ու ավելի ակտիվ են կիրառում բնական պաշարների արդյունահանման տուրքերը և հարկերը, ներառյալ անտառային պաշարների վճարները, ձկնորսության արտոնագրային վճարները և հանքային ու նավթի պաշարների հարկերը: Բնապահպանական հարկավորումը տարբեր մակարդակով հաջողությամբ կիրառվում է ամբողջ աշխարհում՝ նախորդ դարի 70-80-ական թվականներից, այդ թվում՝ Չինաստանում, Մալազիայում, Թայլանդում, Ֆիլիպիններում և Տանզանիայում:

Շուկայական այնպիսի գործիքները, ինչպիսիք են վաճառքի իրավունքով թույլտվությունները, թույլ են տալիս հաղթահարել «բնության տնտեսական աննկատելիությունը» և առավել լայնորեն են կիրառվում շրջակա միջավայրի մի շարք խնդիրներ լուծելու համար: Ի տարբերություն այն հարկերի, որոնք սահմանում են գինն աղտոտման համար, այնուհետև թույլ տալիս, որպեսզի շուկան ինքնուրույն որոշի աղտոտման մակարդակը, վաճառքի իրավունքով թույլտվությունների տրամադրման սխեմաները՝ ներառյալ սահմանային մակարդակի որոշման և չընտրված քվոտաներով վաճառքի (cap-and-trade) սխեմաները, սկզբում որոշում են աղտոտման ընդհանուր թույլատրելի մակարդակը, այնուհետև թույլ են տալիս բաց շուկային գինը որոշելու հնարավորությունը: Օրինակ, Կյոտոյի արձանագրության դրույթներում նախատեսված է երկրներին տրամադրել չիրացված արտանետումների առևտրի հնարավորությունը: Ընդհանուր առմամբ, 2009 թվականին վաճառվել էր 8.7 մլրդ տոննա ածխածնի արտանետումների քվոտաներ՝ 144 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով²:

Այն շուկաները, որտեղ նախատեսված է էկոհամակարգի ծառայությունների տրամադրման «վճարը», կարող են ազդել հողօգտագործման վերաբերյալ որոշումների վրա՝ թույլ տալով հողի սեփականատերերին ստանալ ավելի լիարժեք եկամուտ համապատասխան էկոհամակարգի ծառայություններից: Ներկայումս վճարումները, որոնք նախատեսված են վճարային համակար-

¹ Отчет Всемирного банка, 2009 г.: The Global Jobs Crisis and Beyond. MOT (2009), p. x.

² State and Trends of the Carbon Market 2010. Всемирный банк (2010), p. 1.

գերի կողմից էկոհամակարգի ծառայությունների համար (PES, Payments for Ecosystem Services), այսինքն՝ այնպիսի ծառայությունների համար, ինչպիսիք են ածխածնի արտանետումների նվազեցումը, կենսաբազմազանության աճը և բնապատկերների բարելավումը, գնահատվում են հարյուր միլիոնավոր դոլարներով: Ընդ որում, նման համակարգերն առկա են ինչպես տեղական, այնպես էլ ազգային, նույնիսկ՝ համաշխարհային մակարդակով: Այն պահից հետո, երբ հասարակությունը գիտակցեց անտառների հատման և անկման բացասական ազդեցությունը, PES միջազգային համակարգի ստեղծման հնարավորությունը, որը կապված է անտառների հատման և ածխածնի արտանետումների հետ, դարձավ կլիմայի շուրջ միջազգային բանակցությունների կարևորագույն թեմա: Այս համակարգը, որը հայտնի է որպես REDD (արտանետումների նվազեցումն անտառների հատումից և դեգրադացիայից), իսկ վերջերս վերանվանված «REDD+» իրենից ներկայացնում է բազմամակարդակ PES համակարգ, որը ենթադրում է ֆինանսական միջոցների փոխանցումն արդյունաբերապես զարգացած երկրներից զարգացող երկրներին արտանետումների կրճատման դիմաց, այնուհետև այդ միջոցների փոխանցումը պետության կողմից անտառային հողամասերի սեփականատերերին և տեղական համայնքներին:

4. Նոր տնտեսական համակարգին հարմարվելու նպատակով այնպիսի ներդրումների կատարումը, որոնք կնպաստեն համապատասխան հմտությունների ամրապնդմանը ուսուցման և կրթության մեջ

Տարբեր երկրներ տարբեր չափերով են պատրաստ օգտվել «կանաչ տնտեսության» հնարավորություններից և իրագործել խթանող քաղաքականությունը: Այս կամ այն երկրում տիրող իրավիճակը ազդում է տվյալ երկրի բնակչության՝ այդ փոփոխություններին հարմարվելու ունակության վրա: Դեպի «կանաչ տնտեսություն» տեղաշարժը պետությունից կարող է պահանջել խնդիրների վերլուծության, հնարավորությունների բացահայտման, միջամտության գերակայությունների հաստատման, ռեսուրսների կենտրոնացման, քաղաքականության իրականացման և նվաճված առաջընթացը գնահատելու կարողությունները: Օրինակ, բնապահպանական հարկերը հաջողությամբ կիրառվում են մի շարք զարգացող երկրներում: Այնուամենայնիվ, նման հարկերի ներմուծումը ու դրանցով կառավարելը կարող է բարդ խնդիր հանդիսանալ, որի լուծման համար անհրաժեշտ է ամրապնդել այս կամ այն երկրի վարչական կարողությունները: Որպեսզի «կանաչ տնտեսությանն» հասնելու շարժումը չկորցնի իր մղումը, իշխանության մարմինները նույնպես պետք է կարողանան գնահատել նվաճված առաջընթացը: Դա պահանջում է ցուցանիշների մշակման, տվյալների հավաքման, դրանց վերլուծման և արդյունքների մեկնաբանման հնարավորություն, որպեսզի դրանք հնարավոր լինի կիրառել քաղաքականությունը մշակելիս:

«Կանաչ տնտեսությանն» անցման համար աշխատուժի պատրաստումը պահանջում է ուսուցման և որակավորման բարձրացման ծրագրեր: Անցումը դեպի «կանաչ տնտեսություն», ըստ սահմանման, ներառում է տնտեսության որոշակի վերակազմակերպում, և կարող են պահանջվել հատուկ միջոցներ, որպեսզի այդ անցումը հարթ լինի դրան վերաբերվող աշխատակիցների համար: Որոշ հատվածներում կպահանջվի օգնել աշխատողներին տեղափոխվել նոր աշխատատեղեր: Օրինակ, ձկնորսության բնագավառում կարող է պահանջվել ձկնորսների վերապատրաստումը այլ մասնագիտությունների, մասնավորապես, նրանք կարող են մասնակցել ձկան պաշարների վերականգնման գործին: Կարող են նաև պահանջվել աշխատուժի վերապատրաստման ներդրումներ: Գերմանիայում, վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիա արտադրող արդյունաբերությունը զգում է որակավորված աշխատողների պակասուրդ: Կադրերի պակաս է նկատվում վերականգնվող էներգետիկայի կարիքների համար մեքենաշինության մեջ, հատկապես, զգացվում է ինժեներների, օպերատորների և տեխսպասարկման մասնագետների, ինչպես նաև ձեռնարկությունների ղեկավարների պակասություն:

Զարգացող երկրներին տեխնիկական և ֆինանսական օգնություն ցուցաբերելու համար հանգուցային դեր կարող են խաղալ միջկառավարական կազմակերպությունները, միջազգային ֆինանսական ինստիտուտները, ոչ կառավարական կազմակերպությունները, մասնավոր հատ-

վածը, և միջազգային հանրությունն ամբողջությամբ: ՄԱԿ-ը և նրա գործընկերները պետք է միացնեն ջանքերը ու օգտագործեն իրենց հարուստ փորձը ազգային փորձագետների իրավասության բարձրացման ոլորտում՝ «կանաչ տնտեսությանն» անցնելու ազգային ծրագրերի խթանման համար: Մի շարք զարգացող երկրների փորձը և հաջողությունները «կանաչ տնտեսությանն» անցնելիս կարող են տալ այլ զարգացող երկրներին արժեքավոր խթաններ, գաղափարներ ու նման խնդիրներ լուծելու միջոցներ, հատկապես, հաշվի առնելով նվաճված տպավորիչ արդյունքները և առաջնային դիրքերը: Ընդհանուր առմամբ, երկրների՝ դեպի «կանաչ» տնտեսություն շարժվելու ընթացքում ֆորմալ և ոչ ֆորմալ փորձի ու կուտակված գիտելիքների միջազգային փոխանակումը կարող է դառնալ ազգային փորձագետների իրավասության բարձրացման կարևոր միջոցը:

5. Միջազգային տնտեսական կառավարման նպատակային ամրապնդումը

Էկոլոգիական միջազգային համաձայնագրերը կարող են հեշտացնել ու խթանել «կանաչ տնտեսությանն» անցումը: Օրինակ, էկոլոգիական բազմակողմանի համաձայնագրերը, որոնք ստեղծում են իրավաբանական և ինստիտուցիոնալ հիմքեր էկոլոգիական գլոբալ խնդիրների լուծման համար, կարող են զգալի դեր խաղալ տնտեսական «կանաչ» գործունեության զարգացման մեջ: Դրա համոզիչ օրինակ է օզոնի շերտը քայքայող նյութերի արգելման մասին Մոնրեալի արձանագրությունը¹, որը լայն ճանաչում է ստացել որպես միջազգային էկոլոգիական ամենահաջող համաձայնագրերից մեկը: Այդ արձանագրությունը բերեց օզոնի շերտը քայքայող նյութերի ոչնչացման, փոխարինման, արտադրության դադարեցման ամբողջական բնագավառի ծագմանը: Անշուշտ, «կանաչ տնտեսությանն» անցման վրա բոլոր միջազգային էկոլոգիական համաձայնագրերից առավելագույն ազդեցությունը կարող է թողնել կլիմայի փոփոխությանը նվիրված ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան: Կիոտյան արձանագրությունը², որն ուղղված է ջերմոցային գազերի արտանետման նվազեցմանը, արդեն աճի խթան է դարձել տնտեսության մի շարք հատվածներում, մասնավորապես՝ վերականգնվող էներգետիկայում և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների օգտագործման մեջ: Համաշխարհային մակարդակով ածխածնի արտանետումների կարգավորման հետևիտյան համակարգի նորացումը կլիմայի կարևորագույն գործոն, որը որոշելու է «կանաչ տնտեսությանն» անցման տեմպերն ու չափանիշները:

Միջազգային գործընթացներում կառավարությունների ակտիվ մասնակցությունը կարող է նպաստել համաձայնեցված գործողություններին ու համագործակցությանը:

Միջազգային առևտրի համակարգը կարող է էականապես ազդել գործունեության վրա «կանաչ տնտեսության» ոլորտում՝ «կանաչ» ապրանքների, տեխնոլոգիաների և ներդրումների գաղթը հեշտացնելով կամ բարդացնելով: Շրջակա միջավայրի ռեսուրսների ճիշտ գների պարագայում ազգային մակարդակով միջազգային առևտրի համակարգը թույլ է տալիս երկրներին կայուն ռեժիմով օգտագործել բնական ռեսուրսներով ապահովվածության իրենց համեմատական առավելությունները, ինչպես արտահանող երկրների, այնպես էլ ներմուծող երկրների օգտին: Օրինակ, ջրադրատ ռեգիոնները կարող են մեղմացնել տեղական պաշարների բեռն այն արտադրանքի ներմուծման ուղիով, որը պահանջում է ջրի մեծ ծախսումներ ջրով ավելի հարուստ ռեգիոններից: Ինչպես արդեն նշվեց, առևտրի հետ կապված միջոցները, ինչպես, օրինակ, ստանդարտացումը, նույնպես կարող են կարևոր դեր խաղալ «կանաչ տնտեսության» մի շարք հատվածներում՝ խթանելով դրանց աճը: Մյուս կողմից, նման միջոցները նույնպես կարող են երկրների կողմից ընկալվել որպես շուկա հասնելու խոչընդոտ կամ որպես առևտրային հովանավորչության տեսակ: Այդ պատճառով կարևոր է, որ երկրները գտնեն օպտիմալ հաշվեկշիռ շրջակա միջավայրի պահպանման ու շուկայի ապահովման միջոցների միջև և հաջողությամբ համատեղեն դրանք:

¹ http://www.unep.org/greeneconomy/Portals/88/documents/ger/GER_synthesis_ru.pdf, էջ 30-31:

² http://www.unep.org/greeneconomy/Portals/88/documents/ger/GER_synthesis_ru.pdf, էջ 31-32:

Դոհայում ԱՀԿ-ի բանակցությունների ընթացիկ փուլը հնարավորություն է տալիս աջակցելու «կանաչ տնտեսությանն» անցնելուն: Օրինակ, ներկայումս բանակցությունների ժամանակ քննարկվում է ձկնորսության զարգացման համար այն աջակցությունների վերացումը, որոնք հաճախակի ուղղակիորեն նպաստում են ձկան ավելցուկային որսին: Ներկա բանակցությունները ևս մեկ հնարավորություն են էկոլոգիապես մաքուր ապրանքների ու ծառայությունների սակագնային և ոչ սակագնային խոչընդոտներն իջեցնելու համար: Ինչպես ցույց տվեց Համաշխարհային բանկի հետազոտությունը, համաշխարհային առևտրի ազատականացումը կարող է բերել նման ապրանքների շրջանառության 7-13% աճ¹: Վերջապես, գյուղատնտեսական արտադրանքի միջազգային առևտրի ազատականացման վերաբերյալ ներկա պահին անցկացվող բանակցությունները, ինչպես ակնկալվում է, մի շարք զարգացած երկրներում կբերեն գյուղատնտեսության աջակցման կրճատմանը, ինչը պետք է խթանի ավելի արդյունավետ ու կայուն գյուղատնտեսական արտադրությունը զարգացող երկրներում: Այնուամենայնիվ, կարևորվում է զարգացող երկրներին իրավասության բարձրացման օգնություն ցուցաբերել՝ միջազգային առևտրի ազատականացումից պոտենցիալ օգուտներն առավելապես օգտագործելու համար, հատկապես, «կանաչ տնտեսությանն» անցման համատեքստում:

6. «Կանաչ տնտեսությանն» անցման ֆինանսավորումը

Անցումը «կանաչ տնտեսության» պահանջում է զգալի նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Այդ ռեսուրսների ներգրավումը օգնում է մտածված պետական քաղաքականության և նորարարական մեխանիզմների ֆինանսավորմանը: Կապիտալի շուկայում կտրուկ աճը, աճող «կանաչ» կողմնորոշումը այդպիսի շուկաներում, այնպիսի շուկայական գործիքների բարելավումը, ինչպիսիք են ածխածնի արտանետումների առևտուրը և միկրոֆինանսավորումը, ինչպես նաև «կանաչ տնտեսությանը» նպաստող միջոցները՝ կազմակերպված ի պատասխան վերջին տարիների տնտեսական ճգնաժամի, ուղի են բացում «կանաչ տնտեսությանն» անցման լայնածավալ ֆինանսավորման համար: Սակայն, այդ ֆինանսական հոսքերը փոքր են, և դրանք պետք է լինեն արագ աճող, եթե նպատակ է դրված արագ անցնել «կանաչ տնտեսության»:

Դիտարկենք կապիտալի ներգրավման ամենախոստումնալից մեխանիզմները, որոնք անհրաժեշտ են առաջիկա տասնամյակների ընթացքում «կանաչ տնտեսությանն» անցման համար:

«Կանաչ տնտեսությանն» անցման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ծավալի ամբողջական գնահատական դեռևս գոյություն չունի: Առկա գնահատականները հաշվարկում են այն գումարները, որոնք անհրաժեշտ են նպատակային ցուցանիշներին հասնելու համար, մասնավորապես, CO₂-ի արտանետումների ոլորտում, օրինակ, ըստ «Blue Map MՅԱ»-ի ենթադրվող նախագծի CO₂-ի երկու անգամ կրճատումը 2050 թվականին կապված է էներգետիկայի հետ: Այս նախագիծը պահանջում է 46 տրիլիոն ԱՄՆ դոլարից ավելի շատ ներդրումներ, քան բազայինն է, կամ մոտավորապես 750 միլիարդ ԱՄՆ դոլար տարեկան սկսած 2010-ից մինչև 2030 թվականները և 1.6 տրիլիոն ԱՄՆ դոլար տարեկան սկսած 2030-ից մինչև 2050 թվականներն ընկած ժամանակահատվածում²: Մյուս կողմից, ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի և Bloomberg New Energy Finance կազմակերպության, ներդրումները «մաքուր» էներգետիկայում անհրաժեշտ է 2020 թվականին մեծացնել մինչև 500 մլրդ ԱՄՆ դոլար տարեկան, որպեսզի գլոբալ տաքացումը սահմանափակված լինի 2C⁰: Վերջապես, ըստ HSBC-ի գնահատականների, որպեսզի էներգետիկան դառնա ածխաթթվի քիչ արտանետումով ճյուղ 2010-2020 թվականներին, անհրաժեշտ է ներդնել 10 տրիլիոն դոլար:

Այդ կողմնորոշված գումարները համապատասխանում են այն սցենարներին, որոնք մոդելավորվել են «կանաչ տնտեսության» զեկույցի համար: ՄԱԿ-ի «կանաչ տնտեսության» ծրագրի խմբի կողմից նշանակված գնահատականը, որը հաշվարկում է ներդրումները կարևոր ոլորտներում, անհրաժեշտ է ինչպես MՅԱ Blue Map ծրագրի իրականացման համար, այլ նաև

¹ Warming Up to Trade: Harnessing International Trade to Support Climate Change Objectives. Всемирный банк (2007), pp. 69, 94.

² Сценарий Blue Map МЭА описан в документе Energy Technology Perspectives 2010: Scenarios & Strategies to 2050.

հազարամյակի նպատակների համար զարգացման ոլորտում, ցույց տվեց, որ սկզբնական էտապում պահանջվում է տարեկան 1.05-2.59 տրիլիոն ԱՄՆ դոլարի ներդրումներ: Միջինում այդ լրացուցիչ ներդրումները համարվում են համաշխարհային ՀՆԱ-ի տարեկան 2%-ը 2010-2050 թվականների ժամանակահատվածում¹: Այդ ներդրումները կօգտագործվեն մի շարք ոլորտներում իրավունակության բարձրացման, նոր տեխնոլոգիաների ներդրման, կառավարման մեթոդների և «կանաչ» ենթակառուցվածքի զարգացման համար: Տարեկան ներդրումների ստորին գնահատականը (2010-2050 թվականներին) ներգրավված ոլորտների համար կազմում է տարեկան 1.3 տրիլիոն դոլար և աճում է համաշխարհային ՀՆԱ-ի մեծացման հետ:

Ֆինանսական ծառայությունների և ներդրումային ոլորտը վերահսկում է տրիլիոն դոլարներ, և այդ ոլորտներում ապահովվում է դեպի «կանաչ» տնտեսությանն անցման ֆինանսավորման հիմնական ծավալը: Երկարաժամկետ ինստիտուցիոնալ ներդրողներից շատերը, ինչպիսիք են կենսաթոշակային ֆոնդերը և ապահովագրական ընկերությունները, գիտակցում են ռիսկի նվազման հնարավորությունները՝ կապված բնապահպանական և սոցիալական գործոնների, կառավարման որակի (ESG) և «կանաչ» պորտֆելի ստեղծման հետ: Առևտրային և մանրածախ բանկերը նույնպես հաշվարկում են ESG-ի խնդիրները՝ իրենց կանոններով «կանաչ» ֆինանսական արտադրանքի զարգացման դեպքում: Երկարաժամկետ ներդրումների օրինակ է Նորվեգիայի կենսաթոշակային Global հիմնադրամը²: Նորվեգիայի կենսաթոշակային Global հիմնադրամը աշխարհի խոշորագույն բարեկեցության հիմնադրամներից մեկն է, որին է պատկանում ամբողջ աշխարհի ավելի քան 8400 ընկերությունների կապիտալի բաժնեմասեր: Հիմնադրամը հիմնականում զբաղվում է պասիվ ներդրումներով և ունի մոտ 1% բաժնեմաս այդ ընկերություններից յուրաքանչյուրի կապիտալում: Լինելով մի շարք ակտիվների սեփականատեր՝ հիմնադրամը փորձում է ապահովել կորպորատիվ կառավարման կանոնների համապատասխանությունը և հաշվարկել բնապահպանական ու սոցիալական խնդիրները: Ուշադրություն դարձնելով շրջակա միջավայրի պահպանության վրա՝ այդ թվում նաև կլիմայի փոփոխության և այդպիսի փոփոխություններին հարմարվելու խնդրի վրա՝ Նորվեգիայի ֆինանսների նախարարությունը հիմնադրամի համար ստեղծել է նոր ներդրումային ծրագիր, որն հետևում է էկոլոգիայում կատարվող ներդրումներին, օրինակ, էներգետիկայի արդյունավետությանը, ածխածնի կուտակմանը, ջրի տեխնոլոգիային, թափոնների կառավարմանը և աղտոտվածության վերահսկողությանը: 2009 թվականի վերջում ավելի քան 7 մլրդ. նորվեգական կրոն է ներդրվել այդ ծրագրի շրջանակներում, այսինքն՝ շատ ավելին, քան նախօրոք ենթադրվում էր:

Միևնույն ժամանակ պետական ֆինանսավորումը ունի մեծ նշանակություն դեպի «կանաչ» տնտեսության անցման գործում: Շուրջ 3.3 տրիլիոն ԱՄՆ դոլարի ֆինանսական միջոցներ են ներդրվել տնտեսության նպաստման համար և գրեթե 16% կամ 522 մլրդ դոլար՝ «կանաչ» ներդրումների համար: Սակայն այդ ներդրումները չեն սահմանափակում ֆինանսական և տնտեսական ճգնաժամը, այլ միջոցներ ու հետագա քայլեր են ձեռնարկում ապահովելու երկարաժամկետ անցումը: Օրինակ, Չինաստանի կառավարությունը 12-րդ հնգամյա պլանի գործունեության ժամանակահատվածում՝ սկսած 2011 թվականից, նախատեսում էր ներդնել 468 մլրդ ԱՄՆ դոլար «կանաչ» ոլորտում և 211 մլրդ ԱՄՆ դոլար նախորդ 5 տարիների ընթացքում հետևյալ երեք ոլորտներում՝ թափոնների օգտագործման և վերամշակման, մաքուր տեխնոլոգիաների և վերականգնվող էներգետիկայի: Ակնկալվում է, որ պետական ներդրումների այդպիսի ծավալի դեպքում Չինաստանի արդյունաբերությունը կաճի տարեկան միջինը 15-20%, և նրա թողարկման ծավալը առաջիկա 5 տարիների ընթացքում կհասնի 743 մլրդ ԱՄՆ դոլարի 2010 թվականի 166 մլրդ ԱՄՆ դոլարի դիմաց: Այս ոլորտներում արդյունավետությունը գնահատվում է 8-10 անգամ ավելին, քան արդյունաբերության այլ ոլորտներում³:

¹ World Development Indicators (2010), p. 256.

² GPFG Responsible Investment, Министерство финансов Норвегии (2010), http://www.regjeringen.no/upload/FIN/brosjyre/2010/spu/english_2010/index.htm

³ Annual Report 2009. Пекин: China Development Bank Corporation (2010), p. 55.

Այն երկրներում, որտեղ պետական ֆինանսավորման ծավալը կախված է հարկային եկամուտներից և պետական կարողություններից, «կանաչ» ներդրումների մեծացման համար կատարվում են սուբսիդիայի տրամադրման և հարկման քաղաքականության բարեփոխումներ: Օրինակ, էներգետիկայի սուբսիդիաները ջրային, ձկնորսության և գյուղատնտեսության ոլորտներում իջեցնում են գները և խրախուսում են համապատասխան բնական կապիտալի սպառումը: Միևնույն ժամանակ դրանք ծանր բեռ են պետական բյուջեի համար: Այդպիսի սուբսիդիաների աստիճանական վերացումը և էներգետիկայի օգտագործման համար հարկերի սահմանումը բարձրացնում է արդյունավետությունը՝ պետական ֆինանսների ամրապնդմամբ և «կանաչ» ներդրումների համար ազատ ռեսուրսների գոյացմամբ:

Սուբսիդիաներից հրաժարումը միայն այդ չորս ոլորտներում, օրինակ, թույլ կտա տարեկան խնայել համաշխարհային ՀՆԱ-ի 1-2 %-ը:

Անհրաժեշտ է ստեղծել «կանաչ տնտեսության» ֆինանսավորման համար լայնածավալ միջազգային մեխանիզմներ: Կանկունում դեկտեմբերի 10-ին կայացած կլիմայի խնդիրների վերաբերյալ համաժողովում առաջընթաց է կատարվել կանաչ կլիմայական հիմնադրամի ստեղծման հարցում: Դա առաջին կարևոր քայլն էր դեպի «կանաչ տնտեսությանն» անցման ֆինանսավորման միջազգային մեխանիզմի կառուցման գործում:

Համաժողովի որոշումը կոչ է անում զարգացած պետություններին տրամադրել 30 մլրդ ԱՄՆ դոլար զարգացող երկրներին, որպեսզի միջոցառումներ ձեռնարկվեն կլիմայի ոլորտում մինչև 2012 թվականն ընկած ժամանակահատվածում և համատեղ ներգրավում 2020 թվականին մինչև տարեկան 100 միլիարդ դոլարի չափով¹:

Այդ ռեսուրսները շատ անհրաժեշտ են և կարող են լինել «կանաչ տնտեսությանն» անցման աջակցող միջազգային հիմնադրամի հիմնական մասը, հատկապես, ցածր եկամուտ ունեցող երկրներում:

Համաշխարհային բնական կապիտալի պահպանման համար պահանջվում են ֆինանսավորման լրացուցիչ մեխանիզմներ: Կլիմայի խնդիրների որոշման ֆինանսավորմանը զուգահեռ, UN-REDD ծրագրի նախաձեռնությամբ 2008 թվականի սեպտեմբերին մեկնարկվել է սննդի (պարենային) համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի զարգացման ու շրջակա միջավայրի ծրագիր, որպեսզի աջակցեն անտառների կրճատման ազգային նախագծերին և անտառների ածխածնային պաշարների բարձրացմանը: Դոնոր երկրները ներկա պահին խոստանում են REDD+ -ին՝ ներառյալ GEF և անտառների պաշտպանության ներդրումային ծրագրին, մինչև 2012 թվականը նվիրաբերել 5 մլրդ ԱՄՆ դոլար²:

Ինչ վերաբերում է արդեն իրականացված փորձնական REDD+ ծրագրերին, ապա ակնհայտ է, որ այդպիսի «բնապահպանական ծառայությունների համար վճարումը» կարող է մեծ նշանակություն ունենալ ոչ միայն կլիմայի կարգավորման և կենսաբազմազանության պահպանման համար, այլ նաև կարևոր ռեսուրսների ներկայացման համար տեղական համայնքներին, որոնք մտահոգվում են տեղական բնակարանների պահպանմամբ: «Կանաչ տնտեսության» ֆինանսավորման ևս մեկ կարևոր մեխանիզմ է համարվում գլոբալ բնապահպանական ֆոնդը (GEF), որն արժանի է ընդլայնման և ամրապնդման:

«Կանաչ տնտեսության» կայացման հարցում իրենց դերն են ունենում ֆինանսական զարգացման միջազգային և տեղական հաստատությունները: Այդպիսի հաստատությունների թվում են զարգացման միջազգային բանկերը՝ Համաշխարհային բանկը, զարգացման տարածաշրջանային և ենթատարածաշրջանային բանկերը, զարգացման երկկողմ գործակալությունները, ինչպիսիք են KfW-ն Գերմանիայում, Caisse des Depots և AFD-ն Ֆրանսիայում, ինչպես նաև զարգացման ազգային բանկերը, օրինակ, BNDES-ը Բրազիլիայում, DBSA-ն Հարավային Կորեայում, CDB-ն՝ Չինաստանում: 2009 թվականին զարգացման միջազգային ֆինանսական

¹ ПрессрелизРКИК,12декабря2010г.,http://unfccc.int/files/press/news_room/press_releases_and_advisories/application/pdf/pr_20101211_cop16_closing.pdf;«Зеленые»бондыВсемирногобанка,<http://treasury.worldbank.org/cmd/htm/WorldBankGreenBonds.html>

² http://www.un-redd.org/NewsCentre/COP16_Press_Release_en/tabid/6595/Default.aspx

հաստատությունները զարգացմանն աջակցման նպատակով տրամադրել են 168 մլրդ ԱՄՆ դոլար, իրենց հերթին զարգացման ազգային բանկերը և երկկողմ գործակալությունները՝ ավելի քան 350 մլրդ դոլար¹:

Բացի այդ, այդ հաստատությունները նույնպես ազդում են ներդրումների և պետական ֆինանսավորման բնույթի վրա՝ վարկային համաձայնագրերի և վարկեր տրամադրելուց առաջ բազմակողմանի վերլուծության միջոցով: Նրանք կարող են միասին սահմանել «կանաչ» վերլուծության անցկացման կարգը, նորմատիվները և նպատակները այն ոլորտների համար, որտեղ նրանք ունեն զգալի ազդեցություն, ինչպես, օրինակ, մուլտիցիպալ ֆինանսների, տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում: Ջարգացման ազգային բանկերը նույնպես կարող են առանցքային դեր ունենալ բնակելի ոլորտում «կանաչ» քաղաքականության զարգացման և տարածման նոր մոտեցումների գործում:

Վերջապես, կայուն և ճկուն կապիտալի շուկաները, ներդրումային և ֆինանսական միջնորդության մեթոդների լրացումը առանցքային դեր են խաղում կապիտալի ծավալի բարձրացման գործում, որը բավարար կլինի դեպի «կանաչ տնտեսություն» անցման համար:

**Владимир Арутюнян
Бениамин Егиазарян
Эба Бабалян
Арутюн Терзян**

Условия перехода к «зеленой экономике»

Аннотация

Статья посвящена условиям перехода к «зеленой экономике». Реализация условий, представляющих собой ряд этапов цепочки, позволит развивать экономику по «зеленому» пути. Рассмотрение этих проблем легло в основу статьи, в которой также представлен опыт других стран, уже реализовавших эти условия или делающих в этом направлении первые шаги.

**Vladimir Harutyunyan
Benyamin Eghiazaryan
Eba Babayan
Harutyun Terzayn**

General conditions for transition to “green economy”

Abstract

The article provides conditions for transition to “green economy.” The transition anticipates several interconnected stages that the nation needs to undergo to ensure sustainable development. The article addresses these issues, and discusses the practices that other nations adopted/applied or intend to adopt/apply to ensure the transition to “green economy.”

¹ Данные о финансировании международными банками взяты из издания Всемирного банка World Development Indicators 2010; данные о финансировании двусторонними организациями основаны на сведениях с Web-сайтов соответствующих агентств. Это, в частности:
<http://www.afd.fr/jahia/Jahia/site/afd/lang/en/pid/11118>,
http://www.bndes.gov.br/SiteBNDES/bndes/bndes_en/Institucional/The_BNDES_in_Numbers/Annual_Report/.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍ ԿԱՊԻ ՇՈՒՐՁ

Հազիվ թե կարելի է գտնել որևէ երկիր, տնտեսության որևէ ոլորտ, որը շրջանցի ճգնաժամի ազդեցությունը: Այս իմաստով, գրականության մեջ հաճախակի կարելի է հանդիպել «գլոբալ տնտեսական ճգնաժամ» հասկացությանը, դրա դրսևորումների ու հետևանքների ամենատարբեր մեկնաբանությունների: Գլոբալ ճգնաժամի ժամանակակից մոտեցումներում գերիշխում է այն տեսակետը, թե տեղի է ունենում վերջինիս օտարում ընդհանուր սոցիալ-տնտեսական համակարգից: Սա հիշեցնում է բժշկության մեջ տեղ գտած այն երևույթը, երբ հիվանդությունը վերացնելու նպատակով սկսում են օգտագործել արագ ազդող միջոցներ, մոռանալով, որ հիվանդություններն ընդհանրապես բնորոշ են կենդանի օրգանիզմներին ու հանդիսանում են դրանց զարգացման և իմունիտետի ամրապնդման նախադրյալները: Այսինքն, որոշ իմաստով անտեսվում է այն, որ բուժման վերոնշյալ եղանակը կրում է սիմպտոմատիկ բնույթ, հաճախ ուղեկցվելով բազմաթիվ կողմնակի էֆեկտներով, որոնց մի մասը օրգանիզմի համար կարող է ավելի վտանգավոր ու վնասակար լինել, քան բուն հիվանդությունը:

Պատահական չէ, որ դեռևս 1920-ական թվականների սկզբներին ռուս հետազոտող Ա.Ա. Բոգդանովը առաջին անգամ ցույց տվեց, որ ճգնաժամերը լինելով տնտեսական զարգացման պրոցեսի օրգանական մասը, ունեն ինչպես «դիզյունկտիվ», այնպես էլ «կոնյունկտիվ» բնույթ¹: Ավելի ուշ, 1939թ. նշանավոր տնտեսագետ Յ.Շունպետերը լույս է ընծայում իր «Գործարար ցիկլեր» դասական հետազոտությունը, որտեղ ճգնաժամի վերացմանն ուղղված տնտեսագետների փորձերը դիտում է որպես անհեռանկարային ջանքեր: Տնտեսական ցիկլերը երեխայի նշագեղձեր չեն, որոնց հեռացնելով կարելի է խուսափել հետագա հիվանդությունից, ինչպես կարծում են շատ տնտեսագետներ, դրանք մարդկային սրտի բաբախումներ են, որոնք արտացոլում են օրգանիզմում առկա պրոցեսները²: Բնականաբար, տնտեսական ճգնաժամը ի հայտ է բերում այնպիսի հարցեր, որոնք անմիջականորեն առնչվում են տնտեսական աճի հետ. օրինակ, թե ինչ է տնտեսական աճն ընդհանրապես, որքանով է տնտեսական աճի հայտնի մոդելները արտացոլում տնտեսական աճի մեխանիզմը, ինչպիսի՞ն է աճի և ցիկլի հարաբերակցությունը և այլն:

Տնտեսական էվոլյուցիայի ցիկլային բնույթը որոշակի հակասության մեջ է գտնվում տնտեսական աճի տեսության հետ: Այնուամենայնիվ, XX դարավերջի և XXI դարասկզբի տնտեսության անկայուն զարգացումը, նրան ուղեկցող բարձր ռիսկերն անհրաժեշտություն են դարձնում ցիկլերի տեսության գործիքավորումն օգտագործել տնտեսական աճի մեխանիզմի վերլուծության ժամանակ: Այս առումով կարելի է առանձնացնել տնտեսական աճի մոդելավորման համար ոչ գծային, մասնավորապես կենսական ցիկլերի լոգիստիկ ֆունկցիաների և տնտեսական աճի տեսությունների կիրառման հնարավորության հանգամանքները: Բանն այն է, որ տնտեսական ցիկլի էկզոգեն, արտաքին գործոններն ու պայմանները կարելի է դիտարկել իբրև աճի մեխանիզմի էնդոգեն, ներքին գործոններ: Ինչպես վկայում է վերջին տասնամյակների տնտեսական գիտության զարգացման պատմությունը, տեղի է ունենում տնտեսական աճի և ցիկլերի տեսությունների սերտ միահյուսում՝ հատկապես կոնցեպտուալ, մեթոդոլոգիական մակարդակներում, կարծես տեղ չթողնելով դրանց հակադրությունների մասին քննարկումներին: Միտում չունենալով «հարթելու նշված ոլորտներում առկա սուր անկյունները» կամ բացառելու մեթոդոլոգիական պրոբլեմները, կարևորում ենք աճի և ցիկլի տեսությունների հաջորդականության էվոլյուցիոն պրոցեսները, դրանց միջև առկա ընդհանուր գծերը: Վաղ էտապներում տնտեսական աճի տեսության ձևավորման գործում առաջնություն էր հատկացվում կոնյունկտուրայի տեսության դրույթներին, իսկ տնտեսագետների հիմնական խնդիրը հանգում էր տնտեսության զարգացման ընդհանուր միտումների բացահայտելուն, անտեսելով ցիկլային տատանումները: Այս իմաստով, տնտեսական աճն իբրև պրոցես ընդունելը, թույլատրում է ռացիոնալ մոտեցում ցուցաբերել

¹ Богданов А. А. Тектология. Всеобщая организационная наука. Кн. 2. №157. М.: Экономика, 1989.

² Ивантер А. Его величество случай (интервью с академиком Р.М.Энтовым) /Эксперт.2006. N 1-2(496).

տնտեսական անկումների վերլուծություններին: Դեռևս իր ժամանակին Ու. Միտչելը «Տնտեսական ցիկլեր» (1930) աշխատության մեջ անդրադառնալով կոնդրատևյան ալիքներին՝ որպես տնտեսական տատանումների առանձին տեսակի, գտնում է, որ տնտեսական զարգացման հիմնական ուղղությունը պարզելու համար անհրաժեշտ է դրանք բացառել, այսինքն իբրև տնտեսական զարգացման հիմնական ուղղություն ընդունել առաջընթացի միտվածությունը¹: Ներկա պայմաններում ազդեցացված մակրոտնտեսական ֆունկցիաների վերլուծության ժամանակ կարևորվում է աճի գրեթե տարբեր մոտեցումների սինթեզը: Բոլոր դեպքերում իբրև վերլուծության հիմք ընդունվում է մոլտիպլիկատորի գործողությունը: Վերջինս, ինչպես հայտնի է, կարող է գործել ինչպես աճի (առաջընթաց), այնպես էլ անկման (հետընթաց) ուղղությամբ, սակայն տնտեսական աճի ժամանակակից տեսությունները որոշակի իմաստով կորցրել են մոլտիպլիկատորի ազդեցության վարընթաց ուժի նկատմամբ հետաքրքրությունը, քանի որ տնտեսության զարգացման արդի պայմաններում ավելի շուտ կարևորվում են տնտեսական աճի և ցիկլի տեսությունների համատեղ էվոլյուցիոն միտումները: Մասնավորապես, խոսքը վերաբերում է աճի տեսության աստիճանական բարդացմանը՝ կապված տնտեսական զարգացման ցիկլայնության, ոչ գծային գործոնների հաշվառման հետ: Հարցի նման դրվածքի դեպքում բացասական հետադարձ կապերը, որոնք ըստ էության ենթադրում են տնտեսության անկում, տնտեսական զարգացման տեսության մեջ զբաղեցնում են իրենց օրինական տեղը: Այս առումով, հարկ չկա անկման երևույթները մեկնաբանել մակրոտնտեսական անհաջող քաղաքականության դիտակետից իբրև վերջինիս հետևանք: Տնտեսության զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ հակաճգնաժամային բուֆերի ստեղծումը տնտեսության մեջ թույլատրում է շարունակել աճի միտումները տնտեսության ընդլայնման բնական սահմաններում, միաժամանակ հասկանալ դեպրեսիայի առաջացման պատճառները, մշակելով այն հաղթահարելու գործիքներն ու ուղիները: Այս իմաստով տնտեսագիտական վերլուծություններում անհրաժեշտություն է դառնում կիրառել աճի այնպիսի մոդելներ, որոնք առավելագույն չափով հաշվի կառնեն զարգացման գործոնների փոխադարձ կապերի ոչ գծային բնույթը, զարգացման ցիկլային հետագիծը, մեզո- և միկրոնակարգակների գործոնների ազդեցությունը, որոնք ազդում են մակրոտնտեսական միտումների բնութագրերի վրա: Այսինքն՝ մոդելներ, որոնք անմիջականորեն հիմնված լինեն տնտեսական զարգացման ցիկլային բնույթն արտացոլող ֆունկցիաների վրա: Այս դեպքում տնտեսական աճը ներկայացվում է իբրև երկու-երեք փոփոխականների միջև ռեգրեսիոն կախվածություններ: Եթե խնդիր է դրվում բացատրելու տնտեսության անկումային վիճակից դեպի վերելք կատարվող միտումների էությունը, առավել ևս դրանք հիմնավորել մակրոտնտեսական գործիքավորումով, ապա այս հարցում տեսությունը բախվում է «պակասող դետալների» սինդրոմին: Այստեղ տնտեսագետները նորից ուշադրություն են սևեռում Շունպետերի ինովացիաների տեսությանը, որտեղ դեպրեսիան ընդունվում է իբրև տնտեսության մեջ ինովացիաների ներդրման խթան: Ու թերևս ճշմարիտ կլինի խոսել ոչ թե ճգնաժամի դեմ պայքարելու, այլ վերջինիս կառավարման մասին, քանի որ ճգնաժամի հետ «պայքարելը» նույնն է թե պայքարել բնության վտանգավոր երևույթների (օրինակ՝ երկրաշարժ, ջրհեղեղ և այլն) հետ: Փաստորեն խոսքը վերաբերում է սոցիալ-տնտեսական քաղաքականությանն ուղղված որոշումների կանխատեսմանը, ռիսկերի հավաստի գնահատմանը, դրանց իջեցման արդյունավետ ուղիների մշակմանն ու իրացմանը: Այս իմաստով, ռեցեսիան հանդես է գալիս որպես մինչճգնաժամային փուլում ռիսկերի իջեցման կոնկրետ միջոցառումների սահմանափակ արդյունավետության հետևանք: Բանն այն է, որ իրական տնտեսական կյանքում օբյեկտիվորեն անհնար է գրոյացնել բոլոր ռիսկերը, մյուս կողմից էլ տնտեսական որոշումների ընդունման և իրացման գործում մշտապես առկա են սուբյեկտիվ վրիպումներ ու բացթողումներ: Ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ ռիսկերի տեսանկյունից, ճգնաժամն ընդհանրապես, ռեցեսիան՝ մասնավորապես, հանդես են գալիս իբրև մնացորդային ռիսկի դրսևորում, որը օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների սահմանափակումների պատճառով չէր վերացվել մինչճգնաժամային փուլում:

Այսպիսով, ճգնաժամի նկատմամբ նման կոնցեպտուալ մոտեցումը չի ավարտվում հակաճգնաժամային միջոցառումներով. այն իրենից ներկայացնում է մի պրոցես, որը ներառում է նախաճգնաժամային և հետճգնաժամային կառավարման բոլոր փուլերը: Ճգնաժամի կառա-

¹ Митчелл У. Экономические циклы: Проблема и ее постановка.-М.-Л.:Госиздат, с..233, 1930.

վարման նման մոտեցումը ենթադրում է, որ առաջնությունը տրվում է ոչ միայն անկմանը արդյունավետորեն հակադարձմանը (ինչը անհրաժեշտ, բայց բավարար չէ), այլ նաև ամբողջ տնտեսության և հասարակության՝ կայուն զարգացում ապահովելու ունակությանը (ինչպես խոցելիության իջեցման, այնպես էլ հետճգնաժամային ելքի տեսանկյուններից): Այս իմաստով տնտեսական քաղաքականության մեջ կարևորություն է ստանում տնտեսության դիվերսիֆիկացումը և տնտեսական զարգացման հակաճգնաժամային կարգավորումը (լայն իմաստով ներառյալ նաև ռիսկերի կառավարումը): Նկատենք, որ տնտեսության դիվերսիֆիկացման գլխավոր գործիքը ինովացիոն զարգացումն է, որը պահանջում է ոչ միայն շահանշանակ մոտեցում: Մասնավորապես, հարկ չկա խնդիրը հանգեցնել բարձր տեխնոլոգիաների արտադրությանը, տեղեկատվության ոլորտին և այլն: Հարցը վերաբերում է ոչ թե նոր գիտելիքների ու տեխնոլոգիաների կիրառմանն ու գեներացմանը, այլ դրանց օգտագործման աստիճանին, տեխնոլոգիական պրոցեսների մեջ «ներթափանցման» խորությանը: Ժամանակակից պայմաններում, հակաճգնաժամային ծրագրերը ենթադրում են ոչ միայն ռեցեսիայի հաղթահարում և արտադրության աճի նախկին տեմպի ապահովում, այլ տնտեսության կառուցվածքի փոփոխություն՝ հօգուտ ավելի քիչ ռեսուրսատար, էկոլոգիապես ավելի մաքուր և արդյունավետ արտադրությունների: Մինչդեռ վերջիններիս առկայությունն արդեն խոսում է նոր տեխնոլոգիական կացութաձևի մասին: Պատահական չէ, որ ճգնաժամի ընթացքում կառուցվածքային վերափոխումների նման քաղաքականությունը գրականության մեջ ստացել է «նոր կանաչ կուրս» անվանումը: Ինչ վերաբերում է վերջինիս, ապա այն տարբեր երկրներում տարբեր կերպ է մեկնաբանվում, ընդհանուրն այն է, որ գրեթե բոլորի կողմից հիմնավորվում է ինվեստիցիաների բարձր արդյունավետությունը հատկապես էներգախնայող և էներգաարդյունավետ, էկոլոգիապես մաքուր արտադրություններում: Հարկ է նկատել, որ դեռևս իր ժամանակին ռուս նշանավոր տնտեսագետ Տուզան-Բարանովսկին անդրադառնալով արդյունաբերական ցիկլերի կոնցեպցիային, հատկապես կարևորում էր հիմնական կապիտալի մեջ ինվեստիցիաների, արտադրության սահմանների ընդլայնման դերը: Գաղափարներ, որոնք հետագայում մեծ ազդեցություն ունեցան տնտեսական աճի կոնցեպցիաների ձևավորման վրա:

Արդի տեղեկատվական տնտեսության ձևավորման ժամանակաշրջանում տնտեսական ճգնաժամի կառավարման գործում կարևորվում է էնդոգեն ԳՏԱ-ի և ինովացիաների դերը, ինչը նշանակում է, որ տեղի է ունենում տնտեսական աճի տեսությունների էնդոգենիզացիա: Իսկ վերջինս էլ իր հերթին մեծացնում է ցիկլերի, տնտեսական դինամիկայի ու կոնյունկտուրայի տեսությունների նկատմամբ հետաքրքրությունը: Թերևս սա է պատճառը, որ կոնկրետ երկրներում կոնկրետ ժամանակներում ի հայտ են գալիս տնտեսական աճի տեսության բազմաթիվ մոդիֆիկացիաներ, որոնք առնչվում են ինստիտուցիոնալ ինովացիաների հետ:

Маринэ Агаян

Вокруг связи экономический рост- экономический кризис

Аннотация

В статье инструментария теории экономических циклов рассматривается в подтексте связей экономический рост- экономический кризис Подчеркиваются важность эволюционных процессов преемственности теорий роста и цикла и общие черты между ними.

Marine Aghayan

On economic growth-economic crisis relation

Abstract

The article considers cycles in the context of Economic Growth-Economic Crisis Relations. The author stresses the importance of succession of evolutionary processes in the cycle and economic growth theories and common patterns in them.

ԲԱԼԱՍՍԱ-ՍԱՍՈՒԵԼՍՈՆԻ ԷՖԵԿՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԶՅ ՕՐԻՆԱԿՈՎ

Արժույթի փոխարժեքի կարգավորումը տնտեսական համակարգի կայունության ապահովման կարևորագույն նախադրյալներից է: Կախված տնտեսական իրավիճակի փոփոխությունից և համաշխարհային զարգացումներից պարբերաբար վերանայվում են արժույթային քաղաքականության վարման ուղիներն ու սկզբունքները՝ օրեցօր փոփոխվող խնդիրներին նոր լուծումներ տալու նպատակով:

Սկսած 1993թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայկական դրամի շրջանառության մեջ դնելու պահից մինչ օրս՝ ՀՀ-ում արժույթային քաղաքականությունը անցել է զարգացման մի քանի փուլերով: Առաջին փուլը բնութագրվում էր ՀՀ դրամի արժեզրկման արագ տեմպերով՝ 1994թ. կազմելով ամսական 50%: 1996թ. անցում կատարվեց ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի¹, որի հիմնական նպատակը այն ժամանակ Հայաստանի տնտեսական զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցող կապիտալի ներհոսքի խթանումն էր: Հայկական դրամի գոյության ողջ ընթացքում փոխարժեքի տատանողականությունը պարբերաբար միջնորդվում էր կենտրոնական բանկի արժույթային ինտերվենցիաներով:

Երկրորդ փուլը նշանավորվեց ՀՀ տնտեսությունում 2003թ. վերջերից նկատված դրամի անվանական փոխարժեքի արժևորման միտումներով: Կենտրոնական բանկի հավաստմամբ վերջինս և՛ ներքին տնտեսության (ներքին արտադրողականության աճ, ֆինանսական միջոցների ներհոսք), և՛ համաշխարհային տնտեսության (միջազգային շուկաներում ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացում) միաժամանակյա զարգացումների արդյունք էր: Միևնույն ժամանակ, գլխավոր դրամատան վերլուծությունների հիման վրա մինչև 2003թ. սպառողական գների ինդեքսով հաշվարկված արտաքին իրական փոխարժեքն արժեզրկվել էր՝ նպաստելով ազգային արտահանողների գնային մրցունակության արտաքին շուկաներում և ապահովելով կայուն բարձր շահույթներ: Առանցքային նշանակություն այստեղ ունի մրցունակության՝ որպես զուտ գնային բնութագրումը, ինչին անդրադարձ կկատարվի հոդվածում ավելի ուշ:

2004թ. արտաքին իրական փոխարժեքի արժևորումն առաջացրեց հակադարձ երևույթը՝ բուռն վեճերի ծավալման առարկա դարձնելով արտահանման վրա փոխարժեքի տատանումների բացասական հետևանքները: Ամենից հաճախ հնչող մտավախություններից էր այն, որ փոխարժեքի արժևորումը բացասաբար է անդրադառնում արտահանման վրա: Դա բացատրվում է նրանով, որ արտահանողները, որպես արտարժույթային եկամուտներ ստացող տնտեսական գործակալներ, ունենում են կորուստներ այդ եկամուտները ազգային արժույթի փոխարկելու ընթացքում, քանի որ ազգային արժույթի ուժեղացման պայմաններում միավոր արտարժույթը փոխարկվում է ավելի քիչ քանակությամբ ազգային արժույթի: Վ.Պարետտոյի արդյունավետության օրենքի համաձայն՝ արտահանողների կորուստները հակադարձվում են ներմուծողների շահունով, քանի որ ստեղծված իրավիճակում վերջիններս ազգային արժույթի միավորով ավելի շատ արտարժույթ կարող են ձեռք բերել՝ վերածելով դրանք ավելի մեծ քանակությամբ ներմուծվող ապրանքների և ստանալով ավելի բարձր շահույթներ: Սա նշանակում է՝ փոխվում է երկրի առևտրային հաշվեկշռի կառուցվածքը դեպի ներմուծման գերակշռում արտահանման նկատմամբ, ինչն էլ, անշուշտ, անցանկալի վիճակ է երկրի տնտեսության համար:

Խնդրի էությունն ընկալելու համար նշենք, որ անվանական փոխարժեքը երկու երկրների արժույթների հարաբերական գինն է, այսինքն՝ մի արժույթի գինը՝ արտահայտված մյուսի միավորներով:

¹ ՀՀ ԿԲ վարչության հուլիսի 19-ի «ՀՀ ԿԲ արժույթային քաղաքականության սկզբունքների մասին» թիվ 122 որոշում:

Ի տարբերություն անվանական փոխարժեքի՝ իրական փոխարժեքը երկրի գնային մրցունակության ամփոփ ցուցանիշ է, որը տվյալ երկրի ապրանքների և ծառայությունների գների հարաբերությունն է գործընկեր երկրների գների մակարդակին՝ բերված մեկ արժույթի: Այսինքն՝ իրական փոխարժեքը ցույց է տալիս տվյալ երկրի և առևտրային գործընկեր երկրների միջև սպառողական զամբյուղի գների հարաբերակցությունը: Իրական փոխարժեքն արժևորվում է, երբ գործընկեր երկրների համեմատ տեղի է ունենում երկրի ներքին գների աճ կամ անվանական փոխարժեքի արժևորում: Անվանական փոխարժեքից առավել տնտեսական գործակալների հետաքրքրության կենտրոնում է գտնվում իրական փոխարժեքը:

Մրցունակության գնահատման համար տարբերում են իրական փոխարժեքի երկու տարատեսակ՝

- ներքին իրական փոխարժեք, որը հաշվարկվում է որպես երկրի արտահանելի և ոչ արտահանելի հատվածների գների հարաբերություն և ցույց է տալիս ներքին ներդրողների խթանները ներդնելու արտահանելի կամ ոչ արտահանելի հատվածում,
- արտաքին իրական փոխարժեք, որը հաշվարկվում է որպես տվյալ երկրի և գործընկեր կամ մրցակից երկրների գների հարաբերություն՝ բերված մեկ արժույթի և ցույց է տալիս արտաքին ներդրողի խթանները ներդնելու տվյալ երկրում կամ գործընկեր երկրում:

Ներքին իրական փոխարժեքն արժևորվում է, երբ ոչ արտահանելի հատվածի գներն ավելի արագ են աճում, քան արտահանելի հատվածինը: Հետևաբար՝ երկու հատվածներում արտադրողականության հավասար աճի դեպքում արտահանելի հատվածը կորցնում է մրցունակությունը ոչ արտահանելի հատվածի նկատմամբ, և շահութաբեր է դառնում ներդրումներ կատարել վերջինում:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում Հայաստանում արտաքին և ներքին իրական փոխարժեքների փոխկապվածության ուսումնասիրությանը՝ հիմնվելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից կատարված վերլուծությունների, ինչպես նաև նման կապի դրսևորման միջազգային փորձի ուսումնասիրության վրա:

Արտաքին և ներքին իրական փոխարժեքների փոխկապվածության ընդհանուր տեսական ձևակերպումը առաջին անգամ տրվել է Հարրոդի (1939), Բալասայի և Սամուելսոնի կողմից դեռևս 1960-ական թվականներին¹:

Բալասա-Սամուելսոնի մոդելի համաձայն, որը հաճախ կոչվում է արտադրողականության շեղումների հիպոթեզ, իրական փոխարժեքի շեղումները գնողունակության պարիտետից (PPP - Purchasing Power Parity) պայմանավորված են երկրների միջև արտահանելի և ոչ արտահանելի ճյուղերում արտադրողականության տարբերություններով: Գնողունակության պարիտետը արժույթների փոխարժեքի մակարդակն է, որի միջոցով իրականացվում է դրանցից յուրաքանչյուրի գնողունակության հավասարեցում: Այն արտահայտվում է հետևյալ հավասարումով.

$P=EP^*$, որտեղ E-ն փոխարժեքն է, P-ն և P^* -ը համապատասխանաբար ներքին և արտաքին գների մակարդակներն են: Հավասարման ձևափոխված տարբերակը առավել հայտնի է «մեկ գնի օրենք» անվանմամբ, որը գործում է շնորհիվ միջազգային արբիտրաժի պայմանի:

Բալասա-Սամուելսոնի տեսությունը հիմնված է փոքր, բաց, երկճյուղ տնտեսության մոդելի վրա, որտեղ արտադրվում են արտահանելի և ոչ արտահանելի ապրանքներ²: Այս պայմանը կարևոր է այնքանով, որ փոքր երկրի լծակները ազդելու արտաքին գների վրա շատ թույլ են, և փոխարժեքի արժևորման դեպքում արտահանողները չեն կարող փոփոխել իրենց գները և բարելավել առևտրի պայմանները, ուստի արտաքին գները նրանց համար տրված են, և փոխարժեքի արժևորման ազդեցությունն էլ շատ ավելի մեծ է մեծ տնտեսությունների համեմատ: Մոդելի հիմքում ընկած է այն հիպոթեզը, ըստ որի արտահանելի հատվածի արտադրողականության աճի արդյունքում իրական փոխարժեքի արժևորումը բացասաբար չի անդրադառնում արտահանման վրա, ինչպես ավանդաբար ընկալվում և մեկնաբանվում է տեսաբանների

¹ Richard E. Caves, Jeffrey A. Frankel, Ronald W. Jones, "World Trade and Payments: An Introduction", 9th edition, Boston 2002, p. 505; Paul A. Samuelson "Theoretical notes on trade problems", Bela Balassa "The purchasing-power parity doctrine: A reappraisal".

² «Բալասա-Սամուելսոն էֆեկտի գնահատումը ՀՀ-ում» ՀՀ ԿԲ աշխատանքային փաստաթուղթ:

կողմից, որոնց փաստարկները ներկայացրել ենք նաև հոդվածի սկզբում: Բալասսան և Սամուելսոնը երկարաժամկետում որպես իրական փոխարժեքի արժևորման հիմքում ընկած գործոն տեսնում էին արտահանելի հատվածում արտադրողականության առաջանցիկ աճի տեմպերը ոչ արտահանելի ճյուղի համեմատ: Ընդ որում, մոդելում դիտարկվում է արտահանելի հատվածից դեպի ոչ արտահանելի հատված փոխարժեքի էֆեկտի փոխանցման մեխանիզմը (գծապատկեր 1), երբ միջազգային շուկաներում ապրանքների գներով պայմանավորված արտահանելի հատվածում աշխատավարձերի բարձրացումը տարածվում է նաև ոչ արտահանելի հատված, որտեղ արտադրողականության աճ տեղի չի ունեցել, կամ էլ ավելի ցածր է եղել՝ առաջացնելով ներքին ապրանքների գների աճ: Ելնելով իրական փոխարժեքի սահմանումից, այս երևույթը հանգեցնում է իրական փոխարժեքի արժևորման:

Բալասսա-Սամուելսոնի էֆեկտը դիտարկվում է 2 մոտեցումներով.

1. մոդելի պարզեցված տարբերակը ներառում է ծառայությունների հարաբերական գների աճը,
2. ծառայությունների հարաբերական գների վարքագծի հետ մեկտեղ հաշվի են առնվում նաև արտադրողականության մակարդակները:

Ամենապարզ ձևով, Բալասսա-Սամուելսոնի էֆեկտն արտահայտվում է արտահանելի և ոչ արտահանելի ճյուղերի միջև արտադրողականությունների աճերի տարբերության ազդեցությանը գնաճի վրա, ինչը գրականության մեջ ներկայացվում է հետևյալ հավասարման միջոցով¹.

$$P_{NT} - P_T = \left(\frac{\delta}{\gamma}\right) \alpha_T - \alpha_{NT},$$

որտեղ $P_{NT} - P_T$ տարբերությունը ոչ արտահանելի և արտահանելի ապրանքների գների տարբերությունն է, δ և γ աշխատուժի բաժինը ոչ արտահանելի և արտահանելի ճյուղերի ավելացված արժեքների մեջ, α_T և α_{NT} արտահանելի և ոչ արտահանելի ճյուղերի արտադրողականությունը²:

Բալասսա-Սամուելսոնի մոդելի փոխանցումային մեխանիզմի³ էությունը ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

$$\text{Մոդելի փոխանցման մեխանիզմում } \frac{P}{P_*} = E^{PPP} < E \text{ գնողունակության պարիտետից իրական}$$

փոխարժեքի շեղումն արտահայտող պայմանն է:

Բալասսա-Սամուելսոնի մոդելում առանցքային տեղ է հատկացվում հատկապես զարգացող երկրների տնտեսություններում էֆեկտի առավել ուժեղ դրսևորմանը՝ պայմանավորված զարգացած երկրների համեմատ այդ երկրներում արտահանելի հատվածի արտադրողականության համեմատաբար ցածր աստիճանով: Վերջինս ունի մի շարք օբյեկտիվ պատճառներ՝ պայմանավորված արտահանելի հատվածում արտադրողականության աճի համար անհրաժեշտ մեծ կապիտալ ներդրումների, արտադրական կարողությունների վերազինման անհրաժեշտությամբ, և այլն: Ուսումնասիրելով Արևելյան Եվրոպայում՝ Չեխիա, Խորվաթիա, Սլովակիա, Հունգարիա, Ռումինիա, Լեհաստան և այլն, Բալասսա-Սամուելսոնի էֆեկտի դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ միջազգային գրականությունը (Mihaljek and Klau 2004, 2008)՝ կարող ենք ասել, որ բոլոր երկրներում նկատվել է իրական փոխարժեքի արժևորման միտում: Ուսումնասիրությունները կատարվել են 1990-2008թթ. ժամանակային շարքերի համար և եզրակա-

¹ Catching-up and inflation in transition economies: the Balassa-Samuelson effect revisited, BIS working paper N270, Mihaljek and Klau, 2008:


² Տնտեսության երկու ճյուղերում առաջարկի ֆունկցիան տրվում է Կոբ-Ղուզլասի հաստատուն հատույցով արտադրական ֆունկցիայով: Ազատ մրցակցության պայմաններում շահույթի մաքսիմալացման պայմանը ենթադրում է գների հավասարություն սահմանային ծախսերին, այն է՝ իրական տոկոսադրույքները հավասար են կապիտալի սահմանային արտադրողականությանը, իրական աշխատավարձերը աշխատուժի սահմանային արտադրողականությանը: Հիմնվելով երկճյուղ տնտեսության մոդելի վրա՝ կապիտալի շարժունության և տոկոսադրույքների էկզոգենության պայմաններում, միևնույն ժամանակ որոշակի ձևափոխությունների արդյունքում ստացվում է վերոնշյալ հավասարումը:

³ «Բալասսա-Սամուելսոն էֆեկտի գնահատումը ՀՀ-ում» ՀՀ ԿԲ աշխատանքային փաստաթուղթ:

ցությունն այն է, որ բարձր արտադրողականությունը արտահանելի ճյուղում ոչ արտահանելի ճյուղերի համեմատ հանգեցրել է ավելի բարձր գնաճի և ներքին ոչ արտահանելի ապրանքների հարաբերական գների ավելի արագ բարձրացման: Բալասսա-Սամուելսոնի էֆեկտով է բացատրվում այս երկրներում գնաճի շուրջ 24%-ը՝ համեմատած եվրագոտու զարգացած երկրների 1.2 տոկոսային կետի հետ: Բացի այդ, ներքին գործոնները բացատրում են ոչ արտահանելի-արտահանելի հատվածների հարաբերական գների բարձրացման միջինում 84%-ը կամ որ նույնն է ներքին գնաճի 16%-ը: Արտասահմանյան տեսաբանների քննարկման կենտրոնում է նաև այն հարցը՝ արդյոք այսօր Բալասսա-Սամուելսոնի էֆեկտը թուլացել է 1990-ական թթ. համեմատ, թե ոչ: Այդուհանդերձ, գրականության մեջ չկա միասնական տեսակետ այդ հարցի շուրջ:

Գծապատկեր 1

Բալասսա-Սամուելսոնի մոդելի փոխանցումային մեխանիզմը



Մոդելի փոխանցման մեխանիզմում $\frac{P}{P_*} = E^{PPP} < E$ գնողունակության պարիտետից իրական

փոխարժեքի շեղումն արտահայտող պայմանն է:

Բալասսա-Սամուելսոնի մոդելում առանցքային տեղ է հատկացվում հատկապես զարգացող երկրների տնտեսություններում էֆեկտի առավել ուժեղ դրսևորմանը՝ պայմանավորված զարգացած երկրների համեմատ այդ երկրներում արտահանելի հատվածի արտադրողականության համեմատաբար ցածր աստիճանով: Վերջինս ունի մի շարք օբյեկտիվ պատճառներ՝ պայմանավորված արտահանելի հատվածում արտադրողականության աճի համար անհրաժեշտ մեծ կապիտալ ներդրումների, արտադրական կարողությունների վերազինման անհրաժեշտությամբ, և այլն: Ուսումնասիրելով Արևելյան Եվրոպայում՝ Չեխիա, Խորվաթիա, Սլովակիա, Հունգարիա, Ռումինիա, Լեհաստան և այլն, Բալասսա-Սամուելսոնի էֆեկտի դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ միջազգային գրականությունը (Mihalijek and Klau 2004, 2008)՝ կարող ենք ասել, որ բոլոր երկրներում նկատվել է իրական փոխարժեքի արժևորման միտում: Ուսումնասիրությունները կատարվել են 1990-2008թթ. ժամանակային շարքերի համար և եզրակացությունն այն է, որ բարձր արտադրողականությունը արտահանելի ճյուղում ոչ արտահանելի ճյուղերի համեմատ հանգեցրել է ավելի բարձր գնաճի և ներքին ոչ արտահանելի ապրանքների հարաբերական գների ավելի արագ բարձրացման: Բալասսա-Սամուելսոնի էֆեկտով է բացատրվում այս երկրներում գնաճի շուրջ 24%-ը՝ համեմատած եվրագոտու զարգացած

երկրների 1.2 տոկոսային կեսի հետ: Բացի այդ, ներքին գործոնները բացատրում են ոչ արտահանելի-արտահանելի հատվածների հարաբերական գների բարձրացման միջինում 84%-ը կամ որ նույնն է ներքին գնաճի 16%-ը: Արտասահմանյան տեսաբանների քննարկման կենտրոնում է նաև այն հարցը՝ արդյոք այսօր Բալասաս-Սամուելսոնի էֆեկտը թուլացել է 1990-ական թթ. համեմատ, թե ոչ: Այդուհանդերձ, գրականության մեջ չկա միասնական տեսակետ այդ հարցի շուրջ:

Ջարգացող երկրների շրջանակում կատարված ուսումնասիրությունների հիմքի վրա այժմ անդրադառմանը Բալասաս-Սամուելսոնի էֆեկտի դրսևորմանը Հայաստանում: Նշենք, որ փոքր, բաց տնտեսության պայմանը պահպանվում է Հայաստանի համար մոդելի վերլուծության ժամանակ: Իսկ մոդելի վերլուծության համար առավել համապատասխան ժամանակահատված կարելի է համարել 2003թ. վերջում սկսված տնտեսությունում իրական և անվանական փոխարժեքների արժևորման շրջանը: Ընդ որում, արժևորման տեմպերը շատ ավելի բարձր էին սկզբնական շրջանում: Ելնելով առևտրաշրջանառության մեջ ԱՄՆ դոլարի գերակշիռ տեսակարար կշռից և փոխարժեքների տատանումների հիմք ընդունելով ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը՝ վերլուծությունը ցույց է տալիս, որ 2003թ. տարեվերջին փոխարժեքի արժևորման տեմպերը տարեսկզբի համեմատությամբ կազմում էին 3.26%, նույն ցուցանիշը 2004թ. վերջին կազմում էր 14.53%: 2007թ. տարեվերջի դրությամբ արժևորման տեմպերը հասնում էին 16.5%-ի: Ինչպես կենտրոնական բանկն է մեկնաբանում, արժևորման բոլոր ցուցանիշները արտահանելի հատվածի գների էական աճի հետևանք էին՝ արտահանելի հատվածի գների հարաբերական կայունության պարագայում: Համաձայն ՀՀ ԿԲ կողմից կատարված «Բալասաս-Սամուելսոնի էֆեկտի գնահատումը ՀՀ-ում» աշխատանքի՝ Հայաստանի համար արդյունքները ցույց են տվել, որ այդ էֆեկտը բավականին թույլ է մի շարք զարգացող երկրների համեմատ: Այսպես, ՀՀ-ում 1999-2005թթ. գների մակարդակի 2,3% միջին տարեկան բարձրացման միայն 0,19%-ային կեսն է եղել արտահանելի հատվածի արտադրողականության արդյունք, իսկ մնացած մասը ֆինանսական ներհոսքի և արտաքին գնաճի հետևանք էր: Սինչդեռ Չեխիայում նույն ժամանակահատվածում 2,5% միջին գնաճի 1,1-1,2%-ն էր արտադրողականության արդյունք, իսկ Լեհաստանում՝ 4,5%-ի 3,6-4,2%-ը: Սա նշանակում է, որ Հայաստանում արտահանելի հատվածում տեղի չի ունեցել արտադրողականության աճ արտադրական կարողությունների վերազինման, բարձրորակ աշխատուժի վրա ներդրումների, կապիտալատար ապրանքների արտադրության կամ էլ մեկ այլ գիտատար գործունեության զարգացման հաշվին: Նշենք, որ ժամանակային շարքերի ուսումնասիրությունը վկայում է 2008թ.-ից փոխարժեքի արժևորման միտումների թուլացման, և դրսևորվեց հակառակ՝ դրամի արժեզրկման երևույթը: Այսպես, 2009թ. մարտին մեկ օրվա ընթացքում դրամն արժեզրկվեց 21.3%-ով չորս հիմնական առևտրային գործընկեր երկրների արժույթների նկատմամբ:

Ամփոփելով Հայաստանում փոխարժեք - արտաքին առևտրաշրջանառություն փոխադարձ կապի վերլուծությունը Բալասաս-Սամուելսոնի էֆեկտի միջոցով՝ կարող ենք ասել, որ 2003-2008թթ. տնտեսությունում նկատված փոխարժեքի արժևորման հիմնական պատճառը արտաքին մի շարք գործոններն էին՝ արտաքին առևտրի պայմանների լավացումը, միջազգային շուկաներում մետաղի գների բարձրացումը, դոլարի դիրքերի թուլացումը, տնտեսություն մեծածավալ ֆինանսական ներհոսքը, մասնավոր տրանսֆերտները, սակայն արտաքին գործոններից զատ չեն եղել տնտեսության ներքին կառուցվածքային փոփոխություններ: Ստեղծված նպաստավոր արտաքին պայմանները որևէ ներդրում չեն ունեցել արտահանելի հատվածում արտադրական կարողությունների վերազինման, արտադրողականության աճի, տնտեսությունում արտադրական ներդրումների մակարդակի բարձրացման գործում: Այս ամենի հետևանքով ընկնում է արտահանելի հատվածի մրցունակությունը ոչ միայն արտաքին շուկաներում, այլև նույնիսկ ներքին՝ ոչ արտահանելի հատվածի նկատմամբ, ինչի մասին վկայում է նաև ՀՆԱ-ում տարբեր ճյուղերի ունեցած ներդրման կառուցվածքը: Հենց այս պատճառով է, որ մեր տնտեսության համար կարևոր է ապահովել իրական փոխարժեքի արժևորումը ոչ թե պատահական արտաքին բարենպաստ գործոնների զուգադիպության շնորհիվ, այլ արտահանելի հատվածում կապիտալ ներ-

դրումների, արտադրական գործընթացների հետևողական օպտիմալացման, արտադրության ծախսերի կրճատման, արտադրողականության աճի և ներքին շահութաբերության աճի արդյունքում ազգային արտադրողի մրցունակությունն ապահովելու միջոցով:

Наира Дерцян

Анализ эффекта Баласса-Самуэльсон на примере Республики Армения

Аннотация

В данной статье обсуждается модель взаимосвязи внутреннего и внешнего реального валютного курса, изученной впервые американским экономистом П. Самуэльсоном и венгерским экономистом Б. Баласса. Согласно этой модели, которая также известна как гипотеза отклонений производительности, отступления реального валютного курса от паритета платежеспособности (Purchasing Power Parity-PPP) обусловлены разницей между производительностями в секторе экспортируемых и неэкспортируемых товаров отдельно взятых стран. Анализ воздействия изменений национального валютного курса на структуру и объем внешнего товарооборота произведен на примере Республики Армения.

Naira Derdzyan

Analysis of Balassa-Samuelson effect in the Republic of Armenia

Abstract

The article discusses a model of interrelationships between external and internal real exchange rates first studied by American economist Paul Samuelson and Hungarian economist Béla Balassa. According to this model also known as the hypothesis of productivity divergence, deviation of the real exchange rate from the purchasing power parity (PPP) are explained by the differences in traded and non-traded sectors of the economy. The analysis of the impact of the foreign exchange rate on the structure and the volumes of external trade in the Republic of Armenia is presented in the article.

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 20 13

ԳԻՐՔ 1

Հրատարակչության խմբագիր՝
Նյութերի հավաքագրող՝
Համակարգչային ձևավորումը՝

Ա. Հովակիմյան
Ա. Մարկոսյան
Մ. Համբարձումյանի

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ
Հասցեն՝ 0037, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փ. 15

Հրատ. պատվեր № 447
Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60×84 1/8:
Ծավալը՝ 49 պայմ. տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:

Տպագրված է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: